

Ա. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ  
ՀԱՅՈՑ ԼԵՉՈՒ

ՀՆՉՑՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրական ձեռնարկ բունների բանասիրական  
ֆակուլտետների ուսանողների համար

**Մարգարյան Ա. Ս.**

**Մ 350** Ժամանակակից հայոց լեզու: Հնչյունաբանություն | Երևանի պետ. համալս.— Եր.: Երևանի համալս. հրատ., 1997, 248 էջ:

Ձեռնարկը ներառում է ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանությունը՝ իր բաժիններով: Այն բաղկացած է հինգ մասից, որոնցում քննվում են նրա հնչյունական համակարգը, հնչյունափոխությունը, գրաբանությունը, ուղղագրությունը և ուղղախոսությունը: Ձեռնարկը հարցերի նորովի լուսաբանությամբ ունի որոշակի տեսական ու գործնական նշանակություն և կարող է օգտակար լինել ոչ միայն ուսանողներին, այլև ընթերցող լայն շրջաններին:

4602020100

Մ 704(02)—97

ԳՄԴ 81.22

Արցախի ազատագրական պայ-  
ֆարում զոհվածների սուրբ հիշա-  
տակին:

### Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ք

Սույն ուսումնասօժանդակ ձեռնարկը «Ժամանակակից հայոց լեզվի դասընթացին» վերաբերող մեր երրորդ գիրքն է, որը նվիրված է հնչյունաբանությանը և նրա ենթաբաժիններին: Այն նույնպես կազմված է պետականորեն հաստատված բունական ծրագրին համապատասխան և քաղկացած է հինգ մասից:

Առաջին մասում ներկայացվում է ժամանակակից հայոց լեզվի հրնչյունական համակարգը՝ իր բազմազան կողմերով ու դրսևորումներով, ֆենվում են լեզվական ամենափոքր նյութական, իմաստագատիչ միավորներ՝ հնչյուններն ու հնչույթները, տրվում են նրանց նկարագիրն ու բնութագիրը, ինչպես նաև իրացումները խոսում, խոսքի շղթայում: Դրանց հետ կապված ֆենության են առնվում և՛ վանկն ու վանկատումը, երկբարբառներն ու երկհնչյունները, շեշտը, հնչերանգը, որոնք միասին, անշուշտ, շատ ավելի պարզ ու ամբողջական պատկերացում են տալիս հայոց լեզվի հնչյունական կազմի ու կառուցվածքի մասին:

Երկրորդ մասում ֆենվում է հնչյունափոխությունը և ցույց տրվում, թե իր տեսակներով (շեշտափոխական, պատմական, փոխազդեցական) ինչ պատկեր ու արժեք է ներկայացնում այն ժամանակակից հայոց լեզվում և նրա հնչյունական կազմում ու համակարգում:

Երրորդ մասում ներկայացվում է գրաբանությունը, որտեղ էլ, բնականաբար, ֆենվում են այն հարցերը, որոնք վերաբերում են հենց լեզվաբանական այդ գիտանյութին, հայկական գրին, հայոց այբուբենին և նրա հիմնադիր մեծն Մեսրոպ Մաշտոցին, հայոց լեզվի գրատեսակներին ու դրանց զարգացմանը, հայերենի կետադրության նշաններին, տառերի (գրույթների) և հնչույթների փոխհարաբերությանը և այլն:

Չորրորդ մասում ներկայացվում է ժամանակակից հայոց լեզվի

ուղղագրությունը, որի դեմ, ինչպես հայտնի է, անողոք ու անհիմն պայ-  
ֆար է մղվում 1988 թ. ի վեր, պահանջվում փոխարինել այն հին՝ ա-  
վանդական ուղղագրությամբ:

Այդ նկատառումով դա ավելի հանգամանորեն և երկու կտրվածքով  
է ֆենության առնվում. նախ՝ ցույց է տրվում, թե ի՛նչ հիմունքով է ըս-  
տեղծվել, պատմական զարգացման ի՛նչ ընթացք է ունեցել, ե՛րբ, ինչո՛ւ,  
ինչպիսի՛ բարեփոխությունների է ենթարկվել ժամանակակից հայոց լեզ-  
վի ուղղագրությունը, ի՛նչ դեր է խաղացել մեծանուն հայագետ-լեզվա-  
բան Մ. Աբեղյանը դրա պատմության մեջ, և ապա ներկայացվում են  
այն ուղղագրական (ներառյալ նաև տողադարձի) կանոնները, որոնք ժա-  
մանակի ընթացքում գիտական հիմքի վրա մշակվել-ամրակայվել են  
գրավոր խոսում և անխտիր անշեղ կիրառում են պահանջում:

Ձեռնարկի վերջին՝ հիմնգերոզ մասում էլ ֆենվում է ժամանակակից  
արևելահայ գրական լեզվի ուղղախոսությունը՝ իր պատմական կյանքով,  
նորմավորված ու ընդհանուր կանոններով, խոտորումներով ու շեղում-  
ներով, արտասանության ռեբրով, արդի վիճակով և զարգացման հեռա-  
նկարներով ու միտումներով:

Այս ամենը պարզորոշ ցույց է տալիս, որ ժամանակակից հայոց  
լեզվի հնչյունաբանությունը, իբրև մասնավոր լեզվաբանական գիտու-  
թյան մի ծանրակշիռ բաժին, իր ենթաբաժիններով վերաբերելով լեզվի  
արտահայտության պլանին՝ ոչ միայն տեսական, այլև գործնական բա-  
վական մեծ կարևորություն է ներկայացնում և՛ ներկա, նոր ու հարուստ  
փաստերի հիման վրա կատարված, ֆենությամբ չի կարող օգտակար  
չլինել և չնպաստել, մանավանդ, նրա ուսուցման բարելավման գործին:

Երևանի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնը առաջին  
ներքին այդ նկատի առնելով՝ սույն ուսումնասօժանդակ ձեռնարկը ևս  
ֆենարկել ու հանձնարարել է հրատարակության: Իրենց դրական կար-  
ծիքներով դրան էլ մեծապես նպաստել են բանասիրական գիտություն-  
ների դոկտոր, պրոֆեսոր Արտ. Պապոյանը, բանասիրական գիտություն-  
ների դոկտոր, պրոֆեսոր Խ. Բաղիկյանը, բանասիրական գիտություն-  
ների թեկնածու, դոցենտ Մ. Ավագյանը, որոնց և մենք մեր անկեղծ  
շնորհակալությունն ենք հայտնում:



## Հ Ն Զ Յ ՈՒ Ն Ա Բ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՀՆԶՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԳԻՐՆԵՐԸ

§ 1. Լեզուն, իբրև մարդկային հաղորդակցման հիմնական ու կարևորագույն միջոց, այնպիսի բարդ համակարգ է, որը բնորոշվում է երկու հիմնական՝ արտաքին հնչյունական և ներքին՝ բովանդակային կողմերով: Լեզվաբանական գիտության բնութագրմամբ արտաքին՝ հնչյունական կողմը կոչվում է լեզվի արտահայտության, իսկ ներքին՝ բովանդակային կողմը՝ բովանդակության պլան:

Լեզուն կազմում է այդ երկու պլանների համադրությունը և առանց նրանցից մեկի գոյություն ունենալ չի կարող: Այստեղից հետևում է, որ լեզվի ու նրա գիտության՝ լեզվաբանության համար որքան կարևոր ու էական են լեզվական իմաստային միավորները, այնքան էլ կարևոր ու էական են այն նյութական միջոցները, որոնցով նրանք են արտահայտվում:

Այլ կերպ չի էլ կարող լինել: Իրականում մերկայաբանոց իմաստներ ու մտքեր գոյություն չունեն: Ամեն մի միտք ու իմաստ խարսխվում է լեզվական-նյութական ատաղծի վրա, հյուսվում համապատասխան նյութական թաղանթով: Այստեղից իսկ հետևում է, որ լեզվի արտահայտության պլանը այլ բան չէ, քան նրա հնչյունական համակարգը: Դա էլ, բնականաբար, տվյալ լեզվի հնչյունների, դրանց կապակցությունների, հնչյունական բազմազան իրականությունների ամբողջություն է, և որի մասին էլ կարելի է պարզ պատկերացում կազմել՝ իմանալով, թե ի՞նչ է հնչյունը իբրև այդպիսին:

§ 2. Լեզվաբանությունը գտնում է, որ հնչյունը լեզվի նվազագույն նյութական միավոր է, որ արտասանվում և ընկալվում է տվյալ հասարակության անդամների կողմից: Լեզվական այդ նվազագույն նյութական միավորի ուսումնասիրությամբ, ինչպես հայտնի է, զբաղվում է հնչյունաբանությունը: Ուրեմն և՛ հնչյունաբանության ուսումնասիրության բուն առարկան հնչյունն է, կամ այլ կերպ ասած՝ այդպիսին են «լեզվի հնչյունական միջոցները՝ իրենց բոլոր արտահայտություններով ու զործառույթներով, ինչպես նաև լեզվի հնչյունային կողմի և գրության միջև եղած կապը»:

<sup>1</sup> Л. Р. Зиндер, Общая фонетика, М., 1979, с. 4.

§ 3. Իբրև լեզվաբանության առանձին բաժին, հնչյունաբանությունը ևս առաջնորդվում է երկու՝ ինչպես համաժամանակյա (սինխրոնիկ), այնպես էլ տարաժամանակյա (դիսխրոնիկ) մեթոդներով<sup>2</sup> և առաջին դեպքում եթե ուսումնասիրում է որևէ որոշակի լեզվի առկա հնչյունական համակարգը՝ իր բազմազան կողմերով, ապա երկրորդ դեպքում էլ ուսումնասիրում է լեզվի հնչյունական համակարգն ընդհանրապես՝ բացահայտելով այն փոփոխությունները, որ կրել են հնչյունները նրա պատմական զարգացման ընթացքում: Ըստ այդմ էլ այն լինում է նկատագրական և պատմական. նկատագրական է կոչվում լեզվի հնչյունական համակարգը և նրա հնչյունական միջոցները համաժամանակյա մեթոդով ուսումնասիրող հնչյունաբանությունը, իսկ պատմական՝ այն հնչյունաբանությունը, որը տարաժամանակյա մեթոդով է ուսումնասիրում և լուսաբանում լեզվի հնչյունական համակարգն ու նրա իրողությունները: Բացի այդ, հնչյունաբանությունը լինում է ընդհանուր և մասնավոր: Եթե ընդհանուր հնչյունաբանությունը՝ բազմազան լեզուների, ապա մասնավոր լեզվաբանությունը մի առանձին լեզվի (ասենք, հայերենի, ռուսերենի, անգլերենի, գերմաներենի, ֆրանսերենի և այլն) հնչյունական համակարգի ու հնչյունական իրողությունների ուսումնասիրությամբ է զբաղվում:

§ 4. Հնչյունաբանությունը, վերաբերելով լեզվի արտահայտության պլանին, անշուշտ, առանձնակի տեղ է բռնում լեզվաբանության այլ բաժինների (օրինակ՝ քերականության, բառագիտության) շարքում և այլևայլ թելերով կամ կողմերով կապվում նրանց հետ:

Առավել մեծ է լեզվի հնչյունական համակարգի և քերականական կառուցվածքի (հատկապես՝ ձևաբանության) կապը, որը և հիմք է ծառայել անգամ հնչյունաբանությունը քերականության մեջ ներառելու ու նրա մաս դիտելու համար<sup>3</sup>: էպպես, սակայն, հնչյունաբանությունը զուտ հնչյուններին, հնչյունական իրողություններին վերաբերող գիտություն է և բոլոր դեպքերում լեզվաբանության մի առանձին ու շատ կարևոր բաժին է, որը և ոչ միայն լեզվաբանական այլ գիտաճյուղերի, այլև նրանցից տարբեր գիտությունների (ֆիզիկա, բնախոսություն, հոգեբանություն) հետ է աղերսակցվում:

§ 5. Հնչյունաբանությունը, իբրև լեզվաբանության մի առանձին բաժին, չի սահմանափակվում սոսկ հնչյունների, նրանց համակարգի նկարագրությամբ ու լուսաբանությամբ. այն նաև այլ նպատակներ է հետապնդում և ուսումնասիրում այնպիսի կարևոր իրողություններ, ինչ-

<sup>2</sup> Տե՛ս այդ մասին, օրինակ, Գր. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, հտ. 1-ին, Երևան, 1939, էջ 42:

<sup>3</sup> Տե՛ս, օրինակ, М. И. Матусевич, Современный русский язык, М., 1976, с. 8—9.

պիսիք են՝ հնչյունափոխությունը, գրաբանությունը, ուղղագրությունը և ուղղախոսությունը: Ըստ այդմ էլ դրանք ևս պատկանում են հնչյունաբանությանը և նրա ենթաբաժիններն են, որոնց հիմքում նույնպես ընկած է լեզվի նյութական նվազագույն միավորը՝ հնչյունը, որի ուսումնասիրությունն էլ, ինչպես հայտնի է, կատարվում է երեք տեսանկյունով՝ ա) ձայնաբանական, բ) բնախոսական և գ) լեզվաբանական-գործառնությամբ (ֆունկցիոնալ):

## ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՁԱՅՆԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 6. Հնչյունը, իբրև լեզվի նյութական նվազագույն միավոր, արտահայտվում է ձայնով, որ ֆիզիկական երևույթ է և առաջ է գալիս օդի ալիքների տատանումների հետևանքով կամ դրանց շնորհիվ: Սա, սակայն, չի նշանակում, թե բնության մեջ եղած ամեն մի ձայն հնչյուն է ամենևին՝:

Հնչյունը զուտ մարդկային լեզվին հատուկ երևույթ է և, իբրև այդպիսին, բնորոշվում է չորս հիմնական հատկանիշով՝ բարձրությամբ, ուժով կամ ուժգնությամբ, երանգով (տեմբրով) և տևողությամբ (ամանակով):

§ 7. Ձայնի բարձրությունը որոշվում է օդի հոսանքի տատանումների՝ թրթռումների քանակով կամ հաճախականությամբ: Ուստի և՛ ինչքան արագ ու հաճախակի են լինում այդ տատանումները՝ թրթռումները, այնքան էլ բարձր է լինում ձայնը: Հնչյունի բարձրությունը այդպիսով ուղիղ համեմատական է օդի՝ մեկ վայրկյանում տեղի ունեցող թրթռումների (տատանումների) քանակին:

Հնչյունի բարձրության չափման միավորը հերցն է (հց) է, որը, ինչպես փպացուցված է, ականջի համար ընկալելի է լինում 16-ից մինչև 2000-ի սահմաններում:

Հնչյունի բարձրությունը մեծապես կախված է ձայնալարերի թրթռումներից: Ձայնալարերի պարբերաբար թրթռումով առաջ է գալիս երաժշտական ձայն, օդի հոսանքի ոչ պարբերաբար թրթռումով առաջ է գալիս աղմուկ, որի գոյացմանը ձայնալարերը շեն մասնակցում կամ մասամբ են մասնակցում: Սա ևս ցույց է տալիս, որ ձայնալարերն իրոք շատ մեծ դեր են կատարում հնչյունի կամ ձայնի բարձրության գործում: Ընդ որում՝ եթե նրանք կարճ են, տատանումները՝ շատ, ձայնն էլ (մանավանդ կանանց)՝ բարձր, իսկ եթե երկար են, տատանումները՝ փչչ, ձայնը (մանավանդ տղամարդկանց) ցածր է լինում:

§ 8. Ձայնի ուժը կամ ուժգնությունը որոշվում է արտաբերության ժամանակ դուրս մղվող օդի հոսանքի թափով՝ ամպլիտուդայով: Ինչքան մեծ է տատանումների թափը՝ ամպլիտուդան (իմա՝ ալիքի երկարությունը), այնքան էլ ուժեղ է ձայնը: Եվ, ընդհանրապես, ինչքան ցածր

(նվազ) է այն, այնքան էլ թույլ է ձայնը: Հր. Աճառյանի բնորոշմամբ՝ «Ուժգնությունը ձայնի զորությունն է, այսինքն ավելի հեռու հասնելու Ֆարթությունը»<sup>4</sup>:

Հնչյունի ուժի կամ ուժգնության մակարդակի չափման միավորը դեցիբելն (դց) է, որը սովորական խոսակցության ժամանակ 80—90-ից շի անցնում: Հայերենում ձայնի ուժգնությամբ աջի են ընկնում հատկապես ձայնավորները՝ ընդհանուր առմամբ ա, օ (ո), է (ե), ու, ի, ը հաջորդականությամբ:

§ 9. Երանգը ձայնի այն որակային հատկանիշն է, որը պայմանավորված է ենթաձայների (օբերտոնների) քանակով ու ուժով և բնորոշ է ամեն մի ձայնի և գործիքի համար: Ենթաձայները հիմնական տոնին ուղեկցող լրացուցիչ տոներն են, որոնք երանգ են տալիս նրա առաջ բերած ձայնին: Եվ հետևաբար՝ ձայներանգը իրոք ստեղծվում է հիմնական տոնի և երկրորդական կամ կողմնակի տոների՝ ենթաձայների համակցումով, և որի ընթացքում առանձնապես մեծ դեր են կատարում արձագանքը (ռեզոնանսը) և արձագանքարանը կամ հնչարանը (ռեզոնատորը): Եվ դա միանգամայն ճշտորեն է ներկայացրել, օրինակ, Մ. Արեղյանը՝ ասելով. «Բերանի խոռոչը ծառայում է իբրև ռեզոնատոր, որի միջոցով փոխվում է հնչյունի երանգը կամ ուղակը (ընդգծումն իրենն է— Ա. Մ.), որ է հիմնական հնչյունն և իր հետ միացած կողմնակի հնչյունների բաղադրությունը: Հիմնական հնչյունի հետ միացած բաղադրիչ հնչյուններից մի քանիսն այդ ռեզոնատորով ուժեղանում են և ուրիշները խեղդվում են: Բայց որովհետև բերանի խոռոչը զանազան ձևեր է ընդունում, որով և զանազան տեսակի ռեզոնատորներ է դառնում, հետևաբար և ձայնալարերի տատանումից առաջացած ձայնը բերանի մեջ՝ նայելով ռեզոնանսին՝ մշակվելով դառնում է տարբեր որակի կամ տարբեր երանգի հնչյուններ, ինչպես՝ Ա, Օ, ՈՒ, է, Ի, Ը»<sup>5</sup>:

§ 10. Ձայնի տևողությունը, որ այլ կերպ՝ հնչյունների քանակ կամ ամանակ է կոչվում, «է՛ այն ժամանակի տևողությունը, որ պահանջվում է այս և այն հնչյունի արտաբերության համար»<sup>6</sup>:

Ի տարբերություն բարձրության, ուժգնության և երանգի, որ ձայնի (հնչյունի) որակային հատկանիշներն են, տևողությունը (ամանակը) նրա քանակային հատկանիշն է և պայմանավորվում է, բնականաբար, ժամանակի մեջ հնչյունների արտաբերման տևականությամբ: Երկար ժամանակում արտաբերվող հնչյունները կոչվում են երկար, իսկ կարճ ժամանակում արտաբերվողները՝ կարճ հնչյուններ: Սովորաբար կարճ

<sup>4</sup> Հր. Աճառյան, Լիակատար թերականոթյուն հայոց լեզվի, հտ. 6, Երևան, 1971, էջ 15:

<sup>5</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 72—73:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 96:

կամ երկար են լինում ձայնավորները: Ռուսերենում, օրինակ, շեշտակիր ձայնավորները՝ երկար, իսկ անշեշտ ձայնավորները կարճ են արտաբերվում: Անգլերենում և ֆրանսերենում ևս կան նմանատիպ ձայնավորներ:

Հայերենում, սակայն, «չկան բնությամբ երկար ձայնավորներ, այսինքն և երկար է, և կարճ է, երկար օ և կարճ օ և այլն», թեպետ «մեր ձայնավորները նայելով վանկերի կազմությանը, շեշտին և արտասանության հղանակին, երբեմն ավելի երկար են արտասանվում, կամ մի քիչ կարճ: Մեր Ը ձայնավորը ընդհանրապես համեմատաբար կարճ է»<sup>1</sup>:

Այդպես և հայերենում երկար են արտաբերվում շփականները՝ պայթակաների, խուլերը՝ ձայնեղներին, շեշտակիր ձայնավորները անշեշտ ձայնավորների և այլն համեմատությամբ, բայց նման արտասանական տարբերությունները որակական որևէ արժեք չունեն:

Այսպիսով, ձայնաբանական տեսակետից հնչյունները բնորոշվում են չորս ֆիզիկական հատկությամբ՝ բարձրությամբ, ուժգնությամբ, երանգով և տևողությամբ, որոնք, անշուշտ, սերտորեն կապված են իրար հետ, և որոնց ուսումնասիրությամբ առանձնապես զբաղվում է ֆիզիկան՝ օգնելով հնչյունաբաններին՝ ավելի խոր ու հանգամանորեն լուսաբանելու հնչյուններն ու նրանց համակարգը:

## ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԽՈՍԱԿԱՆ ՈՒՍՈՒՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 11. Հնչյունաբանությունը, ինչպես հայտնի է, զբաղվում է նաև հնչյունների բնախոսական ուսումնասիրությամբ: Այս դեպքում ամենից առաջ նա իր առջև նպատակ է դնում պարզել, թե ի՞նչպես է տեղի ունենում հնչյունախոսությունը, ի՞նչ գործարանների միջոցով և ի՞նչպես են արտասանվում հնչյունները, արտասանական գործարաններից ո՞րը ինչ դեր է կատարում խոսողության ընթացքում, արտասանական օ՞ր գործարանը ինչ շափով է մասնակցում այս կամ այն հնչյունի արտաբերմանը:

Սա ցույց է տալիս, որ հնչարտաբերությունը ևս բարդ երևույթ է, որը և իրացվում է մարդու մարմնում ո՛չ թե դրա համար ստեղծված ինչ-որ հատուկ, այլ այն գործարանների (թոքեր, լեզու, շնչափող, ատամներ, քթի խոռոչ և այլն) միջոցով, որոնք կենսագործական (ֆիզիոլոգիական) տարբեր դեր կամ գործառույթ (ֆունկցիա) են կատարում: Ժամանակի ընթացքում նույն այդ գործարանները սկսել են ծառայել նաև հնչախոսությանը և ամբողջությամբ հնչարտաբերական գործարաններ են կոչվում:

§ 12. Հնչարտաբերական գործարանները, սակայն, ճիշտ նույն կամ

<sup>1</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 86:

միատեսակ դերը շին կատարում: Գործարաններ կան, որոնք ուղղակիորեն են կապվում խոսողութայն հետ և իրացնում հնչյունների արտաբերությունը: Գործարաններ էլ կան, որոնք ընկալում կամ ընդունում են դրանք: Ըստ այդմ լեզվի հնչարտաբերական գործարանները լինում են երեք տեսակ՝ կառավարող, կատարող և ընկալող:

§ 13. Կառավարող (ղեկավարող կամ վարիչ) գործարանը ուղեղն է՝ իր ինչպես երկու խոսքային կենտրոններով (դրանցից մեկը կոչվում է Բրոկայի, մյուսը՝ Վեռնիկեի), այնպես էլ կենտրոնական նյարդային համակարգով:

«Խոսքի հնչյունների կազմավորումն ու ընկալումը,— գրում է հայտնի հնչյունաբան Լ. Ռ. Զինդերը,— վերաբերում են բարձրագույն նյարդային գործունեությանը, որի կենտրոնները տեղավորված են գլխուղեղի կեղևում: Ուղեղը, որ կազմված է տարբեր ձևի ու մեծության միլիարդավոր նյարդաբջիջներից, ունի կազմաբանական բարդ կառուցվածք»<sup>8</sup>: Եվ այնուհետև. «Կենտրոնական նյարդային ապարատը ոչ միայն խոսքի հնչյունների իբրև այդպիսիների, այլև նրանցից շատերի հիմքում ընկած ձայնի գոյացումն է կառավարում»<sup>9</sup>:

Այսպիսով՝ մարդու նյարդային համակարգը իրոք շատ կարևոր դեր է կատարում խոսողութայն ընթացքում, և խոսքն էլ այլ բան չէ, քան հենց նրա գործառույթներից մեկը: Այդ նույնն է հաստատում նաև մի այլ լեզվաբան՝ ասելով. «Մի կողմից նյարդային համակարգը խոսքի հնչյունների պատճառ է հանդիսանում, իսկ մյուս կողմից՝ մասնակցում է դրսից հնչյունների ընկալմանը և նրանց գիտակցմանը: Այլ կերպ ասած՝ հնչյունների արտադրման դեպքում նյարդային էներգիան վերածվում է մեխանիկականի, իսկ խոսքի ընկալման և ըմբռնման դեպքում՝ մեխանիկական էներգիան՝ նյարդայինի»<sup>10</sup>:

§ 14. Կատարող գործարանները նրանք են, որոնց միջոցով արտաբերվում են հնչյունները: Դա նույնպես բավականին բարդ գործընթաց է, որին մասնակցում են մի շարք գործարաններ, որոնք և միասին առած կոչվում են արտասանական ապարատ:

§ 15. Մարդու արտասանական ապարատը բաղկացած է հիմնականում հինգ մասից: Դրանք են՝ կրծքի խոռոչը (1), կոկորդը (2), ըմպանի՝ երախի խոռոչը (3), բերանի խոռոչը (4) և քի խոռոչը (5): Այդ մասերն էլ ունեն իրենց ենթամասերը, որոնք և տարբեր դեր են կատարում հնչարտաբերութայն կամ խոսողութայն ընթացքում:

§ 16. Կրծքի խոռոչում են գտնվում կամ նրա հետ են կապվում ստոծանին, թոքերը և շնչափողը, որը դրանց մոտ բաժանվում է երկու ցնցուղիների ու վերջավորվում կոկորդով:

<sup>8</sup> Л. Р. Зиндер, Общая фонетика, с. 103.

<sup>9</sup> Նույն տեղում:

<sup>10</sup> В. И. Кодухов, Введение в языкознание, М., 1979, с. 113.

Այդ գործարանները կոչվում են շնչառական գործարաններ, որոնք հոսանքի աղբյուր են ծառայում և օդ են մատակարարում հնչյունների արտաբերության համար:

§ 17. Կրծքի խոռոչին հաջորդում է կոկորդի խոռոչը, որը շատ ավելի բարդ կառուցվածք ունի. այդտեղ են գտնվում թե՛ վահանաձև (դուրս ընկած մասը կոչվում է ադամախնձոր), թե՛ մատանիաձև կամ օղաձև, թե՛ գդալաձև կամ բրզաձև կոճիկները և թե՛ ամենազխավորը՝ ձայնալարերը:

Ձայնալարերը «կոկորդի լայնքով՝ հորիզոնական ձևով ձգված երկու առաձիգ մկաններ են»<sup>11</sup>, որոնք տարբեր ձևերով կապված են հիշյալ կոճիկների հետ և իրենց միջև ճեղք ունեն, որը կոչվում է ձայնաճեղք (Մ. Աբեղյան) կամ ձայնածերպ (Գր. Ղափանցյան):

Ձայնալարերը, որ խոսքի ամենակարևոր գործարանն են, տարբեր հնչյունների արտաբերության ժամանակ տարբեր դրույթուններ են ստանում և տարբեր դեր կատարում: Այն դեպքում, երբ արտաբերության ժամանակ ձայնածերպը ավելի կամ պակաս չափով նեղանում է, ձայնալարերը թրթռում ու առաջ են բերում երաժշտական ձայն, իսկ այն դեպքում, երբ ձայնածերպը լայն բացված է մնում, ձայնալարերը չեն թրթռում, և, առանց դրանց մասնակցության, զխավորապես բերանի խոռոչի մեջ օդի հոսանքը «մի արգելքի հանդիպելով՝ տատանվում է և առաջ է բերում աներաժշտական հնչյուն կամ ազմուկ»<sup>12</sup>:

Հասկանալի է, որ առաջին ձևով են արտաբերվում ձայնավորները, ձայնորդները և ձայնեղները, իսկ երկրորդ ձևով՝ միայն խուլերը, որոնք ամբողջապես զուրկ են երաժշտական ձայնից:

§ 18. Կոկորդից հետո գալիս է երախի խոռոչը, որտեղ էլ գտնվում են մակկոկորդը կամ մակալեզուն, լեզվի կոթը կամ լեզվարմատը և ըմպանը: Երախի խոռոչը իր այդ մասերով օդի հոսանքը դեպի բերանի ու քթի խոռոչները տանող դեր է կատարում և որոշ հնչյունների արտաբերման ժամանակ ոչ միայն կազմավորման տեղ, այլև արձագանքարան (ռեզոնատոր) է ծառայում<sup>13</sup>:

§ 19. Արտասանական գործարանների մեջ, սակայն, առավել կարևոր է բերանի խոռոչը, որը ներառում է լեզուն, շրթունքները, ատամները, քիմքերը (կոշտ և փափուկ), լնդերքը, լեզվակը. գործարաններ, որոնք նույնպես տարբեր կերպ ու տարբեր չափով են մասնակցում հնչյունների արտաբերությանը: Բայց դրանցից էլ, ինչպես հայտնի է, ամենամեծ դերը կատարում է լեզուն, որը ոչ միայն ամբողջությամբ, այլև իր առանձին մասերով շարժվելով առաջ և հետ, վերև և ներքև,

<sup>11</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 71:

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> Տե՛ս Մ. Ի. Матусевич, Современный русский язык. Фонетика, с. 23—24.

«չափազանց բազմազան ձևեր ու դրուժյուններ է ընդունում», առաջ բերում այդպիսով տարբեր հնչյուններ, ինչպես՝ Ա, Ը, Ի, Զ, Վ, Ղ, Զ, Ծ, Խ, Զ և այլն:

Ինչպես օրինակներից կարելի է նկատել, հնչյունների արտաբերությանը լեզուն մասնակցում է առջևի, միջի և ետևի մասերով, ըստ որոնց էլ կոչվում են նրանք:

Շարժուն գործարաններ են նաև շրթունքները, փափուկ քիմքը, լեզվակը: Տարբեր հնչյունների արտաբերման ժամանակ շրթունքները տարբեր ձևեր են ընդունում. նրանք մերթ հանգիստ են մնում, մերթ իրար են հպվում, մերթ առաջ են ձգվում ու բոլորանում՝ որոշակի փոփոխություններ առաջ բերելով բերանի խոռոչում: Շարժունակության մասով ելակներն աչքի է ընկնում ստորին շրթունքը, որը ստորին ծնոտի հետ կապված և՛ ավելի շատ է շարժվում, և՛ ավելի շատ հնչյունների արտաբերմանը մասնակցում:

Փափուկ քիմքը, որ կոչւտ քիմքի վերջնամասից սկսվելով՝ ավարտվում է լեզվակով, կա՛մ փակում է քթափողի անցքը, որպեսզի օդը անցնի միայն բերանով, կա՛մ այն բաց է պահում, որպեսզի օդը ազատ մտնի քթի խոռոչը և դուրս գա այդտեղով:

Լեզվակն էլ շարժուն այն գործարանն է, որ հատուկ լինելով առանձին ժողովուրդների ու անհատների արտասանությանը՝ «երկրորդական դեր ունի ձայնի հոդավորման մեջ. բայց կարող է նա ևս թրթուս և ձեզացնել», օրինակ, «Ֆրանսական Ի ձայնը, որ կոչվում է լեզվակային Ի»<sup>14</sup>:

Բերանի խոռոչի մյուս մասերը՝ վերին և ստորին ատամները, լընդերքը, կոշտ քիմքը, որ նրա անշարժ գործարաններն են, սկսում են լնդերքից (ալվեոլներից) և հասնում մինչև փափուկ քիմքը, թեև ոչ շատ մեծ, բայց նույնպես կարևոր դեր են խաղում հնչարտաբերության գործընթացում: Նրանք մի տեսակ կայուն հենարան են հանդիսանում լեզվի միջոցով զանազան հնչյուններ արտասանելու համար:

§ 20. Արտասանական ապարատի մի այլ, անշարժ գործարանն էլ քթի խոռոչն է, որ բաղկացած է «երկու փոսերից, որոնք վերջանում են առաջից երկու ուռնգերով, իսկ հետևից երկու ծակերով, որոնք հաղորդակցվում են բերանի խոռոչի հետ»<sup>15</sup>, քթի խոռոչը բերանի խոռոչից բաժանվում է փափուկ քիմքով, որը կազմում է նրա վերջին սահմանը և այլ կերպ կոչվում է նաև քիմքի առաջատ: Երբ դա ազատ չի փակում քթանցքը, օդը ազատորեն, անարգել անցնում է այդտեղով և արտաբերվում են ռնգային Մ, Ն հնչյունները:

§ 21. Արտասանական ապարատը այսպիսով արտաբերական գոր-

<sup>14</sup> Ըր. Ահտալյան, Արտաբերական ֆոնետիկայի հայոց լեզվի, հտ. 6, էջ 49:

<sup>15</sup> Նույն տեղում:



ծարանների ամբողջությունն է կազմում և, ինչպես ընդունված է ասել, նման է նվագարանի, որի տարբեր մասերը նույնպես տարբեր դեր են կատարում:

Հնչյունների կազմավորման ու արտաբերման գործում առավել մեծ դեր են կատարում շարժուն (ձայնալարեր, լեզու, շրթունքներ, փափուկ քիմք, լեզվակ, ըմպան), քան՝ անշարժ (ատամներ, լնդերք, կոշտ քիմք) գործարանները, և ըստ այդմ էլ առաջինները՝ ակտիվ, իսկ երկրորդները պասիվ գործարաններ են կոչվում: Հնչյունների արտաբերության գործընթացում զրանցից բացի կարևոր դեր են կատարում նաև արձագանքարանները (ռեզոնատորները), որոնք ստեղծվում են ինչպես բերանի, այնպես էլ քթի խոռոչում:

§ 22. Ընդունող գործարանները նրանք են, որոնց միջոցով ընկալվում է այն ամենը, ինչ մարդիկ հաղորդում են իրար: Դրանք լսողական (ականջ) ու տեսողական (աչք) գործարաններն են, որոնք, ի տարբերություն խոսողական գործարանների, ո՛չ թե ներգործական, այլ կրավորական բնույթ ունեն:

Լսողական գործարանը՝ ականջը, կապվում է բանավոր հաղորդակցման կամ հնչարտաբերության հետ, և, ինչպես չը. Աճառյանն է նըշում, «բաժանվում է երեք մասի. արտաքին ականջ, միջին ականջ և ներքին ականջ: Առաջինը ծառայում է ընդունելու ձայնը, երկրորդը փոխադրելու, երրորդը լսելու»<sup>10</sup>, իսկ տեսողության գործարանը՝ աչքը, կապվում է հաղորդակցման գրային միջոցների հետ, որոնցով մարդիկ իրենց մտքերն են արտահայտում և հասնում փոխադարձ ըմբռնման:

Ինչպես կատարող, այնպես էլ ընկալող գործարանները արտասանական բարդ գործընթացի մի բաղկացուցիչ մասն են կազմում և իրենց հերթին ևս կապվում են մարդու կենտրոնական նյարդային համակարգի հետ ու ղեկավարվում նրա կողմից: Այս ամենն էլ ցույց է տալիս, որ հնչյունների թե՛ ձայնաբանական, թե՛ բնախոսական ուսումնասիրությունները իսկապես մեծ կարևորություն են ներկայացնում նրանց, իբրև լեզվի նյութական միավորների, գիտական լուսաբանության համար:

## ՀնՁՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ-ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 23. Եթե ձայնաբանական և բնախոսական հայացակետերից ուսումնասիրվում են հնչյունների՝ ա) ֆիզիկական հատկությունները (բարձրություն, ուժգնություն, երանգ, տևողություն) և բ) հնչարտաբերական գործարանները՝ իրենց դերով, ապա լեզվաբանական-գործառու-թային տեսակետից հնչյուններն ուսումնասիրվում են իբրև լեզվի նյու-

<sup>10</sup> Չր. Աճառյան, Լեզվաբանական գիտություն հայոց լեզվի, հտ. 6, էջ 26:

թական նվազագույն միավորներ: Այդպիսի ուսումնասիրությունը, հասկանալի է, առավել մեծ կարևորություն է ներկայացնում հնչյունաբանության համար և պահանջում նրանից՝ լուծել մի շարք ավելի կարևոր ու բարդ խնդիրներ. ինչպիսի՞ լեզվական միավոր է հնչյունը, ինչպե՞ս է իրացվում այն և լեզվական ի՞նչ նպատակի է ծառայում, ինչպիսի՞ դրոսերումներ է ունենում խոսքում, հնչյունները իրար հետ ինչպե՞ս են կապակցվում, հնչյունների կապակցությամբ ինչպիսի՞ արտասանական ու իմաստային միավորներ են ստեղծվում, արտասանվածքը հնչյութաբանորեն ինչպե՞ս է տարրալուծվում, հնչյունները ինչպիսի՞ հնչյունական փոփոխություններ են կրում, նրանք ուղղագրական ու ուղղախոսական ի՞նչ արժեք ունեն և այլն:

Հնչյունաբանության առջև ծառայած այս և մի շարք այլ խնդիրների մեջ, պարզ է, ամենաառաջնայինն ու ամենակարևորը այն է, թե ի՞նչ է հնչյունը իբրև այդպիսին:

§ 24. Հնչյունը, որի անունով էլ կոչվում է հնչյունաբանությունը<sup>17</sup>, լեզվի ամենափոքր կամ նվազագույն նյութական միավորն է. դա օդի թրթռումների հետևանքով առաջ եկած այն ձայնն է, որ արտաբերվում է մարդու արտասանական գործարանների միջոցով և ընկալելի է լինում նրա համար, ինչպես՝ Ա, ՈՒ, Ս, Վ, Ժ, Խ, Ց, Ք, Մ և այլն:

Ինչպես սրանց արտաբերումից էլ կարելի է նկատել, հնչյունը այս դեպքում պարզապես ֆիզիկական երևույթ է և, իբրև այդպիսին, լեզվի նյութական ատաղձը կամ թաղանթն է կազմում: Եվ իբր՞ք. լեզվական ինչպիսի միավոր (ձևույթ, բառ, շարույթ, նախադասություն և այլն) էլ լինի, անպայման արտահայտվում է հնչյուններով, ունենում է իր համապատասխան արտաքին՝ հնչյունական կազմը, ինչպես, ասենք, տուն, սեղան, գեղեցիկ, ընկերաբար բառերը, որ կազմված են տ + ու + ն, ս + ե + ղ + ա + ն, գ + ե + ղ + ե + ց + ի + կ, ը + ն + կ + ե + ր + ա + ր + ա + ր հընչյուններից:

Այսպիսով, հնչյունը լեզվի (խոսքի) այն նվազագույն նյութական միավորն է, որը հատկանշվում է ֆիզիկական կողմով, ձայնային ու արտասանական տարրերի ամբողջությամբ և բոլոր դեպքերում ատաղձ է ծառայում նրա համար:

§ 25. Լեզվի նյութական նվազագույն միավոր լինելով՝ հնչյունը գործառվում, իր գոյը գտնում է խոսքի մեջ: Բայց հենց այդտեղ էլ այն ոչ թե անխտիր ճիշտ միկերպ, այլ, խիստ ասած, բազմազան ձևերով է հանդես գալիս. նույն հնչյունը, նայած այն շահին, թե ինչ հնչյունի հետ է կապակցվում, ինչ հնչյունի է նախորդում կամ հաջորդում, ինչ հնչյու-

<sup>17</sup> Հայ լեզվաբանական գրականության մեջ ընդունված այդ անվանման փոխարեն Մ. Արեղյանը և Գ. Զահուկյանը (անշուշտ, նրան հետևելով)՝ ճեշարանություն, իսկ Հր. Աճառյանը ձայնագիտություն անվանումն է գործածում:

նական շղթայում է գործածվում, դրանց համապատասխան էլ իր բազմազան ու տարբեր արտահայտություններն է ունենում. համապատասխանաբար բառում, օրինակ, կա 7 ա, որոնք միագծորեն <sup>1 2 3</sup>ա—ա—ա—<sup>4 5 6</sup>ա—ա—ա) ոչ թե ճիշտ նույն, այլ իրարից ինչ-որ շափով տարբեր են արտասանվում:

Այդպես և լավ, լեզու, լի, լինել, լողալ, լույս, լյարդ, լսել, լվալ, լցնել բառերի սկզբի լ-ն ոչ թե ճիշտ նույն կերպ, այլ դարձյալ ինչ-որ շափով տարբեր, ասենք, մի դեպքում՝ կոշտ կամ կիսակոշտ (լավ, լեզու, լողալ, լսել, լցնել), մի այլ դեպքում փափուկ կամ կիսափափուկ (լի, լինել, լույս, լյարդ, լվալ) է արտասանվում: Ճիշտ միատեսակ չի արտաբերվում անգամ բառասկզբի բաղաձայնին հաջորդող՝ գաղտնավանկ կազմող ք ձայնավորը. նկատելի է, որ, օրինակ, ձայնորդների հաջորդելու կամ նախորդելու դեպքում՝ թույլ, իսկ այլ դեպքերում, ընդհակառակն, զգալիորեն ուժեղ է հնչվում, հմմտ. մնալ—մը—նալ, ննջել—նըն—ջել, լոճել—լը—ոճել, խմել—խը—մել, գրվածք—գըր—վածք, սրտանց—սըր—տանց, գնդակ—գըն—դակ, բնազդ—բըն—ազդ և բտել—բըր—տել, դրժգույն—դըրժ—գույն, թխպել—թըխ—պել, ժպիտ—ժըպիտ, խթան—խըթան, ծղրիդ—ծըղ—րիդ, կշտամբել—կըշ—տամբել, հստակ—հըս—տակ, ձկնորս—ձըկ—նորս, շղթա—շըղ—թա, պտույտ—պըտ—ույտ, սղոց—սըղոց, քրժանք—քըժ—նանք և այլն:

Հասկանալի է, որ խոսքում իրենց բազմազան արտահայտություններն են ունենում նաև մյուս բոլոր հնչյունները՝ կազմելով մասնավորի և ընդհանուրի՝ իրար հետ կապված, իրարով պայմանավորված մի համակարգ: Մասնավորը խոսքում հնչյունի ունեցած բազմազան ու տարբեր դրսևորումներն են, որոնք կոչվում են հնչյունի տարբերակ կամ հընչուրդ<sup>18</sup>, իսկ ընդհանուրը այդ բազմազան դրսևորումների ամբողջությունն է և իրավամբ կոչվում է հնչյուն՝ նշանակությունից համապատասխանելով, ասենք, ռուսերենի ЗВУК անվանմանը:

Հնչյունն ու հնչուրդը, իբրև ընդհանուրի և մասնավորի միասնություն կազմող միավորներ, զերաբերում են լեզվի արտաքին հնչյունական կամ զուտ ֆիզիկական կողմին: Այսպիսով, հնչյունը իր տարատեսակներով իրոք լեզվի նյութական նվազագույն միավորն է, որևէ իմաստ չի արտահայտում և, ինչպես ասվել է, ատաղձ է ծառայում նրա համար:

§ 26. Հնչյունների դերը, սակայն, դրանով չի ավարտվում: Լեզվի նյութական ատաղձը կազմելով՝ հնչյունները նաև այնպիսի միավորներ են, որոնք ծառայում են և՛ նրա ճիմաստակիր (նշանակիր) միավորների՝

<sup>18</sup> Հնչյունի տարբերակը այդպես է անվանել է. Ազայանը («Լեզվաբանության հիմունքներ», էջ 235—245):

ձևույթների, բառերի կազմավորման ու զանազանման համար»<sup>19</sup>:

Նման գործառույթ կատարող հնչյունն էլ կոչվում է հնչույթ (ֆոնեմա): Իբրև լեզվի նվազագույն հնչունական միավոր, դա իրոք լեզվական այն տարրն է, որ տարբերում է նրա իմաստային միավորները՝ ձևույթները, բառերը, բառաձևերը և այլն: Իսկ սա նշանակում է, որ հնչույթը շատ ավելի ընդհանուր, վերացարկված հնչունական միավոր է և իրապես այլ բան չէ, քան «հնչունի մտապատկերը» (Գր. Ղափանցյան), «հանրորեն գիտակցված, արժեքավորված» հնչյունը (Գ. Սևակ):

Իբրև այդպիսին, հնչույթը հնչունի պես ևս որևէ իմաստ չի արտահայտում: Բայց, ի տարբերություն դրա, մասնակցում է որոշակի իմաստի ձևավորմանը ու հաղորդմանը և ըմբռնվում իբրև ինքնուրույն հնչունական միավոր, որի ուսումնասիրությունը էլ զբաղվում է հնչունաբանության մի առանձին բաժինը, որը կոչվում է հնչութաբանություն (ֆոնոլոգիա):

§ 27. Հնչութաբանությունը, որ համեմատաբար նոր գիտաճյուղ է, և որի ուսումնասիրության բնագավառում էլ մեծ վաստակ ունեն, օրինակ, Բոդուեն դե Կուրտենեն, ռուսաստանյան հնչութաբանական դպրոցների մի շարք ներկայացուցիչներ (Լ. Վ. Շչերբա, Ն. Ֆ. Յակովլև, Ռ. Ի. Ավանեսով, Ա. Ա. Ռեֆորմատսկի, Վ. Ն. Սիդորով... Պրագայի լեզվաբանական խմբակից՝ Վ. Մատեզիուսը, Ռ. Օ. Յակոբսոնը, Ն. Ս. Տրուբեցկոյը, ինչպես նաև ուրիշ շատերը) «լեզվի հնչունական կողմը քննում է հաղորդակցման ընթացքում նրա ունեցած գործառության (ֆունկցիայի) տեսակետից»<sup>20</sup>: Հնչույթը այդ տեսանկյունից են քննել նաև հայ լեզվաբանները՝ հետևելով հիմնականում ռուսագետ հնչունաբան-լեզվաբաններին:

Մ. Աբեղյանը եթե չի անդրադարձել հնչույթի հարցին և ընդհանուր առմամբ խոսել է «հնչյունների ըմբռնման», «բառի հնչունական կողմի պատկերման» մասին՝ նշելով դրա կարևոր նշանակությունը<sup>21</sup>, ապա Գր. Ղափանցյանը առաջինն է այն քննության արժանացրել՝ հայ իրականության մեջ իրավամբ վաստակելով հնչութաբանության հիմնադրի պատիվը:

Նա հնչույթը համարել է «հնչյունի մտապատկերը՝ ֆոնեման»՝ գտնելով, որ «... լեզվի մեջ բառերի հնչական պատկերներ ունենալը (հիշողության մեջ պահելը) անհրաժեշտ նախապայման է հանդիսանում մի առարկայի պատկերացում կամ հասկացողություն նշանակելու համար և հետևապես մեր լեզվական մտածողությունը ունի իրեն անբաժան և բաղկացուցիչ մաս՝ բառերի հնչական պատկերացումները»<sup>22</sup>:

<sup>19</sup> А. А. Реформатский, Введение в языковедение, М., 1967, с. 211.

<sup>20</sup> А. А. Акишнина, С. А. Барановская, Русская фонетика, М., 1990, с. 7.

<sup>21</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 14, 19:

<sup>22</sup> Գր. Ղափանցյան, Հնդհանուր լեզվաբանություն, էջ 30—31:

Հետագայում, հնչութաբանության ընդհանուր զարգացմամբ պայմանավորված, հնչույթը մեզանում ևս առանձնակի քննության նյութ է դառնում և բնութագրվում լեզվաբանական մի շարք աշխատանքներում<sup>23</sup>։

Այսպիսով՝ իր զարգացման ճանապարհին լեզվաբանական գիտությունը զգալի նվաճումներ է ձեռք բերել հնչույթի լուսաբանության բնագավառում, և նրա մեկնությամբ դա լեզվի հնչյունական այն նվազագույն նյութական միավորն է, որը իմաստագուրկ լինելով՝ իմաստազատիչ դեր է կատարում և, իբրև այդպիսին, բնորոշվում համապատասխան հատկանիշներով։

§ 28. Արդ՝ ի՞նչ հատկանիշներով է բնորոշվում հնչույթը։

Հնչույթը, որ հնչութաբանության ուսումնասիրության բուն առարկան է, հատկանշվում է այն գործառույթով, որ կատարում է լեզվի հնչյունական համակարգում և հաղորդակցման ընթացքում։

Ի տարբերություն հնչյունի, որ է՝ և ըմբռնվում է իբրև արտասանական ու ձայնային երևույթ, հնչույթը, ընդհակառակն, է՝ և ըմբռնվում է իբրև հասարակական երևույթ։ Եվ հետևաբար՝ այն ամենից առաջ հասարակական գործառույթ է կատարում և ըստ այդմ էլ՝ այնպիսի լեզվական իրողություն է, որ առավել մեծ կարևորություն է ներկայացնում ոչ միայն հնչյունաբանության, այլև լեզվաբանական դիստուիցիայի համար ընդհանրապես։

Երկրորդ՝ հնչույթը, իմաստագուրկ լինելով հանդերձ, հասարակական գործառույթի հետ մեկտեղ իմաստազատիչ դեր է կատարում լեզվում։ Այդպիսով այն հիմնախարիսխ է ծառայում լեզվի իմաստային միավորների՝ բառերի, բառաձևերի և ձևույթների ոչ միայն կազմավորման, այլև զանազանման ու տարբերակման համար։

Երրորդ՝ հնչույթը մի շարք՝ տարբերակիչ և ոչ տարբերակիչ հատկանիշների միասնություն է կազմում և դրան համապատասխան բնորոշվում տարբեր կարգի իրողություններով։

Չորրորդ՝ հնչույթը, իբրև լեզվի հնչյունական կազմի միավոր, իր իսկ կառուցվածքով պայմանավորված, տարբեր հակադրություններ է կազմում լեզվի համակարգում։

Հինգերորդ՝ հնչույթը տարբեր արտասանական պայմաններում (իրավիճակներում) տարբեր (ուժեղ կամ թույլ) դիրքեր է ունենում և այլն։

Սրանցից, սակայն, ամենաէականն այն է, որ հնչույթը իմաստակիր միավորներ կազմող կամ ձևավորող, ավելի ընդհանուր ու վերացարկված հնչյունական միավոր է և իմաստազատիչ դեր կատարելով՝

<sup>23</sup> Տե՛ս Գ. Աևոկ, *Փամանակակից հայոց լեզվի գաղափարաբանություն*, Երևան, 1955, էջ 79—80, է. Բ. Աղայան, *Լեզվաբանության հիմունքներ*, Երևան, 1967, էջ 235—262, Վ. Գ. Առափնյան, Ա. Հ. Խաչատրյան, Ս. Ա. Էրայան, *Փամանակակից հայոց լեզու*, հտ. Գ, Երևան, էջ 29—36 և այլն։

ներա հիմնական կամ գլխավոր տարբերակիչ հատկանիշն է հանդիսանում:

§ 29. Դա են հաստատում հնչույթները հատկապես իրենց հակադրություններով, որոնք բազմաթիվ են ու բազմաբնույթ: Նրանք կարող են հակադրվել և հակադրվում են, օրինակ, ձայնեղությամբ ու խլությամբ, ձայնեղությամբ ու շնչեղությամբ, խլությամբ ու շնչեղ խլությամբ, արտաբերության տեղով՝ առաջնալիքվայնությամբ ու ետնալիքվայնությամբ, շրթնայնությամբ ու ոչ շրթնայնությամբ, ետնալիքվայնությամբ ու հագագայնությամբ..., արտաբերության եղանակով՝ պայթականությամբ ու շփականությամբ, պայթականությամբ ու կիսապայթականությամբ, շփականությամբ ու կիսապայթականությամբ, սուլականությամբ ու շշականությամբ և այլն:

§ 30. Այդ բազմաթիվ ու բազմատեսակ հակադրությունները, սակայն, ճիշտ միատեսակ արժեք չունեն: Առավել մեծ արժեք ունեն այն հակադրությունները, որոնց դեպքում հնչույթները իմաստազատիչ դեր են կատարում և այդպիսով տարբերում մի շարք բառեր, բառաձևեր, ձևույթներ իրարից, հմմտ., օրինակ.

ատել	աժ	կսր	արա	բսկ	գոլ	դեր	ձախ	—
էտել	իժ	կեր	արի	պոկ	կոզ	տեր	ծախ	նար
ուտել	ուժ	կոր	արու	փոկ	հոզ	թեր	ցախ	չար

Եթե ձայնավորով իրարից տարբերվող բառերում հնչյունները (հրնչույթները) հակադրվում են արտաբերման տեղով կամ աստիճանով, ապա բաղաձայնով սկսվող բառերում նրանք հակադրվում են ձայնեղությամբ, խլությամբ, շնչեղ խլությամբ: Այդպես և, ասենք, ձայնեղությամբ ու խլությամբ իրար են հակադրվում զ ←→ ս, ժ ←→ շ, դ ←→ լ, վ ←→ խ, վ ←→ հնչույթները մի շարք բառերում, ինչպես, օրինակ. գով—սով, գուտ—սուտ, մազ—մաս, ուժ—ուշ, վաղ—վախ, աղ—ախ, հավ—հաֆ, ով—օֆ և այլն: Հմմտ. նաև բառաչ—կառաչ—հառաչ—շառաչ, բրիչ—գրիչ—սրիչ, կանչ—մանչ—չանչ, բար—գար—դար—գար—լար—խար—կար—հար—ձար—նար—յար—շար—սար—վար—բար, լույս—կույս—հույս—բույս—խույս և այլն, որոնցում տարբեր հնչույթներ տարբեր հատկանիշներով են հակադրվում իրար:

Հնչույթների իմաստազատիչ դերը պարզորոշ երևում է նաև այն բառերում, որոնց սկզբնահնչյունի անկմամբ այլ բառեր են ստացվում, օրինակ. համառ—ամառ—մառ—(ռ), անուշ—նուշ—ուշ—(շ), գալիք—ալիք—լիք—իք—(ք), մամուլ—ամուլ—ուլ—(լ), այլև՝ կարագ—արագ, կարոտ—արոտ, ցանել—անել, գահ—ահ, բարի—արի, քութ—ութ, ծափ—ափ, ծայր—այր, խավար—ավար, սանձ—անձ և այլն:

Սրանք ևս ցույց են տալիս, որ կան իրոք բազմատեսակ հակադրություններ, որոնց մի մասը եթե՝ մի, մի այլ մասը մի քանի իմաստա-

զատիչ հատկանիշի վրա է խարսխվում: Ըստ այդմ էլ հակադրությունները լինում են միահատկանիշ և ոչ միահատկանիշ, որոնք իրենց հերթին տարբերակվում են ուժեղ (սովորաբար՝ բառասկզբում, բառամիջում) և թույլ (սովորաբար՝ բառավերջում) դիրքերով:

Այսպիսով, հնչույթները ներկայացնում են իրոք բավականին բարդ հնչյունական համակարգ, որի մասին էլ պարզ պատկերացում ենք կազմում նաև արտասանվածքի վերլուծությամբ:

### ԱՐՏԱՍԱՆՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ

§ 31. Ինչպես հնչյուններն իրենց զանազանություններով՝ հնչույթներով, այնպես էլ իմաստազատիչ-իմաստատարբերակիչ հնչյունական միավորները՝ հնչույթները, իրացվում են խոսքում կամ խոսքի շղթայում: Իսկ սա նշանակում է, որ նրանք բնավ անկախաբար, ինքնուրույնաբար գոյություն չունեն, և ոչ թե նախապես հնչյուն-հնչույթներ են ստեղծվել լեզվի իմաստակիր միավորների կազմավորման ու արտահայտման համար, այլ հենց սկզբից նրանք դրանց բաղկացուցիչ տարրերն են կազմել: Եվ երբ մենք խոսում ենք առանձին հնչյունների և հնչույթների մասին, ապա դա անում ենք գիտական վերլուծության, լեզվի հնչյունական համակարգը ավելի պարզորոշ պատկերելու նպատակով:

Արտասանվածքի վերլուծությամբ հնչյունաբանությունը հենց այդպիսի նպատակ է հետապնդում:

§ 32. Դեռևս իր ժամանակին Մ. Աբեղյանն է նկատել, որ «Ամեն բաղադրված բան կարելի է վերլուծել, այսինքն՝ որոշել, թե ինչպիսի բաղադրիչ մասերից է կազմված: Օրինակ՝ տուն բառը կարելի է վերլուծել և ցույց տալ, որ կազմված է տ, ու, ն հնչյուններից...: Նույնպես կարելի է վերլուծել մի ասացված և որոշել, թե քանի խոսքերից (իմա՝ նախադասություններից— Ա. Մ.) է բաղադրված, և ապա ամեն մի խոսք, թե քանի բառից է կազմված, «Ասացվածք կազմվում է խոսքերից, խոսքերը՝ բառերից, բառը՝ հնչյուններից: Խոսք, բառ և հնչյուն լեզվի էական բաղադրիչ մասերն են»<sup>24</sup>:

Արտասանվածքի (ասացվածի, ասույթի) այդօրինակ վերլուծություններ են կատարել ինչպես օտարազգի, այնպես էլ հայ մի շարք լեզվաբաններ՝ ցույց տալով, թե իրապես ինչ բաղադրիչներից է կազմված այն:

§ 33. Ներկայումս ընդունված է արտասանվածքը տարրալուծել կամ հատույթավորել ըստ հնչանախադասության, հնչանախադասությունը՝ ըստ հնչատակտերի կամ հնչաշարույթների, հնչատակտերը կամ հնչաշարույթները՝ ըստ հնչաբառերի, հնչաբառերը՝ ըստ հնչավանկերի, հնչավանկերն էլ ըստ հնչյունների: Եվ այսպիսով՝ հնչանախադասություն,

<sup>24</sup> Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906, էջ 4:

հնչատակտ (հնչաշարույթ), հնչաբառ, հնչավանկ, հնչյուն, կամ հակառակ ձևով առած՝ հնչյուն, վանկ, բառ, շարույթ (հնչատակտ), նախադասություն, — սրանք են ահա խոսքի (արտասանվածքի) հիմնական բաղկացուցիչ մասերը, որոնց ուսումնասիրությամբ էլ զբաղվում են լեզվաբանության տարբեր բաժինները:

§ 34. Առաջին երկու իրողությունների՝ հնչյունի (հնչույթի), հնչյունավանկի, ուսումնասիրությամբ զբաղվում է հնչյունաբանությունը և արտասանվածքի վերլուծությամբ բացահայտում այն բազմատեսակ զբոսկորումները, որ հանդես են բերում նրանք լեզվի հնչյունական ընդհանուր համակարգում, բազմաբանակ բառերում ու բառակապակցություններում:

Իբրև օրինակ, վերլուծենք Ակսել Բակունցի «Միրհավ» պատմվածքից առնված հետևյալ՝ «Ամայի ձորերում, դեղնակարմիր անտառի և հնձած արտերի վրա իջել էր մի պայծառ տխրություն» «արտասանվածքը»:

Սա մի ամբողջական նախադասություն է, որը տարրալուծվում է ըստ հնչատակտերի՝ Ամայի ձորերում / դեղնակարմիր անտառի և հնձած արտերի վրա / իջել էր մի պայծառ տխրություն. հնչատակտերը ըստ հնչաբառերի՝ Ամայի / ձորերում / դեղնակարմիր / անտառի / և / հնձած / արտերի / վրա / իջել / էր / մի / պայծառ / տխրություն. հնչաբառերն ըստ հնչավանկերի՝ ա-մա-յի ձո-րե-րում, դեղ-նա-կար-միր ան-տա-ռի և (յէվ) հրն-ձած ար-տե-րի վր-րա ի-ջե-լէր մի պայ-ծառ տրխ-րու-թյուն. հնչավանկերն էլ ըստ հնչյունների (հնչույթների)՝ ա-մ-ա-յ-ի / ձ-ո-ր-ե-ր-ու-մ /, դ-ե-ղ-ն-ա-կ-ա-ր-մ-ի-ր / ա-ն-տ-ա-ռ-ի / յ-ե-վ / հ-ր-ն-ձ-ա-ծ / ա-ր-տ-ե-ր-ի / վ-ր-ր-ա / ի-ջ-ել / է-ր / մ-ի / պ-ա-յ-ծ-ա-ռ / տ-ր-խ-ր-ու-թ-յ-ու-ն:

Այս հնչանախադասությունը, որի վերլուծությամբ կամ հատույթավորմամբ հասնում ենք լեզվի ամենափոքր միավորին, բաղկացած է 3 հնչատակտից (հնչաշարույթից), 13 հնչաբառից, 30 հնչավանկից, 71 հնչյունից:

Ինչպես դժվար չէ նկատել, դա ամբողջից դեպի մասնակին գնացող վերլուծություն է, որը ցույց է տալիս, որ կա լեզվի նյութական նվազագույն միայն մի միավոր, այդ միավորը հնչյունն է, որ մի կողմից նրա ատաղձը, նյութական թաղանթն է կազմում՝ խոսքի շղթայում հանդես գալով ձայնական-արտասանական բազմազան դրսևորումներով, իսկ մյուս կողմից՝ հասարակայնորեն գիտակցված իրողություն է հանդիսանում, իմաստազատիչ-իմաստատարբերակիչ դեր է կատարում լեզվում և, իբրև ավելի ընդհանուր ու վերացարկված հասկացություն, լեզվաբանական-գործառութային առավել մեծ արժեք ներկայացնում: Նման դեր կատարող հնչյունն էլ հենց հնչույթն է, և ըստ այդմ էլ ոչ թե հրն-



չյունը՝ հնչույթի, այլ, ընդհակառակը, հնչույթն է հնչյունի դրսևորումը լեզվում:

Այսպիսով՝ ինչպես ձայնական-արտասանական տարբեր արտահայտություններով, այնպես էլ վերացարկմամբ, հասարակական արժեքով, իմաստազատիչ-իմաստատարբերակիչ դերով հնչյունը լեզվի հնչյունական համակարգի առանցքն է կազմում, և հետևաբար՝ միանգամայն տեղին է ու ճիշտ, որ նրանով զբաղվող գիտությունը ընդհանրապես հնչյունաբանություն է կոչվում:

## ՀԱՅԵՐԵՆԻ ՀՆԶՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

§ 35. Հայոց լեզվի հնչյունները իրենց դրսևորումներով ու գործառույթներով կազմում են նրա հնչյունական համակարգը: Հայոց լեզուն ունի հասարակայնորեն արժեքավորված ու գիտակցված, իմաստազատիչ-իմաստատարբերակիչ դեր կատարող 36 հնչյուն, որոնք լեզվաբանական-գործառութային առումով հնչույթ են կոչվում: Ըստ այդմ էլ հայերենում հնչյուններն ու հնչույթները քանակապես համընկնում են, և հնչյուն լեզվաբանական անվամբ հնչույթն է հասկացվում: Ուստի և՛ երբ մենք ասում ենք, թե հայերենը 36 հնչյուն ունի, ապա նկատի ենք առնում ոչ թե ամեն տեսակի, այլ միայն այն հնչյունները, որոնք ընդհանրական արժեք ունեն և իմաստազատիչ-իմաստատարբերակիչ դեր են կատարում նրա հնչյունական համակարգում: Այս առումով լիովին արդարացվում է նաև հնչույթի փոխարեն վաղ ժամանակներից եկող երևչյուն գիտանվանման գործածությունը:

## ՀԱՅԵՐԵՆԻ ՀՆԶՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

§ 36. Հայոց լեզվի հնչյունները (հնչույթները) դասակարգվում են չորս հիմնական սկզբունքով. ա) ըստ ձայնի և աղմուկի հարաբերության կամ տեսակարար կշռի, բ) ըստ արտաբերության տեղի, գ) ըստ կազմավորման ու արտաբերության եղանակի և դ) ըստ կազմության:

Յուրաքանչյուր դասակարգման հիմքում, ինչպես դասակարգումների բնութագրումներն են ցույց տալիս, ընկած է մի որոշակի, էական հատկանիշ:

§ 37. Հնչյունների՝ ըստ ձայնի և աղմուկի հարաբերության կամ տեսակարար կշռի կատարված դասակարգման դեպքում նկատի է առնվում, թե նրանք ինչ չափով են ձայն և աղմուկ պարունակում իրենց մեջ, թե որ հնչյուններն են, որ զուտ ձայնից, որ հնչյուններն են, որ ձայնից ու աղմուկից, և որ հնչյուններն են, որ միայն աղմուկից են կազմված:

Հնչյունների այդ՝ ձայնաաղմկային հարաբերությունն էլ պայմանավորվում է հիմնականում նրանց արտաբերության ընթացքում ձայնա-

լարերի խաղացած դերով. հնչյուններ կան, որոնց արտաբերմանը մասնակցում են ձայնալարերը, հնչյուններ էլ կան, որոնց արտաբերմանը նրանք չեն մասնակցում: Ըստ այդմ հնչյունները բաժանվում են երկու մեծ խմբի՝ ա) ձայն ունեցող և բ) ձայն չունեցող: Չայն ունեցող հնչյունների արտաբերմանը, սակայն, ձայնալարերը ճիշտ միատեսակ ձևով կամ չափով չեն մասնակցում. հնչյուններ կան, որոնց արտաբերման ժամանակ ձայնալարերը պարբերաբար թրթռում են: Այդպիսի հնչյունները կազմված են զուտ ձայնից և արտաբերվում են առանց արտասանական գործարաններում զգալի արգելք ստեղծվելու: Դրանք ձայնավորներն են, որոնք Ծ-ն են՝ ա, օ (ո), ու, ը, է (ե), ի:

Հնչյուններ կան, որոնց արտաբերման ժամանակ ձայնալարերը թեև շատ, բայց պարբերաբար չեն թրթռում. ուստի՝ նրանց մեջ, ճիշտ է, գերիշխում է ձայնը, բայց կա նաև աղմուկ: Այդպիսի հնչյունները կոչվում են ձայնորդ հնչյուններ, որոնք ևս Ծ-ն են՝ մ, ն, լ, ր, ո, յ:

Հնչյուններ կան, որոնց արտաբերման ժամանակ ձայնալարերը քիչ են թրթռում, ուստի և նրանց մեջ ոչ թե ձայնը, այլ աղմուկն է գերիշխում: Այդպիսի հնչյունները կոչվում են ձայնեղ կամ ձայնեղ աղմկավոր հնչյուններ, որոնք Ծ-ն են՝ ք, դ, գ, վ, զ, ժ, ձ, ջ, դ:

Հնչյուններ էլ կան, որոնց արտաբերությանը ձայնալարերը բուրբուրվին չեն մասնակցում, և նրանք, բնականաբար, կազմված են զուտ աղմուկից: Այդպիսի հնչյունները կոչվում են խուլ կամ անձայն աղմկավոր հնչյուններ, որոնք 15-ն են՝ պ, փ, ֆ, ա, ք, ս, շ, ծ, ց, ճ, չ, խ, կ, փ, ն:

Այսպիսով՝ ըստ ձայնի և աղմուկի հարաբերության կամ տեսակարար կշռի հայերենի հնչյունները լինում են՝ 1) ձայնավորներ, 2) ձայնորդներ, 3) ձայնեղներ և դ) խուլեր, որոնցից վերջինները, ի տարբերություն առաջինների, միասին կոչվում են քաղաձայններ:

Այդ բոլոր՝ 36 հնչյուններից (հնչույթներից) 21-ի արտաբերմանը ձայնալարերը ավել կամ նվազ չափով են մասնակցում, իսկ 15-ի արտաբերմանը չեն մասնակցում: Ընդ որում ամբողջից ձայնավորները հանելու դեպքում տեսնում ենք, որ 30 բաղաձայն հնչյուններից 15-ի արտաբերությունը տեղի է ունենում ձայնալարերի մասնակցությամբ, իսկ 15-ինը՝ ոչ: Դրանով, անշուշտ, հավասարակշռվում են ձայն ունեցող և ձայն չունեցող (անձայն աղմկավոր) բաղաձայն հնչյունները և յուրահատուկ ներդաշնակություն ստեղծում նրանց ընդհանուր համակարգում:

§ 38. Հնչյունների՝ ըստ կազմավորման և արտաբերման եղանակի դասակարգման դեպքում նկատի է առնվում, թե ինչպես են կազմավորվում ու արտաբերվում նրանք: Ծթե ձայնավորների արտաբերությունը մի տեսակ անորոշ է և խստորեն տեղայնացված չէ, ապա բաղաձայններինը, ընդհակառակը, կայուն է և տեղի է ունենում արտասանական գործարանների որոշակի մասերում՝ երեք եղանակով. ա) բաղաձայն հնչյուններ (հնչույթներ) կան, որոնց արտաբերության ժամանակ ար-

տասանական գործարանների տարբեր մասերում՝ շրթունքների, լեզվի լսողների մասի և վերին ատամնաշարի, լեզվի ետևի մասի և փափուկ քիմքի միջև փակվածք է ստեղծվում, որը պայթում է թոքերից եկած օդի ազդեցությամբ:

Այդպիսի հնչյունները կոչվում են պայթական հնչյուններ, որոնք 9-ն են՝ ք-պ-փ, դ-տ-ք, գ-կ-խ:

Պայթական հնչյունների արտաբերությունը տեղի է ունենում անմիջականորեն, ուստի նրանք կոչվում են նաև վայրկենական հնչյուններ:

բ) Բաղաձայն հնչյուններ (հնչույթներ) կան, որոնց արտաբերության ժամանակ արտասանական գործարաններում ոչ թե փակվածք, այլ նեղվածք է ստեղծվում, որի մասերին շփվելով թոքերից եկած օդը՝ աղմուկ է առաջ բերում: Նեղվածքներ են ստեղծվում արտասանական գործարանների ավելի շատ մասերում՝ ստորին շրթունքի՝ և վերին ատամնաշարի, լեզվի ծայրի և վերին ատամնաշարի, լեզվի ետին մասի և փափուկ քիմքի, լեզվի ծայրի և կոշտ քիմքի և այլն միջև:

Նեղվածքով արտաբերվող հնչյունները կոչվում են շփական հնչյուններ, որոնք 15-ն են՝ վ, ֆ, գ, ս, ժ, շ, դ, խ, ց, մ, և, լ, ր, ո, յ: Դրանք համեմատաբար երկար են արտաբերվում, ուստի կոչվում են նաև տևական հնչյուններ:

գ) Բաղաձայն հնչյուններ (հնչույթներ) կան, որոնց արտաբերությունը տեղի է ունենում փակվածքի և նեղվածքի համաժամանակյա գործողությամբ՝ լեզվի ծայրի ու վերին ատամնաշարի կամ նրա ու կոշտ քիմքի միջև: Ընդ որում երկու դեպքում էլ արտաբերությունը յկսվում է փակվածքով ու ավարտվում նեղվածքով, ուստի և նրանք կոչվում են պայթաշփական հնչյուններ: Դրանք 6-ն են՝ ձ-ծ-ց, շ-ճ-չ, որոնք և եթե Մ. Աբեղյանը կես-պայթականներ, ապա ուրիշները միանգամայն անտեղի կիսաշփականներ են անվանում:

§ 39. Հնչարտաբերության եղանակի հետ կապվում է մի այլ երեվույթ ևս. հնչյուններ կան, որոնք արտասանելիս կարելի է սուլել, հընչյուններ էլ կան, որոնք կարելի է շաշյունով արտասանել: Առուջինները կոչվում են սուլական, իսկ երկրորդները՝ շշական: Հայերենի սուլական հնչյուններն են՝ գ, ս, ձ, ծ, ց, իսկ շշականներն են՝ ժ, շ, չ, ց, չ:

Բացի այդ, կան այսպես կոչված ուժեղ կամ կոշտ և թույլ կամ փափուկ՝ բաղաձայններ. ուժեղ են կոչվում առհասարակ առանց ձայնալարերի թրթռումների, իսկ թույլ կամ փափուկ՝ ձայնալարերի թրթռումով արտաբերվող հնչյունները:

§ 40. Հնչյունների (հնչույթների)՝ ըստ արտաբերման տեղի կատարված դասակարգման դեպքում նկատի է առնվում, թե արտասանական գործարանների ինչ տեղով են արտաբերվում նրանք: Ընդ որում եթե ձայնավորների արտաբերության տեղը նույնպես տարրորջ է և ինչ-որ շփուկ փոփոխական, ապա բաղաձայններինը՝ խիստ որոշակի է և կա-

յուն: Այդ պատճառով ձայնավորները կոչվում են ոչ տեղայնացված, իսկ բաղաձայնները՝ տեղայնացված հնչյուններ:

§ 41. Հիմնականում ընդունված է ասել, որ ըստ արտաբերութայն տեղի բաղաձայնները լինում են՝

1) Շրթնային՝ բ, պ, փ, մ. 2) Շրթնատամային՝ վ, ֆ. 3) Առաջնալեզվային՝ դ, տ, բ, գ, ս, ժ, շ, ձ, ծ, ց, ջ, ն, չ, և, այլև՝ լ, ռ, ո. 4) Միջնալեզվային՝ յ. 5) Ծտնալեզվային՝ դ, խ, գ, կ, ֆ. 6) Հագագային՝ ն: Այդ հնչյուններից յուրաքանչյուրի արտասանութունը իր համապատասխան տեղում իրացվում է երեք փուլով (ֆազով): Դրանք են՝ ա) սկիզբ կամ մուտք, երբ արտասանական «գործարանները աշխատանքի են անցնում», բ) միջին մաս՝ կացք կամ պահք, երբ այդ «գործարանները հաստատուն դիրք են ստանում տվյալ արտասանութայն համար» և գ) էջք, ելք կամ դարձ, երբ «գործարանները դառնում են աշխատանքի շանցած վիճակին»<sup>25</sup>:

§ 42. Բաղաձայն հնչյունների (հնչույթների)՝ ըստ կազմութայն դասակարգման դեպքում էլ նկատի է առնվում նրանց ներքին բաղադրութունը: Իբրև լեզվի նյութական նվազագույն միավորներ, հնչյունները արդյոք տարրալուծելի՞ են, թե՞ ոչ: Դասական լեզվաբանութունը այս հարցին դրական պատասխան է տվել և նշել, որ հայերենի բաղաձայններն ըստ ներքին բաղադրութայն կամ կազմութայն լինում են երկու տեսակ՝ պարզ և բարդ<sup>26</sup>:

Պարզ են կոչվում միայն փակվածքի կամ նեղվածքի, իսկ բարդ՝ փակվածքի և նեղվածքի միաժամանակյա գործողութամբ արտաբերվող հնչյունները: Ըստ այդմ էլ՝ պարզ են ձայնավորները (ա, օ, ու, է, ի, ը), ձայնորդները (մ, ն, լ, ռ, ո, յ), շփական ձայնեղներն ու խուլերը (վ, ֆ, գ, ս, ժ, շ, դ, խ, ն), բարդ են շնչեղ խուլերը (փ, ք, ֆ) և պայթաշփականները (ծ, ծ, ց, ջ, և, չ):

Բարդ հնչյուններն իրենց հերթին երկու խմբի են բաժանվում: Մի խումբը կազմում են շնչեղ խուլերը (ընդհանուր լեզվաբանական անվանմամբ՝ ասպիրատները), մյուս խումբը՝ պայթաշփականները (ընդհանուր լեզվաբանական անվանմամբ՝ աֆրիկատները):

Բարդ հնչյունների այդ երկու տեսակները լիրարից տարբերվում են թե՛ կազմավորմամբ և թե՛ բաղադրութայն: Շնչեղ խուլերը կազմված են պարզ խուլ պայթականից ու շնչից՝ հագագային ն-ից, իսկ պայթաշփականները նույն շարքի պայթականից ու շփականից, այսպես՝ փ = պ + հ, ք = տ + հ, ֆ = կ + հ, ձ = դ + ղ, ծ = տ + ս, ց = ք (-տ + հ) + ս, ջ = դ + ժ, ն = տ - շ, չ = ք (-տ + հ) + շ:

<sup>25</sup> А. А. Реформатский, Введение в языковедение, с. 165.

<sup>26</sup> Տե՛ս, օրինակ, Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 84—85, Գր. Ղափանցյան, Հնդհանուր լեզվաբանություն, էջ 62 և այլն:

Հայոց լեզուն ունի դրանց նման կազմութիւնն ապացուցող հավաստի փաստեր: Ոչ թե պատահական, այլ միանգամայն օրինաչափական պետք է համարել կամ բարդ հնչյունների իսկությամբ պետք է բացատրել, որ սեպուն + ական (> սեպհական), արտասուփ (> արտսուփ > արտհրսուփ > արթսուփ / արթսունք), պատասխանի (պատասխան — պատսխան — պատհսխան), քշուառ նախաձոր ձևերից առաջ են եկել սեփական, արցունք, պացխուն (միջին հայերենում), շուառ > շվառ բառերը, որ գրաբարը ձի-ից բացի գիտի նաև դգի ձևը, չի բացատրում, որ ծ հնչյունի տարրալուծմամբ առաջ եկած լինեն իրոք ծածաճել, տատաճել, սասաճել բառերը<sup>27</sup> և այլն:

§ 43. Եվ զարմանալ միայն կարելի է, որ վերջին տարիներս հրատարակված որոշ աշխատանքներում այդ ամենը անտեսվում, և բանն այնպես է ներկայացվում, թե իբր բաղաձայն հնչյունների ըստ կազմության դասակարգումը անհիմն է ու սխալ, թե իբր բաղաձայնների՝ պարզի և բարդի բաժանումը գալիս է Մ. Արեղյանից, Մ. Արեղյանը և ուրիշները «կազմավորման բարդութիւնը նույնացնում» են «հնչյունների գումարի հետ», թե իբր «ժամանակակից հնչյունաբանության ու հնչույթաբանության տվյալների լույսի տակ (°)» հաստատվում է, որ «հայերենի բաղաձայնների նման բաժանումը ճիշտ չէ»<sup>28</sup> և այլն:

Մ. Արեղյանին և ուրիշներին ներկայացված այդօրինակ մեղադրանքը «հիմնավորվում է» նրանով, թե իբր հնչյունների ըստ կազմության դասակարգումը այլ բան չէ, քան «աղմուկի առաջացման նկարագրութիւն», թե իբր հայ լեզվաբանները բարդ համարված հնչյունները դիտում են իբրև երկու կամ երեք հնչյունների միախառնական գումար, թե իբր նրանք մերժել են դրանց միահնչյունութիւնը, և որի «պարզության օգտին են վկայում նաև փորձառական տվյալները՝ տևողութիւնը, կազմավորման տեղը և սպեկտրալ պատկերի յուրահատկութիւնը»<sup>29</sup>:

Դրանք, սակայն, նույնպես միանգամայն անհիմն ու անտեղի պատճառաբանութիւններ են: Ո՛չ Մ. Արեղյանը և ո՛չ էլ հնչյունները ըստ կազմության դասակարգող մյուս հայ լեզվաբանները բարդ հնչյունները ոչ թե երկու կամ երեք հնչյունների միախառնական գումար, այլ իրար հետ բաղաձայնաված հնչյունական տարրերի մի ամբողջական քիմիական միասնութիւն են դիտել, և որի «պարզության օգտին» էլ չէին կարող շվկայել այսպես կոչված «նաև փորձառական տվյալները՝ տևողութիւնը, կազմավորման տեղը և սպեկտրալ պատկերի յուրահատկութիւնը»: Այսօրանից հետևում է, որ բարդ հնչյունները յուրահատուկ, բայց նույնպես

<sup>27</sup> Դրանք այդպես է մեկնաբանել Գր. Ղափանցյանը, որ, սակայն, Հր. Աճառյանը մերժելի է համարել:

<sup>28</sup> Վ. Դ. Առափնյան, Ա. Հ. Խաչատրյան, Ս. Ա. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հտ. 1, էջ 19—21:

<sup>29</sup> նույն տեղում:

ինքնորոշ հնչյուններ են և իրենց բաղադրությամբ կարող են համեմատվել այն գույների հետ, որոնք տարբեր գույների ոչ թե նույնպես ֆիզիկական, այլ քիմիական միացություն են կազմում:

Այսպիսով՝ հնչյունների ոչ թե ըստ կազմության դասակարգումը, այլ դրա մերժումն է սխալ ու մերժելի:

Ավելորդ չէ նաև ասել, որ բարդ հնչյուններին տրված անվանումները ևս վկայում են, որ իրենց կազմությամբ նրանք տարբերվում են պարզ հնչյուններից և իսկապես բարդ հնչյուններ են, որոնց ճանաչումով էլ հայերենի հնչյունական համակարգը ավելի ճշտորեն է ներկայացվում:

#### ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐ. ՆՐԱՆՑ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

§ 44. Ինչպես ասվել է, ձայնավոր եւ կոչվում զուտ ձայնից կազմված և առանց զգալի արգելքի արտաբերվող հնչյունները: Հայերենում ձայնավորները 6-ն են, որոնք արտահայտվում են 8 տառով՝ ա, օ (ո), ու, է (ե), ի, բ: Նրանց արտաբերման ընթացքում առաջին հերթին շատ մեծ դեր են կատարում ձայնալարերը՝ իրենց պարբերաբար թրթռումներով:

Ձայնալարերի անընդմեջ գործունեության հետ կապված՝ ձայնավորների արտաբերության ժամանակ ոչ պակաս կարևոր դեր է կատարում նաև բերանի խոռոչը. ընդ որում նրանց արտաբերությանը մասնակցում են՝ ա) լեզուն, բ) շրթունքները, գ) ներքին ծնոտը և դ) կատիկը: Դրանցից, սակայն, առավել գործունը լեզուն է, որը և «ունի ամենուկարևոր դերը ձայնավորների արտասանության մեջ. նա է, որ տալիս է այն ձևն ու մեծությունը, որ պետք է առաջ բերելու համար ձայնավորի համար այս կամ այն երանգը»<sup>30</sup>:

Բայց դրանով, իհարկե, չի նսեմացվում մյուս գործարանների դերը: Ինչպես կարելի է ինքնադիտարկմամբ ստուգել, ձայնավորների արտաբերության ժամանակ հիշյալ գործարաններից ոչ մեկը բացարձակապես անգործ կամ չեզոք չի մնում: Եվ անշուշտ, ինչպես ձայնալարերի, այնպես էլ նրանց բոլորի մասնակցությամբ է, որ բերանի խոռոչը արձագանքարան է ծառայում ձայնավորների համար: Նմանապես պատահական չպետք է համարել, որ ձայնավորների արտաբերության ժամանակ արտասանական գործարանները շատ ավելի շարժուն են և նայած բերանի բացվածքի ծավալին, ինչպես նաև նրանց բնույթին, զանազան դրություններ են ստանում և «բրանգների մի հարափոփոխ զանազանություն» առաջ բերում «խոսողության մեջ»<sup>31</sup>:

§ 45. Այսքանից հետևում է, որ ձայնավորները բացարձակապես

<sup>30</sup> Հր. Աճառյան, կիսատար քերականություն հայոց լեզվի, հտ. 6, էջ 111:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 126:

ճիշտ նույն տեղով շին արտաբերվում, գամված շին մի կետի և շարունակ «տեղաշարժվում են»: Բայց սա չի նշանակում, թե նրանք վայրիվերո ձևով են արտաբերվում և իրենց կազմավորման սահմանորոշ տեղը կամ ոլորտը չունեն. բնա՛վ:

Հնչյունաբանները իրավացիորեն ձայնավորները շտեղայնացված հնչյուններ համարելով՝ միաժամանակ նշել են, որ ըստ լեզվի մասնակցության և շարժական դիրքի նրանք բաժանվում են 3 խմբի կամ լինում են 3 տեսակ՝ առաջնալեզվային («առաջնաքիմբային»), միջնալեզվային («միջնաքիմբային») և ետնալեզվային («ետնաքիմբային»):

Սանթրուպյուն.— Ոմանք ուս լեզվաբաններին հետևելով՝ հիշյալ անվանումների փոխարեն գործածում են առաջին շարքի, երկրորդ շարքի և երրորդ շարքի ձայնավորներ, անշուշտ, անհաջող և հետևարար՝ նաև մերժելի անվանումները:

§ 46. Հայերենը ունի 2 առաջնալեզվային, 1 միջնալեզվային և 3 ետնալեզվային ձայնավոր: Առաջնալեզվային են է (ե)-ն և ի-ն, միջնալեզվային՝ ր-ն, ետնալեզվային՝ ա-ն, օ (ո)-ն և ու-ն:

Այդ երեք մասերում դրանք արտաբերելիս լեզուն միաժամանակ կարող է տարբեր դիրքեր ընդունել և համապատասխանաբար տարբեր աստիճանի բարձրացումներ ունենալ: Այդ բարձրացումները երեքն են՝ ստորին, միջին և վերին, որոնք և կապվում են լեզվի նույն մասի տարբեր դիրքերի հետ: Ետնալեզվային ձայնավորները հատկանշվում են լեզվի ետին մասի երեք՝ ստորին, միջին և վերին, միջնալեզվային ձայնավորը՝ լեզվի միջին մասի միջին, առաջնալեզվային ձայնավորներն էլ երկու՝ լեզվի առջև մասի միջին և վերին աստիճանի բարձրացումներով:

Ետնալեզվային ձայնավորներից ստորին բարձրացման է ա-ն, միջին բարձրացման՝ օ (ո)-ն, վերին բարձրացման՝ ու-ն: Միջնալեզվային միակ ձայնավորը՝ ր-ն, միջին բարձրացման է, իսկ առաջնալեզվային ձայնավորներից միջին բարձրացման է է (ե)-ն, վերին բարձրացման՝ ի-ն:

Այդ տարբեր աստիճանի բարձրացումները այլ բան չեն, քան ձայնավորներ, իբրև ոչ տեղայնացված հնչյունների, բազմազանության արտահայտություններ, որոնք, սակայն, միայն լեզվի երեք մասերի տարբեր դրությամբ ու դերով շին պայմանավորվում:

Մյուս գործարանները և հատկապես՝ շրթունքները ևս որոշակի դեր են կատարում ձայնավորների արտասանական տեղայնացման ու տեղաբաշխման գործընթացում:

Արդ տեսնենք, թե կոնկրետ ինչ պատկեր են ներկայացնում ձայնավորներն ըստ իրենց արտաբերության տարբեր տեղերի:

#### Ա. Ետնալեզվային ձայնավորները և նրանց արտասանական բնութագիրը

§ 47. Հայերենի 6 ձայնավորներից 3-ը՝ ա-ն, օ (ո)-ն և ու-ն, կազմավորվում են լեզվի ետին մասում և դրա համար էլ կոչվում են ետնա-

լեզվային ձայնավորներ: Կազմավորման տեղով համընկնելով հանդերձ՝ դրանք իրարից տարբերվում են, սակայն, ոչ միայն բարձրացման աստիճաններով, այլև արտասանական գործարանների դրսևորումներով, ինչպես նաև ձայնային հատկանիշներով:

§ 48. Ա-ն հայերենի ամենազորեղ և ամենից շատ գործածվող ձայնավորն (հնչույթն) է, որի արտաբերմանը մասնակցում է բերանի խոռոչն ամբողջությամբ. այն բացվում է լայնորեն, շրթունքները բավականաչափ հեռանում են իրարից, լեզվի առջևի մասը փոքր-ինչ ետ է քաշվում, միջին մասում ցածրանում, վերջին մասում բարձրանում դեպի կոշտ քիմքը: Ինչքան բերանը լայն է բացվում, այնքան էլ ստորին ծնոտը վայր է իջնում, այնքան էլ լեզուն իր տարբեր մասերում շատ ավելի ցայտուն դրսևորումներ է ունենում, այնքան էլ, անշուշտ, ձայնալարերը շատ են թրթռում՝ մեծացնելով հատկապես նրա բարձրությունն ու ուժգնությունը:

Ա-ի արտաբերման ժամանակ ստորին շրթունքը, ի տարբերություն վերին շրթունքի, որ համարյա չեզոք է մնում, ստորին ծնոտի շարժման համընթաց փոփոխություն է կրում: Բայց այդ փոփոխությունը որակ չի կազմում, և ա-ն բոլոր դեպքերում ետնալեզվային ստորին բարձրացման ոչ շրթնայնացված ձայնավոր է ու իր ձայնային հատկանիշներով էլ՝ բարձրությամբ, ուժգնությամբ, տևողությամբ, դերազանցում է մյուս ձայնավորներին: Ըստ որոշ աղբյուրների՝ ա ձայնավորի բարձրությունը հասնում է 450—4400 հց-ի, ուժգնությունը (ինտենսիվությունը)՝ 3—4 դբ-ի, տևողությունը՝ 80—230 մվրկ-ի<sup>32</sup>:

§ 49. Օ (ո)-ն ետնալեզվային միջին բարձրացման ձայնավոր է՝ նրա արտաբերության ժամանակ շրթունքները առաջ ձգվելով՝ կլորանում են, լեզուն ա-ի արտաբերության համեմատությամբ «ավելի ետ է քաշվում և ծայրն ավելի է հեռանում ներքին կտրիչներից, ետևի մասը միջին բարձրությամբ ուղղվում է դեպի քիմքի ետևի մասը, բերանի բացվածքը քիչ նեղանում է, իսկ կոկորդը քիչ ավել է բարձրանում, քան ա ձայնավորի արտաբերության ժամանակ»<sup>33</sup>: Շրթնայնացմամբ զգալապես տարբերվում է ա ձայնավորից և մերձենում է ա-ին, որ նույնպես շրթնայնացված ձայնավոր է:

Ձիջելով հանդերձ ա-ին, օ-ն ևս աչքի է ընկնում բարձրության (375-ից մինչև 3450 հց), ուժգնության (7-ից մինչև 13 դբ), տևողության (60-ից մինչև 125 մվրկ) մեծ չափերով<sup>34</sup>:

§ 50. Ու-ն, իբրև ետնալեզվային շրթնայնացված ձայնավոր, ար-

32 Վ. Գ. Ասաֆյան, Ա. Զ. Խաչատրյան, Ս. Ա. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հտ. 1, էջ 70—71:

33 Մ. Աբելյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 78:

34 Տե՛ս Վ. Գ. Ասաֆյան, Ա. Զ. Խաչատրյան, Ս. Ա. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հտ. 1, էջ 72:



տաբերվում է նույնպես շրթունքների կլորացմամբ և հիմնականում այնպես է արտաբերվում, ինչպես օ-ն: Բայց այն դրա պես, իհարկե, հավասարապես նույն արտասանական դիրքը չի ունենում: Ինչպես ինքնադիտարկմամբ էլ կարելի է նկատել, ու-ի արտասանության ժամանակ շրթունքները շատ ավելի առաջ են ձգվում ու բոլորանում, բերանի բացվածքը ևս ավելի է նեղանում, լեզուն «ամբողջությամբ ետ է քաշվում և իր ետևի մասով վերին բարձրությամբ մոտենում է քիմքի ետևի մասին», կոկորդը նույնպես «ավելի է բարձրանում, քան օ-ի արտաբերության ժամանակ»<sup>85</sup>:

Այսպիսով՝ ու-ն շատ ավելի շրթնայնացված ձայնավոր է և ըստ այդմ էլ օ ձայնավորից տարբերվում է հիմնականում բարձրացման աստիճանով: Փորձառական հնչյունաբանության տվյալներով ու-ն բարձրության, ուժգնության և տեղության չափման միավորներով զգալապես զիջում է ա և օ ձայնավորներին:

### Բ. Միջնալեզվային Ը ձայնավորը և նրա արտասանական բնութագիրը

§ 51. Ը-ն հայերենի միջնալեզվային միակ՝ միջին բարձրացման ձայնավորն է, որը և կազմավորվում է լեզվի միջին մասում: Նրա արտաբերության ժամանակ շրթունքները ուղղահայացորեն թեթևակի ձգվում են դեպի կողքերը, բերանը բացվում է ոչ մեծ շափով, լեզուն առջևի մասով փոքր-ինչ իջնում է ու գոգանում, միջին մասով բարձրանում է դեպի կոշտ և փափուկ քիմքերի մեջտեղը:

Նկատելի է նաև, որ Ը-ի արտաբերության ժամանակ ձայնալարերը համեմատաբար քիչ են թրթռում, և այդ պատճառով էլ այն հայերենի ամենաթույլ ձայնավորն է, ընդհանրապես շեշտ չի առնում, բաղաձայնների միջև թույլ հնչվելով՝ գաղտնավանկ է կազմում:

Իբրև թույլ ձայնավոր, բարձրության, ուժգնության ու տեղության չափման միավորներով Ը-ն վերջին տեղն է բռնում ձայնավորների ընդհանուր համակարգում:

### Գ. Առաջնալեզվային ձայնավորները և նրանց արտասանական բնութագիրը

§ 52. Առաջնալեզվային են կոչվում այն ձայնավորները, որոնց կազմավորումը տեղի է ունենում լեզվի առջևի մասում: Հայերենում, ինչպես ասվել է, դրանք երկուսն են՝ է (ե)-ն և ի-ն, որոնք և իրարից հիմնականում տարբերվում են բարձրացման աստիճանով. է (ե)-ն առաջնալեզվային միջին, ի-ն՝ վերին բարձրացման ձայնավոր է:

<sup>85</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 78:

§ 53. Է (ե)-ն արտաբերելու ժամանակ բերանը զգալի չափով բացվում է, շրթունքները համապատասխանաբար ձգվում են դեպի կողքերը՝ լեզուն նույնպես առաջ է ձգվում, ծայրով մոտենում է ներքին կտրիչ ատամներին, միջին մասով բարձրանում է դեպի կոշտ քիմքը, ետին մասով իջնում է վար՝ ստեղծելով մի տեսակ կորուսյուն բերանի խոռոչում:

Կան լեզուներ, որոնք ունեն այսպես կոչված «փակ» և «բաց» ձայնավորներ: Հայերենի է (ե)-ն բաց ձայնավոր է, որովհետև արտաբերվում է բերանի ավելի լայն բացվածքով և լեզվի ավելի քիչ լարվածությամբ: Չայնային հատկանիշների՝ բարձրության, ուժգնության և տևողության չափման միավորներով է-ն գերազանցում է ի ձայնավորին, բայց առանձնապես շատ չի տարբերվում նրանից:

§ 54. Ե-ն, իբրև առաջնալեզվային վերին բարձրացման ձայնավոր, խիստ մերձենում է է (ե)-ին իր արտասանական գործընթացով: Բայց դրա հետ մեկտեղ նա ունի իր յուրահատուկ արտասանությունը, որի ժամանակ շրթունքներն ավելի են հեռանում ու ձգվում դեպի կողքերը, լեզուն ծայրի մասով հենվում է ներքին կտրիչ ատամների վերին մասին, միջին մասով ավելի է բարձրանում դեպի կոշտ քիմքը և ավելի կորանում ու կամար կազմում:

Ե-ն համեմատաբար թույլ ձայնավոր է (2-րդն է ը-ից հետո) և իր ձայնային հատկանիշների՝ բարձրության, ուժգնության և տևողության չափման միավորներով զգալապես զիջում է մյուս ձայնավորներին:

#### ՁԱՆՆԱՎՈՐՆԵՐԻ ՉԱՄԱԿԱՏԱՍԽԱՆ ՏԱԽՏԱԿԸ

§ 55. Չայնավորներն իրենց արտահայտություններով ու տարատեսակներով արտացոլում են գտել համապատասխան համադրական տախտակում, որ առավելապես ուսուցողական ու գործնական նշանակություն ունի:

Հայ լեզվարանական գրականության մեջ առաջինը նման տախտակ է կազմել Մ. Արեղյանը հետևյալ կերպ.

Առաջադիմք	Թմամիչ	Վերջադիմք	
Ի		ՅԻ	Վերին բարձրություն
Է	Ը	Թ	Միջին բարձրություն
		Ա	Մտորին բարձրություն

Չափավորների սույն համադրական տախտակը<sup>36</sup> հիմք է ծառայել հետագայում ուրիշների կողմից կազմված համանման տախտակների համար և ըստ էության ընդունված է նաև այսօր:

Գր. Ղափանցյանը ընդհանուր լեզվաբանության տեսանկյունից դասակարգելով հայերենի ձայնավորները՝ Մ. Աբեղյանի գործածած «առաջաքիմք», «քմամեջ», «վերջաքիմք», «վերին բարձրություն», «միջին բարձրություն», «ստորին բարձրություն» անվանումների փոխարեն գործածել է «առաջնալեզվային» («առաջնաքիմքային»), «միջնալեզվային» («միջնաքիմքային»), «ետնալեզվային» («ետնաքիմքային»), «վերին բարձրացում», «միջին բարձրացում», «ստորին բարձրացում» անվանումները, ինչպես նաև ա-ն ետնալեզվային ոչ թե ստորին, այլ միջին բարձրացման ձայնավոր է համարել<sup>37</sup>:

Գ. Սևակը նախապատվությունը տվել է Ղափանցյանի գործածած անվանումներին և դրանց համապատասխան ձայնավորների տախտակը ներկայացրել այսպես.

	Առաջնալեզվային	Միջնալեզվային	Վերջնալեզվային
Վերին բարձրացում	ի	—	Ոի
Միջին բարձրացում	է	Ը	Օ
Ստորին բարձրացում	—	—	Ա

է. Աղայանը և Վ. Առաքելյանը, սակայն, վերանայել են դրանք և հայերենի ձայնավորները հետևյալ կերպ պատկերել իրենց կազմած տախտակներում.

Լեզվի բարձրացման աստիճանը	Ետնալեզվային		Միջնալեզվային	Առաջնալեզվային
	ոչ շրթնայնացած	շրթնայնացած	ոչ շրթնայնացած	ոչ շրթնայնացած
Ստորին բարձրաց.	Ա	—	—	—
Միջին բարձրացում	—	Օ	Ը	է
Վերին բարձրացում	—	Ոի	—	ի

Լեզվի դիրքը	Ետին շարք		Միջին շարք	Առաջին շարք
	ոչ շրթնային	շրթնային	ոչ շրթնային	ոչ շրթնային
Ստորին բարձրացում	—	—	—	—
Միջին բարձրացում	ա	—	ը	է
Վերին բարձրացում	—	—	—	ի

<sup>36</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 77:

<sup>37</sup> Գր. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, էջ 53:

§ 56. Զայնավորների համադրական այս վերջին տախտակը, որ ջեթեղված է պաշտոնապես հաստատված բուհական դասագրքում<sup>30</sup> և նախապես՝ «Ժամանակակից հայոց լեզվի» առաջին հատորում ներկայացված «Զայնավորների դասակարգման աղյուսակի» յուրատեսակ պատճենն<sup>31</sup> է, առանձնապես հաջող չի կազմված և, անշուշտ, խոտելի կողմեր ունի: Ամենևին տեղին ու հիմնավոր չէ, որ՝ այնտեղ՝ ա) ընդունված թուաշնալեզվային, միջնալեզվային, ետնալեզվային անվանումները փոխարինվել են ետին շարք, միջին շարք, առաջին շարք անվանումներով, որոնք հարգի են ուսական լեզվաբանական (հնչյունաբանական) գրականության մեջ և հարմար են գալիս ուսանողների ձայնավորներին, բ) Ա-ն ոչ թե ստորին, այլ միջին բարձրացման ձայնավոր է նշվում, գ) ընդհանրապես շրթնայնացմամբ չհատկանշվող Ը-ն, Է-ն, Ի-ն առանձին սանդղակով իրրև «ոչ շրթնային» ձայնավորներ են ներկայացվում: Սըբանք էլ, քնականաբար, ձայնավորների իրական պատկերը ավելի ճշտորեն արտացոլող համադրական այնպիսի տախտակի պահանջն են առաջադրում, որպիսին, ասենք, հետևյալը կարող է լինել.

Զայնավորների համադրական տախտակը

Ըստ արտաբերման տեղի	Ըստ բարձրացումների		
	Ստորին	Միջին	Վերին
Առաջնալեզվային	—	է	Ի
Միջնալեզվային		Ը	—
Ետնալեզվային	ոչ շրթնային	Ա	—
	շրթնային	—	ՈՒ

§ 57. Այստեղից, սակայն, չպետք է եզրակացնել. թե միևնույն ձայնավորը ամեն դեպքում ըստ արտաբերման տեղի և բարձրացման ճիշտ միատեսակ է արտասանվում: Քնչպես հայտնի է, հնչյուններն ընդհանրապես, լինեն ձայնավոր թե՞ բաղաձայն, խոտելիս ոչ թե հատ-հատ, այլ իրար հետ կապակցված են արտասանվում: Ըստ այդմ էլ նրանք անխուսափելիորեն տեղատարանումներ են տալիս. նայած այն բանին, թե որ «հնչյունի առաջից կամ ետևից ինչ հնչյուն է գալիս», համապատասխան փոփոխություն է տեղի ունենում: Չա ավելի որոշակիորեն է

<sup>30</sup> Գ. Բ. Մանուկյան, է. Ք. Ազարյան, Վ. Գ. Առաքելյան, Վ. Ա. Քաչյան, Հայոց լեզու, Երևան, 1980, էջ 97:

<sup>31</sup> Վ. Գ. Առաքելյան և ուրիշ, Ժամանակակից հայոց լեզու, հտ. 3, էջ 18:

արտահայտվում մանավանդ ձայնավորների, իբրև ոչ տեղայնացված հնչյունների, արտաբերման ժամանակ: Համապատասխանաբար բառում, օրինակ, 7 անգամ գործածված ա ձայնավորը ոչ թե ճիշտ միատեսակ, այլ ինչ-որ շափով տարբեր է արտաբերվում՝ հարմարվելով նախորդող և հաջորդող հնչյունների արտաբերությանը, ինչպես՝ համ-մա(պ)-պա(տ)-տաս-խա(ն)-նա(ք)-բար: Պարզ է, որ նույնն է տեղի ունենում նաև մյուս ձայնավորների արտաբերման ժամանակ. հմմտ., օրինակ, օզուտ-օ(գ)-գուտ, որոշակի-վօ(ր)-րո(շ)-շա(կ)-կի, ուսումնասիրություն-ու(ս)-սում-նա(ս)-սի(ր)-րու(թ)-թյուն, երեխա-յէ(ր)-րե(խ)-խա, գինի-գի(ն)-նի, իրավունք-ի(ր)-րա(վ)-վունք, ընտիր-ըն-տիր, սրընթաց-սր(ր)-րըն-թաց, ինք-ի(ն)-նք և այլն:

Այսպիսով՝ ձայնավորների հատ-հառ արտաբերությունը երբեք լիովին կամ ամբողջությամբ չի համընկնում խոսքի շղթայում նրանց արտաբերությանը, որը ևս ցույց է տալիս, որ ոչ միայն ձայնավորները, այլև բաղաձայններն են բազմազան պատկեր ներկայացնում հայոց լեզվի ընդհանուր հնչյունական համակարգում:

### ԲԱՂԱՋԱՅՆՆԵՐ. ՆՐԱՆՑ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

§ 58. Բաղաձայնները, ի տարբերություն ձայնավորների, արտասանական գործարաններում իրենց կազմավորման հաստատուն տեղն ունեն: Ընդ որում, ինչպես ասվել է, նրանք արտաբերվում են կա՛մ հպում-փակվածքով, կա՛մ շփում-նեղվածքով, կա՛մ փակվածք-նեղվածքով:

Հպում-փակվածք ստեղծվում է արտասանական գործարանների երբեք մասում՝ ա) շրթունքների միջև, բ) լեզվի առջևի մասի և վերին ատամնաշարի վերջին մասի միջև, գ) լեզվի ետին մասի և փափուկ քիմքի միջև:

Շփում-նեղվածք է ստեղծվում՝ ա) ստորին շրթունքի և վերին ատամների (կտրիչների) միջև, բ) լեզվի առջևի մասի և վերին ատամնաշարի վերջին մասի միջև, գ) լեզվի առջևի մասի և կոշտ քիմքի միջև, դ) լեզվի առջևի մասի և վերին կամ ստորին ատամնաշարի միջև, ե) լեզվի միջին մասի և կոշտ քիմքի միջև, զ) կոկորդի պատերի միջև:

Փակվածք-նեղվածք է ստեղծվում՝ ա) լեզվի ծայրի և վերին ատամների վերջին մասի միջև, բ) լեզվի ծայրի և կոշտ քիմքի միջև:

Այսպիսով, երբեք եղանակով բարտաբերվելով՝ բաղաձայնները զանազան դրսևորումներ են ունենում և մի համակարգ են ներկայացնում, որի մասին էլ լիակատար պատկերացում կարելի է կազմել նրանց առանձին նկարագրությամբ:

### ա. ՊԱՅԹԱԿԱՆ ԲԱՂԱՋԱՅՆՆԵՐ. ՆՐԱՆՑ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

§ 59. Հայերենում հպում - փակվածքով արտաբերվող բաղաձայն

հնչյունները՝ պայթականները, Ծ-ն են, որոնք կազմում են՝ եռաշար համակարգ.

Բ — Պ — Փ

Դ — Տ — Թ

Գ — Կ — Ք

Կազմելով եռաշար համակարգ և հակադրվելով ձայնեղությամբ, խլությամբ և շնչեղ խլությամբ՝ դրանք իրարից տարբերվում են նաև արտաբերության տեղով: Բ—Պ—Փ-ն արտաբերվում են երկու շրթունքների, Դ—Տ—Թ-ն՝ լեզվի ծայրի և վերին ատամների վերջին մասի, իսկ Գ—Կ—Ք-ն լեզվի ետին մասի և փափուկ քիմքի միջև ստեղծված փակվածքի պայթյունով և համասպասխանաբար էլ կոչվում են երկշրթնային, առաջնալեզվային և ետնալեզվային պայթականներ:

§ 60. Երկշրթնային պայթականներից՝ ա) Բ-ի արտաբերության ժամանակ շրթունքները համեմատաբար թույլ են հպվում իրար, և պայթյունը ևս թույլ է լինում: Բացի այդ, նրա արտաբերությանը մասնակցում են նաև ձայնալարերը, և այդ պատճառով էլ այն քիչ ծախսվող օդ է պահանջում:

բ) Պ-ի արտաբերության ժամանակ շրթունքները ավելի պինդ են հպվում, և պայթյունն էլ, բնականաբար, ավելի մեծ ուժով է տեղի ունենում: Նրա արտաբերմանը ձայնալարերը շեն մասնակցում, և Բ-ի համեմատությամբ ծախսվող օդի քանակը ավելի մեծ է լինում:

գ) Փ-ի արտաբերության ժամանակ շրթունքները ոչ միայն պ-ի, այլև Բ-ի համեմատությամբ թույլ են հպվում, և պայթյունն էլ համեմատաբար երկար է լինում:

Դա բացատրվում է նրա կազմությամբ: Իբրև բարդ հնչյուն, փ-ն արտաբերվում է շփում-նեղվածքով ավարտվող փակվածքի պայթյունով: Փ-ի արտաբերմանը ձայնալարերը նույնպես շեն մասնակցում, ուստի՝ այն ավելի մոտ է պ-ին և դրան էլ, ինչպես հայտնի է, հակադրվում է սոսկ շնչեղությամբ:

§ 61. Առաջնալեզվային պայթական հնչյունների՝ դ-ի, ա-ի, ք-ի արտաբերության ժամանակ ստորին շրթունքը թեթև զատվում է վերին շրթունքից, լեզվի ծայրը մոտենում հպվում է վերին կտրիչ ատամներին և ստեղծվում է նույնպես փակվածք, որի պայթյունով էլ իրացվում են նրանք: Եվ, այնուհանդերձ, այդ հնչյունները ևս ոչ թե միակերպ, այլ յուրովի են արտաբերվում՝ դրսևորելով այնպիսի տարբերություններ, ինչպիսի տարբերություններ, ասենք, ք-պ-փ պայթականներն են դրսևվորում միմյանց նկատմամբ: Դ-ն արտաբերվում է համեմատաբար թույլ հպումով ստեղծված փակվածքի թույլ պայթյունով, ա-ն՝ ամուր հպումով ստեղծված փակվածքի ուժեղ պայթյունով, իսկ ք-ն՝ ավելի թույլ հպումով ստեղծված փակվածքի ավելի թույլ պայթյունով: Նմանապես

դ-ի արտաբերմանը ձայնալարերը մասնակցում, Թ-ի և ք-ի արտաբերմանը շին մասնակցում, փ-ի պես ք-ն ևս ավարտվում է նեղվածքային պայթյունով: Դրանց համապատասխան էլ նրանցից յուրաքանչյուրի համար տարբեր քանակով ող է ծախսվում:

§ 62. Ետնալեզվային գ-կ-բ պայթական հնչյունները կազմավորվում են լեզվի ետին մասում և արտաբերվում են նրա ու փափուկ քիմքի միջև ստեղծված փակվածքի պայթյունով: Բայց դա ուղղակիորեն չի կատարվում: Նրանց արտաբերության ժամանակ լեզվի ծայրը իջնում է, բայց չի հաննում ստորին կտրիչ ատամներին, լեզուն գնդավորվում է և ետին մասով փափուկ քիմքի հետ փակվածք է ստեղծում, որի պայթյունով էլ իրացվում են նրանք:

Այլ իրացումներով ետնալեզվային պայթականները շին տարբերվում մյուս պայթականներից. այս դեպքում էլ գ-ն է արտաբերվում թույլ, ք-ն ավելի թույլ, իսկ կ-ն՝ ուժեղ պայթյունով: Նմանապես գ-ի արտաբերմանը ձայնալարերը մասնակցում, կ-ի և ք-ի արտաբերմանը շին մասնակցում, և նրանք ևս իրարից տարբերվում են ձայնեղությամբ, խլությամբ և շնչեղ խլությամբ:

Մանրություն.— Գ-կ-ք-ն Մ. Աբեղյանը ոչ թե ետնալեզվային, այլ կատկային կամ վերջաբանային պայթական բաղաձայններ է համարել:

§ 63. Խիստ տեղայնացված լինելով հանդերձ՝ պայթական հնչյունները նույնպես խոսքի շղթայում՝ նայած, թե ինչ ձայնավորի են նախորդում կամ հաջորդում, ինչ բաղաձայնների հետ են կապակցվում, անշուշտ, ինչ-որ շափով տարբերվում են իրենց հատ-հատ արտասանությունից: Նկատված է, որ, օրինակ, ի, ե (է) ձայնավորներին նախորդելու դեպքում պայթականները՝ փափուկ են արտաբերվում, և նրանցից գ-ն, կ-ն, ք-ն մինչև անգամ քմայնանում են:

#### բ. ԾՓԱԿԱՆ շՆՁՑՈՒՆՆԵՐ. ՆՐԱՆՑ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

§ 64. Շփական հնչյունները, որ արտաբերվում են արտասանական գործարանների տարբեր մասերում, 15-ն են: Դրանք կազմում են հայերենի բաղաձայնների ուղիղ կեսը և ըստ էության երկու խմբի են բաժանվում. մի խումբ են կազմում ձայնեղ և խուլ, մի այլ խումբ՝ ձայնորդ շփականները:

Առաջին խմբին պատկանող հնչյունները շատ ավելի են տեղայնացված և երկշար համակարգ կազմելով՝ հատկանշվում են երկհակադրությամբ՝ ձայնեղությամբ ու խլությամբ, ինչպես՝

վ — Յ՝  
զ — Ս  
ժ — Շ  
ղ — Խ  
— — Ղ

Իսկ երկրորդ խմբին պատկանող հնչյունները՝ ձայնորդները (մ, ն, լ, բ, ո, յ), ոչ միայն միաշար համակարգ են կազմում, այլև շատ խստորեն շեն տեղայնացված և արտասանական ապարատում էլ, կարելի է ասել, ավելի լայն ծավալ են զբաղում:

Արդ՝ տեսնենք, թե ինչպես են արտաբերվում և ինչով են տարբերվում դրանք իրարից:

§ 65. Վ և Ֆ շփական հնչյունների արտաբերության ժամանակ ամենամեծ դերը կատարում է ստորին շրթունքը: Զատվելով վերին շրթունքից՝ այն բարձրանում-մոտենում է վերին կտրիչ ատամներին և կազմում նեղվածք, որով և դուրս է գալիս թոքերից եկած օդը՝ առաջացնելով՝ ձայնալարերի թրթռալու դեպքում՝ ձայնեղ Վ, իսկ չթրթռալու դեպքում՝ խուլ Ֆ բաղաձայնը: Լեզուն առանձնապես մեծ դեր չի կատարում: Նկատելի է միայն, որ այն ծայրով իջնում և հարում է ներքին կտրիչ ատամների հիմքին, իսկ ետին մասով բարձրանում է դեպի փափուկ քիմքը: Դիտարկումները ցույց են տալիս, որ Ֆ-ն համեմատաբար լայն նեղվածքով է արտաբերվում և տևողությամբ էլ գերազանցում ձայնեղ Վ-ին:

§ 66. Զ և Ս շփական հնչյունների արտաբերության ժամանակ շրթունքները փոքր-ինչ հեռանում են, լեզվի ծայրը խոնարհվում-մոտենում է ներքին կտրիչներին և ապա բարձրանում դեպի կոշտ քիմքը, ստեղծում նեղվածք: Այդ նեղվածքով դուրս է գալիս թոքերից եկած օդը՝ առաջացնելով ձայնալարերի թրթռալու դեպքում՝ ձայնեղ զ, իսկ չթրթռալու դեպքում՝ խուլ ս բաղաձայնը:

Զ-ն և Ս-ն հավասարապես սուլական հնչյուններ են և, ձայնեղության մեջ խուլության հակադրվելուց զատ, իրարից տարբերվում են ներանով, որ մեկը՝ զ-ն, մի փոքր առաջ՝ նեղ անցքով, իսկ մյուսը՝ ս-ն փոքր-ինչ ետ ու լայն անցքով է արտասանվում:

§ 67. Ժ-ի և Ծ-ի արտաբերության ժամանակ շրթունքները ավելի են բացվում դեպի առաջ, ատամներն առանց միմյանց կպչելու մոտ են լինում, լեզուն ծայրամասով բարձրանում է դեպի կոշտ քիմքը և ստեղծում նեղվածք: Այդտեղով էլ դուրս է մղվում թոքերից եկած օդը՝ առաջացնելով ձայնալարերի թրթռալու դեպքում՝ ձայնեղ ժ, չթրթռալու դեպքում՝ խուլ շ բաղաձայնը:

Այդպիսով դրանք տարբերվում են զ և ս հնչյուններից և իրականում էլ ոչ թե առաջնալեզվային-ատամնային, այլ առաջնալեզվային-քմային հնչյուններ են, Բացի այդ, ժ-ն և շ-ն, ինչպես ասվել է, շշական հնչյուններ են, որոնք իրենց կազմավորման տեղով և արտասանության տևողությամբ նույնպես ինչ-որ շփով տարբերվում են իրարից:

§ 68. Դ-ի և Խ-ի արտաբերության ժամանակ լեզուն առջևի մասով իջնում է դեպի ստորին ատամնաշարը ու փոսանում, միջին մասով բարձրանում է և ամենաետին մասով մոտենում է փափուկ քիմքին, ստեղ-



ծոււմ նեղվածք, որով դուրս է գալիս թորքերից եկած օդը՝ առաջացնելով ձայնալարերը թրթռալու դեպքում՝ ձայնեղ ղ, շթրթռալու դեպքում՝ խուլ խ բաղաձայնը:

Իբրև ետնալեզվային հնչյուններ, դրանք ճիշտ նույն տեղով շեն արտաբերվում, ինչ որ գ-կ-բ պայթականները: Ինքնադիտարկումով էլ կարելի է համոզվել, որ ղ-ն և խ-ն նույն տեղի ավելի ետին մասով են արտաբերվում, քան գ-ն, կ-ն և բ-ն: Այդպես են արտաբերվում նաև առաջնալեզվային ձայնեղ ու խուլ շփականները (զ, ս, ժ, շ) իրենց համապատասխան պայթականների՝ դ-տ-թ-ի համեմատությամբ:

§ 69. Զ-ն, իբրև շփական հնչյուն, կազմավորվում է կոկորդում: Կարծիք է հայտնվել, թե նրա «արտաբերության ժամանակ հնչարտաբերական ոչ մի գործարան չի գործում»<sup>40</sup>: Դա, սակայն, ճիշտ չէ: Ճիշտ չէ նաև այն, որ լիովին նույնացվում է շնչին և շունչ կամ հազագ որակվում:

Զ-ն այլ հնչյունների պես լեզվի նյութական նվազագույն, իմաստազատիչ միավոր է և ոչ թե իբրև շունչ, այլ իբրև այդպիսին է իրացվում: Նրա արտաբերության ժամանակ լեզուն ծայրամասով իջնում է վար, միջին մասով բարձրանում է դեպի փափուկ քիմքը՝ նեղացնելով այն անցքը, որով կոկորդային հնչարանից եկող օդն է դուրս մղվում:

Բացի այդ, հ-ի արտաբերմանը ինչ-որ չափով հաղորդակցվում են ձայնալարերը, որոնք և երբ թրթռում են, այն դարձնում են ձայնեղ, որ կա հայոց բարբառներում<sup>41</sup>: Նկատված է նաև, որ հ-ն շատ խստորեն տեղայնացված չէ և նայած, թե ինչ ձայնավորի է նախորդում կամ հաջորդում, արտասանական այլևայլ դրություններ է բնդունում, հմմտ.՝ օրինակ, հաց, հոգի, հիմա, հզոր, ահա, կոնակ, գեհեհ, վեհ, վիհ, խօրհեյ, նիւհեյ և այլն:

§ 70. Չայնորդները, իբրև միաշարային հնչյուններ, արտասանական բնույթով զգալիպես տարբերվում են մյուս շփականներից: Դրանք շատ խստորեն տեղայնացված չլինելով՝ մի տեսակ տատանումներ են տալիս և արտաբերվում են արտասանական գործարաններում ստեղծված համեմատաբար ավելի լայն նեղվածքով: Բացի այդ, ձայնորդները տարբերվում են նաև իրարից իրենց կազմավորմամբ և փաստորեն էլ երկու խմբի են բաժանվում. մի խումբ են կազմում մ, ն, լ ձայնորդները, որոնց արտաբերությունը սկսում է մի տեսակ աննշան փակվածքով և ավարտվում որոշակի նեղվածքով, մի այլ խումբ՝ բ, ռ, յ ձայնորդները, որոնք արտաբերվում են լայն նեղվածքով:

§ 71. Առաջին խմբի ձայնորդներից՝

ա) Մ-ի արտաբերության ժամանակ ստորին շրթունքը հպվում է

<sup>40</sup> Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 86:

<sup>41</sup> Տե՛ս Գր. Ղափանցյան, Հնդհասուր լեզվաբանություն, էջ 59:

վերին շրթունքին, լեզուն ձգվում է դեպի բերանի ետևի մասը, փափուկ քիմքը բավական իջնում է՝ բացելով լայն անցք դեպի քթի խոռոչը, որով դուրս է գալիս շրթունքների միջև ստեղծված փակվածքին հասած և այդտեղից ետ մղված օդը: Այսպիսով մ-ի արտաբերմանը մասնակցում է և նաև հնչարան է ծառայում քթի խոռոչը, որի համար էլ ռնզային հնչյուն է կոչվում: Իսկ սա իր հերթին ցույց է տալիս, որ այն հիմնականում արտաբերվում է նեղվածքով և ըստ այդմ՝ ոչ թե պայթական, այլ շփական ձայնորդ հնչյուն է և շրթնային պայթականներից էլ, բնականաբար, ավելի շատ ք-ին է հարում:

բ) Ն-ի արտաբերության ժամանակ առավել գործուն դեր է կատարում լեզուն. դա մի կողմից առջևի մասով բարձրանում է դեպի վերին կտրիչները և հպվելով դրանց հիմքին՝ ստեղծում է թույլ փակվածք, մյուս կողմից՝ միջին մասում գոգավորվելով, ետին մասում բարձրանալով՝ փափուկ քիմքի հետ լայն անցք է բացում դեպի քթի խոռոչը, որով ազատորեն դուրս է գալիս փակվածքից ետ մղված օդը:

Ինչպես մ-ի, այնպես էլ ն-ի արտաբերության համար հնչարան է ծառայում քթի խոռոչը, որի համար նաև ռնզային հնչյուն է: Այս դեպքում արտաբերությանը նույնպես տեղի է ունենում հիմնականում նեղվածքով և այն ևս ոչ թե պայթական, այլ շփական ձայնորդ է և ինչ-որ կողմերով հարաբերակցվում է մ ձայնորդի հետ:

գ) Վ-ի արտաբերության ժամանակ բերանը չափավոր բացվում է, լեզուն ծայրամասով բարձրանում-հպվում է վերին կտրիչների հիմքին, երկու կողմերով փոկվում է բերանում, դրա անկյուններում ստեղծելով նեղ անցքեր, որոնցով և դուրս է գալիս օդը<sup>42</sup>:

Այսպիսով՝ Վ արտաբերելիս արտասանական ապարատում ևս թե՛ թեթև փակվածք, թե՛ նեղվածք է ստեղծվում, որոնցից և դարձյալ կարևոր դերը վերջինն է կատարում, այդ պատճառով էլ այն նույնպես ոչ թե պայթական, այլ շփական հնչյուն է: Վ-ն հայերենի շատ ձայն պարունակող ձայնորդներից է և փափուկ է արտասանվում գրեթե բոլոր ձայնավորների հետ գործածվելիս:

§ 72. Այս ամենը պարզորոշ ցույց է տալիս, որ մ, ն, Վ ձայնորդները արտաբերվում են իսկապես երկակի՝ փակվածքի ու նեղվածքի տարազատ գործողությամբ և այդ հիմամբ էլ ընդհանրանալով, անշուշտ, մի խումբ են կազմում: Բացի այդ, նրանք ընդհանրանում են նաև իրենց արտաբերության համար ստեղծված փակվածքի բնույթով: Ի տարբերություն պայթական հնչյունների, որ արտաբերվում են արտասանական գործարանների ամուր հպմամբ ու անմիջական պայթյունով, մ-ի, ն-ի, Վ-ի արտաբերության ժամանակ սոսկ թույլ փակվածք է ստեղծվում, որը և հենարան է ծառայում արտասանական ապարատի տարբեր մասերում

<sup>42</sup> Հմմտ. Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 82—83:

նեղվածքների առաջացման ու դրանց միջով օդի դուրս գալու համար:

Արտասանական իրենց այդ հատկություններով մ, ն, լ ձայնորդները տարբերվում են նաև մյուս՝ ր, ո, յ ձայնորդներից:

§ 73. Բ, Ռ, Յ հնչյուններն արտաբերվում են միայն, այն էլ՝ ավելի լայն, նեղվածքով: Ընդ որում նրանցից՝

ա) Բ-ի արտաբերության ժամանակ շրթունքները զատվում են իրարից, լեզվի ծայրը ստորին ատամների մոտից բարձրանում է նախ դեպի վերին կտրիչ ատամների լինդը, ապա՝ դեպի առաջաքիմքը՝ ստեղծելով լայն անցք, որով և թրթռումով դուրս է գալիս օդը. ուստի՝ բոլոր դեպքերում անկախ թրթռումների քանակից, այն թրթռուն և ոչ թե սոսկ նեղվածքային հնչյուն է, ինչպես ոմանք են կարծում<sup>43</sup>:

բ) Ռ-ն, կարելի է ասել, եղբայրակից է Բ-ին և հիմնականում արտասանվում է դրա պես: Ռ-ի արտաբերության ժամանակ շրթունքներն ավելի են բացվում, լեզվի ծայրը ավելի է բարձրանում դեպի կոշտ քիմքը և մոտենում դրան, և այն ավելի շատ ու ուժեղ է թրթռում: Եվ ամենևին պատահական չէ, որ ասում են՝ հայերենում կա երկու, այսպես կոչված, «փափուկ» և «կոշտ» Բ: Բ-ի և Ռ-ի տարբերությունը զգալու համար հմմտ., օրինակ, բեբ—բեռ, դեբ—դեռ, համաբ—համառ, սեբ—սեռ, լուբ—լուռ, աբու—առու, վաբ—վառ, խոշոբ—խոժոռ, այլև՝ փընտբել—փնտռել և այլն:

դ) Յ ձայնորդը, որ ձայնի պարունակությամբ գերազանցում է մյուս բոլոր ձայնորդներին և մինչև իսկ կիսաձայն է համարվում<sup>44</sup>, արտաբերվում է լեզվի միջին մասի և կոշտ քիմքի միջև ստեղծված նեղվածքով:

Յ-ի արտաբերման ժամանակ առավել մեծ ու շարժուն դեր է կատարում լեզուն: Դա իր ծայրամասով խոնարհվում է դեպի ստորին կտրիչ ատամները, զոգավորվելով փովում է բերանի երկայնքով և միջին մասով կոշտ քիմքի հետ անցք է կազմում, որով դուրս է գալիս թոքերից արտամղվող օդը:

Յ ձայնորդը վաղ շրջանում՝ գրաբարում հարել է Ի ձայնավորին և, ինչպես Մ. Աբեղյանն է իրավացիորեն նշել, «միևնույն որակն» է ունեցել<sup>45</sup>: Հետագայում, հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքում, նա զրկվել է այդ՝ ձայնավորական որակից և դարձել մաքուր բաղաձայն (ձայնորդ) հնչյուն: Եվ այսօր արևելահայ գրական լեզվում յ-ն ձայնակապային կիրառությունից բացի հենց իբրև այդպիսին է գործածվում:

§ 74. Բ-ն, Ռ-ն, Յ-ն մյուս ձայնորդներից առանձնանում են իբրև

<sup>43</sup> Վ. Դ. Առաֆևյան, Ա. Հ. Խաչատրյան, Ժամանակակից հայոց լեզու, հտ. 1, էջ 108—109:

<sup>44</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 88:

<sup>45</sup> Նույն տեղում:

պուտ բերանային հնչյուններ՝ դրսևորելով ընդհանրություններ միմյանց նկատմամբ: Առավել մեծ ընդհանրությամբ հատկանշվում են Բ-ն և Ռ-ն, որոնք և հակադրվելով մի տեսակ թույլ և ուժեղ թրթռումներով՝ փոխազդեցությունների են ենթարկվում: Այսպես՝ դեպքեր կան՝ ա) երբ ո-ն տարնամանամբ Ե է դառնում, օրինակ՝ գրգիռ < գիռ + գիռ, բարբառ < բառ + բառ, թրթիռ < թիռ + թիռ և այլն. բ) երբ Բ-ն տարազատմամբ նոր բառ է առաջ բերում, օրինակ՝ լուր—լուռ, բար—բառ, կոր—կեռ և այլն: Դեպքեր էլ կան, երբ Բ-ն՝ ո-ով, ո-ն Բ-ով է փոխարինվում, ինչպես, օրինակ. գրաբարում՝ ամառն—ամառան, լեռն—լեռին, դուռն—դուրբ—դուրմ, այլ—առն—առնական և այլն:

Նմանապես ընդհանրությամբ պետք է բացատրել, որ գրաբար առ-Վեյ—\*արարնել (առնել, ստեղծել) բայը Ե>Ո>Բ>Յ (արարնել>առնել>արնել>այնել) հնչյունական փոփոխությամբ նոր հայերենում առնել/ընել է դարձել:

#### Գ. ՊԱՅԹԱՇՓԱԿԱՆ ՀՆՁՑՈՒՆՆԵՐ. ՆՐԱՆՑ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

§ 75. Հայերենի վեց՝ ձ-ծ-ց, զ-ճ-չ պայթաշփական հնչյունները ևս ճիշտ միատեսակ չեն արտաբերվում և երկու խմբի են բաժանվում. մի խումբ են կազմում Ձ-ն, Մ-ն, Ց-ն, մի այլ խումբ՝ Զ-ն, Ծ-ն, Զ-ն՝ ինչ-որ չափով տարբերվելով իրարից իրենց կազմավորման տեղով:

§ 76. Ձ, Մ, Ց պայթաշփականների արտաբերման ժամանակ ստորին շրթունքը զատվում է վերին շրթունքից, լեզուն ծայրամասով բարձրանում-հպվում է վերին ատամնաշարին՝ ստեղծելով այնպիսի փակվածք, որը պայթելով ավարտվում է նեղվածքով, որի միջով էլ հենց դուրս է մղվում օդը: Դրանք, բնականաբար, ոչ թե կազմավորման հիմնական տեղով ու եղանակով, այլ ձայնի և աղմուկի հարաբերությամբ կամ տեսակարար կշռով են տարբերվում իրարից: Ձ-ն ձայնեղ է և արտաբերվում է ձայնալարերի մասնակցությամբ, Մ-ն խուլ է և բաղկացած է զուտ աղմուկից, Ց-ն շնչեղ խուլ է և իր մեջ նաև շունչ է պարունակում:

Ձ-ն, Մ-ն, Ց-ն ինչ-որ չափով իրարից տարբերվում են նաև արտաբերության փակվածք-նեղվածքի բնույթով: Ց-ն արտաբերվում է թույլ ու լայն, Մ-ն՝ ուժեղ ու սեղմ, Ձ-ն՝ միջին կարգի հպում-նեղվածքով՝ համապատասխանելով ք + ս, ա + ս, դ + գ հնչյունների միասնական արտասանությանը:

Նույն այդ հանգամանքով պայմանավորված՝ նրանք սուլականության մեջ նույնպես տարբերվում են իրարից. ց-ն՝ ավելի երկար, ձ-ն՝ երկար, ծ-ն համեմատաբար կարճ սուլոցով է արտաբերվում:

§ 77. Զ, Ծ, Զ պայթաշփական հնչյունները, ի տարբերություն ձ, ծ, ց հնչյունների, կազմավորվում են բերանի խոռոչի ավելի ետին մա-

սում և արտաբերվում լեզվի միջին մասի ու կոշտ քիմքի միջև ստեղծված փակվածք-նեղվածքով: Արտաբերությունը իրացվում է շրթունքների, լեզվի, կոշտ քիմքի, զ-ի դեպքում նաև՝ ձայնալարերի մասնակցությամբ:

Օրեք հնչյունների արտաբերության ժամանակ ստորին շրթունքը մի փոքր ավելի է վար իջնում ու հեռանում վերին շրթունքից, լեզուն ծայրամասով թեքվում է դեպի ստորին ատամնաշարը, միջին մասով գոգավորվելով հպվում է կոշտ քիմքին՝ ստեղծելով յուրահատուկ փակվածք-նեղվածք, որով և դուրս է մղվում օդը: Զ, Ճ, Զ պայթաշփականները ևս իրարից տարբերվում են ոչ թե կազմավորման տեղով ու եղանակով, այլ ձայնի ու աղմուկի հարաբերությամբ և փակվածք-նեղվածքի բնույթով. զ-ն ձայնեղ է և բաղկացած է ձայնից ու աղմուկից, Գ-ն խուլ է և բաղկացած է զուտ աղմուկից, շ-ն շնչեղ խուլ է և բաղկացած է աղմուկից և շնչից:

Այս դեպքում էլ հաջորդականորեն շ-ն, Գ-ն, զ-ն են թույլ ու լայն, ուժեղ ու սեղմ, միջին կարգի հպում-նեղվածքով արտաբերվում՝ համապատասխանելով տեղայնորեն իրենց մոտ ք+շ, ա+շ, դ+ժ հնչյունների միասնական արտասանությանը: Նրանք իրարից տարբերվում են նաև շշականությամբ. շ-ն ավելի երկար, զ-ն՝ երկար, Գ-ն կարճ շաշուենով է արտաբերվում:

§ 78. Ի մի բերելով ամբողջը, տեսնում ենք, որ՝

ա) Հայերենի բաղաձայններն ըստ թե՛ ձայնի և աղմուկի հարաբերության, թե՛ արտաբերության եղանակի, թե՛ արտաբերության տեղի և թե՛ կազմության ներկայացնում են մի ամբողջական ու կուռ հնչյունական համակարգ:

բ) Նրանցից ուղիղ 15-ը արտաբերվում է արտասանական գործարանների տարբեր մասերում ստեղծված նեղվածքով և նեղվածքային-շփական բաղաձայններ են կոչվում, 15-ն էլ արտաբերվում են կա՛մ միայն փակվածքով, կա՛մ փակվածք-նեղվածքով և համապատասխանաբար՝ պայթական և պայթաշփական բաղաձայններ են կոչվում:

գ) Նմանապես 30 բաղաձայններից 15-ը արտաբերվում են ձայնալարերի մասնակցությամբ և պարունակած ձայնի համապատասխան ձայնեղներ ու ձայնորդներ են կոչվում, իսկ 15-ն էլ արտաբերվում են առանց ձայնալարերի մասնակցության և խուլ ու շնչեղ խուլ բաղաձայններ են կոչվում:

դ) Պայթական և պայթաշփական բաղաձայնները կազմում են եռաշար համակարգ՝ հակադրվելով ձայնեղությամբ, խլությամբ և շնչեղ լայնությամբ:

ե) Շփական ձայնեղներն ու խուլերը, բացառությամբ Գ-ի, երկշար, իսկ ձայնորդները միաշար համակարգ են կազմում՝ դրսևորելով իրենց համապատասխան առանձնահատկություններ:

## ՔԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՏԱԽՏԱԿԸ

§ 79. Մ. Աբեղյանը, որի հնչյունաբանական ուսմունքը հիմնախա-  
քիսխ է ծառայել հետագա մի շարք ուսումնասիրությունների համար և  
իր արտացոլումն է գտել դպրոցական ու բուհական դասագրքերում ու  
ձեռնարկներում, առաջինն է նաև կազմել հայոց լեզվի բաղաձայնների  
համադրական տախտակը (տե՛ս էջ 42)՝ հիմնականում ճիշտ ներկա-  
յացնելով այդտեղ նրանց իրական պատկերը:

§ 80. Զննելով սույն համադրական տախտակը, տեսնում ենք, որ  
Մ. Աբեղյանը իր մշակած սկզբունքներին համապատասխան շրթնային  
և շրթնատամնային հնչյունները (մ, վ, ֆ, բ, պ, փ) իբրև շրթնային, լեզ-  
վի առջևի մասով արտաբերվող հնչյունները իբրև ատամնային (ն, գ,  
ա, դ, տ, ք, ձ, ծ, ց), լեզվային (լ, ռ, ռ), քմային (ջ, ճ, չ), լեզվի հտին  
մասով արտաբերվող հնչյունները իբրև կատկային (ղ, խ, գ, կ, ֆ), իսկ  
կոկորդով արտաբերվող հ-ն իբրև հագագային հնչյուն է ներկայացրել:

Բացի այդ, նա ձայնորդները տարազատել է մյուս բաղաձայններից  
և առաջինները բաժանելով երկու խմբի՝ ռնգային (մ, ն) և նայ (լ, ռ, ռ),  
իսկ երկրորդները համարելով աղմկավոր հնչյուններ՝ դասակարգել է  
դրանք ըստ կազմության՝ պարզ (վ, ֆ, բ, պ, գ, ս, դ, տ, ժ, շ, դ, խ,  
գ, կ, հ) և բարդ (փ, ք, ֆ, ձ, ծ, ց, շ, ճ, չ), ըստ արտաբերության եղա-  
նակի՝ շփական վ-ֆ, գ-ս, ժ-շ, դ-խ, հ), պայթական (բ, պ, դ, տ, գ, կ),  
պայթական-հագագավոր (փ, ք, ֆ) և կրկնակ կամ կես-պայթական (ն,  
ծ, ց, շ, ճ, չ), ըստ ձայնի պարունակության՝ ձայնող (վ, գ, ժ, դ, բ, դ,  
գ, ձ, շ) և անձայն (ֆ, ս, շ, խ, հ, պ, տ, կ, փ, ք, ֆ, ծ, ց, ն, չ), ինչպես  
նաև հետևելով հներին՝ նշել է, թե որոնք են հայերենի, այսպես կոչված,  
միջակ (բ, դ, գ, ձ, շ), լերկ (պ, տ, կ, ծ, ն) և թավ (փ, ք, ֆ, ց, չ) հըն-  
չյունները:

Այսպիսով, Մ. Աբեղյանի կազմած համադրական տախտակը հա-  
մակողմանիորեն ու չավագույնս է պատկերում հայոց լեզվի բաղաձայ-  
նական համակարգը և ոչ միայն ժամանակային առումով, այլև հարուստ  
բովանդակությամբ առանձնահատուկ տեղ է բռնում հայ լեզվաբանա-  
կան, մանավանդ՝ հնչյունաբանական գրականության մեջ:

§ 81. Այդ ամենով հանդերձ, սույն համադրական տախտակը ան-  
թերի չէ և զերծ վրիպումներից: Նկատելի է, որ, օրինակ, այնտեղ ձայ-  
նորդները շեն ներկայացվում ևս իբրև շփական հնչյուններ, լեզվի առջևի  
մասով արտաբերվող հնչյունները տարբերակվում են, իսկ երկշրթնա-  
յին և շրթնատամնային հնչյունները միասին իբրև զուտ շրթնայիններ  
են դիտվում, յ-ն, որ արևելահայ գրական լեզվում լիարժեք բաղաձայն

Հայոց լեզվի բաղաձայնները<sup>46</sup>

	Ձայնորդ		Ա ղ մ կ ւ Վ ռ ր							
			Պ ա ր զ				Բ ա ր զ			
	Բնգային	Խա	Չփական	Պայթական		Պայթ. հազագավոր		Կրկնակ (կես-պայթ.)		Թավ
				Միշակ	Լերկ	Թավ	Միշակ	Լերկ	Թավ	
			Չային	Անձայն	Անձայն	Անձայն	Չային	Անձայն	Անձայն	
Շրթնային	Մ		վ	Յ	Բ	Պ	Փ			
Ատամնային	Ն		Ջ	Ս	Դ	Տ	Ք	Չ	Մ	Յ
Լեզվային		Բ, ր, լ								
Փմային			ժ	Շ						
Ատամնա-փմային								Ջ	Ճ	Չ
Կատկային					Գ	Կ	Ք			
Հազագային				Հ						

է դարձել, դուրս է մնացել բաղաձայնների ընդհանուր կազմից և այլն: Եվ, անշուշտ, դրանք նկատի ունենալով՝ Գ. Սևակը կազմել է բաղաձայնների մի նոր համադրական տախտակ<sup>47</sup>, որտեղ՝ ա) ձայնորդները և սրանց շարքում նաև յ-ն իբրև շփականներ, բ) բաղաձայններն ըստ արտաբերության տեղի՝ շրթնային, շրթնատամնային, առաջնալեզվային, միջնալեզվային, ետնալեզվային, կոկորդային տեսակներով ու անվանումներով, պայթաշփական հնչյունները սուլական և շշական տարատեսակներով է ներկայացրել: Ճիշտ է, դա ևս ունի որոշ թերի կողմեր, բայց պետք է ասել, որ ընդհանուր առմամբ Արեղյանի կազմած համադրական տախտակի բարեփոխված ու ավելի պարզ տեսակն է և գնահատելի հատկապես ուսուցողական առումով:

§ 82. Դժբախտաբար նույնը չի կարելի ասել հայոց լեզվի բաղաձայնների՝ հետագայում կազմված համադրական տախտակների և դրանց մեջ նաև ներկայիս բուհական դասագրքում գետեղված տախտակի մասին<sup>48</sup>:

<sup>46</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 86:  
<sup>47</sup> Տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 88:  
<sup>48</sup> Տե՛ս էդ. Աղաթյան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1949, էջ 72, Վ. Առափնյան, Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, Երևան, 1955, էջ 31, Վ. Գ. Առափնյան և ուրիշ., Ժամանակակից հայոց լեզու, հտ. 9, էջ 24, Գ. Բ. Զեմուլյան,

Դա կազմված է նշված տախտակներին հակադրվելու որոշակի միտումով, և բաղաձայնները ներկայացված են այնպիսի «նորություններով», որոնք հազիվ թե հնարավոր լինի տեղին ու ճիշտ համարել: Այսպես՝ այնտեղ՝ ա) ձայնորդները հանվել են բաղաձայնների՝ ըստ կազմության և արտաբերության եղանակի կատարված դասակարգումներից և տրվել առանձին այն գծի վրա, որտեղ նրանց պարզ թե՛ բարդ լինելն է նշվում, բ) ձայնեղ և խուլ բաղաձայնների համար արտաբերության ոչ թե երեք, այլ չորս՝ «պայթական», «շփական», «պայթաշնչեղ», «կիսաշփական» եղանակ է նշվում, և նույնիսկ նախորդի ձայնեղային տաքատեսակ են ներկայացվում ճ-ն և ծ-ն, որոնք բացառապես խուլ հընչյուններ են...

§ 83. Բաղաձայնների համադրական տախտակներից, ինչպես ասվել է, պարզությամբ, մատչելիությամբ, հեշտ ընկալելիությամբ առանձնանում է Գ. Սևակի կազմած համադրական տախտակը, որը և մասնակի շտկումով ներկայացվում է ստորև.

Ըստ արտաբերության տեղի	Պ ա ր զ										Բ ա ր զ			
	Շփական					Պայթական					Պայթաշփական			
	Ձայնորդ		Ձայնեղ		խուլ	խուլ		խուլ			Ձայնեղ		խուլ	
ոնգային	բերանային	ստորին	շրջակային	ստորին	ստորին	շրջակային	ստորին	ձայնեղ	խուլ	շնչեղ/խուլ	ստորին	շրջակային	ստորին	շրջակային
Շրթնային	Մ	—	—	—	—	—	—	Բ	Պ	Փ	—	—	—	—
Շրթնատանային	—	—	—	վ	—	Ֆ	—	—	—	—	—	—	—	—
Առաջնալեզվային	ն	լ, ր ՛	ջ	ժ	—	Ս	Շ	ր	Տ	Բ	Չ	Չ	Ս, Ց	Ճ, Չ
Միջնալեզվային	—	Յ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Ծոնալեզվային	—	—	—	լ	—	—	—	ե	զ	կ	բ	—	—	—
Կոկորդային	—	—	—	—	—	—	լ	—	—	—	—	—	—	—

§ 83ա. Բաղաձայն հնչյունների թե՛ ընդհանուր վերլուծությունը և թե՛ ամփոփիչ համադրական տախտակը ակներևաբար ցույց են տալիս, որ նրանք իրենց բազմազան արտահայտություններով ու հատկանիշներով նույնպես մի կուռ ու ամբողջական համակարգ են ներկայացնում հայերենում: Ձայնավորների պես բաղաձայնները ևս ոչ թե հատ-հատ են արտաբերվում, այլ կիրառվում-մարմնավորվում են բառերում, խոսքում՝ կապակցվելով ինչպես իրար, այնպես էլ ձայնավորների հետ: Դա

Փամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 72, Գ. Բ. Զանուկյան և ուրիշ., Հայոց լեզու, Երևան, 1980, էջ 108:



էլ անխուսափելիորեն որոշակի ազդեցութիւնն է գործում նրանց վրա՝ առաջ բերելով արտաբերական և այլ կարգի տարբերութիւններ:

Այսպիսով՝ հնչյունաբանութեան համար կարևորութիւնն է ստանում նաև այն հարցը, թե խոսքի շղթայում, բառերի մեջ հնչյուններն ընդհանրապես ինչպես են գործածվում և ինչ առանձնահատկութիւններով են բնորոշվում:

## ՀնչՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՍՔՈՒՄ

§ 84. Ինչպես ամեն մի լեզու, այնպես էլ հայերենն ունի հնչյունների կապակցման իր համապատասխան օրենքներն ու օրինաչափութիւնները: Իսկ սա նշանակում է՝ հնչյունները խոսքում ու բառերում ոչ թե տարբրայնորեն կամ մեխանիկորեն, այլ միանգամայն բնականորեն են գործածվում: Իրրև լեզվի նյութական նվազագույն միավորներ, նրանք բոլոր դեպքերում իրար հետ կապակցվում են հայերենի ներքին հնչյունական կառուցվածքին, համապատասխան և հետևաբար նաև փոխադարձաբար պայմանավորված են իրարով, հաճախ ազդում կամ ներգործում են իրար վրա: «Ամեն մի լեզու, — իրավացիորեն նկատել է Մ. Արեղյանը, — ունի վանկերի և բառերի մեջ ձայնավորների և բաղաձայնների հաջորդութեան և բարեխառնութեան իրեն հատուկ որոշ դրութիւնը, որից առաջանում է մի լեզվի դաշնակավորութիւնը»<sup>49</sup>:

Հասկանալի է, որ ճիշտ այդպես հայերենը ևս ունի խոսքում՝ «վանկերի և բառերի մեջ» հնչյունների կապակցութեան, «ձայնավորների և բաղաձայնների հաջորդութեան և բարեխառնութեան իրեն հատուկ որոշ դրութիւնը», որի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է իմանալ, թե նրանում՝ ա) բառերը քանի հնչյունից են կազմված, ընդհանրապես հնչյունական ինչպիսի կառուցվածք ունեն և ինչպես են արտաբերվում, բ) այդ հնչյունները իրար հետ ինչպես են կապակցվում և ինչ կամ ինչպիսի վանկեր են կազմում:

§ 85. Հայերենում, ինչպես հայտնի է, բառերը արտահայտվում են ամենաքիչը մեկ և ամենաշատը՝ 25 հնչյունով<sup>50</sup>: Հնչյունների քանակով տարբերվելով իրարից՝ նրանք միաժամանակ իրենց ընդհանուր քանակով են տարբեր լինում:

§ 86. Ձայնավորները և բաղաձայնները բառերի նյութական ատաղձը կազմելով՝ հավասարապես նույն արժեքն ու կշիռը շունեն: Բառերում առավել կարևոր դեր են կատարում և փաստորեն հիմնախարիսխ են ծառայում ձայնավորները, որոնցով և նրանց արտասանական բնութիւնն է որոշվում: Բացի այդ, ձայնավորներով է որոշվում նաև բառերի վան-

<sup>49</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսութիւն, էջ 92—93:

<sup>50</sup> Տե՛ս Ալ. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու. Բառագիտութիւն, Երևան, 1993, էջ 11—13:

կային դրուժյունը: Բառը, ինչպես հայտնի է, ինչքան ձայնավոր, այնքան էլ վանկ է ունենում: Այս և այլ առումներով էլ հարկ է նախ տեսնել, թե բառերում ունեցած իրենց դիրքային կիրառություններով ինչ պատկեր են ներկայացնում ձայնավորները հայերենում:

§ 87. Հայերենում ձայնավորները գործածվում են բառի բոլոր դիրքերում՝ սկզբում, միջում և վերջում: Ըստ բացատրական բառարանների տվյալների՝ ձայնավորով սկսվող բառերը կազմում են հայերենի ընդհանուր բառապաշարի մոտ 20 %-ը: Դրանք էլ իրենց հերթին բաշխվում են հետևյալ կերպ. առաջին տեղը բռնում են Ա-ով սկսվող բառերը (մոտ 13 %), ինչպես՝ անձ, աղ, աստղ, անուն, ազնիվ, աշակերտ, առշալույս, ավարտական և այլն. երկրորդ տեղը՝ Ի-ով սկսվող բառերը (մոտ 3,7 %), ինչպես՝ իր, իլիկ, իղձ, իրան, իմաստուն, իրական և այլն, երրորդ տեղը՝ Ու-ով սկսվող բառերը (մոտ 2,6 %), ինչպես՝ ուծ, ուլ, ուղի, ուրց, ուրագ, ունայն, ուշանալ, ուսանող և այլն. չորրորդ տեղը՝ Օ-ով սկսվող բառերը (մոտ 2,5 %), ինչպես՝ օդ, օգուտ, օրոհ, օտար, օր, օվկիանոս և այլն. հինգերորդ տեղը՝ Ը-ով սկսվող բառերը (մոտ 1,5 %), ինչպես՝ ըստ, ընտիր, ընդունել, ըմբռնում, այլև՝ զգաստ (= ըզգաստ), զրոսնել (= ըզրոսնել), ստանալ (= ըստանալ), սպասել (= ըսպասել) և այլն. վերջապես՝ վերջին վեցերորդ տեղը է-ով սկսվող բառերը (մոտ 1,2 %), ինչպես՝ էգ, էակ, էծան, էլեկտրական, էկրան, էպոս և այլն: Ըստ այդմ էլ դրանք, օրինակ, հետևյալ պատկերն են ներկայացնում «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» (հ. հ. 1—4, 1969—1980).

Սկզբնաձայնավորը	Բառերի քանակը	
Ա	12750	I
Օ	1515	IV
ՈՒ	1630	III
Ը	1075	V
Է	1020	VI
Ի	2380	II

§ 88. Ձայնավորով վերջացող բառերը զգալապես դիջում են ձայնավորով սկսվող բառերին<sup>51</sup> և «Հայոց լեզվի հանգաբառարանի» (Երեվան, 1976) տվյալների համաձայն կազմում են հայոց լեզվի ընդհանուր

<sup>51</sup> Սկզբնաձայնավորով բառերի հաշվարկումը կատարված է ըստ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» (հտ. 1—4, Երևան, 1967—1980):

բառապաշարի 10 %-ը. ընդ որում այս դեպքում առաջին տեղը բռնում են ի-ով վերջացող բառերը (մոտ 51 %), ինչպես՝ այգի, որդի, մորթի, հիանալի, հայելի, ուղղակի, գեղեցկումի, խնուլի, հովանի, գինի, փոշի, դեռատի, բարի, ֆաղափացի, աբփի և այլն. երկրորդ տեղը՝ ա-ով վերջացող բառերը (մոտ 31 %), ինչպես՝ ապագա, գաթա, էներգիա, ֆիմիա, կրիա, կուլա, ընծա, սատանա, նամփա, փիլիսոփա և այլն. երրորդ տեղը՝ ու-ով վերջացող բառերը (մոտ 8,6 %), ինչպես՝ ազդու, լեզու, քթու, հուժկու, երկու, ծուլորուզու, լրատու, մահացու և այլն. չորրորդ տեղը՝ է (ե)-ով վերջացող բառերը (մոտ 5,7 %), ինչպես՝ աղամանդե, փիրուզե, քղթե, հյուլե, զոնե, բույե, գույե, հասցե, մանրէ և այլն. հինգերորդ տեղը՝ օ (ո)-ով վերջացող բառերը (մոտ 4 %), ինչպես՝ դմբո, ռադիո, դրածո, երեկո, այո, կինո, ներքո և այլն. վերջապես՝ վերջին տեղը բռնում և շատ շնչին՝ մոտ 0,5 տոկոս են կազմում ր-ով վերջացող բառերը, ինչպես՝ ըհր, տեղնուտեղր, ինր, դառր, խառր, սառր, ինֆր:

Մանրություն.— Սրանցից պետք է տարբերել ք հոգով գործածվող ձևերը, որ հասկանալի պատճառներով այստեղ նկատի չեն առնվում:

§ 89. Գալով բաղաձայնով սկսվող բառերին՝ պետք է ասել, որ կազմելով հայերենի բառապաշարի մեծագույն մասը (մոտ 80 %-ը), դրանք նույնպես քանակապես տարբերվում են իրարից. շատ են հատկապես հ-ով, կ-ով, մ-ով, ս-ով, վ-ով, բ-ով, պ-ով... և, ընդհակառակն, բավականին քիչ են ր-ով, ղ-ով, Ֆ-ով սկսվող բառերը:

Բաղաձայնով սկսվող բառերն, օրինակ, միջին թվով հետևյալ պատկերն են ներկայանում է. Արդի հայերենի բացատրական բառարանում».

Սկզբնաբաղաձայնը		Բառերի քանակը	Սկզբնաբաղաձայնը		Բառերի քանակը
1	2	10795	16	Փ	3570
2	Կ	10200	17	Ք	3230
3	Մ	7735	18	Շ	3060
4	Ս	7110	19	Ձ	2270
5	Պ	6885	20	Լ	1700
6	Վ	6715	21	Ց	1615
7	Խ	5695	22	Ճ	1445
8	Տ	5270	23	Ջ	1360
9	Բ	5100	24	Ժ	1275
10	Գ	5095	25	Ջ	1200
11	Ք	4930	26	Զ	1190
12	Ն	4080	27	Ի	1005
13	Դ	3995	28	Յ	850
14	Ց (հ=լէ)	3990	29	Ղ	190
15	Ս	3825	30	Ր	9

Մանրություն.— Բաղաձայնից առաջ ր-ով արտասանվող բառերը ներկայացված են ձայնավորասկզբ բառերի աղյուսակում:

§ 90. Բաղաձայնով վերջացող բառերը գերազանցում են բաղաձայնասկիզբ բառերին և ըստ «Հանգաբառարան»-ի տվյալների կազմում են այնտեղ հղած ամբողջ բառերի 90 %-ը՝ ներկայացնելով հետևյալ պատկերը.

		Վերջ. բաղ.			Քառ. քան.			Վերջ. բաղ.			Քառ. քան.
1		ն	9520	11		զ	612	21		շ	272
2		լ	7200	12		դ	550	22		ղ	272
3		ր	3800	13		թ	550	23		ը	204
4		յ	2720	14		ռ	550	24		փ	204
5		Մ	1730	15		Պ	408	25		բ	136
6		Տ	1720	16		Վ	408	26		ժ	136
7		Ք	1220	17		Գ	340	27		Ջ	136
8		Ց	1088	18		Շ	340	28		Ջ	136
9		Ս	756	19		Ջ	272	29		Ց	68
10		Ղ	680	20		հ	272	30		Ց	68

Սույն աղյուսակը թվական տվյալներով ցույց է տալիս, որ հայերենում բառերը ամենից շատ վերջանում են ն-ով, լ-ով, ր-ով, կ-ով, մ-ով, ա-ով, ւ-ով, ց-ով, իսկ ամենից քիչ՝ բ-ով, ժ-ով, ձ-ով, ց-ով, յ-ով և ֆ-ով:

Այսպիսով՝ հնչյունների թե՛ ձայնավորասկիզբ ու ձայնավորավերջ և թե՛ բաղաձայնասկիզբ ու բաղաձայնավերջ գործածությունները ավելի են պարզ դարձնում բառերի հնչյունական կառուցվածքը և հնարավորություն ընձեռում խոր ու ճշտորեն ըմբռնելու նրանց բաղադրիչների արտասանական կապերն ու հարաբերությունները, բնույթն ու էությունը:

### ՎԱՆԿ ԵՎ ՎԱՆԿԱՏՈՒԾ

§ 91. Վանկը խոսքի կամ բառի այն միավորն է, որ արտաբերվում է մեկ շնչով կամ օդի մեկ մղումով, ինչպես, օրինակ՝ ա-սել, դա-սա-րան, բա-րե-կա-մու-թյուն, լու-սա-վոր-չա-կան և այլն:

Իբրև արտասանական միավոր, վանկը անխտիր խարսխվում է ձայնավորի վրա և արտահայտվում է կա՛մ մեկ ձայնավորով, կա՛մ մեկ ձայնավորի հետ նաև բաղաձայնով: Այդ պատճառով էլ ձայնավորը կոչվում է վանկարար հնչյուն կամ վանկի գազաթ: Դա հանդես է գալիս թե՛ բառասկզբում, թե՛ բառամիջում և թե՛ բառավերջում, հմմտ., օրինակ, ար-դար, իղձ, է-ակ, ու-րախ, օ-տար, ըղ-ձա-լի..., ֆա-ղաֆ, բարո-յա-կան, ջեր-մու-թյուն, սի-րե-լի, ե-րե-խա, կա-տու և այլն:

Ձայնավորով վերջացող վանկը կոչվում է բաց, իսկ մեկ կամ մի քանի ոչ վանկարար հնչյունով՝ բաղաձայնով վերջացող վանկը՝ փակ, հմմտ., օրինակ, ֆա-ղա-ֆա-ցի, ե-րե-խա, ե-րե-վե-լի, լե-զու, մա-հա-ցու, մար-գա-րե, պո-ղո-տա... և պատ-կեր, գոր-ծել, կազմ-վածք, նամպ-րուկ, ձանձ-րույթ, ա-ռաջ-նորդ, լա-վա-մարդ և այլն:

§ 92. Հայերենում վանկերը իրենց կազմում կարող են ունենալ մեկից մինչև հինգ հնչյուն, ըստ որոնց էլ լինում են կարճ և երկար: Մ. Աբեղյանի բնութագրմամբ՝ «Մեկ կամ երկու հնչյունից կազմված վանկերը, բնականաբար, համեմատաբար ավելի կարճ են, իսկ շորս և հինգ հնչյունից կազմվածները՝ երկար. եռահնչյուն վանկերը բռնում են միջին տեղը, մոտենալով երբեմն կարճին, երբեմն՝ երկարին»<sup>52</sup>, հմմտ., օրինակ, ա-հա, օ-գուտ, ու-սուվ-նա-կան, ի-մա-նալ, իս-կա-կան, ամե-նա-է-ա-ֆան, կանգ-նել, տո-ղա-ղարձ, բը-ռուցց, ֆը-ղանցց, ձե-ռա-պարտք և այլն:

Վանկերի հնչյունների քանակով էլ որոշվում են նրանց տարատեսակները: Մեկ հնչյունով՝ ձայնավորով արտահայտվող վանկը կոչվում է երկբաց, ինչպես, օրինակ, ա-ն, ու-ն, օ-ն, է-ն, ի-ն, ը-ն ա-լիք, ուշա-նալ, օ-րա-կան, է-ռի-թյուն, ի-րա-վա-րան, ը-հը բառերում:

Ձայնավորով և բաղաձայնով արտահայտվող վանկը կոչվում է սկզբնաբաց-վերջափակ, ինչպես, օրինակ՝ աբ-ղեն, օգ-տա-կար, ուր-վա-կան, իս-կա-պես, ընկ-նել, էկ-րան և այլն:

Սկզբնաբաղաձայնով և վերջնաբաղաձայնով արտահայտվող վանկն էլ կոչվում է երկփակ, ինչպես վարձ-կան, պատ-կեր, զրն-ղակ, գործ-վածք, հան-դերձ, վերց-նել, որ-սորդ (վօր-սօրթ), եղ-բայր, կեց-վածք, գոր-ծուն բառերում նրանցից յուրաքանչյուրը:

Բաղաձայնով և ձայնավորով արտահայտվող վանկը կոչվում է սկզբնափակ-վերջաբաց, ինչպես, օրինակ՝ սի-րե-լի, ֆա-ղա-ճա-վա-րի, քա-լե-նի, պի-տա-նի, լու-սա-տու, գյու-ղա-ցի և այլն:

§ 93. Այսպիսով, ինչպես օրինակներն են ցույց տալիս, հայերենում վանկը ունի բազմաբնույթ կառուցվածք և կարող է արտահայտվել՝

- ա) մի ձայնավորով ( $= \mathcal{Q}$ ).
- բ) մի ձայնավորով և մի բաղաձայնով՝  $\mathcal{Q} + \mathcal{P} (= \mathcal{Q}\mathcal{P})$ .
- գ) մի ձայնավորով և երկու բաղաձայնով՝  $\mathcal{Q} + \mathcal{P} + \mathcal{P} (= \mathcal{Q}\mathcal{P}\mathcal{P})$ .
- դ) մի ձայնավորով և երեք բաղաձայնով՝  $\mathcal{Q} + \mathcal{P} + \mathcal{P} + \mathcal{P} (= \mathcal{Q}\mathcal{P}\mathcal{P}\mathcal{P})$ .
- ե) մի բաղաձայնով և մի ձայնավորով՝  $\mathcal{P} + \mathcal{Q} (= \mathcal{P}\mathcal{Q})$ .
- զ) մի բաղաձայնով, մի ձայնավորով և վերստին մի բաղաձայնով՝  $\mathcal{P} + \mathcal{Q} + \mathcal{P} (= \mathcal{P}\mathcal{Q}\mathcal{P})$ .
- է) մի բաղաձայնով, մի ձայնավորով և երկու բաղաձայնով՝  $\mathcal{P} + \mathcal{Q} + \mathcal{P} + \mathcal{P} (= \mathcal{P}\mathcal{Q}\mathcal{P}\mathcal{P})$ .
- ը) մի բաղաձայնով, մի ձայնավորով և երեք բաղաձայնով՝  $\mathcal{P} + \mathcal{Q} + \mathcal{P} + \mathcal{P} + \mathcal{P} (= \mathcal{P}\mathcal{Q}\mathcal{P}\mathcal{P}\mathcal{P})$ :

Մանրաթյուն.— Մի շարք բառերում՝ պայմանավորված գրաբարյան իւ ( $>$ յու) և եա ( $>$ յա) երկբարբառների կրած պատմական հնչյունափոխումք, վանկը արտահայտվում է երկու սկզբնաբաղաձայնով, մեկ ձայնավորով և մեկ կամ երկու վերջ-

<sup>52</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, Երկեր, Ծ, Երևան, 1971, էջ 32:

նաբաղաձայնով, ինչպես, օրինակ՝ ձյութ, նյութ, լյարդ, կյանք... դյուծի, ձյուծապատ, նյուծա-կան, նյարդա-յին, մեծու-բյուն, մի-ու-բյան և այլն (տե՛ս § 97, թ):

§ 94. Ունենալով բազմաբնույթ կառուցվածք՝ վանկերը ոչ թե տարազատված, այլ սերտորեն կապված են իրար հետ և խոսքում ներկայացնում են իբրև փոխկապակցված, միմյանց հաջորդող հնչյունների ամբողջություն, որը հատկանշվում է արտասանական դադարներով՝ ընդհատումներով կամ թուլացումներով<sup>53</sup>: Այդ հիմամբ ոչ միայն վանկերը, այլև նրանց սահմաններն են որոշվում: Չայնավորով վերջացող վանկերի դեպքում սովորաբար արտաշնչության մեջ՝ թուլացում, իսկ բաղաձայնով (մանավանդ պայթական) վերջացող վանկերի դեպքում ընդհատում է տեղի ունենում, հմմտ., օրինակ, ա-ոիթ, ա-նա-նուն, բուծե-յի, մի-ակ, փո-րել, դե-րա-սան, օ-րա-գիր և ան-դունդ, ամպ-րապ, պար-տիզ-պան, ը՛ղ-ջր-կել, գան-գատ, պատ-կե՛ր, նախ-ճի՛ր, պատ-ճառ, խոն-կո՛ւր, հաց-թուխ և այլն:

Այն դեպքում, սակայն, երբ նախորդ վանկը վերջանում, իսկ հաջորդը սկսում է շփական (մանավանդ՝ ձայնորդ) հնչյունով, նրանց միջև ոչ թե ընդհատում, այլ նույնպես թուլացում է լինում, ինչպես, օրինակ՝ կար-միր, ամ-րա-նալ, տար-վել, ալ-րա-դաց, լեռ-նա-դաշտ, դրժ-վար, քան-վո՛ւր, սար-սու՛ռ, նայ-վածք և այլն:

§ 95. Վանկերը, իբրև լեզվի հնչյունական արտասանական միավորներ, իհարկե, միշտ սույնը չեն մնում և բառի աճման՝ թեթման, ածանցման, բարդման ժամանակ նաև որոշակի փոփոխությունների ու տեղաշարժերի են ենթարկվում, հմմտ., օրինակ, գիր—գը-րել—գը-րե-լա-ձև. լույս—լու-սա-վոր — լու-սա-վո-րու-թյուն. երկիր— եր-կը-րա-գունդ— եր-կը-րա-գըն-դի. ձի— ձի-եր — ձի-ա-վարժ — ձի-ա-վար-ժու-թյուն. տե՛ր—տի-րել — տի-րա-կալ — տի-րա-կա-լու-թյուն. ուսում—ուսում-նա-կան — ուս-ման. ժողովուրդ—ժո-ղո-վըր-դի — ժո-ղո-վըր-դական—ժո-ղո-վըր-դա-կա-նու-թյուն և այլն: Բառերը վանկային փոփոխություններ են կրում նաև խոսքի շղթայում՝ մանավանդ օժանդակ բայի և սպասարկու բառերի հետ գործածվելիս, ինչպես, օրինակ՝ Ես եմ գալիս— Յէ-սեմ գա-լիս, Նա լավ աշակերտ է— Նա լավ ա-շա-կեր-էէ, Պրամն ասաց— Ա-րամ-նա-սաց, Դու գիտես, թե ով է իմ բնկերը— Դու գի-տես թե-ո-վէ ի-մըն-կե-րը, Հայտնում եմ առ այն— Հայտ-նու-մեմ ա-ռայն և այլն: Նման վանկատումները, որոնց դեպքում փոխվում է վանկի սահմանը, տեղի են ունենում հնչադասության արագ արտասանության ժամանակ, ուստի և վանկի կառուցվածքի որոշման համար առանձնապես կարևոր նշանակություն չունեն:

§ 96. Վանկի կառուցվածքն ու բնույթը հիմնականում որոշվում են բառով ու նրա հնչյունների փոխկապակցությամբ:

<sup>53</sup> Այդ մասին տե՛ս Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 92:

Բառը քանի շնչով արտաբերվում, այնքան էլ վանկ է ունենում: Բառեր կան, որոնք՝ մեկ շնչով, բառեր էլ կան, որոնք մեկից ավելի շնչով են արտաբերվում:

Մեկ շնչով արտաբերվող բառերը կոչվում են միավանկ բառեր, ինչպես՝ աղ, բույս, բու, գործ, սա, կին, սար, տեր, էջ, փոս, ուս, վարք, խելք, կուրծք և այլն: Մեկից ավելի շնչով արտաբերվող բառերը կոչվում են բազմավանկ բառեր, որոնք քանակով գերազանցում են միավանկ բառերին և կարող են կազմված լինել ամենաքիչը՝ երկու և ամենաշատը 13 վանկից, հմմտ., օրինակ, ար-դար (2), դա-սա-րան (3), մայ-րա-խա-ղափ (4), զը-րա-կա-նու-թյուն (5), հե-ռա-խո-սա-կա-յան (6), հա-մա-պա-տաս-խա-նա-բար (7), ար-տա-դը-րո-ղա-կա-նու-թյուն (8), տի-ե-զե-րա-հր-բի-ռա-շի-նա-կան (10), է-լեկ-տը-րա-սըր-տա-ծայ-նա-գը-րու-թյուն (11) և այլն:

Ըստ վանկերի քանակի՝ բազմավանկ բառերը իրենց հերթին լինում են երկվանկ, եռավանկ, քառավանկ և այլն: Ինչպես միավանկ, այնպես էլ բազմավանկ բառերը ունեն իրենց հատուկ վանկային կառուցվածքը և արտահայտությունները, որոնք և մեզ համար ավելի պարզ են դառնում նրանց առանձին նկարագրությամբ:

### ՄԻԱՎԱՆԿ ԲԱՌԵՐԻ ՎԱՆԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

§ 97. Միավանկ բառերը, ինչպես ասվել է, կազմված լինելով մեկ վանկից՝ արտաբերվում են մեկ շնչով: Նրանք իրենց կազմում անպայման մի ձայնավոր են ունենում և արտահայտվում են՝

ա) զուտ մեկ ձայնավորով, ինչպես՝ օ (ձայնարկ.), ի (= որպես), է (գոյ.՝ էակ) և այլն.

բ) մի ձայնավորով և մի բաղաձայնով՝  $Q + P > 2P$ , ինչպես՝ աղ, ահ, ամ, աջ, ափ, էգ, էջ, էլ, ըհ, իժ, իլ, իր, ութ, ուժ, ուշ, ուս, օդ, օձ, օր, օֆ և այլն.

գ) մի ձայնավորով և երկու բաղաձայնով՝  $Q + P + P = 2PP$ , ինչպես՝ ազգ, ազդ, ախտ, ամպ, այս, աշտ, անձ, աշք, արկ, արտ, էջք, էջխ, ընդ, ըստ, իսկ, ինձ, ինչ, ուխտ, ուղտ, ուշք, ուրց, օհմ և այլն.

դ) մի ձայնավորով և երեք բաղաձայնով՝  $Q + P + P + P = 2PPP$ , ինչպես՝ անցք, այլև՝ անդր, արկղ, անգղ, ազդր, աստղ, ունկն, ուստր, որոնց վերջնահնչյունից առաջ թույլ բ է լսվում (տե՛ս § 99).

ե) մի բաղաձայնով և մի ձայնավորով՝  $P + Q = PQ$ , ինչպես՝ բու, դա, թե, թի, լի, լու, ձի, ձու, մի, նա, տո և այլն (այսպիսի բառերը շատ քիչ են).

զ) մի բաղաձայնով, վի ձայնավորով և վերստին մի բաղաձայնով՝  $P + Q + P = PQP$ , որպիսիք և բավական մեծ թիվ են կազմում հայերենում, ինչպես՝ բառ, բեռ, բիծ, բոթ, բաց, բութ, գառ, գեր, գիծ, գոհ, գութ,

դաս, դեղ, դոխ, դուր, եզ, ես, զատ, զեխ, զրո, զիլ, զով, թագ, թել, թիվ, թոք, թուզ, ժամ, ժիր, լավ, լեռ, լոր, լուր, խաղ, խեթ, խիտ, խոտ, խուց, ծառ, ծեփ, ծիտ, ծոց, ծուռ, կաղ, կեր, կին, կոկ, կուժ, հաց, հեզ, հին, հոր, հուր, ձագ, ձեթ, ձող, ղեկ, ճաշ, ճիշ, ճոխ, մագ, մեզ, միս, մոտ, մութ, յար, յոթ, յուզ, նավ, նետ, նիշ, նոր, նուշ, շատ, շեկ, շիթ, շող, շուն, ոխ, ու, սր, շափ, շիր, պատ, պետ, պոշ, պուտ, ջահ, ջիղ, ջոկ, ջուր, ռես, սար, սեզ, սոխ, սուր, վառ, վեհ, վիթ, վուշ, տալ, տեզ, տիկ, տող, տուփ, ցավ, ցեխ, ցից, ցոփ, ցուլ, փակ, փեշ, փիղ, փոս, փուռ, քաջ, քեն, քիշ, քոր, քուն, ֆազ, ֆուտ և այլն.

է) մի բաղաձայնով, մի ձայնավորով և երկու բաղաձայնով՝  $\text{Բ} + \text{Ձ} + \text{Բ} + \text{Բ} = \text{ԲՁԲԲ}$ , որպիսիք նույնպես շատ են հայերենում, ինչպես՝ բարձ, բերդ, բիրտ, բողկ, բույս, գայլ, գեղձ, գիրկ, գործ, գունդ, դաշտ, դեղձ, դընգ, դույլ, երգ, երթ, զարդ, զեղշ, զիստ, գորք, զույգ, թամբ, թերթ, ժայռ, ժեստ, ժույժ, լանջ, լինդ, լորձ, լույս, խանդ, խեղճ, խիղճ, խորթ, խունկ, ծայր, ծերպ, ծունկ, կանչ, կեղծ, կիրթ, կողմ, կուղբ, հայր, հասկ, հեշտ, հինգ, հողմ, հունձ, ձայն, ձորձ, ճանձ, ճեղք, ճիշտ, ճորտ, ճումբ, մարդ, մեղմ, միշտ, մոնթ, մուրձ, յամբ, նախշ, նենգ, նինջ, նոսր, նուրբ, շանթ, շեղբ, շունչ, ողբ, որս, շորս, պարզ, պերձ, պինդ, պոմպ, ջարդ, ջերմ, ջինջ, ջուխտ, ռազմ, ռելս, ռիթմ, ռումբ, սանձ, սեղմ, սիրտ, սոսկ, սուրբ, վանկ, վաշտ, վերջ, վիշտ, տանձ, տենդ, տիղմ, տոմս, տունկ, ցայտ, ցինկ, ցույց, փայտ, փեղկ, փերթ, փըստ, փիշտ, փորձ, փունջ, քաղց, քայլ, քիմբ, քորձ, քուրմ, ֆարս, ֆոնդ...

ը) մի բաղաձայնով, մի ձայնավորով և երեք բաղաձայնով՝  $\text{Բ} + \text{Ձ} + \text{Բ} + \text{Բ} + \text{Բ} = \text{ԲՁԲԲԲ}$ , ինչպես՝ քամբբ, կուրծբ, պարտբ, վարձբ, ցայլբ, ալլև՝ բարձբ, դուտբ, քանձբ, կայսբ, կարծբ, ֆաղցբ, փոխառյալ՝ ջեմպլբ, ֆիլտբ, տեստ, որոնք մեկուկես վանկանի բառեր են իրապես.

թ) երկու սկզբնաբաղաձայնով և մեկ ձայնավորով և մեկ կամ երկու վերջնաբաղաձայնով՝  $\text{Բ} + \text{Բ} + \text{Ձ} + \text{Բ} (+ \text{Բ}) = \text{ԲԲՁԲ}(\text{Բ})$ , ինչպես՝ բյուր, գյուղ, գյուտ, դյութ, բյուր, խյուս, հյութ, հյուղ, հյուս(ն), հյուր, ձյութ, ձյուն, նյուղ, մյուս, նյութ, շյուղ, սյուն, սյուբ, լյարդ, կյանբ, նյարգ, այլև փոխառյալ՝ լյուբ, բյազ և այլն:

§ 98. Միավանկ բառերն ունենալով բազմազան արտահայտություններ՝ բնորոշվում են նրանով, որ՝

ա) բոլոր տեսակի բառերում իբրև լիահունչ հնչյուն է գործածվում ձայնավորը.

բ) ձայնավորասկիզբ վանկերը մեծապես զիջում են բաղաձայնասկիզբ վանկերին և միաժամանակ իրենց հերթին տարբերվում իրարից. եթե ձայնավոր + բաղաձայն և բաղաձայն + ձայնավոր հնչյուններով արտահայտված միավանկ բառերը այս կամ այն չափով շատ են և գրեթե հավասար, ապա սոսկ մի ձայնավորով արտահայտվածները, ընդհակառակն, բավական քիչ են (տե՛ս § 97, ա): Եզակի՛ և ըստ էության միայն



անցք միավանկ բառն է, որ արտահայտվում է մեկ ձայնավորով և երեք բաղաձայնով (տե՛ս § 100):

զ) Ի տարբերություն ձայնավորասկիզբ վանկերի, մեծ թիվ են կազմում բաղաձայնասկիզբ վանկերը, որոնց մեջ էլ գերիշխում են նախ եռահնչյուն՝ բաղաձայն + ձայնավոր + բաղաձայն, և ապա՝ քառահնչյուն՝ բաղաձայն + ձայնավոր + բաղաձայն + բաղաձայն կազմությունները: Ընդ որում՝ առաջին դեպքում եթե համարյա անխտիր բաղաձայնները իբրև թե՛ սկզբնահնչյուն և թե՛ վերջնահնչյուն են գործածվում, ապա երկրորդ դեպքում այլ պատկեր են երևան հանում. բառասկզբում նույնպես հանդես են գալիս բոլոր բաղաձայնները, իսկ բառավերջում՝ նախ՝ այնպիսիք, որոնցից մեկը սովորաբար ձայնորդ է լինում. հմմտ., բամբ, բայց, բանտ, բարդ, բարկ, բարձ, բերդ, բիրտ, բորբ, բույթ, բույլ, բույս, բույր, բուռն, բուրգ..., խազվ, խայթ, խայծ, խանդ, խույս, խույր, խունկ և այլն:

Այնուհետև զգալի թիվ են կազմում այն վանկերը, որոնք արտահայտվում են շփական խուլ կամ ձայնեղ + պայթական խուլ կամ ձայնեղ՝ խտ, խպ, սկ, ստ, շկ, շտ, դպ, դթ, դկ, դլ, դբ, դդ, դգ հնչյուններով, հմմտ., թախտ, թուխպ, շեղբ, ողբ, բողկ, գաղթ, խեղդ, կողպ, մաշկ, հեշտ, հասկ, հաստ, հաշտ, միշտ, թուղթ, գիստ, եեղփ, հեղգ և այլն,

Քիչ չեն նաև այն միավանկ բառերը, որոնք վերջանում են շփական ձայնեղ + պայթաշփական (ծ, ջ, ց, ծ) հնչյունով, ինչպես՝ գաղծ, գեղծ, դեղծ, գաղջ, խեղն, խիղն, շեղջ, ողջ, կեղծ, պիղծ, ֆաղց, գեղչ և այլն:

Որոշ բառեր էլ վերջավորվում են *-ֆս-ով* (ինչպես՝ դուֆս, կոֆս, մաֆս, վաֆս), *-գս-ով* (ինչպես՝ զուգս), *-ծկ-ով* (ինչպես՝ ծածկ), *-ջփ-ով* (մեջփ), *-ցխ-ով* (փոցխ), *-խս-ով* (թուխս), *-խշ-ով* (նախշ), *-շխ-ով* (վաշխ):

Մանրություն.— Միավանկ բառեր էլ կան, որոնք՝ երկու ձայնորդով են վերջավորվում, օրինակ՝ նույն, գույն, բույր, ձայն, սայլ, սույն, գայլ, ձույլ, փայլ և այլն:

§ 99. Բաղաձայնասկիզբ կազմությունների մեջ առանձնապես մեծ կշիռ չունեն հինգ հնչյունով արտահայտված (տե՛ս § 97, բ, թ), ինչպես նաև մեկուկես վանկից կազմված բառերը, որոնցում, սակայն, վերջին բաղաձայնների միջև ը-ն ավելի ուժեղ է հնչվում, քան ձայնավորասկիզբ նմանատիպ բառերում, հմմտ., օրինակ, մանր—մա-նրը, թանճր—թան-ճրը և ազդր—ազ-դրը, արկղ—ար-կըղ և այլն:

§ 100. Միավանկ բառերի բնորոշ առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ վանկը և բառը համընկնում են. նկատելի է նաև, որ միավանկ բառերը հիմնականում արմատական բառեր են, որոնցից էլ շեղվում են միայն նրանք, որոնք վերջավորվում են *-ֆ* ածանցով, ինչպես՝ անցք, առք, բարք, բեքք, գիրք, դիրք, զորք, թամբք, լայնք, խոսք, խորք, կյանք, կուրծք, հումք, հետք, ձեռք, ձիք, միտք, շարք, օտք, շարք, պարտք, պետք, ջանք, վարձք, վարք, փառք, փիմք և այլն: Հմմտ. նաև

դուրս, պաս (<պահս), շորս, հոգս, փոխս, խաբս, ծառա (լինել), որոնք հոգնակի թվի հայցականից սերած ձևեր են:

Միավանկ բառերը միաժամանակ իրարից տարբերվում են և՛ իրենց վանկարար հնչյունի՝ ձայնավորի տեսակարար կշռով: Ինչպես այլ, այնպես էլ այս դեպքում առավել գերիշխում է ա-ն, որով կազմված բառերը գերազանցում են մյուս՝ ձայնավորներով՝ արտահայտված բառերին: Շատ ավելի նվազ գործուն է ը ձայնավորը, որը և հանդես է գալիս միայն ձայնարկություններում ու բնաձայնություններում, ինչպես՝ ըն, դրո(ո), բրո(ո), կրո, փրո(ո), փրստ, ֆրս, բրխկ, զրնգ և այլն, այլև՝ զրո («Մահակն ուսին, շունն ետևից ներս է մտնում մի զրո շոբան»), Հովհ. Քում.):

## ԲԱԶՄԱՎԱՆԿ ԲԱՌԵՐԻ ՎԱՆԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

§ 101. Բազմավանկ բառերը վանկային ավելի բարդ կառուցվածք ունեն, քան միավանկ բառերը: Այլ կերպ չի էլ կարող լինել, ինչքան շատանում են վանկերը բառում, այնքան էլ բարդանում է նրա վանկային կառուցվածքը: Բազմավանկ բառերը այդպիսով վանկերի ավելի բարդ համակարգ են ներկայացնում՝ տարբեր դիրքերում (բառասկզբում, բառամիջում և բառավերջում) նրանց ունեցած զանազան արտահայտություններով:

### ա. ԲԱԶՄԱՎԱՆԿ ԲԱՌԵՐԻ ՍԿԶԲՆԱՎԱՆԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

§ 102. Բազմավանկ բառերը, նայած այն բանին, թե ինչ հնչյունով են սկսում, երկու տեսակ՝ ձայնավորասկիզբ և բաղաձայնասկիզբ վանկեր են ունենում, որոնք և իրարից տարբերվում են իրենց կառուցվածքին հատուկ կողմերով:

§ 103. Բազմավանկ բառերի ձայնավորասկիզբ վանկը արտահայտվում է՝

ա) մի ձայնավորով՝ Չ, երբ դրան մեկ բաղաձայն կամ մասնավոր դեպքերում որևէ ձայնավոր է հաջորդում, ինչպես՝ ա-շա-կերտ, ա-ղա-չանք, ա-րար-չա-գոր-ծու-թյուն. է-տեղ, է-ժա-նու-թյուն, է-լիկ-տը-րա-կան, ի-մաստ, ի-րա-կան, Ի-տա-լի-ա. Եւ-րա-խա-նալ, ու-նեց-վածք, ու-տեղ, ու-սում-նա-սեր. օ-րո-րոց, օ-գուտ, օ-տա-րա-կան և այլն:

Մանրալրջուն.— Ը սկզբնաձայնավորը միայն ընը (ը-հը) ձայնարկությունում և արևմտահայերեն ընել (=ը-նել) և ըսել (=ը-սել) բառերում է, որ առանձին վանկ է կազմում:

բ) Մի ձայնավորով և մի բաղաձայնով ( $\mathcal{Q} + \mathcal{P} = \mathcal{Q}\mathcal{P}$ ), երբ դրան նույնպես մեկ բաղաձայն է հաջորդում, ինչպես՝ ազ-դեղ, աճ-տառ, աշ-խարհա-մաս, առ-քա-յա-կան. էկ-րան. ըն-տիր, ըն-թացք, ըղ-ձա-կան, ըմ-

բրև-նո-ղու-թյուն. իջ-վածք, ին-նա-նոց, իս-կա-կան. ուժ-գին, ուր-վա-գիժ, ուս-մունք. օգ-տա-կար, օվ-կի-ան, օր-հա-սա-կան, օք-սիդ և այլն:

Այս կանոնից շեղվում են այն բառերը, որոնց սկզբնավանկի բաղաձայնին հաջորդող բաղաձայնը նախորդում է յ ձայնորդին, ինչպես՝ աղ-բյուր, ան-կյուն, ար-դյունք (բայց նաև՝ անկ-յուն, արդ-յունք):

ա) Մի ձայնավորով և երկու բաղաձայնով ( $Q + P + P = QPP$ ), երբ դրան նույնպես մեկ բաղաձայն է հաջորդում, ինչպես՝ անդ-րա-դարձ, անց-նել, էփս-կուր-սի-ա, ընկ-նել, ընդ-հա-նուր, ինք-նին, ինս-տի-տուտ, օգտ-վել, օրհ-նեբք: Այսպիսի սկզբնավանկով բառերը առանձնապես շատ չեն:

§ 104. Զայնավորասկիզբ բազմավանկ բառերի հետ են կապվում և մի առանձին խումբ են կազմում, անշուշտ, նաև այն բառերը, որոնք սկսում են զբ-, զգ-, ապ-, սկ-, ստ-, շտ- և նման հնչյունակապակցություններով, ինչպես, օրինակ՝ զբաղվել ( $= ըզ-բաղ-վել$ ), զբաղմունք, զբռնել, զբոսավայր, զգալ, զգայական, զգեստ, զգոն, զգույշ, սպասել ( $= ըս-պա-սել$ ), սպանել, սպառում, սպիտակ, սկսել, սկեսուր, ստանալ, ստեղծել, ստոր, ստույգ, շտապ, շտեմարան և այլն: Այդպիսի բառերում հիշյալ երկհնչյունները հանդես են գալիս հիմնականում ձայնավորից առաջ և հայերենի օրենքներին «հակառակ» ոչ թե իրենց միջև, այլ սկզբում են ը ստանում: Իսկ դա նշանակում է, որ տվյալ դեպքում ը-ն ևս հանդես է գալիս իբրև լիարժեք վանկարար հնչյուն և ոչ թե գաղտնավանկ, այլ այնպիսի սկզբնավանկ է կազմում, որն ընդհանրապես ձայնավոր + բաղաձայն-ով է արտահայտվում:

§ 105. Բազմավանկ բառերի ձայնավորասկիզբ վանկերի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար հարկ է նաև տեսնել, թե նրանց ձայնավորը ինչ հնչյունի է նախորդում կամ ինչ հնչյունների հետ է կապակցվում:

Այսպես՝

ա) Ա-ն, որով ամենից շատ բառերն են կազմվում (տե՛ս § 87), ձայնավորներից նախորդում է ե (է)-ին, ո (օ)-ին, ու-ին՝ մի քանի փոխառյալ բառերում, իսկ բաղաձայններից գրեթե բոլորին, ինչպես՝ ա→բ (աբեղա), գ (ագահ), դ (ադամանդ), զ (ազատ), ք (աթոռ), ժ (ածղահա), լ (ալիք), իս (ախորժակ), ծ (ածել), կ (ականջ), հ (ահագին), ձ (—), դ (աղանդ), ճ (աճել), մ (ամիս), յ (այպանել), ճ (անկյուն), շ (աշուն), շ (աշառու), պ (ապրել), ջ (աջակողմյան), ո (առթիվ), ս (ասել), վ (ավարտ), տ (ատել), բ (արդար), ց (ացետոն), փ (ափսոս), ֆ (աֆար), ֆ (աֆղան):

բ) է-ն ձայնավորներից նախորդում է ա-ին, ի-ին, ո(օ)-ին, ու-ին՝ մակավաթիվ բառերում (էակ, էություն, էի), իսկ բաղաձայններից՝ բացի ձ-ից, ց-ից, շ-ից, ո-ից, ց-ից, մյուսներին՝ գործածվելով ավելի շատ լ-ի (էլեկտրական), ս-ի (էսթետ), ց-ի (էներգիա), բ-ի (էրան «մեղմ,

թեթև), Գ-ի (էքսկուրսիա), ա-ի (էպոս), մ-ի (էմալ), շ-ի (էշանոց) հետ: Ինչպես օրինակներից էլ կարելի է նկատել, է-ն, իբրև սկզբնաձայնավոր, հանդես է գալիս հիմնականում փոխառյալ բառերում:

դ) Ը-ն ձայնավորներից նախորդում է է-ին և ք-ին՝ բէն, ըք ձայնարկութուններում, բաղաձայններից հիմնականում՝ Ե-ի (ընդ, ընծա, ընտիր...), մ-ին (ըմբիշ, ըմբոստ, ըմպան...), դ-ին (ըղծալի), իսկ մյուսների հետ՝ կա՛մ հազվադեպ, կա՛մ բուրբուլի ն շի գործածվում:

դ) Ի-ն ձայնավորներից հանդիպում է միայն ա(օ)-ի հետ՝ մի քանի փոխառյալ բառերում, (օր.՝ իոն, իոնացում), իսկ բաղաձայններից գործածվում է ԶՅ-ի և դրանցից էլ հատկապես Ե-ի (ինճնուրույն, ինճամյա), Բ-ի (իբան, իբատես), մ-ի (իմանալ, իմպերիալիզմ), շ-ի (իշխան, իշամեղու), գ-ի (իզական), շ-ի (իչնել, Իչևան), զ-ի (իզուր) հետ: Զի հանդիպում ձ-ից, ց-ից, յ-ից, շ-ից, պ-ից, փ-ից առաջ:

ե) Ու-ն ձայնավորներից հանդիպում է ա-ից, ու-ից առաջ՝ ուա, ուու ձայնարկութուններում և ուատ (<վատտ) փոխառյալ բառում: Բաղաձայններից շի նախորդում ձ-ին, ց-ին, շ-ին, ց-ին, իսկ մյուսներին նախորդում է՝ գործածվելով ավելի շատ դ-ի (ուզի, ուզել), Բ-ի (ուրագ, ուրվագիծ), ս-ի (ուսանող, ուսագիր), Ե-ի (ուճակ, ունայնություն), Ժ-ի (ուճգին, ուժեղ), Բ-ի (ուռենի, ուռչել), շ-ի (ուշանալ, ուշադիր), ք-ի (ուքամյա), լ-ի (ուլիկ, ուլունճ), խ-ի (ուխտել), տ-ի (ուտել, ուտիճ), սակավ՝ ա-ի, վ-ի, Բ-ի, ք-ի, գ-ի, դ-ի, ծ-ի, մ-ի, յ-ի, կ-ի հետ:

զ) Օ-ն ձայնավորից առաջ հանդիպում է մի քանի փոխառյալ բառերում և մի երկու ձայնարկութունում (օազիս, օազ, օազավել, օե, ալլե՛օօ), իսկ բաղաձայններից գերազանցապես նախորդում է Բ-ին (օրոք, օրաթերթ), դ-ին (օգտմուղ), տ-ին (օտար), դ-ին (օղակ), ձ-ին (օձիճ), ք-ին (օգնել), ա-ին (օպերա), ս-ին (օալա), վ-ին (օվկիանոս), ց-ին (օճառ), ք-ին (օրդեկտ), ք-ին (օքեան).... և շատ քիչ դեպքերում՝ խ-ին (օխրտ), ծ-ին (օծել), կ-ին (օկուպանտ), յ-ին (օյախոսել), ց-ին (օճա), գ-ին (օգոն), ծ-ին (օժանդակ), լ-ին (օլիմպիադա), մ-ին (օմար), շ-ին (օշտրակ), զ-ին (օջախ), Բ-ին (օգսիդ), ֆ-ին (օֆսեթ):

Օ-ն շի հանդիպում Ե-ից, շ-ից, Բ-ից, ց-ից, ֆ-ից առաջ՝ բուն հայերեն բառերում:

§ 106. Կարծել, թե այս ամենի մատնանշումը ավելորդ է ու անիմաստ, անշուշտ, սխալ կլինի: Իրապես հենց այդպիսի քննությամբ պարզ է դառնում, որ սկզբնաձայնավորը՝

ա) հազվադեպ է նախորդում ձայնավորի և ինքնուրույն վանկ կազմում:

բ) հիմնականում ինքնուրույն վանկ է կազմում, իզր մեկ բաղաձայնի է նախորդում:

գ) ավելի շատ ձայնորդի, քան ուլլ բաղաձայնի է նախորդում:

դ) շի նախորդում կամ սակավ է նախորդում որոշ բաղաձայնների և դրանցից հատկապես՝ ձ-ին, և-ին, ջ-ին, ց-ին, շ-ին:

Նախորդելով տարբեր հնչյունների՝ սկզբնաձայնավորները այդ տեսակետից զգալապես տարբերվում են իրարից և երևան հանում իրենց բնույթին և կիրառությանը համապատասխան պատկեր: Այս ամենն էլ պարզորոշ ցույց է տալիս, որ՝ ա) բազմավանկ բառերը ունեն ձայնավորասկիզբ վանկերի բավականին հարուստ կազմ և բ) սկզբնաձայնավորները օժտված են բազմազան հնչյունների հետ կապակցվելու հատկությամբ և իրենց հերթին լավագույնս են ծառայում հայոց լեզվի ներդաշնակությանը:

§ 107. Բազմավանկ բառերի բաղաձայնասկիզբ վանկերն էլ արտահայտվում են՝

ա) Բաղաձայն + ձայնավոր՝ Բ+Ձ-ով, երբ դրան բաղաձայն կամ առանձին դեպքում ձայնավոր է հաջորդում, ինչպես, օրինակ՝ բա-ժակ, գե-րա-զանց, դի-մակ, ե-ռալ, գե-տե-ղել, քո-րել, ծու-ղակ, դե-կա-վար, ճո-ճա-նակ, սյա-րարտ, աե-ղա-փո-խու-թյուն..., քի-ակ, մի-այն, ծի-ա-ծան, լի-ի-մաստ, հի-ա-նա-լի, հի-ացք և այլն:

Հայերենում մեծավ մասամբ վանկերը այս՝ Բ + Ձ կաղապարով են արտահայտվում:

բ) Բաղաձայն + ձայնավոր + բաղաձայն՝ Բ + Ձ + Բ (ԲՁԲ)-ով, երբ դրան նույնպես որևէ բաղաձայն է հաջորդում, ինչպես, օրինակ. բազ-մա-թիվ, զան-գատ, զրո-նակ, եր-դում, զան-ցանք, քիկ-նեղ, լեռ-նա-դաշտ, խաւ-խա-փել, խրչ-խրչալ, հոգ-նա-կի, ջուլ-հակ, վեր-ջա-նալ, փոֆ-րո-գի, ֆաւ-տու-ղար և այլն: Այսպիսի սկզբնավանկով բառերը շատ լինելով հանդերձ քանակով զիջում են առաջին տեսակի բառերին:

գ) Բաղաձայն + ձայնավոր + բաղաձայն + բաղաձայն՝ Բ + Ձ + Բ + Բ (ԲՁԲԲ)-ով, երբ դրան ևս մեկ բաղաձայն է հաջորդում, ինչպես, օրինակ. բարձ-րա-նալ, զորժ-նա-կան, դարձ-վածք, երկ-դիմի, քանձ-րա-նալ, խրճ-րել, կոբց-նել, ձանձ-րույթ, պոռթ-կալ, պաշտ-պան, վայր-կե-նա-բար, վերց-նել, ֆայլ-վածք, ֆերձ-վել, ֆրտ-նել և այլն:

դ) Բաղաձայն + բաղաձայն + ձայնավոր՝ Բ + Բ + Ձ (ԲԲՁ)-ով, երբ դրան դարձյալ մեկ բաղաձայն է հաջորդում, օրինակ՝ բյու-րա-վոր, բյու-րեղ, գյու-ղա-կան, դյու-թել, հյու-սիս, քյու-րի-մա-ցու-թյուն..., այլև՝ ժյու-րի, բյու-րո, սյու-ժե և այլն:

Որոշ բառերում էլ սկզբնավանկը արտահայտվում է բաղաձայն + բաղաձայն + ձայնավոր + բաղաձայն (ԲԲՁԲ)-ով, երբ դրան նույնպես բաղաձայն է հաջորդում, ինչպես՝ կյան-քա-յին, նյաւ-դա-յին, հյուժ-վել, լյաւ-դա-բորբ, այլև՝ մյուս-նե-րը:

Վանկային այս կաղապարը, ինչպես ասվել է, առաջ է եկել ետ (>յա) և իւ (>յու) երկարբառների երկհնչյունացման հետևանքով:

§ 108. Ի տարբերութուն ձայնավորասկիզբ բառերի, որոնց դեպ-

քում ձայնավորները ընդհանուր առմամբ գործածվում են բոլոր հնչյունների հետ, բաղաձայնասկիզբ բառերում բաղաձայնները հայերենի հատկությամբ հանդես են գալիս բայառապես ձայնավորից առաջ, ինչպես՝ բա-ժակ, թող-նեւ, մեզ-վա-բույժ, խու-սա-փեւ, մրտ-նեւ, թիկ-նա-պահ և այլն:

Այսպիսով՝ բազմավանկ բառերի սկզբնավանկերում բաղաձայնիւր անպայման որևէ ձայնավոր է հաջորդում և ըստ այդմ էլ եթե ձայնավորասկիզբ վանկերում այն իբրև առաջին, ապա բաղաձայնասկիզբ վանկերում իբրև երկրորդ հնչյուն է գործածվում:

Այդ կանոնով էլ հայերենում կազմվում են բազմահազար բառեր, որոնց սկզբնավանկերում, սակայն, բոլոր ձայնավորները ճիշտ միատեսակ պատկեր չեն ներկայացնում:

§ 109. Իբրև բաղաձայնասկիզբ բազմավանկ բառերի երկրորդ հնչյուն գործածվում են հայերենի բոլոր ձայնավորները: Ընդ որում՝ բացի ր ձայնորդից, որին հաջորդում են միայն ա-ն և ո(օ)-ն՝ մի քանի բառերում (Րաֆֆի, բոպե, բաբբի), մնացած բաղաձայնների հետ նրանք գործածվում են բազմաքանակ բառերում, անշուշտ, տարբեր քանակով ու հաճախականությամբ: Մտտավոր հաշվարկումներով պարզվում է, որ, օրինակ, շուրջ 90 հազար բառերից՝ սկզբնավանկերի գրեթե կես մասում իբրև բաղաձայնահաջորդ հնչյուն հանդես է գալիս ա-ն (մոտ 44 %), այնուհետև հաջորդաբար՝ ր-ն (մոտ 20 %), ո (օ)-ն (մոտ 12 %), ե (է)-ն (մոտ 11,5 %), ի-ն (մոտ 7 %) և վերջում՝ ու-ն (մոտ 5 %):

§ 110. Բազմավանկ բառերի բաղաձայնասկիզբ վանկերում գործածվող լիահունչ ա, օ (ո), է (ե), ի, ու ձայնավորներից զգալապես տարբերվում է ր ձայնավորը, որ բաղաձայնից հետո թույլ է արտասանվում և նրա հետ գաղտնավանկ կազմում, օրինակ՝ բրո-նեւ, գր-նաւ, գր-րավոր, դր-րու-թյուն, գրն-գոց, թրխ-վածք, ժրխ-տեւ, լրկ-տի, խըշ-խըշաւ, ծրպ-տուն, կըջ-տամ-բանք, հրս-կա-յա-կան, ձրգ-տում, նըխ-լեւ, նըշ-տար, շրբ-ջան, շրխ-կաւ, պրդ-պեղ, ջրբ-մուղ, ոըն-գա-յին, սըմ-բակ, վըշ-տա-հար, տըգ-րուկ, ցըն-ցուղ, փրխ-րուն, քըն-քուշ և այլն:

Բոլոր տեսակի գաղտնավանկերում, սակայն, ր-ն ճիշտ նույն կերպ չի հնչվում. նկատելի է, որ այն շատ ավելի թույլ է արտաբերվում ձայնորդներից՝ մանավանդ ր-ից և և-ից առաջ:

§ 111. Բազմավանկ բառերի ինչպես ձայնավորասկիզբ, այնպես էլ բաղաձայնասկիզբ վանկերը հատկանշվում են նաև նրանով, որ ընդհանրապես կայուն են և փոփոխության չեն ենթարկվում, հմմա., օրինակ, տիրակալ—տիրակալություն, գրական—գրականագետ—գրականագիտություն, լուսավոր (<լույս+ա+վոր)—լուսավորիչ—լուսավորչական—լուսավորչականություն և այլն:

Այս կանոնից շեղվում են միայն այն բառերը, որոնք երկկերպ են վանկատվում, հմմտ., օրինակ գրծ-տը-վեւ—գրծտ-վեւ, եր-թու-ղի—

Խրք-ու-ղի, քանձ-րա-նալ— քառ-ձր-րա-նալ, խրնդ-րեւլ— խրն-դը-րեւլ, կազմ-վածք— կազմ-վր-վածք, կրեկ-նեւլ— կր-կը-նեւլ, նավ-թաշ-խարհ— նավթ-աշ-խարհ, պրեկ-վեւլ— պր-կը-վեւլ, փախց-նեւլ— փախ-ցը-նեւլ, պրն-դե-րես— պրնդ-ե-րես, սոսն-ձեւլ— սո-սըն-ձեւլ, փրոշ-տալ— փր-ոըշ-տալ, ֆաղց-րա-համ— ֆաղ-ցը-րա-համ և այլն:

Ինչպես դժվար չէ նկատել, նման դեպքերում, երբ բառերը միջգաղտնավանկային ը-ով են արտաբերվում, վանկերի թիվը մեկով ավելանում է: Սովորաբար այդպես են գործածվում քառահնչյուն (սակավ՝ հնգահնչյուն) սկզբնավանկերը:

Ավարտելով բազմավանկ բառերի սկզբնավանկային կառուցվածքի նկարագրությունը, տեսնում ենք, որ նրանք այդ տեսակետից ևս մի որոշակի համակարգ են ներկայացնում և երևան են հանում վանկային այնպիսի դրուժյուններ, որոնք ինչ-որ շափով տարբերվում են վերջնավանկերից:

#### բ. ԲԱԶՄԱՎԱՆԿ ԲԱՌԵՐԻ ՎԵՐՋՆԱՎԱՆԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

§ 112. Վերջնավանկերը, որոնցով ավարտվում են բազմավանկ բառերի ուղիղ ձևերը (բառույթները), նույնպես վերջանում են ձայնավորով կամ բաղաձայնով և ըստ այդմ էլ լինում են՝ ձայնավորավերջ (ձայնավորահանգ) և բաղաձայնավերջ (բաղաձայնահանգ):

§ 113. Ձայնավորավերջ վանկերը, որ բառերի ընդհանուր կառուցվածքին համապատասխան քանակով մեծապես զիջում են բաղաձայնավերջ վանկերին, արտահայտվում են՝

ա) Մեկ ձայնավորով՝ Ձ-ով, երբ նրան ձայնավոր է նախորդում, ինչպես՝ կրի-ա, հրե-ա, ալելուի-ա, այլև՝ բուրժու-ա, զվարդի-ա, իդե-ա, Իսպանի-ա, միլիցի-ա, քիմի-ա, ալո-ե, բա-ո, կակա-ո, ռադի-ո և այլն:

բ) Բաղաձայն + ձայնավոր՝ Բ+Ձ-ով, երբ դրան մեծ մասամբ՝ մեկ ձայնավոր, քիչ մեկ կամ երկու բաղաձայն է նախորդում, ինչպես՝ պարա-գա, պողո-տա, վը-կա, փիլիսո-փա, ըո-պե, արամ-բի, մեծար-գո, ար-բա, գաղտ-նի և այլն:

Ձայնավորահանգ վանկերը հիմնականում կազմվում են այս կաղապարով: Դրանից շեղվում են ա-ով վերջացող միայն այն վանկերը, որոնք նրանից առաջ յ- են ունենում, օրինակ՝ բըր-դյա, ոս-կյա, մագաղա-թյա, արծա-թյա, առհավատ-չյա և այլն: Բայց պետք է ասել, որ նման բառերում վերջնավանկը նաև յ+ա—յա-ով կամ ավելի շատ հենց այդպես է արտահայտվում, ինչպես՝ համա-բյա և համար-յա, տասնամյա և տասնամ-յա, առօ-բյա և առօր-յա, սեա-չյա և սեաչ-յա և այլն:

Սառնարթյուն.— Այս հեղումը, ինչպես Մ. Արեղյանն է նշել, «տասնձնապես զգալի է ի, ո. բաղաձայնների նկատմամբ» (Հայոց լեզվի տեսություն, էջ 95):

§ 114. Բաղաձայնավերջ (բաղաձայնահանգ) վանկերը գերազանցելով ձայնավորավերջ (ձայնավորահանգ) վանկերին՝ արտահայտվում են՝

ա) Ձայնավոր + բաղաձայն՝ Ձ + Բ - ով, երբ դրան ձայնավոր է նախորդում, օրինակ՝ հեթի-ար, թի-ակ, մի-ակ, մեծա-ուծ, այլև՝ պո-ետ, մասերի-ալ, տերիտորի-ալ, նոկա-ուտ, սկա-ուտ, իշի-աս, միլի-ոն, տրիլի-ոն և այլն, որոնք գերադասապես փոխառյալ բառեր են:

Նույն կերպ են արտահայտվում նաև ձայնավորասկիզբ բառ-բաղադրիչով վերջացող բառերը, ինչպես՝ ան-օղ, ամեն-ուր, թեր-ան, ելե-կը, ներ-ուծ և այլն:

բ) Ձայնավոր + բաղաձայն + բաղաձայն և շատ քիչ նաև՝ + բաղաձայն՝ Ձ + Բ + Բ, Ձ + Բ + Բ + Բ - ով, երբ դրանց հիմնականում բաղաձայն է նախորդում, ինչպես՝ մի-այն, գոմ-աղբ, ծով-աղբ, գով-աղբ, առ-եջք, փրս-ախտ, գյուց-ագն, միջ-անցն, միլի-արդ, այլև՝ գիշ-անզղ, գանձ-արկղ, լուս-աստղ և այլն:

Բայց ինչպես օրինակներից էլ կարելի է նկատել, սրանք հիմնականում բաղադրյալ բառեր են և ըստ հնչման վանկատելու դեպքում վերջնավանկը կամ բաղաձայնով է արտահայտվում, հմմտ., գո-մաղբ, ծո-վաղբ, մի-ջանցն, գան-ձարկ(ը) և այլն:

գ) Բաղաձայն + ձայնավոր + բաղաձայն՝ Բ + Ձ + Բ (= ԲՁԲ) - ով, երբ գրան մեծ մասամբ՝ ձայնավոր, համեմատաբար քիչ՝ մեկ կամ երբեմն երկու բաղաձայն է նախորդում, հմմտ., օրինակ, աքա-ղաղ, բարկա-նալ, գր-լուխ, գր-նել, հարա-զատ, խոզ-վան, շերտ-փուկ, երե-բուն, գու-սան, հետե-վորդ, հու-սալ, գի-տուն, սի-րել, ար-քուն, բովան-դակ, կար-չել, ան-կախ, հոդ-ված, գրատախ-տակ, խրմ-բակ, եր-գիչ, պատ-կեր, կանգ-նել, դարձ-ված, վերջ-նել և այլն:

Այս կաղապարը ամենագերիշխողն է բաղաձայնահանգ բաղմավանկ բառերի մեջ. ընդ որում՝ այդպիսի վերջավանկ են ունենում հատկապես՝

1) այն բառերը, որոնք կազմված են ձայնավորով սկսվող, բաղաձայնով վերջացող վերջածանցով, ինչպես՝ -անկ (գլուխակ, լը-ճակ), -ակտն (պիտական, մայրական), -ան (խցան, գովասան), -ային (լեռնային, զարնանային), -անակ (ճոճանակ, մրց-անակ), -անց (Նյուրանց, կուսանոց), -ատ (գունատ, կիսատ), -աբան (նստարան, բառարան), -եղ (համեղ, գունեղ), -իչ (գործիչ, մատնիչ), -իք (գործիք, բնֆրիք), -առ (փոշոտ, մազոտ), -աց (հասաոց, ակնոց), -արեն (ազնվորեն, ջերմորեն) և այլն:

2) Այն բառերը, որոնք կազմված են բաղաձայնով սկսվող և վերջացող վերջածանցով, ինչպես՝ -բառ (ընկերաբար, աստիճանաբար), -կատ (վախկոտ, քնկոտ), -պես (խկապես, պարզապես), -առան (մեծաս-տան, բուրաս-տան), -ված (հատված, քերթված), -վառ (հեռավոր, ասավոր) և այլն:

3) Այն բառերը, որոնք անորոշ դերբայի ձևեր են և կազմված են -ել կամ -ալ բաղակերպ մասնիկով, ինչպես՝ գրել (= գրք + էլ), աղաչել, սիրվել, ելնել, ճիանալ, գնալ, սրտել, վախենալ և այլն:



4) Այն բառերը, որոնք բարդութիւն են, և որոնց վերջին բաղադրիչը արտահայտված է եռահնչյուն (երկփակ) միավանկ բառով, ինչպես՝ հուսախաբ, աներծագ, ողջակեզ, հեռախոսագիծ, շնչափող, փողկապ, սրամիտ, հացքուլս, ձեռագիր, գմբեթածև և այլն:

դ) Բաղաձայն + ձայնավոր + բաղաձայն + բաղաձայն՝ ԲՁԲԲ-ով, երբ դրան նույնպես մեկ ձայնավոր կամ մեկ, երբեմն նաև երկու բաղաձայն է նախորդում, ինչպես՝ աշա-կերտ, ա-նուրդ, բազմե-րանգ, մեծատաղանդ, դը-բույթ, լուսածա-նանչ, աղիո-ղորմ, սե-բունդ, ժողո-վուրդ, ուտեստ, դիտ-մամբ, ար-վեստ, ծաղ-կունք, ար-մունկ, տըր-տունջ, դարձ-վածք, ձուլ-վածք, հո-սանք, քըր-տինք, պի-տույք և այլն:

Այս խմբին են պատկանում նաև այն բարդ բառերը, որոնց վերջին բաղադրիչը արտահայտվում է քառահնչյուն (երկփակ) միավանկ բառով, ինչպես՝ բարեկարգ, գունագարդ, շուտափույթ, զորագունդ, ջլապինդ, մտասույզ, փաստաթուղթ, գործագուրկ, ամենաջերմ, փափկասիրտ, ածխահանք և այլն:

ե) Բաղաձայն + ձայնավոր + բաղաձայն + բաղաձայն + բաղաձայն՝ ԲՁԲԲԲ-ով, երբ դրան մեկ ձայնավոր է նախորդում, ինչպես՝ բը-ռունցք, դղանցք, ջրանցք, միջանցք, սողանցք, լուսանցք, ձեռնապարտք, բարձ-րակուրծք, համայնք, այլն՝ լեռնանցք, անսամբլ, ինֆարկտ, սֆինքս:

Նման կազմութիւնները, սակայն, շատ քիչ են և զգալի տեղ չեն բռնում բաղաձայնահանգ վանկերի ընդհանուր համակարգում:

զ) Բաղաձայն + բաղաձայն + ձայնավոր + բաղաձայն՝ ԲԲՁԲ-ով, երբ դրան ընդհանուր կանոնով մեկ ձայնավոր կամ մեկ բաղաձայն է նախորդում, ինչպես՝ աբագու-թյուն, մեծություն, բննություն..., դոփյուն, արյուն, խոխոջյուն, անկյուն, ոստյուն, կոբյուն, եղջյուր, արլյուր..., արդյոք, արդյունք, մատյան, հավիտյան, Գրիգորյան..., այլն՝ բազմաբյուր, երկնյուղ, ներբանյուս, շարասյուն, սպիտակահիւթ, սննդանյութ և այլն:

Այսօրինակ վանկերում յ-ն կապվում է գրաբարյան իւ, եա երկբարբառների հետ և առաջ է եկել նրանց կրած պատմական հնչյունափոխության հետևանքով (տե՛ս § 216, Գ, ե): Դա շատ ավելի ցայտունորեն է դրսևորվել հատկապես արեւելահայ գրական լեզվում, որտեղ և այն մի շարք բառերում ինքնին իբրև առանձին վանկի սկզբնահնչյուն է գործածվում, ինչպես, օրինակ. ճայթ-յուն, ար-յուն, անկ-յուն, հնդդ-յուն, դղդղ-յուն, պայթ-յուն, բախ-յուն, գոչ-յուն, ալ-յուն..., ատ-յան, սեն-յակ, մատ-յան, մեհ-յան, արեւլ-յան, այժմ-յան, կովկաս-յան, պատ-յան, հունիս-յան, հիշ-յալ և այլն:

§ 115. Բաղաձայնացման այս գործընթացը, սակայն, լիովին իր ավարտին չի հասել և իրապես՝

ա) բառեր կան, որոնցում յ-ն արդեն «զատվել է» նախորդ բաղաձայնից և իբրև ինքնուրույն վանկի սկզբնահնչյուն է գործածվում, օրինակ՝ ալ-յուր, բախ-յուն, աղ-յուս, կատար-յալ, սեն-յակ և այլն.

բ) բառեր կան, որոնցում յ-ն և՛ նախորդ բաղաձայնից զատ, և՛ նրան միացած է վանկ կազմում, հմմտ., օրինակ՝ անկ-յուն//ան-կյուն, դոփ-յուն//դո-փյուն, աղբ-յուր//աղ-բյուր, շաշ-յուն//շա-շյուն, տրոփ-յուն//տրո-փյուն, պաւո-յան//պա-տյան, մատ-յան//մա-տյան, Համբարձում-յան//Համբարձու-մյան և այլն:

գ) բառեր էլ կան, որոնցում յ-ն սովորաբար կամ անխտիր նախորդ բաղաձայնի հետ է վանկ կազմում, ինչպես՝ ար-դյոք, ար-դյունք, ուրախու-թյուն, միու-թյուն, իրականու-թյուն, կարողու-թյուն և այլն:

Այս տարատեսակությունները խարսխվելով, անշուշտ, բարբառային կամ ժողովրդախոսակցական արտասանության վրա՝ միաժամանակ բառերի հնչյունական կազմի բնույթով են պայմանավորվում: Ընդ որում նկատելի է, որ ձայնորդներից (ր, ու, լ, մ, ն) և որոշ շփականներից (ջ, վ, դ և այլն) հետո յ-ն սովորաբար նրանցից զատվում և իրեն հաջորդող հնչյունների հետ, իսկ պայթականներից և պայթաշփականներից հետո սովորաբար նրանց հետ է վանկ կազմում: Գրեթե առանց բացառության յ-ն այդպես է գործածվում -ություն ածանցով կազմված բառերում, որոնք, ինչպես հայտնի է, շատ-շատ են հայերենում:

Բացի այդ, ճիշտ է նկատված, որ երբ յ-ին երկու բաղաձայն է նախորդում, դրանցից մեկը մեծ մասամբ անցնում է նրան, ինչպես՝ դարձյալ, հիս-նյակ, թըն-դյուն, եղ-ջյուր և այլն<sup>54</sup>:

§ 116. Այսպիսով՝ բաղաձայնահանգ վերջնավանկերն էլ բազմատեսակ արտահայտություններ ունեն և հատկանշվում են իրենց համապատասխան կառուցվածքով: Նրանցից երկարները գերազանցապես իրենց կազմում ձայնորդ և կամ նաև դրա հետ ու առանց դրան ք (ածանց) են ունենում, հմմտ., օրինակ, աշ-խույժ, ար-մունկ, նորա-վարտ, երիտասարդ, սե-րունդ, տրբ-տունջ, փոր-ձանք, զար-մանք, բար-ձունք, սե-րուցք և այլն:

Մրան պետք է ավելացնել և այն, որ, ի տարբերություն սկզբնավանկերի, դրանք բառի աճման դեպքում հայերենի հնչյունափոխության ու վանկատման օրենքներին համապատասխան փոփոխություններ են կրում, օրինակ՝ հեռագիր—հեռագրել—հեռագրատուն, երիտասարդ—երիտասարդական—երիտասարդություն, մաւրմին—մաւրմեի—մաւրմեական, գլխուն—գլխեական և այլն:

#### գ. ԲԱԶՄԱՎԱՆԿ ԲԱՌԵՐԻ ՄԻՋՆԱՎԱՆԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

§ 117. Միջնավանկերը կազմությամբ շտաբերվելով բառերի վանկատման ընդհանուր կանոններից՝ միաժամանակ հատկանշվում են իրենց բնորոշ որոշ կողմերով:

Այսպես՝

<sup>54</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 94—95.

ա) Երկուսից ավել վանկ ունեցող բառերում նրանք հանդես են գալիս և իրացվում դրանց հնչյունական կառուցվածքին համապատասխան, հմմտ. ֆաղաֆ→բա-ղաբ—բա-ղա-բա-ցի—բա-ղա-բա-ցի-ա-կան—բա-ղա-բա-ցի-ա-կա-նու-թյուն. ժողով→ժո-ղով—ժո-ղո-վուրդ—ժո-ղո-վըրդա-կան—ժո-ղո-վըրդա-կա-նու-թյուն. արհեստ→ար-հեստ—ար-հեստա-վոր—ար-հեստա-վո-րա-կան—ար-հեստա-վո-րա-կա-նու-թյուն. գործվածք→գործ-վածք—գործ-ված-քե-ղեն և այլն:

բ) Եթե եռավանկ բառերում և՛ սկզբնավանկի, և՛ վերջնավանկի, ապա շատ վանկանի բառերում ոչ միայն նրանց, այլև միմյանց հետ են կապակցվում և հաջորդական շարք կազմում (տե՛ս վերորեքյալ օրինակները):

գ) Մեծ մասամբ երկու՝ (Բ+Ձ) և երեք (Բ+Ձ+Բ), սակավ չորս (Բ+Ձ+Բ+Բ) հնչյունով են արտահայտվում, հմմտ., օրինակ. հա-սա-րա-կա-կան, ո-րո-շա-կի, ե-րե-վե-լի, ծուղ-րու-ղու, գան-գատ-վել, երկ-հար-կա-նի, զը-վար-ճա-լի, հան-դէր-ձանֆ, ար-հեստա-գործա-կան, ճա-խանձ-կոտ, լեռ-ճանց-ֆա-յիւն, համ-բարձ-վել, դի-տարկ-վել, վե-րա-դարձ-նել, ա-ռանձ-ճա-հատ-կու-թյուն, կազ-մա-կերպ-չա-կան և այլն:

դ) Գաղտնավանկ են կազմում, երբ բառերի միջում ևս իրար հաջորդող շատ բաղաձայններ են լինում, ինչպես՝ գըր-գըր-վել, քըրթ-մըն-ջոց, հայտ-ըը-վել, մը-կըր-տել, դըրնգ-դըրն-գալ, տըր-տըն-ջալ, ըն-կըր-կել, հե-տա-ֆըր-ֆըր-վել և այլն:

ե) Սովորաբար բաղաձայնով են սկսվում: Այդ կանոնից շեղվում են միայն այն բառերը, որոնցում ձայնավորին ձայնավոր է հաջորդում, ինչպես՝ դաս-տի-ա-րակ, մի-ալ-նակ, նա-իր-յան, ա-լե-լու-ի-ա, հը-րե-ա-կան, գոր-ծու-նե-ու-թյուն, կա-ու-չուկ, հը-նէ-ա-բան, է-ու-թյուն և այլն:

§ 118. Այսբանով, սակայն, ամեն ինչ չի ավարտվում: Նախ պետք է ասել, որ բոլոր բազմավանկ բառերը չեն, որ անխտիր նույն կերպ են վանկատվում և միատեսակ (ասենք՝ հատկապես սկզբնավանկեր ու միջնավանկեր) կազմում:

Հայերենում մեծ թվով բառեր կան, որոնք երկկերպ են վանկատվում և մի դեպքում՝ մեկով պակաս, մյուս դեպքում՝ մեկով ավելի վանկ են ունենում:

Այդպես են վանկատվում՝

ա) Պատճառական բայերը գրեթե առանց բացառության, ինչպես, օրինակ՝ բարձ-բաց-նել // բարձ-բա-ցը-նել, խոսեց-նել // խո-սե-ցը-նել, կորց-նել // կոր-ցը-նել, ու-բա-խաց-նել // ու-բա-խա-ցը-նել և այլն: Սը-րանցից, սակայն, գնալով հաղթող են դառնում առաջին՝ կարճ ձևերը:

բ) Վ կրավորական ածանցից առաջ երկու բաղաձայն ունեցող բայերը, ինչպես, օրինակ, տանը-վել // տան-ըը-վել, բազ-մա-պատկ-վել //

բազմա-պատ-կը-վել, մըտց-վել/մըտ-ցը-վել, գրեմ-վել/գրե-մը-վել, մարս-վել/մար-սը-վել, փրկ-վել/փր-կը-վել, օգտ-վել/օգ-տը-վել և այլն:

գ) Մի խումբ բառեր, որոնց միջում երկու բաղաձայնին ձայնորդ (մեծ մասամբ՝ ն) կամ շփական (մեծ մասամբ՝ վ) հնչյուն է հաջորդում, ինչպես՝ մարմ-նա-կան//մար-մը-նա-կան, կանգ-նել//կան-գը-նել, կողմ-նա-կի//կող-մը-նա-կի, արծ-վա-յին//ար-ծը-վա-յին, կրկ-նել//կր-կը-նել, վերց-նել//վեր-ցը-նել, շարժ-վածք//շար-ժը-վածք և այլն: Դրանք ևս ավելի շատ առաջին ձևով են վանկատվում:

§ 119. Ի տարբերություն երկկերպ վանկատվող բառերի, որոնցում վանկատումը տեղի է ունենում զուտ հնչյունական հիմունքով, կան նաև մի շարք բազմավանկ բառեր, որոնք վանկատվում են մի դեպքում ըստ հնչարտաբերության, իսկ այլ դեպքում՝ ըստ իրենց բաղադրության և բաղադրիչների իմաստի: Այդպես են վանկատվում, բնականաբար, ձայնավորասկիզբ բաղադրիչով բաղադրյալ բառերը, ինչպես, օրինակ, անանց//ան-անց, անոնց//ան-ոնց, անորյա//ան-օր-յա, երթուղի//երթ-ուղի, նավ-թաղ-խարհ//նավթ-աղ-խարհ, սառ-նար-յուե//սառն-ար-յուե, նե-րուծ//նե-րուծ, գոր-ծըն-կեր//գործ-ըն-կեր, կեն-սու-րախ//կենսու-րախ, նա-մերգ//նամ-երգ, փոք-րագի//փոք-րագի և այլն:

Նման դեպքերում վանկերի սահմանը փոխվում, իսկ քանակը նույնն է մնում:

§ 120. Այս և այլ զուգահեռ ձևերը ցույց են տալիս, որ վանկատումը բանավոր չեզվի իրողություն լինելով՝ սերտորեն կապված է նաև գրավոր խոսքի հետ և մի կողմից եթե ավելի ցայտունորեն, ապա մյուս կողմից՝ որոշ դեպքերում տարբեր կերպ է արտահայտվում այդտեղ:

Բանավոր և գրավոր խոսքում տարբեր կերպ են վանկատվում, օրինակ.

ա) Այն բառերը, որոնցում ճ հնչյունը չի արտասանվում, հմմտ. աղ-խա-րա-մաս//աղ-խար-հա-մաս, շը-նո-րիվ//շը-նոր-հիվ, ար-հա-մա-րել//ար-հա-մար-նել, նա-նա-պար-ուրդ//նա-նա-պար-ուրդ, այլև՝ ըն-թա-տել//ընդ-հա-տել, ըն-թա-նուր//ընդ-հա-նուր և այլն:

բ) Այն բառերը, որոնցում մի բաղաձայնի նույն բաղաձայնն է հաջորդում, ինչպես՝ դա-սա-րա-ներ//դա-սա-րան-ներ, բա-ղա-ձայ-ներ//բա-ղա-ձայն-ներ, պե-տու-թյու-ներ//պե-տու-թյուն-ներ, եր-կեն-ցաղ//երկ-կեն-ցաղ, ըն-դեմ//ընդ-դեմ, այլև՝ կո-պե-րա-տիվ//կո-ո-պե-րա-տիվ և այլն:

Մանրամասն. — Կրկնակ բաղաձայնները վանկատման ժամանակ երկու դեպքում էլ պահպանվում են, ինչպես՝ նըն-շել, ին-նա-կան, տար-րա-կան, առն-նա, մըր-րիկ (հմմտ. թըր-րիկ < մրիկ), բեր-րի և այլն:

գ) Այն բառերում, որոնցում երկու ձայնավորների միջև չ է լավում, օրինակ՝ է-(յ)ակ, նա-(յ)իր-յան, պո-(յ)ետ, է-(յ)ի և այլն:

§ 121. Ինչպես միավանկ, այնպես էլ բազմավանկ բառերի վանկային կառուցվածքի, արտահայտությունների և առանձնահատկությունների մասին ամբողջական պատկերացում կազմելու համար պետք է գիտենալ, որ վանկերը ոչ թե քարացած, մեկընդմիջ տրված, այլ այնպիսի հնչյունական իրողություններ են, որոնք շարունակ աճում են ու տեղաշարժվում ոչ միայն բառակազմության, այլև բառերի քերականական ձևափոխությունների ժամանակ:

Այսպիսով՝ բառերի ուղիղ ձևերին նոր վանկեր են ավելանում, որոնք և, քնականաբար, ազդում են վերջնավանկի վրա և մեծ մասամբ փոփոխում այն, հմմտ. գիր→գի-րը—զը-րի—զը-րից—զը-րեր—զը-րե-րը—զը-րե-րից. ուսանող→ու-սա-նող—ու-սա-նո-ղը—ու-սա-նո-ղի—ու-սա-նո-ղով... ու-սա-նող-ներ—ու-սա-նող-նե-րը—ու-սա-նող-նե-րից. որոշում→ո-րո-շու-մը—ո-րոշ-ման/ո-րո-շու-մի—ո-րո-շում-ներ—ո-րո-շում-նե-րը. գարուն→գար-նան—գար-նա-նը. գրել→զը-րել—զը-րե-լիս զը-րե-լու, տեսնել→տես-նե-լու, խաղալ→խա-ղա-լիս—խա-ղա-լու—խա-ղա-ցի—խա-ղա-ցիր—խա-ղաց և այլն: Այդպես և միավանկ բառերը ոչ միայն բառակազմության, այլև ձևաբանական փոփոխության ժամանակ են բազմավանկ դառնում, ինչպես՝ ձի→ձի-ու—ձի-եր—ձիե-րը, ասել→տու-նը—տը-նից—տը-ներ—տը-նե-րը—տը-նե-րից—տը-նե-րում և այլն:

§ 122. Բառերի քերականական ձևերը իրենց վանկերի քանակով գերազանցում են ուղիղ ձևերին և փոխում հատկապես նրանց բաղաձայնահանգ վերջնավանկի կառուցվածքը: Բառերի թեք ձևերում նրա վերջին բաղաձայնը, իբրև կանոն, անցնում է հաջորդ քերականական ձևույթին և նոր վանկ կազմում, ինչպես՝ քաղաք→քա-ղաք—քա-ղա-քը—քա-ղա-քի—քա-ղա-քում. ժողովուրդ→ժո-ղո-վուրդ—ժո-ղո-վուր-դը—ժո-ղո-վըր-դի—ժո-ղո-վըր-դով. պարտեզ→պար-տեզ—պար-տե-զի—պար-տե-զում. վազել→վա-զել—վա-զե-լիս—վա-զե-լու—վա-զե-լով. զարմանալ→զար-մա-նալ—զար-մա-նա-լու—զար-մա-նա-լով և այլն:

Բացի այդ, քերականական ձևույթները և դրանցից հատկապես քորոշյալ հոգը, -ի, -ու հոլովիչները հաճախական գործածություններով ոչ միայն մեծապես նպաստում են ձայնավորահանգ վերջնավանկերի ընդհանուր աճին, այլև զգալի փոփոխություններ են առաջ բերում բառերի վանկային կազմում՝ իրենց հերթին խոսքը դարձնելով ավելի ներգաշնակ ու նվազային:

§ 123. Դա շատ պարզորոշ երևում է մանավանդ գեղարվեստական ստեղծագործություններում, որոնցից էլ, օրինակ, Ծ. Չարենցի «Ծս իմ անուշ Հայաստանի» տաղը հետևյալ վանկային պատկերն է ներկայացնում.

Ծ(յէ)-սի-մա-նուշ Հա-յաս-տա-նի ա-րե-վա-նամ բա-րեմ սի-բում,  
Մեք ձիւն առ-գի ազ(վօզ)-բա-եր-վազ, լա-ցա-կու-մած լա-րեմ սի-բում,

Ար-ճա-ճը-ման ծա-ղիկ-նե-րի ու վար-ղե-րի քույ-րը վառ-ման  
Ու ճա-(յ)-իր-յան աղ-շիկ-նե-րի հե-զա-ճը-կուն վար-ճեմ սի-րում:

Սի-րու-մեմ մեք եր (յէր)-կիճ-ճը մուգ, շը-րե-րը շիճ, լի-ճը լու-սե,  
Ա-րեվ-ն ամ-աան ու ճը-մեռ-վա վի-շա-պա-ճայն բու-ճը վը-սեմ,  
Մը-րում կը-րած խըր-ճիր-նե-րի ան-ճյու-րըն-կալ պա-տե-րը սև  
Ու ճը-ճամ-յա ֆա-ղափ-նե-րի հա-զա-րամ-յա ֆար-ճեմ սի-րում:

Ու-րէլ լի-ճեմ շեմ մո-ռա-ճա ես (յէս) ող (վօղ)-քա-ճայն եր (յէր)-գե-րը մեք,  
Չեմ մո-ռա-ճա ա-ղոբփ դար-ճած եր (յէր)-կա-քա-գիր գըր-ճե-րը մեք,  
Իճը-ֆա-նէլ սուր սի-ր-տըս խո-ցեճ ա-ր-յու-ճա-ֆամ վե-ր-ճե-րը մեք—  
է-լի ես (յէս) որք (վօրք) ու ա-ր-ճա-վառ իմ շա-յա-սա-ճան յար-ճեմ սի-րում:

Իմ կա-րո-տած սըր-տի հա-մար ոչ (վօշ) մի ու-րիշ ճե-ֆի-տը շը-կա,  
Նա-րե-կա-ցու, Քու-շա-կի պես լու-սա-պը-սակ ճա-կա-տ շը-կա,  
Աշ-յա-րեճ ան-ցիր, Ա-րա-րա-տի ճը-ման ճե-ր-մակ գա-զաք շը-կա,  
Իճը-պես աճ-հաս փառ-ֆի ճամ-փա՝ ես (յէս) իմ Մա-սիս աար-ճեմ սի-րում:

*Բանաստեղծությունը յուրաքանչյուր տողում 16 (+1), ամբողջու-  
թյամբ վերցրած՝ 256 վանկ է պարունակում, որոնցից 1 հնչյունով (ձայ-  
նավորով) է արտահայտված 13-ը, 2 հնչյունով՝ 135-ը (123-ը՝ ԲՁ-  
ով— սկզբնափակ-վերջաբաց, 12-ը՝ սկզբնաբաց-վերջափակ), 3 հըն-  
չյունով՝ 102-ը՝ (100-ը՝ ԲՁԲ-ով՝ երկփակ, 2-ը՝ ՁԲԲ-ով՝ սկզբնաբաց-  
վերջափակ), 4 հնչյունով՝ 6-ը (բոլորն էլ երկփակ):*

Ըստ ձայնավորների հաճախականության ա-ով է արտահայտված  
101-ը (39,06 %), է (ե)-ով՝ 49-ը (19,01 %), ի-ով՝ 41-ը (15 %), ր-ով՝  
28-ը 10,82 %), ու-ով՝ 27-ը (10,05 %), օ (ո)-ով՝ 10-ը (39 %):

Հովհ. Քումանյանի «Անուշ» պոեմի առաջին 82 տողում էլ գործած-  
ված է ընդամենը 720 վանկ, որոնցից մեկ հնչյունով է արտահայտված  
47-ը, 2 հնչյունով՝ 305-ը, 3 հնչյունով՝ 337-ը, 4 հնչյունով՝ 31-ը: Ըստ  
ձայնավորների հաճախականության՝ ա-ով է արտահայտված 205-ը, է  
(ե)-ով՝ 160-ը, ի-ով՝ 122-ը, ու-ով՝ 90-ը, ր-ով՝ 74-ը և օ (ո)-ով՝ 69-ը:

Ըստ ձայնավորների հաճախականության ա-ով է արտահայտված  
245-ը, է (ե)-ով՝ 170-ը, ր-ով՝ 115-ը, ի-ով՝ 102-ը, ու-ով՝ 95-ը, օ (ո)-  
ով՝ 43-ը: Այս տվյալները, անշուշտ, մի ոչ ավելորդ անգամ ցույց են  
տալիս, որ հայերենում վանկերը ամենից շատ երկու (հիմնականում՝  
բաղաձայն + ձայնավորով) և ապա՝ երեք (հիմնականում՝ բաղաձայն +  
ձայնավոր + բաղաձայնով) հնչյունով են արտահայտվում, այնուհետև  
գալիս են մեկ (ձայնավոր), շորս և հինգ հնչյունով արտահայտված վան-  
կերը, որոնք և մյուսների հետ մեկ ամբողջություն են կազմում<sup>55</sup>: Եվ  
կամ՝ Ակսել Բակունցի «Ալպիական մանուշակ»-ի առաջին հատվածում  
գործածված է 770 վանկ, որոնցից էլ 1 հնչյունով է արտահայտված

<sup>55</sup> Վանկերի կազմության և նրանց հաճախականության լավագույն վերլուծություն է կատարել արժանահիշատակ լեզվաբան Պ. Պողոսյանը (տե՛ս նրա «Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ», I, Երևան, 1990, էջ 116—126):

45-ը, 2 հնչյունով՝ 419-ը, 3 հնչյունով՝ 276-ը, 4 հնչյունով՝ 30-ը: Ըստ ձայնավորների հաճախականության՝ ա-ով է արտահայտված 245-ը, է (ե)-ով՝ 170-ը, ը-ով՝ 115-ը, ի-ով՝ 102-ը, ու-ով՝ 95-ը, օ (ո)-ով՝ 43-ը:

Նույն այդ տվյալները նաև ցույց են տալիս, որ ձայնավորների հաճախականությամբ հայերենում ընդհանուր առմամբ առաջին տեղը՝ ա-ն, 2-րդը՝ է (ե)-ն, 3-րդը՝ ի-ն, 4-րդը՝ ը-ն, 5-րդը՝ ու-ն և վերջին՝ 6-րդ տեղը օ (ո)-ն է բռնում:

§ 124. Բառերի քերականական ձևերը իրենց բնույթի ու հաճախական գործածություններին համապատասխան կարող են, իհարկե, ազդել դրանց վրա և ինչ-ինչ փոփոխություններ կամ տեղաշարժեր առաջ բերել: Նկատելի է, որ ը ձայնավորը հատկապես արձակ ստեղծագործություններում ավելի հաճախ է գործածվում ու ծավալվում, բայց նման դեպքերում անգամ իրավիճակը առանձնապես շատ չի փոխվում: Նույնը պետք է ասել նաև տարբեր ստեղծագործությունների մասին, որոնք իրենց ինչպես վանկերի քանակով, այնպես էլ ձայնավորների հաճախական գործածություններով կարող են տարբերվել իրարից կամ տարբեր լինել:

§ 125. Բառերի քերականական-բառահարաբերական ձևույթները (հոլովման և խոնարհման նշաններ, հոգնակիակերտ մասնիկներ, հոդեր) հաջորդելով նրանց կամ բառահիմքերին՝ ոչ միայն նոր վանկեր են կազմում, ոչ միայն ձայնավորահանգ վանկերն են շատացնում, այլև վանկերի բաղաձայնական կազմն են հարստացնում, հմմտ., օրինակ, որոշում—որոշման—որոշումից—որոշումով—որոշումներ—որոշումներին..., սովորիք—սովորեցեմ, զնացիւմ—զնացիք—զնաց, տեսնել—տեսնում—տեսած—տեսնող..., գիր—գրւ—գիր—գրող—գիր—գր, զինի—զինիւ, առու—առուն, պահածո—պահածոն և այլն:

Ձայնավորների պես բաղաձայնները ևս հայերենի հնչյունական օրենքներով պայմանավորված՝ իրենց համապատասխան գործածություններն ունեն բառերում և բառաձևերում: Բաղաձայններ կան, օրինակ՝ ն, մ, տ, վ, կ և այլն, որոնք լայնորեն են գործածվում թե՛ միջնավանկում և թե՛ վերջնավանկում. բաղաձայններ կան, օրինակ՝ ր, ղ, որոնք հազվադեպ են պատահում սկզբնավանկում, բայց հաճախաբար են գործածվում միջնավանկում և վերջնավանկում. բաղաձայններ կան (լ, ճ), որոնք ավելի շատ՝ վերջնավանկում, քան սկզբնավանկում ու միջնավանկում են գործածվում:

Այսպիսով՝ հաճախական գործածություններով բաղաձայնները նույնպես տարբերվում են իրարից և բազմաճոխ համակարգ ներկայացնում, որի մանրամասն նկարագրությամբ չզբաղվելով՝ հարկ ենք համարում միայն նշել, որ նրանցից առանձնանում է հատկապես յ ձայնորդը, որը և յուրահատուկ դեր է կատարում բառերի հնչյունական կազմում:

§ 126. Երկբարբառ (= հուն. դիֆտոնգ) է կոչվում մեկ ձայնավորից ու մեկ կիսաձայնից կամ երկու ձայնավորից կազմված այն հնչյունակապակցությունը, որը միասնաբար ու միանգամից է արտաբերվում: Ըստ այդմ էլ երկբարբառը երկու հնչյունների սերտ ամբողջություն է ներկայացնում, որտեղ, սակայն, դրանք հավասարապես նույն դերը չեն կատարում: Հնչյուններից մեկը իբրև վանկարար, իսկ մյուսը՝ իբրև ոչ վանկարար է գործածվում: Երկբարբառի մեջ էլ, բնականաբար, առավել կարևոր դեր է կատարում վանկարար հնչյուն-բաղադրիչը՝ իր վրա կրելով վանկի ծանրությունը և տարբերվելով ոչ վանկարար հնչյունից՝ լարվածությամբ ու լիահնչությամբ:

§ 127. Վանկարար (վանկային) հնչյուն-բաղադրիչով են որոշվում նաև երկբարբառի տեսակները: Այն երկբարբառները, որոնցում ձայնավոր հնչյունը նախորդում է ոչ վանկարար հնչյունին, կոչվում են իջնող, ինչպես՝ ա յ, ո յ, ու յ, ե յ: Իսկ այն երկբարբառները, որոնցում վանկարար ձայնավորը հաջորդում է անվանկային հնչյունին, կոչվում են բարձրացող, ինչպես՝ յ ա, յ ո, յ ու, յ ե, յ ի: Այդ՝ իջնող և բարձրացող երկբարբառները, անշուշտ, իրենց արտաբերությունամբ ինչ-որ չափով տարբերվում են իրարից. իջնող երկբարբառների դեպքում արտաբերությունը գնալով թուլանում է (և որոշ բառերում անգամ մարում), իսկ բարձրացող երկբարբառների դեպքում, ընդհակառակն, ուժեղանում է:

§ 128. Երկբարբառները բոլոր լեզուներին չէ, որ հատուկ են: Կան լեզուներ (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, դանիերեն, ֆիններեն և այլն), որոնք հարուստ են երկբարբառներով, կան լեզուներ (չվեդերեն, հունգարերեն, լեհերեն, վրացերեն և այլն), որոնք երկբարբառներ չունեն<sup>26</sup>, լեզուներ էլ կան, որոնք անցյալում երկբարբառներ են ունեցել, բայց հետագայում զրկվել են դրանցից: Այս խմբին է պատկանում հայերենը, որը զրաբարում ունեցել է հետևյալ երկբարբառները՝ այ (այս, ձայն, փայտ, երեխայ, խաղայ), աւ (աւր, խաւսել, ծանաւթ, լաւ, հրամանաւ), եա (ատեան, դղեակ, վայրկեան, սիրեա, շարժեա), եւ (բելր, ալեւր, մեւս, առեւծ, արեւ, թեթեւ), իւ (ձիւն, արիւն, իւր, մեծութիւն, անիւ, թիւ, բանիւ), ոյ (ոյժ, լոյս, համբոյր, նժոյգ, ձուլածոյ, մարդոյ, գրեւոյ), ւո (որդւով, որդւոց, ոգւով, ասորւոց): Անցյալում երկբարբառ են եղել նաև է (<ե+յ)-ն և ու (ո+ւ)-ն, որոնցից առաջինը՝ ավելի վաղ, իսկ երկրորդը ուշ է պարզ ձայնավոր դարձել:

§ 129. Ինչպես օրինակներից էլ է պարզորոշ երևում, զրաբարում երկբարբառները կազմվել են ա, ե, ի, ո և յ, ւ հնչյունների միացությամբ: Ընդ որում նրանցում իբրև վանկարար հանդես են եկել պարզ ձայնավորները՝ կազմելով հիմնականում իջնող երկբարբառներ՝ հետևյալ կերպ.

<sup>26</sup> Հր. Անտոյան, Կիպարոս քերականություն հայոց լեզվի, հտ. 6, էջ 144—147:



ա		(աւ)		ա		(այ)
ե		(եւ)		ե		(եյ + էյ)
ի		(իւ)		ի		(—)
ո		(ու)		ո		(ոյ)

Ի տարբերություն դրանց, երկու ձայնավորի, մեկ կիսաձայնի ու ձայնավորի միացությունը կազմվել են եա (<ե+ա) և տ (<ւ+ո) բարձրացող երկբարբառները, որոնցում էլ, բնականաբար, իբրև վսեմկարար հանդես է եկել վերջին ձայնավոր-հնչյունը:

§ 130. Գրաբարում երկբարբառներից բացի եղել են նաև եռաբարբառներ: Եռաբարբառը (= հուն. տրիֆտոնոզ «եռաձայն»), ինչպես անվանումն է ցույց տալիս, երեք հնչյունից՝ երկու ձայնավորից և մի կիսաձայնից կամ մեկ ձայնավորից և երկու կիսաձայնից կազմված այն հնչյունակապակցությունն է, որը նույնպես միասնաբար է արտաբերվում:

Գրաբարի եռաբարբառներն են՝ եայ (գործունեայ, աշտեայ «տեգ», բրիստոնեայ, փախեայ, փախեայք, փայտեայ, քարեայ), եաւ (եաւթն, արդեաւք, սեաւ, տեղեաւ, ընտանեաւք, յարեաւ, փախեաւ), տյ (որդւոյ, թշնամւոյն, ի ծերունւոյ): Գրաբարյան բոլոր եռաբարբառները բարձրացող-իջնող են, որովհետև նրանցում վանկարարը միջին ձայնավորն է:

Մանրութիւն.— Որոշ քերականներ, թերևս բոլորովին ոչ տեղի, եռաբարբառ են համարում նաև իայ-ն՝ միայն բառում:

§ 131. Գրաբարյան երկբարբառներն ու եռաբարբառները նույնը չեն մնացել: Հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքում նրանք ըզդալի ու տարատեսակ փոփոխություններ են կրել. և հնչյունը, որ իբրև երկբարբառի և եռաբարբառի բաղադրիչ է գործածվել, աստիճանաբար կորցրել է հնչույթային արժեքը՝ դառնալով.

ա) վ բառավերջում և բառամիջում՝ ձայնավորից առաջ, ինչպես՝ հարաւ>հարավ, դաւ>դավ, արեւ>արև, թիւ>թիվ, տնիւ>անիվ, առթիւ>առթիվ, աւագան>ավագան, խաւար>խավար, հիւանդ>հիվանդ, երեւելի>երևելի և այլն.

բ) ու՝ բաղաձայնին նախորդող իւ երկբարբառում, ինչպես՝ արիւն>արյուն, սիւն>սյուն, քաջութիւն>քաջություն, դոփիւն>դոփյուն, աղբիւր>աղբյուր և այլն.

գ) օ՝ բաղաձայնից առաջ իրեն նախորդող ա ձայնավորի հետ միասին, ինչպես՝ ար>օր, ճաւճել>ճօճել, արդեաւք>արդեօք>արդյոք, եաւթն>եօթն>յոթ և այլն:

Մանրութիւն.— Այս կանոնից, ինչպես հայտնի է, շեղվում են աղանի, ճաթ բաները, որոնցում աւ-ը ավ է դարձել (աղավնի, ճավթ):

§ 132. Զարգացման այլ ընթացք է ունեցել յ կիսաձայնը: Դա մի բանի տեսակ փոփոխություն է կրել.

ա) այ երկբարբառի դեպքում բառասկզբում և բառամիջում պահպանվել, իսկ բառավերջում դուրս է ընկել, հմմտ., օրինակ, այս, այծ, այրել, ձայն, ճառագայթ... , ընծայ>ընծա, տղայ>տղա, խաղայ>խաղա, գայ>գա, զարմանայ>զարմանա և այլն: Այդպես և բառավերջում դուրս է ընկել նաև -եայ եռաբարբառի յ-ն, օրինակ՝ գործունեայ>գործունեա>գործունյա, փայտեայ>փայտեա>փայտյա, երկաթեայ>երկաթեա>երկաթյա և այլն:

բ) ՈՅ երկբարբառի դեպքում բառասկզբում և բառամիջում պահպանվել, իսկ բառավերջում կա՛մ դուրս է ընկել, կա՛մ նախորդող ու-ի հետ ու է տվել, հմմտ., օրինակ, ոյժ>ույժ>ուժ՛, լոյս>լույս, ողջոյն>ողջույն, նժոյգ>նժույգ. կոփածոյ>կոփածո, ձուլածոյ>ձուլածո, հրոյ>հրո, սիրոյ>սիրո, ներքոյ>ներքո. մարդոյ>մարդու, կարգալոյ>կարգալու, վազելոյ>վազելու և այլն:

գ) ԿՅ երկբարբառի դեպքում նախորդող և ձայնավորին միանալով՝ տվել է է, որ, իբրև պարզ ձայնավոր, իր արտացոլումն է գտել մեսրոպյան այբուբենում, հմմտ., օրինակ, գրեմ—գրես—գրեյ—գրէ, գրեմք—գրեք—գրէք—գրեն, տի+այր>տեյր>տէր>տեք, պաշտօնեայ>պաշտօնեյի>պաշտօնէի և այլն:

§ 133. Երկբարբառներում և եռաբարբառներում ոչ միայն ւ-ն և յ-ն, այլև մի մասում նաև հիմնական կամ վանկարար հնչյունն է փոփոխության ենթարկվել, ինչպես իւ>յու (ծիւն>ձյուն, անկիւն>անկյուն, իւր>յուր), եւ>իւ>յու (բեր>բիր>բյուր, ալեր>ալիր>ալյուր), ոյ>ույ (քոյր>քույր, դաշոյն>դաշույն, նոյն>նույն), եաւ>եօ>յո (եաւթն>եօթն>յոթ, արդեաւք>արդեօք>արդյոք), այլև՝ եա>յա (սենեակ>սենյակ, Մամիկոնեան>Մամիկոնյան), եայ>եա>յա (պաշտօնեայ>պաշտօնեա>պաշտոնյա) և այլն:

Այսպիսով՝ իւ, եւ, եա երկբարբառներում և եաւ, եայ եռաբարբառներում սկզբնաձայնավորը՝ յ, իսկ ոյ երկբարբառում ու(>ու>ույ) է դարձել, որոնք իրենց հերթին ազդել են նրանց վրա՝ առաջ բերելով նորակի հնչյունակապակցություններ հայոց լեզվում:

§ 134. Այսբանից, սակայն, չի հետևում, թե վանկարար և ոչ վանկարար հնչյունների փոփոխությունները իրարից զատ-զատ կամ անկախ են տեղի ունեցել. ամենևին: Իբրև հնչյունական միասնական կապակցություններ, երկբարբառներն ու եռաբարբառները ամբողջութեամբ են փոփոխություն կրել, և որի ընթացքում էլ յ-ն՝ աստիճանաբար ոչ միայն ամրակալվել է նրանց կազմում, այլև ձայնի նվազմամբ ավելի է հեռացել մերձակից ի ձայնավորից և դարձել լիարժեք կամ լիիրավ բաղաձայն հնչյուն:

Այսպիսով՝ ժամանակակից հայ գրական լեզուն «չունի ո՛չ երկբարբառ և ո՛չ էլ եռաբարբառ»<sup>57</sup>: Եվ, այնուհանդերձ, պետք է ասել, որ յ

<sup>57</sup> Հր. Աճառյան, Կիսկատար քերականություն հայոց լեզվի, հտ. 6, էջ 148—152:

կիսաձայնը տակավին ինչ-որ շարժում պահում է կապը ի՝ ձայնավորի հետ և հայերենի գրեթե բոլոր ձայնավորների հետ ինչպես նախադաս, այնպես էլ հտադաս գործածութամբ այնպիսի կապակցություններ է կազմում, որոնք միանգամայն տեղին ու իրավացիորեն երկհնչյուններ են կոչվում:

§ 135. Ժամանակակից հայոց լեզվի երկհնչյուններն են՝ այ (այ-րել, այծ, հայր, վայր, հայթայթել), ույ (բույս, երևույթ, առույգ, սովորույթ), յա (սենյակ, մատյան, կյանք, լյարդ, հորելյան, համարյա, անցյալ), յու (հարյուր, բյուրեղ, գյուղական, մեծութուն), ե = յէ (ես, երեխա, եթե, երևալ, եղեմ, եղբայր), յո (յոթ, արդյոք, կարծյոք):

Այս երկհնչյուններից երկուսը՝ ձայնավոր-յ, շորսը դրան հակառակ յ + ձայնավոր կաղապարով են կազմվում: Ի դեպ, լեզվաբանական գրականութան մեջ երկհնչյուններ են համարվում նաև ոյ-ը՝ գոյ (գոյական), խոյ (խոյանալ), հոյ (հոյակապ, հոյաշեն), եյ-ը՝ թեյ, թեյնիկ, թեյել, այլև՝ հոկեյ, քորեյ, կորիֆեյ, բեյթ, յի-ն՝ գրեի (= գրէի!), քնալի, շէի (= շէյի), ամայի, ձիով (= ձիով), այլև՝ բյուրոյի և անգամ յը-ն՝ հայր, վայր և այլն բառերում ու բառաձևերում<sup>58</sup>:

Չսերելով, սակայն, բուն երկբարբառներից ու եռբարբառներից՝ դրանք ոչ թե իսկական երկհնչյուններ, այլ այնպիսի հնչյունակապակցություններ են, որոնք կա՛մ բառերի արմատական ձևերով գալիս են անցյալից, կա՛մ ձայնակապի հետ են կապվում և կա՛մ՝ բնորոշ են փոխառյալ ինչ-ինչ բառերի:

§ 136. Երկբարբառներն ու եռբարբառները երկհնչյունների վերածվելուց զատ ժողովրդախոսակցական լեզվում ու բարբառներում այլ փոփոխություն կրելով՝ դարձել են պարզ ձայնավոր, ինչպես՝ այ > էյ/ա (այս > էս/ան, այլ > էլ/ալ, հայր > հէր/հար, վայր > վէր/վար, այրել > էրել, այրիկ > էրիկ, տալք > տէգր/տագր, տղայք > տղէք > տղէքք, եղբայր > աղբեր/աղբար և այլն). ոյ > ույ/ր/ո (ո (լոյս > լուս/լիս/լուս, քոյր > քուր/քիր/քոր, քոյ > քու/քո, կապոյտ > կապուտ/կապիտ). իւ (> յու) > ույ/ր (ալիւր > ալուր/ալիր, արիւն > արուն/արին, ձիւն > ձուն/ձին, դիւր > դուր/դիր/դոր գալ). եա (-յա) > եյ/ա/ի (լեարդ > լերդ, իրեար > իրար, սիրեաց > սիրեց, գրեա > գրել/գրի/գրիր). եօ (-յո) > օ (եօթըն > օխտը) և այլն:

Նման հնչյունական փոփոխությամբ որոշ բառեր ու բառաձևեր գործածվում են նաև ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ գրական լեզվում, օրինակ՝ այլ > էյ/ալ:

§ 137. Հարելով ի ձայնավորին՝ յ կիսաձայնը, երկհնչյուն կազմելուց բացի, նաև ձայնակապի դեր է կատարում ժամանակակից հայոց

<sup>58</sup> Այդ մասին տե՛ս, օրինակ, Հ. Զ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Երևան, 1937, էջ 204—206:

ղեզվում և, ինչպես հայտնի է, գրությամբ արտահայտվում է միայն ա-  
 ից և ո (օ)-ից հետո, ինչպես, օրինակ՝ նայել, գնայի—գնայինք, ար-  
 քայական, սղոյամիտ, բարոյական, պանածոյից: Ձայնակապը, որ ծա-  
 րայում չէ՝ ձայնավորների արտասանական դժվարությունը կամ ընդհա-  
 տումը՝ հորանջը (hiatus) կանխելու նպատակին, բայց միշտ չէ, որ նույն  
 ուժով է արտահայտվում կամ բոլոր ձայնավորների միջև հանդես գա-  
 լիս: Յ ձայնակապը չի գործածվում՝ 1) այն բաղադրյալ բառերում, ո-  
 րոնց սկզբնաբաղադրիչը հաջորդ՝ ձայնավորով սկսվող վերջնաբաղադրի-  
 չի հետ կապվում է ա հոդակապով, ինչպես՝ ամենաազնիվ, ամենա-  
 ուրախ, ամենարճախ, ամենաէական, ամենաօգտակար. ենթարնտանիք,  
 նակաօղային, ինքնաարգարացում և այլն. 2) այն, հիմնականում փո-  
 խառայլ, բառերում, որոնցում ա-ին ո (օ) կամ ու է հաջորդում, օրինակ՝  
 քառ, կակառ, Մառ, առվ, լառուեառ, կառուչուկ, նոկառու, լառուա և  
 այլն:

§ 138. Յ ձայնակապը արտաբերվում, բայց գրությամբ չի արտա-  
 հայտվում այն, հիմնականում փոխառյալ, բառերում, որոնցում ա-ին  
 ի է հաջորդում, ինչպես՝ նաիրի (= նայիրի), արխաիկ (= արխայիկ),  
 նաիվ (= նայիվ), նովոկաին (= նովոկային) և այլն:

Յ ձայնակապը թույլ կամ համարյա չի արտաբերվում այն դեպ-  
 քում, երբ ա-ին ե (է) է հաջորդում, ինչպես՝ աերոպլան (= այրոպլան),  
 աերոդինամիկա (= այրոդինամիկա): Այդպես և դարձյալ հիմնակա-  
 նում փոխառյալ բառերում կա՛մ բոլորովին չի արտաբերվում ս (օ)-ից  
 հետո, կա՛մ արտաբերվում, բայց գրությամբ չի արտահայտվում, երբ  
 նրան ե (է) կամ ի է հաջորդում, հմմտ., օրինակ, պոետ (= պոյետ),  
 պոեմ (= պոյեմ), պոեզիա (= պոյեզիա), ալոն (= ալոյն), ստոիկ (= ըս-  
 տոյիկ), բանտոիդ (= բանտոյիդ) և բռա, կոալիցիա, օպիս և այլն:

Յ ձայնակապը արտաբերվում և գրությամբ չի արտահայտվում նաև  
 ի-ից, ե (է)-ից, ու-ից հետո մի շարք ձայնավորական զուգորդություն-  
 ներում, ինչպես՝ թիակ, թիավարել, լիակատար, միակ, հիանալի..., դիա-  
 լեկտիկա, ցելսիուս, կալցիում, էակ, անէանալ, բոպեական, խաբեություն  
 և այլն:

§ 139. Ձայնավորական զուգորդություններում, անկախ գրությամբ  
 արտահայտվելուց թե շարտահայտվելուց, յ ձայնակապը հաջորդ ձայ-  
 նավորի հետ է կապակցվում և վանկ կազմում, հմմտ., օրինակ, խը-նա-  
 յել—խընա-յո-ղու-թյուն—խը-նա-յո-ղա-բար—խը-նա-յո-րեն—խը-նա-  
 յում (այլև՝ խը-նա-յել). ծա-ռա-յել—ծա-ռա-յա-կան—ծա-ռա-յոզ—  
 ծա-ռա-յու-թյուն. բա-րո-յա-կան—բա-րո-յա-պես—բա-րո-յա-զուրկ...,  
 այլև՝ լիտպես—լի-(յ)ա-պես, լի-(յ)ա-զոր, լի-(յ)ա-վին, լի-(յ)ա-թյուն,  
 գոր-ծու-նե-(յ)ու-թյուն և այլն:

Ինչպես օրինակներից էլ կարելի է նկատել, այն բառերում, որոն-  
 ցում յ ձայնակապը գրությամբ չի արտահայտվում, գրավոր ու բանա-

վոր տարբեր կերպ են վանկատվում (տե՛ս § 119, գ). Ընդ որում հաճախ այնպես է պատահում, որ գրային արտասանության ազդեցությամբ 3 ձայնակապը կա՛մ լիովին դուրս է մղվում, կա՛մ շատ թույլ է հնչվում:

§ 140. Նկատելի է նաև մի այլ երևույթ. 3 կիսաձայնը մի կողմից եթե ձայնի տեսակարար կշռով ու կազմությամբ իրոք շատ մոտ է ի ձայնավորին և Մ. Արեղյանի բնորոշմամբ «թույլ ի ձայնավոր է»<sup>90</sup>, ապա մյուս կողմից էլ, պետք է ասել, նրան մոտ ու աղերսակից են ի և և (է) ձայնավորները, որոնք նման հանգամանքով պայմանավորված՝ ինչ-ինչ դեպքերում փոխարինվում կամ պարզապես 3 են հնչվում, ինչպես, օրինակ. օրիորդ (= օրյորդ), հեֆիաթ (= հեթյաթ), կրիա (= կրյա), ամբիոն (= ամբյոն). խավիար (= խավյար), ամեոբա (= ամյոբա), ֆելիետոն (= ֆելյետոն), ակադեմիա (= ակադեմյա), ռադիո (= ռադյո), միլիարդ (= միլյարդ) և այլն (տե՛ս § 395, 3):

Այդպիսի բառերը նույնպես զրավոր ու բանավոր տարբեր կերպ են վանկատվում, և վերջին դեպքում, իբրև կանոն, մի վանկ պակասում է նրանց կազմում:

Նման արտաբերությունը հիմնականում հատուկ է ժողովրդախոսակցական լեզվին, որին էլ հաճախ հետևում են բանաստեղծները իրենց շափածո ստեղծագործություններում՝ պահանջվելիք վանկերի քանակը խախտած չլինելու համար (ի դեպ, այդպես է գործածել հեֆիաթ > հեֆյաթ բառը Ե. Չարենցը «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության մեջ):

## ՇԵՇՏ

§ 141. Շեշտը լեզվական այնպիսի միավոր է, որը սերտորեն կապվում է լեզվի հնչյունական կազմի և նրա բաղադրիչ մասերի՝ հնչանախադասության, հնչատակտի (հնչաշարույթի), հնչաբառի, հնչավանկի և հնչյունի հետ: Ընդ որում՝ ի տարբերություն դրանց, որ միազծային (ուղղագծային) տարրեր են, շեշտը վերգծային (վերհատույթային) հնչյունական միավոր է և, իբրև այդպիսին, տարբեր լեզուներում տարբեր արտահայտություններ է ունենում:

Շեշտը ըստ ձայնի բնույթի լինում է ուժգնային, երաժշտակա՞ն և ֆանակային, իսկ ըստ կիրառության՝ բառային, շարույթային, ֆեռակա՞նական կամ տրամաբանական:

§ 142. Հայերենին բնահանրապես հատուկ է ուժգնային շեշտը, որը և գործածվում է թե՛ բառերում, թե՛ շարույթներում և թե՛ ամբողջական նախադասություններում: Մ. Արեղյանը մանրազննորեն զբաղվելով հույերենի շեշտի ուսումնասիրությամբ՝ իրավացիորեն նշել է, որ այն «երեք տեսակ է՝ բառի շեշտ, խոսքի (իմա՛ նախադասության— Ա. Մ.) շեշտ

<sup>90</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 88:

և քերականական (իմա՝ շարույթային— Ա. Մ.) շեշտ: Բառի շեշտով՝ բառի մի վանկը մյուս վանկերից ավելի ուժեղ է արտասանվում. իսկ խոսքի շեշտով՝ բառի մի վանկը ամբողջ խոսքի (և ոչ միայն մի բառի) մյուս վանկերից ավելի ուժեղ է արտասանվում: Քերականական շեշտով միանում են երկու և ավելի բառեր՝ մի բարդ գաղափար արտահայտելու համար. այդ բառերից գերադաս բառը համեմատաբար ավելի ուժեղ է շեշտվում, քան մյուսները<sup>80</sup>:

§ 143. Բառային (բառի) շեշտը բառի վանկերից մեկի ավելի ուժեղ արտաբերությունն է: Ըստ այդմ էլ ամեն մի բառ իր շեշտն ունի, որն ընդհանրապես ընկնում է նրա վերջին վանկի ձայնավորի վրա, հմմտ., օրինակ, ֆաղա՛ֆ—ֆաղաֆացի՛ր—ֆաղաֆացիակա՛ն—ֆաղաֆացիականու՛թյուն և ֆաղա՛ֆ—ֆաղաֆի՛—ֆաղաֆի՛ց—ֆաղաֆո՛վ—ֆաղաֆո՛ւմ—ֆաղաֆե՛ն՝ր—ֆաղաֆե՛նե՛րի՛—ֆաղաֆե՛նե՛րի՛ց—ֆաղաֆե՛նե՛րով—ֆաղաֆե՛նե՛րով և քառերն ու բառաձևերը, որոնցում իրոք շեշտվում և ավելի ուժեղ են արտաբերվում վերջին վանկերը:

Շեշտակիր վանկերը այդպիսով ոչ միայն տարբերվում են մյուս վանկերից, այլև հակադրվում են նրանց և կազմում յուրատեսակ հակադրամիասնություն: Նկատելի է նաև, որ շեշտը երբեք անփոփոխ չի մնում և բառի ամման դեպքում տեղաշարժվում և նույնպես ընկնում է նոր բառի կամ բառաձևի վերջին վանկի ձայնավորի վրա:

§ 144. Բայց սա բացարձակ օրենք չէ, և ինչպես արձանագրված է հայ լեզվաբանական գրականության մեջ, դեպքեր կան, երբ շեշտը բառի ոչ թե՛ վերջին, այլ վերջընթե՛ր կամ առաջին վանկի վրա է ընկնում:

Շեշտը այդպես է գործածվում՝

ա) Ը որոշյալ հոգով վերջացող բառերում՝ նրա թույլ ձայնավոր լինելու պատճառով, ինչպես, օրինակ՝ աշակե՛րտը—աշակե՛րտե՛ն՝րը, ողսչո՛ւմը—ողո՛ղումե՛ն՝րը, ֆենու՛թյունը—ֆենու՛թյունե՛ն՝րը, օ՛րը—օրե՛րը, ընկե՛րո՛ջ—ընկե՛րո՛ջը, գա՛րնա՛ն—գա՛րնա՛նը և այլն:

բ) Մեկուկես վանկանի բառերում, ինչպես՝ ա՛ստ(ը)դ, ա՛րկ(ը)դ, օ՞նգ(ը)դ, քա՛նձ(ը)ր, կա՛րժ(ը)ր, քա՛րժ(ը)ր, ցա՛ծ(ը)ր, դո՛ւստ(ը)ր, քա՛նստ(ը)ր, փո՛ֆ(ը)ր, կո՛ն(ը)դ, մե՛ղ(ը)ր, մա՛ն(ը)ր, ծա՛ն(ը)ր, ֆա՛ղց(ը)ր, սա՛ն(ը), վա՛գ(ը)ր, տա՛գ(ը)ր, տա՛ր(ը)ր, խա՛ն(ը)ն, դա՛ն(ը)ն... , այլև՝ լիաձե՛ն(ը)ն, վե՛հա՛նձ(ը)ն, բյու՛րա՛կ(ը)ն, մա՛նրամա՛ս(ը)։ և այլն:

գ) Բաղաձայնից հետո՝ ստացական, դիմորոշ, այլև՝ ցուցական հոդով բառերում, ինչպես, օրինակ՝ ընկե՛ր(ը)ս— իմ ընկե՛րը, ընկե՛րե՛ն՝ր(ը)ս— իմ ընկե՛րե՛ն՝րը, զբ՛ի՛ց(ը)ս— իմ զբո՛ից, զբ՛ե՛րի՛ց(ը)ս— իմ զբո՛բերի՛ց, ուսա՛նձ(ը)դ— թո ուսան՞ողդ, ուսան՞ողդ, ուսան՞ողի՛ցդ— թո ուսանողի՛ց, քե՛զնի՛ց՝ ուսանողի՛ցդ, աշխա՛րհն՞ւմ(ը)ս— այս աշխար-

<sup>80</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն (Երկեր, Ե, էջ 18):

հո՛ւմ («Աշխարհումս այս շիմ քաշի, քանի վուր ջան իս ինձ ամա», Սա-  
յաթ-նովա), օրե՛ր(ը)ս — այս օրե՛րը և այլն:

Մանրություն.— Այսպիսի դեպքերում վերջնավանկը նա Ը-ով է կազմվում, որը և միայն տողադարձի ժամանակ է դրուծվում արտահայտվում:

դ) Մի խումբ երկվանկ բառերում, ինչպես՝ ա՛րդեն, գո՛նե, գո՛ւցն, դա՛րձյալ, թե՛պետ, թե՛և, ի՛սկույն, հա՛նկարծ, նո՛ւյնիսկ, մի՛թե և այլն: Քիչ թվով բազմավանկ (եռավանկ, քառավանկ) բառեր կան, որոնցում առաջին վանկն է շեշտվում, ինչպես՝ մա՛նավանդ, հա՛մանավանդ, տա՛ս-  
նեբող, վե՛ցեբող, ո՛րեբող և այլն: Այսպիսի բառերը կոչվում են նա-  
խահարաշեշտ, իսկ վերջընթեր վանկի վրա շեշտ կրող բառերը հարա-  
շեշտ բառեր:

§ 145. Այսքանով, սակայն, շեշտադրական բոլոր շեղումները շեշտավարտվում: Շեշտադրությունը, իբրև հնչյունական վերհատույթային լեզվական երևույթ, իր նաև այլ արտահայտություններն ունի, որոնք պայմանավորվում են բառերի բնույթով, ձևաբանական կառուցվածքով ու բաղադրությամբ, վանկաքանակությամբ, կապակցելիությամբ, շարահյուսական կիրառությամբ, ինչպես նաև արտասանական այն ընդհանուր օրենքներով ու օրինաչափություններով, որ հատուկ են հայ նոր գրական լեզվին: Ըստ այդմ էլ շեշտադրությամբ իրարից զգալապես տարբերվում են պարզ բառերը բարդ բառերից, համադրական բարդությունները՝ վերլուծական բարդություններից, իսկական բարդությունները կցական բարդություններից, միահնչյուն կամ միավանկ բառերը՝ բազմահնչյուն կամ բազմավանկ բառերից, համադրական ձևերը՝ քերականական վերլուծական ձևերից:

Ի՛վ իսկապե՛ս. եթե պարզ բառերում և համադրական իսկական բարդություններում շեշտը շատ ավելի կայուն է և ընդհանուր առմամբ ընկնում է վերջին վանկի վրա, ապա լ՛ծրլուծական (հարադիր, կրկնավոր, բազմյուսական) ու կցական բարդություններում, ինչպես նաև բազմավանկ համադրական բարդ բառերում և քերականական վերլուծական մի շարք ձևերում հաճախ այլ կերպ է արտահայտվում:

Բացի այդ, բառերն իրարից տարբերվում են նաև շեշտերի քանակով. բառեր կան, որոնք մի շեշտ են առնում և կոչվում են միաշեշտ բառեր. բառեր էլ կան, որոնք երկու՝ մի գլխավոր ու մի երկրորդական շեշտ են առնում և կոչվում են երկշեշտ բառեր:

§ 146. Հայերենում երկու՝ գլխավոր ու երկրորդական շեշտ են առնում՝

ա) Հարադրվուր բայերը, որոնց մեջ գլխավոր շեշտն ընկնում է հարադրի, իսկ երկրորդական շեշտը՝ բայական բաղադրիչի վրա, ինչպես, օրինակ՝ լա՛ց լինե՛լ, կո՛ւչ ածե՛լ, թա՛փ առե՛լ, դո՛ւրս ընկնե՛լ, վե՛ր կենա՛լ, սի՛րտ աճե՛լ... ալկա՛նջ դնե՛լ, գլո՛ւխ բերե՛լ, կաթվածա՛հա՛ր լինե՛լ, աչի՛ր ընկնե՛լ, աչխ՛վ աճե՛լ, ուշի՛ց գճա՛լ և այլն:

Հակառակ սրանց, զուտ միավանկ բաղադրիչներից կազմված հարադրավոր բայերում շեշտվում է միայն հարադիրը, օրինակ՝ ցո՛ւյց տալ, մա՛ն գալ, վա՛գ տալ, նե՛րս գալ, շո՛ւտ տալ և այլն:

Մանրություն.— Այսպիսի հարադրավոր բայեր են կազմվում միայն միավանկ բայ բաղադրիչով:

բ) Հարադրական կրկնավորները, որոնց դեպքում նույնպես գլխավոր շեշտը՝ առաջին, իսկ երկրորդականը՝ երկրորդ բաղադրիչի վերջնականի վրա է ընկնում, օրինակ՝ արա՛գ-արա՛գ, հեռո՛ւ-հեռու՛, սիրո՛ւն-սիրու՛ն, կամա՛ց-կամա՛ց, երկո՛ւ-երկու՛, կապո՛ւյտ-կապու՛յտ..., դատա՛րկ-մատա՛րկ, աթո՛՛ն-մաթո՛՛ն, սպա՛ն-սպու՛ն, հարա՛յ-հուրա՛յ և այլն:

Միավանկ բառերից կազմված կրկնավորներում շեշտվում է նույնպես միայն առաջին բաղադրիչը, ինչպես՝ շո՛ւտ-շուտ, լա՛վ-լավ, վա՛տ-վատ, նո՛ր-նոր, սո՛ւտ-սուտ, մե՛կ-մեկ, ֆի՛շ-ֆիշ, սո՛ւտ-մուտ, ֆի՛շ-միշ և այլն:

գ) Մի շարք՝ հիմնականում բաղադրյալ համադրական բառեր, որոնց դեպքում, սակայն, ի տարբերություն վերլուծական բարդությունների, գլխավոր շեշտը ոչ թե նախորդ, այլ վերջին վանկի վրա է ընկնում, ինչպես, օրինակ՝ գիտա՛հետազոտակա՛ն, օդա՛նավակայա՛ն, գրա՛նենադա՛տ, այսու՛հետե՛կ, այնու՛ամենայնի՛վ, մանրա՛մասնո՛ւթն, բարո՛յապե՛ս և այլն:

դ) Բաղիյուսական բարդություններ, որոնց դեպքում ևս գլխավոր շեշտը՝ առաջին, իսկ երկրորդականը հաջորդ բաղադրիչի վերջին վանկի վրա է ընկնում, ինչպես, օրինակ՝ կա՛րգ ու կանո՛ն, լա՛ց ու կո՛ծ, մա՛յր ու աղջի՛կ, երկա՛ր ու բարա՛կ, տե՛ր ու տնօրե՛ն, տա՛րի՛ ու կե՛ս, ծի՛լ ու ծաղի՛կ և այլն: Երբ սակայն, բաղադրիչները միանում ու կցական բարդություն են տալիս, նրանցից միայն երկրորդն է շեշտ ստանում, հմմտ., օրինակ՝ ա՛ղ ու հա՛ց—աղուհա՛ց, ա՛հ ու դո՛ղ—ահուդո՛ղ, կո՛շտ ու կոպի՛տ—կոշտուկոպի՛տ, մե՛ծ ու փո՛ք—մեծուփո՛քք, խե՛ղճ ու կրա՛կ—խեղճուկրա՛կ և այլն:

Սրանցից բացի կան նաև որոշ, հատկապես դերանուններից, թվականներից կազմված, կցական բարդություններ կամ ածանցավոր բառեր, որոնց «շեշտը կարող է դրվել թե՛ առաջին և թե՛ վերջին վանկերի վրա»<sup>81</sup>, օրինակ՝ ա՛յսբան—այսբա՛ն, ա՛յդբան—այդբա՛ն, ա՛յսպես—այսպե՛ս, ա՛յդտեղ—այդտե՛ղ, ի՛նչպես—ինչպե՛ս, ի՛նչպիսի—ինչպիսի՛, ե՛րկրորդ—երկրո՛րդ, ո՛րերորդ—որերո՛րդ, ո՛չինչ—ոչին՛չ, այլև՛ ա՛հավասիկ—ահավասի՛կ, ա՛յնուհանդերձ—այնուհանդե՛րձ և այլն: Գնալով, սակայն, հաղթող կամ տիրապետող են դառնում վերջին ձևերը:

Կոչական անուններում ևս շեշտը հարաշարժ է և կարող է ընկնել

<sup>81</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 19—20:



թե՛ առաջին, թե՛ միջին և թե՛ վերջին վանկի վրա<sup>82</sup>, հմմտ., օրինակ, նա՛յրիկ—նայրի՛կ, մա՛յրիկ—մայրի՛կ, Ա՛նդրանիկ—Անդրա՛նիկ—Անդրանի՛կ, սի՛րեկիս—սիրեկի՛ս—սիրեկի՛ս, ե՛ղբայր պատվական—եղբա՛յր պատվական և այլն:

§ 147. Շեշտը բառերի ոչ միայն ուղիղ, այլև նրանց թեթ՛ քերականական բոլոր ձևերում չէ, որ հանդես է գալիս վերջին վանկում: Այսպես՝ շեշտադրությամբ իրարից տարբերվում են.

ա) Բայի բուն և արգելական հրամայականները, օրինակ՝ մտի՛ր—մի՛ մտի՛ր, մտե՛՛ք—մի՛ մտե՛ք, գնա՛—մի՛ գնա, գնացե՛՛ք—մի՛ գնա՛ք//մի՛ գնացե՛ք, մոտեցրո՛ւ—մի՛ մոտեցրու, մոտեցրե՛՛ք—մի՛ մոտեցրե՛ք, ե՛կ—մի՛ գար//մի՛ եկ, տո՛ւր—մի՛ տար//մի՛ տուր, կե՛ր—մի՛ կեր, եղի՛ր—մի՛ եղիր//մի՛ լինիր և այլն, որոնցից առաջին դեպքում՝ վերջին վանկը, երկրորդ դեպքում մի՛ արգելական մասնիկն է շեշտվում:

բ) Բայի սահմանական եղանակի բաղադրյալ ժամանակների դրական և ժխտական խոնարհման ձևերը, որոնցից առաջին դեպքում՝ դերբայի վերջնավանկը, երկրորդ դեպքում օժանդակ բայն է շեշտվում, ինչպես, օրինակ՝ գրո՛ւմ եմ—չե՛մ գրում, գրո՛ւմ եմ—չե՛նք գրում, գրելո՛ւ (յ)եմ—չե՛մ գրելու, գրելո՛ւ (յ)եմ—չե՛նք գրելու, տեսե՛՛լ եմ—չե՛մ տեսել, գնացե՛՛լ եմ—չե՛մ գնացել, գնացե՛՛լ եմ—չե՛նք գնացել, այլև՝ կատարվա՛ծ է—չի՛ կատարված//կատարվա՛ծ չէ, նստա՛ծ եմ—նստա՛ծ չեմ//չե՛մ նստած և այլն:

գ) Բայի պայմանական եղանակի ապառնի և անցյալ ապառնի ժամանակների դրական և ժխտական խոնարհման ձևերը, որոնցից առաջին դեպքում վերջնավանկը, իսկ երկրորդ դեպքում դարձյալ օժանդակ բայն է շեշտվում, հմմտ., օրինակ, կգրե՛՛մ—կգրե՛՛նք և չե՛մ գրի—չե՛նք գրի, կգրե՛՛ի—կգրե՛՛նք և չե՛ի գրի—չե՛նք գրի, կգա՛՛մ—կգա՛՛նք և չե՛մ գա՛—չե՛նք գա՛, կգայի՛՛—կգայի՛՛նք և չե՛ի գա—չե՛նք գա և այլն: Միաժամանակ նկատելի է, որ սկզբնավանկում շեշտվող կամ զորեղ շեշտ առնող բայաձևերը երկար լինելու դեպքում հատկապես նաև երկրորդական (թույլ) շեշտ են ունենում, որ վերջին վանկի վրա է ընկնում, օրինակ՝ մի՛ զարմանա՛//մի՛ զարմացի՛ր, մի՛ զարմանա՛ք//մի՛ զարմացե՛՛ք, մի՛ բարձրացրո՛ւ—մի՛ բարձրացրե՛՛ք, չե՛մ անհանգստանում —չե՛նք անհանգրստանում, չե՛ի անհանգստանում—չե՛նք անհանգստանում և այլն:

§ 148. Գլխավոր (զորեղ) և երկրորդական (թույլ) շեշտերը, սակայն, բոլոր դեպքերում ճիշտ նույն ուժով կամ միատեսակ չեն արտաբերվում: Նախադասության (խոսքի) մեջ ավելի ուժեղ են շեշտվում առավել կարևոր՝ նյութական իմաստ ունեցող բառերը (գոյական, բայ, ածական, թվական, դերանուն, մակբայ), զբան ձևական նշանակություն

<sup>82</sup> Տե՛ս այդ մասին հատկապես Ն. Անայան, Կիպտար քերականության հայոց լեզվի, հտ. 6, էջ 327:

ունեցող, հարաբերություններ ցույց տվող բառերը, ինչպես են՝ շաղկապները, հտադրությունն ու նախադրությունները և օժանդակ կամ էական կոչված բայը (եմ, լինիմ) իբրև խոսքի հանգույց»<sup>63</sup>:

Այս կարգի, հիմնականում միավանկ, բառերն էլ իրենց նախորդ կամ հաջորդ բառի հետ մի ամբողջություն կազմելով՝ շեշտից զրկվում կամ առանց դրան են գործածվում: Ընդ որում՝ նախադաս գործածվողները կոչվում են նախաճար (պրոկլիտիկ), իսկ հտադասները՝ վերջաճար (էնկլիտիկ) բառեր:

Նախահար բառեր են, օրինակ, ի (ի գիտություն, ի նշանավորումն, ի փառս), առ (առ այսօր, առ հայրենիքը, առ այն), մի (մի խոսքով, մի տեղ), տի <պիտի («Ու տի ծագի հանուր կյանքի արշալույսը վառ հագած», Հովհ. Քումանյան), ինչ (ինչ խոսք, ինչ իմանաս), ըստ (ըստ որում, ըստ էության, ըստ իս, ըստ ինքյան) և այլն:

Վերջահար են, օրինակ, ա) եմ օժանդակ բայը նահմանական եղանակի բաղադրյալ ժամանակներում և բաղադրյալ ստորոգյալների կազմում, ինչպես՝ գրո՛ւմ եմ, գրե՛լ եմ, գրելո՛ւ (յ)է, նստա՛ծ էր, նստա՛ծ էին..., նա մա՛րդ է, ես ուսանո՛ղ եմ, մենք ուսանո՛ղ ենք, վարդը կառմի՛ր է, վարդերը կառմի՛ր են և այլն. բ) մի քանի եղանակավորող կամ թարմատար բառեր, ինչպես՝ էլ (Ծս էլ գիտեմ, Բոլորն էլ մեզ ճանաչում են), իսկ (Ժամանակ իսկ չի կորցնում, Ասելն իսկ մեկ է լինում), որ (Ծրք որ խոսում է..., Հենց որ տուն է մտնում...), մի/մը (արևմտհ.՝ պահ մը, էրիկ մը) և այլն. գ) հետ, պես, մոտ, դեմ, մեջ, տեղ միավանկանի հտադրությունները, երբ հատկապես ձայնավորահանգ խնդիրների հետ են գործածվում, օրինակ՝ կրակի՛ հետ (խաղ չեն անում), աչքի լույսի՛ պես, սեղանի՛ մոտ, քընամո՛ւ դեմ, օրվա՛ մեջ և այլն:

Մանրաբայուն.— Մ. Արեղյանը վերջահար է համարել նաև «բոլոր հոգերը՝ ընկերս, ընկերդ, ընկերք» (Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 27):

§ 149. Այս ամենն էլ պարզորոշ ցույց է տալիս, որ բառային շեշտը արևելահայ գրական լեզվում իրոք բազմազան արտահայտություններ ունի, որոնք իրենց հերթին, անշուշտ, նպաստում են խոսքի ներդաշնակությանը, դարձնում այն ավելի բազմբրանգ, հնչեղ ու գեղեցիկ: Ավելացնենք, որ ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ գրական լեզուներում բառային շեշտերը ինչ-ինչ թեքերով կապվում են բարբառային շեշտերի հետ, որոնք և «կը» ճյուղի բարբառների մեծ մասում նթե վերջնավանկի, ապա «ուս» ճյուղի շատ բարբառներում վերջընթեք վանկի վրա է ընկնում, օրինակ, ե՛րագ, ա՛շխաբն, հաւսա՛նիք, ա՛սում եմ և այլն<sup>64</sup>:

§ 150. Տրամաբանական շեշտը, որ նաև շարահյուսական, խոսքի,

<sup>63</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 27:

<sup>64</sup> Այդ մասին տե՛ս Ն. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հոմ. 6, էջ 337, Մ. Արեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 20—21:

հոետորական, ճարտասանական շեշտ է կոչվում, այն շեշտն է, որ ոչ թի մի առանձին բառի, այլ ամբողջական նախադասության է վերաբերում, և որի դեպքում էլ այն բառի վանկն է ավելի ուժեղ արտասանվում, որի վրա խոսողն առանձնակի նշադրություն է դարձնում՝ նոր կամ տարբեր նշանակություններ արտահայտելու համար: Այսպես՝ իրարից տարբեր նշանակություն են արտահայտում «Այսօր ես եմ (և ոչ մի ուրիշը) գնալու թատրոն», «Ես այսօր (և ոչ՝ մի այլ օր) եմ գնալու թատրոն», «Թատրոն (և ոչ՝ մի այլ տեղ) այսօր ես եմ գնալու», «Ես այսօր գնալու եմ (և ոչ՝ այլ բան անելու) թատրոն» և կամ՝ «Նա (և ոչ՝ մի ուրիշը) ճշտորեն կատարեց իր խոստումը», «Ճշտորեն (և ոչ՝ այլ կերպ) նա կատարեց իր խոստումը», «Նա ճշտորեն կատարեց (և ոչ՝ այլ բան արեց) իր խոստումը», «Իր խոստումը (և ոչ՝ այլ բան) նա ճշտորեն կատարեց», «Նա իր (և ոչ՝ մի ուրիշի) խոստումը ճշտորեն կատարեց» նախադասությունները բառերի տարբեր շեշտադրությամբ:

Տրամաբանական շեշտը ևս սովորաբար ընկնում է շեշտվող բառի վերջին վանկի ձայնավորի վրա և համընկնելով բառային շեշտին՝ դրանից տարբերվում է ավելի ուժեղ արտաբերությամբ:

§ 151. Ինչպես բառային, այնպես էլ տրամաբանական շեշտը իր զանազան արտահայտություններն ունի: Երբ նախադասությամբ մի նոր կամ հայտնի, ծանոթ բան է ասվում, հավասար շեշտվում են նրա բոլոր մասերը, իսկ երբ, ասենք, «մի բան կրկնվում կամ հակադրվում է մի այլ բանի»<sup>65</sup>, տրամաբանական շեշտ են առնում այն բառերը, որոնցով նրանք են արտահայտվում, ինչպես, օրինակ՝ «նա միա՛յն այդ գիտի», «Մ. Աբեղյանը ոչ միա՛յն լեզվաբան, այլև մեծ գիտնական է», «Դու կյա՛նքն ես տեսել, դու կյա՛նքն ես հիշում» (Վ. Տերյան), «Եվ իմ հոգում կա մի չքնաղ երազ, և՛ սուրբ արտասուք, և՛ սեր անսահման», «Ոգիս ազատ է, ես շեմ հանդուրժում իմ վրա իշխող ո՛չ մի զորություն, Ո՛չ օրենք, սահման, ո՛չ ճակատագիր, ո՛չ շար ու բարի, և ո՛չ դատաստան» (Ավ. Իսահակյան): Ինչպես օրինակներից էլ կարելի է նկատել, տրամաբանական շեշտը, իբրև կանոն, արտահայտվում է գրավոր խոսքում:

§ 152. Շարույթային կամ ֆեռականական շեշտը այն շեշտն է, որ իր վրա է կրում շարույթների կամ միավորյալ բառախմբերի գերադասանդամը: «Մեռնող արևը յվերջին շողերով ոսկեզօծում է՝ լուսան կատարը» նախադասության մեջ, օրինակ, ինչպես Մ. Աբեղյանն է նշում, «քերականական գերադաս գոյականները՝ արևը, շողերով, կատարը համեմատաբար ավելի ուժեղ են շեշտվում, կրելով իրենց վրա քերականական շեշտ, քան նրանց ստորադաս վերադիրները՝ մեռնող, վերջին,

<sup>65</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 23—24:

լեռան, որոնք միայն բառի շեշտ ունին»<sup>66</sup>: Այդպես և՛ ուժեղ են շեշտված շարույթների գերադաս անդամները հետևյալ քառատողում.

Մի՛ լար, քյուլ/ ֆեզ մի՛ առեջիբ/,  
/Որ փոքորիկն անհրավ/  
Վա՛րդըդ սիրուն/, վա՛րդըդ կարմիր/  
/Քփից պակեց/ ու տարավ... (Ալ. Մառարյան)

Իրենց այդ հատկությամբ շարույթների գլխավոր անդամների քերականական շեշտերը տարբերվում են ստորադաս անդամների շեշտերից, որոնք նույնպես միատեսակ չեն և զանազանվում են իրարից աստիճանավորումներով: «Ձմռան կապանքից ազատված բնությունը» կապակցության մեջ, օրինակ, «ամենից զորեղ շեշտվում է բնությունը բառը. սրանից թույլ շեշտվում է կապանքից բառը, վերջինից թույլ՝ ձմռան և ազատված բառերը»<sup>67</sup>:

Այսպիսով՝ շարույթային կամ քերականական շեշտը ևս իր որոշակի դերն ու կշիռն ունի հայոց լեզվի շեշտադրության համակարգում և բառային ու տրամաբանական շեշտերի հետ միասին հնչյունական այնպիսի վերհատույթային միավորի բաղադրիչ է հանդիսանում, ինչպիսին ենչեռանգն (ինտոնացիան) է:

## ՀՆՁԵՐԱՆԳ

§ 153. Հենչեռանգը շատ բարդ վերհատույթային հնչյունական միավոր է, որով որոշվում է խոսքի և նրա բաղադրիչ մասերի (ն.սխադասութուն, շարույթ, բառ) արտասանական բնույթը: Պատկանելով լեզվի արտահայտության պլանին՝ այն, ինչպես ընդունված է ասել, արտասանվող խոսքի ձայնային-առոգանական բոլոր տարրերի՝ ձայնի հիմնական տոնի, դադարների, իջեցման և բարձրացման, մեղեդու, ուժգնության, տևողության, երանգի (տեմբր), շեշտի և այլն սերտ փոխկապակցված ամբողջությունն է և, իբրև այդպիսին, շատ մեծ դեր է կատարում մարդկանց փոխադարձ հաղորդակցման գործընթացում:

Հենչեռանգը զգալապես հարստացնում է խոսքի արտահայտչական բովանդակությունը և միջոց է ծառայում արտահայտելու բազմազան, հատկապես շարահյուսական, զգացումային-կամային նշանակություններ: Այն բանավոր խոսքի մի կարևոր ու անբաժանելի տարրն է, որի միջոցով խոսողը իր և՛ բազմատեսակ զգացումներն ու ապրումները (ուրախություն, հաճույք, հրճվանք, ոգևորություն, սեր, կարոտ..., տրևրություն, վախ, սարսափ, հեղանք, ցավ, ափսոսանք, զզվանք, բարկություն...), և՛ խոսքի նկատմամբ ունեցած վերաբերմունքն (հաստա-

<sup>66</sup> Նույն տեղում, էջ 25:

<sup>67</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 26:

տական և հարցական՝ իրենց տեսականերով) է ցայտունորեն արտահայտում՝ դարձնելով դա ավելի հմայիչ ու նպատակասլաց:

Ընդ որում պետք է ասել, որ ամեն դեպքում հնչերանգը պրծածվում է բազմազան բաղադրիչներով, որոնք խոսքի, նրա մասերի բնույթին համապատասխան տարբեր դեր են կատարում և տարբեր դրսևորումներ ունենում. ձայնի տոնը, օրինակ, հաստատական խոսքում իջնում է (ինչպես՝ «Արտավր իմ բարեկամն է»), իսկ հարցական (ժանսվանդ՝ հաստատական) խոսքերում, ընդհակառակը, բարձրանում (օր.՝ «Նրան ք՛վ չի ճանաչում»): դադարներով իրարից սահմանազատվում են նախադասութայն անդամները և նախադասությունները. ձայնի ուժգնությունը, բարձրությունը, տևողությունը, շեշտով, երանգով և այլն իրարից տարբերվում են պատմողական (օր.՝ «Հանգչում էր ֆաղափի աղմուկը», Ա. Բակունց), հարցական (օր.՝ «— Էն ո՞վ էր, ճանի՛, որ կանչում էր մեզ, Դու չե՞ս իմանում... սկանչ աբա, տե՛ս», Հովհ. Քումանյան), բացականչական (օր.՝ «Է՛յ, ջան— հայրենիք, ինչքան սիրուն ես», Ավ. Իսահակյան), հրամայական (օր.՝ «Հեռացի՛ր, մոռացի՛ր, մի ճիջիր, Ինձ այդպես, քոջ պես մի գրա...», Վ. Տերյան) բնույթի նախադասությունները:

§ 154. Հնչերանգը ունի նաև այլ արտահայտություններ ու դրսևորումներ, որոնք եթե միասին խոսքի կամ դրա բաղադրիչ մասերի արտասանական, ապա առանձնաբար նրա իսկ ընդհանուր բնույթն են որոշում: Ըստ այդմ էլ այն լինում է երկու տեսակ՝ ավարտուն և ոչ ավարտուն:

Ավարտուն է կոչվում այն հնչերանգը, որով ամբողջ ասույթը (ինչպես՝ բարդ ստորադասական նախադասությունների դեպքում), իսկ ոչ ավարտուն՝ այն հնչերանգը, որով նրա առանձին մասերը կամ բաղադրիչներն են ավարտվում (ինչպես՝ բարդ համադասական նախադասությունների դեպքում):

Հնչերանգը այս կամ այն չափով կապվում է երաժշտության, տրամաբանության, քերականության, հատկապես՝ շարահյուսության հետ և գրավոր խոսքում էլ ըստ կարելիության արտահայտվում է կետադրական նշանների միջոցով: Բանավոր խոսքի իրողություն լինելով ու բազմազան նրբերանգներ ունենալով՝ հնչերանգը, բնականաբար, հնարավոր չէ գրավոր լրիվ արտահայտել:

Այսքանով ավարտելով ժամանակակից հայոց լեզվի հնչյունական կազմի ու համակարգի քննությունը՝ արդ անցնենք հնչյունափոխությանը և տեսնենք, թե ինչ պատկեր է ներկայացնում դա այնտեղ:

## ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

§ 155. Հնչյունափոխությունը, ինչպես անվանումն է ցույց տալիս, լեզվի հնչյունների փոփոխության երևույթն է և վերաբերելով հնչյունաբանությանը՝ դրա ուսումնասիրության կարևոր խնդիրներից մեկն է հանդիսանում: Եվ իսկապե՛ս. հնչյունաբանությունը լեզվի ոչ միայն հնչյունական կազմի, հնչյունական համակարգի, նյութական նվազագույն միավորների՝ հնչյունների ու հնչույթների, այլև դրանց կրած փոփոխությունների ուսումնասիրությամբ ու լուսաբանությամբ է զբաղվում: Այդպիսով այն ավելի լայն ու հարուստ բովանդակություն է ստանում և շատ ավելի՛ պարզ ու ամբողջական պատկերացում տալիս լեզվի հնչյունական կազմի ու համակարգի մասին:

§ 156. Պատկանելով լեզվի հնչյունական կազմին՝ հնչյունափոխությունը, անշուշտ, բարդ ու բազմաբնույթ լեզվական իրողություն է: Հընչյունները, ինչպես լեզվաբանական գիտությունն է հավաստում, այնպիսի միավորներ են, որոնք միմյանց հետ սերտ կապի ու հարաբերության մեջ են գտնվում և խոսքի հնչյունական շղթայում ոչ թե տարանջատ, այլ միասնաբար են արտաբերվում: Այդ հիմամբ էլ լեզվում առաջ են գալիս անթիվ ու անհամար հնչյունակապակցություններ, որոնցում տարբեր գործոններով պայմանավորված՝ հնչյունները ազդում-ներգործում են միմյանց վրա և կրում զանազան փոփոխություններ:

§ 157. Խոսքի հնչյունական շղթայում իրար վրա ազդում և փոփոխություն են կրում ինչպես իրար կից կամ հարևան, այնպես էլ ոչ կից կամ մոտ հնչյունները: Սակայն նկատելի է, որ առավել մեծ շափով իրար վրա ազդում են կից՝ հարևան հնչյունները. այդպես և ավելի շատ ձայնավորներն են ազդում բաղաձայնների, քան դրանք՝ նրանց վրա:

Հնչյունների փոխազդեցությունները, անշուշտ, այսքանով չեն սպառվում. կան նաև դեպքեր, երբ ձայնավորը՝ ձայնավորի, բաղաձայնը բաղաձայնի վրա է ազդում և հնչյունական փոփոխություն առաջ բերում: Այսբանին հավելվում է և այն, որ հնչյունական փոփոխությունները ոչ թե միանգամից, այլ երկար ժամանակամիջոցում են տեղի ունենում, շարունակական բնույթ են կրում և այդպիսով, իրենց հերթին, լեզվի հնչյունական կազմի պատմական զարգացման ընթացքն են ուրվագծում:

§ 158. Արդ՝ ի՞նչ գործոններով ու հանգամանքներով են պայմանավորվել կամ պայմանավորվում հնչյունների բազմատեսակ ու բազմաբնույթ փոփոխությունները: Ինչպես լեզվական ամեն մի իրողություն, այնպես էլ հնչյունները իրենց արտասանություններով ու դրսևորումներով երբեք անփոփոխ չեն մնում: Այդ գործընթացում ամենից առաջ կարևոր դեր է խաղում սերունդների՝ միմյանց հաջորդելու հանգամանքը:

Լեզվի ընդհանուր զարգացմամբ պայմանավորված՝ հնչյուններն իրենց արտասանությամբ, անշուշտ, սերնդից սերունդ ճիշտ նույնը շին մնում և, խիստ ասած, մեկի հնչարտաբերությունը ինչ-որ շափով տարբերվում է մյուսի հնչարտաբերությունից: Ընդ որում՝ ժամանակով ու հաջորդումներով ինչքան մոտ են նրանք իրար, այնքան էլ այդ տարբերությունը շնչին է ու աննշան, և, ընդհակառակը, ինչքան հեռու են իրարից, այնքան դա մեծ է ու խիստ զգալի: Այդ է հաստատում մեր հին գրական լեզուն՝ գրաբարը, որ մենք այսօր կարդում ենք աշխարհաբարյան արտասանությամբ:

§ 159. Հնչյունների փոփոխության գործոններից են համարվում նաև արտասանական (արտիկուլացիոն) բազան, հնչյունների և հնչյունակապակցությունների բնույթը, նրանց դիրքը բառում, ըստ ձայնի և աղմուկի հարաբերությունը, ըստ արտաբերության տեղի և եղանակի առնչակցություններն ու հերթագայությունները, շեշտը, բառերի ձևաբանական և բառակազմական աճումն ու փոփոխությունները, ինչպես նաև մի շարք այլ (բնակլիմայական, տնտեսական-քաղաքական, աշխարհագրական և այլն) հանգամանքներ:

Այսպիսով՝ բազմաթիվ են հնչյունների փոփոխության պատճառներն ու գործոնները, որոնցից, սակայն, առավել կարևոր ու էական են երկուսը. ա) բառային շեշտը, որ բառի աճման դեպքում տեղաշարժվելով՝ հնչարտասանական փոփոխություն է առաջ բերում, և բ) հնչյունների բնույթը, այսինքն՝ այն, թե ինչ հնչյուններ ինչ հնչյունների հետ են կապակցվում, թե ինչ կողմերով ու հատկանիշներով են նրանք առնչվում ու ընդհանրանում և ինչ կողմերով կամ հատկանիշներով տարբերվում ու հակադրվում, թե արտասանական ինչ գործարանների միջոցով նրանք ինչպես են արտասանվում, և այդ գործարաններից յուրաքանչյուրն էլ ամեն դեպքում ինչ դիրք է ընդունում և երբ ու որչափ հարաշարժվում:

§ 160. Այդ բոլորի բացահայտումը կարևոր է լեզվի կրած հնչյունական փոփոխությունների ուսումնասիրության համար, որպիսի բնագավառում էլ մեծ վաստակ ունեն հատկապես Մ. Աբեղյանը, Գր. Դափանցյանը և Հր. Աճառյանը:

Ի տարբերություն նախորդ լեզվաբան-քերականների, որոնք բավարարվել են առանձին հնչյունափոխական դեպքեր ներկայացնելով (այդպես է վարվել, օրինակ, Ա. Այտընյանը իր «Քննական քերականության» մեջ), Մ. Աբեղյանն առաջինն է պատշաճ ուշադրություն դարձրել հայ նոր գրական լեզվի հնչյունափոխությանը և լուսաբանել այն. ընդ որում եթե նա նախապես՝ «Աշխարհաբարի քերականություն» գրքում «բառակազմության ժամանակ ձայնավորների կրած փոփոխությունը» պարզապես անվանել է ձայնափոխություն և ցույց տվել, որ հնչյունափոխվում են» է, ի, ու ձայնավորները և եա (>յա), ոյ (>ույ), այ երկրաբառ-

ները բազմավանկ բառերի վերջին վանկերի և միավանկ բառերի մեջ»<sup>1</sup>, ապա հետագայում՝ «Հայոց լեզվի տեսություն»<sup>2</sup> մեջ առաջ տանելով հայերենի հնչյունափոխության ուսմունքը, մի կողմից հարստացրել է դասական մեկնություններով՝ նշելով, որ հնչյունափոխությունը տեղի է ունենում երկար ժամանակամիջոցում և զանազան եղանակներով, մյուս կողմից՝ բնորոշ փաստերի ցուցադրմամբ ներկայացրել է առավելապես ընդհանրական-պատմական ու փոխազդեցական հնչյունափոխությունները՝ արդի հայերենում ունեցած իրենց իրական պատկերով:

§ 161. Գր. Ղափանցյանը առավել մեծ ուշադրություն է դարձրել հնչյունափոխության տեսական հարցերի վրա և ընդհանուր լեզվաբանության տեսանկյունից քննության է առել հնչյունական փոփոխությունների թե՛ տեսակները, թե՛ զարգացման ընթացքը, թե՛ մի շարք գործոններն («Ֆակտորներ») ու պատճառները և թե՛ զանազան դրսևորումները բառի տարբեր դիրքերում (սկզբում, միջում և վերջում)<sup>3</sup>:

Հնչյունափոխությունը նաև էր դիտել է իբրև լեզվի զարգացման երկար ժամանակվա ընթացքում՝ սեղի ունեցող իրողություն և, օրինակ, նշել, որ հնչյունական փոփոխությունները «բառի մեջ կատարվում են կա՛մ որոշ հնչյունների անհետացումով, կա՛մ նորերն ավելացնելով, կա՛մ դրանց որակական փոփոխություններով և կա՛մ դրանց (հնչյունների) դասավորման՝ տեղի փոփոխմամբ: Այդ փոփոխությունները կարող են կապված լինել հնչյունի դիրքի հետ բառի մեջ (гаср. բառաշարքի) կամ կարող են կատարվել անկախ այդ պայմանից»<sup>4</sup>:

Ի դեպ, ավելորդ չէ ասել, որ Ղափանցյանը մերժել է «հնչյունափոխություն» անվանումը և փոխարենը գործածել է հնչյունափոխություն, որ, անշուշտ, ավելի ճիշտ է և ընդունված է ընդհանրապես հայ լեզվաբանական-քերականական գրականության մեջ<sup>5</sup>:

§ 162. Հնչյունական փոփոխությունները շատ ավելի լայն ընդգրկմամբ ու հանգամանորեն է քննել Հր. Աճառյանը: Իր «Լիակատար քերականության» 6-րդ հատորի մի գերակշիռ մասը «Ձայնափոխություն» անվամբ նա հատկացրել է հնչյունափոխությանը՝ լուսաբանելով այնտեղ նրա «ձայնական օրենքները», ձայնավորների, կիսաձայնների և բաղաձայնների հնչյունական փոփոխությունները ինչպես հնդեվրոպական լեզուներում, այնպես էլ հայերենում:

Գտնելով, որ «ձայնական օրենքները կապված են հանգամանքի, ժամանակի և տեղի հետ, նրանք մշտական չեն և ժամանակի ընթաց-

<sup>1</sup> Մ. Արեղյան, Աշխարհարարի քերականություն, էջ 80:

<sup>2</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 97—120:

<sup>3</sup> Գր. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, էջ 79—143:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 90:

<sup>5</sup> Միայն Գ. Զահուկյանն է, որ Մ. Արեղյանին շնորհակալելով նրա պես «Հնչյունափոխություն» անվանումն է գործածում:



քում փոփոխական են»<sup>6</sup>, Հր. Աճառյանը ամեն անգամ առաջնորդվել է պատմականության սկզբունքով և լեզվական հարուստ փաստերի հիման վրա ցույց տվել, թե հնչյունական իրողությունները ինչ պատկեր են ներկայացնում հնդեվրոպական ժառանգ լեզուներում և գրաբարում, միջին հայերենում, բարբառներում ու նոր հայերենում՝ ամբողջությամբ վերցրած:

Բացի այդ, նա նաև հնչյունափոխությունների տեսակների տարբերակում է կատարել և նշել, որ դրանք լինում են՝ ա) առաջատվական, որ արդյունք է բազմաթիվ աննկատելի հաջորդական փոփոխությունների, որոնք դարեր ամբողջ գործելուց հետո հասել են մի որևէ վախճանական ձևի»<sup>7</sup>, բ) անմիջական, որի դեպքում «փոփոխությունը կատարվում է անմիջապես ու բուսական», և գ) նմանողական, որ առաջանում է «իմաստով իրար հետ կապակցություն (անալոգիա) ունեցող երկու տարբեր բառերի շփոթմամբ»<sup>8</sup>:

Կարևոր է և այն, որ Հր. Աճառյանը միաժամանակ որոշել է դրանց տարբերությունները, նշել, որ առաջատվական (իմա՝ շեշտափոխական և ընդհանուր-պատմական) հնչյունափոխությունները «ընդհանուր բնույթ ունեն և հատուկ են լեզվի մեջ միևնույն ժամանակ գտնված բոլոր բառերին», իսկ մյուսները՝ անմիջական և նմանողական հնչյունափոխությունները, «մասնավոր բնույթ ունեն և հատուկ են լեզվի միայն որոշ բառերին»<sup>9</sup>:

Նմանապես նա նաև նշել է, որ ինչպես առաջատվական, այնպես էլ «անմիջական և նմանողական ձայնափոխությունները (= հնչյունափոխությունները)» ոչ թե «լեզվի բոլորովին անկարգ ու անկանոն», այլ այնպիսի երևույթներ են, որոնք նույնպես ունեն իրենց հատուկ օրենքները»:

Այս տեսանկյունից բազմազան լեզուների փաստերի համեմատությամբ ու բնորոշ օրինակների ցուցադրմամբ Աճառյանը քննել ու լուսաբանել է նաև այդ՝ փոխազդեցական հնչյունափոխությունները՝ իրենց այնպիսի տարատեսակներով, ինչպիսիք են, ասնք, նմանաբանությունը, հավանաբանությունը, տարեմանությունը, խաչաձևումը, տեղափոխությունը, սղումը և կրճատումը, հարակցումը կամ հավելումը, հարասությունը, նախասությունը, քյուրմքությունը և այլն<sup>10</sup>:

§ 163. Հայերենի հնչյունափոխության ուսումնասիրությունը, անշուշտ, առաջ է տարվել նաև հետագայում. ինչպես դպրոցական ու բուհական դասագրքերում ու ձեռնարկներում, այնպես էլ առանձին աշխա-

<sup>6</sup> Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հտ. 6, էջ 406:

<sup>7</sup> Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հտ. 6, էջ 389:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 390:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 679:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 679—772:

տանքներում այն քննվել ու ներկայացվել է գլխավորապես իր շատ ավելի ընդհանուր ու ամենահիմնական իրողություններով<sup>11</sup>: նկատելի է նաև, որ որոշ հարցեր նրանցում ավելի հստակորեն են պարզաբանվել, հնչյունական մի շարք փոփոխություններ ներկայացվել են նոր փաստերով ու օրինակներով, ցույց է տրվել, թե հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքում նրա հնչյունական կազմում հնչյունական ինչ նոր փոփոխություններ են տեղի ունեցել, հնչյունական ինչ տարրնթացություններ կան այսօր և հնչյունափոխական զարգացման ինչ միտումներ են նկատվում և այլն:

§ 164. Այսպիսով՝ իր զարգացման ճանապարհին հայ լեզվաբանական միտքը զգալի նվաճումներ է ձեռք բերել հայոց լեզվի հնչյունափոխության ուսումնասիրության բնագավառում և նշանավորվել ինչպես տեսական, այնպես էլ գործնական արժեք ունեցող մի շարք դրույթներով: Բայց սա, իհարկե, չի նշանակում, թե այն բոլոր կողմերով կամ ամբողջապես սպառել լուծում է ստացել և նոր քննության կամ նկարագրության կարիք չի զգում. ամենևին:

Հնչյունափոխությունը լեզվի հնչյունական կազմի երկարատև զարգացման արդյունք լինելով և շարունակական ընթացք ունենալով, ինչպես ասվել է, բավական բարդ ու բազմաբնույթ երևույթ է. ուստի՝ կան (և չեն կարող չլինել) նաև հնչյունական իրողություններ, որոնք բավարար չափով չեն լուսաբանվել կամ բոլորովին քննության չեն արժանացել: Սրան պետք է ավելացնել, որ սերտորեն կապվելով նաև քերականության, բառագիտության, ուղղագրության ու ուղղախոսության հետ՝ հնչյունափոխությունը այդ տեսակետից ևս մեծ կարևորություն է ներկայացնում և նույնպես նորովի ուսումնասիրության պահանջ առաջադրում:

## ՀՆՉՅՈՒՆԱՓՈՒՅՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

§ 165. Տարբեր հանգամանքներով պայմանավորված՝ լեզվի հնչյունական կազմում տեղի են ունենում իրարից տարբեր հնչյունական փոփոխություններ: Այդ՝ տարբեր հնչյունական փոփոխություններով էլ որոշվում են հնչյունափոխության տեսակները:

Ինչպես այլ լեզուներում, այնպես էլ հայերենում հնչյունափոխությունը լինում է երեք տեսակ. ա) հնչյունափոխություն, որ կապվում է բառաշեշտի հետ և կոչվում է դիրֆային կամ շեշտափոխական հնչյունա-

<sup>11</sup> Տե՛ս Ա. Ղարիբյան, Հայոց լեզու, Երևան, 1962, էջ 69—71, Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 90—95, Է. Բ. Աղալյան, Լեզվաբանության հիմունքներ, էջ 264—288, Գ. Բ. Զեհուկյան, Է. Բ. Աղալյան, Վ. Գ. Առաքելյան, Վ. Ա. Քոչյան, Հայոց լեզու, էջ 127—167, Վ. Առաքելյան, Ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանություն, Երևան, 1955, էջ 64—158 և այլն:

փոխություն. բ) հնչյունափոխություն, որ կապվում է լեզվի հնչյունական կազմի պատմական զարգացման հետ և կոչվում է պատմական կամ ընդհանուր պատմական հնչյունափոխություն. գ) հնչյունափոխություն, որ կապվում է բառերում հնչյունների փոխազդեցության հետ և կոչվում է փոխազդեցական կամ ընդհանրական հնչյունափոխություն:

§ 166. Իրանց բնույթով տարբերվելով՝ այդ երեք տեսակի հնչյունափոխությունները, սակայն, իրարից ամբողջապես կտրված ու սահմանազատված չեն. բոլոր դեպքերում դրանք նաև պատմական, լեզվի հնչյունական կազմի զարգացման ընթացքում առաջ եկած փոփոխություններ են և ինչ-ինչ թելերով համակցվելով՝ մի ամբողջություն են կազմում և միասնաբար էական դեր խաղում լեզվի կառուցվածքում: Արդ՝ տեսնենք, թե ինչ պատկեր են ներկայացնում հնչյունափոխության այդ երեք տեսակները առանձին-առանձին:

### i. ՇԵՇՏԱՓՈՒԽԱԿԱՆ ՀՆՁՅՈՒՆԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆ

§ 167. Շեշտափոխական է կոչվում այն հնչյունափոխությունը, որը պայմանավորված է բառի շեշտի տեղափոխությամբ. ուստի և՛ նրա հիմնական գործոնը (ֆակտորը) շեշտն է, որը եթե նախազբաբարյան շրջանում բառերի նախավերջին (նախընթեր), ապա ինչպես գրաբարում, այնպես էլ ժամանակակից արևելահայ գրական լեզվում նրանց վերջին վանկի ձայնավորի վրա է ընկնում (տե՛ս § 143) և տեղաշարժվելով առաջ բերում մի շարք հնչյունական փոփոխություններ, հմմտ., օրինակ՝ գի՛ր—գրի՛ր—գրի՛ց—գրո՛վ..., գրե՛ր—գրերի՛ր—գրերի՛ց—գրերո՛վ. ամի՛ս—ամսվա՛—ամսո՛ւմ—ամսակա՛ն—ամսաթի՛վ. խո՛ւմբ—խմբի՛ր—խմբո՛ւմ խմբե՛ր—խմբերի՛ց—խմբերո՛ւմ—խմբե՛լ—խմբա՛կ—խմբագի՛ր—խմբագրակա՛ն. ժողովո՛ւրդ—ժողովրդի՛ր—ժողովրդի՛ց—ժողովրդակա՛ն. սե՛ր (< սէր)—սիրո՛ւ—սիրով—սիրայի՛ն. տե՛ր (< տէր)—տիրո՛ջ—տիրե՛լ—տիրակա՛ն—տիրապետությո՛ւն. հանդե՛ս (< հանդէս)—հանդիսանա՛լ—հանդիսավո՛ր—հանդիսությո՛ւն. լո՛ւյս (< լոյս)—լուսավո՛ր—լուսի՛ն—լուսամո՛ւտ. ողջո՛ւյն (< ողջոյն)—ողջունե՛լ. մատյա՛ն (< մատեան)—մատենագի՛ր—մատենագարա՛ն. գործունյա՛ (< գործունեայ)—գործու՛նեությո՛ւն և այլն:

§ 168. Շեշտի տեղափոխությամբ ոչ թե բոլոր հնչյունները, այլ որոշ ձայնավորներ ու երկհնչյուններ են հնչյունափոխվում: Ընդհանուր առմամբ դա բացատրվում է նրանով, որ շեշտը, իբրև վերհատույթային հնչյունական միավոր, հատուկ է միայն ձայնավորներին, որոնք և բառի աճման դեպքում հնչյունափոխվում են: Բայց հայտնի է, որ կան նաև ձայնավորներ ու երկհնչյուններ, որոնք այդ կանոնին չեն ենթարկվում և միշտ՝ բառերի թե՛ ձևաբանական փոփոխությունների, թե՛ բաղադրությունների ժամանակ անփոփոխ են մնում:

§ 169. Ժամանակակից հայոց լեզվում հնչյունափոխվում են հիմնականում է (>ե), ի, ու ձայնավորները և ույ, յա երկհնչյունները, շեն հնչյունափոխվում ա, ե, օ (օ) ձայնավորները և յու, այ, յա երկհնչյունները: Դա էլ, անշուշտ, բացատրվում է շեշտակիր ձայնավորի կամ երկհնչյունի բնույթով: Հնչյունափոխության են ենթարկվում այն ձայնավորները, որոնք շեշտի տեղափոխությանը շեն դիմանում և կա՛մ մի ավելի մոտ, առնչակից հնչյունի են վերածվում, կա՛մ սղվում-դուրս են ընկնում բառի կազմից: Եվ, ընդհակառակն, անփոփոխ են մնում, այսպես կոչված, զորեղ ձայնավոր հնչյունները և երկհնչյունները, այսինքն նրանք, որոնք դիմանում են շեշտի ճնշմանը և զուրկ լինելով մի այլ հնչյունի վերածվելու հիմքից՝ ընդհանուր առմամբ շեն հնչյունափոխվում:

§ 170. Դրանք, որ գալիս են շատ վաղ ժամանակից, հիմնականում համանման պատկեր են ներկայացնում և գրաբարում<sup>12</sup>: Ենշտի տեղափոխությամբ պայմանավորված՝ այդտեղ նույնպես հնչյունափոխվել են է-ն, ինչպես՝ էջ—իշանել—իշումն, դէզ—դիզի—դիզել, պարտէզ—պարտիզի—պարտիզպան, ոսկեղէն—ոսկեղինի, Արտաշէս—Արտաշիսի// Արտաշեսի, եղէզն—եղեգան—եղեգնիկ—եղեգունք և այլն. ի-ն, ինչպես՝ ինչ—ընչի—ընչաքաղց—ընչաւէտ, սիրտ—սրտի—սրտանց—սրտառուշ, գիր—գրոյ—գրոց—գրային—գրաւոր, մարմին—մարմնոյ—մարմնաւոր—մարմնական և այլն. ու-ն, ինչպես՝ ջուր—ջրոյ—ջրով—ջրոց—ջրել—ջրային—ջրառատ—ջրհոր—ջրվէժ, ամուր—ամրոց—ամրանալ—ամրութիւն. երկբարբառներից՝ ոյ-ը, ինչպես՝ լոյս—լուսոյ—լուսաւոր, յոյս—յուսոյ—յուսալից—յուսալ, պարօյր—պարուրել—պարուրումն, եա-ն, ինչպես՝ սենեակ—սենեկի—սենեկաց—սենեկապետ, մեծութիւն—մեծութեան—ի մեծութենէ, այծեամն—այծեման—այծեմունք, կեանք—կենաց և այլն. կոբարբառներից՝ եայ-ն, ինչպես՝ քիստոնէայ—քրիստոնէի. քիստոնէայք—քրիստոնէից—քրիստոնէական—քրիստոնէութիւն, առօրեայ—առօրէի—առօրէից—առօրէական և այլն:

Մյուս ձայնավորները (ա, օ) և երկբարբառները (իւ, այ, աւ, այլև՝ եաւ) գրաբարում նույնպես ընդհանուր առմամբ շեշտափոխական հնչյունափոխության շեն ենթարկվել:

Կան միայն մասնակի շեղումներ. ե-ն որոշ բառերում դ և ո բաղաձայններից առաջ սղվում է, ինչպես՝ քիթեղն—թիթոան—թիթոունք—թիթոանց, ասեղն—ասղան—ասղունք—ասղանց, քիթեղն—թիթղան—թիթղունք—թիթղանց, Կիրեղ—Կիրղի, իսկ դել (>դև) բառից սերող ձևերում դառնում է ի, ինչպես՝ դել—դիժ—դիւային—դիւահար. ա-ն

<sup>12</sup> Այդ մասին տե՛ս, օրինակ, Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևաբան, Երևան, 1976, էջ 9—14:

աղվում-դուրս է ընկնում մի քանի բառերում ու ձևերում, ինչպես՝ Աստուած—Աստուծոյ—Աստուծով, արմատ—արմտիք:

§ 171. Այս և նման շեղումները ցույց են տալիս, որ գրաբարում իսկ շեղտափոխական հնչյունափոխությունը բացարձակապես միատեսակ բրնույթ չի կրել, և կան դեպքեր, երբ հնչյունափոխվող ձայնավորներն ու երկբարբառները անփոփոխ են մնացել, հմմտ., օրինակ, հինգ—հնգի, բայց՝ հինգերորդ, օրէն—օրինական, բայց՝ անօրէնութիւն, սուտ—ստել, բայց նաև՝ սուտակ (աստախոս)—սուտերդումն և այլն:

Սրանք, անշուշտ, ապացույց են այն բանի, որ գրաբարը արտացոլել է այն ժամանակվա ընդհանուր հայերենի հնչյունափոխական իրողութիւնները, որոնք և, բնականաբար, ոչ միայն գրաբարի, այլև հենց փոփոխվող ու զարգացող կենդանի լեզվի միջոցով են անցել հայ նոր գրական լեզվին. ուստի՝ երբեք ճիշտ չի կարելի համարել տարածված այն կարծիքը, թե իբր «Հնչյունափոխության բոլոր այս դեպքերը գրաբարից են փոխանցվել արդի լեզվին և այսօր ժառանգորդական ուժ ունեն, կենդանի ու գործուն շեմ»<sup>13</sup>, կամ՝ «Դրանք մնում են գործածութեան սովորութեամբ և ոչ թե բխում են մեր լեզվի գործող օրինաչափություններից»<sup>14</sup>: Ամենևին էլ ո՛չ. հայ նոր գրական լեզուն ևս ունի իր շեղտափոխական հնչյունափոխությունները, որոնք կենդանի են ու գործուն և հիմնականում էլ բխում են նրա գործող օրինաչափություններից:

§ 172. Իբրև գործուն, կենդանի իրողություն, շեղտափոխական հնչյունափոխությունը ժամանակակից հայ գրական լեզվում ևս դրսևորվում է երկու՝ ա) բառերի՝ ձևաբանական փոփոխություն կրելու և բ) նրանցից նոր բառեր կազմվելու (բառակազմության) դեպքում, հմմտ., օրինակ, տեք—տիրոջ—տիրոջից և ախրել—տիրակալ—տիրապետություն, միբզ—մրգի—մրգից—մրգով—մրգեր—մրգերի—մրգերից և մրգավետ—մրգառատ—մրգատու, երկիր—երկրի—երկրից—երկրով—երկրում—երկրներ—երկրներից և երկրային—երկրագունդ—երկրաշարժ, բուրգ—բըրդի—բըրդից—բըրդեր—բըրդերից և բըրդտ—բըրդակալել—բըրդավաճառ, խոցհուրդ—խորհրդի—խորհրդով և խոցհրդավոր—խորհրդային, գույն—գույնի—գույնից—գույնով և գունատ—գունավոր—գունազարդ և այլն: Կենդանի ու գործուն լինելով՝ շեղտափոխական հնչյունափոխությունը շարունակական ընթացքով ժամանակակից հայոց լեզվում զգալապես հարստացրել է իր կազմը և հատկանշվում է նաև այնպիսի դեպքերով, որոնք սերում են ժողովրդախոսակցական լեզվից ու բացակայում են անցյալում:

§ 173. Եվ, այնուամենայնիվ, հայոց լեզվի հնչյունափոխության ընդհանուր համակարգում գերիշխող են մնում է (> Ե), ի և ու ձայնավոր-

<sup>13</sup> Գ. Աևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 91:

<sup>14</sup> Վ. Առաքելյան, Ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանություն, էջ 66:

ները, որոնց փոփոխութիւնն էլ, կարելի է ասել, տեղի է ունենում թու-  
լացման ուղղութեամբ. ընդ որում՝ եթէ է-ն վերածվում է իրեն անմի-  
ջապես հարաբերակից ի-ի, որ արտասանվում է նույնպես լեզվի առջևի  
մասով, ապա ի-ն և ու-ն, որ արտասանութեան տեղով իրարից հեռու  
են, մեծ մասամբ միատեսակ փոփոխութիւն են կրում՝ դառնալով ը-  
կամ սղվելով:

Երկհնչուանների հնչուանփոխութիւնը տեղի է ունենում նույնպես  
ժամանակակից գործուն օրինքներով, որոնք և նկատի առնելով կարելի  
կլինի ավելի պարզ պատկերացում կազմել հայ նոր գրական լեզվի շեշ-  
տափոխական հնչուանփոխութեան մասին:

#### ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՀՆՉՈՒՆԱՓՈՆՈՒՅՈՒՆԸ

§ 174. Ժամանակակից հայոց լեզվում, ինչպես արդեն ասվել է,  
բառաշեշտի տեղափոխութեամբ պայմանավորված՝ հնչուանփոխվում են  
է (>ե), ի, ու, մասամբ՝ ը, ա ձայնավորները: Բայց առաջին դեպքում  
անգամ շեշտափոխական հնչուանփոխութիւնը բացարձակ բնույթ չի  
կրում, և այլևայլ պատճառներով մի շարք բառերում նրանք անփոփոխ  
են մնում:

#### է (>ե) ձայնավորի հնչուանփոխութիւնը

§ 175. Հին հայերենը՝ գրաբարը, ինչպես հայտնի է, ունեցել է է  
(երկար) և ե (կարճ) ձայնավորներ, որոնք տարբեր հնչույթներ են ըմ-  
բռնվել և այրուբենում էլ ներկայացվել առանձին տառերով: Հայտնի է  
նաև, որ դրանցից շեշտափոխական հնչուանփոխութեան է ենթարկվել  
հիմնականում է-ն՝ դառնալով ի՝ բառասկզբում և բառամիջում, ինչպես՝  
էջ—իջանել, էգ—իգական, մէջ—միջոյ—միջոց, ֆէն—քինու—քինոտ, վը-  
րէժ—վրիժու—վրիժառու և այլն:

Մանրութիւն 1.— Որոշ դեպքերում է-ի ե է դարձել, ինչպես՝ աղուէն—աղուեսու,  
եղէզն—եղեզան—եղեգեիկ, այլև՝ Մովսէս—Մովսեսի//Մովսիսի, Արապէս—Արտաշեսի//  
Արտաշիսի և այլն:

Մանրութիւն 2.— Փրաբարում բառավերջում անխոր է է եղել, որը և միշտ նույնն  
է մնացել, օրինակ՝ բազէ—բազէի—բազէակալ, մարգարէ—մարգարէարար—մարգարէա-  
նալ—մարգարէական, բազէ—բազէի—բազէահամար:

§ 176. է>ի հնչուանփոխութիւնը շարունակել է գոյատևել է և ե  
ձայնավորների նույնացումից հետո և գործում է նաև այսօր: Բայց սա,  
իհարկեմ, չի նշանակում, թե այն նույնութեամբ ժառանգվել է գրաբարից,  
գործածվում է սոսկ ավանդաբար և ճիշտ նույնն է մնացել:

Փաստերը ցույց են տալիս, որ՝

ա) Եթէ գրաբարում բառերի հոլովման ժամանակ մեծ մասամբ է-ն

հնչյունափոխվել է ի-ի, ապա ժամանակակից հայոց լեզվում միայն մի քանի միավանկ (սէր, մէջ, մէգ, տէր) բառերում է, որ նման փոփոխություն է կրում, հմմտ., օրինակ՝ էզ—իզի—իզաց//իզից, էջ—իշոյ//իշու—իշոց//իշուց, էջ—իշի—իշից—իշիւք, զէն—զինու—զէնք—զինուց, կէս—կիտոյ—կիտոց // կիսից, առնէա—առնիտի—առնիտաց, նուէր—նուիրի—նուիրաց, ժապաւէն—ժապաւիւնի—ժապաւիւնաւ, ռսկեղէն—ոսկեղինի—ոսկեղինաց... և սեր (<սէր)—սիրո—սիրուց—սիրով, մէջ (<մէջ)—միշի—միշից—միշով—միշում, տեր (<տէր)—տիրոջ—տիրակալ, մեզ (<մէզ)—միզում, բայց նաև՝ մեզում (սծվ իմ հոգում, Յուրտ ու միզում խինդը մեռավ), Վ. Տերյան, ԾԺ, 1, 24. «Հեռավոր մի փարոս կրվառեմ ես հոգում, Սև կյանքի ալեկոծ խավարում ու մեզում», ն. տ., 180):

բ) Հակառակ դրան, բառակազմության (ածանցման, բարդման) ժամանակ պահպանվում է է>ի հնչյունափոխությունը: Ընդ որում դա արտահայտվում է միավանկ բառերի սկզբում, ինչպես՝ էջ>իջնել—իջեցում—իջվածք—իջասարք—իջավայր, էզ>իզական—իզամուլ, էջ>իշուկ—իշային—իշաքեռ—իշատեր և այլն:

Բայց պետք է ասել, որ այդ կանոնը ևս բացարձակ բնույթ չի կրում, և նրանցից նաև առանց հնչյունափոխության են նոր բառեր կազմվում, ինչպես՝ էշաբար, էշայծյամ, էշանալ, էշավարի, էշարած, էշագրել, էշաթիվ, էշակապ, էշանոց, էշատել և այլն:

§ 177. Է ձայնավորը միատեսակ հնչյունափոխության չի ենթարկվում նաև բառակազմության ժամանակ: Դրանց մեջ, ինչպես հայտնի է, գերիշխում են առաջին հերթին միավանկ բառերը, որոնք և երկու խմբի են բաժանվում.

ա) Բառեր կան, որոնցում է (>ե)-ն անխտրի ի է տալիս, ինչպես՝  
 գեշ (<գէշ)—գիշատել, գիշատիչ, գիշահոտ, գիշաքարշ  
 գեր (<գէր)—գիրուկ, գիրանալ, գիրություն, գիրապարար  
 գես (<գէս)—գիսակ, գիսավոր, գիսաստղ, գիսարձակ  
 դեզ (<դէզ)—դիզել, դիզանոց, դիզակուտակ, դիզափայտ  
 դեմ (<դէմ)—դիմակ, դիմաց, դիմել, դիմագիծ, դիմանկար  
 զեն (<զէն + ք)—զինել, զինվոր, զինանշան, զինապարտ  
 քեկն (<թէկն)—թիկունք, թիկնել, թիկնոց, թիկնապահ, թիկնաթոռ  
 ծես (<ծէս)—ծիսական, ծիսաբար, ծիսակարգ, ծիսապաշտ  
 կեզ (<կէզ)—կիզիչ, կիզել, կիզում, կիզակետ, կիզաքար  
 կես (<կէս)—կիսել, կիսատ, կիսաբաց, կիսաբերան  
 մեզ (<մէզ)—միզամած, միզախառն, միզապատ, միզային  
 շեկ (<շէկ)—շիկանալ, շիկավուն, շիկնել, շիկահող  
 շեն (<շէն)—շինել, շինարար, շինանյութ, շինություն  
 տեզ (<տէզ)—սիզալ, սիզություն, սիզապանծ, սիզաշարժ  
 տեզ (<տէզ)—սիզախոտ, սիզամարգ, սիզավետ, սիզուտ  
 սեր (<սէր)—սիրել, սիրուն, սիրային, սիրուհի, սիրալիր

վեճ (<վէճ)—վիճել, վիճարանել, վիճարկել, վիճամունք

վեպ (<վէպ)—վիպել, վիպակ, վիպասան, վիպական, վիպերգել

ֆեն (<ֆէն)—քինախնդիր, քինահան, քինանալ և այլն:

բ) Բառեր կան, որոնցում է (>ե)-ն մեծ մասամբ ի է տալիս և կամ՝ առանձին դեպքերում նույնն է մնում, ինչպես՝

կետ (<կէտ)—կիտաժանի, կիտակորյուն, կիտաճարպ, բայց ավելի շատ՝ կետոսկր, կետորս, կենտորսանավ, կետորսիչ

ճեզ (<ճէզ)—հեզություն//հիզություն

հեն (<հէն)—հինաբար, հինահալած, հինական, հինահարություն, բայց նաև՝ հենություն, ծովահենություն

ծեթ (<ծէթ)—ծիթաբեր, ձիթագործ, ձիթահան, ձիթատու, բայց նաև՝ ձեթոտ

տեր (<տէր)—տիրել, տիրական, տիրապետել, տիրապես, բայց նաև՝ տերունական, տերություն, տերունի և այլն:

Մանրություն 1.— է (>ե)-ն բնականորեն չի հնչյունափոխվում կցական և հարարական բարդություններում, ինչպես՝ պեսպես (<պէս+պէս), բայց՝ պեսպիսություն, էջմիածին, այլև՝ օրենսդիր (<օրէնսդիր), օրենսգետ (<օրէնսգէտ) և այլն:

Մանրություն 2.— Հազվադեպ միավանկ բառերից կազմված բաղադրություններում է (>ե)-ն նույնն է մնում, ինչպես՝ կետ (<կէտ)— կետադրել, կետագիծ, կետագարդ, կետաշատ, կետանիչ (կիտանիչ հնացած է):

§ 178. է (>ե) ձայնավորը հնչյունափոխական ոչ միանման պատկեր է ներկայացնում նաև երկվանկ և բազմավանկ բառերից կազմված բաղադրյալ բառերում:

Դրանք ևս մի քանի խմբի են բաժանվում: Այսպես՝

ա) Բառեր կան, որոնցում այն նույնն է մնում, ինչպես՝ աղետ (<աղէտ)—աղետալի—աղետաբեր, աղվես (<աղուէս)—աղվեսային—աղվեսենի—աղվեսաքուն—աղվեսագի, աշխետ (<աշխէտ)—աշխետահալ—աշխետություն—աշխետածի, կրկես (<կրկէս)—կրկեսային—կրկեսաբեմ—կրկեսասեր, հրեչ (<հրէչ)—հրեչաբար—հրեչային—հրեչավոր, պատճեն (<պատճէն)—պատճենահան—պատճենել, պատճենում, պատնեչ (<պատնէչ)—պատնեչել—պատնեչային—պատնեչապատ, պարեն (<պարէն)—պարենային—պարենեղեն, պարետ (<պարէտ)—պարետային—պարետություն—պարետախումբ, ֆարտեզ (<ֆարտէզ)—քարտեզագրել—քարտեզանման—քարտեզասրահ և այլն:

Մանրություն.— Կան բառեր, որոնցում է-ն նախապես ե է դարձել և այդպես էլ պահպանվել հետագայում, ինչպես՝ եղեգն (<եղէգն)>եղեգնուտ, եղեգնյա, եղեգնաշատ և այլն:

բ) Բառեր կան, որոնցում է (>ե)-ն ի է դարձել, ինչպես՝ հանդեպ (<հանդէպ)—հանդիպել—հանդիպություն—հանդիպում—հանդիպատեղ, հավետ (<լուէտ)—հավիտյան—հավիտենական—հավիտենաբար, նվեր (<նուէր)—նվիրակ—նվիրաբեր—նվիրակամ—նվիրել, պատվեր (<պա-



տուէր) — պատվիրակ — պատվիրել — պատվիրատու, պարտեզ (< պարտէզ) — պարտիզական — պարտիզակ — պարտիզալից, ստեղ (< ստէպ) — ստիպել — ստիպողական — ստիպում և այլն:

զ) Բառեր կան, որոնցում է (> Ե) - ն ի - ի է փոխվում կամ նույնն է մնում, ինչպես՝ անեծք (< անէծ + ք) — անիծել — անիծյալ — անիծախառն — անիծասեր, բայց նաև՝ անեծքաթուղթ — անեծքակոխ — անեծքախառն — անեծքաշոր, երեց (< երէց) — երիցախումբ — երիցակին — երիցանալ, բայց նաև՝ երիցութիւն — երեցփոխան, ժապավեն (< ժապաւէն) — ժապավինյալ — ժապավինագործ — ժապավինազարդ — ժապավինատուփ, բայց նաև՝ ժապավենագործ — ժապավենազարդ — ժապավենաթել, կոճղեզ (< կոճղէզ) — կոճղիզաբեր — կոճղիզակ, բայց նաև՝ կոճղեզային — կոճղեզաբույս — կոճղեզավոր — կոճղեզանման, հանդես (< հանդէս) — հանդիսավոր — հանդիսատես — հանդիսակից, բայց նաև՝ հանդեսային — հանդեսատուփ — հանդեսաքարտ — հանդեսադահլիճ, վրեժ (< վրէժ) — վրիժաբար — վրիժառու — վրիժագործ — վրիժախնդիր, բայց նաև՝ վրեժաժպիտ — վրեժխնդիր — վրեժխնդրաբար, օրեն (< օրէն + ք) — օրինաբար — օրինավոր — օրինական — օրինազանց, բայց նաև՝ օրենագիրք — օրենազանց — օրենագիր: Նկատելի է, որ է (> Ե) - ն շի հնչյունափոխվում գերազանցապես նոր և մասնավաճճ - ք ածանցով կազմութիւններում, ինչպես՝ մեջք (< մէջ + ք) — մեջքացավ — մեջքակապ — մեջքային — մեջքածալ, պետք (< պէտ + ք) — պետքական — պետքաման և այլն: Այս խմբին է պատկանում նաև զամեշ (< գոմէշ) բառը, որից կազմված մի քանի բառերում (զամեշային, զամեշացուլ) է (> Ե) - ն պահպանվում, իսկ շատերում սղվում է, ինչպես՝ զամշաբուծութիւն, զամշակով, զամշաճաւ, զամշառած, զամշուկ (ի դեպ, ժողովրդախոսակցական լեզվում է (> Ե) - ն սղվում է նաև հոլովման ժամանակ, հմմտ. զամեշի և զամշի, զամեշից և զամշից և այլն):

§ 179. Այսպիսով՝ սերտորեն կապված լինելով հանդերձ անցյալի հետ՝ է (> Ե) ձայնավորը հնչյունափոխական այլազան պատկեր է ներկայացնում ժամանակակից հայ գրական լեզվում և այդտեղ հատկանշովում է այնպիսի իրողութիւններով, որոնք լիովին համապատասխանում են նրա հնչյունական կազմին ու հնչակապակցական օրենքներին:

Նույնը պետք է ասել նաև Ե ձայնավորի մասին, որ՝ ա) նույնությամբ պահպանվել է երկփակ վանկում և Ե > ի փոփոխությամբ դե — դև բառից կազմված բաղադրութիւններում (դիվային, դիվահաւ և այլն), Ե բ) ժողովրդախոսակցական լեզվում մի քանի բառերում սղվել — դուրս է բնկել, ինչպես՝ մժեղ — մժողուկ / մժղիկ, մմեռ — մմռան, ավել (< աւել) — ավելի:

### Ի ձայնավորի հնչյունափոխությունը

§ 180. Ի - ն շատ հնչյունափոխվող ձայնավոր է և շեշտի տեղափոխությամբ պայմանավորված՝ կա՛մ ը է դառնում, կա՛մ օղվում է, կա՛մ

մի այլ տեսակ փոփոխություն է կրում՝ դրսևորելով որոշակի օրինաչափություններ՝ ա) բառի տարբեր դիրքերում (սկզբում, միջում, վերջում), բ) տարբեր քանակի վանկերից կազմված՝ միավանկ, երկվանկ և բազմավանկ բառերում, գ) տարբեր բնույթի հնչյունական կապակցություններում, դ) բաց և փակ վանկերում և ե) ընդհանուր հայերեն և ծագումնաբանորեն տարբեր բնույթի (բարբառային, փոխառյալ) բառերում:

Այս տեսանկյունից էլ նախ տեսնենք, թե երբ և ինչպիսի հնչյունափոփոխության են ենթարկվում ի-ով միավանկ բառերը ժամանակակից հայոց լեզվում:

§ 181. Միավանկ բառերի կազմում ի ձայնավորը հանդես է գալիս սկզբում, միջում և վերջում: Հայերենում ի-ով սկսվող միավանկ բառերը խիստ սակավաթիվ են. դրանք են՝ իծ, իլ, ինն, իր, իղծ, ինծ (<ինծ>), ինչ, որոնցից և ի>ը հնչյունափոփոխության են ենթարկվում միայն վերջին երեքը՝ բառակազմության ժամանակ, ինչպես՝ իղծ→ըղծալ—ըղծալի—ըղծական—ըղծանք—ըղծավառ—ըղծատոշոր, ինծ→ընծատյուծ—ընծենավոր—ընծենի—ընծուղտ, ինչ→ընչագուրկ—ընչաթափ—ընչամուլ—ընչասեր—ընչաքաղց և այլն:

Սանթարյուն.— Ինչ բառի ի-ն բարդ բառերում ևս ը է դառնում, որ, սակայն, արեւելահայ գրական լեզվում գրավոր չի արտահայտվում, ինչպես՝ Եփեսոս→ժնչնաւ—ժնչնույրէն, առինչ→առնչակից—առնչութիւն:

§ 182. Հակառակ դրանց, հայերենում բավական շատ են երկփակ միավանկ բառերն ու բառարմատները, որոնց մեծ մասը՝ երեք (Բ+Ձ+Բ), իսկ քիչ մասը չորս (Բ+Ձ+Բ+Բ) հնչյունով է արտահայտվում, ինչպես, օրինակ՝ բիծ, գիծ, գիւր, դիւր, քիվ, ժիւր, լին, խին, խիտ, ծին, ծիլ, կից, կին, նին, նիչ, միս, նիշ, ջիղ, սին, վիգ, տիպ, ցիւր, փիղ, փիթ...., բիրտ, գինդ, գիւրկ, գիստ, լինդ, լիրբ, խինդ, խիստ, կիրք, կիրք, նինգ, նիշտ, միշտ, միրգ, նինջ, նիստ, պիղծ, պինդ, ջինջ, վիշտ, տիղմ, փիմ և այլն:

Իբրև երկփակ միավանկ բառեր, դրանք ընդհանուր առմամբ մի խումբ են կազմում և միատեսակ՝ ի>ը հնչյունափոփոխություն կրում հոլովման, հոգնակիի, բառակազմության ժամանակ, ինչպես, օրինակ՝ գիր→գրի—գրից—գրով—գրեր—գրերի—գրերից—գրերով—գրավոր—զբրակաւն—զբրագետ—զբրդարան. սիրտ→սրտի—սրտից—սրտով—սրտում—սրտեր—սրտերի—սրտերից—սրտերով—սրտերում—սրտոտ—սրտային—սրտանց—սրտառուչ—սրտակից և այլն:

§ 183. Մի խումբ կազմելով հանդերձ դրանք միաժամանակ ինչ-որ շափով տարբերվում են իրարից: Եռահնչյուն միավանկ բառերը մեծ մասամբ ենթարկվում են ի>ը հնչյունափոխությանը և քիչ շեղումներ են ունենում: Թե՛ հոլովման, թե՛ հոգնակիի և թե՛ բառակազմության ժամանակ ընդհանուր ի>ը հնչյունափոխական կանոնից չեն շեղվում բիծ (բծի—բծեր—բծավոր), բիր (բրի—բրեր—բրիչ), գիծ (գծի—գծեր—զբ-

ծել), գիր (գրի—գրեր—գրային), գին (գնի—գներ—գնորդ), թիվ (թվի—թվեր—թվական), լին (լճի—լճեր—լճակ), ծիտ (ծտի—ծտեր—ծտաբուն), հին (հնի—հներ—հնամյա), միս (մսի—մսեր—մսոտ), վիզ (վզի—վզեր—վզակոթ), ցից (ցցի—ցցեր—ցցափայտ), քիթ (քթի—քթեր—քթանցք) և մի շարք այլ բառեր:

Հակառակ դրանց, ընդհանուր կանոնից շեղվում և հոլովման, հոգնակիի ժամանակ անփոփոխ են մնում, իսկ բառակազմության ժամանակ հնչյունափոխվում են կամ հանդես են գալիս խառն՝ հնչյունափոխված և անհնչյունափոխ ձևերով մի խումբ բառեր, հմմտ., օրինակ, բիր→բբի—բբեր//բիբեր, թիզ→թիզի—թիզեր—թզուկ, ծիլ→ծիլի—ծիլեր—ծլել, ծիզ→ծիզի—ծիզեր—ծզոտ, ծիր→ծիրի—ծիրեր—ծրագիր, թիմ→թիմի—թիմեր—թիմային, նիշ→ճշի//ճիշի—ճշից//ճիշից—ճշեր//ճիշեր—ճշան—ճըշոց, նիշ→նիշի—նիշեր//նշեր—նշաձող, շիթ→շթի//շիթի—շիթեր—շիթաձև, շիթ→շթի—շթեր//շիթեր—շթագործ և այլն:

Մրանք ոչ թե պատահական, այլ այնպիսի «շեղումներ» են, որոնք պայմանավորվում են նրանց կա՛մ հնչյունական կազմով, կա՛մ բարեհնչությամբ, կա՛մ սկզբնաղբյուրով:

§ 184. Քառահնչյուն միավանկ բառերը տարբերվելով եռահնչյուն միավանկ բառերից՝ մի քանի խմբի են բաժանվում.

ա) Բառեր կան, որոնք բոլոր դեպքերում՝ հոլովման, հոգնակիի և բառակազմության ժամանակ ևս նույն՝ ի>ը հնչյունափոխությունն են կրում, ինչպես՝ գիրկ (գրկի—գրկեր—գրկաչափ), լինդ (լնդի—լնդեր—լնդախտ), լիրք (լրքի—լրքեր—լրբանալ), ծիրտ (ծրտի—ծրտեր—ծրտոտ), կիրք (կրքի—կրքեր—կրքոտ), նիտք (ճտքի—ճտքեր—ճտքավոր), միրգ (մրգի—մրգեր—մրգավետ), միտք (մտքի—մտքեր—մտքափոխ), սիրտ (սրտի—սրտեր—սրտանց), վիշտ (վշտի—վշտեր—վշտալի) և այլն:

բ) Բառեր կան, որոնք հոլովման և հոգնակիի ժամանակ անփոփոխ են մնում, իսկ բառակազմության ժամանակ ի>ը հնչյունափոխությունն են ենթարկվում, ինչպես՝ կիրք (կիրթի—կիրթեր—կրթել), նիստ (նիստի—նիստեր—նօտել—նստավայր), պիղծ (պիղծի—պիղծեր—պղծել), ջինջ (ջինջի—ջինջեր—ջեջել) և այլն:

գ) Բառեր կան, որոնք ոչ մի դեպքում էլ չեն հնչյունափոխվում, ինչպես՝ դիրք (դիրքի—դիրքեր—դիրքային), դիրտ (դիրտի—դիրտեր—դիրտագոյացում), կիրճ (կիրճի—կիրճեր—կիրճաբերան), հիմք (հիմքի—հիմքեր—հիմքային), քիմք (քիմքի—քիմքեր—քիմքային) և այլն: Այդպես չեն հնչյունափոխվում նաև փոխառյալ օտար բառերը, ինչպես՝ միֆ→միֆի—միֆեր—միֆական, գիպս→գիպսի—գիպսեր—գիպսային—գիպսապարկ, ցինկ→ցինկի—ցինկապատ և այլն:

դ) Բառեր կան, որոնք տարբեր դեպքերում երկակի՝ հնչյունափոխված և անհնչյունափոխ ձևով են գործածվում, ինչպես՝ լինգ→լնգի//լինգի—լնգեր//լինգեր—լինգավոր, հինգ→հնգի//հինգի—հնգեր//հինգեր—

հնգական // հինգական — հնգանոց // հինգանոց — հնգամյա // հինգամյա, քիննն → սիննի//սննի — սնննի, տիղմ → տիղմի//տղմի — տիղմային//տղմային — տիղմաբեր//տղմաբեր — տիղմաշերտ//տղմաշերտ և այլն:

§ 185. Հայերենում խիստ սակավաթիվ են նաև ի-ով վերջացող միավանկ բառերը. դրանք են՝ դի, (զի), թի, լի, ճի (առանձին չի գործածվում), ձի, մի, որոնք երբեք չեն հնչյունափոխվում՝ իմաստապես չաղճատվելու պատճառով, ինչպես՝ դի → դիի — դիեր — դիակ, թի → թիի — թիակ — թիեր, լի → լիանալ — լիութուն, ձի → ձիու — ձիեր//ձիանք — ձիավոր, մի → միակ — միայն — միութուն, այլև՝ ճի → հիանալ — հիասքանչ — հիացք — հիասթափվել և այլն:

Մանրություն.— Մյուս (միս//մեա) բառում, որ առաջ է եկել մի+եա-ից, ի-ն քնկել է, իսկ ճգոս (<հօր), ճլու, ճմուս, ճպարտ բառերում, որ, անշուշտ, առաջ են եկել ճի+գօր, ճի+լու, ճի+մուս, ճի+պարտ ձևերից, այն պարզապես ը է դարձել:

§ 186. Ի ձայնավորի հնչյունափոխությանը բազմավանկ բառերը մեծ չափով տարբերվում են միավանկ բառերից և հատկանշվում նրանով, որ՝

ա) Հոգնակիում ընդհանրապես չեն հնչյունափոխվում, օրինակ՝ ամիս — ամիսներ, բժիշկ — բժիշկներ, դահլիճ — դահլիճներ, ծաղիկ — ծաղիկներ, գինի — գինիներ, ոճիւր — ոճիւրներ, այգի — այգիներ, կենդանի — կենդանիներ, ամուսին — ամուսիններ, մարմին — մարմիններ և այլն:

Այդ ընդհանուր կանոնից շեղվում են՝ 1) երկիր բառը, որի հոգնակին լինում է երկրեք (արևմտահայերենում առանց շեղման՝ երկիրներ), և սկիզբ բառը՝ հոգնակի թվի (սկիզբներ) թեք հոլովածներում, ինչպես՝ սկզբների, սկզբներից, սկզբներում. 2) միավանկ վերջնաբաղադրիչով այն բարդությունները, որոնցում նա իր հիմնական իմաստով է գործածվում, օրինակ՝ ամսագիր — ամսագրեր, անձնագիր — անձնագրեր, փակագիծ — փակագծեր, սառցալիճ — սառցալճեր, սակագին — սակագներ, դասագիրք — դասագրքեր և այլն:

Այն բառերը, որոնցում միավանկ վերջնաբաղադրիչը այլ իմաստով է գործածվում, հոգնակիում նույնպես չեն հնչյունափոխվում, ինչպես՝ խմբագիր — խմբագիրներ, բեռնակիր — բեռնակիրներ, ազատամիտ — ազատամիտներ, հաստավիզ — հաստավիզներ, մեծասիրտ — մեծասիրտներ և այլն:

բ) Հնչյունափոխվում են եզակի թվի հոլովման և բառակազմության ժամանակ, ինչպես՝ դարբին → դարբնի — դարբնից — դարբնոց, թուր — թուրի — թուրում — թուրատուն, ծաղիկ → ծաղկի — ծաղկավետ, կռիվ → կռվի — կռվով — կռվարար, անկողին → անկողնու — անկողնուց — անկողնային, փոթորիկ → փոթորկի — փոթորկից — փոթորկալից, կեղեփիչ → կեղեփչի — կեղեփչական և այլն:

§ 187. Բազմավանկ բառերը աճելիս հնչյունափոխվում է նրանց վերջավանկը, որը արտահայտվում է փակի դեպքում՝ երեք կամ չորս,

բացի դեպքում՝ երկու ( $R + Q$ ) հնչյունով, հմմտ., օրինակ, խնդիր—խըն+դիր, մարտիկ—մար+տիկ, կրկին—կըր+կին, ճանգիստ—հան+գիստ, նարինջ—նա+րինջ, բժիշկ—բը+ժիշկ, գինի—գի+նի, ուղի—ու+ղի, ֆաղաֆացի—քա-ղա-քա+ցի, աղավնի—ա-ղավ+նի և այլն:

Վերջնավանկերի նման հնչյունական կազմով էլ որոշվում է ի ձայնավորի հնչյունափոխության բնույթը:

§ 188. Փակ վանկով բազմավանկ բառերի դեպքում ի ձայնավորը երկու տեսակ փոփոխություն է կրում՝ դառնում է ը կամ սղվում է:

Ի-ն Ը է դառնում.

ա) Եթե վերջնավանկը արտահայտվում է շորս հնչյունով, ինչպես՝ հանգիստ (հան-գըս-տի, հան-գըս-տա-նալ, հան-գըս-տա-վայր), բժիշկ (բը-ժըշ-կի, բը-ժըշ-կա-կան), բրինձ (բը-բըն-ձի, բը-բըն-ձա-լի), պղինձ (պը-ղըն-ձի, պը-ղըն-ձյա, պը-ղըն-ձա-գույն), լպիրժ (լը-պըր-ժուն), խարիսխ (խա-րըս-խի, խա-րըս-խել), երկինք (եր-կըն-քի), խրխինջ (խըր-խըն-ջի, խըր-խըն-ջալ), հոինդ (հը-ոըն-դոց, հը-ոըն-դալ), նարինջ (նա-րըն-ջի, նա-րըն-ջա-գույն), պարսպ (պա-րըս-պի, պա-րըս-պել), սրինգ (սը-րըն-գի, սը-րըն-գա-հար), սոսինձ (սո-սըն-ձի, սո-սըն-ձել), փսիլեք (փըս-լըն-քոտ) և այլն:

Դրանք, ինչպես օրինակներից էլ կարելի է նկատել, վերջանում են -ինձ, -ինջ, -իստ, -իսխ, -իսպ, -իրժ, -իրա, -ինք, -ինգ հնչյուններով:

բ) Եթե վերջնավանկը արտահայտվում է բաղաձայնի հաջորդող երեք հնչյունով, ինչպես՝ ազնիվ (ազ-նը-վա-կան, ազ-նը-վու-թյուն), առնիճ (ար-ճը-ճի, ար-ճը-ճյա), կսմիք (կըս-մը-թոց), ֆրէիջ (թըր-թըշալ), այլև՝ բշիջ (բը-ջը-ջի, բը-ջը-ջա-յին), տտիպ (տը-տը-պել), կտիտ (կը-տը-տել): Նկատելի է, սակայն, որ սրանք քանակով քիչ են, և որոնց մեջ էլ կան այնպիսիները, որոնք տատանումներ են տալիս, և ի-ն կա՛մ նաև պահվում է, կա՛մ սղվում, հմմտ., օրինակ, խնդիր (խընդ-րել//խըն-դը-րել), երկիր (եր-կը-րի//երկ-րի), երկին (երկ-նա-յին//եր-կը-նա-յին), կրկին (կըրկ-նել//կըր-կը-նել), մատնիչ (մատ-նի-չի//մատ-նը-չի), երգիչ (երգ-չի//եր-գի-չի), աղջիկ (աղ-ջը-կա//աղջ-կա) և այլն:

Ի-ն սղվում է.

ա) Եթե վերջնավանկը արտահայտվում է ձայնավորին հաջորդող երեք հնչյունով, ինչպես՝ ամիս (ամ-սի, ամ-սա-կան), ամուսին (ա-մուս-նու, ա-մուս-նա-նալ), անկողին (ան-կող-նու, ան-կող-նա-կալ), գետին (գետ-նի, գետ-նա-մած), դահին (դահ-ճի, դահ-ճա-յին), դեղին (դեղ-նել, դեղ-նա-վուն), զազիր (զազ-րա-դեմ), թախիժ (թախ-ժի, թախ-ժոտ), թավիշ (թով-չի, թով-չա-կան), թրիք (թըր-քի, թըր-քոտ), ժպիտ (ժըպ-տի, ժըպ-տալ), ծաղիկ (ծաղ-կի, ծաղ-կա-լից), կապիկ (կապ-կի, կապ-կել), կավին (կավ-ճի, կավ-ճոտ), կացին (կաց-նի, կաց-նա-հար), կոիվ (կըռ-վի, կըռ-վա-ծա-ղիկ), ճազիվ (ճազ-վա-դեպ), ճաշիվ (ճաշ-վի, ճաշ-վա-պահ), ճավիկ (ճով-վի, ճով-վա-կան), ճավիտ (ճով-տի,

հով-տա-շու-շան), ճահին (ճահ-ճի, ճահ-ճոտ), մահին (մահ-ճի, մահ-ճա-կալ), մոխիր (մոխ-րի, մոխ-րա-թա-վալ), շիրիմ (շիր-մի, շիր-մա-քար), պանիր (պան-րի, պան-րա-գործ), պատիժ (պատ-ժի, պատ-ժա-չափ), ռամիկ (ռամ-կի, ռամ-կա-կան), վերին (վեր-նա-գիր), տիկին (տիկ-նոջ, տիկ-նիկ), ահաբեկիչ (ա-հա-բեկ-չի, ա-հա-բեկ-չա-կան), առաջին (ա-ռաջ-նա-յին, ա-ռաջ-նորդ), հավատարիմ (հա-վա-տար-մի, հա-վատ-տար-մու-թյուն) և այլն:

Այս խմբին են պատկանում բազմաթիվ բառեր, որոնք և վերջանում են -ին, -ին, -իչ, -իվ, -իր, -իտ, -իմ, -իժ, -իկ հնչյուններով:

բ) Ծթե վերջնավանկը արտահայտվում է ձայնորդին, հատկապես՝ ր-ին, հաջորդող երեք հնչյունով, ինչպես՝ արծիվ (արծ-վի, արծ-վա-քիթ), դարբին (դարբ-նի, դարբ-նոց), ընտիր (ընտ-րել, ընտ-րու-թյուն), կարմիր (կարմ-րել, կարմ-րա-գույն), մարմին (մարմ-նի, մարմ-նս կան), պարսիկ (պարս-կա-կան, պարս-կե-րեն) և այլն:

§ 189. Բառեր կան, որոնք, սակայն, խոտորվում են թե՛ մեկ և թե՛ մյուս կանոններից և գործածվում են անհնչյունափոխ ու հնչյունափոխ-ված ձևերով, ինչպես, օրինակ՝ ավիչ (ավշի//ավիշի—ավշային), գեղեցիկ (գեղեցկի//գեղեցիկի—գեղեցկություն), հյուրտիկ (խորտկի//խորտի-կի—խորտկարան), կավիք (կավճի//կավիճի—կավիճե—կավճե—կավճա-յին), կոշիկ (կոշիկի//կոշկի—կոշկակար), կատիկ (կատկի//կատիկի—կատկային), շամիչ (շամշի//շամիշի) և այլն: Նման շեղումները առավել-լաււբես հատուկ են գոյականների հոլովական ձևերին:

§ 190. Այսքանից, անշուշտ, չի հետևում և շպետք է հետևցնել, թե թառի աճման կամ շեշտի տեղափոխության դեպքում փակ վերջնավանկի ի ձայնավորը անպայման ու անխտիր հնչյունափոխվում է. ամենևին:

Հայերենում կան նաև շատուշատ բառեր, որոնց վերջնավանկի ի ձայնավորը չի հնչյունափոխվում և նույնությամբ պահպանվում է թե՛ հոլովման և թե՛ բառակազմության ժամանակ: Դա ևս պատահական բնույթ չի կրում և պայմանավորվում է որոշակի հնչյունական օրենք-ներով:

Փաստերը ցույց են տալիս, որ անհնչյունափոխ են մնում՝

✓ ա) -իկ փոքրացուցիչ-նվազական վերջածանցով բառերը, ինչպես՝ գնդիկ (գնդիկի, գնդիկային, գնդիկավոր), գլխիկ, եղնիկ, եղեգնիկ, բաթիկ, թղթիկ, թերթիկ, ցիլիկ, իշխանիկ, աշիկ, հարսիկ, հովիկ, տատիկ, շեկիկ, ջրիկ, պատիկ, դեշիկ, փիսիկ, սալիկ, կախավիկ, վզիկ, մազիկ, ուլիկ, սանիկ և այլն: Կան -իկ-ով վերջացող արմատական և այլ բառեր, որոնք նույնպես չեն հնչյունափոխվում, օրինակ՝ կաթալիկ (կաթու-լիկի—կաթուլիկական—կաթուլիկություն), փյունիկ: Երշիկ (երշիկի, եր-շիկեղեն), գերազանցիկ (գերազանցիկի—գերազանցիկություն), անցողիկ (անցողիկություն), թափանցիկ (թափանցիկի—թափանցիկորեն—թա-փանցիկություն) և այլն:

բ) -իֆ, -ինֆ, -իչֆ, այլև՝ -ֆ ածանցով բառերը, ինչպես՝ արգասիֆ, գալիֆ, գիտելիֆ, գրելիֆ, ընթրիֆ, կարծիֆ, հայրենիֆ, նախնիֆ, ֆաշե-լիֆ, շաղինֆ, դաշինֆ, ֆռաինֆ, թռիչֆ, խմիչֆ, ալիֆ, աղիֆ, ժաֆիֆ, կա-րիֆ, խնդիրֆ և այլն:

գ) -իչ ածանցով մի շարք բառեր, ինչպես՝ բաղադրիչ, բացիչ, մե-կուսիչ, շարժիչ (շարժիչի—շարժիչավոր), սափրիչ (սափրիչի—սափրի-չանոց—սափրիչութուն) և այլն: Այդօրինակ մի շարք բառերում, սա-կայն, ի-ն սղվում կամ նաև պահպանվում է, ինչպես՝ ուսուցիչ—ուսուց-չի—ուսուցչական, հատկացուցիչ—հատկացուցչի // հատկացուցիչի, կա-ռավարիչ—կառավարիչի—կառավարչություն:

դ) -իլ-ով վերջավորվող մի խումբ բառեր, ինչպես՝ կաթիլ (կաթի-լի—կաթիլային—կաթիլաձև), մագիլ (մագիլի—մագիլավոր), արագիլ (արագիլի, արագիլային), սածիլ (սածիլի—սածիլավոր), այլև՝ սերկևիլ (սերկևիլի—սերկևիլենի/սերկևիլենի):

ե) Նոր և նորագույն փոխառյալ բառերն ընդհանրապես, օրինակ՝ ավտոմոբիլ, բացիլ, գրաֆիկ, կարտոֆիլ, ռեպլիկ, մետաֆիզիկ, տելս-նիկ, բուլեթիկ, սոցիալիզմ, թեզիս, թեզիս, ռեժիմ, ալյումին, տերմիտ, վիտամին, բանդիտ, արտիստ, սպիրտ, մինիստր, ստերլինգ, օլիֆ, տա-րիֆ և այլն:

զ) Մի խումբ բառեր, որոնք վերջանում են -իդ, -ից, -իթ, -իս, -ին, -ինդ հնչյուններով, ինչպես՝ ծղրիդ (ծղրիդի—ծղրիդային—ծղրիդաձայն), ֆղամիդ (ֆղամիդի—ֆղամիդավոր), երիզ (երիզի—երիզավոր—երիզա-պատ), կորիզ (կորիզի—կորիզոտ—կորիզահան), խորիզ (խորիզի—խո-րիզել), խրեթ (խրեթի—խրեթաձև), սամիթ (սամիթի—սամիթաջուր), առիթ (առիթի—առիթով, հմմտ.՝ գրք. առիթ—առթի—առթիւ > առթիվ), երիթ «սեպ» (երիթի—երիթակ), զենիթ (զենիթի—զենիթային—զենիթա-հար), մայիս (մայիսի—մայիսյան), հունիս (հունիսի—հունիսյան), հու-լիս (հուլիսի—հուլիսյան), մագնիս (մագնիսի—մագնիսական), հյուսիս (հյուսիսի—հյուսիսային—հյուսիսափայլ), ամիճ (ամիճի), դահլիճ (դահ-լիճի—դահլիճանման), խառնիճ (խառնիճի), կապիճ (կապիճի), այլև՝ կապիչ (կապիչի), կարիճ (կարիճի—կարիճատուտ), ուտիճ (ուտիճի), մոլեխիճ (մոլեխիճի), փոխիճ (փոխիճի) և այլն:

Այս և նման այլ բառերում ի ձայնավորը չի հնչյունափոխվում հիմ-նականում նրանց հնչյունական կազմի ու կապակցության պահանջով: Բայց բառեր էլ կան, որոնք շեն հնչյունափոխվում իմաստային աղճատ-ման շեթթարկվելու (հմմտ. կարիճի և կարճի) կամ գրական ճահապար-հով փոխառված և քիչ գործածական լինելու պատճառով:

Մանրություն.— Հայերենում կան հինգ հնչյունների սուղ վերջավանկով մի քանի բառեր, որոնց դեպքում ևս ի-ն չի հնչյունափոխվում, ինչպես՝ կղմինդր—կղմինդրի—կղմինդրագործ—կղմինդրային—կղմինդրաշեն, օշինդր—օշինդրի, այլև՝ մինիստր—մի-նիստրի—մինիստրական—մինիստրություն:

§ 191. Ի-ով վերջացող բազմավանկ բառերը հատկանշվում են մի քանի տեսակ հնչյունափոխությամբ.

ա) Եզակի հոլովման ժամանակ վերջնավանկի ի-ն սովորաբար դուրս է ընկնում, ինչպես՝ գինի—գինու—գինուց—գինով—գինում, այգի—այգու—այգուց—այգով—այգում, լուցկի—լուցկու—լուցկուց—լուցկով—լուցկում, ծերունի—ծերունու—ծերունուց—ծերունով, եկեղեցի—եկեղեցու—եկեղեցուց—եկեղեցով—եկեղեցում և այլն:

Մագմամբ այս հնչյունափոխությունը կապվում է նման բառերի գրաբարյան ո-ա, մի քանի բառերում՝ ա հոլովման հետ և միաժամանակ պատմական բնույթ է կրում: Գրաբարում հոլովման ժամանակ բառավերջի ի-ն վերածվել է յ-ի (օրինակ՝ գինի—գինույ, այգի—այգույ, թըլ-նամի—թըլնամույ և այլն), որը և հետագայում ընկել է, ինչպես՝ ծերունի—ծերունույ—ծերունոյ—ծերունու, որդի—որդույ—որդոյ—որդու և այլն:

Հիշյալ կանոնից շեղվում են որոշ բառեր (այրի, արփի, անդրի, սպի, փերի) և հատուկ անուններ (Անի, Շուշի, Քրիլիսի և այլն), երբ միայն կամ նաև ի հոլովմամբ են հոլովվում:

Մանրություն 1.—Որոշ բառերի գործիականում վերջավանկի ի-ն պահպանվում է, ինչպես՝ քամիով («Աշուն էր, արևի նվաղ ջերմությամբ, դառնաշունչ քամիով» Ա. Բակունց), ուղիով, գտիով, մատանիով և այլն:

Մանրություն 2.— Կաշի բառը, որ գրաբարում հոլովվել է ո-ա խառն հոլովմամբ (կաշի—կաշույ—կաշեալ), ու հոլովման դեպքում նույնպես զրկվում է ի-ից, իսկ ի հոլովման դեպքում կիրառվում է ի>ւ>վ հնչյունափոխությամբ, հմտ. կաշի—կաշու—կաշուց և կաշի—կաշվի—կաշվից:

բ) Վերջնավանկի ի-ն դուրս է ընկնում նաև մի շարք բառերի բաղադրության ժամանակ, օրինակ՝ բարի→բարություն—բարություն, թընամի→թընամական—թընամություն, փոշի→փոշախառն, լոբի→լոբեղեն, քենի→քենակալ (փոխ. քենեկալ), կենդանի→կենդանանալ—կենդանություն, թերի→թերանալ—թերատ, հայտնի→հայտնել—հայտնություն, նախնի→նախնական, հայրենի→հայրենական—հայրենասեր—հայրենադարձ, վրացի→վրացական—վրացագետ, վայրենի→վայրենաբար, գաղտնի→գաղտնապահ—գաղտնաբար—գաղտնարան, ամայի→ամայություն—ամայանալ, առաքինի→առաքինություն, բալենի→բալենուտ, արժույթի→արժույթական, երկաթուղի→երկաթուղագիծ—երկաթուղային—երկաթուղակայարան և այլն: Այդպիսի հնչյունափոխության են ենթարկվում մեծ մասամբ -նի վերջնահնչյունով բառերը:

գ) Բառաբարդման և ածանցման ժամանակ ի-ն ա ձայնավորի (զըլ-խավորապես հողակապի) հետ միանալով՝ տալիս է ե, ինչպես՝ ալեծուփ (<ալի+ա+ծուփ), այգեգործ (<այգի+ա+գործ), բարեկամ, դափնեկիր, կարեկից, հոգեբույժ, շոգեքարշ, ոսկեվառ, տարեգիրք, ուղեգիր..., այգեվետ (<այգի+ավետ), այդեպան, ընտանեկան (<ընտանի+ական),



կարևոր (<կարի+ա+վոր), հոգևոր, պատանեկիկ (<պատանի+ակ+իկ), տարեկան, այլև՝ ոսկերիչ (<ոսկի+արարիչ) և այլն:

Հարկ է նշել, որ դա, սակայն, բացարձակ բնույթ չի կրում, և կան դեպքեր, երբ ա ձայնավորից առաջ ի-ն անփոփոխ է մնում, օրինակ՝ արդիական, արիաբար, արփիազարդ, դրացիական, նոճիածածկ և այլն:

դ) Որոշ բառերում -ակ վերջածանցից առաջ ի-ն դառնում է յ՝ ի>ե հնչյունափոխությունում, ինչպես՝ որդյակ (<որդեակ<որդի+ակ), աղավ-նյակ (<աղաւնեակ<աղաւնի+ակ), ճագյակ, կղզյակ, պատանյակ, ալ-յակ և այլն:

§ 192. Այս բոլորից բացի կան բաղադրյալ բառեր, որոնցում բաց վանկի ի-ն նույնպես չի հնչյունափոխվում:

Նկատելի է, որ դա արտահայտվում է՝

ա) Բայական կազմութուններում, ինչպես՝ այրիանալ, արիանալ, գոլորշիանալ (բայց նաև՝ գոլորշանալ), շոգիանալ, կղզիանալ, որդիա-նալ, խնամիանալ, փռշիանալ, լկտիանալ, բարիանալ և այլն:

բ) Որոշ ածանցավոր բառերում, ինչպես՝ արիաբար, պատանիորեն, պատանիություն, ձրիաբար, խեցիավոր, դրացիություն, ֆղաֆացիա-կան, բերրիություն, փռշիացում և այլն:

գ) Որոշ իսկական բարդութուններում, ինչպես՝ անդրիագործ, ար-դիապաշտ, արիասիրտ, արփիափայլ, կանանցիազգեստ, հոգնակիա-կերտ, նոճիածածկ, սպիաղեմ, ցնցոտիազգեստ և այլն:

## ՈՒ ձայնավորի հնչյունափոխությունը

§ 193. Բառաշեղտի տեղափոխությունում պայմանավորված՝ ու ձայ-նավորը նույնպես հաճախ է հնչյունափոխվում և իր արտահայտություն-ներն ունենում ինչպես միավանկ, այնպես էլ բազմավանկ բառերի սկզբ-բում, միջում և վերջում: Նմանապես այն հնչյունափոխվում է երկու դեպքում՝ բառերի թե՛ քերականական ձևափոխությունների, թե՛ նրան-ցից նոր (ածանցավոր, բարդ) բառեր կազմվելու ժամանակ: Իր հնչյու-նափոխություններով մի ընդհանուր համակարգ կազմելով՝ ու ձայնա-վորը միաժամանակ որոշակի տարբերություններ է դրսևորում միավանկ և բազմավանկ բառերում:

§ 194. Հայերենում ու ձայնավորով սկսվող միավանկ բառերը նույն-պես շատ քիչ են: Դրանց աճման դեպքում ու-ն ընդհանրապես չի հնչյու-նափոխվում, ինչպես՝ ուլ (ուլի—ուլեր—ուլատեր), ութ (ութ—ութական), ուծ (ուծի—ուծեր—ուծեղ—ուծահատ), ուխտ (ուխտի—ուխտել—ուխ-տադրոժ), ուղտ (ուղտի—ուղտեր—ուղտապան), ուշ (ուշի—ուշադիր—ուշադնաց), ուս (ուսի—ուսեր—ուսադիր) և այլն:

Բացառություն են կազմում ունը (>հունգ «հատիկ»), ունչ («դունչ», քիթ»), ումպ («կում») բառերը, որոնց ու-ն վաղ անցյալում (գրաբար-

(րում) ր-ի է վերածվել և այդպես էլ կիրառվում է այսօր, ինչպես՝ ուրդ→  
ընդեղեն—ընդեղենային, ունչ→ընչացք—ընչացքավոր, ումպ→ըմպել—  
ըմպանակ—ըմպելիք:

§ 195. Հակառակ սրանց բավական շատ են ու ձայնավորով երկ-  
փակ միավանկ բառերը, որոնք արտահայտվում են երեք (Բ+Ձ+Բ) կամ  
չորս (Բ+Ձ+Բ+Բ) հնչյունով, ինչպես՝ բույ, բուռ, բուխ, գուք, գուք,  
դուռ, դուր, գուռ, գուր, թուզ, թուք, թուխ, թուշ, թուր, թուփ, լուծ, լուռ,  
լուր, խուզ, խուք, խուլ, խում, խուփ, ծուխ, ծուծ, ծուռ, ծուփ, կուզ, կուժ,  
կում, կուռ, կուտ, հում, հուն, հուր, ձուկ, նում, նուտ, մուզ, մուք, մուխ,  
մուկ, նուշ, նուռ, շուն, շուտ, շուխ, պուտ, ջուր, ուս, սուզ, սուղ, սուտ,  
սուր, վուշ, տուզ, տուն, տուշ, տուր, տուփ, տուֆ, ցուլ, փուք, փուլ, փուշ,  
փուշ, փուռ, ֆուղ, ֆուն..., բունտ, բուշտ, բուստ («ծովային մի տեսակ  
բույս»), բուրգ, բուրդ, գուղձ («հողակոշտ»), գունդ, գուշպ («ծեբրպ»),  
գուրգ, դունչ, դուրս, դուխ, գուք, գուգ, գուսպ, գուրկ, թուխպ, թուխս,  
թուղք, թուխպ, թունդ, թուրմ, թուրջ, լուրջ, լուրք, խումք, խունկ, խուրճ,  
ծունկ, ծունր, կուղք («ջրշուն»), կումք, կունդ, կունձ («հողակոշտ,  
գուղձ»), կուշտ, կուպ, կուխ, կուրս, հումք, հունդ, հունձ, հուսկ, ձուղպ  
(«ձկնկիթ»), նումք, մուլք, մունջ, մուշկ, մուտք, մուրճ, նուրք, շունչ,  
շուրք, պուս, ումք, ունգ, սունկ, սուրք, սուրճ, տուղտ, տուրք, ցուրտ,  
փունջ, ֆունջ, ֆուսպ, ֆուրդ, ֆուրձ, ֆուրմ, ֆուրջ և այլն:

Բացի սրանցից, որ նաև ինքնուրույնաբար են գործածվում և կա՛մ  
դոյական են, կա՛մ ածական, կա՛մ մակբայ, ու ձայնավորով երկփակ  
ձևույթներ էլ կան, որոնք հանդես են գալիս միայն բաղադրություննե-  
րում, ինչպես՝ բուխ (բխել, բխում), դուլ (անդուլ, հացադուլ), բուխ  
(բխել, թխվածք), մուտ (մտնել, հետամտել), պուրճ (պրճնել), սուն  
(սնել, սնունդ), փուտ (փտել, փտախտ) և այլն:

Մանրություն.— Կուրճ, կունձ («կունձ, ճիճ») միավանկանի բառերն արտա-  
հայտված են հինգ, իսկ մեկուկես վանկանի դուստր բառը՝ փաստորեն վեց հնչյունով:

§ 196. Այս երկփակ միավանկ բառերը, սակայն, միատեսակ հըն-  
չյունափոխության շեն ենթարկվում և մի քանի խմբի են բաժանվում:

Այսպես՝

ա) Բառեր կան, որոնց քերականական փոփոխության ու բառա-  
կազմության ժամանակ ու-ն անպայման ը է դառնում, ինչպես, օրինակ՝  
բուկ→բկի—բկեր—բկիկ, բուրդ→բրդի—բրդեր—բրդեղեն—բրդահան,  
գունդ→գնդի—գնդեր—գնդակ, թուք→թթի—թթեր—թթենի, թուղք→թղղ-  
թի—թղթեր—թղթակից, թուր→թրի—թրեր—թրատել, խումք→խմբի—  
խմբեր—խմբակ—խմբագիր, կում→կժի—կժեր—կժաբերան, նուռ→նոան  
—նո(ն)եր—նոնակ, ջուր→ջրի—ջրեր—ջրովի, սունկ→սնկի—սնկեր—  
սնկային, սուտ→ստի—ստեր—ստել—ստախոս, տուն→տնից—տներ—  
տնակ—տնաքանդ, ցուրտ→ցրտի—ցրտեր—ցրտել—ցրտաշունչ, փուշ→  
փշի—փշեր—փշատերև, ֆուրդ→բրդի—բրդեր—բրդական և այլն:

բ) Բառեր կան, որոնց հոլովման և հոգնակիի ժամանակ ու-ն անփոփոխ է մնում, իսկ բառակազմության ժամանակ ը է դառնում, ինչպես՝ բուրգ→բուրգի—բուրգեր—բուրգերի, բայց՝ բրգաձև—բրգաշատ—բրգանալ, զուբ→զութի, բայց՝ գթալ—գթասիրտ—գթութուն, զուրկ→զուրկի—զուրկեր, բայց՝ զրկել—զրկանք—զրկվածություն, խուլ→խուլի—խուլեր, բայց՝ խլանալ—խլացուցիչ, մուրհ→մուրհի—մուրհեր, բայց՝ մըրհիկ—մըրհահարել—մըրհավոր, ռումբ→ռումբեր, բայց՝ ոմբակոծել—որմարկու—ոմբածիգ, ֆուլ→քոլեր, բայց՝ քղանցք—քղագործ և այլն:

գ) Բառեր էլ կան, երբ հոլովման, հոգնակիի և երբեմն նաև բառակազմության ժամանակ ու-ն երկու՝ հնչյունափոխված ու անհնչյունափոխ ձևով է գործածվում, հմմտ., օրինակ՝ բուլ→բբի—բբեր—բուբի—բուբեր—բբախեղդ—բբաշատ—բբալից, թուխալ→թխպի//թխպեր//թուխպեր—թխպամած—թխպոտ—թխպակալել—թուխպանման—թուխպապատ—թուխպապատում, թումբ→թմբի—թմբեր//թումբեր—թմբաձև—թմբաշարք, խունկ→խնկի//խունկի—խոնկեր—խնկների, խուց→խցի//խուցի—խցեր//խուցեր—խցիկ, ճուտ→ճտի—ճտեր—ճուտիկ—ճտահան, ճուշ→նշի—նուշի—նուշեր—նշաձև, ռունգ→ռունգի//ռնգի—ռունգեր—ռնգափնն, սուրհ→սրհի//սուրհի—սրհեր//սուրհեր—սրհարան, ֆուրմ→քուրմի//քրմի քրմեր//քուրմեր—քրմուհի և այլն:

դ) Բառեր էլ կան, որոնց թե՛ քերականական և թե՛ բառակազմական ձևերում ու-ն անփոփոխ է մնում, ինչպես՝ բուեա→բուետի—բուետեր—բուետարար, զուգս→զուգսի—զուգսեր, կուլք→կուլքի—կուլքեր—կուլքաբուծական, կուրս→կուրսի—կուրսեր—կուրսային, հումբ→հումբի—հումբեր—հումբային, հուն→հունի—հուներ—հունավոր—հունավորվել, մուտք→մուտքի—մուտքեր—մուտքագրել, տուլտ→տուլտի—տուլտեր—տուլտածաղիկ, տուրֆ→տուրքի—տուրքեր—տուրքադրել, տուփ→տուփի—տուփեր—տուփագործ, տուֆ→տուֆի—տուֆոր—տուֆակերտ, փուս→փուսի—փուսեր, ֆուսալ→քուսպեր—քուսպամանրիչ և այլն:

Ինչպես օրինականներից էլ կարելի է նկատել, դրանք կամ -ֆ ածանցով կազմված, կամ գրական ճանապարհով փոխառված և կամ իմաստային աղճատման շնթարկվելու պատճառով անփոփոխ գործածվող բառեր են:

§ 197. Հայերենում շատ քիչ են նաև ու-ով վերջացող միավանկ բառերը. դրանք են՝ բու, դու, զու (ձայն.), քու (ձայն.), լու, կու («Քրիբ»), ձու, շու, որոնցից գործածական գոյականների քերականական ու բառակազմական ձևերում ու-ն պահպանվում կամ դառնում է վ, ինչպես՝ լու→լվի—լվեր—լվիճ, ձու→ձվի—ձվեր—ձվարան—ձվածեղ, շու→շուի—շվել—շվերթ—շվացուցակ, քու→քուի//քվի—քուեր//քվեր—քվալ—քվակն—քվիճ:

§ 198. Ու-ով բազմավանկ բառերը բավական մեծ թիվ կազմելով՝ հետևյալ հնչյունափոխական պատկերն են ներկայացնում.

ա) Հոգնակի թվում, իրրև կանոն, ու-ն անփոփոխ է մնում, ինչ-

պես՝ շշուեջ—շշուեջներ, փամփուշտ—փամփուշտներ, աղմուկ—աղմուկներ, տեսուչ—տեսուչներ, գեղջուկ—գեղջուկներ, կորուստ—կորուստներ, բլուր—բլուրներ, խռատում—խռատումներ, առու—առուներ, վերահույ—վերահույներ, կատու—կատուներ, ծաղրածու—ծաղրածուներ, եղջերու—եղջերուներ և այլն:

Մանրութիւն.— Ժողովրդախոսակցական լեզվում ժողովուրդ, սերունդ, կերակուր, գառի բառերի ժողովուրդներ, սերունդներ, կերակուրներ, գլուխներ հոգեակիների փոխարեն հաճախ գործածվում են գրական լեզվի համար մերժելի ժողովուրդներ, սերունդներ, կերակուրներ, գլխներ ևն:

բ) Բառի աճման դեպքում հնչյունափոխվում է միայն վերջին ինչպես փակ, այնպես էլ բաց վանկի ու ձայնավորը, ինչպես՝ բլուր→բլրի—բլրակ, տեսուչ→տեսչի—տեսչութիւն, ժողովուրդ→ժողովրդի—ժողովրդագրական, առու→առվի—առվակ, եղջերու→եղջերվաքաղ («երևակայական կենդանի») և այլն:

գ) ՈՒ-ն հնչյունափոխվում է բառի թե՛ ձևաբանական և թե՛ բառակազմութեան ժամանակ, ինչպես՝ աշուն—աշնան և աշնանային—աշնանացան, խորհուրդ—խորհրդի և խորհրդային—խորհրդակցութիւն, սկեսուր—սկեսուրջ և սկեսուրայր, լեզու—լեզվի—լեզվից և լեզվակ—լեզվաբան, մեղու—մեղվի—մեղվից և մեղվիկ—մեղվանոց—մեղվաբույծ և այլն:

դ) Բառի աճման դեպքում փակ վանկի ու-ն սղվում կամ ր-ի է վերածվում, իսկ բաց վանկի ու-ն վ է դառնում կամ սովորաբար նույնն է մնում:

§ 199. Վերջնավանկի ու-ն, սակայն, բոլոր դեպքերում չէ, որ հնչյունափոխվում է. բառեր կան, որոնց աճման դեպքում այլևայլ պատճառներով այն անփոփոխ է մնում, ինչպես, օրինակ՝ սահուն—սահունորեն—սահունութիւն, սիրուն—սիրունանալ—սիրունագեմ, արդուկ—արդուկի—արդուկել, աճուրդ—աճուրդի—աճուրդային—աճուրդավաճառ, գործադուլ—գործադուլային—գործադուլավոր, մոլեկուլ—մոլեկուլային, միջուկ—միջուկային—միջուկագերծ, կոունկ—կոունկի—կոունկային—կրտունկաձայն, մառախուղ—մառախուղի—մառախուղել, ասուպ—ասուպի—ասուպային, մատուռ—մատուռի—մատուռաձև, վիբուս—վիբուսի—վիբուսային—վիբուսաբան, զգացմունք—զգացմունքի—զգացմունքային, սրբունք—սրունքի—սրունքոսկր, միրուք//մորուք—միրուքավոր//մորուքավոր և այլն. թեկնածու—թեկնածուի—թեկնածուական, ժողովածու—ժողովածուի—ժողովածուում, օղաչու—օղաչուի—օղաչուական—օղաչուութիւն, գնչու—գնչուի—գնչուական—գնչուերեն և այլն:

§ 200. Այսպիսով՝ ու ձայնավորով բաղմամբանկ բառերը բաժանվում են երկու խմբի. նրանք, որոնց աճման դեպքում ու-ն անփոփոխ է մնում, կոչվում են հնչյունափոխվող բառեր, իսկ նրանք, որոնց աճման դեպքում այն փոխվում է, կոչվում են հնչյունափոխվող բառեր: Հստ

վերջնավանկերի բնույթի էլ դրանք տարբեր տեսակի փոփոխություններ են կրում: Արդ՝ նախ տեսնենք, թե հնչյունափոխական ինչ պատկեր են ներկայացնում ու ձայնավորով երկփակ բազմավանկ բառերը ժամանակակից հայոց լեզվում:

§ 201. Բազմավանկ բառերի ու ձայնավորով երկփակ վերջնական-կերը արտահայտվում են երեք ( $R+Q+R$ ) կամ չորս ( $R+Q+R+R$ ) հրնչյունով, հմմտ., օրինակ, աղ-մուկ, գան-գուր, կար-կուտ, մա-բուր, ա-ծուխ, փր-ր-փուր, բու-ծում, տը-տում..., տը-տունջ, ծը-ծումբ, հագուտ, ժո-ղո-վուրդ, սե-բունդ և այլն:

Ընդ որում՝ ու-ն ք է դառնում՝

ա) Եթե վերջնավանկը արտահայտվում է չորս հնչյունով, ինչպես՝ քաբուտ→թաքստոց—թաքստարան, զմուռ→զմոսել—զմոսում, ժողովուրդ→ ժողովրդի—ժողովրդական—ժողովրդասեր, խորհուրդ→ խորհրդի—խորհրդային—խորհրդարան, ծնունդ→ծննդի—ծննդավայր—ծննդական, կորուստ→կորստի—կորստյան, ծծումբ→ծծմբի—ծծմբային—ծծմբաչրածին և այլն:

Այս խմբին են պատկանում նաև այն բառերը, որոնց ու-ն ք է դառնում միայն բառակազմության ժամանակ, հմմտ., օրինակ, աղմուկ→ աղմուկի—աղմկել—աղմկալից—աղմկաշատ—աղմկավոր, ապուխտ→ ապուխտի—ապխտել—ապխտադործ—ապխտածուկ, խլուրդ→ խլուրդի—խլորդային//խլուրդային—խլորդենի//խլուրդենի, շշունջ→շշունջի—շշնջալ—շշնջոց—շշնջածայն, պանդուխտ→պանդուխտի—պանդխտել—պանդխտավայր—պանդխտություն, տրտունջ→տրտունջի—տրտնջալ—տրտնջոց—տրտնջուն, փամփուռ→ փամփուռտի—փամփռտակալ//փամփուռտակալ—փամփռտատուկ//փամփուռտատուկ, շմուշկ→շմուշկի—շմշկել—շմշկասահք—շմշկախաղ և այլն:

բ) Եթե վերջնավանկը արտահայտվում է երեք հնչյունով և հաջորդում է ձայնորդ (մեծ մասամբ՝ ր) հնչյունին, ինչպես՝ մրմուռ→մրմուռի—մրմուռալ—մրմոց, փրփուր→փրփուրի—փրփրել—փրփրալից—փրփրածուկ—փրփրավետ (բայց նաև՝ փրփուրեք—փրփրածին//փրփուրածին), կարկուտ→կարկտի//կարկուտի—կարկտահար—կարկտատար—կարկտային, սանդուղ→սանդուղի—սանդղակ—սանդղաշար—սանդղակալ և այլն:

գ) Եթե վերջնավանկը համընկնում է հնչյունափոխվող միավանկ բառին, որ արտահայտվում է երեք կամ չորս հնչյունով, ինչպես՝ առևտուր→առևտրի—առևտրական, ազատագրել→ազատագրկել—ազատագրկում, այեծուխ→այեծփանք—այեծփուն, անբուն→անքնություն, համախումբ→համախմբել—համախմբում, զորագունդ→զորագնդի—զորագրնդեր—զորագնդային, գետաջուր→գետաջրի—գետաջրեր և այլն:

Մանրություն.— Երբ միավանկ բառ-բաղադրիչը բայարմատ է կամ բարդության հիմնական իմաստի կրողը չէ, ու-ն չի հնչյունափոխվում, ինչպես՝ մեծատուն—մեծատուններ, առևտուր—առևտուրներ, արևախում—արևախումներ, հացքույս—հացքույսներ, բայց նաև՝ ծավացուլ—ծովացուլի—ծովացուլբու:

§ 202. Բազմավանկ բառերի ու-ն սղվում-դուրս է ընկնում, եթե վերջնավանկը արտահայտվում է երեք հնչյունով և ձայնավորի է հաշորդում:

Այդ կարգի բառերն էլ իրենց հերթին բաժանվում են մի քանի խմբի.

ա) Բառեր կան, որոնց ու ձայնավորը սղվում է թե՛ քերականական ձևափոխության և թե՛ բառակազմության ժամանակ, ինչպես՝ ածուխ→ ածխի—ածխանալ—ածխաթթու—ածխածին, աշուն→աշնան—աշնանից—աշնանային—աշնանացան, բազուկ→բազկի—բազկաթոռ—բազկավոր, գաբուն→գարնան—գարնանային—գարնանամուտ, գլուխ→գլխի—գլխում—գլխավոր—գլխացավ—գլխապահ, մաճուկ→մանկան—մանկական—մանկություն և այլն:

բ) Բառեր կան, որոնց ու ձայնավորը հոլովական ձևերում պահպանվում է կամ և՛ պահպանվում է, և՛ սղվում, իսկ բառակազմության ժամանակ մեծ մասամբ սղվում է, հմմտ., օրինակ, անասուն→անասունի—անասունից—անասնական—անասնակեր—անասնապահ, բլուր→բլրի//բլուրի—բլրակ—բլրաշղթա—բլրաշատ, կուսի→կուսիի—կուսահարել—կուսագնթ, կողոպուտ→կողոպուտի—կողոպտել—կողոպտիչ, կրտուց→կտուցի—կտցել—կտցահար—կտցաձկ//կտուցաձև, ձեղուն→ձեղունի—ձեղնահարկ//ձեղունահարկ—ձեղնալույս, մածուն→մածունի//մածնի—մածնոտ//մածունոտ, մամուռ→մամուռի—մամուռապատ—մամուռակալի, փետուր→փետուրի—փետրել—փետրահան—փետրանման//փետուրանման—փետրավոր և այլն:

գ) Բառեր կան, որոնց ու ձայնավորի պահպանումն ու սղումը կապվում են նաև նրանց ի՛նչ խոսքի մասի պատկանելու կամ ի՛նչ հոլովման ենթարկվելու հետ: Որակական ածականների հոլովման ժամանակ, օրինակ, ու-ն պահպանվում, իսկ բառակազմության ժամանակ սղվում է, օրինակ՝ ամուլ→ամուլի—ամլանալ—ամլություն, ամուր→ամուրի—ամրանալ—ամրոց—ամրակուռ, բազում→բազումի—բազմանալ—բազմաթիվ—բազմապատկել, դալուկ→դալուկի—դալկանալ—դալկադեմ, թափուն→թափնվել—թափնապես, կակուղ→կակղել—կակղամորթ, հատուկ→հատկապես—հատկացուցիչ, մաքուր→մաքրել—մաքրասեր—մաքրություն, վայելուչ→վայելչաբար—վայելչություն, տրտում→տրտմել—տրտմություն, տխուր→տխրել—տխրալի—տխրադեմ և այլն:

Այդպես և ու-ն սղվում է -ում (<ումն) ածանցով բայանուններում, նրբ դրանք -ան հոլովմամբ են հոլովվում, օրինակ՝ զգացում—զգացման—զգացմամբ, խոստում—խոստման—խոստմամբ, կործանում—կործանման—կործանմամբ, որոշում—որոշման—որոշմամբ, շարժում—շարժման—շարժմամբ, տատանում—տատանման—տատանմամբ և այլն: Սա գալիս է գրաբարից և արտահայտվում է նաև այդպիսի բառերի երբեմնի հոգնակի ձևերում, ինչպես՝ զգացմունք, ցուցմունք, արարմունք, հարց-

մունք, վրդովմունք, բուսմունք, գրադմունք, սխալմունք, հիացմունք և այլն:

Մանրություն.— Արեմտահայ գրական լեզվում ում (<ումն) ածանցով բառերը հոլովվելով ի հոլովմամբ (որոշումի, զգացումի, երդումի և այլն)՝ նման հնչյունափոխություն չեն կրում:

§ 203. Բազմավանկ բառերի վերջին՝ բաց վանկի ուն՝

ա) Մի խումբ, հատկապես՝ պարզ, բառերի ինչպես ձևաբանական փոփոխության, այնպես էլ բառակազմության ժամանակ դառնում է վ, որը միաժամանակ նաև պատմական հնչյունափոխության հետ է կապվում, օրինակ՝ առու→առվի (<առուի)—առվակ (<առուակ), եղջերու→եղջերվի—եղջերվապահ, թրու→թթվել—թթվաշ, լեզու→լեզվի—լեզվով—լեզվական—լեզվաբան, կիտ→կկվի—կկվիկ, կատու→կատվի—կատվից—կատվաձագ, մեղու→մեղվի—մեղվանոց—մեղվապահ և այլն:

բ) Որոշ, մասնավորապես բազմաբանական փոփոխության ժամանակ պահպանվում, իսկ բառակազմության ժամանակ նույնպես վ է դառնում, կամ կորսվում է, օրինակ՝ լրատու→լրատուի—լրատվական, մրգատու→մրգատուի—մրգատվություն, հաշվետու→հաշվետուի—հաշվետվություն, ձեռնածու→ձեռնածուի—ձեռնածվություն//ձեռնածություն, ազդու→ազդուի—ազդվել—ազդվություն//ազդություն (\*), երկու→երկվանալ—երկվություն:

գ) Մի շարք բառերի թե՛ ձևաբանական փոփոխության և թե՛ բառակազմության ժամանակ չի հնչյունափոխվում, ինչպես՝ ածու→ածուի, նրագու→նրագուի, ջաղու→ջաղուի—ջաղուական, քարթու→քարթուանալ—քարթուություն, թեկնածու→թեկնածուի—թեկնածուական (այլև՝ թեկնածություն), ժողովածու→ժողովածուի—ժողովածուում, կատարածու→կատարածուի—կատարածուական (այլև՝ կատարածություն), շինծու→շինծուի—շինծուորեն—շինծություն, վերարկու→վերարկուի—վերարկուացու, գնչու→գնչուի—գնչուական—գնչուերեն, օղաչու—օղաչուի—օղաչուական (հնացած է՝ օղաչվական), քսու→քսուի—քսություն//քսություն, տիրացու→տիրացուի—տիրացուական—տիրացուականություն և այլն:

Մանրություն 1.— Ուրիշ ածանցով բազմաբանական բառերում ուն հաճախ ընկնում է, ինչպես՝ թեկնածու—թեկնածություն, կատարածու—կատարածություն, հոգաբարձու—հոգաբարձություն և այլն:

Մանրություն 2.— Որոշ բառերում ուն երկու՝ ածանցաբանական և հնչյունափոխված ձևով է գործածվում, ինչպես՝ դատարու—դատարուի//դատարուի, սերմացու—սերմացուի//սերմացվի, սուրու—սուրուի//սուրվի—սուրուանալ//սուրվանալ և այլն:

## Չ ձայնավորի հնչյունափոխությունը

§ 204. Ա-ն, որ հայերենի թույլ ձայնավորն է և շեշտ չի առնում, որոշ բառերի աճման դեպքում, կարելի է ասել, նույնպես հնչյունափոխվում է: Սա, անշուշտ, յուրահատուկ երևույթ է, որ բացատրվում է նման բառերի հնչյունական կազմով և դրա հետ կապված նաև նրանց հարաշեշտությամբ:

Հայտնի է, որ հայերենում կան երկու կամ երեք բաղաձայն հնչյունով վերջացող այնպիսի բառեր, որոնք գաղտնավանկ են կազմում և այդ պատճառով էլ վերջընթեր վանկում են շեշտվում, ինչպես՝ ատա՛մ(ը)ն, գագա՛ք(ը)ն, սե՛րմ(ը)ն, կո՛ղմ(ը)ն, հի՛մ(ը)ն, ուսո՛ւմ(ը)ն, տ՛նգ(ը)ն, ա՛րկ(ը)ն, քա՛րձ(ը)ր, կա՛րծ(ը)ր, մա՛ն(ը)ր, ծա՛ն(ը)ր, մե՛ղ(ը)ր և այլն: Դրանք բոլորը հարաշեշտ (տե՛ս § 143, դ) բառեր են, որոնք ըստ իրենց վերջնահնչյունի երեք խմբի են բաժանվում.

ա) Ն վերջնահանգով բառեր, որոնք հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքում ուղիղ ձևերում կորցրել, իսկ բաղադրություններում գաղտնավանկի ը-ի սղումով պահում են այն, ինչպես՝ ատամնաբույժ, գագաթնակետ, մասնագետ, կողմնացույց, ուսումնական և այլն:

Մանրություն.— Ն վերջնահանգով պահանջող հիմն բառից կազմված ձևերում գաղտնավանկի ը-ն նույնպես սղվում է, ինչպես՝ հիմն—հիմնական—հիմնադիր—հիմնավոր և այլն:

բ) Ա-ով վերջացող բառեր, որոնց գաղտնավանկի ը-ն սղվում-դուրս է ընկնում թե՛ ձևաբանական՝ փոփոխության և թե՛ բառակազմության ժամանակ, օրինակ՝ աստղ→աստղի—աստղով—աստղեր—աստղային—աստղաբույլ, անգղ→անգղի—անգղից—անգղեր—անգղաբուն—անգղաձագ, արկղ→արկղի—արկղում—արկղեր—արկղերից—արկղազործ—արկղաձև և այլն:

գ) Բ-ով վերջացող բառեր, որոնց գաղտնավանկի ը-ն ևս չերկու դեպքում սղվում-դուրս է ընկնում, ինչպես՝ ազղ(ը)ր→ազղ/րի—ազղ/րեր—ազղ/րերից—ազղ/րային—ազղ/րակապ, բարձր→բարձ/րանալ—բարձ/րություն—բարձ/րաձայն, կարծր→կարծ/րի—կարծ/րեր—կարծ/րանալ—կարծ/րություն, մեղր→մեղ/րի—մեղ/րոտ—մեղ/րամոմ, փոքր→փոք/րի—փոք/րեր—փոք/րիկ—փոք/րություն և այլն:

Պետք է, սակայն, ասել, որ բոլոր դեպքերում ը-ն, այնուամենայնիվ, ավելի թույլ է արտասանվում և նրանով ոչ թե լիարժեք երկու, այլ մեկուկես վանկանի բառեր (տե՛ս § 143, բ) են կազմվում՝ ոչ պատահականորեն հոգնակի թվում ստանալով ոչ թե -ներ, այլ -եր մասնիկը, ինչպես՝ աստղ—աստղեր, անգղ—անգղեր՝ (բայց կա նաև՝ անգղեներ), արկղ—արկղեր, դասար—դասարեր, կայսր—կայսրեր, փոքր—փոքրեր և այլն:



## Ա ձայնավորի հնչյունափոխությունը

§ 205. Ա-ն շատ կայուն ձայնավոր լինելով հանդերձ, բառաշեշտի տեղափոխությամբ պայմանավորված, որոշ դեպքերում նույնպես ենթարկվում է հնչյունափոխության:

Այսպես՝

ա) Բառեր կան, որոնց թեք և ավելի շատ ուղիղ ձևերում այն սրղվել-դուրս է ընկել, ինչպես՝ ամառ—ամռան, աստված—աստծո/աստծու (<աստուածոյ), արմտիք (<արմատիք), կոնկել (<կոճակել), մատղաշ (<մատաղաշ), պարպել (<պարապել), հավսար (<հաւասար), երկուշաբթի (<երկուշաբթի), քաղցնի (<քաղաքենի), այլև՝ ցամաքել > ցամքել > ցմքել, շիտակել > շտկել, ծիծաղուն > ծիծղուն, համարել > համրել, անցավոր (<անցաւոր) > անցվոր, կարակին > կարկին, ավելացուկ > ավելցուկ և այլն:

Ա ձայնավորի այս փոփոխությունը տեղի է ունեցել հայոց լեզվի երկարատև զարգացման ընթացքում և հիմնականում էլ կապվում է խոսակցական լեզվի կամ բարբառների հետ:

բ) Բառեր կան, որոնցում ա-ն հնչյունափոխվելով՝ դառնում է ր: Այդպիսի փոփոխություն են կրում նույն արմատի կրկնությամբ կազմված կցական բարդությունները, որոնք նույնպես սերում են ժողովրդախոսակցական լեզվից ու բարբառներից, ինչպես՝ դաղ(ր)դուրել (<դաղդաղորել), քափք(ր)փել (<թափթափել), խաբխբել, խաղխգորել, խազմրգել, ծալծլվել, ծալծլուտել, ծախծխել, ծախծխում, ծակծկել, կաթկթել, կաթկթոց, կապկպել, կապկպում, մազմզոտ, մազմզուկ, շափշփել, շափշրփում, պաչպչել, պաչպչոց, վազվզել, տաշտշել, քաշքշել, քաշքշոց և այլն:

§ 206. Մասնավոր դեպքերում և դարձյալ հիմնականում ժողովրդախոսակցական լեզվում հնչյունափոխվել են նաև ե-ն և ո-ն՝ սղվելով կամ դառնալով ք, ինչպես՝ ձմեռ—ձմ/ռան, ավել—ավլ/ել, վերա (<ի վերայ) —վ(ր)-րա, մծեղ (<մծեղն)—մժղուկ—մժղիկ, փոփփրել, ցուցլալ, թոռմել (<թոռոմել), սապնոտ (<սապոնոտ), սապնաջուր (<սապոնաջուր), այլև՝ գրք. ուկորամով > որկրամով:

## բ. ԵՐԿՆՉՑՈՒՆՆԵՐԻ ՆՉՑՈՒՆԱՓՈՒՅՈՒՅՈՒՆԸ

§ 207. Հայերենի ույ (<ոյ), յա (<եա) և յու (<իւ) երկհնչյուններից բառաշեշտի տեղափոխությամբ պայմանավորված՝ հնչյունափոխվում է ավելի շատ ույ-ը, պակաս՝ յա-ն, մասնակի դեպքերում՝ յու-ն:

§ 208. Ույ-ը հնչյունափոխվում է միայն բառակազմության ժամանակ՝ թե՛ միավանկ և թե՛ բազմավանկ բառերի դեպքում ընդհանուր առմամբ դառնալով ու, հմմտ., օրինակ, բոյս—բուսական—բուսաբան—

բուսակեր, գույն→գունավոր—գունատ—գունազարդ, թույլ→թուլանալ—  
 թուլամիտ—թուլամորթ, լույս→լուսավոր—լուսամուտ—լուսին, հույս→  
 հուսալի—հուսահատ, ձույլ→ձուլել—ձուլվածք—ձուլարան... և աշխույժ  
 →աշխուժանալ—աշխուժորեն—աշխուժութուն, զգույշ→զգուշանալ—զգ-  
 գուշավոր—զգուշացում, ընկույզ→ընկուզենի—ընկուզային, կառույց→  
 կառուցել—կառուցիկ—կառուցվածք, ողջույն→ողջունել—ողջունում—ող-  
 ջունաճառ, տարակույս→տարակուսել—տարակուսանք—տարակուսում,  
 ուսույց→ուսուցում—ուսուցանել—ուսուցիչ, ուռույց→ուռուցիկ—ուռուց-  
 քաբան և այլն:

§ 209. Բայց կան բառեր, որոնք այս ընդհանուր կանոնից շեղվում  
 են:

Այսպես՝

ա) Անշուշտ, պատմական հնչյունափոխությամբ պայմանավորված՝  
 որոշ բառերի ուղիղ՝ ելակետային ձևերում ևս ույ-ը ու է դարձել, ինչ-  
 պես՝ բոյթ→բույթ>բութ («մեծ մատր»), ոյժ→ույժ>ուժ, բոյն→բույն>  
 բուն («ծիծեռնակը բույն էր շինում, Ե՛վ շինում էր, և՛ երգում», Ղ. Աղա-  
 յան), առույշ→անուշ («Ա՛խ, ի՛նչ լավ են սարի վրրա Անցնում օրերն,  
 անո՛ւշ, անո՛ւշ», Հովհ. Քումանյան), շոյտ→շուտ, այտույց→այտույց>  
 այտուց, այլև՝ խոսակցական լեզվում՝ գուժ<գույժ<գոյժ, տուժ<տույժ  
 <տոյժ («Քիչ խմողին ուժ ես տալիս, Շատ խմողին տուժ ես տալիս»,  
 Աշուղ Աթա):

Սրանք կենդանի լեզվում առաջ եկած հնչյունափոխական ձևեր են,  
 որոնք ընդհանուր գործածություն են ստացել և ըստ այդմ էլ միանգա-  
 մայն անտեղի է, որ, օրինակ, բուն-ի փոխարեն բույն-ն է նախընտրելի  
 համարվում:

բ) Բառեր կան, որոնց աճման դեպքում ույ-ը նույնն է մնում, օրի-  
 նակ՝ հույն (<նոյն)→նույնական—նույնանալ—նույնություն—նույնա-  
 տեսակ, փույր→քույրաբար—քույրիկ—քույրական—քույրացու—քույրու-  
 թյուն (բայց նակ՝ փույր—քոջ), ուրույն→ուրույնանալ—ուրույնաթյուն,  
 այլև՝ ինքնուրույն→ինքնուրույնաբար—ինքնուրույնություն, դրույթ→դը-  
 րույթային, խնջույք→խնջույքային—խնջույքասեղան, խույր→խույրա-  
 գործ—խույրակերպ—խույրակիր, կահույք→կահույքային—կահույքավա-  
 ճառ, հատույթ→հատույթավորել—հատույթավորում, նծույգ→նծույգա-  
 յին, համույր («վիթ, գազել»)→համույրանման—համույրենի և այլն:

Նկատելի է, որ ույ-ը չի հնչյունափոխվում այն բառերում, որոնք  
 հիմնականում կա՛մ գրական ճանապարհով են անցել նոր հայերենին,  
 կա՛մ նորակազմություններ են, կա՛մ հնչյունափոխվելով՝ կարող են ան-  
 բարեհունչ դառնալ և միաժամանակ իմաստային աղճատում առաջ բերել:

գ) Կան բառեր, որոնցից երկու ձևով՝ ույ>ու հնչյունափոխությամբ  
 և առանց հնչյունափոխության են բաղադրություններ կազմվում, ինչ-  
 պես՝ հեռուստացույց→հեռուստուցուցային//հեռուստացուցային, մակույկ

→մակուկաձև/մակույկաձև—մակուկավոր/մակույկավոր—մակուկավար  
 //մակույկավար (բայց միայն՝ մակույկանման, մակույկավազք), ող-  
 կույզ→ողկուզաձև/ողկույզաձև—ողկուզաբեր/ողկույզաբեր (բայց միայն՝  
 ողկուզազարդ—ողկուզենի—ողկուզավոր), պատրույզ→պատրուզավոր//  
 պատրույզավոր—պատրուզել/պատրույզել (բայց միայն՝ պատրույզա-  
 լար—պատրույզահրացան), հնչույթ→հնչութային/հնչույթային—հնչութա-  
 բանութուն/հնչութաբանություն, սամույր→սամուրազգեստ//սամույրա-  
 զգեստ—սամուրել/սամուրել—սամուրենի/սամուրենի (բայց միայն՝ սա-  
 մուրամուշտակ, սամուրյա) և այլն: Պետք է ասել, որ այդ զուգահեռ  
 ձևերի միջև պայքար է գնում, որը և ավարտվում է վերջիններից մեծ  
 մասի հաղթանակով:

դ) Մի քանի բառեր էլ կան, որոնց ուղիղ ձևերում ույ (<ոյ)-ը մի  
 հնչյունի է վերածվել, որը իր հերթին ևս հնչյունափոխվել է՝ դառնալով  
 ը կամ սղվելով, օրինակ, հետևյալ բաղադրություններում. բնագուրկ—  
 բնավեր—բնատեղ—բնկալ (<բունկալ), բքամատ—բթաչափ—բթաթումբ,  
 կապտել—կապտագույն—կապտավուն—կապտադեղին—կապտաներկ (<  
 կապիտ // կապուտ <կուպույտ <կապոյտ-ից), սառցահատ—սառցաջուր—  
 սառցային—սառցարան—սառցե (< սառուց < սառույց < սառույց-ից) և  
 այլն:

Այդպես և պտույտ (<պտոյտ) բառի ույ-ը մի դեպքում անփոփոխ  
 է մնացել, ինչպես՝ պտույտաթիվ—պտույտաձև—պտույտվել, մի դեպ-  
 քում ու է դարձել, ինչպես՝ պտուտակ—պտուտահողմ—պտուտաչափ—  
 պտուտավոր—պտուտակե, իսկ մի այլ՝ ույ > ու/ի անցումով ը է տվել,  
 ինչպես՝ պտտաթիռ—պտտահողմ—պտտածող—պտտան—պտտել—պրտ-  
 տիկ—պտտում և այլն: Հմմտ. նաև ֆույր—ֆոռք—ֆոռքից—ֆոռքով—ֆոռ-  
 ջական (<քույր > ք/ր/|քուր-ից):

§ 210. Յա երկհնչյունը, որ սերում է գրաբարի եա երկբարբառից  
 կամ -եայ եռարարբառից, ժամանակակից հայոց լեզվում հնչյունափոխ-  
 վում է միայն բառակազմության ժամանակ՝ դառնալով ե՝

ա) Բառավերջյան փակ վանկում, ինչպես՝ առյան (<ատհան)→  
 ատենաբան—ատենակալ—ատենապետ, այծյամ (<այծեամն)→այծեմ-  
 նի—այծեմնիկ, կատարյալ→կատարելապես—կատարելագործել—կատա-  
 րելություն, մատյան→մատենագիր—մատենադարան, մեհյան→մեհենա-  
 կան—մեհենագիր—մեհենապետ, պատյան→պատենավոր—պատենա-  
 զարդ—պատենամերկ, առաֆյալ→առաքելական—առաքելություն, տեղ-  
 յակ→տեղեկանք—տեղեկատու—տեղեկություն, այլև՝ ազդեցիկ→ազդե-  
 ցություն (ազդեց-ից), միութենական (միութեան + ական-ից), պահնե-  
 ցող→պահնցողական—պահնցողություն (պահնաց-ից):

բ) Բառավերջյան բաց վանկում, ինչպես՝ այծմյա (<այծմեայ)→  
 այծմեական—այծմեանալ, առօրյա—առօրեական—առօրեապաշտ—առօ-  
 րեություն, գարծունյա—գործունեություն, միջօրյա—միջօրեական—միջօ-

րեազիծ, պաշտօնյա—պաշտոնեական—պաշտոնեութիւն, քրիստոնեաբար—քրիստոնեական—քրիստոնեանալ—քրիստոնեութիւն և այլն:

Մանրութիւն.— Բառավերջյան յա-ն սերելով գրաբարի -եայ եռահնչունից՝ հին ուղղագրութեամբ արտահայտուով է է տառով, ինչպես՝ պաշտօնեայ—պաշտօնեական—պաշտօնեութիւն:

§ 211. Յա երկհնչունի հնչունափոխութիւնը շատ ավելի սերտորեն է կապվում պատմական հնչունափոխութեան հետ. ուստի՝ ներկայումս այն առանձնապես գործուն չէ, և այդ պատճառով էլ բառեր կան, որոնք նաև առանց հնչունափոխութեան կամ միայն այդպես են գործածվում, հմմտ., օրինակ՝ ժանեկագործ//ժանյակագործ—ժանեկագործութիւն//ժանյակագործութիւն—ժանեկագարդ//ժանյակագարդ—ժանեկավոր, հայետացութիւն//հայատյացութիւն, վայրկենական//վայրկյանական—վայկենապես//վայկյանապես, պատենավոր//պատյանավոր, դայեկորդի//դայակորդի—դայեկել//դայակել—դայեկութիւն//դայակութիւն..., հոբելյար—հոբելյարուհի, հոբելյան—հոբելյանական, մանյակ—մանյակաշար—մանյակագարդ—մանյակաձև//մանեկաձև և այլն:

Խարտյաշ (<խարտեաշ) բառը, որ անցյալում ավանդված է նաև խարտեշ և խարտէշ ձևերով, որոշ բաղադրութիւններում նույնն է մընում, որոշ բաղադրութիւններում էլ յա (<եա> >ե, եա >է >ի հնչունափոխութեանն է ենթարկվում, հմմտ. խարտյաշ—խարտյաշագեղ//խարտիշագեղ, խարտյաշութիւն—խարտյաշուհի // խարտիշուհի—խարտեշավարս//խարտիշավաս, այլև՝ խարտիշագես—խարտիշագույն—խարտիշաներ—խարտիշանալ և այլն:

Մանրութիւն.— Պատմական հնչունափոխութեամբ դեռ վաղ անցյալում կամ հայոց լեզվի հետագա զարգացման ընթացքում որոշ բառերի ուղիղ ձևերում նույնպես եա (>յա)-ն ե է դարձել, օրինակ՝ կորեակ—կորեկ, ցորեան—ցորեն, լեանն—լեռ, լեարդ—լյարդ—լերդ (սերդ ու թորս շորացավ», Խ. Աբովյան), որից՝ լերդանալ և այլն:

§ 212. Յու (<իւ//իւ) երկհնչունը ժամանակակից հայոց լեզվում հնչունափոխվում է սակավ դեպքերում՝ սղվելով կամ դառնալով ր: Նրման հնչունափոխութեան են ենթարկվում մի քանի բառեր՝ ալյուր (<ալիւր//ալիւր), արիւն (<արիւն), ձյուն (<ձիւն), այլև՝ աղբյուր (<աղբիւր), նյուղ (<ճիւղ), որոնց յու երկհնչունը ժողովրդախոսակցական լեզվում վերածվել է մի հնչունի՝ ի-ի կամ ու-ի, ինչպես՝ արիւն//արուն, ալիւր//ալուր, ձիւն//ձուն (<ձիւն), նուղ//նեղ:

Այսպիսով՝ յու երկհնչունը ի//ու հնչունափոխական անցումով համապատասխան բաղադրյալ բառերում՝ ա) սղվել է, ինչպես՝ արուն (>արիւն, արուն)—արնագույն—արնադեմ—արնածուփ—արնակոլու—արնախում—արնանման (սկրնանման ծաղիկների ու վարդերի բույրը վառման, Ու նաիրյան աղջիկների հեղաճկուն պարն եմ սիրում», Ծ. Զա-

րենց) — արևավառ, այլուր — այրաղաց — այրատուն — այրոտ — այրափոշի  
 այրաթաթախ, բ) դառնում է ը, ինչպես՝ ձյուն (> ձին/ձուն) — ձնաբեր —  
 ձնաբուք — ձնագնդի — ձնհալ — ձնծաղիկ — ձնաշերտ, նյուլ — ճղակոտոր —  
 ճղակախ — ճղափայտ, աղբյուր — աղբրաշուր («Իջնում էին օդի պողպա-  
 ջուն ալիքների ու աղբրաշրի նման վետվետում էին դաշտի վրա», Ստ.  
 Զորյան):

Այդ նույն բառերից, սակայն, մեծավ մասամբ առանց հնչյունա-  
 փոխությունների են բաղադրյալ բառեր կազմվում, ինչպես, օրինակ՝ արյու-  
 նաբեր — արյունագուրկ — արյունաթաթավ — արյունածոր — արյունոտ — ար-  
 յունաբրու..., այլուրաղաց — այլուրախառն — այլուրաշաղախ — այլուրա-  
 շատ — այլուրոտ..., ձյունաղաշտ — ձյունաթագ — ձյունախեղդ — ձյունապատ  
 — ձյունե — ձյունոտ..., նյուլավոր — նյուլապատ — նյուլաշատ — նյուլա-  
 նյուն և այլն:

Մանրաբյուր. — Միութենական, արենակից բառերը սերելով հուլմական ձևերից  
 (միություն, արյան)՝ ոչ թե յու > ե, այլ յա > ե հնչյունափոխության են ենթարկվել:

## 2. ՊԱՏՄԱԿԱՆ ՀնԶՅՈՒՆԱՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ

§ 213. Պատմական կամ ընդհանուր պատմական է կոչվում այն  
 հնչյունափոխությունը, որը կապվում է լեզվի հնչյունական կազմի զար-  
 գացման հետ և արտացոլում է ժամանակի ընթացքում նրանում կա-  
 տարված հնչյունական փոփոխությունները: Պատմական հնչյունափոխու-  
 թյունը այդ պատճառով շատ ավելի բարդ հնչյունափոխական երևույթ  
 է և բազմատեսակ դրսևորումներ ունի, որոնք և թե ինչպե՞ս և ի՞նչ  
 օրենքներով ու օրինաչափություններով են առաջ եկել, հաճախ դժվար  
 է լինում բացատրել:

§ 214. Հայոց լեզուն կտրած-անցած լինելով զարգացման երկար  
 ճանապարհ՝ հարուստ է պատմական հնչյունափոխության շատ դեպքե-  
 րով, որոնք իրենց արտահայտությունն են գտել թե՛ հնչյունական կազ-  
 մում, թե՛ բառապաշարում և թե՛ քերականական կառուցվածքում: Պետք  
 է, սակայն, ասել, որ առավել մեծ չափով պատմական հնչյունափոխու-  
 թյան է ենթարկվել հայոց լեզվի հնչյունական կազմը: Ինչպես լեզվա-  
 կան ամեն մի իրողություն, այնպես էլ դա անփոփոխ չի մնացել և ժա-  
 մանակի ընթացքում հնչյունական այլևայլ փոփոխություններ է կրել:  
 Եվ իրո՞ք. փաստերը ցույց են տալիս, որ բազմատեսակ փոփոխու-  
 թյունն են կրել թե՛ ձայնավորները, թե՛ երկբարբառներն ու եռաբարբառ-  
 ները, թե՛ բաղաձայնները և թե՛ վերհատույթային իրույթները (շեշտ,  
 հնչերանգ):

§ 215. Հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքում ձայնավորների համակարգում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

ա) Բառասկզբի ե ձայնավորը, որ է է արտաբերվել և չի տարբերվել բառամիջի ե-ից, ընդհանուր առմամբ երկհնչյունացել է՝ յե (=յէ) է դարձել, իսկ բարբառներում այլազան փոփոխություններ է կրել, հմմտ., օրինակ՝ երեխայ > երեխա = յէրէխա, եղբայր, երագ, երբ, երեկոյ > երեկո = յէրէկօ, երկիր, ասել, բերան. խելք, գեղեցիկ և երես > էրես // էրէս, յէրէս, յիրէս, իրէս, իրես, եղբայր > էխբ'ար, ախբար, ախպէր, ախպրէր, ելաճել (<ելնել) — էլնել, յէլնել, յէլել, էլլել, իլլիլ, ըլնիլ, ըլէլ և այլն<sup>15</sup>:

բ) է ձայնավորը, որ երկբարբառային ծագում ունի (սերում է ե + յ-ից) և միատեսակ է հնչվել բառի բոլոր դիրքերում (ինչպես՝ էակ, էջ, կէս, պարտէզ, մարգարէ, բազէ) նույնացել է բառամիջյան ե-ին և այլևս չի տարբերվում նրանից, ինչպես՝ հայերէն > հայերեն, ոսկեղէն > ոսկեղեն, սէր > սեր, հանդէս > հանդես, ոսկէ > ոսկե և այլն:

գ) Բառասկզբի ո (օ) ձայնավորը, որ նույն կերպ է հնչվել նաև բառամիջում (օր.՝ բոլոր, գոհար, սովորութիւն և այլն) և բառավերջում (օր.՝ հասո՛ւ > հասցրու, վազեցո՛ւ > վազեցրու և այլն), հետագայում նույնպես երկհնչյունացել է՝ դարձել վո (վօ), ինչպես՝ որդի (= վօրթի), որ (= վօր), ոսկի (= վօսկի), ոխ (= վօխ) և այլն:

Այս կանոնին շեն ենթարկվել ով (= օվ), ովկիանոս = օվկիանոս, ովազիս (= օվազիս), ովան = օվան («ծովային մի գազան»), ովսանճայ = օվսանճա («օրհնության ձայն՝ օրհներգ») բառերը իրենց հնչյունական կազմի՝ ո-ից հետո վ (վեվ) ունենալու պարզ պատճառով:

Բառասկզբի ո (օ)-ն բարբառներում նույնպես տարբեր փոփոխություններ է կրել, ինչպես՝ ողորմել > վօղօրմել, օղօրմէլ, ըղօրմիլ, ուղօրմիլ, վուղօրմիլ, որդի > օրդ'ի, վօրդ'ի, վորդի, վո'րթի, վըէ'րթի և այլն<sup>16</sup>:

դ) Օ ձայնավորը սերելով բաղաձայնին նախորդող ալ երկբարբառից (տե՛ս § § 128—131)՝ ժամանակի ընթացքում նույնացել է բառամիջյան ո (օ)-ին և արդի ուղղագրությամբ նույնկերպ է գրվում, ինչպես՝ ծանաթ > ծանօթ > ծանոթ, նաւել > ճօճել > ճոճել, ալաւս > ահօս > ակոս և այլն:

ե) ՈՒ ձայնավորը, որ ծագում է ո + ւ > ու երկբարբառից և 5-րդ դարում տակավին ինքնուրույն հնչյութային արժեք չէր ստացել (այդ պատճառով իբրև առանձին տառ մեքորայան այբուբենում էլ տեղ չի գտել), ժամանակի ընթացքում բաղաձայնից առաջ և բառավերջում՝ ար-

<sup>15</sup> Բարբառային ձևերի համար տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. 2, Երևան, 1973, էջ 16, 47, 9:

<sup>16</sup> Նույն տեղում, հտ. 3, էջ 557, 577:

դեն մեկ մաքուր ձայնավոր (օր.՝ ուրախ, զարուհ, ջուր, առու, լեզու),  
 իսկ ձայնավորից առաջ վ է դարձել, ինչպես՝ զանգուած>զանգված,  
 կռուել>կռվել, սուին>սվին, սիրուել>սիրվել, ձուածե>ձվածե, լեզուա-  
 նի>լեզվանի և այլն: Ի դեպ, պետք է ասել, որ այդ հիմամբ էլ նոր հա-  
 յերենում վ-ով նոր վանկեր են կազմվում, օրինակ՝ զուարթ>զվարթ=  
 զր+վարթ, նուիրական>նվիրական= նր-վիր-ա-կան, կառուցվածք>  
 կառուցվածք= կա-ռուց-վածք, ուրուական>ուրվական= ուր-վա-կան և  
 այլն:

բ. ԵՐԻՐԱՐԲԱՌՆԵՐԻ ԵՎ ԵՌԱՐԱՐԲԱՌՆԵՐԻ  
 ՊԱՏՄԱԿԱՆ ՀՆՁՅՈՒՆԱՓՈՒՈՒԹՅՈՒՆԸ

§ 216. Հայոց լեզվի զարգացման ընթացքում շատ ավելի մեծ շա-  
 փով պատմական հնչյունափոխության են ենթարկվել գրաբարյան երկ-  
 բարբառներն ու եռաբարբառները: Հնդ որում հայ նոր գրական լեզվում  
 նրանք եթե ընդհանուր առմամբ՝ երկհնչյունների (երկբարբառակերպե-  
 րի), ապա բարբառներում մեծ մասամբ մեկ հնչյունի են վերածվել:

Այսպես՝

ա) -այ երկբարբառը գրական լեզվում բառասկզբում և բառամի-  
 ջում պահպանվել է, անշուշտ, յ-ի խիստ բաղաձայնացմամբ, իսկ բա-  
 ռավերջում կորցրել է դա, հմմտ., օրինակ՝ այսառայս, այնառայն, ձայն-  
 առայն, փայտառփայտ, եղբայրառղբայր, ճառագայրառճառագայր...,  
 առաջ>արքա, երեխայ>երեխա, շղթայ>շղթա, պողոտայ>պողոտա,  
 տղայ>տղա..., գնայ>գնա, մեծացայ>մեծացա, հեռանայ>հեռանա և  
 այլն:

Այ երկբարբառը բառավերջում անփոփոխ է մնացել միայն բայ,  
 ճայ, նայ, վայ միավանկ բառերում՝ դրանց իմաստապես շաղճատվելու  
 պահանջով:

Բարբառներում բառի բոլոր դիրքերում այ-ը մի հնչյունի է վերած-  
 վել այ>ա կամ այ>է փոփոխությանը, օրինակ՝ ճայր>հար//հէր, այս>  
 էս//աս, եղբայր>ախպէր//ախպար և այլն:

Այ-ը այդպիսի փոփոխություն է կրել նաև երբեմնի տղայք (>տղէք  
 >տղէթ), փեսայք (>փեսէթ) և նման այլ ձևերում: Մի քանի բառեր  
 այ>է կամ այ>ա փոփոխությանը անցել են գրական լեզվին, ինչպես՝  
 էլ («Ես էլ քեզ պես ոստ չեկա մի լավ յարի Սայաթ-Նովա», Հովհ.  
 Շիրազ), ալ («Աստղ մըալ ես կերթամ հավելու երկնից», Պ. Դուրյան),  
 վայր>վէր/վար, ցայտկել—ցատկել, դես (<դէս<դայս<ընդ+  
 այս), դեն (<դէն<դայն<ընդ+այն) և այլն:

բ) -Աւ երկբարբառը եթե բաղաձայնից առաջ՝ օ (տե՛ս § 131), ա-  
 պա ձայնավորից առաջ և բառավերջում ավ է դարձել: ինչպես՝ աղա-  
 ւաղել>աղավաղել, աւագ>ավագ, աւազակ>ավազակ, աւել>ավել, ա-

«իւն» > ավյուն, բաւական > բավական, գաւազան > գավազան, հաւանել > հավանել... , ագոաւ > ագոավ, համբաւ > համբավ, լաւ > լավ, հարաւ > հարավ, նաւ > նավ, պառաւ > պառավ և այլն:

գ) -Եւ երկբարբառը մեծ մասամբ վերածվել է երկհնչյունի՝ յա-ի, առանձին բառերում ու բառաձևերում՝ մի հնչյունի՝ ե-ի կամ ա-ի, հմմտ., օրինակ, սեւեալ > սենյակ, վայրկեան > վայրկյան, մատեան > մատյան, համարեա > համարյա, իրեար > իրար, իւրեանք > իրենք, սիրեաց > սիրեց, գործեաց > գործեց, բերեալ > բերել, անցեալ > անցել, մնացեալ > մնացել, գնացեալ > գնացել, փախեար > փախար, փախեաք > փախանք, այլև՝ սիրեա > սիրե > սիրի > սիրիր, վազեա > վազե > վազի > վազիր և այլն:

Եւ երկբարբառը միահնչյունության է վերածվել կենդանի խոսակցական լեզվում և հիմնականում հատուկ է բարբառներին:

դ) -Եւ երկբարբառը, ինչպես Մ. Աբեղյանն է նշել, «բաղաձայնից առաջ գրաբարում արդեն շրջվել է ի (iu) երկբարբառի»<sup>17</sup>, իսկ բառա-

միջում՝ ձայնավորից առաջ և բառավերջում երկհնչյունի՝ -եվ (-և)-ի է վերածվել, ինչպես՝ ալելը > ալիւր > ալյուր, արեն > արին > արյուն, բելը > բիւր > բյուր, գելը > գիւլ > գյուլ, հարբել > հարիւր > հարյուր, մեւ > միւս > մյուս, արեւ > արև, թեթեւ > թեթև, տերեւ > տերև, երեւիլ > երևալ, սեթեւեթ > սեթևեթ և այլն:

ե) -Իւ երկբարբառը բաղաձայնից առաջ բառասկզբում և բառամիջում՝ յու, իսկ բառավերջում իվ է դարձել, ինչպես՝ իւր > յուր, ձիւն > ձյուն, անկիւն > անկյուն, մեծութիւն > մեծություն..., անիւ > անիվ, թիւ > թիվ, ազնիւ > ազնիվ, արծիւ > արծիվ, կոիւ > կռիվ և այլն:

Բարբառներում իւ երկբարբառը ևս վերածվել է մի հնչյունի՝ ի-ի կամ ու-ի, ինչպես՝ ալիւր > ալիւր//ալյուր, արիւն > արին//արուն, ձիւն > ձին//ձուն, հարիւր > հարիւր//հարուր և այլն: Բարբառներ կան, որոնցում ու-ն քմայնանալով՝ ու է արտաբերվում, ինչպես՝ ծոն, սոն, հւրոն, անխալոն:

Ը

Մանրութիւն.— Գրաբարում, հատկապես բառակազմության ժամանակ, բառավերջի իւ-ը շեշտազրկվելով՝ վերածվել է ու-ի, ինչպես՝ ազնիւ > ազնուութիւն—ազնուական—ազնուանալ, հաշիւ > հաշուի—հաշուն—հաշուակից, պատիւ > պատուի (պատուի)—պատուն—պատուասէր—պատուաւոր, ցրիւ > ցրուել (=ցրել)—ցրուած—ցրուական—ցրուիլ և այլն:

զ) -Ոյ երկբարբառը, որի կրած պատմական հնչյունափոխութիւնը լավագույնս է ներկայացրել Մ. Աբեղյանը, 1) «Գրաբարում արդեն բաղաձայնից առաջ արտասանվել է ույ», ինչպես՝ բոյր > բույր, լոյս > լույս, բոյր > բույր, ողջոյն > ողջույն, համբոյր > համբույր, խաւոյկ > խարույկ, ծածկոյթ > ծածկույթ, կապոյտ > կապույտ և այլն. 2) բառավերջում, բա-

<sup>17</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսութիւն, էջ 115:



ցառութիւմը մի քանի միավանկ բառերի (նոյ, խոյ, հոյ), «հին գրական լեզվի մեջ դարձել է պարզ ձայնավոր ո ( $=o$ ) և ալսպես ընդունվել նոր գրական լեզվի մեջ», ինչպես՝ ձուլածոյ > ձուլածո, ներքոյ > ներքո, երեկոյ > երեկո, գազանբարոյ > գազանբարո և այլն. 3) բարբառներում «դարձել է ու, ի, ո (-o) պարզ ձայնավորներից մեկը՝ լուս, լիս, լոս, ֆուր, ֆիւր, ֆուր»<sup>18</sup>, այլև՝ կապուտ, կապիտ, կապոտ (Վանի բարբ.) և այլն:

Այս բոլորից բացի ոյ-ը ու է դարձել ո կամ ո-ա խառն հոլովման պատկանող մի շարք բառերի որոշ հոլովածներում, ինչպես՝ մարդ > մարդոյ > մարդու, սիրել > սիրելոյ > սիրելու, գնալ > գնալոյ > գնալու, թշնամի > թշնամոյ > թշնամու, գինի > գինոյ > գինու > գինու և այլն:

Դրանք ոյ > ու պատմական հնչյունափոխութիւմը առաջ եկած բուն (<բոյն), ուծ (<ոյծ), բուք (<բոյք), անուշ (<անուշը), շուտ (<շոյտ) և այլն ուղիղ բառաձևերի պես (տե՛ս § 209) ընդունվել ու գործածվում են հայ նոր գրական լեզվում:

§ 217. Ժամանակի ընթացքում հոսքաբարբառները ևս պատմական հնչյունափոխության են ենթարկվել.

ա) -եայ հոսքաբարբառը, որ գործածվել է հիմնականում բառավերջում, երկու տեսակ փոփոխություն է կրել. որոշ դեպքերում երկբարբառ՝ եա է դարձել, որն էլ իր հերթին երկհնչյունի՝ յա-ի է վերածվել, ինչպես՝ գործունեայ > գործունեա > գործունյա, բրդեայ > բրդեա > բրդյա, փայտեայ > փայտեա > փայտյա, ֆրիստոնեայ > ֆրիստոնեա > ֆրիստոնյա և այլն. որոշ դեպքերում ե (<ե+ա+յ) հնչյունափոխութիւմը է ( $=ե$ ) է դարձել՝ նույնանալով բառամիջյան ե-ին, ինչպես՝ աղամանդեայ > աղամանդէ > աղամանդե, կաեայ > կաէ > կավե, մարմարեայ > մարմարէ > մարմարե, ֆարեայ > ֆարէ > ֆարե և այլն:

Նկատելի է, որ նման հնչյունափոխության են ենթարկվել մի քանի բառեր դեռ վաղ շրջանում՝ գրաբարում, գործածվելով երկու՝ անհնչյունափոխ ու հնչյունափոխված ձևերով, ինչպես՝ աշտեայ//աշտէ, ափսեայ//ափսէ, զոնեայ//զոնէ (նաև՝ գոնեա), միջօրեայ//միջօրէ, ֆուեայ//ֆուէ և այլն:

Բայածներում հանդիպող եայ հոսքաբարբառը հնչյունափոխվելով՝ ա կամ է (>ե) է դարձել, ինչպես՝ փախեայ > փախայ > փախա, փախեայ > փախաք, թոեայ > թոայ > թոա, թոեայ > թոաք. փախեայ > փախէք > փախեք, թոեայ > թոէք > թոեք և այլն:

բ) -նա հոսքաբարբառը, որ շատ լայն գործածություն չի ունեցել, եօ > յօ (>յօ) հնչյունափոխութիւմը երկհնչյունի է վերածվել, ինչպես՝ եաթն > եօթն > յոթ, արդեաւ > արդեօք > արդոք, ընտանեաւ > ընտանեօք > ընտանյոք, կարծեաւ > կարծեօք > կարծյոք և այլն:

<sup>18</sup> Տե՛ս Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 113:

§ 218. Հայոց լեզվի երկարատև զարգացման ընթացքում պատմական հնչյունափոխության են ենթարկվել նաև մի շարք բաղաձայններ: Այսպես՝

ա) Բառասկզբի յ-ն, որ վաղ անցյալում տարբերվել է հագագային հ (հո)-ից՝ աստիճանաբար արտասանվել է դրա պես և այսօր, ամենևին ոչ պատահականորեն, արտահայտվում է նույն ուղղագրությամբ, օրինակ՝ յաղթանակ > հաղթանակ, յանախ > հաճախ, յատուկ > հատուկ, յարմար > հարմար, յետոյ > հետո, յիմար > հիմար, յոյս > հույս, յունիս > հունիս, յօժար > հոժար և այլն:

բ) Հայերենը նախապես երկու լ է ունեցել՝ 1) նուրբ, որ արտասանվել է «լեզվի ծայրով, ինչպես մեր լ ձայնը», և 2) հաստ կամ թանձրը, որ արտասանվել է «լեզվի հետևի մասով»<sup>19</sup>:

Գնալով, ինչպես Հր. Աճառյանն է մի շարք փաստերով հաստատել, դրանք ավելի են հեռացել իրարից, և վերջնականապես 11-րդ դարում արդեն հաստ կամ թանձր լ-ն ղ է դարձել, հմմտ., օրինակ, այլ—այդ—աղավաղել, այլուր—աղալ, անաղի—անալի (> ալանի), փայլ—փայղ—փաղփաղել, ջիլ—ջիղ, հյուլն (< հիւլէ)—հյուղն (< հիւղէ), թույլ տալ (< թոյլ տալ)—թողնել, մուլ (մլել)—մուղ (մղել), Պլատոն—Պլատոն և այլն:

գ) Հայերենը անցյալում ֆ (= ֆե) հնչյուն չի ունեցել և հին փոխառյալ բառերի մեջ դրա փոխարեն փ կամ հ է գործածել<sup>20</sup>, ինչպես՝ փիլիսոփա, Ափրիկա, հրասախ/փարսախ («շափի միավոր») և այլն:

Ֆ հնչյունը, որ բացակայում է Արցախի (Ղարաբաղի), Գորիսի, Թիֆլիսի, Ազուլիսի բարբառներում, առաջ է եկել միջին դարերում (այբուբենն է մուծվել 11-րդ դ.) ոչ թե օտար լեզուների ազդեցությամբ, այլ հայոց լեզվի պահանջով՝ բարբառային հիմքի վրա: Օրինակ՝ հենց Արարատյան բարբառում «Հ-ն ֆֆ է արտասանվում «ռ»-ից առաջ, ինչպես՝ ֆոտ < հոտ, ֆող < հող, ֆօխ < հոգի, ֆորթ < հորթ»<sup>21</sup>:

Այդպես և ֆ հնչյունը հատուկ է մի շարք (հատկապես՝ «կը» ճյուղի) բարբառների, որոնցից սերելով և ընդհանրական դառնալով՝ այն գործածվում է, իհարկե, հիմնականում փոխառյալ բառերում:

դ) Ի (վյուն կամ հյուն)-ը, որ իբրև երկբարբառի (աւ, իւ, եւ, այլև՝ ու) և եռաբարբառի (ևաւ) բաղադրիչ է գործածվել և իր մեջ թերևս ավելի շատ ձայն է պարունակել, աստիճանաբար կորցրել է իր հնչյութային արժեքը՝ վերածվելով՝ 1) վ-ի բառամիջում՝ ձայնավորից առաջ, և

<sup>19</sup> Տե՛ս Հր. Աճառյան, Ծ՞րբ լ զարձակ Ղ («Հայերեն արձատական բառարան, հտ. 4, Երևան, 1980, էջ 643—644):

<sup>20</sup> Այդ մասին տե՛ս, օրինակ, Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևաբանություն, էջ 8:

<sup>21</sup> Ա. Ղաբիրյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 221:

բառավերջում, ինչպես՝ աւագան>ավագան, խաւար>խավար, հիւանդ>հիվանդ, երեւելի>երևելի..., հարաւ>հարավ, դաւ>դավ, կափաւ>կափավ, աճիւ>անիվ, թիւ>թիվ, արծիւ>արծիվ, արեւ>արև, տերեւ>տերև և այլն. 2) ու-ի՝ բաղաձայնին նախորդող իւ (//ւ) երկբարբառում, ինչպես՝ ւալիւր (//ւալեւր)>ալյուր, սիւն>սյուն, աշբիւր (//աղբեւր)>աղբյուր, փաշուփիւն>քաշություն, դուփիւն>դոփյուն և այլն:

§ 219. Այս բոլորից բացի, որ արտացոլում են գտել ներկայիս ուղղագրութեան մեջ, շատ ավելի մեծ շահով ու ընդգրկմամբ պատմական հնչյունափոխութեան են ենթարկվել պայթական (բ-պ-փ, դ-տ-թ, գ-կ-ֆ) և պայթաշփական (ծ-ծ-ց, զ-ն-չ) հնչյունները:

Մի կողմ թողնելով այն տեղաշարժերը, որ կրել են դրանք հայ բարբառներում (ձայնեղների խլացում կամ շնչեղ խլացում, խուլերի ձայնեղացում), պետք է ասել, որ արևելահայ գրական լեզվում մի շարք դեպքերում (հատկապես բառավերջում և ձայնորդից՝ հետո) բ, գ, դ, ձ, ջ ձայնեղները խլացել և խուլ կամ շնչեղ խուլ են արտաբերվում, հմմտ., օրինակ, բարդ>բարթ, արդար>արթար, մարդ>մարթ, նուրբ>նուրփ, վարդ>վարթ, երգ>յէրթ, երբ>յէրփ, օգուտ>օթուտ, միրգ>միրթ, հարբել>հարփէլ, վերջ>վէրչ, բարձ>բարց, աջ>աչ, օձ>օց, օղ>օթ, թագավոր>թաթավօր, խաբել>խափէլ, առաջ>առաչ, կենդանի>կենթանի և այլն:

Բառեր կան, որոնցում ձայնեղ դ-ն խլանում և խ է արտասանվում, ինչպես՝ աղբյուր>ախպյուր, աղբ>ախպ, եղբայր>յէխպայր, ողբ>վօխպ, աղջիկ>ախչիկ, դեղձ>դէխց և այլն:

Նկատելի է, որ այդպիսի հնչյունափոխութեան են ենթարկվել հիմնականում ժողովրդախոսակցական լեզվում լայնորեն գործածվող բառերը:

Ինչպես հայտնի է, պայթական և պայթաշփական հնչյունները պատմական հնչյունափոխութեան այլ ընթացք են ունեցել արևմտահայերենում: Բարբառային հիմքով պայմանավորված՝ այդտեղ խուլերը վերածվում են ձայնեղների, ձայնեղները՝ շնչեղ խուլերի, «Ուրիշ խոսքով պ, կ, տ, ծ, ճ ձայները հնչվում են իբրև բ, գ, դ, ձ, ջ (b, g, d...), իսկ բ, գ, դ, ձ, ջ ձայները հնչվում են ճիշտ փ, ֆ, թ, ց, չ ձայների պես»<sup>22</sup>, ինչպես, օրինակ՝ պատ>բադ, Պետրոս>Բեդրոս, կով>գով, դանակ>դանադ, գիրք>քիրթ, բազմիլ>փազմիլ, ձագ>ցաք և այլն:

§ 220. Հայոց լեզվի բաղաձայնների կրած փոփոխությունները, անշուշտ, այսքանով չեն ավարտվում: Պատմական հնչյունափոխությունը հնչյունափոխական այնպիսի երևույթ է, որ նաև այլ արտահայտություններ ունի և մի կողմից եթե հայոց լեզվի հեռավոր կյանքի, ապա մյուս կողմից՝ բառերի հնչյունական կազմի և այլ գործոնների ազդեցությամբ

<sup>22</sup> Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Մաս II, Երևան, 1951, էջ 554:

նրանցում տեղի ունեցած այլ փոփոխությունների հետ է կապվում: Իսկ սա ցույց է տալիս, որ հնչյունափոխության երեք տեսակները (շեշտափոխական, ընդհանուր պատմական և փոխազդեցական) ո՛չ թե անջրպետված են իրարից, այլ զանազան թելերով կապված են իրար հետ և միասին ավելի պարզ ու ամբողջական պատկերացում են տալիս հայոց լեզվի հնչյունափոխության ու նրա պատմական զարգացման մասին:

#### ՁԱՅՆՊԱՐՁ ԵՎ ԱՃԱԿԱՆ

§ 221. Հայոց լեզվի պատմական հնչյունափոխությանն են վերաբերում և նրա առանձին տեսակներն են նաև ձայնդարձը և անակներ: Դրանք ավելի հնագույն պատմություն ունեն, գալիս են հնդեվրոպական հիմք լեզվից, գործել, ավարտին են հասել նախազրաբարյան շրջանում և իբրև հետքեր են պահպանվում մի շարք բառերում ու քերականական ձևերում: Եվ թեև թե՛ մեկի և թե՛ մյուսի ուսումնասիրությամբ հիմնականում զբաղվում է պատմահամեմատական լեզվաբանությունը, բայց պետք է ասել, որ նրանք կարևորություն են ներկայացնում նաև ժամանակակից հայոց լեզվի հնչյունափոխական իրողությունները լուսաբանելու տեսակետից:

§ 222. Ձայնդարձը այն հնչյունափոխական երևույթն է, որ տեղի է ունեցել միևնույն արմատի մեջ՝ առաջ բերելով տարբեր արմատներ կամ քերականական ձևեր: Այսպիսով՝ ձայնդարձը երկակի՝ և՛ բառակազմական, և՛ ձևաբանական դեր է կատարել հայոց լեզվում: Ընդ որում դա պահած է եղել «հին ձայնդարձի բոլոր աստիճանները»<sup>23</sup>, որոնք և արտահայտվել են ձայնավորների փոփոխությամբ. այս հիմամբ ձայնդարձը փաստորեն նույն արմատում ձայնավորի կրած հնչյունական փոփոխությունն է: Այդպես են առաջ եկել, օրինակ, հետևյալ տարարմատները՝ բահ (<բահր)—բիր (<բիր), գաղչ—գոլ, գող—գաղել, դեղ («1. Խոտ, 2. Դարման») — դեղին — դեղբ — դեղձան — դեղձն, դալար — դալուկն — դաղձն, զիրկ — զուրկ, խաչ — խոչ — խեչ, խառն — խուռն, կեր — կուր («կոկորդ») — կուր, կուր — կեռ, հետ//յետ//ետ — ոտն, ոտք — յատակ (>հատակ), շեղ — շիլ — շաղիլ, շուր — շիւր, սան — սին — սուն, տիղմ — տիլ — տող. ֆերել — ֆոբել և այլն<sup>24</sup>, նման փոփոխությամբ առաջ եկած քերականական ձևերից են, օրինակ, հարսն — հարսին — հարսամբ — հարսունք, մատրն — մատին — մատամբ — մատունք, կին — կանամբ — կանայք — կանանց, ետու («տվեցի») — տուր — տամ, շուն — շան — շունք — շանց, տուն — տան — տունք — տանց, քոյր — քեռ — քորք — քերց և այլն<sup>25</sup>:

§ 223. Նույն արմատից, թեև ոչ շատ, բաղաձայնի փոփոխությամբ

<sup>23</sup> Հր. Աճառյան, Կիսկատար քերականություն հայոց լեզվի, հտ. 3, Երևան, 1957, էջ 34:

<sup>24</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 33—35:

<sup>25</sup> Տե՛ս Հր. Աճառյան, Կիսկատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, էջ 33—36:

նույնպես նոր բառեր կամ արմատներ են կազմվել, ինչպես՝ ազանել—օթել («գիշերել») — օթևան, արև (< արել) — արեգ (համտ. արեգակն— արեգակ), աղծ—աղա, տոյծ (> տույծ) — տոյգ (տուգանք), ոյծ (> ույծ — ուծ) — առոյգ (> առույգ), պիղծ—պղտոր (> պիղտ + որ), խանդ— խանձ, կոգի—կով և այլն:

Բաղաձայնների կրած այսպիսի փոփոխությունները սովորաբար կոչվում են հնչյունների հերթագայություն:

§ 224. Անականը այն հնչյունն է, որ արմատին ավելանալով՝ առաջ է բերում նույնպես նոր բառեր կամ բառարմատներ:

Ենթադրվում է, որ աճականները նախապես եղել են ամբողջական բառեր կամ բառիկներ, որոնք ժամանակի ընթացքում, սակայն, մաշվել և առանձին հնչյունների են վերածվել<sup>26</sup>: Այստեղից հետևում է, որ աճականը ոչ միայն բառաստեղծական-բառակազմական, այլև հնչյունափոխական երևույթ է, որի գործընթացում, ի տարբերություն ձայնդարձի, առավել մեծ դեր են կատարել բաղաձայնները: Եվ իրո՞ք. փաստերը ցույց են տալիս, որ գրեթե բոլոր բաղաձայնները (թվով՝ 24)<sup>27</sup> բազմազան բառերում իբրև աճական են գործածվել. օրինակ՝ բ-ն՝ դեղը «դեղին», լիբբ, ողբ, սուրբ, ֆարբ «վիշապ օձ», դ-ն՝ օղ «կոշիկ», աբդ «ձև», արդ «այժմ», կենդանի, հոդ (< յօդ), նյարդ, սարդ, օդ, կ-ն՝ բոզկ, բոկ, մեղկ, ոսկբ, տատասկ, փեղկ, ձ-ն՝ անձն (> անձ), առաղձ, գեղձ, դեղձ, դեղձան, փօրձ, մ-ն՝ բարմ, հողմ, մեղմ, յարմ—ար (> հարմար), ջերմ, սերմն, սողմ (սողալ), տամուկ, տարտամ, տիղմ, բ-ն՝ ազդբ, սար («բուրդ»), դիբ (դնել), եգբ, լիբ (լրանալ), լուբ, ծաղբ և այլն բառերում:

§ 225. Առանձին դեպքերում զբաբարում իբրև աճական են գործածվել նաև ձայնավորները՝ դրվելով, օրինակ, որոշ բայերի անցյալ կատարյալի միավանկ ձևերի վրա, ինչպես՝ ետու—ետուր—ետուբ, տես//ետես, հաս//եհաս, ցոյց//եցոյց, թող//եթող, կաց//եկաց, մառ//եմառ, առ//եառ, ած//եած, արկ//եարկ, օծ//եօծ և այլն:

Ընդհանուր առմամբ, սակայն, աճականները բառարմատներին ձուլված, լիովին մթազնած լեզվական տարրեր են և մեզ են ներկայանում իբրև հնչյունների անկման կամ հավելման հնազույն, մեռած արտահայտությունների՝ կապվելով ոչ միայն պատմական, այլև փոխազդեցական հնչյունափոխության հետ:

## ՓՈՒԽԱԳՐԵՑԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆԱՓՈՒՅՑՈՒՆ

§ 226. Փոխազդեցական է կոչվում այն հնչյունափոխությունը, որը տեղի է ունենում բառի մեջ հնչյունների փոխադարձ ազդեցությամբ: Դա

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 61:

<sup>27</sup> Այդ մասին տե՛ս նույնպես նույն տեղում, էջ 62—64:

ևս հնչյունափոխական բարդ երևույթ է, որը պայմանավորվում է զանազան գործոններով և դրանց համապատասխան՝ տարբեր դրսևորումներ է ունենում:

Փոխազդեցական հնչյունափոխության տարբեր դրսևորումները կամ տեսակներն են՝ ա) հնչյունների անկումը կամ կորուստը, բ) հնչյունների հավելումը կամ ավելացումը, գ) հնչյունների ետևառաջությունը կամ դրափոխությունը, դ) հնչյունների առնմանումը կամ առնմանությունը, ե) հնչյունների տարեմանումը կամ տարեմանությունը, զ) հնչյունների ամփոփումը:

*Քննենք դրանք առանձին-առանձին:*

#### ա. ԱՆԿՈՒՄ

§ 227. Ինչպես հայտնի է, հայերեն բոլոր բառերը չէ, որ իրենց հնչյունական կազմով անփոփոխ են մնացել: Բառեր կան, որոնք ժամանակի ընթացքում զրկվել են մեկ կամ մեկից ավելի հնչյուններից:

Այդ երևույթը, որ հնչյունների անկում (կորուստ) է կոչվում, առանձնապես հատուկ է կենդանի խոսակցական լեզվին ու բարբառներին, որոնցից և բազմաթիվ բառեր նման ձևով անցել են գրական լեզվին և դարձել նրա սեփականությունը:

§ 228. Բառի կազմում անկման են ենթարկվել և՛ բաղաձայնները, և՛ ձայնավորները բոլոր դիրքերում՝ սկզբում, միջում և վերջում: Միայն նկատելի է, որ՝ ա) հնչյունի անկումը տեղի է ունեցել առավելապես բառամիջում ու բառավերջում և բ) ավելի շատ անկման են ենթարկվել բաղաձայնները, քան ձայնավորները:

#### Բաղաձայնների անկումը բառի կազմում

§ 229. Խիստ սակավաթիվ են այն բառերը, որոնց կազմից սկզբի հնչյունը կամ հնչյուններն են դուրս ընկել, ինչպես՝ սկեսուր > կեսուր, կնքավոր (<կնքաւոր>) > քավոր, հատակ (<յատակ>) > առակ, այլև՝ Մնացական > Ցական, Հովհան > Օհան և այլն:

Դա, որ հատուկ է հիմնականում ժողովրդախոսակցական լեզվին, բացատրվում է սկզբնահնչյունի անկմամբ բառի ու նրա իմաստի աղճատում առաջ շրբերելու հանգամանքով:

Եվ, ընդհակառակն, բավական շատ են այն բառերը, որոնց միջի բաղաձայնն է դուրս ընկել, ինչպես՝ արժան > աժան/լէժան, խորհ(ել) > խոհ, քարշել > քաշել, խարշ(ել) > խաշ(ել), շարժք > շաժք > ժաժֆ, տարժանելի > տաժանելի, չրաղաց > չաղաց, չրաղացպան > չաղացպան, պահս > պաս, տապք > տաֆ, թմբրել > թմրել, թամբք > թամֆ, վարդապետ > վարդպետ > վարպետ և այլն:

Կան բառեր, որոնցում բաղաձայն հնչյունի անկումից բացի նաև ձայնավորի անկում կամ այլ հնչյունափոխություն է տեղի ունեցել, ինչպես՝ ընդ+բունել>ըն+բունել>ըմբունել, ընդ+գճել>ըն+գճել>ընկնել, ընդ+դիր>ըն+դիր>ընտիր, հրամայեցեք (<հրամայեցէք>)>համեցեֆ (այլև՝ համմե), առնել>արնել>այնել>անել>ընել, տարգալ>տրգալ>, դրգալ>դգալ>գդալ և այլն:

Նշենք, որ եթե բարբառներում՝ շատ<sup>28</sup>, ապա գրական լեզվում քիչ բաղաձայններ (մեծ մասամբ՝ ր-ն, որոշ դեպքերում՝ հ-ն, դ-ն, ք-ն) են անկման ենթարկվում: Բավական շատ են նաև այն բառերը, որոնց կազմից վերջին բաղաձայնն է դուրս ընկել: Գրեթե բոլոր՝ և վերջնահանգով բառերը գաղտնավանկի դժվար արտասանելիության պատճառով ժամանակի ընթացքում կորցրել են այն, ինչպես՝ դուռն>դուռ, ձուկն>ձուկ, արեգակն>արեգակ, շուրթն>շուրթ, կայծակն>կայծակ, սկիզբն>սկիզբ, ուսումն>ուսում, բուժումն>բուժում, ծագումն>ծագում, այծյամն>այծյամ և այլն:

Նկատելի է նաև և վերջնահնչյունի անկումը Ե ձայնորդից հետո՝ աշխարհ, խոնարհ, ճանապարհ, շնորհ բառերում, որոնցում գրվում, բայց չի արտասանվում, ինչպես՝ աշխար, խոնար, ճանապար, շնոր: Ավելացնենք, որ հ-ի անկմամբ ճանապարհ բառը բարբառներում այլազան փոփոխություններ է կրել և ճանապարհ—ճանապար—ճանապա—ճանպա—ճամբա ընթացքով ի վերջո ճամփա է դարձել, որ իբրև բառային տարբերակ նրանից զատ գործ է ածվում ժամանակակից հայ գրական լեզվում:

§ 230. Վերջնաբաղաձայնի անկում է տեղի ունեցել նաև որոշ քերականական ձևերում: Ժխտական դերբայը, որով պայմանական եզանակի ժխտական խոնարհման բայաձևերն են կազմում, առաջ է եկել անորոշ դերբայից՝ լ-ի անկմամբ, ինչպես՝ շեմ կարդալ>չեմ կարդա, շենք կարդալ>չենք կարդա, շէի կարդալ>չէի կարդա, շէինք կարդալ>չէինք կարդա, շես խոսիլ>չես խոսի, շեք խոսիլ>չեք խոսի և այլն:

Այդպես և և վերջնահնչյունը վա (<վան<ուան<եան) հոլովման պատկանող բառերի, այլև աղջիկ բառի որոշ թեք հոլովաձևերում է դուրս ընկել, ինչպես՝ օր>օրվան>օրվա, ամիս>ամսվան>ամսվա, գիշեր>գիշերվան>գիշերվա, աղջիկ>աղջկան>աղջկա և այլն:

### Ձայնավորների անկումը բառի կազմում

§ 231. Ձայնավորների անկումը, որ տեղի է ունեցել նույնպես բառակազմում, բառամիջում և բառավերջում, զգալապես տարբերվում է բաղաձայնների անկումից: Փոխազդեցական լինելով՝ այն միաժամանակ

<sup>28</sup> Այդ մասին տե՛ս, օրինակ, Ն. Անադյան, Վանի բարբառը, Երևան, 1952, էջ 98—այլև՝ մեր «Գորիսի բարբառը», Երևան, 1975, էջ 110—112:

կապվում է շեշտափոխական ու պատմական հնչյունափոխության հետ և այդ պատճառով էլ բառասկզբում և բառավերջում խիստ հազվադեպ, իսկ բառամիջում, ընդհակառակն, հաճախ է հանդիպում:

Ըստ այդմ էլ՝

ա) Բառասկզբի ձայնավորի անկմամբ են առաջ եկել մեծ մասամբ բարբառային որոշ բառեր ու ձևեր, ինչպես՝ դես (<դէս<դայս<ընդ+այս), դեն (<դէն<դայն<ընդ+այն), դունչ (<ընդ+ունչ), դորդ (<ուղ-ղորդ<ուղիդ+որդ), քացի (<աքացի), դել տալ (<դէլ<դայլ<ընդ+այլ) և այլն:

բ) Բառավերջի ի ձայնավորի անկմամբ նախավոր արժուի, կարասի, պանդոկի, պատասխանի, հիւսիսի բառերը դարձել են արժիվ (<ար-ծիւ), կարաս, պանդոկ, պատասխան, հյուսիս, որոնք այդպես էլ գործածվել են անգամ հետին գրաբարյան շրջանում:

գ) Բառամիջում ավելի շատ ենթակա լինելով շեշտի ազդեցության՝ ձայնավորները մի շարք դեպքերում են դուրս ընկել բառի կազմից:

Բազմաշատ փաստերը ցույց են տալիս, որ ձայնավորի անկման են ենթարկվել՝

1) Գրաբարյան պատճառական բայերը, ինչպես՝ ծառայեցուցանել > ծառայեցնել, վազեցուցանել > վազեցնել, զգացուցանել > զգացնել, խաղացուցանել > խաղացնել, մեծացուցանել > մեծացնել, փախուցանել > փախցնել, հասուցանել > հասցնել և այլն:

Այսպիսի բայերում ընկել են ու և ա ձայնավորները, իսկ երկու ց-երի դեպքում դրանց միացում է տեղի ունեցել:

2) Գրաբարյան -ան + ալ-ով կազմված բայերը, ինչպես՝ անցանել > անցնել, ելանել > էլնել, հասանել > հասնել, գտանել > գտնել, մտանել > մտնել, անկանել > ընկնել, մեռանել > մեռնել, բուսանել > բուսնել և այլն: Այսպիսի բայերում էլ ընկել է ա ձայնավորը, որպիսի գործընթացը վաղուց է սկսել և իր արտահայտություններն ունի միջին հայերենում: Որոշ բայերում ամբողջ -ան ածանցն է դուրս ընկել, ինչպես՝ սպանանել > սպանել (արևատահայերենում՝ սպաննել), ծնանել > ծնել, սկսանել > սկրսել, շիջանել > շիջել և այլն:

3) Իրենց կազմում երկու միատեղակ ձայնավոր ունեցող որոշ բառեր, ինչպես՝ բաղանիփ—բաղնիփ, պարապել—պարպել, հավասար—հավսար, պատառել—պատռել, լալկան—լալկան, առաջև—առջև, սատակել—սատկել, համարել—համրել և այլն:

Բառամիջում, ինչպես օրինակներից էլ կարելի է նկատել, ավելի շատ ա ձայնավորն է հապավվել: Նկատելի է նաև, որ մի շարք բաղադրյալ (բարդ, ածանցավոր) բառերում այն իբրև հոդակապ է գործածվել, և որի անկմամբ էլ նոր բառեր են առաջ եկել, ինչպես՝ բանավոր—բանվոր, անցավոր—անցվոր, հրաձիգ—հրձիգ, փարահատ—փարհատ, այլև՝ փողահան—փղհան, խրատատու—խրատու և այլն: Այլ՝



■ (•) *ձայնալորի անկման լավագույն օրինակ են կոտոր արմատից ալ-լազան փոփոխությունը առաջ եկած կոտորատել, կտորատել, կտորեմել, կտորատել, կտրել, կտրեմել, կտրեմել, կտր (ընկնել) բառերը:*

բ. ՀԱՎԵԼՈՒՄ

§ 232. Հավելումը հնչյունի անկման հակառակ երևույթն է, որ, սակայն, իր արտահայտություններով զգալապես զիջում է նրան և, բնականաբար, հանդիպում է ոչ շատ բառերում ու քերականական ձևերում: Իսկ դա, անշուշտ, բացատրվում է նրանով, որ լեզուն ընդհանրապես խուսափում է բառերի հնչյունական կազմի մեծացումից և առավելագույնս մեկ հնչյունի ավելացում է թույլատրում:

Այսպես՝

ա) Որոշ բառերի սկզբում ավելացել է հ, ինչպես՝ ազանել > հազանել, անդ > հանդ (հմմտ. հանդամաս), արբել > հարբել, ունդ > հունդ, որթ > հորթ, այլև՝ ալետու > հալետու, ապա > հապա:

բ) Որոշ բառերի վերջում ավելացել է ր, ինչպես՝ ցած > ցածր (բարձր բառի ազդեցությամբ), եղր (մեղր բառի ազդեցությամբ՝ եղր—մեղր), բ, ինչպես՝ բեմ—բեմբ (հմմտ. բեմբասաց), պատշգամ և պատշգամբ:

§ 233. Հնչյունի հավելում է տեղի ունեցել նաև որոշ քերականական ձևերի վերջում. մարդ բառի հին հայերենի մարդկան հոգնակի հոլովածին ավելացել է ց՝ մարդկանց, և խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականի -եա-ով ձևերը եա > ե > ի հնչյունափոխական ընթացքով վերջում ր են ստացել և այդպես էլ ամրակայվել նոր զրական լեզվում, ինչպես՝ սիրեա > սիրե > սիրի > սիրիւ, վազեա > վազե > վազի > վազիւ:

Այդպես և վերջում ր է ստացել նաև պատճառական բայերի եզակի հրամայականը՝ ենթարկվելով միաժամանակ դրափոխության, ինչպես՝ մեծացուցանել → մեծացո՛ւ—մեծացո՛ւ—մեծացո՛ւր—մեծացրո՛ւ, վազեցուցանել → վազեցո՛ւ—վազեցո՛ւ—վազեցո՛ւր—վազեցրո՛ւ, զգացուցանել → զգացո՛ւ—զգացո՛ւ—զգացո՛ւր—զգացրո՛ւ և այլն<sup>29</sup>:

§ 234. Որոշ բառերի ու քերականական ձևերի միջում էլ և է ավելացել, ինչպես, օրինակ՝ արտասուլ > արտասուլք > արտսուլք > արտհր-սուլք > արցունք, մեխ > մեխք, կանայք > կանաց > կանանց: Նմանակու-թյամբ (անալոգիայով) և են ստացել նաև սահմ. եղանակի անցյալ անկատարի և անցյալ կատարյալի հոգնակի թվի առաջին դեմքի ձևերը, ինչպես՝ սիրեաք—սիրեիք, զնայաք—զնայիք, սիրեցաք—սիրեցիք, զը-նացաք—զնացիք և այլն:

§ 235. Հավելումը ավելի շատ գործածվում է բարբառներում՝ արտահայտվելով ինչպես հիշյալ, այնպես էլ այլ հնչյուններով. օրինակ-

<sup>29</sup> Տե՛ս այդ մասին Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 102:

ներ՝ կանաչ>կանանչ, նանաչ>նանանչ («է՛յ կահանչ ախպեր, է՛յ ճանանչ ախպեր, Արի՛, քեզ հետ բեր Արևի շողեր», Հովհ. Քումանյան), ամաչ>ամանչ, մեծ>մեմծ (— մեմծ շհասություն կա մեջը», Պ. Պրոտշյան), փիթ>փինթ («... քնթիդ ծերին տնկեցիր հա», Պ. Պրոտշյան), կամաց—կամանց, ափ+ուռ—հափուռ, մզել—մրզել, յունուար>հունվար>հունրվար (փետրվար բառի ազդեցությամբ), ծանր>ծանդր, մանր>մանդր, քոնիր>քունդիր («... կրակ արեց, որ թունդիրը վառի», Խ. Արովյան), նմել—նմրել («... էնքան զրից արեց կամ աչքերը ճմբեց, մինչև խալխը մի քիչ շատացավ», Խ. Արովյան), համարք>համբարք («— էլ թիվ ու համբարք չկա», Պ. Պրոտշյան) և այլն:

Այդպես և հնչյուն է հավելվում նաև ձայնավորով սկսվող բառերի կրկնություններ կազմված հարադրական բարդություններում, որոնք նույնպես հիմնականում հատուկ են ժողովրդախոսակցական լեզվին ու բարբառներին, ինչպես՝ ավել—մավել, էծան—մէծան, օրենք—մօրենք, ուտել—մուտել, աման—չաման, առակ—պառակ և այլն:

#### գ. ԴՐԱՓՈՆՈՒԹՅՈՒՆ

§ 236. Դրափոխությունը (հուն. մետաթեզիս), որ անվանվում է նաև հնչյունների ետևառացություն (Մ. Աբեղյան), տեղափոխություն (Հր. Աճառյան), հնչյունափոխական այն երևույթն է, երբ բառի մեջ ալ տասանական ինչ-ինչ գործոններով պայմանավորված՝ որոշ հնչյուններ փոխում են իրենց տեղը՝ ընկնելով ետ կամ առաջ: Դրափոխությունը տեղի է ունենում բառի բոլոր դիրքերում՝

ա) Սկզբում, ինչպես՝ խստոք>սխտոք, ձգել>զծել>զցել, տարգալ>տրգալ>դրգալ>դգալ>գդալ, նման>մնան (բրբ.), լվացք>վլացք (բրբ.) և այլն:

բ) Միջում, ինչպես՝ կպպետ>կարպետ, կոպղէք>կոդպէք, անաղի>անալի>ալանի, բանալի>բալանի (բրբ.), դատարկ>դարտակ (բրբ.), աշխարհ>ախշար (բրբ.), աշխատել>ախշատել (բրբ.), բաշխել>բախշել (բրբ.), հարյուր>հայրուր (բրբ.), ականջ>անկանջ (բրբ.) և այլն:

գ) Վերջում, ինչպես՝ արմուկն>արմունկ, կրուկն>կրունկ, մեղր>մեղդ (բրբ.), քիկն>քինկ (բրբ.), այլև՝ մեծացուր>մեծացրու, վագեցուր>վագեցրու, խաղացուր>խաղացրու և այլն (տե՛ս § 233):

§ 237. Ինչպես օրինակներն են ցույց տալիս, դրափոխությունը հիմնականում հատուկ է խոսակցական լեզվին ու բարբառներին: Եվ իրո՞ք եթե գրական լեզվում այն հատուկենտ բառերում (կարպետ, խստոք, զցել, ճկել...) և պատճառական բայերի եզակի հրամայականում, ապա դրանցում, ընդհակառակն, շատ բառերում ու ձևերում է արտահայտվում: Ընդ որում դա տեղի է ունենում որոշ օրենքներով, ըստ որոնց էլ գերազանցապես բաղաձայնները և դրանցից էլ հատկապես ն, ր ձայ-

նորդներն են հնթարկվում դրափոխության, օրինակ՝ «... իմացողն իմացավ ու անկաջի տակն էլ բալբի թե քորեց» (Խ. Աբովյան), «Թիեկը տըված քնել էր» (Հովհ. Թումանյան), «... տունդ կմնա դարտակ» (Մ. Նալբանդյան), անձեւ>անձվեւ, սովորեցնել>սորվեցնել «... գրելը սորվեցնում է ճշտութուն» (Մ. Նալբանդյան), փիփերդ>փիրփեա և այլն:

Այդպես և շատ հաճախ դրափոխվում են շխ և խշ հնչյունները բառամիջում, հմմտ., օրինակ, աշխատանք>ախշատանք, աշխարհ>ախշար, իշխան>իխշան, Աշխեն>Ախշեն և նախշ>նաշխ, նախշուն>նաշխուն, Բախշյան>Բաշխյան և այլն: Կան դեպքեր, երբ բաղաձայնը և ձայնավորն են փոխում իրենց տեղերը, օրինակ՝ սպիտակ>սիպտակ («Գրի սեն ու սիպտակը հո, էսպես տեղը, տերտերներն էլ բռանց էին ջոկում», Խ. Աբովյան), Մարիամ>Մարյամ>Մալրամ, այլև՝ աշուն>ալուն, ալուր>ալուր:

§ 238. Բառերի մեջ, ինչպես դարձյալ օրինակներն են ցույց տալիս, դրափոխությունը ճիշտ միակերպ չի տեղի ունենում. ա) բառեր կան, որոնցում ուղղակի կից հնչյուններն են դրափոխվում, օրինակ՝ ձգել>զցել, խստոր>սխտոր, լվացք>վլացք, արմուկ>արմուկ և այլն. բ) բառեր կան, որոնցում իրար ոչ կից հնչյուններն են փոխում իրենց տեղերը, օրինակ՝ բանալի>բալանի, անալի>ալանի, կուն (<գուն)>նուկ («... որոնք նուկ կու տալին իրենց մեջքը», Համաստեղ), պուտ>տուպ (բրբ.՝ տոպ «կակաշ») և այլն. գ) բառեր էլ կան, որոնցում հնչյունը վերջին վանկից տեղափոխվում և հանդես է գալիս նախորդ վանկի բաղաձայնից առաջ: Այս դեպքում հնչյունը նախասությունմբ հաճախ պահպանվում է նաև իր տեղում, ինչպես՝ ականջ>անկաջ>անկանջ, զոֆանջ>զոնֆաշ>զոնֆանջ, այլև՝ կամուրջ>կարմուրջ>կարմուրջ:

Սա ցույց է տալիս, որ կան բառեր, որոնք դրափոխության հետ մեկտեղ նաև այլ (անկում, հավելում, առնմանում, տարնմանում և այլն) հնչյունափոխության են ենթարկվում: Փետուր բառն, օրինակ, տեփուր>թեփուր հնչյունական փոփոխությամբ դարձել է թեպուր//թեփուր, որից կազմվել են մի շարք բառեր, որոնք գործածվում են նաև գրական լեզվում, ինչպես՝ թեպրել//թեփոել, թեպրահան, թեպրին տալ («Նոր մորթած հավը ինչպես է թեպրին տալիս» Ղ. Աղայան), թեպուտել, թպրտալ («Իսկ տղան նրա գրկի մեջ թպրտում է»), թպրտոց («Մարդը ժպտաց աղավնիների թպրտոցի վրա», Ա. Բակունց) և այլն:

#### դ. ԱՌՆՄԱՆՈՒՄ

§ 239. Առնմանումը (ասիմիլյացիա) հնչյունափոխական այն երեվույթն է, երբ բառի մեջ մի հնչյուն ազդելով մի այլ հնչյունի վրա՝ մոտեցնում կամ նմանեցնում է իրեն: Ըստ այդմ էլ այն լինում է թերի և լիակատար, առաջընթաց (պրոգրեսիվ) և ետընթաց (ռեգրեսիվ):

§ 240. Առնմանումը թերի է, երբ բառի մեջ մի հնչյուն ազդելով մի այլ հնչյունի վրա՝ ոչ թե նմանեցնում, այլ որևէ հատկանիշով (ձայնեղությամբ կամ խլությամբ, արտասանության տեղով, եղանակով և այլն) մոտեցնում է իրեն: Ընդ×բռնել>ընդբռնել բառն, օրինակ, դ-ի անկումով դարձել է ընբռնել, իսկ սա էլ ըմբռնել և—բ>մ+բ թերի առնմանմամբ. այդպես և բ-ի ազդեցությամբ և-ն մ է դարձել մի խումբ բառերի գործիականի ձևերում, ինչպես՝ սովորութեանը>սովորութեամբ>սովորությամբ, ուրախությամբ, զգացմամբ (<զգացմանը), առյամբ, անձամբ, մասամբ, հիմամբ և այլն:

Մի այլ օրինակ. զվռել նախավոր ձևում փ շնչեղ խուլի ազդեցությամբ գ-ն զրկվել է ձայնեղությունից և վերածվելով ս-ի՝ մոտեցել նրան:

§ 241. Առնմանումը լիակատար է, երբ բառի մեջ մի հնչյուն ազդելով մի այլ հնչյունի վրա՝ ամբողջապես նույնացնում է իրեն: Այդպես են առաջ եկել, օրինակ, ժույծ (<ժոյժ<զոյժ<զ+ոյժ), բոբիկ (<բոկ+իկ), ցրցամ (<ջրցան), նանիկ (<հանիկ), ջաղչպան (<ջաղացպան, արևմտահայերենում) բառերը:

§ 242. Ինչպես թերի, այնպես էլ լիակատար առնմանումը կարող է լինել առաջընթաց և ետընթաց:

Առնմանումը առաջընթաց է, երբ նախորդ հնչյունն է ազդում հաջորդի վրա և մոտեցնում կամ նմանեցնում իրեն, ինչպես՝ բոբիկ<բոկիկ, ձուազեղ>ձվազեղ>ձվածեղ (>ձվածեղ), ի գրաս գալ>գրաս գալ>գրագ, հին՝ մնամ<մնանեմ, հին՝ զարմանամ>զարմանանեմ, այլև ամպ>ամբ, բնկեր>բնգեր և այլն:

Առնմանումը ետընթաց է, երբ հակառակն է տեղի ունենում՝ հաջորդ հնչյունն է ազդում նախորդի վրա և մոտեցնում կամ նմանեցնում իրեն: Նկատելի է, որ բառերի մեծ մասում հենց այդպիսի առնմանում է լինում, ինչպես՝ ծանաչել>անաչել, գօղել (<զ+թողել)>սփողել անբարիշտ > ամբարիշտ, փաշութեանը > փաշութեամբ > փաշությամբ, շարժ<ժարժ, ցրցամ<ջրցան և այլն:

§ 243. Առնմանումը տեղի է ունենում թե՛ իրար կից և թե՛ իրարից հեռու, բայց միաժամանակ ինչ-ինչ առնչություն կամ ընդհանրություն ունեցող բառերի միջև: Այդ պատճառով այն առանձնապես չի փոխում բառերի հնչյունական տեսքը և ավելի լայնորեն է գործածվում զրական լեզվում:

Բայց կան, իհարկե, մի շարք բառեր, որոնցում առնմանումը բացարձակապես բարբառային բնույթ է կրում, ինչպես՝ ուսուցիչ>ուշուշիչ, աչք>աշկ, փաչք>փաշկ, ոտներ>ոններ, մատներ>մաններ, թուղթ>թուլթ, աստիճան>աշտիճան, բանալիք>բալանիք>բալնիք>բալլիք և այլն:

§ 244. Բառի մեջ, սակայն, ոչ միայն բաղաձայնները, այլև ձայնավորներն են ազդում իրար վրա և առնմանվում: Այդպիսի առնմանու-

մը, որ նաև ձայնավորների ներդաշնակութուն է կոչվում, սովորական է բարբառներում, իսկ գրական լեզվում խիստ հազվադեպ է պատահում, *ինչպես՝* յանուար > յունուար > հունվար, երախայ > երեխա, փիլիսոփա > փիլիսոփա, գոռիս > գոռիս («իշամեղու»), հուն. երգասիա > արգասի (f):

§ 245. Այսպիսով՝ ակներև է, որ առնմանումը նույնպես հնչյունափոխական բարդ երևույթ է և տարբեր դեպքերում տարբեր դրսևորումներ է ունենում: Ընդ որում նկատելի է, որ բառեր կան, որոնցում նրա հետ կամ նրանից զատ նաև այլ հնչյունափոխություններ (շեշտափոխական, պատմական, անկում, դրափոխություն, տարնմանում և այլն) են տեղի ունենում: Սկիզբ բառն, օրինակ, առաջ է եկել սկիամն-ից *ս*→*զ* (սկիզմն), *մ*→*բ* (սկիզբն), *ն*→*օ* (սկիզբ), ձվածեղ բառը՝ *զ*→*ծ* (ձուածեղ), *ծ*→*ծ* (ձուածեղ), ու > վ (ձվածեղ), գղալ բառը՝ տարգալից՝ տրրգալ > դրգալ > դգալ > գղալ այլազան հնչյունական փոփոխությունների ճանապարհով: Վերջապես հարկ է նշել, որ կան դեպքեր, երբ բառն է ազդում բառի վրա և դա ինչ-որ շափով մոտեցնում կամ նմանեցնում իրեն, *ինչպես՝* սեպտեմբեր—սեկտեմբեր (հոկտեմբեր-ի ազդեցությամբ), հունվար—հունրվար (փետրվար-ի ազդեցությամբ), օրական—օրեկան, ամսական—ամսեկան (տարեկան-ի ազդեցությամբ), որոնք, սակայն, մերժելի են գրական լեզվի համար:

#### Կ. ՏԱՐՆՄԱՆՈՒՄ

§ 246. Տարնմանումը (դիսիմիլյացիա) առնմանման հակառակ երեվույթն է, երբ բառի մեջ մի հնչյուն ազդելով նույնատիպ կամ հարաբերակից մի այլ հնչյունի վրա՝ հեռացնում է իրենից, օրինակ՝ շունչ > սունչ, շրջան > սրջան, ծածկել > ծասկել (> տասկել), խաղող > հաղող > հավող, բարբառ (< բառ + բառ), զրզիռ (< գիռ + գիռ), ամբար > անբար, ամրիոն > անրիոն, բամբակ > բանբակ, բարձր > բանձր, ամբողջ > անբողջ, Սամվել > Սանվել, Սմբատ > ՄԷբատ և այլն:

§ 247. Տարնմանումը հիմնականում հատուկ է խոսակցական լեզվին ու բարբառներին: Գրական լեզվում այն գործուն չէ և հանդիպում է գլխավորապես կցահյան կրկնավոր բարդություններում և այլ կարգի հատուկեանտ բառերում, *ինչպես՝* քրքիռ, մրմուռ, բարբառ, սարսուռ, կարկառ (< կառ + կառ), կսկիծ (< կիծ + կիծ), կասկած (< կարծ + կարծ), կուչ (< գուն «ծունկ»), համտ. նաև հուկ—կուռ—գուն:

Վաղ անցյալում տարնմանում է տեղի ունեցել բայերի ստորադասական եղանակի երկրորդ ապառնիի ցոյական հիմքով ձևերում, ուր երկու ց-երից նախորդը հաջորդի ազդեցությամբ *ս* է դարձել, օրինակ՝ գրեսցես (< գրեց + ցես), գրեսցէ (< գրեց + ցէ), գրեսցուք (< գրեց + ցուք), գրեսցեն (> գրեց + ցեն), մնասցես (> մնաց + ցես), մնասցէ (>

մնաց + ցէ), մնացուի (<մնաց + ցուի), մնացեն (<մնաց + ցեն) և այլն:

§ 248. Առնմանման պես տարնմանումը ևս լինում է առաջընթաց և ետընթաց, որոնցից այս դեպքում նույնպես գերիշխում է երկրորդը: Եվ իսկապե՛ս. փաստերը ցույց են տալիս, որ տարնմանումը մեծ մասամբ տեղի է ունենում ինչպես անմիջապես կից, այնպես էլ ոչ կից նախորդ հնչյունի վրա հաջորդ հնչյունի ազդեցութեամբ: Շրթնային ք-ի ազդեցութեամբ դրան անմիջապես նախորդող շրթնային մ-ն հետանալով նրանից՝ ն է արտասանվում, օրինակ՝ ամբիոն > անբիոն, ամբողջ > անբողջ, ամբար > անբար, բամբակ > բանբակ, Սմբատ > Սնբատ և այլն բառերում. իսկ, ասենք, գրգիռ, բարբառ, մրմուռ և նման բառերում էլ հաջորդ ո-ի ազդեցութեամբ դրան անմիջապես ոչ կից ո-ն տարնմանվել և դարձել է ր:

§ 249. Ինչպես առնմանումը, այնպես էլ տարնմանումը միշտ շէ, որ ուղղակիորեն կամ ուղղագծորեն է արտահայտվում: Բառեր կան, որոնցում այն կատարվում է այլ հնչյունափոխություններից (շեշտափոխական, անկում, դրափոխություն) հետո և կամ՝ նրանց հետ միաժամանակ, հմմտ., օրինակ, ձուազեղ > ձուաձեղ > ձվաձեղ > ձվածեղ, բոկիկ > բոբիկ > բոպիկ, թիռ + թիռ > թոթիռ > բոթիռ, կարծ + կարծ > կածկած > կասկած և այլն:

Տարնմանումը ունի և մասնավոր արտահայտություններ. առանձին դեպքերում տարնմանվում են նաև ձայնավորները, ինչպես՝ ցեբեկ—ցոբեկ, բարձրաբարձ—բարձրաբեձ, աղջամաղջ—աղջամուղջ, սառ + սառ > սառսառ > սարսառ > սարսուտ և այլն:

Դա գրական լեզվում եթե հազվադեպ, ապա բարբառներում շատ սովորական երևույթ է, ինչպես՝ երեխ > իրեխ, շերեփ > շիրեփ, խորովել > խրորովել և այլն:

#### դ. ԱՄՓՈՓՈՒՄ

§ 250. Ամփոփումը (հապուղոգիա) այն երևույթն է, երբ բառի միջից դուրս է ընկնում կից երկուական կամ մեկական հնչյուններից մեկը, ինչպես, օրինակ՝ հասարակակարգ > հասարակարգ (դուրս է ընկել մի կա-ն), տավարաբած > տավարած (դուրս է ընկել մի առ-ը), օրոբան (<օրօբան) > օրբան (դուրս է ընկել մի օ-ն), մեֆենայաբար—մեֆենաբար (դուրս է ընկել մի ա-ն՝ ձայնակապի հետ միասին), հլուբյուն > հլուբյուն (դուրս է ընկել մի ու-ն), անձնանվեր > անձնվեր (դուրս է ընկել մի ն-ն ա հոդակապի հետ միասին) և այլն:

§ 251. Ամփոփումը փաստորեն հնչյունի անկման մի տարատեսակ է, որի դեպքում այն տեղի է ունենում միանման հնչյունների կամ վանկերի փոխադարձ ազդեցութեամբ ու ամփոփմամբ: Բայց դա էլ իր հեր-

թին ճիշտ նույն բնույթը չի կրում և արտահայտվում է մի քանի կերպ.

ա) Բառեր կան, որոնցում հապավվում է միանման երկուական հնչյուններից մեկը, ինչպես՝ աշխարհ + ա + հայացք > աշխարհահայացք > աշխարհայացք, կինամոմոն > կինամոն, հասարակակարգ > հասարակարգ, Մարմարաշեն > Մարմաշեն, Ցուլակկերտ > Ցուլակերտ, բազմակակալ > բազմակալ, երասանակ + ա + կալ > երասանակակալ > երասանակալ, եղեբերգ (< եղեր + երգ >) > եղերգ, օրոցոց > օրոց և այլն:

բ) Բառեր կան, որոնցում հապավվում է երկու ձայնավորներից մեկը (ա-ի դեպքում յ ձայնակապի հետ միասին), ինչպես՝ արեղայական > արեղական, ընծայատուրություն > ընծատուրություն, մեֆենայաբար > մեֆենարբար, մեֆենայացում > մեֆենացում, փեսայացում > փեսացում, չուխաչագետ > չուխագետ, բեկնածություն > բեկնածություն, ճլուղություն > ճլուղություն, հոգաբարձություն > հոգաբարձություն և այլն:

գ) Բառեր կան, որոնցում հապավվում է միանման հնչյուններից մեկի մի՝ սովորաբար ձայնավոր հնչյունը, ինչպես՝ օրոցան > օրան, լավական > լավան, ծոժոժակ > ծոժակ և այլն:

դ) Բառեր կան, որոնցում հապավվում են երկու կամ ավելի հնչյուններ ներգործող որևէ հնչյունի ազդեցությամբ կամ պարզապես բարեհնչության պահանջով, օրինակ՝ անձնանվեր > անձնվեր, նարտասան > նարտասան, ասպապետ > ասպետ, ապաստանարան > ապաստարան, մեղվանույշ (< մեղուանույշ >) > մեղույշ և այլն:

ե) Բառեր կան, որոնցում կից երկու հնչյունների միացում է տեղի ունենում, ինչպես՝ սպանանել > սպանենել (այդպես էլ գործածվում է ա-արևմտահայ դրական լեզվում) > սպանել, հայեացք > հայացք > հայացք, սեպուհ + ական > սեպիական > սեփական, արտասուց > արտասուց > արտըսուց > արտհսուց > արցուց, թշուառ > շուառ > շվառ, Կա նաև հակառակ երևույթը, երբ բարդ հնչյունը տարրալուծվում, բաղադրիչների է վերածվում, օրինակ՝ վեց—վաց—վաքսուն:

§ 252. Ամփոփմանը հարում է նաև հնչյունափոխական այն երևույթը, երբ բառերը արագ արտասանության հետևանքով զրկվում են շատ հնչյուններից՝ հասնելով երբեմն իսկ մի հնչյունի: Աստված բառը, օրինակ, ժողովրդի լեզվում արտասանվում է աստծո, աստծու, ասծո, ասծու, ասսո, ասսու («— Ասսու հրամանովն ա,— պատասխանեց հայրըս», Պ. Պոռչյան): Պիտի եղանակիչ բայը մաշվելով՝ բարբառներում դարձել է բի «բի անիմ»), բ («բասիմ»), դի («դի բերիմ»), դբ («դբ սիրիմ»), տի («Ու տի ծագի հանուր կյանքի արշալույսը վառ հագած», Հովհ. Քումանյան): Ծիշտ այդպես էլ կամի եղանակիչ բայաձևից առաջ է եկել կբ (կ) եղանակիչը<sup>30</sup>:

<sup>30</sup> Այդ մասին տե՛ս մեր «Հայերենի հարադիր բայերը», Երևան, 1966, էջ 365—393, այլև՝ Յ. Ա. Макаев, Общая теория сравнительного языкознания, М., 1977, с. 151.

Հայտնի է, որ անսովոր կրճատումների են ենթարկվում հատկապես հատուկ անունները, ինչպես՝ Աստվածատուր—Ասատուր—Մատուր—Մատի, Կարապետ—Կարպիս—Կրպո, Կրպե, Կարո, Խաչատուր—Խաչի, Խաչիկ, Խեչո և այլն:

#### է. ՀԱՄԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

§ 253. Համաբանությունը (անալոգիա), որ գործածվում է նմանապատիվություն, նմանաբանություն անուններով, հնչյունափոխական այն երեւոյթն է, երբ փոխազդեցութիւնը տեղի է ունենում ոչ թե նույն բառի կազմում, այլ տարբեր, բայց միաժամանակ ինչ-ինչ կողմերով իրար հետ կապված բառերի, բառաձևերի միջև: Հստ այդմ էլ այն լինում է երկու տեսակ՝ բառային և ֆերականական:

ա) Բառային է կոչվում այն համաբանությունը, երբ բառն է ազդում մի այլ բառի վրա և ինչ-որ կողմով նմանեցնում իրեն, ինչպես, օրինակ՝ զբօսնույ > զբօսնել, կիզույ > կիզել, առնույ > առնել, հեղույ > հեղել (Ն խոնարհման բայերի ազդեցությամբ), ութսուն—ուրանասուն, իննսուն—իննասուն (երկուսն էլ յոթանասուն բառի ազդեցությամբ), ցած—ցածր (բարձր բառի ազդեցությամբ), յուզ (<իւզ) > եղ—եղր (մեղր բառի ազդեցությամբ), ամսական—ամսեկան, օրական—օրեկան (տարեկան բառի ազդեցությամբ), ծաղկափունջ («Մաղկափունջըդ միայն փուշ է ծակոտող», Հովհ. Հովհաննիսյան)— ծաղկեփունջ, ծաղկապսակ—ծաղկեպսակ (ի + ա > ե-ով՝ ոսկեպսակ, ոսկեթով և այլն բառերի ազդեցությամբ), սիրական—սիրեկան (հոգեկան, ընտանեկան և նման այլ բառերի ազդեցությամբ) և այլն:

Բառային համաբանությունը, ինչպես օրինակներից էլ կարելի է նրկատել, առավելապես հատուկ է խոսակցական լեզվին ու բարբառներին:

բ) Քերականական է կոչվում այն համաբանությունը, երբ քերականական ձևն է ազդում ինչ-որ կողմով իր հետ կապված մի այլ քերականական ձևի վրա և նմանեցնում իրեն:

Ի տարբերություն բառային համաբանության, որ քիչ դեպքերում է հանդես գալիս, քերականական համաբանությունը շատ լայն ընդգրկումներ ունի և բավական մեծ դեր է կատարել հայոց լեզվի՝ մասնավանդ քերականական կառուցվածքի մեջ՝ նրա պատմական զարգացման ողջ ընթացքում:

Նվ իրո՞ք. փաստերը ցույց են տալիս, որ ժամանակակից հայոց լեզվի թե՛ հոլովման, թե՛ խոնարհման և թե՛ քերականական մի շարք իրողություններ համակարգվել ու կանոնարկվել են ամենից առաջ հենց համաբանությամբ կամ նրա շնորհիվ:

Ժամանակի ընթացքում, օրինակ, որոշ անկանոն բայեր (լսել, ճանաչել, ըմպել, մեղանչել և այլն) Ն խոնարհման կանոնավոր բայերի



ձևերի ազդեցութեամբ նույնպես կանոնավոր են դարձել և խոնարհվում են նրանց պես՝:

Այդպես և մի շարք բառեր զրկվել են իրենց նախնական կամ բուն հոլովումից (օր.՝ Արշակ—Արշակայ, աստղ—աստեղ, գործ—գործոյ, ծով—ծովու) և համաբանութեամբ ենթարկվել ի հոլովման, ինչպես՝ Արշակ—Արշակի, աստղ—աստղի, գործ—գործի, ծով—ծովի և այլն:

Համաբանութեամբ է առաջ եկել նաև -ոջ հոլովումը, որով եթե գրաբարում միայն կին (կին—կնոջ, այլև՝ տիկին—տիկնոջ) բառը, ապա հետագայում հենց դրա նմանութեամբ սկսել են նաև այլ բառեր (օր.՝ ֆույր—ֆրոջ, աներ—աներոջ, տեր—տիրոջ, ընկեր—ընկերոջ և այլն) հոլովվել:

§ 254. Ավելորդ համարելով ընդարձակել օրինակների շարքը, պետք է ասել, որ համաբանությունը անընդհատական երևույթ է և յստօր էլ շարունակում է գործել մեր լեզվում. օրինակ՝ -ն, -չ, -ան ծածուցով բայերի արգելական հրամայականը, որ անցյալում կազմվել է ներկայի հիմքից (ինչպես՝ մի՛ մտնիր—մի՛ մտնեմ, մի՛ փախչիր—մի՛ փախչեմ, մի՛ զարմանա—մի՛ զարմանաք), ներկայումս դրական խոնարհման ձևերի նմանութեամբ ավելի շատ նույն՝ անցյալ կատարյալի հիմքից է կազմվում, ինչպես՝ մի՛ մտիր—մի՛ մտեմ, մի՛ փախիր—մի՛ փախեմ, մի՛ զարմացիր—մի՛ զարմացեմ և այլն:

Եվ կամ՝ Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալի վերջավորությունների (-եցի, -եցիր, -եցինք, -եցիք, -եցին) ազդեցութեամբ պատճառական բայերի անցյալ կատարյալի կարճ ձևերը, մանավանդ առօրյա խոսակցական լեզվում, շատ հաճախ գործածվում են գրական արժեք չստացած երկար ձևերով, ինչպես՝ սովորեցրի—սովորեցրեցի, սովորեցրիր—սովորեցրեցիր, սովորեցրինք—սովորեցրեցինք, սովորեցրիք—սովորեցրեցիք, սովորեցրին—սովորեցրեցին, լավացրի—լավացրեցի, լավացրիր—լավացրեցիր, լավացրինք—լավացրեցինք, լավացրիք—լավացրեցիք, լավացրին—լավացրեցին և այլն:

Համաբանութեամբ է բացատրվում նաև այն, որ մի խումբ բառեր իրենց բուն հոլովումից զատ հոլովվում են նաև -ի հոլովմամբ, ինչպես՝ ամիս—ամսի—ամսվա, օր—օրվա—օրի, ընկե՛ք—ընկերոջ—ընկերի, ձյան—ձյան—ձյունի, արյուն—արյան—արյունի, որոշում—որոշման—որոշումի—որոշմամբ—որոշումով, զեկուցում—զեկուցման—զեկուցումի, ձուկ—ձկան—ձկի, գառ—գառան—գառի և այլն:

Այդ մասին և՛ն՝, օրինակ, մեր «Հայերենի անկանոն բայերի զարգացումը» Երեվան, 1961:

§ 255. Փոխազդեցական հնչյունափոխության տեսակները, անշուշտ, հիշյալներով շեն վերջանում: Հայոց լեզվում կան նաև բառեր, որոնք այլ փոփոխություններ են կրել և կապվում են կամ ժողովրդական (կեղծ) ստուգաբանության, կամ գրության նմանության, կամ թյուրըմբռնման ու բաղարկության (կոնտամինացիա) հետ:

ա) Ժողովրդական ստուգաբանությամբ, օրինակ, արդ («ձև») արմատից և -ուկ ածանցից կազմված արդուկ բառը հարթ + ուկ բաղարկիչներից կազմված բառ է ըմբռնվել՝ գործածվելով ավելի շատ հենց նման ձևով (հմմտ. նաև արդուկել և հարթուկել). վարկարեկել («հեղինակությունը գցել») բայի վարկ սկզբնաբաղարկիչը վարք է կարծվում և ամբողջ բառն էլ սխալաբար վարքարեկել արտասանվում: Շղագիր բառի շղա-ն, որ սերում է շիլ/շյուլ-ից, նույնացվել է շեղ բառին և կարծվել, որ այն ոչ թե «շյուղով կամ բարակ ծայրով», այլ «իբր թե շեղ գիրքով գրված գիր է նշանակում»<sup>32</sup>:

Այդպես և ժողովրդական կեղծ ստուգաբանությամբ նրազալույց բառի լույց-ը (լուցանել «վառել» բայի արմատն է)՝ լույս, գործուղել բայի ուղ (ուղի)-ը ուղիղ է կարծվում և հաճախ էլ սխալ գործածվում գրավոր խոսքում: Կամ՝ արարերենից փոխառյալ մղղեսի/մղղսի (Վերուսազեմ ուխտի գնացած, հաշի») մահ + տես + ի բաղարկիչներից կազմված բառը մբռնվելով՝ դարձել է մահտեսի և այդպես էլ գործածվում է գրական լեզվում:

Տարկետում (отеретька) բառի տար նախածանցը շատերը տարի կարծելով՝ այն տարեկետում են դարձնում և սխալաբար էլ գործածում գրավոր խոսքում:

բ) Գրության նմանությամբ որոշ բառեր նույնպես ենթարկվել են փոփոխության: Ներսա բառի ս-ն՝ մ-ի, շահղանակ բառի դ-ն գ-ի հետ շփոթվելով՝ առաջ են եկել շերամ, շագանակ ձևերը, որոնք այդպես էլ սկսել են գործածվել նոր հայերենում ու համանման բառեր կազմել, ինչպես՝ շերամաբույծ, շերամագործ, շերամապահ, շերամապահություն..., շագանակագույն, շագանակահեռ, շագանակե, շագանակենի:

Մի քանի բառեր էլ ստուգաբանորեն սխալ ըմբռնվելով՝ արտահայտվել են նաև սխալ դրությանբ և այդպես էլ ամրակայվել լեզվում, ինչպես՝ արձագանգ (<արձ + ա + գանգ «գանգուն») — արձագանք, խաղալիկ (<խաղալ + իկ) — խաղալիք:

գ) Բառեր էլ կան, որոնք թյուրըմբռնմամբ կամ խաչավորմամբ են հնչյունական փոփոխություն կրել. օրինակ՝ կալ գոյականից ազդվելով՝

<sup>32</sup> Հր. Անադյան, Հիակառար քերականություն հայոց լեզվի, հտ. 6, էջ 731:

կասել բայը դարձել է կալսել<sup>33</sup>, հունարեն օրգանոն («նվագարան»)-ը «երգ բառից կարծվելով՝ դարձել է երգեհոն, երգիոն»<sup>34</sup>, հեսան (<յեսան)-ը լեսուլ («մանրել, փշրել») բայի «արմատի հետ խառնվելով՝ տեղ տեղ դարձել է լեսան»<sup>35</sup>, ալգոդ (=ալգալաց)-ը ինքն բառից կարծվելով՝ Արցախի և Գորիսի բարբառներում դարձել է ինքնահող (>ինքնավրէղ), գրկունք (<գրիկ+ունք)-ը գիրք բառից կարծվելով՝ դարձել է գրճույկ և այլն:

### ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ԵՎ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՐԾԵՔԸ

§ 256. Հնչյունափոխությունը, իբրև գործուն լեզվական իրողություն, միշտ էլ կարևոր դեր է խաղացել հայոց լեզվում: Իր բազմազան արտահայտություններով ու դրսևորումներով այն մեծագույն ազդեցություն է ունեցել ամենից առաջ նրա հնչյունական կազմի վրա և, կարելի է ասել, հնչյունաբանորեն ձևավորել նաև աշխարհաբարը կամ հայ նոր գրական լեզուն:

Մի շարք հնչյունների, երկբարբառների ու եռաբարբառների, բազմաբանակ բառերի ու բառաձևերի և այլն կրած հնչյունական փոփոխությունները զգալի տեղաշարժեր են առաջ բերել թե՛ արևելահայերենի, թե՛ արևմտահայերենի հնչյունական կազմում և նպաստել դրա զարգացմանն ու բարելավմանը:

Բազմատեսակ այդ փոփոխությունները ճիշտ միատեսակ ընթացք չեն ունեցել: Արևելահայ գրական լեզուն, պայմանավորված նաև իր բարբառային հիմքով, եթե գերազանցապես և ըստ կարելիվոյն հետևել է հին հայերենի՝ գրաբարի, բառաձևերին, ապա արևմտահայ գրական լեզուն մի շարք դեպքերում իր հիմքը կազմող բարբառի (Պոլսի) և միջին հայերենի բառաձևերն է ժառանգել, հմմտ., օրինակ, ասել>ըսել, առնել>անել>ընել, լինել>ըլլալ, ճանաչել>ճանչնալ, կանաչ>կանանչ, բաժանվել>բաժնվիլ, դադարել>դադրիլ, կառնալ>կրնալ, ջրաղացապան>ջրաղացպան, ջաղջպան, այն>ան և այլն:

§ 257. Հնչյունափոխությամբ, սակայն, լեզվի ոչ միայն հնչյունական կազմում, այլև քերականական կառուցվածքում են մեծ փոփոխություններ կատարվել: Եվ իրո՞ք. ժամանակակից հայոց լեզվում բազմաթիվ են այն քերականական ձևերը, որոնք նախավոր ձևերից առաջ են եկել հնչյունափոխության միջոցով կամ նրա շնորհիվ:

<sup>33</sup> Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. 2, Երևան, 1973, էջ 483, 532:

<sup>34</sup> Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հտ. 6, էջ 735:

<sup>35</sup> Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. 2, էջ 277:

Հնչյունափոխությամբ են առաջ եկել, օրինակ, ա) անկատար և ժխտական դերբայները՝ անորոշից (ի խաղալ եմ—խաղամ եմ—խաղում եմ, շեմ խաղալ—շեմ խաղա, շենք խաղալ—շենք խաղա). բ) ապառնի դերբայը՝ անորոշի սեռական-տրական հոլովածից (գրելոյ եմ—գրելու եմ, գնալոյ եմ—գնալու եմ). գ) Ե խոնարհման պարզ, ինչպես նաև պատճառական բայերի եզակի հրամայականը՝ նախավոր հրամայականից (սիրեա > սիրե > սիրի > սիրիւ, մեծացո > մեծացու > մեծացուր > մեծացրու). դ) վաղակատար դերբայը՝ անցյալ դերբայից (անցեալ > անցել // անցեր, մոռացեալ > մոռացել // մոռցեր). ե) վա հոլովիչը ժամանակ ջույց տվող որոշ բառերի՝ եան վերջավորությունից (ամիս > ամսեան > ամսուան > ամսվան > ամսվա). զ) բացառականի -ից վերջավորությունը՝ անեզական բառերի բացառականից (խօսւմ—չօսից—ի խօսից—խոսմ—խոսից). է) Ը որոշյալ հոգը բառավերջում և հոգից առաջ լսվող ձայնից (փաղափն—փաղափրն—փաղափր, կողմըն—կողմը) և այլն:

Այդպես և հնչյունափոխության են ենթարկվել բայի խոնարհման մի շարք ձևեր՝ վերածվելով միակերպության, հմմտ., օրինակ՝ սիրեցի—սիրեցեր—սիրեաց—սիրեցամ—սիրեցէի // սիրեցիք—սիրեցին և սիրեցի—սիրեցիր—սիրեց—սիրեցինք—սիրեցիք—սիրեցին. գնացի—գնացեր—գրնաց—գնացամ—գնացէի // գնացիք—գնացին և գնացի—գնացիր—գնաց—գնացինք—գնացիք—գնացին. սիրեմ—սիրես—սիրէ—սիրեմք—սիրէք—սիրեն և սիրեմ—սիրես—սիրի—սիրենք—սիրեք—սիրեն և այլն:

§ 258. Հնչյունափոխությունը նշանակալից դեր է խաղացել նաև բառակազմության գործում: Դեռ շատ վաղ ժամանակից սկսած՝ իր զանազան տեսակներով ու արտահայտություններով այն առաջ է բերել կամ ձևավորել մի շարք նոր բառեր, որոնք և երկու խմբի են բաժանվում.

ա) Բառեր կան, որոնք գործածվում են միայն իրենց հնչյունափոխված ձևերով, ինչպես՝ բարբառ (<բառ+բառ), գրգիռ, փաթաթել, բարբախել, հեղեղ (<հեղ+հեղ), ընկեր (<ընդ+կեր), դուռչ (<ընդ+ուռչ), սփռել (<զ+փռել), կսկիծ, կասկած, հորովել (<հոյ+առաւել) և այլն:

բ) Բառեր կան, որոնք գործածվում են իրենց բուն և հնչյունափոխված ձևերով, ինչպես՝ կտորել—կտորել—կտրել—կտուր (ընկնել), ջիլ—ջիղ, հավասար—ևավասար, պարապել—պարպել, համարել—համրել, հրաշ(f)—հրեշ (հրէշ, հրէշք), ցամաքել (>ցամքել >ցմքել) > սմքել, ցած—ցածր, գոլ—գաղջ, ոլոր—ոլորտ, վերացնել (<վերացուցանել)—վերցնել և այլն:

§ 259. Հնչյունափոխությամբ տարբերակված բառերը իմաստապես և տարբերվում են իրարից:

Այսպես՝

ա) Բառեր կան, որոնք նույն կամ մոտ իմաստ են արտահայտում և նույնանիշներ, համանիշներ կամ բառային տարբերակներ են, օրինակ՝

արտասուֆ—արցունք, գոլ—գաղջ, աֆաղաղ (>աքալալ>աքլալ>աքլոլ)  
>աֆլոր, եղերերգ—եղերգ, ճանապարհ—ճամփա և այլն:

բ) Բառեր էլ կան, որոնք իմաստապես խստորեն հեռացել են իրարից և որոշ դեպքերում անգամ հակառակ նշանակություն են արտահայտում, ինչպես՝ արվեստ—արհեստ, կտրիչ—կտրիճ, հավասար—հավասար, հրաշֆ—հրեշ, ոլոր—ոլորտ, պարապել—պարպել, ձգել («դեպի իրեն քաշել») — գցել («հեռու՝ դեն նետել»), դասել—դարսել և այլն:

Նկատելի է, որ երկու դեպքում էլ ծագումնաբանական կապը մթագնած է հատկապես այն բառերում, որոնք ավելի «բարդ» հնչյունական փոփոխության են ենթարկվել, ինչպես՝ ի գուն գալ—կուն գալ/ճուկ գալ—կուչ գալ, եղբայր—աղբար—ախպար—ապար—ապեր—ապի («մեծ եղբայր, հայր, հայրիկ»), ցամաֆել—ցմֆել—սմֆել, փետուր—տեփուր—թեփուր—թեպուր//թեպուտ, շիտակել—շիտկել—շտկել և այլն:

§ 260. Ավարտելով այսքանով հնչյունափոխության քննությունը, տեսնում ենք, որ իր արտահայտություններով ու դրսևորումներով այն իսկապես բազմազան պատկեր է ներկայացնում, առանց որի լուսաբանության էլ չի կարելի ամբողջական ու լիակատար պատկերացում կազմել հայոց լեզվի ոչ միայն հնչյունական կազմի ու քերականական կառուցվածքի, այլև գրաբանության, ուղղագրության և ուղղախոսության մասին:

### ԳՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՂԱՓԱՐ

§ 261. Լեզուն, իբրև հաղորդակցման միջոց, արտահայտվում է ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ձևով: Դրանք նույն լեզվի տարբեր դրսևորումներն են, որոնք ոչ թե տարազատված, այլ սերտորեն կապված են իրար հետ և փոխադարձ կապի ու հարաբերության մեջ են գտնվում:

Միաժամանակ այդ երկու ձևերը մի շարք կողմերով տարբերվում են իրարից, յուրաքանչյուրը մի ուրույն, առանձնահատուկ համակարգ է ներկայացնում, և ոչ պատահականորեն մեկը՝ բանավոր, մյուսը գրավոր լեզու է կոչվում:

§ 262. Բանավոր լեզուն, պարզ է, հնչյունային լեզուն է, ծագումնաբանորեն ավելի հին է և արտահայտվում է խոսողության գործարանների միջոցով իրացվող հնչյունային նշաններով, որոնք բնորոշվում են ուղղագծային հաղորդականությամբ, իսկ գրավոր լեզուն, որ, անշուշտ, ավելի ուշ է առաջ եկել, բանավոր լեզվի յուրատեսակ արտացոլումն է,

արտահայտվում է գրային-գծագրային նշանների (տառեր, կետադրութայան նշաններ) միջոցով, որոնք և միշտ չէ, որ ուղղագծային-հաջորդական բնույթ են կրում:

Բանավոր լեզվի, իբրև հնչյունական իրողության ու համակարգի, ուսումնասիրությունը եթե ընդհանրապես հնչյունաբանությունը, ապա գրավոր լեզվի, իբրև գրային-գծային միջոցներով արտահայտվող իրողության ու համակարգի, ուսումնասիրությունը նրա այն գիտաճյուղն է զբաղվում, որը գրաբանություն (գրաֆիկա, գրամատալոգիա) է կոչվում:

## ԳՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱԻԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

§ 263. Գրաբանությունը համեմատաբար նոր ժամանակներում ծընունդ առած լեզվաբանական գիտաճյուղ է, որի ուսումնասիրության առարկան էլ գրային-գծային այն միջոցներն են, որոնցով բանավոր լեզուն է արտահայտվում:

Գրաբանություն գիտանվանումը լեզվաբանական որոշ գիտանվանումների պես երկու տարբեր՝ թե՛ լեզվաբանական գիտաճյուղի և թե՛ լեզվական իրողության անվան նշանակություններ է զործածվում:

Իբրև լեզվական իրողություն, գրաբանությունը հնչվող խոսքը գրով արվող բոլոր միջոցների, լեզվի հնչյունների (հնչույթների) և դրանց կապակցությունների արտահայտման կանոնների ամբողջությունն է, այսպես թե՛ տառերով գրերի և դրանցով նշվող հնչյունների համակարգը, իսկ իբրև լեզվաբանական գիտաճյուղ, գրի ու նրա հետ կապված իրողությունների այն գիտական տեսությունն է, որն ուսումնասիրում է. ա) լեզվի հնչյունների (հնչույթների) արտահայտման կանոններն ու օրինաչափությունները, բ) գրի բոլոր գրային միջոցները՝ գրույթները (գրաֆեմաները), տառերը, կետադրության նշանները, գ) այդ նշանների առաջացումը և պատմական զարգացման փուլերը, դ) լեզվի այբուբենը և դրա կառուցվածքն ու համակարգը, ե) գրային միջոցների (գրույթների, տառերի և այլն) և հնչյունների (հնչույթների) կապերն ու հարաբերությունները, զ) հնչյունաբանության այլ գիտաճյուղերի՝ ուղղագրության, ուղղախոսության և այլն հետ ունեցած կապերն ու աղերսները:

Այսպիսով՝ գրաբանությունը ուսումնասիրում է գրավոր խոսքը համակողմանիորեն և նրա օրինաչափություններն ու կանոնները լուսաբանելու նպատակ է հետապնդում, որ, անշուշտ, ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն:

§ 264. Գրաբանությունը, իբրև լեզվաբանական գիտաճյուղ, լինում է ընդհանուր և մասնավոր, ինչպես նաև՝ պատմական և նկարագրական:

Ընդհանուր գրաբանությունը՝ շատ լեզուների, իսկ մասնավորը մի առանձին լեզվի գրավոր խոսքը և նրա կանոններն ու օրինաչափություն-

ներն է ուսումնասիրում, ընդ որում՝ եթե դա կատարվում է տարածա-  
մանակյա (դիսխրոնիկ) մեթոդով, գրաբանությունը կոչվում է պատմա-  
կան, իսկ եթե կատարվում է համաժամանակյա (սինխրոնիկ) մեթոդով,  
կոչվում է նկարագրական: Պարզ է, որ այս դեպքում մենք գործ ունենք  
մի՛ հայոց լեզվի գրաբանության հետ, որի ուսումնասիրության բուն  
առարկան հայկական գիրն է՝ իր ամբողջ համակարգով:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՐԸ

§ 265. Իբրև աշխարհի հին գիր ու գրականություն ունեցող լեզու-  
ներից մեկը, հայոց լեզուն իր բազմադարյան գրավոր հուշարձաններով  
առանձնահատուկ տեղ է բռնում մարդկության հոգևոր մշակույթի պատ-  
մության մեջ: Հայկական գիրը հնչյունային է և խարսխվում է մի այն-  
պիսի այբուբենի (§ 286) վրա, որ ստեղծվել է «մի հնչյունին մի գիր»  
սկզբունքով և թերևս դրա շնորհիվ հաստատուն մնացել հայոց լեզվի  
պատմական զարգացման ողջ ընթացքում:

§ 266. Այսբանից, սակայն, սխալ կլինի կարծել, թե այդ՝ հայկա-  
կան հնչյունային գիրը միանգամից է ծնունդ առել և չի անցել զարգաց-  
ման այն աստիճաններով՝ պատկերագրություն (պիկտոգրաֆիա), գաղա-  
փարագրություն (իդիոգրաֆիա), հնչյունագրություն (ֆոնոգրաֆիա), որ  
հատուկ են գրին ընդհանրապես:

Ընդհակառակն, հայկական գրի խիստ ինքնատիպությունը, կատա-  
րելությունը և լեզվի հնչյունական կազմի նկատմամբ ունեցած համա-  
պատասխանությունը լավագույն ապացույցն ու հաստատումն են այն  
բանի, որ նա սկիզբ է առել հազարավոր տարիներ առաջ և բազմադար-  
յան զարգացման ճանապարհ անցնելով՝ մ. թ. 5-րդ դարի սկզբում՝ 406՝  
թվականին պսակվել մի այնպիսի հրաշակերտ այբուբենով, ինչպիսին  
մաշտոցյան կամ մեսրոպյան այբուբենն է:

§ 267. Եվ եթե դա այդպես է, նշանակում է հայկական գիրը ունի  
շատ ավելի հին պատմություն, որը, սակայն, զանազան պատմական  
հանգամանքներով պայմանավորված՝ մշուշված է մի շարք մուժ ու կրնճ-  
ոտտ հարցերով, որոնցից մեկը և առավել կարևորը այն է, թե նախքան  
մաշտոցյան այբուբենի ստեղծումը հայերը գիր ու գրականություն ունե-  
ցե՞ն և, թե՞ ոչ:

Դա, ինչպես հայտնի է, շատ մեծ վիճահարույց հարց է, որի վերա-  
բերյալ հայտնվել են երկու հակադիր՝ իրարամերժ կարծիքներ:

Մի շարք հեղինակներ (Մ. Չամչյանց, Մ. Ավգերյան, Ղ. Ալիշան,  
Ք. Պատկանյան, Ս. Պալասանյան, Ն. Մառ, Ի. Հարությունյան, Լեո, Հ.-  
Օրբելի..., գրողներին՝ Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան, նորերին՝ պատմա-  
բան Ա. Գ. Աբրահամյան, թատերագետ Գ. Գոյան և ուրիշներ) այն կար-  
ծիքն են հայտնել կամ դավանել, որ 5-րդ դարից առաջ հայերը նույն-

պեճ գիր ու գրականութիւն են ունեցել, որ, սակայն, մեզ չի հասել:

Այդպէս կարծողներն ընդհանուր առմամբ ելնում են նրանից, որ՝

ա) Հայկական հզոր պետութիւնն է եղել, որ չէր կարող ինքնուրույն գիր ու գրականութիւն չունենալ:

բ) 5-րդ դ. գրառված հայերենը՝ գրաբարը, այնքան ճոխ ու գեղեցիկ, հղկված լեզու է, որ առանց նախնական գրավոր մշակվածութեան չէր կարող այդպիսին լինել:

գ) Աստվածաշունչը թարգմանված է այնպիսի ճոխ, գեղեցիկ ու հիասքանչ լեզվով, որ առանց նախնական մշակվածութեան նույնպէս չէր կարող այդպիսին լինել:

դ) Կան գրավոր ավանդված որոշ տեղեկութիւններ, որոնք հավաստում են վաղ շրջանում հայ գրի ու գրականութեան գոյութիւնը:

§ 268. Բերելով նման փաստարկներ՝ այդպէս կարծողները միաժամանակ գտնում են, որ քրիստոնեութիւնը մուտք գործելով (մ. թ. 301 թ.) Հայաստան և հակադրվելով հեթանոսական մշակույթին՝ կործանման է մատնել հայ հին գիր ու գրականութիւնը և ոչինչ չի թողել գրանցից:

Ավելորդ չէ, օրինակ, ասել, որ իրողութիւնը նույն կերպ է մեկնաբանել Մ. Նալբանդյանը՝ ասելով. «Ինչ որ կար չկար, ին՝ արքունական և թե՛ մեհենական՝ արվածք կամ մատյանք, որ պատկանում էին հայոց ազգի հեթանոսական կյանքին, լուսավորիչի ձեռքով դատապարտվեցան դեպի կորուստ, դեպի կրակ առանց ամենևին խնայելու, կորան կործանվեցան և այն գեղեցիկ արձանները, որ այսօր կարող էին հասկացնել մեզ հայոց ազգի ճարտարագիտութեան շագ ու կշիռը, և քրիստոնեութիւնը մի անհայտութեան պարիսպ քաշեց մեր քրիստոնեական և հեթանոսական կյանքերի մեջ»<sup>1</sup>: Սա, անշուշտ, շատ զորեղ փաստարկ է, որ ցույց է տալիս, որ չի կարելի անհեթեթութիւն կամ սխալ համարել այն կարծիքը, թե ավելի վաղ շրջանում հայերը նույնպէս գիր ու գրականութիւն են ունեցել:

§ 269. Հակառակ դրան մի շարք գիտուններ ու հայկաբաններ էլ (Չ. Տաշյան, Չ. Նյուրշման, Գ. Մենելիշյան, Հր. Աճառյան, Մ. Աբեղյան, Ստ. Մալխասյանց և այլք) գտնում են, որ մինչ մաշտոցյան այբուբենի ստեղծումը հայերը ոչ մի գիր ու գրականութիւն չեն ունեցել, որ եթե ունեցած լինեին, պետք է, այնուամենայնիվ, ինչ-որ բան պահպանված ու հասած լիներ մեզ: Այս տեսանկյունից էլ նրանք մի կողմից հերքում կամ աշխատում են հերքել բոլոր հակադիր պատճառաբանութիւնները, իսկ մյուս կողմից՝ բանն այնպէս են ներկայացնում, թե իբր ավելի վաղ հայ գրի ու գրականութեան գոյութիւնն ընդունելով՝ նսեմացվում է այն մեծ գործունեութիւնը, որ ծավալել է հայոց այբուբենի հանճարեղ ըստեղծող Մեսրոպ Մաշտոցը:

<sup>1</sup> Մ. Նալբանդյան, *Ընտիր երկեր*, Երևան, 1953, էջ 300—301:



§ 270. Զկամենալով հեռուն գնալ և հարցի հանգամանալից մեկնաբանութիւնը սույն ուսումնական ձեռնարկի նպատակից դուրս համարել՝ պետք է ասել, որ չի կարելի անվերապահորեն ընդունելի ու ճիշտ համարել նաև այն կարծիքները, որոնցով մերժվում է նախամաշտոցյան շրջանում հայ գրի ու գրականութեան գոյութիւնը: Բանն այն է, որ կան, այնուամենայնիվ, ինչ-ինչ փաստեր ու վկայութիւններ, որոնք վաղ շրջանում հայ գրի ու գրականութեան գոյութիւնն են ինչ-որ շահով հաստատում:

Դրանցից առաջինը Մաշտոցի կենսագիր Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատութիւնն է, որտեղ շատ պարզ դանիելյան կոչված գրերը «հայերեն լեզվի այբուբենի նշանագրեր» («նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի») են համարվում: Ինչպես Կորյունն է վկայում, երբ Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը «հայ ազգի համար նշանագրեր գտնելու համար» «միաբանյալների աշխարհահոգ խորհուրդ են գումարում» և «իրենց առաջուց ուզած բանի մասին» իմաց են տալիս Հայոց Վոսմշապուհ թագավորին, վերջինս պատմում է նրանց «մի մարդու, Դանիել անունով մի ազնվական ասորի եպիսկոպոսի մասին, որ հանկարծ գտել է հայերեն լեզվի աղփաբետներ—նշանագրեր» («վասն առն ուրումն ասորւոյ եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիէլ կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն գտեալ նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի»)<sup>2</sup>:

Սույն Կորյունի վկայութեամբ հայտնի է նաև, որ Վոսմշապուհ արքայի ջերմ աշակցութեամբ, Վահրիճի և Հարելի օգնութեամբ Հայոց երկիրն են առաքվում Դանիելի մոտ գտնված նշանագրերը, որոնք և ընդունելով մեծապես ուրախանում են արքան, Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը:

Հաջորդ քայլն էլ այն է լինում, որ երանելի հոգեբարձուները «արքայից մատաղահաս մանուկներ» են խնդրում այդ նշանագրերը կիրառելու համար: «Եվ երբ նրանցից շատերը,— հավաստում է Կորյունը,— սովորեցին, ապա (թագավորը) հրամայեց ամեն տեղ նույն (նշանագրերով) կրթել, որով և երանելին (իմա՛ Մ. Մաշտոցը— Ա. Մ.) հասավ նույնիսկ վարդապետութեան գեղեցիկ աստիճանին, և մոտ երկու տարի իր ուսուցչութիւնն արեց ու նույն նշանագրերով տարավ» («Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային, ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել. որով և յաստիճան իսկ վարդապետութեան գեղեցիկ՝ երանելին հասանէր, և իբրև ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր, և նովին նշանագրովք տանէր»)<sup>3</sup>:

Դրան հաջորդող մի այլ, նույնպես շատ կարևոր վկայութիւնն էլ այն է, թե Մաշտոցն ու Սահակը «Իսկ երբ հասկացան, որ այդ նշանա-

<sup>2</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 42:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 44:

գրերը բավական շին հայերեն լեզվի սիղոբաները— կապերն ամբողջութեամբ արտահայտելու համար,— մանավանդ որ նշանագրերն էլ ուրիշ դպրութայններից թաղված և հարութայն առած հանդիպեցին,— ապա դարձյալ երկրորդ անգամ նույն հոգսի մեջ ընկան և մի քանի ժամանակ մի ելք էին փնտրում դրան» («Թսկ իբրև ի վերայ հասնալ, թէ շին բավական նշանագիրքն՝ ողջ ածել զսիղոբայս զկապս հայերէն լեզոյն, մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան, (ընդգծումները իմն են— Ա. Մ.), յետ այնորիկ դարձեալ կրկին՝ անգամ ի նոյն հոգս դառնային, և նմին ելս խնդրէին ժամանակս ինչ»)⁴:

§ 271. Ավելի վաղ շրջանում հայ գրի ու գրականութեան գոյութիւնը հավաստող երկրորդ հին ու ստույգ աղբյուրը Ղ. Փարպեցու «Պատմութիւն Հայոց» գիրքն է: Նկարագրելով Մ. Մաշտոցի «բազմածամանակյա մտածութիւնը», տառապանքներն ու դեգերումները այն բանի համար, որ «Հայաստան աշխարհիս մանկունք» տանջալից ճանապարհով օտար՝ ասորական կրթութիւն են ստանում, որ «եկեղեցական արարողութիւնները և սուրբ գրքի ընթերցանութիւնները.... վանքերում ու եկեղեցիներում կատարվում էին ասորերեն», որ ժողովուրդը այդ լեզուն չի հասկանում, Ղ. Փարպեցին այդտեղ հայ գրերի գոյութեան մասին է խոսում՝ ասելով. «չէ՞ որ կային հայերեն լեզվի նշանագրեր (մանաւանդ թէ գոն նշանագիրք հայերէն լեզույս)», որոնցով հնարավոր էր սեփական ձայնով և ոչ թե մուրացած լեզվով, եկեղեցիներում շահել տղամարդկանց ու կանանց և առհասարակ ամբողջ բազմութեան սրտերը»⁵, «Քանի որ ոչ այնքան շատ օրեր առաջ խոսք եղավ այդպիսի նշանագրերի պահանջի մասին, մեկը թագավորին ասաց, թե հայերեն նշանագրեր է տեսել մի գյուղում, ինչ որ եպիսկոպոսի մօտ (այս ընդգծումները ևս իմն են— Ա. Մ.)»⁶:

§ 272. Այսպիսով՝ ականեր է, որ Կորյունը և նրա հետևողութեամբ Ղ. Փարպեցին ոչ միայն շին մերժում, այլև ընդունում են նախամաշտոցյան հայ նշանագրերի գոյութիւնը:

Այդ են հաստատում դանիելյան գրերի մասին Կորյունի տված նաև մյուս տեղեկութիւնները:

Այսպես՝ եթե երանելին՝ Մ. Մաշտոցը, երկու տարի («ամս երկու») ուսումը վարել է դանիելյան գրերով, հասել «յաստիճան իսկ վարդապետութեան գեղեցիկ» եթե աշակերտներից շատերը («բազումք ի նոցանէ») կարողացել են սովորել այդ նշանագրերով, նշանակում է՝ դրանք ոչ թե օտար, այլ իրոք հայկական գրեր են եղել:

Եթե երկու տարի ուսուցումը վարելուց հետո պարզվել է, որ «այդ

⁴ Նույն տեղում, էջ 46—47:

⁵ Ղ. Փարպեցի, Հայոց պատմութիւն, Երևան, 1982, էջ 31:

⁶ Նույն տեղում, էջ 33:

նշանագրերը բավական շեն հայերեն լեզվի սիղոբաները— կապերը ամբողջությամբ արտահայտելու համար», նշանակում է՝ այդ գրերը պարզապես պակասավոր են եղել և հնարավորություն չեն ընձեռել հայերենի հնչյունակապակցությունները («սիւղոբայս— զկապս») ամբողջությամբ կամ, ինչպես Ղ. Փարպեցին է ասում, «հայերեն բոլոր վանկերը հնչյունաբանական ամբողջ ճշգրտությամբ» («ստոյգ հոլովել զհեզենայ բառից հայկականց հագներգաբար») կիրառելու համար: Եվ վերջապես՝ եթե, ի լրումն դրան, ասվում է՝ «մանավանդ որ նշանագրերն էլ իսկապես ուրիշ դպրություններից թաղված և հարություն առած հանդիպեցին», նշանակում է, որ նրանք թաղվել՝ գործածությունից դուրս էին մղվել այլ դպրությունների՝ այլ գիր ու գրականությունների կողմից և հետո միայն կենդանություն ստացել ու հայտնի դարձել...

§ 273. Կորյունի (ինչպես նաև Ղ. Փարպեցու) տված այդ շափազանց արժեքավոր վկայությունները, սակայն, նախամաշտոցյան հայ գրի գոյությունը ժխտողները բոլորովին այլ կերպ են մեկնաբանում՝ հարմարեցնելով դրանք իրենց տեսակետներին:

Մեծանուն հայագետ-լեզվաբան Հր. Աճառյանը, որ անգնահատելի ավանդ ունի մաշտոցագիտության բնագավառում, խորապես համոզված լինելով, որ «Հայերը նախքան Մեսրոպը գրավոր գրականություն չեն ունեցել», գտնում և քանիցս շեշտում է, թե «դանիելյան գրերը հայերեն չէին և հայոց մեջ երբեք գործածված չէին, այլ կորած հին սեմական (՞) մի ազգի այբուբենը»<sup>7</sup>, «... նորագյուտ այն տառերը ուրիշ բան չէին, բայց եթե ինչ-որ արամեական հնացած տառեր»<sup>8</sup>, թե Մ. Մաշտոցը դանիելյան գրերը լրիվ անպետք է համարել և հայոց այբուբենը ստեղծելիս որևէ շափով չի օգտվել նրանցից:

Եվ կամ՝ Մ. Արեղյանը, որ նույնպես մեծ ծառայություն է մատուցել մաշտոցագիտությանը, մերժած լինելու համար դանիելյան գրերի հայկական լինելու վարկածը՝ Կորյունի «մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան» վկայությունը թարգմանում և այնպես է մեկնաբանում, որ իբր այդ նշանագրերը «ուրիշ լեզուների դպրություն էին, մոռացված և հետո լույս աշխարհ եկած»<sup>9</sup>: Միայն, ի տարբերություն Հր. Աճառյանի, որ առհասարակ որևէ կապ չի տեսնում դանիելյան և մաշտոցյան գրերի միջև, Մ. Արեղյանը չի բացառում, որ Մաշտոցը իրեն ծանոթ նշանագրերից բացի օգտված եղած լինի նաև նրանցից<sup>10</sup>:

§ 274. Այսպիսով՝ հակադիր տեսակետներով հիմնավորապես չի

<sup>7</sup> Հր. Աճառյան, Հայոց գրերը, Ծրեան, 1984, էջ 455, 459:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 153:

<sup>9</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 47:

<sup>10</sup> Մ. Արեղյան, Երկեր, Գ, Երևան, 1968, էջ 643:

ժխտվում նախամաշտոցյան հայ գրի ու գրականության գոյությունը, և մենք ավելի շատ հակամետ ենք կարծելու, որ՝

ա) Դանիելյան գրերը եղել են հայկական գրեր, որոնք գոյություն են ունեցել նախաքրիստոնեական շրջանում և հեթանոսական կյանքին վերաբերելով՝ ոչնչացվել են հենց քրիստոնեության կողմից:

բ) Շուրջ մեկ դար հետո հայտնաբերված («այլ դպրություններից թաղված ու հարություն առած») այդ նշանագրերը իրոք պակասավոր են եղել և հնարավորություն չեն ընձեռել լիովին կամ ամբողջապես արտահայտելու հայերենի հնչյունակապակցությունները:

գ) Նրանք լրիվ չեն համապատասխանել հայերենի հնչյուններին և ամենայն հավանականությամբ զուրկ են եղել ձայնավորների վերաբերող տառերից:

դ) Իրենց արտաքին տեսքով, ձևավորմամբ ևս այդ նշանագրերը կատարյալ չեն եղել և «մուրացածին այնուիկ գծագրութեամբ» («իրենց մուրացածո գծագրութեամբ») նշանագրեր են համարվել<sup>11</sup>:

§ 275. Այսպիսով՝ Կորյունի և Ղ. Փարպեցու վկայություններով մի կողմից եթե նշվում է, որ նախաքրիստոնեական շրջանում հայերը իրոք գիր են ունեցել, ապա մյուս կողմից՝ հավաստվում է, որ հայ հին գրերից սոսկ նշխարներ էին մնացել և ասորի եպիսկոպոս Դանիելի մոտ գտնված նշանագրերը մեծ մասամբ իրենց ուժը կորցրած հայոց հին գրերն են եղել: Ուստի և՛ այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը երկու մասի բաժանված և երկու տարբեր տիրապետությունների (Պարսկաստանի և Բյուզանդիայի) տակ ընկած՝ կարող էր բնաշինչ լինել, նոր ու կատարյալ այբուբենի ստեղծումը առաջնահերթ խնդիր է դառնում, որի քաղաքական, ազգային, հոգևոր-մշակութային նշանակությունը ամենից խոր է գիտակցում հենց նրա հիմնադիրը՝ մեծն Մեսրոպ Մաշտոցը:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԸ ԵՎ ՀԱՅ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ

§ 276. Մեսրոպ Մաշտոցը է՛ առաջին մարդը, որ «հոգացել է հայերեն գրի ու գրականության կամ, ինչպես այն ժամանակ ասում էին, դպրության մասին»<sup>12</sup>: Մ. Մաշտոցը ծնվել է Տարոն գավառի Հացեկաց գյուղում, Վարդան անունով երանելի մարդու ընտանիքում՝ մոտ 361 թ., մահացել է 440 թ. փետրվարի 17-ին (մեհենական ամսի 13-ին)՝ վաղարշապատում, հազարապետ Վահան Ամատունու պահանջով ու գործադրած ջանքերով թաղվել է Օշականում, ուր այսօր էլ գտնվում է նրա գերեզմանը և սրբատեղի է ծառայում ողջ հայության համար:

§ 277. Մ. Մաշտոցը իր ժամանակի ամենանշանավոր ու մեծագույն

<sup>11</sup> Ղ. Փարպեցի, Հայոց պատմություն, էջ 32—33:

<sup>12</sup> Մ. Արեղյան, Երկեր, 9, էջ 85:

դեմքն է եղևի. ստացել է հիմնավոր կրթութիւն, «մանկական հասակում կրթվել է հելլենական դպրութեամբ», իմացել է հունարեն, ասորերեն, պարսկերեն: Ուսումն ավարտելուց հետո գնացել է Մեծ Հայաստանի Արշակունի թագավորների մայրաքաղաքը՝ Վաղարշապատ, ծառայութեան է անցել արքունի դիվանում իբրև քարտուղար, միաժամանակ զբաղվել է զինվորական արվեստով և դրանով սիրելի դարձել իր զորականներին («ցանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զորականացն»):

Մ. Մաշտոցը, ինչպես նրա կենսագիր Կորյունն է վկայում, ծավալել է բազմաճարուստ գործունեութիւն, որը երկու ընթացք է ունեցել՝ աշխարհական և կրոնական:

§ 278. Բայց երկու դեպքում այդ բազմաճարուստ գործունեութեան առանցքը կազմել է հայ ժողովրդի համար հայ գրի ու գրականութեան ստեղծման խնդիրը, որի իրագործմանն էլ հենց սկզբից ձեռնամուխ է եղել Մ. Մաշտոցը՝ խորապես ըմբռնելով նրա ազգափրկարար մեծ դերն ու նշանակութիւնը:

Այդ խնդրով նա զբաղվել է դանիելյան կոշված գրերը կիրարկելուց թե՛ առաջ և թե՛ հետո: Գողթն գավառում քրիստոնեական ուսմունքը քարոզելիս զգալով հայ գիր ու գրականութիւն չունենալու ծանր հետեւմանքները, Մ. Մաշտոցը, ինչպես Կորյունն է ասում: «Եվ այնպես տըրտմական հոգսերով պաշարված ու թակարդապատված և մտածմունքների ծփանքի մեջ էր ընկած, թե արդոք ինչպիսի ելք գտնի այդ բանի համար» («Սու այնպէս տրտմական հոգով պաշարեալ և թակարդապատեալ անկեալ ի ծուփս խորհրդոց, եթէ որպիսի արդեօք ելս իրացն գտանիցէ»)<sup>13</sup>:

§ 279. Ելքը հայերեն լեզվով ուսումն ու գրականութիւնն էր, որ ինչքան կարևոր, այնքան էլ դժվար լուծելի խնդիր էր:

Մ. Մաշտոցը խորապես գիտակցելով նաև դա՛ դիմում է կաթողիկոս Սահակ Պարթևին, միաբանների աշխարհահոգ խորհուրդ է գումարվում Վրամշապուհ արքայի աջակցութեամբ, ինչպես արդեն ասվել է, Հայաստան են բերվում դանիելյան նշանագրերը, որոնցով և մոտ երկու տարի նա իր ուսուցչութիւնն է անում և մանուկներին հայերեն սովորեցնում:

Բայց հետո, երբ պարզ է դառնում, որ «այդ նշանագրերը բավական չեն հայերեն լեզվի սիղաբաները— կապերն ամբողջութեամբ արտահայտելու համար» և ցանկալի արդյունք չեն տալիս, Մ. Մաշտոցն ու Սահակ Պարթևը «դարձյալ երկրորդ անգամ նույն հոգսի մեջ ընկան և մի քանի ժամանակ մի ելք էին փնտրում դրան» («Դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, և նմին ելս խնդրէին ժամանակս ինչ») <sup>14</sup>:

<sup>13</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 40:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 46:

§ 280. Ահա հենց այս ժամանակվանից էլ ծնունդ է առնում հայոց գրերի գյուտը: Մ. Մաշտոցը, ինչպես դարձյալ Կորյունն է վկայում, Վռամշապուհ արքայի հրամանով և Սահակ Պարթևի համաձայնությամբ մի խումբ աշակերտներ առած գնում է ասորոց երկու քաղաքները՝ Ամիդ և Եդեսիա, իրանց երկու մասի բաժանելով՝ մի մասին ասորական դրպրության (Եդեսիայում), մյուս մասին հունական դպրության է կարգում՝ ուղարկելով Սամոսատ քաղաքը: Իսկ ինքը մնում է Եդեսիայում և Քիր ազգին մի բարի օգնություն գտնելու համար՝ շարունակելով շատ նեղություններ կրել՝ կերտում է հայոց շնաշխարհիկ գրերը, ինչպես Կորյունն է հաստատում՝ ուղղակի ասելով. «Նա իր սուրբ աշով հայրաբար ծնեց նոր ու սքանչելի ծնունդներ— հայերեն լեզվի նշանագրեր» («հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ ու սքանչելի՝ սուրբ աշով իւրով, նշանագիրս հայերէն լեզուի»)՝<sup>15</sup>:

§ 281. Կերտելով հայերեն լեզվի «նոր ու սքանչելի նշանագրերը», Մ. Մաշտոցը նույն տեղում՝ Եդեսիայում, շուտով նշանակում, անվանում ու դասավորում, սիղոբաներով՝ կապերով հորինում է դրանք («Եւ անդ վաղվաղակի նշանակեալ, անուանեալ և կարգեալ, յօրինէր սիղոբայիւք կապօք»)՝<sup>16</sup>:

Այդպիսով՝ Մ. Մաշտոցը կատարում է լեզվաբանական մեծագույն սխրագործություն, գիտականորեն համակարգում է հայերենի «նոր ու սքանչելի նշանագրերը» և, չբավարարվելով այդքանով, այնուհետև Քիր օգնականների հետ իջնում է Սամոսատ և այնտեղ գտնելով Հռոփանոս անունով մի հույն գրագրի ու նրա օգնությամբ ամբողջապես «հորինում ու ավարտում է» նշանագրերի «բոլոր զանազանությունները՝ բարակն ու հաստը, կարճն ու երկայնը, առանձինն ու կրկնավորը» («Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութեան գտեալ, որով զամենայն ընտրութիւնս նշանագրացն զնրբագոյնն և զլայնագոյնն, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն, միանգամայն յօրինեալ և յանկուցեալ»)՝<sup>17</sup>:

§ 282. Կարծիք է հայտնվել, թե Մաշտոցը խորհրդակցելով Հռոփանոսի հետ այս դեպքում էլ իբր թե հունարենի համեմատությամբ հայերենի խուլ («նուրբ»), ավելի թավ («շնչեղ»), բարզ («կարճ, երկար, կրկնակ կամ կրկնավոր») և պարզ («առանձին») հնչյուններն է որոշել<sup>18</sup>:

Իրապես սակայն դա ժամանակայնացված ու խիստ հրապուրիչ մեկնություն է և չի համապատասխանում իսկությունը: Կորյունի նշած «քո-

<sup>15</sup> նույն տեղում, էջ 48:

<sup>16</sup> նույն տեղում:

<sup>17</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 48—50:

<sup>18</sup> Տե՛ս Կ. Սևակ, «Թե ի՞նչ է արել Մաշտոցը Սամոսատում» (ԵՊՀ Մազի անվան կաթինտի «Աշխատություններ», Երևան, 1947), այլև՝ Ս. Ղ. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան 1954, էջ 88—89:

լոր զանազանությունները բացառապես նշանագրերի արտաքին ձևին՝ գծագրության են վերաբերում, ինչը ճշտորեն է նշել Մ. Արեղյանը՝ ասելով. «Մաշտոցը Մամոսատում հույն գրագրի ձևով հորինել, վերջացրել է «առանձին» նշանագրերի գծագրությունը, նրանց հաստ ու բարակ, կարճ ու երկայն մասերը, և առանձին տառերի ձևն ընդհանրապես, գույց և շատ բան փոխելով Եղեսիայում իր «նշանակած», «նախագծած ձևերից»<sup>19</sup>։

§ 283. Ավարտելով հայերենի նշանագրերի նաև վերջնական գծագրությունը և ձևավորումը՝ Մ. Մաշտոցը իր երկու աշակերտների՝ Հովհան Եկեղեցացու և Հովսեփ Պաղնացու հետ ձեռնամուխ է լինում Աստվածաշնչի թարգմանությանը՝ սկսելով Սողոմոնի առակներից, որոնց սկզբում էլ ծանուցվում է՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» («Ճանաչել իմաստություն ու խրատ, իմանալ հանճարի խոսքերը»)։

Սրանք են ահա այն իմաստալից բառերը, որ առաջին անգամ գրվել են մաշտոցյան սքանչելի նշանագրերով՝ հայոց այբուբենով։

Ոգելից ուրախությամբ վերադառնալով Հայաստան՝ այդ այբուբենով Մաշտոցը ծավալում է լուսավորական շատ ավելի լայն գործունեություն։ Առաջ է տարվում Աստվածաշնչի թարգմանությունը, ստեղծվում են ինքնուրույն ու թարգմանական բազմաթիվ երկեր, բազմատեսակ խոչընդոտներ հաղթահարելով շարունակում է անընդմեջ զարգանալ հայ հոգևոր մշակույթը՝ նշանավորվելով մարդկության պատմության մեջ իրենց առանձնահատուկ տեղն ունեցող մեծարժեք գանձերով։

§ 284. Թեև պատմական աղբյուրները տվյալներ չեն հաղորդում այն մասին, թե Մ. Մաշտոցը «հայոց լեզվի սքանչելի նշանագրերը» ըստեղծելիս ինչ ժողովուրդների այբուբեններից է օգտվել, բայց անվիճելի ու միանգամայն տրամաբանական է, որ նրանք ինչ-ինչ թելերով ոչ միայն հունական, ասորական, պարսկական այբուբենների, այլև հայոց հին՝ դանիելյան կոչված գրերի հետ են կապվում՝ իրենց ինքնատիպությամբ ինչ-որ շափով պայմանավորվելով, անշուշտ, նաև գրանցով։

## ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԸ

§ 285. Տառերի ընդունված, ավանդական շարքը՝ նրանցից առաջին երկուսի՝ ա-ի՝ այբի և բ-ի՝ բեն-ի անունով կոչվում է այբուբեն։

Մենարոպյան այբուբենը բաղկացած է 36 տառից՝ և հետևյալ պատկերն է ներկայացնում.

<sup>19</sup> Մ. Արեղյան, Երկեր, Գ, էջ 643.

Ա	այր	1	Ժ	Ժե	10	Ճ	Ճե	100	Ռ	ռա	1000
Բ	բեն	2	Ի	ինի	20	Մ	մեն	200	Ս	սե	2000
Գ	գիմ	3	Լ	լյուն	30	Յ	հի	300	Վ	վեվ	3000
Դ	դա	4	Խ	խե	40	Ն	նու	400	Տ	տյուն	4000
Ե	եչ	5	Մ	ծա	50	Շ	շա	500	Ր	րե	5000
Զ	զա	6	Կ	կեն	60	Ո	ո	600	Յ	ցո	6000
Է	է	7	Հ	հո	70	Չ	չա	700	Ի	վյուն	7000
										(հյուն)	
Ը	ըթ	8	Ձ	ձա	80	Պ	պե	800	Փ	փյուր	8000
Թ	թո	9	Ղ	ղատ	90	Ջ	ջե	900	Ք	քե	9000

§ 286. Մ. Մաշտոցը հայերենի այբուբենը ստեղծել է մի հնչյունին մի գիր սկզբունքով, որով և որոշվում է նրա ընդհանուր համակարգն ու արժեքը: Խորապես ըմբռնելով հայերենի հնչյունական կազմը, իմաստազատիչ հնչյունական միավորները՝ հնչույթները, նա յուրաքանչյուրի համար առանձին տառ է ստեղծել և միանգամայն ճշտորեն արտահայտել հնչյունների կապերն ու կապակցությունները (սիղոբաները):

Ըստ այդմ էլ հայերենի այբուբենը հնչյունատառային և միաժամանակ նաև ոչ թե կցողական, այլ անջատողական այբուբեն է, որտեղ էլ, բնականաբար, ոչ միայն բաղաձայնները, այլև ձայնավորներն են զատ-զատ տառերով ներկայացվում:

§ 287. Մի հնչյունին մի գիր սկզբունքով ստեղծելով հայոց այբուբենը, Մ. Մաշտոցը գրության ոչ թե աջից ձախ՝ աջակողմյան (ինչպիսիք, օրինակ, ասորեստանյան, բարելական, հին պարսկական գրություններն էին), այլ ձախից աջ՝ ձախակողմյան (ինչպիսիք էին, օրինակ, փյունիկյան, հունական գրությունները) ուղղությանն է հետևել:

Պետք է ասել, որ տառերի ձևավորումն ու գծագրումները ևս կատարվել են հիմնականում դրան համապատասխան, և նրանց մեծ մասն էլ, բնականաբար, հատկանշվում է ձախից դեպի աջ գնացող գծումներով, ինչպես՝ Ա, Բ, Գ, Դ, Ե, Ի, Լ, Ռ, Վ, Բ, Ք, Բ, Խ և այլն:

§ 288. Մեսրոպյան այբուբենը աչքի է ընկնում նաև տառերի թվային արժեքի իր կատարելությունը: Այն այդ տեսակետից, ինչպես հայտնի է, ներկայացնում է քառաշար համակարգ. Ա—Թ—ով արտահայտվում են միավորները (1—9), Ժ—Ղ—ով՝ տասնավորները (10—90), Ի—Ջ—ով՝ հարյուրավորները (100—900), Ռ—Ք—ով՝ հազարավորները (1000—9000):

10 000-ի համար գործածվել է բյուրի նշանը, որը դրվելով այս կամ այն տառի վրա՝ համապատասխանաբար շորս զրոյով մեծացրել է թվական արժեքը, ինչպես՝ Ա—10 000, Գ—30 000, Ժ—100 000, Լ—300 000 և այլն: Մեծ թվերը երբեմն արտահայտվել են նաև տառերի համադրությամբ, ինչպես՝ ԴԻՌ=4000, ԺՌ=10 000, ՌԲՃ=12 000 և այլն:

Տառերն այսպիսով գործածվել են բազմատեսակ թվեր արտահայ-



տելու համար: Երկար ժամանակ նրանցով են արտահայտվել նաև տարեթվերը, և որովհետև ներկայումս գործածական թվականի սկիզբը կապվում է Քրիստոսի ավանդական ծննդյան հետ, տառերով արտահայտված թվականին ավելացվում է 551, ինչպես՝ ՊՄԹ (= 859 + 551 = 1410), ՉԿԶ (= 766 + 551 = 1317), ԶԼԵ (= 935 + 551 = 1486), ՌՄՂԳ (= 1293 + 551 = 1844) և այլն:

### ՀԱՅՈՑ (ՄԵՍՐՈՊԵԱՆ) ԳՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

§ 289. Տառը հնչյունի գրային նշանն է՝ նրա գծային պատկերը: Մեսրոպյան այբուբենը, ինչպես ասվել է, ունի 36 տառ, որոնցից ամեն մեկն էլ մի առանձին հնչյունի գրային նշանն է: Հայերենի տառերը ներկայացնում են մի ամբողջական համակարգ և ամենից առաջ բնորոշվում են նրանով, որ գործածվում (գրվում, տպագրվում) են երկու ձևով՝ մեծատառ և փոքրատառ, ինչպես՝ Ա ա, Բ բ, Գ գ, Դ դ, Ե ե, Կ կ, Վ վ, Տ տ, Ք ք և այլն:

§ 290. Տառերի այդ երկու ձևերը միաժամանակ կամ միանգամից չեն ստեղծվել: Ինչպես մատենագիտական աղբյուրները՝ հին ձեռագրերն ու վիճակագրություններն են ցույց տալիս, հայոց գրերը ճիշտ նույնը չեն մնացել և 1600 տարվա ընթացքում որոշակի զարգացում ապրելով ու ձևափոխություններ կրելով՝ հայտնի են մի քանի տեսակներով:

Հայերեն տառերի ամենահին գրատեսակը գլխագիրը կամ մեսրոպյան երկաթագիրն է՝ իր տարատեսակներով (փոքր երկաթագիր կամ փոքր-մեսրոպյան երկաթագիր, անցման գիր), և որի «հիմնական հատկանիշն է տառասյունների վերի և ներքևի միացումը կոր կամ կամարաձև գծիկներով»<sup>20</sup>: Այն հայերենի հիմնական գրատեսակն է եղել 5—9-րդ դարերում և այսօր էլ գործածվում է տպագրության մեջ:

Իրան հաջորդող գրատեսակը բռլոր(ա)գիրն է, որ սերում է փոքր երկաթագրից, սկսել է գործածվել 10—11-րդ դարերից, գնալով գերիշխող է դարձել սովորական տպագրության մեջ, ինչպես՝ ա, բ, գ, դ, ե, դ, ս, շ, փ և այլն:

Հայոց տառերի մի այլ գրատեսակն էլ ճոտր(ա)գիրն է (չուեն. նոտր—notarios «գպիր, գրագիր» բառից), որը իր հերթին սերում է բռլոր(ա)-գրից և առաջ է եկել արագ գրելու և ժամանակ խնայելու պահանջով. սկսել է գործածվել 13-րդ դարից, լայնորեն կիրառվել է 17—18-րդ դդ. և 19-րդ դարում փոխարինվել է շղագրով:

Շղագիրը, որ նշանակում է «շյուղով, բարակ ծայրով գրված» և «ավելի հետո՝ սխալ ստուգաբանությամբ դարձրել են շեղագիր» (տե՛ս § 255, ա), նույնպես բռլոր(ա)գրի մի տարատեսակն է և դրանից տարբերվում է որոշ մեծություններ ու շեղություններ:

<sup>20</sup> Հր. Աճառյան, Հայոց գրերը, էջ 602:

Շղագիրը առաջին անգամ հանդիպում է 11-րդ դ., լայն գործածու-  
թյուն է ստացել հատկապես 19-րդ դարում, նրա վերջին ձևափոխություն-  
ներն էլ, ինչպես Հր. Աճառյանն է նշում, արդի ձևագիրն ու արամյան  
գրերն են, ինչպես՝ ա, բ, գ, դ, ե, զ, լ, տ, ց, ֆ և այլն:

§ 291. Հայոց լեզվի այբուբենը իր գրատեսակներով ևս յուրահա-  
տուով համակարգ է կազմում և հետևյալ պատկերն է ներկայացնում (տե՛ս  
աղյուսակը, էջ 148):

§ 292. Հայոց լեզվի այբուբենը հիմնականում նույնը մնալով՝ ժա-  
մանակի ընթացքում, այնուամենայնիվ, որոշ փոփոխություններ է կրել.

ա) 12-րդ դ. այն հավելվել է հունալատին այբուբենից առնված օ  
տառով՝ բաղաձայնից առաջ՝ աւ երկբարբառի կրած պատմական հնչյու-  
նափոխության պահանջով (տե՛ս § 131, գ, § 216, բ):

բ) նույն այդ շրջանում դարձյալ հունալատին այբուբենից փոխառ-  
վել է ֆ տառը՝ հատկապես ֆ հնչյունով փոխառյալ բառերը այդպես ար-  
ոասանելու համար:

գ) ի (վյուն կամ հյուն)-ը, որ հիմնականում իբրև երկբարբառի և  
եռաբարբառի բաղադրիչ է գործածվել (տե՛ս § 218, դ), զրկվել է հըն-  
չույթային արժեքից և դրա հետ կորցնելով տառային նշանակությունը՝  
հանվել ժամանակակից արևելահայ գրական լեզվի համար ընդունված  
այբուբենի կազմից:

դ) ՈՒ (<n+i)-ն, որ սկզբնապես երկբարբառ է եղել (տե՛ս § 215,  
ե) և, բնականաբար, (ի տարբերություն է-ի) տեղ չի գտել մեսրոպյան  
այբուբենում, ժամանակի ընթացքում դարձել է մի հնչույթ և այդ հի-

	Վերադարձված	Փոքրատառեր	
		բուր- բազիր	միջին
1	Ա	ա	ա
2	Բ	բ	բ
3	Գ	գ	գ
4	Դ	դ	դ
5	Ե	ե	ե
6	Զ	զ	զ
7	Է	է	է
8	Ը	ը	ը
9	Թ	թ	թ
10	Ճ	ճ	ճ
11	Ի	ի	ի
12	Լ	լ	լ
13	Խ	խ	խ
14	Ս	ծ	ծ
15	Կ	կ	կ
16	Հ	հ	հ
17	Ձ	ձ	ձ
18	Ղ	ղ	ղ
19	Ճ	ճ	ճ

	Վերադարձված	Փոքրատառեր	
		բուր- բազիր	միջին
20	Մ	մ	մ
21	Յ	յ	յ
22	Ն	ն	ն
23	Շ	շ	շ
24	Ո	ո	ո
25	Չ	չ	չ
26	Պ	պ	պ
27	Ջ	ջ	ջ
28	Ռ	ռ	ռ
29	Ս	ս	ս
30	Վ	վ	վ
31	Տ	տ	տ
32	Ր	ր	ր
33	Ց	ց	ց
34	Ի	ի	ի
35	Փ	փ	փ
36	Փ	փ	փ
37	Օ	օ	օ
38	Ֆ	ֆ	ֆ

մամբ իբրև մի տառ տեղ գտել նույնպես ժամանակակից հայոց լեզվի համար ընդունված այբուբենում:

§ 293. Այդտեղ, ինչպես հայտնի է, առանձին տառ է ներկայացվում նաև և-ը, որ առաջ է եկել դեռևս միջին դարերում և և Վ-ի միացմամբ և, իբրև մի նշանագիր, գործածվել է շատ-շատերի, ի թիվս դրանց նաև նոր հայկազյան բառարանի երախտավոր հեղինակների կողմից:

Սակայն այս վերջին մի քանի տարում մեզանում հայտնվել են մարդիկ, որոնք անհիմն պատճառաբանություններով և մանավանդ հնչույթային արժեքը կորցրած Վ տառը «վերականգնելու» նպատակով մերժում են ընդհանրապես և-ի, իբրև առանձին տառի կամ նշանագրի, գործածությունը և սփյուռքում կիրառվող ուղղագրությանը հետևելով՝ պահանջում այն փոխարինել երկու՝ Ե + Վ (կամ՝ Ս + Վ) տառով<sup>21</sup>:

Նման պահանջը, սակայն, չի բխում ժամանակակից հայոց լեզվի ոգուց և հակասում է նրա ուղղախոսական ու ուղղագրական օրինաչափություններին: Բոլոր դեպքերում և-ը պատմականորեն առաջ եկած ինքնուրույն և այնպիսի տառ կամ նշանագիր է, որով երկու՝ էվ (բարեբարեվ, երևալ = յէրէվալ և այլն), երբեմն նաև երեք (ինչպես՝ ևս = յէվս, իսկույն ևեթ = իսկույն յէվէթ և այլն) հնչյուններ են արտահայտվում. զրսևորելով դրանց համապատասխան արտասանական-ուղղախոսական և ուղղագրական օրենքներ ու կանոններ:

§ 294. Այդ փոփոխությունները անհրաժեշտաբար իրենց արտացոլումն են գտել մեսրոպյան այբուբենում, և այն ներկայումս բաղկացած է 39 տառից՝ հետևյալ կարգով. ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ճ, շ, ո, չ, պ, ջ, ո, ս, վ, ա, ր, ց, ու, փ, ֆ, և, օ, ֆ<sup>22</sup>:

Դա իր փոփոխություններով լիովին համապատասխանում է մաշտոցյան այբուբենի՝ մի հնչյունին մի գիր սկզբունքին և իր հերթին ոչ միայն նրա ինքնատիպության, կատարելության, այլև արդիական-ուղեցույցային նշանակության մասին է վկայում: Հայոց լեզվի հնչյունական կազմում կատարված փոփոխություններին համապատասխան և դրանց նպահանջով հավելվելով մի քանի նոր տառերով (օ, ֆ, ու, և)՝ մաշտոցյան այբուբենը ավելի է հարստացել և լիովին արտահայտելով նրա հնչույթները՝ ամենայն իրավամբ առանձնահատուկ տեղ է բռնում աշխարհի լեզուների այբուբենների մեջ:

<sup>21</sup> Այդ մասին տե՛ս մեր «և-ը տա՛ռ է, թե ոչ» հոդվածը («Մանկավարժ», 1991, № 4, էջ 29—32):

<sup>22</sup> Տե՛ս Ս. Ղազարյան, Ուղեցույց տերմինաբանական կոմիտեի որոշումների, Երեվան, 1945, էջ 31:

## ՀԱՅԵՐԵՆԻ ԿԵՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

§ 295. Գրաբանությունը, իբրև լեզվաբանական գիտաճյուղ, ոչ միայն տառային նշանագրերի, այլև բոլոր այն միջոցների ուսումնասիրությունը է զբաղվում, որոնք ծառայում են բանավոր խոսքը գրավոր ձևով ճիշտ արտահայտելուն:

Ի տարբերություն տառային նշանների, որոնցով արտահայտվում են լեզվի գծային կամ հատույթային միավորները, կետադրության նշանները, որ նույնպես գրային միջոցներ են, կապված են բառի, նախադասության հետ, առանձնաբար գոյություն չունեն և մեծ մասամբ էլ վերհատույթային, ոչ գծային հնչյունական միավորներ են:

§ 296. Ժամանակակից հայոց լեզվի կետադրության նշանները 15-ն են, որոնք, ինչպես հայտնի է, ըստ իրենց ընդհանուր կիրառական նշանակության լինում են երեք տեսակ՝ ա) տրոհության, որ են՝ վերջակետը (:), միջակետը (.), ստորակետը (,) և բութը ('); բ) Առոգանության, որ են՝ շեշտը (´), հարցական նշանը (⁂) և բացականչական նշանը կամ երկարը (˘); գ) Բացահայտության, որ են՝ շակերտները (« »), փակագծերը ( ), [ ], կախման կետերը (...), բազմակետերը (.....), անջատման գծիկը (—), միության գծիկը (-), ենթամեծ (˘~) և ապաքարցը (˘):

§ 297. Հայերենի կետադրության նշանները ստեղծվել են հիմնականում 10-րդ դարից հետո և ժամանակի ընթացքում նույնպես զարգացել են ու կատարելագործվել, որին մեծապես նպաստել են բառերի միասին գրությունից անջատ գրության անցնելը և գրատպագրությունը:

Գնալով կետադրության նշանները ավելի են ամրակայվել և ժամանակակից հայոց լեզվում ներկայացնում են մի ամբողջական համակարգ՝ իրենց համապատասխան գործածություններով ու կանոններով:

Կետադրության նշաններից գրաբանությունը առավելապես զբաղվում է նրանց ուսումնասիրությամբ, որոնք ավելի շատ են կապվում բանավոր խոսքի հնչերանգի հետ և ծառայում են նրա ելևէջները ճշտորեն արտահայտելու համար: Այդպիսի նշաններից են հատկապես շեշտը (´), հարցականը (⁂), բացականչականը (˘) նշանները և ապաքարցը (˘), որոնք, իբրև վերհատույթային գրային նշաններ, հայերենում դրվում են հենց այն բառերի վրա, որոնցով համապատասխան նշանակությունն է արտահայտվում, ինչպես, օրինակ՝ Խնչ ես ասում, Ո՞վ եկավ, Լո՞ւ, «Ծրկինքնե՞ր կան կապուտաշյա, հորիզոննե՞ր՝ անծա՛յր, անծի՛ր» (Ծ. Չարենց), «Խնչ կ'ուզեք որ ձեզի ըսեմ ասկե ավելի», «... աղջիկ մը, ոչ, հրապուրիչ կին մ'էր» (Գր. Զոհրապ) և այլն:

Ապաքարցը, ինչպես վերջին երկու օրինակից էլ կարելի է նկատել, հիմնականում հատուկ է արևմտահայերենին:

§ 298. Գրաբանության համար, անշուշտ, պակաս նշանակություն չունեն նաև կետադրության մյուս նշանները: Մտառելով բանավոր խոս-

քը գրավոր ձևով ճշտորեն արտահայտելու նպատակին՝ կետադրության նշանները ամբողջական, փոխկապակցված համակարգ են ներկայացնում, և նրանցից յուրաքանչյուրը որոշակի դեր է կատարում լեզվում:

Առողգանության նշաններով, օրինակ, եթե բանավոր խոսքի զանազան հնչերանգները, ապա մյուս կետադրական նշաններով քերականական, իմաստային այլևայլ իրողություններ են արտահայտվում: Որոշ կետադրական նշաններ էլ կապվում են հատկապես խոսքի շարահյուսական կառուցվածքի հետ և շարահյուսական կետադրական նշաններ են կոչվում: Կետադրական նշաններ չէ կան (օրինակ՝ չակերտները, կախման կետերը, բազմակետերը և այլն), որ գրավոր խոսքում բացառապես իմաստային դեր են կատարում և ըստ այդմ էլ բացահայտության նշաններ են կոչվում:

§ 299. Հաճախ այնպես է պատահում, որ գրավոր խոսքում կետադրության այդ երեք տեսակները համատեղ են գործածվում՝ հնչարտաբերությամբ այն դարձնելով ավելի բարդ ու բազմաբնույթ: Իսկ սա ևս ցույց է տալիս, որ կետադրության նշանները գրային այնպիսի կարևոր միջոցներ են, որոնք շաղկապում են բանավոր ու գրավոր խոսքերն իրար և իրենց հերթին զգալապես նպաստում ինչպես մեկի, այնպես էլ մյուսի զարգացմանը:

## ՏԱՌԵՐԻ (ԳՐՈՒՅԹՆԵՐԻ) ԵՎ ՀՆՉՈՒՅԹՆԵՐԻ ՓՈՆԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 300. Տառերը գրային ամենակարևոր ու հիմնական միջոցը լինելով՝ կոչված են գրավոր ճշտորեն արտահայտելու լեզվի հնչյունական կազմը: Ուստի և՛ թե լեզուն քանի՞ տառ ունի, ի՞նչ տառով ինչ հնչյուն է արտահայտվում, և ընդհանրապես տառերն ու հնչյունները (հնչույթները) ի՞նչ փոխհարաբերությամբ են կապված իրար հետ, այս և նման հարցերը գրաբանությանն են վերաբերում և նրա ուսումնասիրության առաջնահերթ խնդիրներից են հանդիսանում:

§ 301. Ոչ մի լեզվում և, բնականաբար, նաև հայերենում տառերի և հնչյունների (հնչույթների) լիակատար համապատասխանություն գոյություն չունի: Բայց, ի տարբերություն մի շարք լեզուների (օրինակ՝ ռուսերենի, անգլերենի), որոնցում տառերը զգալապես զիջում են հընչույթներին, ժամանակակից հայոց լեզուն յուրաքանչյուր հնչույթի համար առանձին տառ ունի, ինչպես՝ ա, բ, ծ, դ, ֆ, օ և այլն:

§ 302. Այստեղից, սակայն, չպետք է հետևենք, թե հայերենում քոլոր տառերը միանշանակ են և անխտիր մի տառ մի հնչյունի (հնչույթի) է համապատասխանում կամ մի հնչյուն է նշանակում. ավենեկին:

Իրենց կապերով ու հարաբերություններով տառերն ու հնչյունները (հնչույթները) հայերենում նույնպես բավական բարդ համակարգ են ներ-

կայացնում՝ արտացոլելով այն փոփոխությունները, որ երկարատև ժամանակամիջոցում տեղի են ունեցել նրա հնչյունական կազմում:

Նման հանգամանքով պայմանավորված՝ հայերենի տառերը մի քանի խմբի են բաժանվում և լինում են՝

ա) Միանշանակ, երբ մի տառով միայն մի հնչյուն է արտահայտվում, ինչպես՝

ա (ասա, գարուն, արքա, համար, լավանալ), ու (ուրախ, լեզու, անուն, ուշադրություն), լ (լավ, ալիք, կարդալ, փայլուն), ս (սովորել, կիսատ, մաս, ուսումնասիրել) և այլն:

բ) Երկնշանակ, երբ մի տառով երկու հնչյուն է արտահայտվում, ինչպես՝ ղ=ղ (ղեկ, աղ, խաղալ, լողալ), ղ>խ (աղբ<ախպ, աղջիկ>ախշիկ, եղբայր>յէխպայր, կողպեք>կօխպէք), վ=վ (վատ, ավազ, կավ, հավատ), վ>ֆ (հարավ>հարաֆ, ավտո>աֆտո), կ=կ (կարմիր, կորուստ, կրակ, կերակրել), կ>գ (երկիր>յէրգիր, ընկեր>ընգէր) և այլն:

գ) Եռանշանակ, երբ մի տառով երեք հնչյուն է արտահայտվում, ինչպես՝ բ=բ (բարձր, ընկերաբար, խմբակ), ք պ (եղբայր>յէխպայր, աղբ>ախտ, ողբալ>վօխպալ), բ>փ (երբ>յէրփ, հարբել>հարփէլ, սուրբ>սուրփ), գ=գ (գարուն, բուրգ, գագաթ), գ>կ (ազգ>ազկ, շաղգամ>շախկամ), գ>ֆ (երգ>յէրք, թագավոր>թաքավօր, միրգ>միրք), դ=դ (դանակ, դողալ, խինդ, խանդ), դ>տ (այդ>այտ, գիրքդ>գիրքըտ, բարեկամիցդ>բարեկամիցըտ) և այլն:

§ 303. Մյուս կողմից էլ, պետք է ասել, կան դեպքեր, երբ՝

ա) Մի հնչույթը, ինչպես՝ է-ն, օ-ն, բառի տարբեր դիրքերում տարբեր տառերով է արտահայտվում, հմմտ., օրինակ, էակ—էջ—բերել—ափսե (այլև՝ վայրէջք, մանրէ), օտար—օրոր—խոշոր—պահածո (այլև՝ այսօր, տնօրեն):

բ) Երկու կամ երեք հնչույթը մի տառով է արտահայտվում, ինչպես՝ ե-ն և ռ-ն բառասկզբում, և-ը՝ բառի տարբեր դիրքերում, հմմտ., օրինակ, երեխա = յէրէխա, եթե = յէթէ, եղանակ = յէղանակ, որդի = վօրթի, ոսպ = վօսպ, ոչինչ = վօչինչ, ևս = յէվս, հոգևոր = հօֆէվօր, երեվույթ = յէրէվույթ, բարև = բարէվ և այլն:

գ) Հնչույթը արտասանվում, բայց չի արտահայտվում գրով, ինչպես՝ գնալ = գրնալ, խնդիր = խրնթիր, սպասել = րսպասել, գզույշ = րգզույշ, ընկերս = րնկէրս, խզմզել = խրզմրզել, գրեի = գրէլի, ուտեիր = ուտէիր և այլն:

դ) Հնչույթը չի արտասանվում, բայց արտահայտվում է տառով, ինչպես՝ հ-ն հատկապես Ե ձայնորդից հետո՝ շնորհք ≠ շրնօրք, աշխարհ = աշխար, խորհուրդ = խօրուրք և այլն:

§ 304. Ինչպես բերված օրինակներն են ցույց տալիս, մեկից ավելի հնչյուններ արտահայտող տառերը իրենց նշանակությամբ համազոր չեն: Նրանք ընդհանրապես բնորոշվում են բուն կամ հիմնական (դա ցայտուն

է արտահայտվում հատկապես բառակզրում), իսկ մասնավոր դեպքերում՝ երկրորդական կամ ածանցյալ նշանակությամբ:

Արդ՝ տեսնենք, թե իրապես ինչպիսի փոխհարաբերության մեջ են գտնվում հայոց լեզվի տառերն ու հնչյունները (հնչույթները) միմյանց նկատմամբ, թե ինչ տառերով ինչ հնչյուններ են արտահայտվում կամ բառերի տարբեր դիրքերում նրանք ինչպես են հնչվում:

§ 305. Չայնավոր հնչյուններից (հնչույթներից)՝

ա) Ա-ն, Ե-ն, Ու-ն ընդհանուր առմամբ բառի բոլոր դիրքերում նույն տառերով են արտահայտվում, հմմտ., օրինակ, աբագ, գնալ, պողոտա, խաղաղաբար, անգգա. իմանալ, իրական, տիրել, իլիկ, ուղի, սիրելի. արախ, ուշադիր, գիտուն, հուզմունք, ուրու, եղջերու և այլն:

բ) է-ն բառակզրում (նաև համապատասխան բաղադրյալ բառերի մեջ կամ վերջում)՝ է, իսկ բառամիջում և բառավերջում ե տառով է արտահայտվում, ինչպես, օրինակ՝ էակ, էլի, էջ, վայրէջք, օրև է և բերել, խոսել, մեծամեծ, աներեր, բազե, եթե, օրևիցե և այլն:

գ) Օ-ն բառակզրում (նաև համապատասխան բաղադրյալ բառերի մեջ)՝ օ, իսկ բառամիջում և բառավերջում օ տառով է արտահայտվում, ինչպես, օրինակ՝ օր, օգուտ, օտար, բնօրրան, ապօրինի, հօգուտ և բռլուր, խորովել, դրածո, այո և այլն:

դ) Ը-ն արմատական բառերի սկզբում և համապատասխան բարդությունների մեջ արտահայտվում է ը տառով, իսկ գաղտնավանկի և ապ-, սկ-, գր-, զգ-, շտ- հնչյունակապակցություններով սկսվող բառերի դեպքում չի արտահայտվում, ինչպես, օրինակ՝ ընտիր, ընծուլտ, ընդունել, ընթացք, գործընկեր, խոչընդոտ..., մնալ (= մընալ), վստահ, նըվեր..., ստանալ (= ըստանալ), սպանել, զգաստ, գրասենք, շտապել և այլն:

Ը-ն ը տառով է արտահայտվում նաև բառավերջում, երբ իբրև որոշիչ հոդ և մի քանի բառերում իբրև նրանց հնչյուն է գործածվում, օրինակ՝ անտառը—անտառները, գարեանը, դառնը..., սառը, դառը, ինը, ինքը և այլն:

Մանրություն.— Գաղտնավանկի ը-ն զրվում է միայն տողազարծի ժամանակ (տե՛ս § 437, 438):

§ 306. Արտասանության ու գրության փոխհարաբերության տեսակետից ավելի բազմազան պատկեր են ներկայացնում բաղաձայն, հնչյունները (հնչույթները):

Այսպես՝

ա) Մի խումբ բաղաձայններ իրենց հնչմանը համապատասխան արտահայտվում են միայն մի տառով: Բառի բոլոր դիրքերում մի տառով են արտահայտվում, օրինակ՝ զ-ն (զորեղ, գազան, հանապազ), ժ-ն (ժամանակ, գուժել, վրեժ), լ-ն (լեզու, ձուլել, կաթիլ), մ-ն (միտք, աման,

երդում), և-ն (նոր, անտառ, ցորեն), շ-ն (շուն, գիշեր, հրեշ), ր-ն (օրոր, բարի, գործարար) և այլն:

բ) Հսկահառակ դրան, մի շարք բաղաձայն հնչյուններ՝ երկու, երբեմն նաև երեք տառով են արտահայտվում:

Հատկապես այդպես են արտահայտվում՝

1) Պայթական ձայնեղ բաղաձայն հնչյունները՝ ք-ն, դ-ն, գ-ն հմմտ., օրինակ, խումբ և ամպ (ամբ), բուրգ և ընկեր (ընգեր), անդուլ և բանա (բանդ):

2) Պայթական խուլ բաղաձայն հնչյունները՝ պ-ն, տ-ն, կ-ն, հմմտ., օրինակ, կապել—աղբյուր (ախպյուր), ազատ—մխտեղ (միտքըտ), թուլթ (թուխտ), ազան—ազգ (ազկ):

3) Պայթական շնչեղ խուլները՝ փ-ն, ք-ն, ք-ն, հմմտ., օրինակ, արփի—խարբի (խափէլ)—երբ (յէրփ), զվարթ—զարդ (զարթ)—արդար (արթար), կարիք—միք (միրք)—թագավոր (թաքավոր):

4) Պայթական բաղաձայններից ց-ն և շ-ն, հմմտ., օրինակ հարց—բարձ (բարց)—փողոց—օծ (օց), աղաչանք—միշակ (միշակ)—դարչին—վերչին (վէրչին) և այլն:

5) Շփականներից խ-ն, հմմտ., օրինակ՝ խիզախ—աղբ (ախպ)—մխալ—ողբալ (վօխպալ) և այլն:

§ 307. Այսպիսով՝ հնչյունները (հնչույթներն) ու տառերը (գրանշանները) իրենց կապեթով ու հարաբերություններով ևս մի այնպիսի բազմաբարդ համակարգ են ներկայացնում, որը արտացոլում է բանավոր խոսքի հնչյունական իրողությունները, ինչպես նաև այն փոփոխությունները, որ կրել են հայերենի հնչյունները նրա պատմական զարգացման ընթացքում: Ընդ որում՝ այս դեպքում մի կողմում մենք գործ ունենք լեզվի գրային՝ հաստատուն (ստատիկ) նշանների, իսկ մյուս կողմում՝ այնպիսի հնչյունական իրողությունների հետ, որոնք հարաշարժ են, ենթակա են լեզվական զանազան օրենքների և անխտիր նաև անհատականության գրոշմ են կրում իրենց վրա:

Եվ, այնուհանդերձ, բոլոր դեպքերում արևելահայ գրական լեզուն ունի գրության և արտասանության ժամանակի ընթացքում մշակված իր որոշակի կանոններն ու օրենաչափությունները, որոնցով և զգալի չափով տարբերվում է արևմտահայ գրական լեզվից:

§ 308. Հայ նոր գրական լեզուն հնչյունների արտասանությամբ ու գրությամբ, սակայն, շատ ավելի մեծ չափերով տարբերվում է բարբառներից: Բարբառները, ինչպես հայտնի է, հնչյունների (հնչույթների) քանակով գերազանցում են գրական լեզվին (Վանի բարբառն, օրինակ, ունի 43, Գորիսի բարբառը՝ 41 հնչյուն) և հատկանշվում են այնպիսի հրեշտաններով ու գրանշաններով, որոնք միայն իրենց են բնորոշ, ինչպես՝ ւն (լնվ<լաւ), օ (ծօր<ձոր), ու (լիզու<լեզու), քէ (մըէս<միս), քյ (բոէրան<բերան) և այլն:



## ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

§ 309. Տառադարձությունը (տրանսկրիպցիա) տառային գրության տարատեսակ է, որը գործածվում է այս կամ այն լեզվի, բարբառի կամ անհատական խոսքի հնչյունների ճիշտ արտահայտման համար:

Նրա հիմնական սկզբունքն այն է, որ ամեն մի հնչյուն պետք է անպայման արտահայտվի մի տառով, և մի տառն էլ պետք է համապատասխանի մի հնչյունին (հնչույթին):

Իբրև տառային գրության տարատեսակ, տառադարձությունը լինում է գիտական և գործնական:

§ 310. Գիտական տառադարձությունը կիրառվում է լեզվաբանական գրականության մեջ և նպատակ ունի ճշտորեն ներկայացնելու լեզվի հնչյունները՝ միջազգայնորեն ընդունված օտար տառերով: Հայերենի գիտական տառադարձության համար գործածվում է լատինական այբուբենը՝ որոշ հավելադիր նշաններով, ինչպես՝ ֆաղաֆ—k'ayak՝ անուն—anon, բերան—beran, հավասար—havasar և այլն:

Այդպիսի տառադարձություններ են կազմել Ն. Յա. Մառը, Ն. Հյուբշմանը: Ներկայումս ընդունված է վերջինիս կազմած և Ա. Մեյբի ու է. Բենվենիստի կողմից վերամշակված տառադարձությունը, որը և, հետևյալ պատկերն է ներկայացնում.

ա — a	ի — i	յ — y	տ — t
բ — b	լ — l	ն — n	ր — r
գ — g	խ — x	շ — š	ց — c'
դ — d	ծ — č	ո — o(vo)	ւ — w
ե — ē	կ — k	չ — č'	փ — p'(ph)
զ — z	հ — h	պ — p	ք — k'(kh)
է — e	ձ — j	ջ — ĵ	ու — u
ը — ə	ղ — γ	ռ — ř	և — ēw
թ — t'(th)	ճ — č	ս — s	օ — ō
ժ — ž	մ — m	վ — v	ֆ — f

§ 311. Գործնական տառադարձությունը կիրառվում է լեզվի սեփական այբուբենի տառերի և հարկ եղած դեպքում նաև տարբերակիչ նշանների միջոցով բառերը հնչյունաբանորեն ճիշտ արտահայտելու համար: Նման տառադարձությունը լայնորեն գործ էածվում հատկապես բարբառագիտական ուսումնասիրություններում, ինչպես, օրինակ՝ բան > բ'ան, բ'ան, բէն, պան, պէն, փան, փա, բ'օն, բ'ոն, պօն<sup>23</sup>, դնել > դնէլ, դ'նէլ, դ'նել, դ'րնել, տնել, քնել, տրիլ<sup>24</sup>, սիրա > սիրա, սիրգ, սիրա, սի'րդ, սէրա, սրէրա, սրոտ, սրա, սիդ<sup>25</sup> և այլն:

<sup>23</sup> Տե՛ս Նո. Անաչյան, Հայերեն արմատական բառարան, հտ. 4, էջ 403:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 676:

<sup>25</sup> Նույն տեղում, հտ. 4, էջ 221:

§ 312. Տառադարձության մի այլ տարատեսակն էլ գրադարձությունն (տրանսլիտերացիա) է, որի դեպքում մի լեզվի գրանշանները (այբուբենի տառերը) արտահայտվում են մի այլ լեզվի գրանշաններով, օրինակ՝ Հայաստան—Айастан, մատենադարան—матенадаран, վարպետ—варпет, «Գոլոս Արմենիի»—Голос Арменни, «Պրավդա»—Правда, հոմո հոմինի լուպուս—homo homini lupus, դեֆակտո դեյուրե—de facto de jure և այլն:

§ 313. Ավարտելով այսքանով գրաբանության, իբրև հնչյունաբանական-լեզվաբանական գիտաճյուղի նկարագրությունը, տեսնում ենք, որ այն ոչ միայն հայոց լեզվի գրային համակարգն է պատկերում՝ իր բազմազան արտահայտություններով, այլև այնպիսի իրողություններ է ներառում, որոնք մի կողմից եթե նրա հնչյունական կազմի ու համակարգի, ապա մյուս կողմից ուղղագրության ու ուղղախոսության հետ են կապվում՝ հնարավորություն ընձեռելով երկու դեպքում էլ դրանք գիտականորեն ավելի խոր ու համակողմանիորեն լուսաբանելու համար:

## ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՂԱՓԱՐ

§ 314. Ուղղագրությունը (= օրֆոգրաֆիա < հուն. orthos «ուղիղ» + grapho «գրում եմ») հնչյունաբանության և առավելապես՝ գրաբանության հետ կապված իրողություն է և իբրև գիտանվանում գործածվում է երկու նշանակությամբ: Ուղղագրություն ասելով հասկացվում է՝ ա) նախադասությունների, բառերի, բառաձևերի, ձևույթների՝ հանուրի կողմից ընդունված գրության կամ պարզապես ճիշտ գրելու կանոնների համակարգը և բ) լեզվաբանական այն գիտաճյուղը, որը զբաղվում է այդ համակարգի ուսումնասիրությամբ, բացահայտում ուղիղ գրելու կանոններն ու օրենքները, հիմնավորում դրանց կիրառման անհրաժեշտությունն ու կարևորությունը:

Այսպիսով, ամփոփ ձևով ասած, ուղղագրություն է կոչվում գրության ընդունված, պարտադիր համարվող կանոնների համակարգը և այդ համակարգն ուսումնասիրող ու բացահայտող գիտությունը:

§ 315. Գրության ընդունված, ուղիղ գրելու կանոնների համակարգը ներկայացնելով՝ ուղղագրությունը անմիջականորեն կապվում է գրի (այբուբենի) ու գրականության ստեղծման հետ և արտացոլում է այն փոփոխությունները, որ տեղի են ունեցել լեզվի հնչյունական համակարգում ու գրավոր խոսքում՝ նրա երկարատև զարգացման ընթացքում:

Եվ հետևաբար՝ բոլոր դեպքերում այն գրությունների պատմակա-

ներեն ստեղծված, մշակված համակարգ է և, իբրև այդպիսին, լեզվի զարգացման տարբեր փուլերում ծառայել է գրավոր խոսքի առաջադրած պահանջներին:

§ 316. Իբրև գիտաճյուղ, ուղղագրությունը վերաբերում է լեզվաբանական գիտությունը և ստեղծվել, մշակվել ու զարգացել է դրա զարգացմանը համընթաց: Այդ իմաստով այն նաև պատմական գիտություն է և, բնականաբար, լեզվի ոչ միայն մի շրջանում, այլև տարբեր փուլերում գործածվող գրության կանոնների ուսումնասիրությամբ է զբաղվում:

### ՈՒՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԻԻՐՆԵՐԸ

§ 317. Ուղղագրությունը, իբրև գրության համընդհանուր կանոնների համակարգ, ներառում է՝ ա) բառերի և նրանց իմաստակիր մասերի՝ հիմնական և երկրորդական ձևույթների (արմատ, ածանց, վերջավորություն, հոդեր) գրությունը, բ) բաղադրյալ բառերի, համադրական և վերլուծական բարդությունների, կայուն բառակապակցությունների գրությունը, գ) տառերի՝ մեծատառերի և փոքրատառերի գրությունը, դ) տողադարձը և նրա գործածությունը, ե) կետագրությունը և նրա գործածությունը:

§ 318. Ուղղագրությունը այդպիսով ուղղագրական բազմազան իրողությունների բավական մեծ ու տարողունակ համակարգ է և կապվելով գրաբանության հետ՝ ինչ-ինչ կողմերով եթե ընդհանրանում, ապա մի շարք կողմերով տարբերվում է նրանից, ինքնորոշվում իր հատուկ խընդիրներով ու նպատակներով:

Գրաբանությունը եթե գրության արտահայտության բոլոր միջոցների ամբողջությունն է, «ընդգրկում է բառերի բոլոր հնարավոր գրությունները» և նրա հետ «գործ ունի ընդհանրապես»<sup>1</sup>, ապա ուղղագրությունը գրային կանոնարկված միջոցների, բառերի միակերպ գրությունը սահմանող կամ հաստատող կանոնների համակարգն է և իր ընդգրկումներով ու ծավալով, անշուշտ, զիջում է նրան: Այդպիսին լինելով՝ ուղղագրությունը զբաղվում է գրության համընդհանուր կանոնների համակարգի ուսումնասիրությամբ և ըստ այդմ էլ պարզաբանում լեզվի հնչյունների (հնչույթների) և գրերի (տառերի) կապերն ու հարաբերությունը, հնչյունների գրային արտահայտությունները, ձայնավորների, բաղաձայնների, երկհնչյունների, մեծատառերի, տողադարձի, դժվարագիր և փոխառյալ բառերի գրության, ինչպես նաև կետագրության գործածության ընդհանուր կանոններն ու օրինակները:

<sup>1</sup> Л. Р. Зиндер, Общая фонетика, с. 283.

§ 319. Ուղղագրութիւնը, հարկավ, չի սահմանափակվում այդքանով: Իբրև գիտաճշուող, այն հետևում է ուղղագրական կանոնների կիրառմանը, կանխում է ուղղագրական խաթարումները, պաշտպանում է գրութիւնների միակերպութիւնը, հարկ եղած դեպքում անհրաժեշտ ճշգրտումներ է կատարում, դյուրացնում է երկգրութիւն ունեցող բառերի ուղղագրութիւնը:

Այսպիսով, ընդհանուր առմամբ, ուղղագրութիւնը ունի տեսական ու գործնական բավական մեծ նշանակութիւն, իր միակերպութեամբ նըպաստում է գրական լեզվի զարգացմանը, գրագիտութեան բարելավմանը՝ ելակետ ունենալով այն սկզբունքները, որ մշակել է գրավոր լեզուն իր պատմական զարգացման ընթացքում:

### ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՋՐՈՒՆՔՆԵՐԸ

§ 320. Որո՞նք են ուղղագրութեան հիմնական սկզբունքները կամ՝ քանի՞ տեսակ ուղղագրութիւններ են լինում հարցը էական նշանակութիւն ունի ինչպես ամեն լեզվի, այնպես էլ հայերենի ուղղագրութեան բնույթը որոշելու, նրա իսկական բնութագիրը տալու համար:

Ուղղագրութիւնը, իբրև ուղիղ գրելու կանոնների համակարգ, սկիզբ է առնում այբուբենի ստեղծումից և սովորաբար արտահայտվում է հընչունային կամ հնչույթային գրով, որի «հսկայական առավելութիւնն էլ նրանում է, որ շատ ավելի բազմակողմանորեն է արտացոլում լեզուն»<sup>2</sup>:

§ 321. Հնչունային-հնչույթային գիրը այն հիմքն է, որի վրա խարքսխվում է հնչունական ուղղագրութիւնը:

Դա ստեղծվում է սովորաբար «մի հնչունին մի գիր» սկզբունքով, որի համապատասխան էլ բառերը գրվում են այնպես, ինչպես արտասանվում են: Այդպիսի սկզբունքով ստեղծված ուղղագրութիւնը կոչվում է հնչունային ուղղագրութիւն, որ ամենակատարյալը լինելով՝ երբեք անփոփոխ չի մնում և ժամանակի ընթացքում փոփոխութիւններ կրելով՝ հիմք է դառնում նաև այլ տեսակի ուղղագրութիւնների առաջացման համար:

Դրանցից մեկը այն ուղղագրութիւնն է, որի դեպքում բառերը գրվում են ոչ թե այնպես, ինչպես արտասանվում են, այլ այնպես, ինչպես գրվել են անցյալում, օրինակ՝ դադար—դաթար, բարձրանալ—բարցրանալ, միջակ—միշակ, միբգ—միբբ, աղջիկ—ախշիկ, մարդկային—մարթկային և այլն:

Սազումնաբանորեն հնչունային ուղղագրութեան հետ է կապվում նաև այն ուղղագրութիւնը, որի դեպքում բառերը, արտասանութիւնից

<sup>2</sup> Л. И. Зиндер, Общая фонетика, с. 232

անկախ, գրվում են իրենց ձևույթների գրութայն համապատասխան, օրինակ ուսերենից՝ ДОМ (դոմ), ДОМОЙ (դամոյ), ДОМАШНИЙ (դամաշնի), ВОДА՝ (վադա), ВО՛ДКА (վոդկա), ВО՛ДНЫЙ (վոդնի), ВОДЯНКА (վադյանկա) և այլն:

§ 32-. Ըստ այդ սկզբունքների ուղղագրությունը հիմնականում լինում է երեք տեսակ՝ ա) հնչյունային կամ հնչյունական (որոշ լեզվաբաններ դա հնչույթաբանական են անվանում), բ) ավանդական և գ) նկարաձևական:

Դրանցից ավանդական ուղղագրության հետ են կապվում և նրա տարատեսակներն են՝

ա) պատմական ուղղագրությունը, որի դեպքում բառերը գրվում են ո՛չ ներկայիս արտասանության և ո՛չ էլ անցյալում ունեցած գրութայն համեմատ, ինչպես՝ ողջոյն—ողջույն (<վօխչյունի/վօղչյուն), աղբիւր—աղբյուր (<ախպյուր), քազաուր—քազավուր (<թաքավօր), համբույր—համբույր (<համփույր) և այլն. բ) ստուգաբանական ուղղագրությունը, որի դեպքում բառերը գրվում են ըստ իրենց ստուգաբանական բաղադրութայն, ինչպես՝ հօգուտ (<յօգուտ—ի+օգուտ), գիշեր ու գօր (<գիշեր ու գ+օր), մանրէ (<մանր+է), աղծաքազօծ (<արծաթ+ա+գ+օծ), ինչևէ (<ինչ+և+է) և այլն:

§ 323. Ոչ մի լեզվի ուղղագրություն բացարձակապես միայն մի սկզբունքի վրա չի խարսխվում: Նկատելի է, սակայն, որ այն սովորաբար որոշվում է մի հիմնական սկզբունքով: Ըստ այդմ էլ, օրինակ, հիմնականում ավանդական ուղղագրություն ունեն անգլերենն ու ֆրանսերենը, հնչյունական ուղղագրություն՝ վրացերենը, ձևաբանական ուղղագրություն՝ ուսերենը:

§ 324. Իսկ ինչպիսի՞ն է ժամանակակից հայոց լեզվի ուղղագրությունը, որի դեմ ահավոր պայքար է մղվում 1988 թ. ի վեր և պահանջվում, իբրև «սովետական բռնադատում ու ծոգարություն», «աղճատում ու աղավաղում», դուրս մղել գործածությունից և փոխարինել հնով:

§ 325. Ժամանակակից հայոց լեզվի ուղղագրությունը գերազանցապես՝ հնչյունային, պակաս շափով՝ ավանդական-պատմական ուղղագրություն է՝ ստուգաբանական ու ձևաբանական սկզբունքների առանձին տարրերով, և իրապես այլ բան չէ, քան հնուց ավանդված ուղղագրության բարեփոխված արտահայտությունը և առավել բարձր աստիճանը:

<sup>3</sup> Այդ տեսանկյունից նրա պաշտպանությանն են նվիրված մեր մի շարք հոդվածները, Երեցից են, օրինակ, «Ուղղագրությունը գիտություն է» («Սովետական դպրոց», 3 օգոստոսի 1962), «Զօգուտ արդի ուղղագրության», («Սովետական մանկավարժ», № 6, 1988), «Ինչու՞ է խաթարվում «մաշտոցեան ուղղագրութիւնը», («Ավանդարդ», 1 հոկտ. 1989), «Շերթական պատասխան», («ՄԵՆԿԱՎԱՐԺ», 1990, № 11), «Շալերենի նոր ուղղագրությունը և նրա մերժման անհիմն փորձերը» (ՊԲԷ, 1991, № 1), «Ներկայիս ուղղագրության մերժման նրկու խայտառակ փորձ ևս» («Շայաստան», 12 հունվ.

Դա են հաստատում այն փոփոխությունները, որ հայ գրական լեզվի զարգացմանը համընթաց արտացոլվել ու ամրակայվել են նրա մեջ: Արդ՝ տեսնենք, թե պատմական զարգացման ինչ ընթացք է ունեցել ժամանակակից հայոց լեզվի ուղղագրությունը:

### ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

§ 326. Հայոց լեզվի ուղղագրությունը կապվում է հայ գրի (այբուբենի) և գրականության ստեղծման հետ, խարսխվել է «մի հնչյունին մեկ գիր» սկզբունքի վրա և, բնականաբար, նախապես եղել է հնչյունային ուղղագրություն: Ըստ այդմ էլ հին հայերենում՝ գրաբարում, բառերը գրվել են այնպես, ինչպես որ արտասանվել են, օրինակ՝ մառդ, խաւսել (>խօսել), լոյս, ծառայ, զուարթ, յիմար և այլն: Այդ ուղղագրությունը, որ կոչվում է գրաբարյան կամ հին ուղղագրություն, և որով էլ ծովածավալ գրականություն է ստեղծված, միշտ նույնը չի մնացել և, պայմանավորված լեզվի հնչյունական կազմում կատարված փոփոխություններով, իր հերթին նույնպես որոշ փոփոխություններ է կրել:

Միջին դարերում, ինչպես հայտնի է, հայերենի այբուբենում հավելվում են օ և ֆ տառերը (տե՛ս § 292), որոնցից վերջինով գրվում են ֆ հնչյունն ունեցող փոխառյալ բառերը, իսկ առանջինով՝ բառաձայնից առաջ՝ աւ երկբարբառը: Հայտնի է նաև, որ ժամանակի ընթացքում ընդհանրացել են մի քանի տառերի, ինչպես՝ վ-ի, ռ-ի և ու-ի, ե-ի և է-ի, յ-ի և ճ-ի հնչումները, և այդ պատճառով նույնիսկ գրաբարյան հին բնագրերում երբեմն կամ հաճախ խախտվել է նրանց ուղղագրությունը, և, ասենք, ու-ի փոխարեն վ կամ ռ, ե-ի փոխարեն է գրվել կամ հակառակը<sup>4</sup>:

§ 327. Ուղղագրական շեղումներն ու խախտումները, բնականաբար, ավելի են շատանում ու շրջանի գրաբարյան բնագրերում և առավելապես միջին հայերենում, որ այլ բան չէր, քան ժամանակի խոսակցական հայերենի օրգանական շարունակությունը և գրառվելով՝ չէր կարող այսպես թե այնպես շարտացոլել կենդանի խոսքի հնչումներն ու արտասանությունները: Զերդ («ինչպես») բառն, օրինակ, որ ծագում է գրաբարյան զիարդ (<զի+արդ) բառից, միջին հայերենում արտահայտված ենք տեսնում գեդ, գէա, գես, գէք, գէչ, գերդ, գերք (դա այդպես

1993), «Կյանքը կորոշի» («Հայաստան», 12 մարտի, 1993), «Ուղղագրությունը ծուռ հայերու մեջ» («Հայաստան», 12 փետր., 1994), «Մի անգամ ևս ուղղագրության խառնաշփոթի և նրա վտանգավորության մասին» («Մեր խոսքը», 1 հոկտեմբերի, 1995 թ.):

<sup>4</sup> Ուղղագրական նման խախտումների մի շարք օրինակներ է բերել Ս. Գյուլբուգադյանը իր «Հայերենի ուղղագրության պատմություն» գրքում (Ծրեան, 1973, էջ 12—54):

է գործածել և Հովհ. Քումանյանը «Չմեռվա իրիկունը» թարգմանության մեջ՝ «Մին՝ ոռնում է գերք գազան»), գերտ ձևերով:

Այդպես և քիչ շին դեպքերը, երբ, ասենք, ա) ձայնեղ պայթականները (բ, դ, գ) և պայթաշփականները (ծ, ջ) գրվում են իրենց համապատասխան խուկերով (պ, տ, կ, ծ, ն) և կամ շնչեղ խուկերով (փ, ք, ֆ, ց, շ), ինչպես, օրինակ՝ արեղայ > փեղա (ԺԵ դ. հձհ, Բ, 304), ունդ > հունտ (ն. տ., 113), տառապեալս > դառապեալս (ն. տ., 5), յիշողացդ > յիշողացտ (ն. տ., 255), սուգ > սուֆ (ն. տ., 106), գանգատ > գանկատ (ն. տ., 138), հոգին > հոֆին (ն. տ., 289), ալլև՝ գեղեցիկ > գեղեցիֆ (ն. տ., 142), գմբէք > կըմբէք (ն. տ., 406), անեռօն > անեռոն (ն. տ., 389), անսայթաֆ > անսայթակ (ն. տ., 324), բաղարջ > բաղարն (ն. տ., 359) և այլն:

բ) Չայնեղ դ-ն խուկ խ-ով և կամ, ընդհակառակն, դա դ-ով է գրվում, ինչպես, օրինակ՝ աւաղ > աւախ (ն. տ., 100), թուզք > թուխտ (ն. տ., 85), սխալանս > սղալանս (ն. տ., 83), թախտ > թաղք (ն. տ., 217), թախծեալ էի > թաղծեալ էի (ն. տ., 136 և այլն:

գ) Ու-ն և կամ վ է գրվում, ինչպես, օրինակ՝ թուականիս > թվականիս (ն. տ., 16), նուէր > նրւէր (ն. տ., 86, 140, 297), նուիրակ > նվիրակ (ն. տ., 78), թուին > թւին > թվին (ն. տ., 12, 14) և այլն:

դ) Բառավերջում ա-ից հետո յ-ն չի գրվում; ինչպես, օրինակ՝ արեղայ > արեղա (ն. տ., 5, 27, 110), քահանա (ն. տ., 19), կա (ն. տ., 27), վայելել տա (ն. տ., 25), Վարդանա (ն. տ., 35), սկսա (ն. տ., 298), իմացա (ն. տ., 47), ի վերա (ն. տ., 293, 442) և այլն:

ե) Ե-ն՝ է, է-ն է է գրվում, օրինակ՝ մի՛ սպանաներ—մի՛ սպանանէր, առաբեր—առաբէր (ն. տ., 87), երէցս—էրէցս (ն. տ., 227) և այլն<sup>5</sup>:

§ 328. Սրանք փաստեր են, որոնք ցույց են տալիս, որ հին հայերենի՝ գրաբարի, հնչյունական ուղղագրությունը՝ ճիշտ նույնությամբ չի պահպանվել միջին հայերենում, որ միջին հայերենը ունեցել է իրեն հատուկ ուղղագրությունը, որը խարսխվելով հիմնականում գրաբարյան ուղղագրության վրա՝ հատկանշվել է ավելի շատ տարածություններով ու շեղումներով:

Սա էլ հիմք է տալիս միջինհայերենյան ուղղագրությունը համարելու հայոց լեզվի ուղղագրության պատմության երկրորդ շրջանը, որին էլ, բնականաբար, հաջորդում է նոր հայերենի՝ աշխարհաբարի ուղղագրությունը, մի ուղղագրություն, որ իր կանոններով ու օրենքներով ոչ թե միջին հայերենի, այլ դասական գրաբարի ուղղագրության հետ է կապվում և դրա յուրատեսակ շարունակությունը կազմում:

<sup>5</sup> Բոլոր օրինակների համար տե՛ս «Ժ գարի հայերեն ձևագրերի հիշատակարաններ», Մասն Բ, Երևան, 1958:

## ՆՈՐ ՀԱՅԵՐԵՆԻ ՌԵՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

§ 329. Նոր հայերենի՝ աշխարհաբարի ուղղագրութիւնը գրաբարյան ուղղագրութիւնի շարունակութիւնը լինելով՝ գործածվել և նաև որոշ փոփոխութիւններ է կրել նրա իսկ պատմական կյանքի զարգացման համապատասխան: Ընդ որում պետք է ասել, որ հայ ժողովրդի՝ երկու հատվածի բաժանված լինելու և այդ պատճառով մեկի փոխարեն երկու աշխարհաբար կամ երկու գրական լեզու ունենալու հանգամանքը իր դրոշմն է դրել նաև գրաբարից ժառանգված ուղղագրութիւնի վրա: Այդ ուղղագրութիւնը եթե պահպանվել և այսօր էլ գործածվում է արտասահմանյան համայնքներում ու կենտրոններում, ապա Արևելահայաստանում կամ Մայր Հայաստանում որոշ և այնպիսի փոփոխութիւնների է ենթարկվել, որոնց պահանջը, անշուշտ, հենց արևելահայ գրական լեզուն է առաջադրել:

§ 330. Բայց սա, իհարկե, չի նշանակում, թե Արևմտահայաստանում և առհասարակ արտասահմանում կիրառվող ուղղագրութիւնը զերծ է եղել կամ զերծ է անմիօրինակութիւններից, խտտորումներից ու շեղումներից, թե այն ամենևին բարեփոխութիւնի կարիք չի զգացել և կամ՝ փորձեր չեն արվել նրանում ինչ-որ փոփոխութիւններ կատարելու համար:

Ավելորդ չէ ասել, որ գրաբարի ճանաչված քերական Ա. Բաղրատունին ուղղագրական խաթարումներ է նկատել անգամ գրաբարում՝ ասելով, օրինակ, «Եւ մերթ ընդհակառակն փոխանակ լինի և ու-ի գրեն վ. Ահա՛վասիկ, խարդավանեմ, նուագ, նւագ, նվագ, և փոխանակ վելի ւ. Իջեւան, օթեւան, երիւար, վարսաւիրայ, հիւանդ, զօրաւիգն, վաւաշ և վավաշ. և սկիզբն վարեն փոխանակ ճոյի. լիւծեալ, լիւսել, լիւթական»<sup>6</sup>:

Ա. Բաղրատունուց առաջ, այն էլ՝ աշխարհաբարի ուղղագրութիւնի մեջ այդօրինակ խաթարումների ու անմիօրինակութիւնների մասին է խոսել և՛ «ականավոր քերական» (Մ. Նալբանդյան) հ. Գաբրիել Ավետիքյանը. «Անորոշ արտաբերութենէն մտեր է,— գրել է նա դեռևս 1815 թ.,— որ ու-ով կամ իւ-ով բառերը երբեմն վե՛վով կը գրեն. զորօրինակ բուրուառ և բուրվառ, երիվար և երիւար, նուագ և նրվագ, թուական և թվական:

Ասոնցմով կիմանաս պատճառը՝ որ ինչո՞ւ աս Քերականութիւնի աշխարհաբարին մեջ վե՛վով դրինք, անվան, պիտվական, հիմակվան, առավօտանց և այլն. անոր համար որ աշխարհաբար վե՛վ կըսենք նե, վե՛վ ալ գրելու է և ոչ ու կամ ւ, որ ծուռ հնչումը հաստատել շերեւնա՞?»:

<sup>6</sup> Ա. Բաղրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 642—643:

<sup>7</sup> Գ. Աւետիքեան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815, էջ 179:



Այսպիսով՝ հ. Գաբրիել Ավետիքյանի պես գրաբարի մեծագույն գիտակը հին կամ ավանդական, գրաբարյան ուղղագրութեան մեջ ու-ի և Վ-ի փոխարեն Վ-ի գործածութիւնը միանգամայն օրինաչափ ու հիմնավոր է համարել, Մ. Նալբանդյանի բնորոշմամբ «խոստովանելով նոր լեզվի սեփական ուղղութեան իրավունքը»<sup>8</sup>:

§ 331. Ուղղագրութիւնը մեկընդմիջտ տրված, քարացած բան չի համարել նաև նշանավոր քերական Արսեն Այտընյանը: Նշելով, որ «Հայերէն բառերուն ուղղագրութիւնը» «սակայն և ոչ այնչափ պարզ և որոշ է՝ որ ամենեւին մտադրութիւն չպահանջէ», որ «Քիչ կայ հայերէն բառ՝ որուն ուղղագրութիւնը սխալի ենթակայ չըլլայ», նա դա բացատրել է ժամանակի ընթացքում լեզվի հնչյունական համակարգի կրած փոփոխութիւններով:

«... Լեզուին բազմաթիւ տառերը,— հավաստում է Այտընյանը,— վայրապար ստեղծուած չըլլալով, յայտնի է, թէ ի սկզբան շատ պարզ և շատ որոշ էր ուղղագրութիւնը, քանի որ հին բնիկ հնչմունքը կենդանի էին և նման ձայներուն իրարմէ զանազանութիւնը բացայայտ էր և ղգալի: Հիմայ որ դարերէ ի վեր հնչմունքն այլայլած են, դժուարացած է ուղղագրութիւնն ալ...»<sup>9</sup>. կամ՝ «Ստորին դարուց մէջ (ԺԱ դարէն սկսեալ) շատ անգամ մը կը գրուէր Վ փխկ. և (իւրվի, տվել, տուեալ. նվագ, թվել, ծախվորել): Իսկ անցեալ դարուն վերջերն սկսան բանասէրք զանազանութիւն մը հաստատել գրաբար և աշխարհաբար ուղղագրութեան մէջ, միևնոյն բառին գրութեան կերպըն երկուքի բաժնելով «Վ փխկ. և կամ Ե փխկ. է և այլն»<sup>10</sup>: Ուղղագրական խոստորումները բացատրելով լեզվի հնչյունների արտասանութեան («հնչմունքի») փոփոխութեամբ և դա միանգամայն բնական համարելով՝ Ա. Այտընյանը միաժամանակ միակերպ ուղղագրութիւն ունենալու, միակերպ ուղղագրութեամբ առաջնորդվելու պահանջն է առաջադրել և այդ տեսակետից էլ ճիշտ ու բարձր գնահատել հին՝ ավանդական (գրաբարյան) ուղղագրութեան գործածութիւնն ու նշանակութիւնը:

§ 332, Արևմտահայ իրականութեան մեջ ուղղագրութեան բարեկամման խնդրով, սակայն, առանձնապէս զբաղվել է հայտնի գործիչ Նահապետ Ռուսինյանը (1819—1876)՝ 1853 թ, Գր. Օտյանի և Թնկրյանի հետ հրատարակելով «Ուղղախօսութիւն արդի հայ լեզուի» աշխատութիւնը:

Դավանելով այն սկզբունքը, որ «Ուղղագրութիւնը արտասանութեան հետեւելու է միշտ, և չէ թե արտասանութիւնը՝ ուղղագրութեանը», «բառ

<sup>8</sup> Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 4, Երևան, 1983, էջ 259:

<sup>9</sup> Ա. Այտընյան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 338:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 342:

մը ինչպես որ գրվի, այնպես ալ կհնչվի»<sup>11</sup>, նա ևս ուղղագրական փոփոխութիւնները օրինաչափ երևույթ է համարել և, օրինակ, պահանջել ավանդական ուղղագրութեամբ գործածվող ոչ-ը փոխարինել ույ-ով, ինչպես՝ յոյս > հույս, լոյս > լույս, կոյս > կույս, համբոյր > համբույր, վ լըս-վող ու-ն և լ-ն՝ վ-ով, ինչպես՝ թիւ > թիվ >, պատիւ > պատիվ, զուարթ > զվարթ, զուարեմ > զվարեմ, նուաղ > նվաղ, բառասկզբում հ լսվող յ-ն՝ հ-ով, ինչպես՝ Յիսուս > Հիսուս, Յուդայ > Հուդա, ա խոնարհման բայերի սահմ. եղանակի ներկայի եզակի թվի 3-րդ դեմքի ձևերում վերջի յ-ն չգրել, ինչպես՝ կերթայ—կերթա:

Դրանց հետ մեկտեղ ն. Ռուսինյանը արել է նաև այլ, խիստ ծայրահեղ ու մերժելի առաջարկութիւններ՝ պահանջելով, օրինակ, մի շարք բառերում ու բառաձևերում եա-ի փոխարեն գրել իա (ինչպես՝ արտասանութեան > արտասանութեան), ե-ի փոխարեն՝ է (ինչպես՝ բառեր > բառէր, դերանուններ > դերանուններ, գտնել > գտնէլ, պարզեց > պարզէց):

Ուղղագրական նման փոփոխութիւններով էլ հրապարակվել է «Ուղղախօսութիւն»-ը, որը, սակայն, 1854-ին արգելվել է Կ. Պոլսի պատրիարքարանի կողմից, խստագույնս դատապարտվել են նրա ուղղագրական նորամտծութիւնները, և դրանք կիրառութիւն չեն գտել կյանքում:

§ 333. Արևմտահայ իրականութեան մեջ Ռուսինյանից հետո ուղղագրութիւնը բարեփոխելու այլ փորձեր են եղել, բայց դրանք նույնպես դատապարտվել, նույն բախտին օն արժանացել և մնացել անհետևանք:

Հայերենի ուղղագրութեան բարեփոխութեան դեմ խստորեն են արտահայտվել Մխիթարյան միաբանութեան հատկապես ուշ շրջանի հայկաբանները (Գ. Մենկիշյան, Պ. Ղազիկյան, Վ. Հացունի և այլք) և մերժելով առհասարակ որևէ փոփոխութիւն՝ համարել դա սրբապղծութիւն:

§ 334. Եվ թեև այսօր էլ ամբողջ Սփյուռքում հիմնականում գործածվում է հին՝ ավանդական կամ գրաբարյան ուղղագրութիւնը, իսկութիւնը պահանջում է ասել, որ այն ամենևին միակերպ բնույթ չի կրում, ամենևին զերծ չէ զանազան տեսակի անմիօրինակութիւններից, այնպիսի շեղումներից ու խոտորումներից, որոնք, անշուշտ, գալիս են ավելի վաղ ժամանակներից և տարբեր հեղինակների գործերում, տարբեր գրավոր աղբյուրներում տարբեր պատկեր են ներկայացնում: Բովական է, օրինակ, ասել, որ դեռևս 140 տարի առաջ արևմտահայ նշանավոր դործիչ Գր. Օտյանը իր «Առաջարկութիւն աշխարհաբար լեզուի վրա» գրքույկում ոչ միայն վրայ-ի փոխարեն՝ վրա, այլև կրավորական բայերի ու-ի փոխարեն վ է գործածել, ինչպես՝ կը դրվին, կոկված, մոռացված, կարգատուրված, կը կարդացվին, ճաղօրդվիլ, հասկացրվիլ, սկսվի, համոզվինք և այլն:

§ 335. Արդ՝ ինչով բացատրել, որ այդպիսի պարագաներում հին՝

<sup>11</sup> Ն. Ռուսինյան, Ուղղախօսութիւն արդի հայ լեզուի, Կ. Պոլս, 1853, էջ 100:

ավանդական կամ գրաբարյան ուղղագրութիւնը արեւմտահայ իրականութեան մեջ և արտասահմանեան հայկական օջախներում ու համայնքներում չի բարեփոխվել և հիմնականում նույնն է մնացել: Դա, սնշուշտ, բացատրվում է հայ ժողովրդի արեւմտեան հատվածի և ընդհանրապես արտասահմանեան հայութեան պատմական կյանքով, պետական մարմնի ու իշխանութեան բացակայութեամբ: Սրան հավելվում է և այն, որ հին՝ ավանդական կամ գրաբարյան ուղղագրութիւնը, որ կարևոր պայման է ծառայել և մեծագույն դեր է խաղացել միակերպ գրական լեզվի ըստեղծման ու զարգացման գործում, հայկական Մեծ եղեռնից հետո հատկապես ազգապահպանման գործոն, ներկայի մշակույթը անցյալի մշակույթի հետ կապող օղակ է դիտվել և ըստ էութեան անձեռնմխելի համարվել:

Պատմական նման հանգամանքների պատճառով արեւմտահայ իրականութեան մեջ ինչպես մեծած գրաբարի դեմ և նոր լեզվի՝ աշխարհաբարի օգտին մղված պայքարը՝ գրապայքարը ավելի մեղմ բնույթ է կրել և ավելի երկար տևել, այնպես էլ հետևողական պայքար չի մղվել ուղղագրութեան մեջ բարեփոխութիւններ կատարելու համար, և եղած առաջարկներն էլ միշտ մերժվել ու անհետևանք են մնացել:

§ 336. Հին՝ ավանդական ուղղագրութեան բարեփոխման համար մղվող պայքարը այլ ընթացք է ունեցել արեւելահայ իրականութեան մեջ: Արեւելահայ աշխարհաբարով կամ գրական լեզվով հրապարկվող բոլոր գործերում շատ հաճախ են խախտվում ավանդական կամ գրաբարյան ուղղագրութեան կանոնները, և բազմաթիւ բառեր ու բառաձևեր գրվում են իրենց կենդանի հնչման համապատասխան:

Դրանք էլ անխուսափելիորեն ու բնականաբար ուղղագրութեան մեջ փոփոխութիւններ մտցնելու պահանջն են առաջադրում, որը ամենևին ոչ պատահականորեն սկիզբ է առնում նոր հայերենի՝ աշխարհաբարի մեծագույն պաշտպան Խ. Աբովյանից:

§ 337. Խոսելով միակերպ հնչվող վ, ու, ւ տառերի գրութեան մասին՝ Խ. Աբովյանը միանգամայն իրավացիորեն նկատել է, որ «Մեծ դրժուարութիւն պատճառէ ոչ միայն համբակին, այլև հաստնացեալ երիտասարդաց զանազանութիւն երից տառիցդ վ, ու, ւ»<sup>12</sup>, և կանոններ է մշակել դրանց ուղղագրութիւնը հեշտացնելու համար, նշել, թե որ դեպքում ինչ պետք է գրել:

Բացի այդ, գործնականում հնչման համապատասխան նա նախապատվութիւնը տվել է վ-ին, որը և բարձր է գնահատել Մ. Նալբանդյանը՝ ասելով. «պ. Աբովյանցը ավելի հավատարիմ մնալով նոր լեզվի

<sup>12</sup> Խ. Աբովյան, Նախաշավիղ, Երևան, 1941, էջ 17:

իրավունքին և արտոնութեան (ընդգծումն իմն է— Ա. Մ.), իր «Վերջ  
Հայաստանի» գործում ու-ի տեղ միշտ վեպ է գործածում»<sup>13</sup>:

§ 338. Ինքը՝ Մ. Նալբանդյանը ևս պաշտպանել է «նոր լեզվի իրա-  
վունքը» և դեմ է եղել այն «տեսակ պահպանողութեան», որոնք «ծանր  
են գալիս հասարակ ժողովրդին» և «դժվարացնում են ընթերցանությու-  
նը»:

Այդ նկատառումով էլ նա քննադատել է Պ. Պոռոջանին՝ անորոշ դեր-  
քայի ու վերջավորութեան փոխարեն ոյ (ինչպես՝ կենդանացնելոյ, գրե-  
լոյ, կանգնելոյ, նստելոյ), կրավորական բայերի վ ածանցի փոխարեն  
ու (ինչպես՝ բարձուում է, վերահաստատուիլը, պառակտուիլը) գործա-  
ծելու համար և միանգամայն տեղին նշել, որ եթե «այդ ու-ն վեպ պիտի  
հնչվի, ու պահելու խորհուրդն ինչ է՝ ընթերցանությունը դժարցնել»<sup>14</sup>:

Ի դեպ, ավելորդ չէ ասել, որ վեպագրութեանը նախապատվություն  
է տվել նաև «Սայաթ-Նովայի երգերի» հրատարակիչ Գ. Ախվերդյանը՝  
հատկապես իր իսկ գրած առաջաբանում և ծանոթագրութեաններում:

§ 339. Հին՝ գրաբարյան ուղղագրութեանը բարեփոխելու, այն բա-  
ռերի արտասանութեանը՝ հնչմունքին, համապատասխանեցնելու համար  
ավելի համարձակ քայլերի է դիմում «Կոունկ հայոց աշխարհի» («Հայոց  
աշխարհ») հանդեսի խմբագիր Ստեփան (Խորեն) Ստեփանեն:

Իր խմբագրական գործունեությունը սկսելով «համարձակ ուղղա-  
գրական նորաձևություններով», նա, իբրև «ուղղագրական ռեֆորմատոր»  
(Լեո), պահանջում է՝ ա) չգրել բառավերջում շհնչվող յ-ն, ինչպես՝ երե-  
խայ>երեխա, առաբկայ>առաբկա, ֆահանայ>ֆահանա. բ) վ հնչվող  
ու-ն և ւ-ն գրել վ, ինչպես՝ անուանում է>անվանվում է, դժուար>  
դժվար, օգտաւէտ>օգտավէտ. գ) բառասկզբի հ լսվող յ-ն փոխարինել  
հ-ով, ինչպես՝ յետոյ>հետո, յաջորդ>հաջորդ:

Այս և մի քանի այլ ուղղագրական փոփոխություններով գրեթե մի  
ամբողջ տարի հրատարակելով «Կոունկ հայոց աշխարհի» հանդեսը՝ Ստե-  
փան Ստեփանեն երկու դեպքում էլ խիստ ընդդիմության է արժանանում  
և հարկադրված նորից անցնում հին՝ շբարեփոխված ուղղագրությանը՝  
ազդարարելով միաժամանակ, թե «նոր ուղղագրությունս ընդունվելու և  
տարածվելու է անշուշտ մի օր հայերի մեջ»<sup>15</sup>: Եվ ամենևին պատահա-  
կան չպետք է համարել, որ Գր. Արծրունին «Աշխարհաբարի նորաձևու-  
թյունների հասարակական նշանակությունը» հողվածով շատ բարձր է  
գնահատել Ս. Ստեփանեի՝ ուղղագրությունը բարեփոխելու փորձերը և  
գրանք համարելով «որպես բողոք անշարժության դեմ»՝ նշել, որ նա

<sup>13</sup> Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 4, էջ 259:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 261:

<sup>15</sup> «Հայկական աշխարհ», 1870, № 12, էջ 293:

«գուցե և անհետեաբար վարվելով՝ առաջինն է եղել, որը ըմբռնեց (.....)՝ ժողովրդական աշխարհաբար լեզվի պահանջմունքը»<sup>16</sup>:

§ 340. Գնալով ավելի է սրվում այդ պահանջմունքը: Անցյալ դարի 70-ական թվականներից սկսած լայն քննարկման առարկա է դառնում հատկապես վ հնչվող երեք տառերի՝ վ-ի, ու-ի, լ-ի ուղղագրության հարցը: Ուժեղ պայքար է ծավալվում այսպես կոչված վեվագրության ու հյունագրության հարցի շուրջը: Գրող ու մանկավարժ Ղ. Ազալանը ջերմեռանդորեն պաշտպանում է հյունագրությունը և բազմաթիվ հողվածներով ու մեկնաբանություններով ջանում է հիմնավորել, որ վ պետք է գրվի միայն բառասկզբում (ինչպես՝ վատ, վիատ, վերջ) և ու-ից հետո (ինչպես՝ ծով, խորովել, գովասանք), իսկ լ՝ մնացած բոլոր դեպքերում (ինչպես՝ լաւ, բաւարար, անիւ, բարեւ):

Այդպես էլ նա հրատարակում է իր ստեղծագործություններն ու կազմած դասագրքերը, և լ-յունագրությունը լայն տարածում է գտնում, այն ընդունելի ու ճիշտ է համարում անգամ անվանի գիտնական Նիկոլաջ Ադոնցը<sup>17</sup>:

Մյուս կողմից ուրիշները մերժում են լ-յունագրությունը և գտնում են, որ վ հնչվող ու-ն և լ-ն պետք է ևս վ (վեվ)-ով գրվեն:

Ի հակադրություն Ղ. Ազալանի, վեվագրությունը պաշտպանում է լեզվաբան Ս. Սարգսյանցը՝ իր «Հին թե՞ վեվ» ուսումնասիրության մեջ նշելով, որ լ (իւն)-ը վաղուց է կորցրել իր հնչյունային արժեքը և պետք է փոխարինվի վ-ով: Նույնն է պահանջել նաև Ստ. Մալխասյանցը: Քըննադատելով Ղ. Ազալանին և ասելով, թե նրա «մտքած թեֆորմը ոչ միայն հեշտություն ու միօրինակություն չի մտցնի մեր գրության մեջ, այլև նորանոր թյուրիմացություններ ու շարիքներ առաջ կը բերե»<sup>18</sup>, Մալխասյանցը գտնում էր, որ պետք է առաջնորդվել «մի հնչյունին մի գիր» սկզբունքով, և «բոլոր այն տեղերում, ուր «վ» հնչյունը մենք արտահայտում էինք «վ», «ու», «լ» գրերով՝ գործածել միայն «վ», այսպիսին՝ մի հնչյունի արտահայտության համար գործածել մի գիր (ընդգծումն իրենն է— Ա. Մ.): Փոխանակ գրելու «վան» և «նաւ»՝ գրել վան, նավ. փոխանակ գրելու «հով» և «հաւ»՝ գրել հով և հավ. փոխանակ գրելու «լուծուած» կամ լուծած»՝ գրել լուծված. փոխանակ գրելու «խոռովուեյ», «զլորուեյ»՝ գրել խռովել, զլորվել և այլն»:

§ 341. Հակադիր կարծիքներ հայտնելով և տարբեր ուղղագրություններ գործածելով՝ լ-յունագրության և վեվագրության պաշտպանները իրապես մի հիմնական նպատակ էին հետապնդում՝ կանոնավորել վ-ի, ու-ի, լ-ի ուղղագրությունը և միակերպ, միօրինակ դարձնել այն:

<sup>16</sup> «Հայկական աշխարհ», 1887, № 9:

<sup>17</sup> Ն. Ադոնց, Լեզական ուղղագրական (ճիւղեր գրականության և արվեստի), Բ գիրք, Ս. Պետերբուրգ, 1904):

<sup>18</sup> Ստ. Մալխասյանց, Մի հնչյունին մի գիր, Թիֆլիս, 1910, էջ 17:

Պահպանողական խավը, սակայն, ի դեմս Մխիթարյան վանահայր Գ. Մենևիշյանի, ծառանում է ինչպես մեկի, այնպես էլ մյուսի դեմ՝ շահնդուրժելով առհասարակ որևէ փոփոխություն ուղղագրության մեջ:

Գ. Մենևիշյանը խստորեն մերժում է վեվագրությունը և Ստ. Մալխասյանցի՝ վ-ով գրելու առաջարկը համարում է «հայերէնի դէմ յանդրգնութիւն մը», մեկ հնչյունին մեկ գիր սկզբունքը՝ սոփեստություն ու «բուրժուազիս սխալ վարդապետութիւն»: Զխորշելով անգամ վիրավորանքներին՝ նա ազդարարում է, թե Մալխասյանցը «քանդիչ հարվածներ կիջեցնէր հայերէնի շէնքին»<sup>19</sup>, «հայերէն պարզ ուղղագրութիւնը» «ազաւաղելու կը ջանայ»<sup>20</sup>, և հակադրվելով թե՛ նրան և թե՛ Ղ. Աղայանին՝ ասում. «Կը դատապարտենք նվէրն ալ, նւէրն ալ, կը մնանք հաստատուն նուէրի վրայ, քանի որ այս վերջինը կը կապէ զմեզ մեր նախնեաց կանոնաւոր ուղղագրութեան հետ»<sup>21</sup>:

§ 342. Հին՝ ավանդական կամ գրաբարյան ուղղագրության մոլի պաշտպանները, անշուշտ, չէին գիտակցում կամ չէին ուզում գիտակցել, որ ուղղագրության բարեփոխության պահանջը ոչ թե առանձին անհատներ, այլ կյանքը և արդեն միակերպության հասած հայ նոր գրական լեզուն էին առաջադրում:

Արևելահայ իրականության մեջ անցյալ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներում ուղղագրության բնագավառում իրապես խառնակ վիճակ էր ստեղծվել, որը մի կողմից եթե պարզեցում, ապա մյուս կողմից՝ մեծ դժգոհություն էր առաջ բերում: Եվ բնավ էլ անտեղի չէր, որ դեռևս 1906 թ. «Ընկեր» շաբաթաթերթում մի շաբաթյին ուսուցիչ այսպես էր արտահայտվում. «Ուղղակի մնում եմ ապշած, երբ մեր ուղղագրության մասին եմ մտածում: Տե՛ր Աստված, այս ի՛նչ քաոս է, որ մեր փքուն թերթերը, ամսագրերը, շաբաթաթերթերը, հանդեսները, մանկավարժները, վիպասանները և այլն, ստեղծել են մեզ նման հասարակ մահկանացուների համար. մեկը գրում է սիրուել, մյուսը՝ սիրվել, երրորդը՝ սիրել...» (19):

§ 343. Եվ միանգամայն իրավացի էր Մ. Աբեղյանը, երբ նման վիճակը նկատի ունենալով՝ շատ ավելի առաջ՝ 1892 թ. գտնում էր, որ «Հայոց լեզվի ուղղագրությունը դեռ իր վերջնական որոշ, միաձև կերպարանքը չի ստացել: Գրեթե ամեն մարդ իր առանձին ուղղագրությունն ունի (ընդգծումն իմն է— Ա. Մ.) և շատ անգամ առանց որևէ հիմունքի, ինչպես պատահում է, գրում է. դրա համար և մեր ուղղագրության մեջ տիրում է բազմատեսակություն, մինչդեռ լեզվի մեջ գրության միատեսակությունն անհրաժեշտ է»<sup>22</sup>:

<sup>19</sup> Գ. Մենևիշյան, Հայերէն լեզուի խնդիրը, Վիեննա, 1910, էջ 33:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 53:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 29:

<sup>22</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի ուղղագրությանը, Քիֆլիս, 1892, էջ 3:

§ 344. Սա ինչպես տեսական, այնպես էլ գործնական մեծ նշանակություն ունեցող հայ գրական լեզվի զարգացմանը և գրագիտության մակարդակի բարելավմանը նպաստող կարևորագույն խնդիր էր, որի լուծմանը ձեռնամուխ է լինում հենց ինքը՝ Մ. Աբեղյանը, ծավալելով բազմաբեղուն գործունեություն հայ նոր գրական լեզվի ուղղագրությունը միատեսակ-միակերպ դարձնելու համար:

Իր այդ գործունեությամբ նա անվիճելիորեն մեծագույն ծառայություն է մատուցում հայերենի ուղղագրությանը, որը և ճշտորեն ըմբռնենելու դեպքում միայն ճշտորեն կարելի է գնահատել այն փոփոխությունները, որ տեղի են ունեցել գրաբարից ժառանգված ուղղագրության մեջ:

Ժամանակակից հայոց լեզվի բարեփոխված ուղղագրության դեմ վերջին տարիներս տարվող պայքարը և դրանից բխող հնարավոր ծանր հետևանքները ստիպում են ինչ-որ շափով ավելի ծանրանալ այն հարցի վրա, թե իրականում ուղղագրական ինչպիսի գործունեություն է ծավալել Մ. Աբեղյանը և ինչով է նշանավորվում ու արժեքավորվում այն:

### ՄԱՆՈՒԿ ԱՐԵՂՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 345. Մ. Աբեղյանի (1865—1944) բազմաբովանդակ գիտամանկավարժական գործունեության մեջ կարևոր ու ծանրակշիռ տեղ են բռնում նաև հայերենի ուղղագրությանը վերաբերող աշխատանքները: Նրավիրվելով ու ազնվորեն ծառայելով հայագիտությանը, հայ դպրոցին, հայոց լեզվի ու գրականության ուսուցմանը, հայ ժողովրդի լուսավորության գործին՝ Մ. Աբեղյանը սկզբից ևեթ խորապես գիտակցել է ուղղագրության կարևորությունն ու գործնական նշանակությունը և մի քանի տասնամյակ զբաղվել նրա խնդիրներով:

§ 346. Մ. Աբեղյանի ուղղագրական գործունեությունն ընթացել է երկու՝ տեսական ու գործնական աշխատանքների ուղղությամբ և ըստ էության երեք հիմնական շրջանի է բաժանվում:

Առաջին շրջանում, որ ընդգրկում է 1890—1912 թվականները, Աբեղյանը զբաղվել է ուղղագրության և՛ տեսական հարցերի լուսաբանմամբ, և՛ գործնական աշխատանքներով:

Մի շարք հոդվածներից («Գրաբարի երկբարբառները և ու թե՞ և թե՞ վ», «Ժողովրդական լեզվի շեշտադրությունը», «Ուղղագրական նկատողություններ», «Հայոց լեզվի ուսումը», «Հաճո՞ւյք թե օրենք» և այլն) բացի<sup>23</sup>, որոնցում թե՛ տեսական, թե՛ գործնական նշանակություն ունեցող հարցեր են շոշափվում, նշվում, որ «այժմ մեր ուղղագրությունը մեծ դժվարություն է ներկայացնում», «ուղղագրության խնդիրը լեզվի ուսումնասիրության մեջ կարելի չէ երկրորդական համարել»<sup>24</sup>, «ամե-

<sup>23</sup> Դրանց մասին տե՛ս «Նոր-գար», 1890, 1891, 1893:

<sup>24</sup> «Նոր-գար», 1890, № 151:

նայն գրական լեզվի համար պահանջվում է մի տեսակ ուղղագրություն»<sup>25</sup> և այլն, Մ. Աբեղյանը նաև առանձնաբար ուսումնասիրել է հայոց լեզվի ուղղագրությունը՝ 1892 թ. հրատարակելով «Հայոց լեզվի ուղղագրությունը» աշխատությունը:

Այդտեղ ներկայացնելով ժամանակի հայ գրական լեզվի ուղղագրության, ներառյալ նաև կետագրության ընդհանրական կանոնները, Մ. Աբեղյանը, ինչպես ինքն է ասում, մի կողմից «ուղղագրության ընդհանուր սկզբունքների վրա հիմնված» «գրության բազմատեսակությունների և տարածայնությունների մեջ միություն մտցնելու», մյուս կողմից՝ մարդկանց հայերենի ուղղագրությունը սովորեցնելու նպատակ է հետապնդել:

Նույնպիսի նպատակով նա ուղղագրությանը պատշաճ տեղ է հատկացրել նաև «Աշխարհաբարի քերականություն» (Վաղարշապատ, 1906, էջ 18—38), «Տարրական քերականություն» (1907, 2-րդ տպ.՝ 1908, 3-րդ տպ.՝ 1910, 4-րդ տպ.՝ 1913, 5-րդ տպ.՝ 1916) գրքերում և մեծապես նպաստել դպրոցներում ուղղագրության ուսուցման բարելավման և սովորողների գրագիտական մակարդակի բարձրացման խիստ կարևոր գործին:

Նույն այդ շրջանում Աբեղյանը, սակայն, չի բավարարվել այդքանով. նա կազմել է թելադրության համար «Գայլ և պատահարներ», արտագրության համար Արտ. Աբեղյանի և Մամբրե Մատինճյանի հետ՝ «Գրագետ» ուղղագրական հոդվածների ժողովածուները, որոնք և, իբրև ուղղագրության լավագույն դասագրքեր, քանիցս հրատարակվելով՝ գործնական բավական մեծ դեր են խաղացել կյանքում:

§ 347. Իր ուղղագրական գործունեության սկզբնական (ավելի երկար) շրջանում Մ. Աբեղյանը եթե ժամանակի ընդունված ուղղագրությունը կիրառելու և այն դպրոցներում լավագույնս ուսուցանելու խընդիրներով է զբաղվել ու նման նպատակներ հետապնդել, ապա հետագայում հանդես է եկել նաև նրա մեջ որոշ փոփոխություններ կատարելու առաջարկություններով ու պահանջով:

Այդպիսով՝ սկսվում է Աբեղյանի ուղղագրական գործունեության մի նոր՝ ավելի բարձր շրջանը, որը նշանավորվում է 1913 թ. հոկտեմբերի 14-ին էջմիածնում հայոց գրերի գյուտի համազգային մեծ հոբելյանի հանդեսի ժամանակ կարդացված «Մեր ուղղագրության մասին» զեկուցմամբ:

Դա, որ տպագրվել է «Արարատ» ամսագրի նույն տարվա 11—12-րդ համարներում (էջք 1047—1071, 1120—1141) և արտատպվել հեղինակի «Երկերի» 8-րդ հատորում (Երևան, 1985, էջ 330—366), ոչ թե սովորական զեկուցում, այլ մի ամբողջական, կուռ ու տրամաբանական քննություն է, որտեղ և հայ նոր գրական լեզվի ուղղագրության և՛ բնույթն

<sup>25</sup> «Նոր-դար», 1890, № 151:



ու էությունն է պարզաբանվում, և՛ իրական վիճակն է ներկայացվում, և՛ ինչ հիմունքներով ուղղագրական ինչպիսի փոփոխություններ կատարելու ուղիներն են նշվում:

§ 348. Մ. Աբեղյանի այդ քննությունը, բնականաբար, ամբողջությամբ առած, հայ նոր գրական լեզվի ուղղագրության լեզվաբանական խոր գիտական տեսությունն է և, իբրև այդպիսին, բոլոր կարևոր ու էական հարցերի ճիշտ պատասխանն է տալիս: Եվ իսկապե՛ս. Մ. Աբեղյանը այնտեղ ամենից առաջ միակերպ ուղղագրություն ունենալու խրեդիքն է դնում և բացահայտելով գրա նշանակությունը՝ նշում, որ «ամեն գրական լեզվի համար միակերպ քերականության հետ անհրաժեշտ պայման է նաև միակերպ ուղղագրությունը (ընդգծումն իրենն է— Ա. Մ.), որով պահվում է գրական լեզվի միությունը»<sup>26</sup>:

Ուղղագրական փոփոխությունները համարելով լեզվի հնչյունական կազմում օրինաչափորեն կատարված փոփոխությունների արդյունք և պատմական իրողություն՝ Աբեղյանը գտնում է, որ հայ գրական լեզուն զարգանալով ու միակերպության հասնելով՝ ինքն է՛ առաջադրում միակերպ ուղղագրության պահանջը:

Այդ առումով էլ նա ճիշտ ու բարձր է գնահատում հին՝ գրաբարյան ուղղագրության դերն ու նշանակությունը՝ ասելով, օրինակ, «Շատ անգամ հայտնված ճշմարտություն է, որ աշխարհաբարը չէր կարող այնպես արագ զարգանալ, եթե չլիներ գրաբարի ուղղագրությունը: Բայց ճշմարտություն պետք է ընդունել և այն, որ եթե չլիներ գրաբարի ուղղագրությունը, մենք դժվար թե ունենայինք մեր առդի գրական լեզուն (ընդգծումն իմն է— Ա. Մ.)»<sup>27</sup>. կամ՝ «գրաբարի ավանդական գրությունը, որ ընդունել են ամենուրեք, մի անհրաժեշտ միջոց է եղել աշխարհաբարը առաջ բերելու համար, քանի որ ոչ մի տեղի արտասանություն չէր կարող տեղի տալ մյուսի առաջ, իսկ ընդհանուր միատեսակ գրությունն անհրաժեշտ պայման է գրական լեզվի համար»<sup>28</sup>, և կամ՝ «Եվ եթե մի գրական լեզու պիտի լիներ միակերպ ուղղագրությամբ, դա պիտի լիներ անհրաժեշտորեն գրաբարի ուղղագրությամբ, և ոչ մի ուրիշ (այս ընդգծումը ևս իմն է— Ա. Մ.)»<sup>29</sup>:

§ 349. Իրողությունը այդպես մեկնաբանելով՝ Մ. Աբեղյանը միաժամանակ գտնում էր, որ գրաբարյան ուղղագրությունը չէր կարող մինչև վերջ իրականությամբ կիրառվել և պետք է որ միակերպ գրական լեզվի պահանջով ինչ-որ շափով բարեփոխվեր և համապատասխաներ նրան:

Իսկ սա նշանակում է, որ հին՝ գրաբարյան ուղղագրության ավելի

<sup>26</sup> Մ. Աբեղյան, *Երկեր*, Ը, Երևան, 1985, էջ 330:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 33:

<sup>28</sup> Նույն տեղում:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 338:

վազ փոփոխությունը միայն վնասել կարող էր հայ գրական լեզվին և խառնափնթոր գրություն ստեղծել:

Եվ հենց դրանով էլ նա բացատրում է, թե «ինչու՞ աշխարհաբարի առհասարակները 19-րդ դարում առանձին ուշադրության չեն առել ուղղագրության խնդիրը», և նաև նշում, որ ուղղագրության փոփոխության անցյալի փորձերը անհաջողության են մատնվել և մնացել անհետևանք, որովհետև «Դրանք այդ ժամանակ լոկ վնասել կնշանակեին աշխարհաբարի գործին՝ դանդաղեցնելով նրա հաղթությունը գրաբարի վրա»<sup>30</sup>:

§ 350. Իսկ երբ արդեն այդ հաղթությունը ապահովված էր, երբ արդեն հայ նոր գրական լեզուն միակերպության էր հասել, բնականաբար և հասունացել էր հին՝ ավանդական ուղղագրության բարեփոխության խնդիրը, որը և առաջադրելով և միանգամայն ճիշտ սկզբունքներով առաջնորդվելով՝ Մ. Աբեղյանը գտնում էր, որ՝ ա) ուղղագրական փոփոխությունը պետք է հիմնված լինի «միայն ընդհանուր գրական արտասանության վրա», բ) այն այնպիսին պետք է լինի, որ շաղարտի «բառերի ընդհանուր պատկերը», և նրանք շատ չպետք է տարբերվեն իրենց բուն, սկզբնական ձևերից, գ) այդ իսկ պատճառով չի կարելի և չպետք է դիպչել բաղաձայնների ուղղագրությանը, և դա «անձեռնմխելի պիտի մնա», դ) ուղղագրական փոփոխությունը միայն մասնակի բնույթ պիտի կրի, այն էլ՝ «ձայնավորների գրության մեջ», ե) ուղղագրական փոփոխությունը ոչ թե տարբերայնորեն ու միանգամից, այլ «որոշ սխտեմով և հետզհետե, միայն աստիճանաբար պիտի լինի»<sup>31</sup>:

§ 351. Այս սկզբունքները կամ պայմանները հիմք ընդունելով՝ Մ. Աբեղյանը առաջարկում է՝

ա) «բառերի մեջ օ հնչյունը» գրել «միշտ օ տառով, իսկ բառի սկզբում՝ օ տառով (բացի ով, ովկիանոս)».

բ) «բառերի սկզբում վն վանկը գրել օ-ով».

գ) «է-ն պահել բառերի վերջում, քանի որ այս գրությունն ընդհանուր ընդունված է, և շատ որոշ է».

դ) է գրել՝ 1) «բառերի սկիզբն ու մեջը փակ վանկերում, երբ այդ է-ն փոխվում է ի ձայնավորի (բացառություն՝ էն ձայնարկությունը). 2) «բառերի մեջը և սկիզբը», «երբ ծագում է այ երկբարբառից՝ էս, էդ, էգուց, էրիկ, դէս, դէն և այլն: «Վայր ընկնել, վէր ընկնել», 3) «բառերի սկիզբն ու մեջը՝ ա, ի, օ, ու ձայնավորներից առաջ».

ե) բառավերջի անձայն յ-ն չգրել ա և օ ձայնավորներից հետո (ինչպես՝ ծառայ—ծառա, զարմանայ—զարմանա)».

զ) բառասկզբի յ-ն փոխարինել հ-ով.

է) վ, լ և ու տառերի փոխարեն վ հնչելու դեպքում գրել միայն վ<sup>32</sup>:

<sup>30</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, Ը, էջ 340—349:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 338:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 349—355:

§ 352. Ուղղագրութեան փոփոխութեան նման առաջարկներ անելով՝ Մ. Արեղյանը միաժամանակ խորապես գիտակցում էր, թե ինչպիսի դժվարութիւններ հետ է կապվում և ինչ դժգոհութիւններ կարող է հարուցել այն: Նա նաև գիտակցում էր, որ ուղղագրութեան փոփոխութիւնը հավասարապես վերաբերում է և արևմտահայերենին, որը, ինչպես հայտնի է, հնչյունական մի շարք իրողութիւններով տարբերվում է արևելահայերենից:

Մտահոգվելով այդ խնդրով՝ իր առաջարկութիւններով Արեղյանը, անշուշտ, հետամուտ էր լինում երկու հայ գրական լեզուների ավելի սերտ մերձեցմանը և անգամ ասում, որ «եթե որևէ փոփոխութիւն պիտի վերացնի մեր ուղղագրութեան միութիւնը և մեր երկու գրական լեզուները իրարուց ավելի հեռացնի, ավելի լավ է, որ չլինի»<sup>33</sup>:

§ 353. Այսպիսով՝ ուղղագրութեան խնդիրը ժամանակի կարևոր ու դժվարին խնդիրներից մեկն էր, որի լուծումը հեշտ չհամարելով՝ Մ. Արեղյանը պահանջում էր ստեղծել «մի հեղինակավոր խորհուրդ՝ մասնագետներից կազմած, որ լրջութեամբ պարապէր այդ խնդրով, բազմակողմանի կերպով ուսումնասիրեր մեր ուղղագրութիւնը և մի որոշ լուծում տար ընդունելի կամ մերժելի փոփոխութիւնների համար»<sup>34</sup>:

Պատմական դառն հանգամանքները՝ 1915 թ. Մեծ եղեռնը, 1914 թ. ծագած առաջին համաշխարհային պատերազմը, անհնարին են դարձնում այդպիսի խորհրդի ստեղծումը, ու ուղղագրութեան բարեփոխութեան հարցը մնում է չլուծված: Եվ միայն 1920 թ. Արևելահայաստանում խորհրդային կարգեր ստեղծվելուց հետո հնարավորութիւն է ընձեռվում քննութեան առնելու այն և փոփոխութիւններ մտցնելու հին՝ ավանդական ուղղագրութեան մեջ:

Այդ ժամանակվանից էլ սկսում է Մ. Արեղյանի ուղղագրական գործունեութեան երրորդ՝ ուղղագրական փոփոխութիւնների ընդունման շրջանը:

## ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈՒՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՌԵՖՈՐՄՆԵՐԸ)

Ուղղագրության յուրաքանչյուր բարեփոխության դեմ ամենից շատ ծառայում են նրանք, ովքեր ծանօթ չեն դրա պատմությանը:

2. ՍՎԻՏ

§ 354. Հայերենի ուղղագրութիւնը բարեփոխվել է երկու անգամ՝ 1922 և 1940 թվականներին: 1922 թ. բարեփոխութիւնը, որ համեմատաբար ավելի շատ կետեր է պարունակում և առաջինը լինելով՝ ուղղա-

<sup>33</sup> Մ. Արեղյան, Երկեր, Հ, էջ 366:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 365:

գրութեան հիմնական բարեփոխութիւնն է կոչվում, կապվում է Մ. Արեղյանի անվան հետ:

Ի՞նչ ամենևին էլ պատահական չպետք է համարել, որ այդ՝ 1922 թ. ուղղագրութեան բարեփոխութեան պատմութիւնը ճշտորեն է ներկայացրել հենց ինքը՝ Մ. Արեղյանը՝ ասելով. «1921 թ. հունվար ամսին Հայաստանի Հանրապետութեան Ժ. [ողովորդական] կոմիսար Ա. Հովհաննիսյանի հրավերով Երևանում բազմամարդ ունկնդիրներէի առաջ կարողացի մեր ուղղագրութեան բարեփոխութեան մասին մի զեկուցում, որից հետո եղավ մտերի փոխանակութիւն: Այդ խնդիրն ինձ համար նորութիւն չէր, որովհետև նույնպիսի զեկուցում կարդացել էի 1913 թ. հայոց գրերի գլուտի մեծ հոբելյանի առթիւ հոբելյանական հանձնաժողովի հանձնարարութեամբ: Իմ զեկուցումը լուս. Ժող. կոմիսարը ներկայացրեց մի հանձնաժողովի, որ և ընդունեց այն, ապա կոմիսարը տպագրել տալով այն՝ ուղարկեց շատերին, ցանկանալով «լսել հայ լեզվի մշակներէի, առանձնապես լուսավորութեան գործով մտահոգվածների խոսքը»:

Որքան գիտեմ, ոչ մի տեղից չլսվեց այդ խոսքը: 1922 թ., որքան հիշում եմ, փետրվար ամսին, կազմվեց մի 2-րդ հանձնաժողով, որ նորից քննութեան առնելով իմ զեկուցումը՝ իր կարծիքը մեր լեզվի ուղղագրութեան ուղիքի մասին՝ ներկայացրեց լուս. Ժող. կոմիսարին, բայց լուս. Ժող. կոմ. ընկեր Պ. Մակինցյանը ոչ թե Հանձնաժողովի կարծիքը, այլ իմ Ձեկուցման մեջ արված բոլոր առաջարկութիւնները ներկայացրեց Ժող. Կոմիսարներէի Խորհրդին, որ և 1922 թ. մարտի 3-ին հաստատեց այն և հրամայեց գործադրել (ընդգծումները իմն են — Ա. Մ.)»<sup>85</sup>

§ 355. Այսպիսով՝ ինչպես հաստատվում է և սույն վկայութեամբ՝ ա) 1922 թ. մարտի 4-ին ընդունված դեկրետից առաջ Մ. Արեղյանը «բազմամարդ ունկնդիրների առաջ» հայոց լեզվի ուղղագրութեան մասին հանդես է եկել հատուկ զեկուցմամբ<sup>86</sup>, գիտականորեն հիմնավորել, թե ինչպիսիք պետք է լինեն բարեփոխումները և անելով երեք առաջարկութիւն («1. Օ և է տառերը դուրս ձգել այբուբենից» և «ամեն դեպքում օ և է հնչյուններն արտահայտել օ և է տառերով», «2. վ հնչյունն ամեն դեպքում գրել միայն վ տառով» և «3. բառերի վերջում ա և օ ձայնավորներից հետո գրվող անձայն յ տառը դուրս ձգել»), «բառերի սկզբում հազագային յ տառի փոխանակ գրել հ»)՝ նշել նրանց գործնական նշանակութիւնն ու կարևորութիւնը. բ) Արեղյանի զեկուցումը քննութեան առնելու համար երկու անգամ (1921 և 1922 թթ.) հանձնաժողով է կազմվել, և լուսժողովում Պ. Մակինցյանը ոչ թե դրանցից երկրորդի կարծիքը, այլ Մ. Արեղյանի արած «բոլոր առաջարկութիւններն

<sup>85</sup> Մ. Արեղյան, Ուղղագրութեան ուղիքը, Երևան, 1925, էջ 3, այլև՝ Երկեր, Ը, Երևան, 1985, էջ 384:

<sup>86</sup> Տե՛ս Մ. Արեղյան, Ձեկուցում հայոց լեզվի ուղղագրութեան ուղիքի մասին, էջ-միածին, 1921:

է ներկայացրել ժողովում խորհին», որը և դրան համապատասխան դեկրետ է ընդունել 1922 թ. մարտի 4-ին:

§ 356. Այդ դեկրետով, որ լույս է տեսել «Խորհրդային Հայաստան» թերթի նույն տարվա մարտի 18-ի համարում՝ ժողովում խորհի նախագահ Ալ. Մյասնիկյանի և ժողովում խորհի քարտուղար Դ. Տեր-Սիմոնյանի ստորագրությամբ, պահանջվում է առաջնորդվել բարեփոխված ուղղագրության և ըստ Աբեղյանի արած բոլոր առաջարկությունների գրել՝

«1. Օ տառի փոխանակ Ո ամեն դեպքում, ինչպես՝ ակոս, ծանոթ, կոշիկ, թոշնեկ, նոսր..., ոգնեկ (= օգնեկ), ոժիտ, որիորդ..., Մարո, Կարո.

«2. Է տառի փոխանակ Ե ամեն դեպքում, ինչպես՝ աղետ, աղվես, բզեզ, գեթ, գեր..., եզ (= էզ), եջ, եյակ, հանդես (= հանդէս), մարգարե, Գուրգեն և այլն.

3. Ի տառի փոխանակ Վ, երբ ւ տառն արտասանվում է վ, ինչպես՝ ավազ (= աւազ), հավանեկ, մտավ, հաշիվ, հիվանդ և այլն.

«4. ՈՒ երկտառի փոխանակ Վ, երբ ու-ն արտասանվում է վ, ինչպես՝ զվարթ (<զուարթ), գրվածք, կատվի, շվել և այլն.

«5. Ո տառի փոխանակ ՈՒ, երբ ոյ կապակցությունն արտասանվում է ոյ, ինչպես՝ լույս (<լոյս), նույն, համբույր, ողջույն և այլն.

«6. Յ տառի փոխանակ Հ բառերի սկզբում, երբ յ տառն արտասանվում է իբրև հագագային ո հնչյուն», ինչպես՝ հագենալ (<յագենալ), հակինթ, հաճախ, հեղաշրջել, հիսուն, հողված, հույս, հուշիկ և այլն.

«7. Խա, եօ, իւ երկարբառների փոխանակ յա, յո, յու», ինչպես՝ մատյան (<մատեան), անցյալ, այծյամ, Տիգրանյան, արդյոք, գյուղ, սոսափյուն, եղջիր > յեղջյուր, սրբություն և այլն.

«8. Գուրս է ձգվում բառերի վերջի անձայն Յ տառը», ինչպես ծանոթ (<ծառոյ), արքա, տեսա, ներքո, պահածո և այլն.

«9. Ե տառից հետո բառերի միջում ավելացվում է յ տառը, երբ ետևից մի ձայնավոր է գալիս», ինչպես՝ ըոպեյական (= ըոպէական), քրեյական, գործունեյություն, եյություն, եյի (<էի), գրեյի (<գրէի) և այլն.

«10. Ո տառից առաջ բառերի սկզբում ավելացվում է անկայուն Վ տառը ամեն անգամ, երբ արտասանվում է», ինչպես՝ ոգի (>վոգի), վոխ, վոր, վորոշ, վորդի, վոշխար, վոստ և այլն.

«11. Ե տառից առաջ բառերի սկզբում ավելացվում է անկայուն Յ տառը ամեն անգամ, երբ արտասանվում է», ինչպես՝ յեթե (<եթէ), յեղնեկ, յեղբայր, յեղնիկ, յերևալ, յեփեկ և այլն:

«12. Եմ բայի միավանկ ձևերը, երբ իբրև վերջահար բառ սերտ կերպով միանում են ձայնավորով վերջացած նախորդ բառին, գրվում են արտասանության համեմատ սկզբից ավելացած անկայուն յ տառով՝ յեմ, յես, յե, յենք, յեք, յեն. իսկ երբ նախորդ բառը բաղաձայնով է վեր-

շանում, գրվում են առանց յ տառի՝ եմ, ես, ե, ենք, եք, են... (բոլոր ընդգծումներն Աբեղյանին են— Ա. Մ.)»<sup>37</sup>;

§ 357. Ուղղագրական այս 12 փոփոխությունները, ինչպես դժվար չէ նկատել, կենդանի արտասանության համեմատ կատարված հնչյունական փոփոխություններ էին, որոնց մի մասով (կետեր 1, 2, 9, 10, 11, 12), այնուամենայնիվ, զգալի շափով փոխվում էր մի շարք բառերի նախնական պատկերը, այբուբենից հանվում էին 0 և է տառերը, և այդպիսով՝ լրիվ խախտվում էր ուղղագրության նաև ստուգաբանական սկզբունքը:

Եվ ոչ միայն այդ պատճառով, այլև շնորհանրապես, ինչպես սպասվում էր, ուղղագրության բարեփոխությունը (ռեֆորմը) ոչ միայն հեշտ ու խաղաղ ընթացք չի ունենում, այլև ոմանց կողմից խիստ քննադատության (որոշ դեպքերում՝ անգամ ծաղրի) է արժանանում ու դատապարտվում ինչպես խորհրդային երկրում, այնպես էլ մասնավանդ արտասահմանում:

§ 358. Խորհրդային երկրում հայոց լեզվի ուղղագրության բարեփոխության դեմ զայրույթով է արտահայտվում հատկապես թբիլիսահայ մտավորականությունը՝ լեզվաբան Ստ. Մալխասյանցի գլխավորությամբ, որը և մի շարք հոգվածներ<sup>38</sup> է հրապարակում՝ մերժելով ընդունված առաջարկությունների մեծ մասը:

Այսպես՝ նա մերժելի ու ավելորդ է համարում բառասկզբում ա-ից և ե-ից առաջ վ և յ տառերի, բառասկզբի յ-ի փոխարեն հ-ի, օժանդակ բայերի ձևերում և ձայնավորից առաջ է ձայնավորից հետո յ կիսաձայնի գրությունը, ինչպես նաև զտնում էր, որ նույնը պիտի թողնել երկբարբառների ուղղագրությունը և գրել ոչ.թե յա, յու, ույ, յո, այլ՝ հա, իւ, ոյ, եօ:

§ 359. 1922 թ. ուղղագրության բարեփոխության մասին, որքան էլ զարմանալի թվա, բացասաբար է արտահայտվել նաև լուսավորության նախկին ժողկոմ, իր ժամանակին նրա իրագործմանը նպաստած Պ. Մակինցյանը:

Համաշխարհային հնդափոխության հաղթանակի, ինչպես նաև այն սին գաղափարով համակված, թե աշխարհի լեզուների գիրը միատեսակ՝ լատինական գրով պետք է արտահայտվի, 1924 թ., ուղղագրության բարեփոխությունը (ռեֆորմը) ընդունելուց երկու տարի հետո նա «Заря Востока»-ում հանդես է գալիս «լատինական գրի մասին» («О латин-

<sup>37</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Առաջնորդ հայոց լեզվի նոր ուղղագրության, Երևան, 1922, էջ 4—13:

<sup>38</sup> «Հայ լեզվի ուղղագրության ռեֆորմի մասին» («Կարմիր աստղ», 1922, № 98), «Մեր այբուբենի բարեփոխման հարցի շուրջը» («Մարտակոչ», 1923, № 252), «Առաջնորդ հայոց լեզվի նոր ուղղագրության» («Մարտակոչ», 1924, № 10, 11, 291, 295), «Առձեռն պատասխան Մ. Աբեղյանին» («Մարտակոչ», 1925, № 154):

СКОМ шрифте») խորագիրը կրող հոդվածով, քննադատելով ու մերժելով այդտեղ թե՛ «սահակ-մեքոպյան» իրրև թե՛ «անկյունավոր, տգեղ, աչքերի համար վնասակար այբուբենը», թե՛ արեղյանական ուղղագրությունը և ուղղակի ասում. «Հայերենի ուղղագրության հարցը լուծվեց կիսակատար կերպով», «եթե հայերենի ուղղագրության ռեֆորմին վիճակված էր սառչել մնալ կես ճանապարհին՝ այս դեպքում ավելի լավ կլինեք առանց այլևայլի դառնալ էլի հին ուղղագրության», «... լատինական գրին անցնելու ժամանակ՝ այժմյան ուղղագրությունը կարող կլինեք համարել անցողական աստիճան», «Անձնապես ես ոչ մի դեպքում ոչ մի ձայն չէի տա ի նպաստ այդ ռեֆորմին, այլև չէի առաջարկի ժող. Կոմ. Խորհրդի քննության, եթե նրան չհամարեի մի աստիճան՝ դեպի լատինական գիրը անցնելու գործը դյուրացնելու համար»<sup>39</sup>:

Պետք է ասել, որ Պ. Մակինցյանի անհեթեթություններով լեցուն այդ հոդվածը անպատասխան չի մնում. լեզվաբան Ստ. Մալխասյանցը նույն այդ ժամանակ թարգմանում է և խիստ քննադատությամբ հանդերձ հրատարակում «Մարտակոչ» թերթում (1924, № № 279, 282, 291, 295):

Իր պատասխան-քննադատությամբ Մալխասյանցը հիմնավորապես հակադրվում է Պ. Մակինցյանին, ցույց տալիս տարբեր ազգերի համար միասնական լատինական գիր ստեղծելու տեսակետի անհեթեթությունը, դատապարտում հատկապես հայկական գիրը լատինականով փոխարինելու առաջարկը, մերժում և ոչ միայն անիրագործելի, այլև վնասակար համարում դա:

Պ. Մակինցյանի այդ հոդվածը նույն կերպ է գնահատել նաև Մ. Արեղյանը և դատապարտելով նման դիրքը՝ նշել, որ նա պարզապես գաղտնի նպատակ է ունեցել և այդպիսով՝ ուղղագրության խնդրին վերաբերող հայտնություններով ընկել ձգվարձալի դրության մեջ»<sup>40</sup>:

§ 360. Հայերենի ուղղագրության բարեփոխությունը (ռեֆորմը), սակայն, շատ ավելի մեծ աղմուկ է առաջ բերում արտասահմանում, և նրա դեմ ըմբոստանում են մի շարք Մխլթարյան միաբաններ՝ Գ. Մենկիշյանի պես առհասարակ շքնդունելով ո՛չ մի փոփոխություն հայերենի ուղղագրության մեջ:

Նրանցից հայերենի բարեփոխված ուղղագրության մասին խիստ բացասաբար են արտահայտվում հատկապես Արսեն Ղազիկյանը՝ իր «Հայ լեզուի ուղղագրական դասեր», և Վարդան Հացունին՝ իր «Ծրեւանեան ուղղագրութեան դէմ» աշխատությամբ:

Չընդունելով ընդհանրապես որևէ ուղղագրական փոփոխություն, Մլխլթարյան պահպանողականները գտնում են, թե իբր կատարված ուղղագրական բարեփոխությամբ ուղղագրական «նոր ու նոր խոչեր» են հարուցվում, «աղավաղվում է լեզուն իր հիմերեն, տասնևհինգարյան»

<sup>39</sup> Մեջբերումները կատարված են ըստ Ստ. Մալխասյանցի թարգմանության:

<sup>40</sup> Մ. Արեղյան, Ծրկեր, Հ, էջ 490—492:

մեր գրութեան ոճն ու ձևը վերիվայր տապալելով և այլանդակելով»<sup>41</sup>, թե իբր նրանով մի ամբողջ բաբելոնյան խառնակութիւնն է ստեղծվում, եղծվում է «պատմական կապը հին ու նոր լեզվաց մեջ»<sup>42</sup>, հեռացվում են արևելահայերենը և արևմտահայերենը իրարից, թե իբր այդ նոր՝ բարեփոխված ուղղագրութիւնը սոսկ խորհրդային կարգերի ծնունդ է, ծոագրութիւն և վաղ թե ուշ ենթակա է մերժման:

Վկայաբերելով Թուսինյաններին և Չերազներին, որոնց փորձերը անհաջողութեան են մատնվել, Ղազիկյանն ուղղակի ասում է, թե ինչպես «ասոնք ամենքը անցեր գացեր են ու լեզուն մնացեր է, այնպես էլ պիտի անցնի այս վերջին փորձն ալ»<sup>43</sup>:

§ 361. Հայերենի ուղղագրութեան բարեփոխութեան դեմ են արտահայտվում նաև ուրիշները, ինչպես՝ Արշակ Չոպանյանը Փարիզում՝ «Ապագայի» իմբադրականում ասելով, օրինակ. «Հեղափոխութեան բերումով կաղճատվի հայերենը Հայրենիքին մեջ. ուղղագրութիւնը կայլանդակվի, իսկ գրականութիւնը կդառնա ձանձրալիորեն միակողմանի»<sup>44</sup>. Վահրամ Մարգարյանը Պոլսում՝ «Անգիտաց պիտանի տասերկու փոփոխութեան դէմ տասերկու առարկութիւն» գրքույկում՝ ասելով, օրինակ, «Եթե լեզուն մեր հնչյուններուն պիտի հարմարեցնենք, վա՛յ մեզ, շատ չը տեւեր՝ բառերն անճանաչելի կըլլան ու նշանակութիւններն կը կորսնցնեն ու իրար բնավ չենք հասկնար»<sup>45</sup>. Խ. Քարտաշյանը (Վեմյանը) Բեյրութում՝ «Խորհրդային Հայաստանի նոր ուղղագրութիւնը» գրքույկում՝ ասելով, օրինակ, «Մ. Աբեղյանի ուղղագրութիւնը խիստ աճապարոտ և ձախավեր է, որովհետև իր հախուռն հեղակարծութեամբն իսկ լեզվին ոգիին դեմ է»<sup>46</sup>:

§ 362. Այս և նման այլ քննադատութիւններէից ու մեղադրանքներից բոլորին չէ, որ պատասխանել է Մ. Աբեղյանը: Նա անդրադարձել է միայն Ստ. Մալխասյանցի քննադատութիւններին՝ գրելով «Ուղղագրութեան ռեֆորմը» աշխատութիւնը (Երևան, 1925), որ իրավամբ հայ բանավիճային գիտական գրականութեան փայլուն նմուշներից է, և որտեղ էլ նա իրեն հատուկ տրամաբանութեամբ մեկ առ մեկ քննել է Ստ. Մալխասյանցի առարկութիւնները և հիմնավոր փաստերով հերքել կամ մերժել դրանք:

Հասկանալի պատճառներով չգրադվելով այդ աշխատութեան նկարագրութեամբ, հարկ ենք համարում միայն նշել, որ այդտեղ Մ. Աբեղ-

41 Ա. Ղազիկեան, Հայ լեզուի ուղղագրական դասեր, Վենետիկ, 1923, էջ Ա—Բ:

42 Վ. Հացունի, Ուղղագրութիւն և առոգանութիւն հայերենի, Վենետիկ, 1933, էջ 11:

43 Ա. Ղազիկեան, Հայ լեզուի ուղղագրական դասեր, էջ 64:

44 «Ապագա» (Թերթ, 1921—1924):

45 Վ. Մարգարյան, Անգիտաց պիտանի..., Կ. Պոլիս, 1924, էջ 15:

46 Խ. Քարտաշեան, Խորհրդային Հայաստանի նոր ուղղագրութիւնը, Պէլրութ, 1926,



յանը մի կողմից մի անգամ ևս մեկնաբանում է, թե ուղղագրական փոփոխություններից յուրաքանչյուրը ինչ հիմունքով է կատարված, իսկ մյուս կողմից՝ ցույց է տալիս, որ Մալխասյանցը (հավանաբար նաև անձնական որոշ հակակրանքից մղված) դեմ է դնում մի ժամանակ իր իսկ դավանած՝ «մի հնչյունին մի գիր» սկզբունքին և մերժում նաև այնպիսի առաջարկություններ, որոնք աւխուսափելիորեն հենց նրանից են բխում: Այդ աշխատությամբ ավարտվում է Մ. Աբեղյանի ուղղագրական գործունեությունը, և հետագայում նա այլևս ուղղագրության հարցին չի անդրադառնում ու դրանով չի զբաղվում:

Մանորոպյուն.— Հայերենի ուղղագրության ու նրա բարեփոխության մասին Աբեղյանը խոսել է նաև «Հալոց լեզվի տեսության» մեջ, բայց դա նույնպես այդ շրջանին է վերաբերում:

§ 363. Այսբանից, անշուշտ, չի հետևում, թե առաջին՝ 1922 թ. ուղղագրական բարեփոխությունը բացարձակապես կատարյալ էր, անթերի և դերժ խոտելի կետերից ու ծայրահեղություններից:

Ինչպես արդեն ասվել է, շափից ավելի տուրք տալով ուղղագրության հնչյունական սկզբունքին՝ բառասկզբի ե-ի, ու-ի, օժանդակ բայի, յ կիսաձայնի գրություններին վերաբերող առաջարկություններով (տե՛ս § 356), այբուբենից է և օ տառերի վտարումով Մ. Աբեղյանն ընկավ նաև ծայրահեղությունների մեջ և ավանդական ուղղագրության մեջ առաջ բերեց միաժամանակ այնպիսի փոփոխություններ, որոնք մի կողմից եթե մի շարք բառերի ընդհանուր պատկերն էին այլափոխում (տե՛ս § 357), ապա մյուս կողմից՝ ուղղագրության պատմական-ստուգաբանական և որոշ դեպքերում էլ անգամ հենց հնչյունական սկզբունքին էին հակասում, հմմտ., օրինակ՝ որակ—վորակ—անորակ, երգ—յերգ—համերգ, երասան—յերասան—ապերասան և այլն:

§ 364. Սա էլ, բնականաբար, առաջադրում էր բարեփոխված ուղղագրության մեջ անպայման որոշ փոփոխություններ կատարելու պահանջը: Այդ մասին է վկայում, օրինակ, իրողություններին քաջածանոթ ու մասնակից գիտնական-պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը՝ ասելով. «1920-ական թվականների կեսերին հասունացել էր Մ. Աբեղյանի նախագծի հիման վրա 1921 (պետք է լիներ՝ 1922) թվականին տեղի ունեցած հայ ուղղագրական ռեֆորմի մեջ որոշ փոփոխություններ մտցնելու հարցը (ընդգծումն իմն է— Ա. Մ.)»<sup>47</sup>:

Եվ ահա լուծելու համար այդ հարցը լուսժողովուրդի կարգադրությամբ «Գիտության և արվեստի ինստիտուտի պատմական հասարակագիտական և գեղարվեստական բաժինների 17 հոկտեմբերի 1926 թվի միացյալ ժողովում» ընտրվում է «Ուղղագրության և տառերի ձևի բարեփոխության հանձնաժողով», որի կազմում էլ ընկերակվում են այնպիսի նշանա-

<sup>47</sup> Ա. Հավաննիսյան, Հուշեր և բնութագրումներ, Երևան, 1969, էջ 128:

վոր դեմքեր, ինչպիսիք էին Մ. Աբեղյանը, Հր. Աճառյանը, Քաղ. Ավդալբեգյանը, Առ. Բաբախանյանը (Լեռ), Գար. Լեռնյանը, Աս. Խաչատրյանը, Ստ. Կանայանը, Ս. Հակոբյանը, Գր. Ղափանցյանը, Հ. Մանանդյանը, Շիրվանզադեն:

Հանձնաժողովը, որի անդամ լինելուց հրաժարվում է Մ. Աբեղյանը, և նրա կազմում վճռական ձայնի իրավունքով ընդգրկվում է Ստ. Մալխասյանը՝ հրավիրվելով Քրիլիսից, իր աշխատանքները սկսում է 1926 թ. հոկտեմբերի 21-ին և ավարտում 1927 թ. մայիսի 17-ին՝ կայացնելով ընդամենը 35 նիստ<sup>48</sup>:

§ 365. Զխորանալով մանրամասների մեջ, պետք է ասել, որ հայերենի ուղղագրության պատմության մեջ այդ հանձնաժողովի գործունեությունը առանձնահատուկ տեղ է բռնում ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն ունեցող հարցերի լուսաբանման ու լուծման տեսակետից:

Հանձնաժողովի նիստերում զեկուցումներով հանդես են գալիս Լեոն («Պատմական տեսություն հայերեն ուղղագրության դրությունների տրպագրության սկզբից մինչև մեր օրերը»), Հր. Աճառյանը («Մեր նոր ուղղագրության մասին»), պրոֆ. Աս. Խաչատրյանը («Հայերենի ուղղագրության բարեփոխության խնդիրը»), Գր. Ղափանցյանը («Արդի հայերենի ուղղագրության խնդիրը»), Ստ. Մալխասյանը («Զեկուցում հայերենի ուղղագրության մասին»), Գ. Լեռնյանը («Խնայողության հարցը հին և նոր ուղղագրական սիստեմաների մեջ»):

Այդ զեկուցումներում, որ տպագրվել են «Տեղեկագրում», լուսաբանվում են ուղղագրությանը վերաբերող բազմազան հարցեր և պարզաբանվում ընդհանուր առմամբ, թե ինչ փոփոխություններ կարելի է կամ պետք է կատարել գործող՝ 1922 թ. մարտի 4-ին ղեկերտով ընդունված ուղղագրության մեջ:

§ 366. Այդ հանձնաժողովի գործունեությունը նշանավորվում է նաև նրանով, որ կազմում է՝ ա) «ուղղագրական խնդիրները դպրոցական-մանկավարժական տեսակետից քննության ենթարկելու համար» «Ծրուկանում ապրող մանկավարժներից մի ենթահանձնաժողով»՝ դրա մեջ ընդգրկելով մի շարք հայտնի մանկավարժների ու գործիչների (Գ. էդիլյան, Վ. Թոթովենց, Ս. Լիսիցյան, Ա. Խնկոյան, Խ. Կանայան, Ս. Մանուկյան և այլք). բ) իր շորս լեզվաբան անդամների՝ Աճառյանի, Խաչատրյանի, Ղափանցյանի և Մալխասյանցի զեկուցումների թեզիսների հիման վրա

<sup>48</sup> Հանձնաժողովի կատարած աշխատանքները հիմնականում արտացոլված են «Տեղեկագիր Հ. Ս. Խ. Հ. գիտության և արվեստի ինստիտուտի ուղղագրության և տառերի ձևի բարեփոխության հանձնաժողովի» ժողովածուում (Ծրուկան, 1927), որից և ընթերցողը կարող է շատ բան իմանալ ժամանակի ուղղագրության և դրա մեջ նոր փոփոխությունների կատարելու մասին:

մի համադրական աղյուսակ<sup>49</sup>՝ ուղարկելով դա մի շարք նշանավոր հայագետների ու գիտնականների (Ն. Ադոնց, Յ. Կարստ, Ն. Մառ, Ա. Մեյե, Մարքվարդ, Մխիթարյաններ, Ա. Չոպանյան, Ա. Տոմսոն, Լ. Օրբելի և այլք)։

Այսպիսով՝ 1922 թ. բարեփոխված ուղղագրության մեջ փոփոխություններ կատարելու խնդիրը համընդհանուր բնույթ է ստանում, արվում են բազմաթիվ առաջարկություններ, համադրական աղյուսակի կետերի վերաբերյալ իրենց կարծիքն են հայտնում Ա. Մեյեն, Ն. Մառը, Ն. Ադոնցը և ուրիշներ՝ նրանց մի մասը համարելով ընդունելի, մի մասը՝ ոչ։

§ 367. Զկամենալով շատ հեռուն գնալ, պետք է ասել, որ «Ուղղագրության և տառերի ձևի բարեփոխության հանձնաժողովի» գործունեության առավել մեծ ու գնահատելի նվաճումը չորս լեզվաբանների կազմած «Համադրական աղյուսակն» է, ըստ որի էլ նրանք միաձայն առաջարկել են՝ «1. Բառասկզբում գրել է և ոչ թե յե, ինչպես՝ էզ, էություն, էդիսոն, էքսպերտ», «4. Բառի մեջ բաղաձայնից առաջ միշտ գրել ե, ինչպես՝ հանդես, հրավեր, սեր, կեր», «6. Բառասկզբում գրել ե և ոչ թե յե, ինչպես՝ ես, երկու, եզ», «7. Բառասկզբում գրել օ և ոչ թե ո, ինչպես՝ օդ, օգուտ, օր», «9. Բառամիջում միշտ գրել ո, ինչպես՝ Պողոս, կոշիկ, կոալիցիոն, կոոպերացիա», «10. Բառավերջում գրել ո, ինչպես՝ այո, Մկո, Սաքո», «14. Ամեն դեպքում գրել վ և ոչ թե մերթ ւ, մերթ ու, մերթ վ, ինչպես՝ ավազ, ազնիվ, հողված, նվաստ», «15. Ամեն դեպքում գրել ույ, ինչպես՝ բույս, լույս, կույր, և ոչ թե լոյս, բոյս, կոյր», «16. Բառավերջում անձայն չ չգրել, ինչպես՝ վկա, ծառա»<sup>50</sup>։

Այսբանին եթե ավելացնենք և այն, որ արվել են նաև թեև ոչ միաձայն, բայց տեղին այլ առաջարկներ («8. Բարդությանց և ածանցմանց մեջ պահելով ստուգաբանական ճշտությունը՝ գրել օ կամ ո, ինչպես՝ անօգուտ, տնօրինել, միջօրէական, անողոք, անողորմ», «16. Յ գիրը բառասկզբում վերածել հ-ի, ինչպես՝ հարմար, հղի, հուլիս», «13. Բառասկզբում գրել ո և ոչ թե վո, ինչպես՝ որդի, որ, որսորդ»), ապա շատ ավելի պարզ կդառնա, որ հայերենի ուղղագրության հետագա բարեփոխության հիմքը դրել է հենց նույն հեղինակավոր հանձնաժողովը։

§ 368. Եվ անվիճելիորեն դրա հիման վրա էլ ուղղագրության մեջ անհրաժեշտ փոփոխություններ կատարելու համար լեզվաբան Գ. Սևակը կազմել է մի նախագիծ, որը ՀՍՍՀ Լուսժողկոմատին առընթեր Տերմի-

<sup>49</sup> Տե՛ս «Տեղեկագիր Լ. Ս. Խ. Լ. ֆիտության և արվեստի...», Երևան, 1927, էջ 94—96.

<sup>50</sup> Դրանց մասին տե՛ս նույն «Տեղեկագիր...»-ը, էջ 94—96։ Ավելացնենք, որ գրեթե այդ բոլոր փոփոխություններին առաջին և երկրորդ քվեարկությամբ միաձայն կողմնակից են եղել Հանձնաժողովի նաև մյուս անդամները (տե՛ս նույն տեղում՝ «Ուղղագրական առաջարկությունների քվեարկությունը», էջ 168—170)։

նաբանական կոմիտեն 1940 թ. մայիսի 10-ին քննարկել և օգոստոսին որոշել է.

«1. Վերականգնել հայոց այբուբենի և գրության մեջ «է» և «օ» տառերը, որպես սխալ հանված, գործածելով միայն իբրև է (ռուսերեն Э), և «օ» (ռուսերեն О), օրինակ՝ էպոխա, էվոլուցիա, օր, օպերա:

Մանրություն.— Բառամիջում և բառավերջում գործածել միայն «ե» և «ո» տառերը, ինչպես ընդունված է այժմ (տեսնել, խեղոփ, բագե, այո և այլն):

2. Ե և ռ տառերը բառասկզբում գործածել իբրև յե (ռուս. е) և վո (ռուս. во), օր.՝ ես (ес), երբ (ерб), Եգիպտոս (ЕГИПТОС), ոսկի (ЗОСКИ), որակ (ВОРАК) և այլն:

Իբրև բացառություն ով, ովքեր դերանունները գրել ո-ով:

3. Բարդ և ածանցավոր բառերի մեջ պահել ստուգաբանական գրությունը (լուսնոսկի, աներես և այլն):

4. Յ-ն իբրև ձայնակապ գործածել ա-ից և ո-ից հետո, օրինակ՝ կայանալ, գոյանալ, նայել, շոյել և այլն:

5. Մահմանել եմ օժանդակ բայի տարբեր ձևերի հետևյալ ուղղագրությունը. եմ, ես, է, ենք, եք, են, էի, էիք, էր, էինք, էիք, էինք»<sup>51</sup>:

§ 369. Այսպիսով՝ տեղի է ունենում հայոց լեզվի ուղղագրության երկրորդ՝ մասնակի բարեփոխությունը, որով և՛ ա) վերացվում են այն ծայրահեղությունները, որ թույլ էին տրվել առաջին ուղղագրական բարեփոխությամբ (ռեֆորմով), բ) վերականգնվում է մի շարք բառերի ընդհանուր գրային պատկերը, գ) կանխվում են գրության մի շարք երկ-ձևություններ, գ) ուղղագրությունը դառնում է շատ ավելի միակերպ՝ լիապես բավարարելով գիտական, մանկավարժական և ավանդական սկզբունքներին:

Այդքանով, անշուշտ, չի նսեմացվում առաջին ուղղագրական բարեփոխությունը, նրա դերն ու նշանակությունը: Բոլոր դեպքերում ուղղագրության այդ՝ երկրորդ, մասնակի բարեփոխությունը խարսխվում է նրա վրա և իր կետերով հիմնականում համապատասխանում է այն նմուշօրինակներին, որ ներկայացրել է Մ. Աբեղյանը դեռևս 1921 թ.<sup>52</sup>:

§ 370. Եզրակացություն. 1922—1940 թթ. ուղղագրական բարեփոխություններով հայերենի հին կամ ավանդական ուղղագրության մեջ կատարվել են անհրաժեշտ մի 10—12 փոփոխություն, որոնցով այն դարձել է շատ ավելի միակերպ, միասնական, կուռ ու դյուրամատչելի: Իբրև այդպիսին, հայերենի «նոր» ուղղագրությունը հնի ոչ թե աղճատումն ու աղավաղումն է, այլ բարեփոխված շարունակությունը, ավելի բարձր աստիճանը և նրա հետ միասին հայ հոգևոր մշակույթի մի անկապտելի մասը, հարմուրությունն է կազմում:

<sup>51</sup> Մ. Ղազարյան, Ուղեցույց Տեյմինաբանական կոմիտեի որոշումների, էջ 30—31:

<sup>52</sup> Մ. Աբեղյան, Զեկուցում հայոց լեզվի ուղղագրության ռեֆորմի մասին, էջ 23—24:

Արտացոլելով հայոց լեզվի հնչյունական կազմում պատմականորեն տեղի ունեցած փոփոխությունները՝ այն ամենևին չի խաբխել նրա ուղղագրության հիմքերը, ամենևին խզում չի առաջ բերել անցյալի և ներկայի գրավոր մշակույթների միջև, ամենևին սեպ չի խրել արևմտահայերենի ու արևելահայերենի միջև և դրանք հեռացրել միմյանցից, ինչպես կարծում ու քարոզում են ոմանք՝ վարպետորեն խաղալով մեր ժողովրդի ազգային զգացումների հետ:

§ 371. Այսբանից հետևում է նաև մի այլ ճշմարտություն. ժամանակակից հայոց լեզվի արդի՝ բարեփոխված ուղղագրությունը հին՝ ավանդական ուղղագրության օրգանական շարունակությունը լինելով՝ սերտորեն շաղկապված է մնում նրա հետ և հիմնականում պահպանում է բառերի նախնական գրությունը, ինչպես դա շատ պարզ կարելի է տեսնել դրաբար, միջին հայերեն, արևմտահայերեն և արևելահայերեն գրված ցանկացած նմուշի կամ նմուշների համեմատությամբ, օրինակ՝ «Բազում ձմերաց հալեցան սառնամանիք. եհաս զարուն և եկին նորեկ ծիծռունք. տեսին և խնդացին կենցաղասէր մարդիկ, և նոքա ոչ երբէք կարացին տեսանել զանձկալիսն իւրեանց: Մաղիկք գարնանայինք յիշատակեցին զպսակասէր ամուսինս նոցա, և աչք իւրեանց կարօտացան տեսանել զցանկալի դեղ երեսաց նոցա: Սպանեցան բարակք որսականք, և խցեալ կուրացան արշաւանք որսորդաց: Բնագրօք յիշատակեցան նոքա, և ոչ մի տօնք տարեկանաց ոչ ածին զնոսա ի հեռաստանէ...» (Եղիշե, «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին»):

Զբարեփոխված ուղղագրությամբ՝ «Շատ ձմեռների սառույցներ հալուեցին, զարուն հասաւ և նոր ծիծեռներ եկան. կենցաղասէր մարդիկ տեսան և ուրախացան, բայց նրանք երբէք չկարողացան տեսնել իրենց անձկալիներին: Գարնանային ծաղիկները նրանց միտն էին բերում իրենց հաւատարիմ ամուսիններին, բայց նրանց աչքերը կարօտ մնացին նրանց երեսների ցանկալի գեղեցկութիւնը տեսնելու: Որսի բարակները վերջացան և բոլորովին դադարեցին որսորդների արշաւանքները: Նրանք յիշուեցին միայն զրուած յիշատակարաններով և ոչ մի տարեկան տօն նրանց հեռու օտարութիւնից տուն շբերեց»:

Բարեփոխված ուղղագրությամբ՝ «Շատ ձմեռների սառույցներ հալվեցին, զարուն հասավ և նոր ծիծեռներ եկան. կենցաղասէր մարդիկ տեսան և ուրախացան, բայց նրանք երբէք չկարողացան տեսնել իրենց անձկալիներին: Գարնանային ծաղիկները նրանց միտն էին բերում իրենց հավատարիմ ամուսիններին, բայց նրանց աչքերը կարօտ մնացին նրանց երեսների ցանկալի գեղեցկութիւնը տեսնելու: Որսի բարակները վերջացան և բոլորովին դադարեցին որսորդների արշավանքները: Նրանք հիշվեցին միայն զրված հիշատակարաններով և ոչ մի տարեկան տօն նրանց հեռու օտարությունից տուն շբերեց...»:

§ 372. Ինչպես հենց այս նմուշի համեմատությունն է ցույց տալիս,

հայերենի նոր՝ բարեփոխված ուղղագրութունը ոչ միայն շատ մեծ շահով չի տարբերվում նրա ավանդական՝ շբարեփոխված, այլև գրաբարյան ուղղագրութունից:

Հայերենի բառերի, բառաձևերի մեծագույն մասը այսօր ևս այնպես է գրվում, ինչպես գրվել է Մ. Մաշտոցի ժամանակ ու դրանից հետո, իսկ այն բառերն ու բառաձևերը, որոնց ուղղագրութունը ինչ-որ շահով փոխվել է, պահում են իրենց գրության ընդհանուր պատկերը և, բնականաբար, դժվարութուն չեն հարուցում նաև հեշտ ընկալման ու ընթերցման համար:

Այսպիսով՝ ժամանակակից հայոց լեզվի ուղղագրութունը իսկապես ներկայացնում է կուռ ու ամբողջական համակարգ և խարսխված լինելով որոշակի գիտական հիմունքների ու սկզբունքների վրա՝ ունի իր հաստատուն կանոններն ու օրենքները, որոնք և պարտադիր ու անշեղ կիրառում են պահանջում:

§ 373. Բայց, ցավօք, բոլորը չէ, որ գիտակցում են դրա կարևորութունն ու անհրաժեշտութունը և դժգոհելով հայերենի արդի՝ բարեփոխված ուղղագրութունից՝ պահանջում են վերափոխել այն: Ընդ որում նկատելի է երկու՝ իրար հակադիր մոտեցում. ոմանք գտնում են, որ բառերը պետք է գրել իրենց արտասանության համեմատ, այսինքն՝ այնպես, ինչպես արտասանվում են. իսկ ոմանք էլ բացարձակապես մերժում են 1922—1940 թթ. ուղղագրական բարեփոխութունները և պընդում, թե պետք է վերադառնալ հնին՝ այսպես կոչված «դասական» կամ «մաշտոցյան» ուղղագրությանը:

§ 374. Առաջին մոտեցումը արտահայտված ենք տեսնում 1962 թ. «Սովետական դպրոց» թերթում. ուղղագրության հարցերի վերաբերյալ մտքերի փոխանակության կարգով տպագրված մի շարք հոդվածներում, որոնց հեղինակները (հիմնականում՝ ուսուցիչներ) պահանջում են արմատական փոփոխության ենթարկել ներկայիս ուղղագրութունը, փոխել անգամ բաղաձայնների գրության կանոնները և բոլոր դեպքերում բառերը՝ գրել արտասանության համապատասխան:

Դրան հակառակ, այլ հոդվածներում և մտքերի փոխանակության ամփոփման մեջ (հեղինակ՝ Գ. Սևակ) ցույց է տրվում, որ այդպես վարվել, նշանակում է խարխել ուղղագրության հիմքերը և խառնաշփոթութուն առաջ բերել նրանում<sup>58</sup>: Այսպիսով՝ հիմնովին մերժվում է նման անհեթեթ պահանջը, թեև այսօր էլ տրտունջներ են լսվում այն մասին, թե ինչու բառերն անխտիր չեն գրվում այնպես, ինչպես որ արտասանվում են:

§ 375. Մյուս մոտեցումը, որով բացասվում-մերժվում են 1922—

<sup>58</sup> Իրողութունն այդպես է մեկնաբանվել նաև տողերիս հեղինակի՝ մտքերի փոխանակության կարգով տպագրված «Ուղղագրութունը գիտութուն է» հոդվածում:

1940 թթ. ընդունված ուղղագրական բարեփոխությունները, անցյալի մի շարք պահպանողականների (Գ. Մենևիշյան, Ա. Ղազիկյան, Վ. Հացունի և այլք) հայացքների յուրատեսակ կրկնությունն է, որ լայն ծավալ է ստացել մեզանում հատկապես 1988 թ. սկսած՝ հայ ժողովրդի կյանքում ստեղծված ամենաթողութայան, խառնաշփոթության, քաոսի ու անարխիայի շրջանում:

Ժամանակակից հայոց լեզվի ներկայիս ուղղագրությունը գուտ խորհրդային կարգերի ծնունդ ու բռնագատում համարելով՝ ոմանք, ինչպես հայտնի է, ոչ միայն նրանից հրաժարվելու և հին՝ իբրև թե «դասական» կամ «մաշտոցյան» ուղղագրությանն անցնելու պահանջն են առաջադրում, այլև որոշակի քայլեր են անում դա գործնականում կիրառելու համար:

§ 376. Այսպիսով՝ ժամանակակից հայոց լեզվի ուղղագրության բնագավառում ստեղծվել է կատարյալ խառնակ վիճակ և նրա դեմ ահավոր պայքար է մղվում այն պատճառաբանությամբ, թե իբր այն փոփոխվել է «հայ ժողովրդից և հայ մտավորականներից գաղտնի», սոսկ «երկու հոգու շանքերով», հայկական գրից «լատինական գրին անցնելու մեն-միակ նպատակով», թե իբր այդ փոփոխությամբ ավերվել է հայ ազգային մշակույթը, խզվել է կապը հայ ժողովրդի երկու՝ արևելահայ և արևմտահայ հատվածների միջև, թե իբր «1922—1940 թթ. ուղղագրությունը անավանդույթ», «մշակութային որևէ արժեք» չունեցող և «նաև հակասական» ուղղագրություն է, թե իբր «դասական» ուղղագրությամբ գրելիս գրավոր խոսքի (") ընդհանուր գրագիտական մակարդակն ավելի բարձր է լինում, քան 1922—1940 թթ. ուղղագրությունը գործածելիս» և այլն:

§ 377. Իրապես, սակայն, սրանք միանգամայն անհիմն ու անհեթեթ, ամբոխավարական բնույթի պատճառաբանություններ են և հերքվում են ինքնին ցարդ ներկայացված իրողությունների ու փաստերի քնննությամբ ու լուսաբանությամբ. ուստի մնում է մի անգամ ևս հիշեցնել, որ ժամանակակից հայոց լեզվի բարեփոխված ուղղագրությունը ունի իր մեծ ու հարուստ նախապատմությունը, տեղի է ունեցել անհրաժեշտաբար ու օրինաչափորեն, որ կատարված բարեփոխություններով արեվելահայ գրական լեզվի ուղղագրությունը դարձել է իրոք ավելի միակերպ ու դյուրամատչելի, համապատասխանում է նրա ոգուն ու էությանը և լավագույնս է ծառայում իր նպատակին:

Այսքանից հետևում է, որ ժամանակակից հայոց լեզվի բարեփոխված ուղղագրությունը ամենևին ենթակա չէ վերափոխման, և նրա դեմ մղվող պայքարը, այն հին ուղղագրությամբ փոխարինելու փորձերը պարզապես խառնաշփոթություն են ստեղծում և վնասում նրա թե՛ միակերպությանը, թե՛ ուսուցմանը և թե՛ առհասարակ ժողովրդի գրագիտության մակարդակի բարելավման ընդհանուր ու շատ կարևոր գործին:

§ 378. Առաջ գնալով նշենք, որ հիմնավոր չէ նաև այն պատճառ-

ուաբանությունը, թե իբր ուղղագրության փոփոխությամբ սեպ է խրվել արևելահայերենի և արևմտահայերենի միջև, հայ ժողովրդի արևելահայ հատվածը՝ արևմտահայ, իսկ արևմտահայ հատվածն էլ արևելահայ մշակույթին է անհաղորդակից դարձել: Այդպես կարծողները առաջ քաշելով արևելահայության ու սփյուռքահայության կամ ամբողջ հայերի համար մի միասնական ուղղագրություն ունենալու հարցը՝ պարզապես շահարկում են այն և բարեփոխված ուղղագրությունը ստորադասելով սփյուռքում գործածվող հին՝ ավանդական ուղղագրությանը՝ պահանջում են փոխարինել դրանով:

Սա նույնպես անհիմն ու անտեղի պահանջ է, որով և նկատի չի առնվում, որ երկու «տարբեր» (հին ու նոր) ուղղագրությունները՝ ա) հայ ժողովրդի երկու հատվածի բաժանված լինելու, ինչպես նաև երկու գրական լեզու ունենալու, բ) հայ ժողովրդի մի հատվածի (արևմտահայության) պետականությունից զրկված լինելու, իսկ մյուս հատվածի (արևելահայության) պետականություն ունենալու անխուսափելի արդյունքն են ու հետևանքը:

§ 379. Նման հանգամանքներով պայմանավորված՝ եթե՝ արևելահայ գրական լեզվի ուղղագրությունը կանոնարկվել, միակերպ ու դյուրամատչելի է դարձել, ապա արևմտահայ գրական լեզվի ուղղագրությունը զերծ չէ բազմաձևություններից և տարբեր հայկական համայնքներում մի շարք դեպքերում ճիշտ միակերպ չի գործածվում: Այս ամենով հանդերձ արևելահայ և արևմտահայ գրական լեզուների ուղղագրությունները առանձնապես մեծ չափով չեն տարբերվում իրարից, ուղղագրական տարբերությունները երբեք էլ առանձնակի դժվարություններ չեն հարուցում և իրականում, արևմտահայ մտավորականի հավաստմամբ՝ «... հայաստանյան գրականության հետեւելու մեջ արևմտահայ ընթերցողի դժվարությունը կու գա լեզվական, մանավանդ հնչյունային տառաշրջության պատճենով (ընդգծումն իմն է— Ա. Մ.) շատ ավելի նվազ չափով՝ նոր ուղղագրական բարեփոխութենեն»<sup>34</sup>:

Ավելացնենք, որ սփյուռքում բոլորը չէ, որ գոհ են իրենց գործածած հին կամ ավանդական ուղղագրությունից, և կան մարդիկ, որոնք հայոց լեզվի բարեփոխված ուղղագրությունը ոչ թե «քմահաճորեն», այլ մտածված ու տրամաբանորեն» կատարված, «հարյուր տոկոսով մեսրոպյան», ընդունելի ուղղագրություն են համարում, ասելով, օրինակ. «Նոր ուղղագրության մասին արտասահմանի մեջ ցարդ արտահայտված են միմիայն անոնք, որոնք առարկություն ունին այդ ուղղագրության մասին, իսկ լուռ մնացած են բոլոր անոնք, որ համաձայն եղած են անոր: Այս

<sup>34</sup> Ռ. ձեպեճեան, Մտերիմ գրոյց ուղղագրութեան հարցի շուրջ, Հալեպ, 1970, էջ



վերջիններս: թե՛ լր Լաբժի՛ածին շափ փոքր չէ, բայց իրենց պահած լուծ-  
թյունը պատճառ հանդիսացած է, որ աննկատ մնան»<sup>55</sup>:

Այսքանից էլ, բնականաբար, հետևում է, որ հայոց լեզվի համար  
միասնական ուղղագրութիւն կարող է ծառայել միայն նրա բարեփոխ-  
ված ուղղագրութիւնը, որի կանոններն էլ ահա տրվում են ստորև:

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

§ 380. Ժամանակակից հայոց լեզվի ուղղագրութիւն կանոնները  
պայմանավորվում են նրա հիմունքներով: Այն հնչյունները, որոնք գրը-  
վում են իրենց արտասանութիւն համապատասխան, ընդհանրապես ուղ-  
ղագրական դժվարութիւն չեն հարուցում: Ուղղագրական դժվարութիւն  
են հարուցում հիմնականում այն հնչյունները, որոնք միշտ չէ, որ գրը-  
վում են այնպես, ինչպես որ արտասանվում են (տե՛ս § 302): Անկախ,  
սակայն, դրանից, բոլոր թե՛ ձայնավորները և թե՛ բաղաձայններն ու-  
նեն իրենց ուղղագրական կանոնները, որոնք որոշվում են ոչ միայն հըն-  
չյունական, այլև ավանդական-ստուգաբանական և ձևաբանական հի-  
մունքներով:

### ա. ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 381. Ըստ արտասանութիւն և գրութիւն համապատասխանութիւն  
հայոց լեզվի ձայնավորները երկու խմբի են բաժանվում: Մի խումբ են  
կազմում այն ձայնավորները, որոնց գրութիւնը համապատասխանում  
է արտասանութիւնը, մի այլ խումբ նրանք, որոնց գրութիւնը միշտ չէ,  
որ համապատասխանում է արտասանութիւնը:

§ 382. Առաջին խմբին են պատկանում ա-ն, ի-ն, ու-ն, որոնք բա-  
ռի բոլոր դիրքերում ինչպես արտասանվում, այնպես էլ գրվում են,  
հմմտ., օրինակ, անուն, աբագ, համաձայն, պողոտա, կաթսա..., իմա-  
նալ, իլիկ, միամիտ, գինի, սիրելի, ձի..., ուրախ, ուսում, աշուն, բու-  
մունք, կատու, թեկնածու և այլն: Այս ընդհանուր կանոնից շեղվում և  
մի քանի բառերում թույլ են արտասանվում կամ խոսակցական լեզվի  
ազդեցությամբ սղվում են ա-ն (օր.՝ դաստիարակ), ու-ն (օր.՝ գործու-  
նեութիւն) և ի-ն, որ սակայն, երբեմն և յ է արտասանվում (օր.՝ մի-  
այն—մյայն, հեփիաթ—հեթյաթ, օրիորդ—օրորդ):

§ 382. Երկրորդ խմբին են պատկանում է-ն, օ-ն և ք-ն, որոնցից  
առաջին երկուսը արտահայտվում են երկու (է և ե, օ և ո) տառով, իսկ  
վերջինը՝ ք-ն, մի շարք դեպքերում թեև լսվում, բայց չի գրվում (տե՛ս  
§ 305, բ, գ, դ):

<sup>55</sup> Նույն տեղում, էջ 14:

## է-ի և ե-ի ուղղագրությունը.

§ 383. Է ձայնավորը է արտասանվելիս է-ով է գրվում՝

ա) Բառասկզբում, *ինչպես՝* էակ, էժան, էլեկտրական, էլի, էջ, էու-թյուն, էպոս, էֆսուրսիա և այլն:

բ) Բաղադրյալ (բարդ, ածանցավոր) բառերի միջում կամ վերջում, երբ իբրև համապատասխան բաղադրիչի սկզբնահնչյունն է գործածվում, *օրինակ՝* առէջք, ամենաէական, ելևէջ, դողեռոցք, հնէարան, երևէ, ինչևէ, որևէ, մանրէ և այլն:

գ) Օժանդակ բայի սահմ. *եղանակի ներկա ժամանակի եզակի թվի 3-րդ դեմքի և անցյալ ժամանակի բոլոր դեմքերի թե՛ դրական և թե՛ ժխտական ձևերում, ինչպես՝* է—չէ, էի, էիր, էր, էինք, էիք, էին—չէի, չէիր, չէինք, չէիք, չէին:

§ 384. Է ձայնավորը մնացած բոլոր դեպքերում է արտասանվելիս գրվում է ե-ով, *ինչպես՝* ասել, աղվես, հանդես, վրեժ, ծլել, արծաթե, միջօրե, երբևիցե, վաչե, Մանե և այլն:

Ե-ով է գրվում ե (=յէ) *երկհնչյունը բառասկզբում, ինչպես՝* երեխա (=յէրէխա), երագ, ելույթ, եղանակ, եռալ, երջանիկ, երեկո, երկիր, երևի և այլն: Այդ գրությունը պահպանվում է նաև բաղադրյալ բառերում, որոնցից բաղաձայնի հաջորդելու դեպքում ե-ն՝ է, իսկ ձայնավորի հաջորդելու դեպքում յէ է արտասանվում, *հմմտ., օրինակ, երասան* (=յէ-րասան)—ապերասան (=ապէրասան), անեզական, ապերախտ, համերգ, մեներգ, աներկյուղ, աներեք, նորեկ, վներելի, տասներեք, նամիկեզ... և երջանիկ—ամենաերջանիկ, ամենաերկար, արևմտաեվրոպական և այլն:

## Օ-ի և Ո-ի ուղղագրությունը

§ 385. Օ ձայնավորը օ արտասանվելիս օ-ով է գրվում՝

ա) Բառասկզբում, *ինչպես՝* օգուտ, օղանցք, օրևան, օղի, օվկիանոս, օշարակ, օր, օրոհել, օտարական, օճառ, օպերա և այլն:

Բառասկզբում օ լսվող օ-ն ըստ նախնական գրության ու-ով է գրվում միայն ով և դրանից կազմված ովքեր, ովևէ, ովկիցե բառերում:

Մանրություն.— Գրաբարում ու-ով են գրվել ընդհանրապես ով-ով սկսվող բառերը՝ ովկիանեսան, ովուանեայ, ովան (սինչ-որ ծովային գաղան):

բ) Բաղադրյալ (բարդ, ածանցավոր) բառերի միջում, երբ համապատասխան բաղադրիչի սկզբնահնչյունն է գործածվում, *օրինակ՝* անօրեն (<ան + օրեն), ապօրինի, առօրյա, նախօրոք, բացօրյա, բարօրություն, փոխօգնություն, այսօր, նանրօգուտ, մեղմօրոք, միջօրե, տնօրինել, այլև՝ հօգուտ, ոսկեզօծել, զօր ու գիշեր և այլն:

§ 386. Օ ձայնավորը օ արտասանվելիս ու-ով է գրվում մնացած բոլոր դեպքերում՝ բառամիջում և բառավերջում, *օրինակ՝* ակոբ, լողորդ, 190

մօլոր, կոհակ, բուրուվին, տոկոս, մեծարգո, բրածո, երեկո, այո, ճեռո, բերևաբարո, զրո, բյուրո, ռադիո, կինո, Մարո, Կարո և այլն:

Օ ձայնավորը բառավերջում օ տառով հանդիպում է միայն հատուկ ենտ տառային հապավումներում, ինչպես՝ ՅՈՒՆԵՍԿՕ, ՆԱՏՕ, ՍԵԱՏՕ, ՍԵՆՏՕ, ՉԹՕ («չճանաչված թուղ օբյեկտներ»):

Ո-ով է գրվում նաև ո (=վօ) հնչյունակապակցությունը բառասկզբում, ինչպես՝ ոգի (=վօքի), ոլորել, ոխերիմ, ողջույն, ոչինչ, ոսկեվառ, որդյակ, որոշակի, որոտ, որսորդական, Ոսկան, Ողիսևս և այլն:

Այդ գրությունը պահպանվում է և համապատասխան բաղադրյալ բառերում, որոնցից բաղաձայնի հաջորդելու դեպքում՝ ո-ն՝ օ, իսկ ձայնավորի դեպքում վօ է արտասանվում, հմմտ., օրինակ, ողնաշար—անողնաշար (=անօղնաշար), անորոշ, անորակ, առողջ, ձկնօրս, զանգուկ, մթնօլորտ, միջօրմ, խոշորոտ, որոտընդոտ և ենթաօրովայնային, ամենօրակյալ, ամենօրներիմ, կիսաօղորկ, արջօրս, բարձրատօ և այլլն:

Իրրև բացառություն, բառասկզբում ոչ թե ո-ով, այլ վօ-ով են գրվում նոր ժամանակներում փոխառյալ օտար բառերը, ինչպես՝ վօլտ, վոկալ, վօլտեր, վօլգա, վոդեիլ, վօլեյբոլ, վօրոնեծ և այլն:

Վօ գրությունը պահպանվում է նաև բաղադրյալ բառերում, օրինակ՝ բարձրավօլտ, ցածրավօլտ, մերձվօլգյան և այլն:

Մանթօրյուն.— Գրաբարում ո-ի փոխարեն վօ-ով են գրվել ոճ-ով սկսվող բառերը՝ վոճմակ (=ոճմակ), ոճուկ (=վճուկ):

## Ը-ի ուղղագրությունը

§ 387. Ը-ն, իրրև թույլ ձայնավոր հնչյուն, հատկանշվում է երկտեսակ գործածությամբ. մի շարք դեպքերում լսվում և գրվում է, մի շարք դեպքերում, ընդհակառակն, լսվում, բայց չի գրվում:

§ 388. Ը-ն ը արտասանվելիս ը-ով է գրվում՝

ա) Բառասկզբում՝ սովորաբար մ-ից, ն-ից, դ-ից առաջ, ինչպես՝ ըմբոստ, ըմբոնել, ընդունել, ընդարձակ, ընդամենը, ընդհանուր, ընթացք, ընթերցել, ընծա, ընկեր, ընկղմվել, ընտիք, ըտտանք, ըղձալ, ըղձական և այլն:

բ) Բառավերջում, երբ սովորաբար իրրև որոշիչ հոդ է գործածվում, օրինակ՝ աշակերտ—աշակերտը, աշակերտներ—աշակերտները, գետը—գետերը, պետությունը—պետությունները, ընկերոջ—ընկերոջը, որոշմանը—որոշմանը և այլն: Հմմտ. նաև ինք, դատը, սառը, խատը, տասը, ինքը, որոնցում, սակայն, ը-ն հոդ չէ (տե՛ս § 87, 88):

գ) Բաղադրյալ բառերի միջում, երբ իրրև բաղադրիչի սկզբնահնչյուն է գործածվում, օրինակ՝ գործընկեր, գործընթաց, անընդունակ, հյուրընկալ, նորընծա, հատընտիք, խոշընդոտ, ինքնըստինքյան, այլև՝

կրնկնի—կրնկնեն, շրնկնի—շրնկնեն, կրնդունես—կրնդունեմ, շրնդունես—շրնդունեմ և այլն:

§ 399. Ա-ն ը է արտասանվում, բայց չի գրվում՝

ա) Բառասկզբում ձայնավորի նախորդող զբ-, զգ-, շպ-, սթ-, սկ-, սպ-, ստ-, սֆ- հնչյունակապակցություններից առաջ, ինչպես՝ գրուներ ( $=$  զգրօսնէլ), զգոն, զգաստ, շպարել, շտապ, շտեմարան, սթափվել, սկսել ( $=$  ըսկըսել), սպասել, սպիտակ, ստանալ, ստեղծել, սֆանչանալ, սֆողել և այլն:

Մանրություն.— Ստ հնչյունակապակցությունից առաջ լավող ք-ն գրվում է միայն ըստ միավանկ բառում:

բ) Բառամիջում, երբ իբրև գաղտնավանկի ձայնավոր է գործածվում, օրինակ՝ գրիչ, ( $=$  գը + բիչ), բժիշկ, գնդակ, գրգռել ( $=$  գըր + գըր + աել), դժնդակ, զրնգզրնգալ, խմբագիր, կշկշոց, ֆենել, ֆնֆշորեն և այլն:

Գաղտնավանկի ք-ն, ինչպես հայտնի է, գրվում է միայն տողադարձի ժամանակ և հաճախ նաև բանաստեղծական (չափածո) խոսքում, օրինակ՝

Վրազ անցան երազ, մուրազ, ու շքհաս ոչ մեկին՝

Կյանքըս լինի և ասել տրված գրբազ եղալ, անցկադալ:

(Չովն. Թումանյան)

բ. ԵՐԿՆՁՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 390. Երկհնչյունները (այ, ույ, ոյ, էյ, իյ—յա, յու, յո, յե, յի) կազմված լինելով ձայնավորից և չ կիսաձայնից՝ իրենց ուղղագրությամբ սերտորեն կապվում են թե՛ մեկի, թե՛ մյուսի հետ: Ընդ որում նրանցում ձայնավորը շատ ավելի կայուն է և գրվում է արտասանությանը համապատասխան, իսկ չ կիսաձայնը տատանումներ է տալիս և միշտ չէ, որ գրութայամբ համապատասխանում է արտասանությանը:

Բայց ամբողջությամբ վերցրած բոլոր երկհնչյունները (իջևող թե՛ բարձրացող) գրվում են այնպես, ինչպես որ արտասանվում են: Եվ իրո՛ք. բառի բոլոր դիրքերում իրենց արտաբերության համեմատ են գրվում՝

ա) այ-ը, օրինակ՝ այգի, այրել, այս, գայլ, ձայն, նառագայք, խայթել, կայլակ, միայն, փայտ և այլն:

բ) ույ-ը, օրինակ՝ առույգ, աշխույժ, բույս, գրույց, թույլ, լույս, խառույկ, հույս, ձույլ, մակույկ, կահույք, նծույգ, ցույց, փույր և այլն:

գ) ոյ-ը, օրինակ՝ գոյական, հոյակապ, շոյել, նոյեմբեր, նոյյան, այլև՝ բոյկոտել, լոյալ, կոյնե, սոյա և այլն:

դ) էյ-ը, օրինակ՝ թեյել, գեյթուն, այլև՝ լեյտենանտ, հեյրան, նեյ-ճիմ, շեյխ, սեյամիկ, լակեյ, հոկեյ, Սեբեյ և այլն:

Նկատելի է միաժամանակ, որ դրանցից՝ ույ-ը՝ ա) որոշ բառերում ժողովրդախոսակցական լեզվի ազդեցությամբ. յու է արտասանվում և

սխալաբար այդպես էլ արտահայտվում գրավոր խոսքում, ինչպես՝ համբուր, ողջուն, դաշուն՝ համբուր, ողջուն, դաշուն ճիշտ ձևերի փոխարեն, բ) որոշ բաղադրյալ բառերում ույ > ու հնչյունափոխության հակառակ պահպանվում է նույնությունը, ինչպես՝ առույզություն, ինֆնուրությունաբար, նույնական, բույրիկ, այլև՝ հնչուփային//հնչույթային, ձևաբարանական//ձևույթաբարանական, գործառություն//գործառություն և այլն:

Նշենք նաև, որ իջնող երկհնչյուններից եյ-ը և ոյ-ը առավելապես հանդիպում են փոխառյալ բառերում:

§ 391. Բառի բոլոր դիրքերում հիմնականում իրենց արտասանության համեմատ են գրվում նաև բարձրացող երկհնչյունները՝

ա) յա-ն, օրինակ՝ յասաման, յամբ, աբբանյակ, առյան, սենյակ, որդյակ, վայրկյան, հորեյան, լյարդ, նյարդ, միմյանց, Մամիկոնյան, սևաշյա, առօրյա և այլն.

բ) յու-ն, օրինակ՝ յուղ, յուր, աղբյուր, ալյուր, երկյուղ, դյուրել, ձյուն, հյուսիս, մյուս, սկյուտ, ուրախություն, փյունիկ և այլն.

գ) յո-ն, օրինակ՝ յոթ, յոդ, յոգ, աղյոճ, ընտանյոճ (հանդերձ), այլև՝ Գյոթե, Պյոտր, Ալյոշա և այլն.

դ) Յե (= ե = յէ) երկհնչյունը, ի տարբերություն մյուսների, արտահայտվում է բառասկզբում, այն էլ՝ մեկ տառով՝ ե-ով (տե՛ս § 215, ա). դա, ինչպես հայտնի է, երկու տառով է գրվել 1922 թ. մինչև 1940 թ. գործող ուղղագրությանը, օրինակ՝ յերեխա, յերթ, յեղյամ, Յերևան, յերեկո և այլն:

Բացի այդ, նկատելի է, որ՝ ա) առաջ եկած լինելով եա երկբարբառից՝ յա երկհնչյունը լիովին չի տարազատվել ե (է) ձայնավորից և երբեմն եա (= էա) է արտասանվում. բ) առանձին դեպքերում յու երկհնչյունի յ-ն ի է հնչվում, ինչպես՝ մյուս (= միուս), այլև՝ միմյանց (= միմիանց):

Նշենք նաև, որ յ կիսաձայնի և ի, ը ձայնավորների միացությունները հնչանքապես ո՛չ իջնող և ո՛չ էլ բարձրացող երկհնչյուններ չեն կազմվում:

#### Գ. ԵՐԿՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

§ 392. Ձայնավորների ուղղագրությունը ոչ միայն երկհնչյունների, այլև նրանց կից գործածության հետ է կապվում: Ձայնավորները, ինչպես հայտնի է, բաղաձայններից բացի հաճախ նաև իրար հետ կամ կից են գործածվում: Ընդ որում դա արտահայտվում է երկու ձևով՝ թե՛ միեռնույն ձայնավորի և թե՛ տարբեր ձայնավորների զուգորդությամբ:

§ 393. Միևնույն ձայնավորի զուգորդությամբ արտահայտված հըն-

չունենոր կողմում են կրկնակ ձայնավորներ, որոնք և հատկանշվում են հետևյալ ուղղագրական կանոններով՝

ա) Ա կրկնաձայնավորը ինչպես արտասանվում, այնպես էլ գրվում է. 1) ա հոդակապից հետո ա ձայնավորով սկսվող բաղադրիչ ունեցող բառերում, օրինակ՝ ամենաառաջադեմ, ամենաազնիվ, ամենաաբախտ, կիսաայրում, նախաաշխարհաբարյան, ենթաառևադարձային, հավաակա-նանավ, հակաառաջակ, տեսաալիք, գիտաաթեխտակալն և այլն:

2) Փոխառյալ, հատկապես որոշ հատուկ անուններում, օրինակ՝ Հաագա, Սաադի, ալմաաթաթի և այլն:

բ) Ե (է) կրկնաձայնավորը նույնպես ինչպես արտասանվում, այն-պես էլ գրվում է, օրինակ՝ կոբեբեբեն, հրեբեբեն:


գ) Ի (=ի+ի) կրկնակ ձայնավորի միջև լսվում է թույլ յ, որը չի գրվում, օրինակ՝ լիիբավ, լիիմաստ, անդրիի, սպիի, Անիի, Քբիլիսիի և այլն:

դ) Ո (օ) կրկնակ ձայնավորը հանդիպում է փոխառյալ բառերում և արտասանվում է իբրև մեկ ձայնավոր (մասամբ՝ երկարացմամբ), օրինակ՝ կոնպերատիվ, կոնպերացիա, կոորդինատ, այլև՝ վատեռլոս, լոս, Մոոռ, միկրոօրգանիզմ, ճիդրոօդերոնաթաթանակալն և այլն:

ե) ՈՒ (ու+ու) կրկնակ ձայնավորը հանդիպում է քիչ թվով հայե-րեն և փոխառյալ բառերում և գրվում է, ինչպես որ արտասանվում է, օրինակ՝ շինծուություն, տիրացուություն, օդաչուություն, ժողովածուում, վակուում:

§ 394. Ի տարբերություն կրկնակ ձայնավորների, որոնք ընդհանուր առմամբ քիչ են, բավական շատ են այն երկձայնավորները, որոնք տար-բեր ձայնավորների կից գրությամբ են արտահայտվում:

Այդպիսի երկձայնավորներ են կազմվում ա-ի, է (ե)-ի, ի-ի, օ (ո)-ի, ու-ի առաջադաս և հետագաս զուգակցումներով, ինչպես՝



§ 395. Կից գրվելով՝ այդ երկձայնավորները ճիշտ միատեսակ չեն

արտասանվում և կամ ճիշտ իրենց արտասանությունների համապատասխան գրվում:

Այսպես՝

1) Ա սկզբնաձայնավորով՝

ա) ԱԻ-ն հանդիպում է հիմնականում փոխառյալ բառերում և սովորաբար յ ձայնակապով է արտասանվում, օրինակ՝ աբխաիկ (=արխաիկ), նաիվ, կոկաին, նովոկալին, այլև՝ նաիրի, նաիրյան:

բ) ԱԵ-ն հանդիպում է նույնպես փոխառյալ, հատուկներ բառերում և մեծ մասամբ թույլ յ ձայնակապով է արտասանվում, օրինակ՝ աերոակումբ, աերոդինամիկա, աերոպլան, մաեստրո:

գ) ԱՈ-ն հանդիպում է որոշ դարձյալ հիմնականում փոխառյալ, բառերում ու հատուկ անուններում և արտասանվում է գրության համապատասխան, օրինակ՝ ֆոնո, աուրոս, աուրիստ, բաբբաբ («կապկածառ»), կակաո, կոսո, Մաո և այլն:

դ) ԱՌԻ-ն ևս հանդիպում է փոխառյալ բառերում և գրվում է դարձյալ այնպես, ինչպես արտասանվում է, օրինակ՝ աուլ, լաուրեստ, լոկաուտ, կաուչուկ, հաուբից («հրետանային հրազեն»), մաուզեր, նոկաուտ, պաուպեր («ընչազուրկ»), կաուրա, Կաուրաս, Գաուզավա, Բաուրուլ, Սաուդյան Արաբիա և այլն:

Մանրություն.— Խոսակցական լեզվում որոշ բառերում աու-ն վ-ով կամ և-ով է արտասանվում, ինչպես՝ ավուլ, կավուչուկ, մանուզեր, մանուզերիստ:

2. Ե սկզբնաձայնավորով երկձայնավորներից՝

ա) Եա (էա)-ն հանդիպում է՝ 1) բառասկզբում է արմատով կազմված բաղադրյալ բառերում և յ ձայնակապով է արտասանվում, օրինակ՝ էակ (=էյակ), էպես, էական, էանալ, էարան. 2) բառամիջում՝ հայերեն և փոխառյալ մի շարք բառերում. հայերեն բառերում ձայնակապով, փոխառյալ բառերում յա է արտասանվում, հմմտ., օրինակ, բուպեական (=բուպէյական), այժմեական, մարգարեական, թեական, իսբեական, հասցեատեղ, ֆենեժ, այլև՝ ճնէարան, մանրէարան և իդեալական (=իդյալական), լաուրեստ, սեանս, ռեակտիվ, Անդրեսա. 3) բառամիջում՝ մի քանի (հիմնականում՝ փոխառյալ) բառերում և ընդհանրապես յ ձայնակապով է արտասանվում, օրինակ՝ իդեա (=իդէյա), ասամբլեա, էպոպեա, գալերեա, Կորեա, այլև՝ հրեա (=հրէայ/հրեայ):

բ) Եի (ե+ի)-ն հանդիպում է հայերեն և փոխառյալ որոշ բառերում և անխտիր յ ձայնակապով է արտասանվում, հմմտ., օրինակ, էի (=էյի), էինֆ, աթեիստ (=աթէյիստ), դեիստ, պանթեիստ, կոֆեին, ափսեի (=ափսէյի), Գայանեից:

գ) Եո (էո)-ն հանդիպում է հիմնականում՝ 1) փոխառյալ օտար բառերում և նույն կերպ կամ յօ է արտասանվում, օրինակ՝ ամեթա, ֆամելեոն, ֆեոդալական, նապոլեոն, լեգեոն, թեոհա, թեոհեմա, այլև՝ Լեո,

Պեղեռն, ռեսուտառ, Մոնետվիդեռ, 2) -*ե-ով վերջացող բառերի եզակի գործիականում և ձայնակապով է արտասանվում, օրինակ՝ արքեպիսկոպոս* (= *արքեպիսկոպ*), *բարեպետ*, *հասցեպետ*:

դ) եու (= է + ու) -*ն հանդիպում է հայերեն և փոխառյալ որոշ բառերում և ձայնակապով կամ առանց դրան է արտաբերվում, օրինակ՝ գործունեություն, խարեություն, մարգարեություն, ֆրեսկոպիկություն, հրեաներ, Սեուլ, լիուելում*:

3. Ի սկզբնաձայնավորով երկձայնավորներից՝

ա) իա (= ի + ա) -*ն ավելի լայն շափով է գործածվում և յա է արտասանվում բառամիջում և բառավերջում, հմմտ., օրինակ, հեփիաթ, խավիար, փասիան, մանիակ («մուլագար»), օվկիանոս, սոցիալիզմ, իշխաս, միլիարդ. ակադեմիա, ֆիմիա, ուտոպիա, ագիտացիա, Ասիա, Ռելիգիա, Գերմանիա, նուրկեգիա, Ֆինլանդիա և այլն: Իս երկձայնավորը յա հնչումով բնորոշ է առավելապես օտարազգի բառերին ու տեղանուններին: Հակառակ դրան, բուն հայերեն բաղադրյալ բառերում այն ոչ թե յա, այլ ձայնակապով իյա է արտասանվում, ինչպես՝ թիակ (= թիյակ), միակ, միավոր, հիանալի, լիակատար, ձրիակներ և այլն: Միայն նկատելի է, որ ձայնակապը թույլ է արտասանվում, ինչպես՝ գյուղացիական, լպտիանալ, սպիանալ, լիարժեք, միանձնյա, ձիարշավ և այլն:*

բ) իե (= ի + ե) -*ն հանդիպում է փոխառյալ բառերում և մի մասում՝ յէ, մի մասում իյէ է արտասանվում, հմմտ., օրինակ, կարիերիստ, ֆելիետոն, հիգիենիկ, պրիմիերա, Ջուլիետա և ռելիեֆ, պիես, հիերոգլիֆ, Վիեննա, Մարիետա:*

Իծ -*ն ձայնակապով է արտասանվում բուն հայերեն տիեզերք (= տիյէզերք) բառում և թի, ձի միավանկ բառերի հոգնակի ձևերում՝ թիեր (= թիյէր), ձիեր: Որոշ, հատկապես -եբեն ածանցով կազմված բառերում իե -*ն զրկում է այնպես, ինչպես արտասանվում է, օրինակ՝ լեզգիերեն, զպտիերեն:**

գ) Իո (= ի + ո) -*ն հանդիպում է մեծ մասամբ օտարազգի փոխառյալ, սակավ՝ հայերեն բառերում և յօ է արտասանվում, օրինակ՝ միլիոն, շեմպիոն, պիոներ, պանսիոնատ, ռադիօ, ստադիոն, գիլիոտին, ինտերնացիոնալ, ֆրակցիոն, ամբիոն, օրիոն:*

Կան բառեր, որոնցում այն զգալի կամ քիչ զգալի յ ձայնակապով է արտասանվում, օրինակ՝ տրիոլետ (= տրիյօլէտ), իոն, սիոնիզմ, Գիոնիստ, լիոն..., հիանալիորեն, իրավացիորեն, անդառնալիորեն, այլև՝ լիովին, հետաքնն, ձիով (= ձիյօվ), ուլիով, միօրյա և այլն:

դ) Իու (= ի + ու) -*ն արտասանվում է՝ 1) յու՝ օտարազգի փոխառյալ բառերում, օրինակ՝ ամուսնում, Սիրիուս («Սիրիուս, երկնից ասեղանցվոր», ՀԹ), կալցիում, հելիում, մագնեզիում, նատրիում, ցելսիուս, օպիում. 2) թույլ յ ձայնակապով (= իյու)՝ հայերեն բաղադրյալ, մա-*



նավանդ -ուրջուն ածանցով բառերում, օրինակ՝ լիություն, հուսալիություն, միություն, աբիություն, որոշակիություն և այլն:

4. Ո (o) սկզբնաձայնավորով երկձայնավորներից՝

ա) Ոա (=ո+ա)-ն հանդիպում է որոշ փոխառյալ բառերում և գրության համապատասխան է արտասանվում, օրինակ՝ բռա, կռալիցիա, օռգիս:

բ) Ոե (=ո+ե)-ն հանդիպում է նույնպես փոխառյալ բառերում և անխտիր ձայնակապով է արտասանվում, օրինակ՝ պոետ (=պոյէտ), պոեզիա, պոեմ, ալոե, Միոնե:

գ) Ոի (=ո+ի)-ն հանդիպում է փոխառյալ սակավ բառերում և ձայնակապով է արտասանվում, օրինակ՝ էլիպսոիդ, բանառիդ, ստոիկ, մետալոիդ:

դ) Ոու (=o+ու)-ն շատ ավելի սակավաթիվ փոխառյալ բառերում է հանդիպում և գրության համապատասխան է արտասանվում, օրինակ՝ շուռ, Լուրեհու, Օուհե, Ջուլ:

5. Ոի սկզբնաձայնավորով երկձայնավորներից՝

ա) Ուա (=ու+ա)-ն հանդիպում է ու-ով վերջացող բառերից կազմված որոշ բաղադրյալ բառերում, փոխառյալ որոշ հասարակ ու հատուկ անուններում և երկու դեպքում էլ առանց ձայնակապի է արտասանվում, օրինակ՝ գնչուական, երկուական, տիրացուական, քեկնածուական, այնուամենայնիվ, այսուամենայնիվ..., բուրժուա, ակաուալ, դուալիզմ, ինդիվիդուալ, նիկարագուա:

բ) Ուե (=ու+ե)-ն հանդիպում է բացառապես որոշ փոխառյալ հասարակ ու հատուկ անուններում և գրվում է, ինչպես արտասանվում է՝ օրինակ՝ դուետ, սիլուետ, Սուեզ, Ուելս, Վենեսուելա:

գ) Ուի (=ու+ի)-ն հանդիպում և այդպես է արտասանվում՝ 1) շատ քիչ թվով փոխառյալ հասարակ և հատուկ անուններում, օրինակ՝ ինտուիցիա, կազուիստիկա, Ուինստոն, Լուիզա. 2) ու-ով վերջացող բառերի որոշ թեք հոլովածներում, օրինակ՝ թեկնածու—թեկնածուի—թեկնածուից, ժողովածու—ժողովածուի—ժողովածուից, հարսնացու—հարսնացուի—հարսնացուից:

Մանրություն.— Ավելիք բառում ուի-ն ետևորդելով ձայնավորի՝ ձայնակապով է արտասանվում:

դ) Ուո (=ու+ո)-ն հանդիպում է մի քանի բառերի գործիական հոլովածում և ձայնակապով է արտասանվում, օրինակ՝ ժողովածուով, սերմացուով, թեկնածուով:

§ 396. Այսպիսով, հինգ կրկնակ ձայնավորներից բացի, հայերենում գործածվում են քսան երկձայնավորներ, որոնք ճիշտ միատեսակ չեն արտասանվում և ուղղագրական տեսակետից մի քանի խմբի են բաժանվում. ա) երկձայնավորներ (առ, եռ, եռ, որ, ուա, ուի, ուե), որոնք ինչպես գրվում, այնպես էլ արտասանվում են (օրինակները տե՛ս հա-

մապատասխան կետերի տակ). բ) երկձայնավորներ (իա, իե, իո, եա, եո), որոնց սկզբնաձայնավորը յ է արտասանվում և գ) երկձայնավորներ (աի, աե, իե, իու, եո, իա, ոե, ոի, ուի), որոնք ուժեղ կամ թույլ ձայնակապով են արտասանվում (դրանց օրինակները տեսնել նույնպես համապատասխան կետերի տակ):

§ 397. Երկձայնավորներն այգօրինակ պատկեր են ներկայացնում թե՛ բուն հայերեն և թե՛ փոխառյալ բառերում: Նկատելի է միայն, որ յ ձայնակապով գործածությունը առավելապես հատուկ է հայերեն բառերին ու բառաձևերին, որոնք ավելի են կարևորում նրա ուղղագրությունը և պահանջում ճշտորեն կիրառել դա:

### Յ ձայնակապի ուղղագրությունը

§ 398. Յ կիսաձայնը ոչ միայն ձայնավորների հետ երկհնչյուններ է կազմում, այլև մի շարք դեպքերում նրանց միջև է գործածվում և մեկը կապելով, միացնելով մյուսին՝ ձայնակապ է կոչվում<sup>58</sup>: Ընդ որում արտասանվելիս դա, իբրև կանոն, գրվում է ա-ից և օ (օ)-ից հետո, ինչպես՝ նայել, հայացք, երախայական, վկայություն, կայուն, հայելի, Միխայելյան..., գոյական, բարոյական, հոյական, խոյանալ, կոյուղի, հանոյակատար, շոյանք, երեկոյանալ, նոյեմբեր..., այլև՝ խաղայի—խաղային, անհանգստանայի—անհանգստանայիք, պողոտա—պողոտայի—պողոտայից—պողոտայով, պահածո—պահածոյի—պահածոյից—պահածոյով, բյուրո—բյուրոյի—բյուրոյից—բյուրոյով—բյուրոյում, կարո—կարոյի—կարոյից և այլն:

§ 399. Յ ձայնակապը արտասանվում, բայց չի գրվում ե (է)-ից, ի-ից, ու-ից, հետո, ինչպես՝ էական, գործունեություն, միջօրեական, միակ, միություն, լիանալ, այլև՝ գրեի—գրեինք, սիրեիր—սիրեինք, ձիով, վերաբերի, թեկնածուից և այլն:

Ե (է) ձայնավորից հետո յ է գրվում միայն դրանով վերջացող արմատական բառերի դեպքում, ինչպես՝ թեյ—թեյել, թեյաբան, թեյախոտ, թեյաման. Անդրեյ—Անդրեյի, պլեբեյ—պլեբեյական:

Յ կիսաձայնը ձայնակապային գործառույթով սերտորեն կապվելով իրենով արտահայտվող երկհնչյունների հետ՝ սովորաբար հաջորդ ձայնավորին միանալով՝ յուրատեսակ երկհնչյուն է կազմում, ինչպես, օրինակ՝ կայաբան—կա-յա-բան, բարո-յա-կան, հանո-յա-խոսել, գո-յու-թյուն, այլև՝ թե-(յ)ա-կան, լի-(յ)ա-հույս, մարգարե-(յ)ա-կան և այլն:

<sup>58</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 118—119:

## Լ-ի ուղղագրությունը

§ 400. Յ ձայնորդ հնչյունն առկայանում է նաև եվ (=յէվ) հնչյունակապակցության մեջ, որը ընդհանրապես արտահայտվում է փոքրատառով՝ և նշանագրով:

Դա առաջ է եկել դեռևս միջնադարում՝ ե+ւ (=և) միացությունք և ստանալով մի գրանշանի (տառի) իրավունք՝ ժամանակակից հայ գրական լեզվում գործածվում է որոշակի ուղղագրական կանոններով:

Ծագման իրավիճակով պայմանավորված՝ շունենալով իր մեծատառը՝ Լ-ը՝

ա) Բառասկզբում արտասանվում է յէվ և հատուկ անվան ու դրանից կազմված բառերի դեպքում գրվում է երկու՝ եվ, Եվ, իսկ այլ դեպքերում՝ մեկ՝ և տառով, ինչպես, օրինակ՝ Եվրոպա, Եվրոպիա, Եվգենիա, Եվրոպական, Եվրոպացի և ևս, ևեթ:

բ) Բառամիջում և բառավերջում արտասանվում է էվ և մեծ մասամբ գրվում է մեկ՝ և տառով, օրինակ՝ արևային, հարևան, Երևան, բարեկե, երևալ, տևական, կարևոր..., թև, ձև, կեղև, անձրև, պարզև, տերև, ներքև և այլն:

Մանրություն.— Ձայնավորից հետո այսպիսի դեպքերում Լ-ը սովորաբար յէվ է արտասանվում, օրինակ՝ Եակ (=նայէվ), թեև (տե՛ս նաև հաջորդ կետը):

գ) Ե շաղկապի և դրանից կազմված բաղադրյալ բառերում յէվ կամ էվ է արտասանվում և երկու դեպքում էլ մեկ տառով՝ Լ-ով է գրվում, հմմտ., օրինակ, և (ես և նա), առևտուր, թերևս, նաև, թեև, այլևայլ..., որևէ, ինչևհիցե, երբևեկ, ելևէջ, որբևայրի և այլն:

դ) Ի-ով վերջացող սկզբնաբաղադրիչով և ա հոգակապով ու -վոր վերջածանցով կազմված բառերում սերելով ի+ա+վ հնչյունակապակցությունից՝ էվ է արտասանվում և մեկ տառով՝ Լ-ով գրվում, ինչպես՝ հոգևոր < հոգի+ա+վոր, կարևոր, այևոր, ուղևոր, զոտևոր և այլն:

ե) Վ սկզբնահնչյունով արմատական բառերից կազմված բարդություններում ոչ թե և, այլ եվ է գրվում, ինչպես՝ հոգեվարժ (< հոգի+ա+վարք), կարեվեր (=կարի+ա+վեր < վէր), տարեվերջ, գերեվարել, գինեվաճառ, բարեվայելույ, ոսկեվառ և այլն:

Այդպես և ոչ թե և, այլ եվ է գրվում -ավետ ածանցով կազմված բառերում, ինչպես՝ գինեվետ (< գինի+ավետ), այգեվետ, բարեվետ, ոսկեվետ, այլև՝ ոսկեվուն (և ոչ թե՛ ոսկևուն):

զ) Մեծատառի դեպքում երկատվում և երկու՝ Ե+Վ//վ տառերով է արտահայտվում, օրինակ՝ ԵՎՐՈՊԱ//Եվրոպա, ՍԵՎԱՆ//Սևան, ԵՎ//Եվ (< ԵՎ քարավանը Աբու-Լալայի...», Ավ. Իս.) և այլն:

է) Տողադարձի ժամանակ ևս Լ-ը երկու տառով է արտահայտվում, ինչպես՝ երե-վակայել, տերե-վաբափ, թեթե-վություն, կարե-վոր և այլն:

Ուղղագրական այս կանոնները իրենց հերթին և ոչ ավելորդ անգամ

ցույց են տալիս ու հաստատում, որ Ե-ը իրո՞ք ինքնուրույն լիարժեք տառ է, անհրաժեշտաբար է տեղ գտել հայոց լեզվի այբուբենում, և հետևաբար՝ շարաշար սխալվում են նրանք, ովքեր մերժում և պահանջում են հանել այն դրա կազմից:

#### գ. ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 401. Բաղաձայն հնչյունները արտասանությանը համապատասխանելով իրենց նշանագրերին՝ նույնպես ճիշտ նույնը չեն մնացել և ժամանակի ընթացքում փոփոխություններ են կրել: Դա էլ, բնականաբար, դժվարացրել է նրանց ուղղագրությունը, որը և ժամանակակից հայոց լեզվում բնորոշվում է իրեն հատուկ կանոններով ու օրենքներով: Ընդ որում պետք է ասել, որ իրենց գրությանը ու արտասանությանը ներքանք ևս ուրվագծում են հայոց լեզվի հնչյունական համակարգի զարգացման ընթացքը, ակներև դարձնում այլևայլ կողմերով առնչակից հնչյունների միջև եղած կապերն ու հարաբերությունները, բառերի տարբեր դիրքերում նրանց կիրառության իրական պատկերը:

§ 402. Այս տեսանկյունից քննելով բաղաձայնների ուղղագրությունը՝ տեսնում ենք, որ՝

ա) Բառասկզբում, իբրև կանոն, նրանք գրվում են զուտ իրենց արտասանության համեմատ, օրինակ՝ բերան, գեղեցիկ, դարբնոց, զօրեղ, ժանիֆ, թակաբղ, լսել, ծիծաղ, կոբյուն, հաց, ձավար, պանետ, սարափ, ֆաղցր, փոֆր և այլն:

Այս օրենքից շեղվում են զբ-, զգ-, ստ-, սկ-, շտ- և այլն երկտառերով սկսվող բառերը, որոնք Ե-ով են արտասանվում (տե՛ս § 399, ա):

Մանրալրջան.— Ժողովրդաստակացական լեզվի ազդեցությամբ հատուկենտ բառերում միայն սկզբնաբաձայնը այլ կերպ է արտասանվում, օրինակ՝ ֆցել <զցել, ֆբբուլ <զբբուլ:

բ) Բառամիջում և բառավերջում նրանք միշտ չէ, որ իրենց գրության համապատասխան են արտասանվում և այնպիսի տարբերություններ են երևան հանում, որոնք ոչ թե վայրիվերո, այլ միանգամայն օրինաչափ բնույթ են կրում և պայմանավորվում են ժամանակակից հայ գրական լեզվի հնչյունական համակարգի բնույթով ու էությանը:

§ 403. Այսպիսով, ժամանակակից հայոց լեզվի բաղաձայնների ուղղագրությունը ևս ներկայացնում է մի մանրահամակարգ, որը և ամենից առաջ կապվում է նրանց արտաբերության եղանակի (շփական, պայթական, պայթաշփական) հետ և իր կանոններով ու դրսևորումներով այդ տեսանկյունից է ավելի պարզ դառնում մեզ համար:

#### 1. ՇՓԱԿԱՆ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

##### ա. ՁԱՅՆՈՐԴՆԵՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 404. Շփական հնչյուններից առանձնանում և, կարելի է ասել,

ուղղագրական տեսակետից մի պառանձին խումբ են կազմում ձայնորդները, որոնցից և՛

1) Լ-ն ինչպես արտասանվում է, այնպես էլ գրվում է բառի բոլոր դիրքերում՝ չհարուցելով, բնականաբար, ուղղագրական որևէ դժվարութուն, հմմտ., օրինակ, լայն, լեզու, լսել, լողալ, լուսատու. ալիք, գալարվել, երևելի, ծլկել, կալանք. հիշել, մնալ, գինեմուլ, մամուլ, շքեղափայլ և այլն:

2) Յ-ն երկհնչյուններ կազմելով և ձայնավորների միջև իբրև ձայնակապ գործածվելով (տե՛ս § § 398, 399)՝ որոշ դեպքերում ի, ե (է)՝ է արտասանվում և հաճախ սխալաբար այդպես գրվում, օրինակ՝ միմյանց (<միմեանց)=միմիանց, մյուս (<միւս)—միուս//միյուս, լոկլայն (<լոկեհայն)—լոելիայն//լոելեհայն, այլև՝ սենյակ (<սենեակ)—սենիակ, առօրյա—առօրեա, նոյյան (<նոյեան)—նոյան և այլն:

3) Մ-ն և Ն-ն արտասանական եղանակով՝ նույնական, տեղով մոտ լինելով՝ աղերսակցվում և հաճախ մեկը մյուսի փոխարեն են արտասանվում: Դա ինքնին ուղղագրական դժվարութուններ է հարուցում հատկապես բառամիջում, որը հաղթահարելու համար պետք է գիտենալ՝

ա) մ է գրվում հիմնականում բ, պ, փ պայթական հնչյուններից առաջ, ինչպես՝

ամբաստանել	զմբեթ	շամբ
ամբար	դամբան	ոումբ
ամբարիշտ	դիտմամբ	սալամբ
ամբարձիչ	զամբյուղ	սմբուլ
ամբարտակ	թամբ	ամպ
ամբարտավան	թմբուկ	ամպրոպ
ամբիոն	թումբ	ըմպել
ամբոխ	ըմբունել	լամպ
ամբողջ	ըմբոշխնել	ումպ
ամբրոս(իտ)	ըմբոստ	ճամպրուկ
անձամբ	ծծումբ	ամփոփ
ապստամբ	խումբ	բամփել
արագությամբ	կաղամբ	գամփո
բամբակ	համբակ	թրբմփ
բամբասել	համբավ	շամփուփ
բամբիչ	համբերել	փամփուշտ
բամբիռ	համբույր	ճամփա և այլն:
բամբյուն	մասամբ	
բեմբ (բեմձ)	շամբշոտ	
գամբիտ	շամբ	
	(«կերականութ»)	

բ) Բ, Պ, Փ պայթականներից առաջ ոչ թե մ, այլ և է գրվում ան-  
ժխտական ածանցով կազմված բառերում, ինչպես՝ անբաժան, անբասիր,  
անբան, անբավաբար, անբիծ (և ոչ՝ ամբբիծ), անբարոյական, անբունա-  
դատ, անբուժելի, անպայման, անպատասխան, անպատվել, անպետք,  
անպիտանի, անպտուղ, անփառունակ, անփոքձ, անփոփոխ, անփույթ,  
անփոխարինելի և այլն:

4) Արտասանության եղանակով ու տեղով աղերսակից են նաև Բ-ն  
և Ռ-ն, որոնցից առաջինը՝ Բ-ն, գրվում է արտասանության համապա-  
տասխան, օրինակ՝ բույե, բույեպկան, բարբի, արագ, արհամարհել, բա-  
բեկամ, մոլորվել, համար, բարեբաբ, փառավոր, փետուր, ֆաղցր և այլն:

Հայերենում, ինչպես հայտնի է, Բ-ով սկսվող միայն մի քանի բառ  
կա՝ բույե, Բաֆֆի, բարբունի, որ, սակայն, նաև ռաբբունի ձևով է գոր-  
ծածվում:

Որոշ բառերում խոսակցական լեզվի աղղցությունը Բ-ն ռ է ար-  
տասանվում, որ մերժելի է գրական լեզվի համար, օրինակ՝ առծիվ  
(<արծիվ), մառթ (<մարդ), նոա (<նրա), առթեն (<արդեն), առհա-  
մարհել (<արհամարհել) և այլն:

բ) Երկրորդը՝ Ռ-ն, ռ է արտասանվում ու գրվում ոչ միայն բառա-  
սկզբում (ռազմիկ, ռումբ, ռամիկ) և բառավերջում (ամառ, ծառ, հա-  
մառ, թիթեռ, նպուռ), այլև բառամիջում՝

1) և-ից առաջ, ինչպես՝ առնել, բռնել, դառնալ, բառնալ, բեռնել,  
հառնել, դառնութուն, խառնիճաղանջ, առձեռն, եղեռն և այլն:

Մանրություն.— Ե-ից առաջ ր է գրվում հնչյունափոխված բառերում, օրինակ՝  
վերնաճարկ, արնաման, արնար:

2) Պ, Կ, Թ, Զ, Վ, Ծ, Ք հնչյուններից առաջ, ինչպես՝ խոպոտ, խըռ-  
շակ, ուռկան, ուռնանալ, հուռթի, կառք, կառչել, կոթնել («հենվել»),  
հոչակ, մատովակ, առվակ, թոչել, սառչել:

3) Նմանաձայնությունը կազմված կրկնավոր բարդություններում,  
ինչպես՝ գոռգոռալ, գոռգոռոց, մոմուալ, հոհոալ, զոզուալ, ճոճուալ, դոդը-  
ռալ, դոդոռոց և այլն: Այլ կարգի կրկնավոր բարդություններում առաջին  
քաղաղրիչի Ռ-ն տարնմանման ենթարկվելով՝ ր է դառնում, ինչպես՝  
քրթիռ (<թիռ+թիռ), գրգիռ, բարբառ: սարսուռ, կարկառուն, մրմուռ  
(<մուռ+մուռ), մրմառլ և այլն:

Ր-ով վերջացող կրկնավոր բարդություններում Բ-ն անփոփոխ է մը-  
նում, ինչպես՝ թրթուր (<թուր+թուր), փրփուր (<փուր+փուր), ֆրֆել  
(<ֆիր+ֆիր+ել), գուրգուրանք (<գուր+գուր+անք):

Մանրություն.— Մի քանի փոխառյալ բառերում և-ից, լ-ից առաջ Ռ-ն՝ ռ, իսկ այլ  
ղեկավարում ր է գրվում, հմմտ., օրինակ՝ ժառնալ, Բեռլին, ստեղյեզ, էռնեստ, պրոլե-  
տար, բրիգադ, բայց նաև՝ ինտերնացիոնալ, կարլ, կոմիստերն:

§ 405. Զայնեղությամբ ու խլուծյամբ իրար հակադրվող բաղաձայն հնչյունները՝ վ-ֆ-ն, գ-ս-ն, ժ-շ-ն, ինչպես արտասանվում, այնպես էլ գրվում են բառի բոլոր դիրքերում, օրինակ՝ վայելի, վիենի, ավագ, նգովել, անիվ, ժողով. ֆակուլտետ, ֆիզիկա, ֆոսֆոր, Աֆրիկա, ռեխնիֆ, ֆեֆ. գարդ, զինվոր, գազան, կիզիչ, երագ, ֆարագ. սեղան, սարսափ, ավստասլ, լուսավոր, կրկես, մայիս. ժամանակ, ժպիտ, արժանիք, հոծար, վրեժ, գիծ. շաքար, շենդ, գիշեր, խոշոր, դրոշ, մշուշ և այլն:

Մասնավոր դեպքերում, միայն առավելապես խոսակցական լեզվի ազդեցությամբ, նրանք գրությամբ և արտասանությամբ տարբերվում են իրարից, ինչպես՝ հարավ—հարաֆ, ավտո—աֆտո, նավթ—նաֆթ, սկիզբ—սկիսբ, ֆարտեզ—բարտես, իշխաս—իշխազ, դշխունի—դժխունհի և այլն:

Բացի այդ, պետք է նաև նկատի ունենալ, որ՝ ա) բառակազմում ո (օ) ձայնավորից առաջ թեև վ է լսվում, բայց նրա հետ ավանդական սղղագրության սկզբունքով ո (=վօ) է գրվում. բ) յեվ, էվ հնչյունակապակցության դեպքում վ-ն նախորդ հնչյունի հետ միասին մեծ մասամբ և տանով է արտահայտվում (տե՛ս § 400).

գ) գբ-, զգ-, սկ-, սպ-, ստ-, շտ- սկզբնահնչյուններով գրվող բառերում գ-ն, ս-ն ը-ով են արտասանվում (տե՛ս § 399, ա):

§ 406. Ղ-և-ն, ի տարբերություն հիշյալ բաղաձայնների, միշտ չէ, որ գրությամբ համապատասխանում են արտասանությանը. եթե խ-ն բառի բոլոր դիրքերում ինչպես արտասանվում, այնպես էլ գրվում է (օր.՝ խաղ, խունապ, ախորժակ, թախիծ, ուրախ, գլուխ), ապա ղ-ն բ, տ, կ, փ, թ, ձ (>ց), ց, ջ (>չ) բաղաձայններից առաջ սովորաբար խ է հնչվում, ինչպես՝ աղբ (>ախպ), աղբյուր, աղբիկ, աղտ, աղֆատ, գաղջ, գեղձ, գաղթել, դաղձ, դեղձ, թուղթ, գեղչ, կեղտ, հաղթել, հաղթանակ, մաղթել, մաղձ, ողբ, ողջ, խեղդել, մեղի, սանդուղի, շաղգամ, գաղտնի, շղիկ, շղթա, ֆաղցր, բողկ, պղտոր և այլն:

Բայց դա բացարձակ օրենք չէ, և բառեր կան, որոնցում, հատկապես տ-ից, կ-ից, շ-ից, ս-ից, ն-ից առաջ, խ գրվում և խ է արտասանվում, ինչպես՝ ախտ, ապուխտ, ապերախտ, բախտ, բախտակ (ձկան տեսակ), գխտոր, դրախտ, դժախի, երախտիք, զմբուխտ, թախտ, թխկի (ծառի տեսակ), թուխս, թուխպ, ժխտել, լախտ, լխկել, խախտել, ծախսել, կխտար, կխնորել, հախճապակի, հախշուն, նախնիք, պանդուխտ, սխտոր, վախճան, տախտակ և այլն:

Գրային արտասանությամբ որոշ բառերում ղ-ն ոչ թե խ, այլ հենց ղ է արտասանվում, ինչպես՝ նողկալի, նղկել, պղպեղ, տաղտուկ, նոգփյուն:

§ 407. Հ խուլ շփականը, որ չունի իր լծորդակից ձայնեղը, ընդհանրապես գրվում է այնպես, ինչպես արտասանվում է, օրինակ՝ հաց, նեղուկ, հույս, անավոր, վաճան, ազան, վեհ, գրոն:

Ընդհանուր կանոնից, ինչպես հայտնի է, շեղվում են այն բառերը, որոնցում հ-ն հաջորդելով ր ձայնորդին՝ չի արտասանվում, ինչպես՝ աշխարհ (> աշխար), արհամարհել (> արհամարել), խոնարհ, խորհուրդ, ճանապարհ, շնորհք, շնորհել:

Գրական ճանապարհով փոխառված նման բառերում հ-ն հստակ կամ թույլ է արտասանվում, օրինակ՝ Ժպիրհ (սանամոթ, անպատկառ), Հիրհել:

Հ-ն գրեթե չի արտասանվում ընդհանուր (> ընթանուր), ընդամենք (> ընթամէնք), անընդհատ (> անընթատ), Հովհաննես (> Հովաննէս) բառերում:

Սանարայուն.— Սիալ ու մերժիկ է նախագահ (< նախ+ա+գահ) բառի առանց հ-ի (նախագահ) գործածությունը:

### 3. ՊԵՏՔԱԿԱՆ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՈՒՂԱԿՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 408. Երթնային Բ-Պ-Փ պայթական հնչյուններից պ-ն և փ-ն բառի բոլոր դիրքերում գրվում են այնպես, ինչպես արտասանվում են (օր.<sup>՝</sup> պայծառ, պիղո, կապար, ապրել, պարագ, զուսպ, փայլուն, արփի, շեռեփ), իսկ բ-ն մի շարք դեպքերում բառամիջում և բառավերջում բ գրվում, բայց՝

1) փ է արտասանվում՝ ա) ր ձայնորդից հետո, ինչպես՝ դարբին, երբ, երբէկ, լիբբ, հարբել, նուրբ, որբ, որբեայրի, սուրբ, սրբել, սրբիչ, ուրբաք և այլն: Մի քանի բառերում բ-ն փ է արտասանվում նաև մ ձայնորդից հետո, օրինակ՝ համբերել, համբերայուն, համբույր:

բ) Ձայնավորների միջև և երբեմն էլ հենց մեկ ձայնավորից հետո, ինչպես՝ խարել, շաբաք, Հակոբ, անխաբ:

2) Պ է արտասանվում դ (>խ)-ից հետո, ինչպես՝ աղբ (> ախպ), աղբյուր, եղբայր, ողբ, ողբանվագ:

§ 409. Առաջնաչեղվային Դ-Տ-Թ պայթականներից նույնպես խուլը՝ ա-ն և շնչեղ խուլը՝ ք-ն, գրվում են այնպես, ինչպես արտասանվում են (օր.<sup>՝</sup> տխուր, տանել, տգեղ, առել, ստոր, գունատ, գետ. բուգ, թեթե, արոտ, գաբա, գագաթ, մութ), իսկ ձայնեղը՝ դ-ն, մի շարք դեպքերում բառամիջում և բառավերջում դ գրվում, բայց՝

1) Թ է արտասանվում՝

ա) Ր ձայնորդից հետո, ինչպես՝ կարդալ (> կարթալ), երդիկ, երդում, արդար, որդի, դրդել, վրդովել..., բարդ (> բարթ), զարդ, մարդ, լյարդ, նյարդ, վարդ, բերդ, օրհորդ, ձախորդ, հաջորդ, շարորդ, կցորդ, քուրդ, որդ, խորհուրդ, խառնուրդ, ժողովուրդ և այլն:

Հակառակ դրան, մի խումբ, հատկապես գրական ճանապարհով փոխառված, բառերում Բ-ից հետո դ-ն հենց դ է հնչվում, օրինակ՝ ապարդյուն, արդ (սայծմ), արդի, անուրդ, գերդաստան, բարդի, դիրդ,



խլուրդ, խօղենի, խարդախ, հագուրդ, հորդոր, մակարդակ, նարդոս, սպրդել և այլն:

Սրանց կողքին կան մի շարք բառեր, որոնցում է ձայնորդից հետո ք գրվում և ք է արտասանվում, ինչպես՝ արքուն, եքք, զվարք, քարքել, քերք, լուրք, խօրք, կարք, կիրք, հարք, ներք, հօրք, մերք, մարքել, շողոմօրքել, շորքել, շուրք, ուրք (վազ), պարքև, սաղարք, ֆերքել, ֆրքմընչալ, փարքամ, փիփերք և այլն:

բ) Մի քանի բառերում՝ ձայնավորից հետո կամ ձայնավորների միջև, օրինակ՝ օղ (>օթ), օղանցք, դադար, վառող, Քաղևոս:

գ) Որոշ բառերում՝ ն ձայնորդից հետո, օրինակ՝ անդամ (>ան-թամ), խնդիր, կենդանի, ընդունել, ընդունելություն, ընդամենը:

2) Տ է արտասանվում, երբ իբրև հոդ է գործածվում (տե՛ս § 268, Թ, բ), օրինակ՝ ընկերդ (= ընկէրրտ), զիրգ, գրքերդ, ընկերուհուդ, սրտուհ, սիրտդ («Միրտող որպես վառ ատրուշան, պահիր վառ», Վ. Տերյան), այլև՝ այդ (= այտ), խեղդել (= խէխտէլ), տափդղ (= տաթտէղ):

§ 410. Ծտնալեզվային՝ Գ-կ-Ք պայթականներից կ-ն և ֆ-ն պ-փ, տ-ք հնչյունների պես ինչպես արտասանվում են, այնպես էլ գրվում են բառի բոլոր դիրքերում (օր.՝ կարտ, կիսատ, ակնոց, փակել, ներմակ, շեկ, ֆաղաֆ, ֆիք, արֆա, ներֆել, սլաֆ, քոխիֆ), իսկ գ-ն մի շարք դեպքերում բառամիջում ու բառավերջում գ գրվում, բայց ֆ է արտասանվում՝

ա) Ե ձայնորդից հետո, ինչպես՝ քարգման, մարգարե, պարգև, Սարգիս, երգ, կարգ, միրգ:

բ) ձայնավորից հետո կամ ձայնավորների միջև, ինչպես՝ էզուց, իգական, հագուստ, հագնակի, քագավոր, օգուտ, օգնական, անհագ, ձագ, մարագ, կարագ, ծեգ, նիգ, մուգ, ուրագ, սուգ և այլն:

Միածամանակ նկատելի է, որ շատ բառերում Ե-ից հետո ֆ գրվում և հենց ֆ էլ հնչվում է, ինչպես՝ արֆա, բարֆ, բերֆ, դիրֆ, զորֆ, թուրֆ, սարֆ, ֆուրֆ, ֆրֆիչ, ներֆին և այլն. 2) իբրև կանոն, ն ձայնորդից հետո գ-ն գ է արտասանվում, ինչպես՝ հրահանգ, նենգ, նինգ, սրինգ, եղունգ, ժառանգ, գանգ, զանգ, նահանգ, վտանգ, երանգ, սպունգ և այլն:

Այդ ընդհանուր կանոնից շեղվում է անգամ բառը, որ անհամ է արտասանվում:

### 3. ՊԱՏՔԱՇՓԱԿԱՆ ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 411. Պայթաշփական Զ, Մ, Ց հնչյուններից եթե ծ-ն և ց-ն ինչպես գրվում, այնպես էլ արտասանվում են (օր.՝ ծարավ, ծիծաղ, ածել, կայծակ, հարված, մեծ. ցամաք, ցնօրֆ, ֆարացնել, խցան, ամրաց, ցանց), ապա ծ-ն ձ գրվում, ց է արտասանվում՝

ա) Մի խումբ բառերում Ե ձայնորդից հետո, ինչպես՝ արձան, ար-

ծակ, արծակուրդ, դարձվածք, հարձակվել, բարձ, բարձրանալ, վերադարձ, վարձ, որձ, որձաբար, փորձել, փորձնական, խուրձ և այլն:

բ) Որոշ բառերում դ-ից հետո, ինչպես՝ բաղձանք, գեղձ, դաղձ, դեղձ, շնչանեղձ:

գ) Չայնավորից հետո օձ (=օջ) բառում և նրանից կազմված բաղադրություններում, ինչպես՝ օձաձուկ, օձագալար, օձային, օձապառլյտ:

Նման դեպքերում գրական ճանապարհով փոխառված բառերում ձ-ն նույնն է մնում, օրինակ՝ մերձակից, տնամերձ, ձորձ, բուրձ, հանդերձ, ուղերձ, ասաղձ, օձիք և այլն:

Այս բոլորից բացի պետք է նկատի ունենալ, որ կան նաև այնպիսի բառեր, որոնցում ք-ից և դ-ից հետո ց գրվում և ց է արտասանվում, ինչպես՝ արցունք, ապաքարց, Արցախ, ընթերցել, հարց, մրցել, պախուրց (սանձ), տրցակ (կապոց, խուրձ), ցրցամ տալ, փաղց, փաղցր, փաղցկեղ և այլն:

§ 412. Ջ-ձ-Չ պայթաշփականներից էլ ինչպես գրվում, այնպես էլ արտասանվում են ճ-ն և շ-ն (օր.՝ ճանաչել, խոնապ, վիճակ, տհաճ, պեճե. շար, շքնաղ, դարչին, բնչացք, կակաչ, շունչ), իսկ ջ-ն մի-շարք դեպքերում ջ գրվում և շ է արտասանվում՝

ա) Չայնավորից հետո, օրինակ՝ աջ (=աշ), առաջ, մեջ, միջոց, միջակ, միջատ, զիջել, իջնել, ոջիլ և այլն:

բ) Ր՝ ձայնորդից հետո, օրինակ՝ արջ (=արշ), վերջ, որջ, թրջել, այլև՝ առջև: Ջ-ն ջ գրվում և շ է արտասանվում նաև դ-ից հետո՝ մի քանի բառում, ինչպես՝ աղջիկ (=ախշիկ), ողջույն:

Գրական ճանապարհով փոխառված նման բառերում ջ-ն անփոփոխ է մնում, ինչպես՝ լուրջ, ստերջ, անուրջ, գաղջ:

§ 413. Այսպիսով, ինչպես այս բոլորից է պարզ երևում, ուղղագրական տարատեսակություններով հատկանշվում և ըստ այդմ էլ դժվարություններ են ներկայացնում առավելապես ձայնեղ պայթականներն ու պայթաշփականները, որոնք հայոց լեզվի զարգացման ընթացքում պատմական հնչյունափոխության ենթարկվելով՝ խլանալով, մի շարք դեպքերում հեռացել են իրենց նախնական արտասանությունից:

#### ԿՐԿՆԱԿ ԲԱՂԱՃԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 414. Հայոց լեզվում կան բազմաթիվ բառեր, որոնք գրվում են կրկնակ բաղաձայնով, օրինակ՝ աքքա, աննշան, անդորր, բերրի, գրավվել, դդում, երկկողմանի, ընդդեմ, թշշալ, թշշոց, իններորդ, ծծումբ, մրրիկ, ննջաբան, շշուկ, շշունջ, շշնջալ, տտիպ, տառր, տաննա, ուղղակի, Աննա, էմմա, Սուսաննա, Ննլիլ և այլն:

§ 415. Կրկնակ բաղաձայնները, ինչպես օրինակներից էլ կարելի է

նկատել, հանդես են գալիս և՛ բառասկզբում, և՛ բառամիջում, և՛ բառավերջում:

ա) *Բառասկզբում, իբրև կանոն, կրկնակ բաղաձայններն արտաբերվում են ը գաղտնալանկով, և առանձին կամ միասին են վանկ կազմում, օրինակ՝* գրգ-վել, դր-դում, զրզ-վել, խր-խունջ, լրլ-կել, կր-կու, նրն-ջել, ցր-ցուն *և այլն:*

բ) *Բառամիջում՝ 1) սկզբնաբաղաձայնին հաջորդելու դեպքում կրկնաբաղաձայնից մեկը կամ երկուսն էլ նույնպես ը-ով են արտաբերվում և առանձին վանկ կազմում, օրինակ՝* բրզ-զալ, բրժ-ժանֆ, գր-ձր-ձասեր, գրվ-վալ, դրգ-զոց, խր-նր-նանֆ, ձր-նրն-դա-կան, կր-ձր-ձանֆ, մրր-րիկ, պր-աը-տել, փրթր-թել, ֆրն-նիչ *և այլն:*

2) *Ձայնավորից հետո կամ այլ դեպքում կրկնաբաղաձայններն առանց ը-ի են արտաբերվում ու առանձին վանկ կազմում, օրինակ՝* աբբա, ան-նա-խանձ, ատ-տիկ-յան, բալ-լադ, գր-րավ-վել, երկ-կեն-ցադ, եր-րորդ, ընդ-դի-մա-դիր, ուղ-ղա-կի, օր-րան, սե-ղան-ներ, այլև՝ ան-նր-շան, ան-նրշ-մար *և այլն:*

գ) *Բառավերջում կրկնաբաղաձայնները թույլ ը ձայնավորով են արտաբերվում և բառի աճման դեպքում զատ վանկ կազմում, օրինակ՝* ին(ը)ն-ին-ներ-րորդ, տար(ը)ր-տար-րա-կալն, անդոր(ը)ր-ան-դոր-րա-գիր, վատ(ը)տ-վատ-տա-նոց *և այլն:*

§ 416. *Ինչպես դարձյալ բերված օրինակներից կարելի է նկատել, կրկնակ բաղաձայնները ոչ թե ամեն տեսակի կազմութուններում, այլ արտահայտվում են՝*

1. *Մի շարք բնաձայնական բառերում՝ սաստկացնելով դրանց նշանակութունը, ինչպես՝* բզզալ, բզզան, բզզացնել, բզզոց, դռալ, դռոց, զոռալ, զոռոց, զոռան, թշշալ, թշշան, թշշոց, խշշալ, խշշոց, խշշյուն, տզզալ, տզզան, տզզացնել, տզզոց *և այլն:*

2. *Հնչյունափոխությամբ առաջ եկած բառերում, ինչպես՝* բջջահյութ (*<բջիջ + ա + հյութ*), գծծանալ, թթօղի, գննել (*<գնին + ել*), ծծել, ձրծ-կեր, ծննդավայր, հովվերգություն, պտտել, սենդառու, ցցուն, ֆննիչ *և այլն:*

3. *Համանման հնչյուններով հարակցվող բաղադրյալ բառերում ու բառաձևերում, օրինակ՝* այբբենական, աննախանձ, աննման, բնակկառավարչություն, գրավվել, երկկողմանի, երկկենցադ, երրորդ, ընդդեմ, երեսուրիչ, նոյյան, ֆաղդեկ, խրատու, ֆիմամֆում, կեցցե (*<կեաց + ցե*), կազմման (*<կազմում + ան*), սեղաններ, պետություններ *և այլն:*

Մանրություն.— Այս խմբին պատկանող կեղծամ (*<կեղծ + ամ*) բառը գրվում է մեկ ծ-ով:

4. *Փոխառյալ որոշ բառերում և հատուկ անուններում, օրինակ՝*

Աֆիլլես, Ալլա, էմմա, Ժաննա, արբա, արլան, բալլադ, դալլար, մասսա, մասսաժ, պասսիվ, օարբի, տոննա, ֆինն և այլն:

Այս ամենով հանդերձ հայերենն առանձնապես շի սիրում կրկնակ բաղաձայններ գործածել և փոխառյալ մի շարք բառեր արտահայտում է մեծ մասամբ մեկ բաղաձայնով, ինչպես՝ նովելլա—նովել, կոլլեկտիվ—կոլեկտիվ, կոմմունիստ—կոմունիստ, դիսսերտացիա—դիսերտացիա և այլն:

Հայերենում կրկնակ բաղաձայնով են գրվում այն բառերը, որոնցում այն շատ որոշ է արտասանվում, օրինակ՝ տոննա, մասսա: Մի քանի բառեր սկսել են հնչվել և գրվել մեկ բաղաձայնով, ինչպես՝ դալլար—դալար, պասսիվ—պասիվ:

§ 417. Կրկնակ բաղաձայնով գրվող բառերը բոլոր դեպքերում չէ, որ նույն կերպ են արտասանվում: Բառեր կան, որոնցում կրկնակ բաղաձայնը իբրև մի հնչյուն կամ երկար է արտասանվում (օրինակ՝ աննման—անման, երոռոդ—երոդդ, երկկենցաղ—երկենցաղ, դասարաններ—դասարաներ և այլն)՝ հիմք դառնալով ուղղագրական սխալների համար: Բառեր էլ կան, որոնցում կրկնակ բաղաձայնը պարզորոշ է արտասանվում և դրա համապատասխան անսխալ գրվում:

#### ՄԵՏԱՏԱՌՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 418. Մեծատառերն ունեն իրենց կայուն ուղղագրական կանոնները, որոնք մշակվել են անհրաժեշտաբար ժամանակակից հայոց լեզվի զարգացման ընթացքում և ծառայում որոշակի նպատակների: Ըստ այդ կանոնների՝

1) Բոլոր տառերը մեծատառով են գրվում գլխաբառերում (վերնագրերում, լողունգներում, բառարաններում և այլն):

բ) Տառային մի շարք հապավումներում, ինչպես՝ ԱՄՆ, ՄԱԿ, ԳՖՀ, ՀՀ, ԱՊՀ և այլն:

2) Սոսկ սկզբնատառով են մեծատառ գրվում՝

ա) Ինքնուրույն նախադասությունների առաջին բառը, օրինակ՝ «Բայց ձին դժվարությամբ էր հետևում նրան: Այժմ միայն նկատեց, որ ետևի ոտքից կաղում էր նա: Անշուշտ գետի հոսանքի հետ տարվող կոճղերից մեկը դիպչելով, վնասել էր նրան: Այդ դեպքը սաստիկ վրդովեցրեց անվեհեր ուղևորին: Նա շտապում էր: Իսկ այժմ զրկվեցավ յուր սրընթաց երիվարից: Ի՞նչ պետք էր անել: Թողնե՞լ նրան և այնպես ոտքով շարունակել ճանապարհը» (Բաֆֆի, «Սամվել»):

բ) Հատկանունը՝

— Մարդկանց անունները, ազգանունները, ինչպես՝ Արամ, Գրիգոր, Թագրատ, Տաճատ, Պողոս, Պետրոս, Փառանձեմ, Վարդանի, Լուսինե, Անաոյան, Մամիկոնյան, Տիգրանյան, Բակունց և այլն:

— Աշխարհագրական (պետութիւնների, քաղաքների, մարզերի, շրջանների, գետերի, ծովերի, լճերի, լեռների և այլն) անունները, ինչպես՝ Հայաստան, Երևան, Արագած, Մասիս, Սևան, Արևմտահայաստան, Գեփաներա, Իտալիա, Աֆրիկա, Լոնդոն, Պամիր, Հոմ, Լեհաստան և այլն.

— Կենդանիների անունները, ինչպես՝ Մաղիկ («Եվ իմացած ըլիս, որ Մաղիկը սատկեց, և նանն ու Զանին տկլոր են», ՀԹ), Միրան («Վա՛յ Միրան շան... դուրս թռավ սրտիցս: Բայց ի՞նչ Միրանի ժամանակն է: ՀԹ»), Մովան («Այդ ժամանակ Մովանը գլխով հրեց դուռը և մտավ ներս», Ստ. Զոր.), Քուչի, Բողար, Զամբար («Այդ ժամանակ մենք նրան սիրալիք խոսքեր էինք ասում, կանչում էինք զանազան շների անունով՝ «Քուչի, Բողար, Զամբար», Ստ. Զոր.), Յուլի («Հազիվ էր ծայրը ծայրին հասցնում, երբ հավասար աշխատում էին ինքն ու Յուլակը», Ա. Բակունց) և այլն.

— Գեղարվեստական և այլ երկերի, գիտական աշխատությունների, հանդեսների, ամսագրերի, թերթերի և այլն անվանումները, ինչպես՝ «Հայաստան», «Փաստ», «Անուշ», «Ինճեբոզդ ալիք», «Ազգ», «Երկիր», «Այծմ», «Իրավունք», «Հյուսիսափայլ», «Ազդարար» և այլն:

գ) Բանաստեղծության (ոտանավորի) տողի սկզբի բառը, օրինակ՝

Իմ անցած օրերի պես,  
Հեացած օրերի պես,  
Ես արգեն հեռացել եմ,  
Հեացել եմ ես.  
Ես արգեն հեռացել եմ,  
Ես արգեն հիմա ծե՛ր եմ,  
Հեռացել ու անցել եմ—  
Մերացել եմ ես: (Ե. Ջառենց)

դ) Կախման կետերին հաջորդող ավարտուն նախադասության առաջին բառը, օրինակ՝ «— Ա՛յ կնիկ, ի՛նչ քարվան կտրելու գիշեր է... Միրտս ասում է՝ վեր կաց գնա Հնդրստանից եկող Շահի քարվանը կտրի բեր տունը լցրու...» (Հովհ. Թումանյան), «— Բայց և այնպես... Շատ ահհանգիստ էի. մտածում էի, որ վախից կարող էիք հիվանդանալ» (Նար-Դոս):

ե) Մեջբերվող ուղղակի խոսքի առաջին բառը, օրինակ՝ «Շապիրոն գրում է. «Այն բառը, որ նախադասության մեջ նշանակում է մտքի առարկան, կոչվում է ենթակա» (Մ. Աբեղյան):

զ) Երկ(ա)խոսությունների (դիալոգների) առաջին բառը, օրինակ՝

«— Ես երեք նրանից բան չեմ խնդրի, այն էլ քեզ համար:

— Պատճառը, աա՞:

— Ամեն մի խնդիր խնդրողի վրա որոշ չափով պարտականություն է դնում: Իսկ ես չեմ ուզում երախտապարտ լինել Ալիմովին:

— Այ քեզ նորություն. կինը մարդուն երախտապարտ...

— Ես նրա կինը չեմ, այլ միայն երեխաների մայրը...» (Շիրվան-զադե, «Քաոս»):

§ 419. Մեծատառի գործածությունը հիշյալ պարզ ուղղագրական կանոններով չի ավարտվում. առավել բարդ, որոշ դեպքերում անգամ հեղհեղուկ և չկանոնարկված է բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությունը: Իսկ դա բացատրվում է ոչ միայն նրանց բազմատեսակ արտահայտություններով, վերլուծական կազմությամբ, բաղադրիչների քանակով ու բնույթով, այլև տարբեր իրողությունների նկատմամբ հանդես բերվող տարատեսակ մոտեցումներով:

Վերանալով դրանցից, պետք է ասել, որ ուղղագրական տեսակետից բաղադրյալ հատուկ անունները բաժանվում են երկու մեծ խմբի՝ 1) այնպիսիների, որոնց բոլոր բաղադրիչները սկսվում են մեծատառով և 2) այնպիսիների, որոնց առաջին կամ դրան հաջորդող մեկ կամ մի քանի բաղադրիչները՝ մեծատառով, իսկ մյուսները փոքրատառով են սկսվում:

§ 420. Բաղադրյալ հատուկ անունների մեջ գերիշխում և ուղղագրորեն շատ ավելի կանոնարկված են երկբաղադրիչ հատուկ անունները: Ընդ որում՝ 1) երկու բաղադրիչներն էլ մեծատառով են սկսվում այն (անձերի, աշխարհագրական) անուններում, որոնց լրացյալը՝ ետադաս թե՛ նախադաս, առանձին վերցրած հատուկ անուն է, օրինակ՝ Սահակ Պարթև, Տիգրան Մեծ, Արա Կեղեցիկ, Աշոտ Երկաթ, Փոֆր Մասիս, Արեւիկյան Հայաստան, Նոր Արեշ, Վերին Արտաշատ, Պետրոս Առաջին, Մեծ Պարեճի, Իվան Ահեղ, այլև՝ «Երեկոյան Երևան» և այլն: 2) Երկու բաղադրիչներից միայն առաջինն է մեծատառով սկսվում՝

ա) Այն բաղադրյալ անուններում, որոնց մեջ լրացյալն առանձին վերցրած հատուկ անուն չէ, ինչպես՝ Սեանա լին, Գեղամա լեռներ, Հրո երկիր, Սև ծով, Կասպից ծով, Սառուցյալ օվկիանոս, Վայոց ձոր, Հեռավոր արևելք, Գորիսի շրջան, Հայկական պար և այլն:

բ) Ձանազան երկրների, ստեղծագործությունների, պարբերականների, թերթերի անվանումներում, որոնք շակերտների մեջ են առնվում, ինչպես, օրինակ՝ «Հացի խնդիր», «Կյանքի արշալույս», «Գիրք ճանապարհի», «Հուշարձան մայրիկիս», «Իններորդ ալիք», «Խելից պատուհաս», «Պատմա-բանասիրական հանդես» և այլն:

գ) Առանձին կազմակերպությունների, հաստատությունների, ղեկավար մարմինների անուններում, ինչպես՝ Պետական դումա, Ազգային լիգա, Անվտանգության խորհուրդ, Գերագույն խորհուրդ և այլն:

դ) Նշանավոր դեպքերի, պատմահասարակական եզակի իրողությունների, անցքերի, տոների և այլն անուններում, օրինակ՝ Նոր տարի, Մայիսի մեկ, Ազատության հրապարակ, Փաբլիզյան կոմունա, Հաղթանակի կամուրջ և այլն:

§ 421. Երկուսից ավել բառերից կազմված բաղադրյալ հատուկ անունները ևս նույն կերպ են ուղղագրվում.

ա) Բոլոր բաղադրիչները մեծատառով են սկսվում պետությունների, հանրապետությունների, մարզերի անուններում, ինչպես՝ Չինական ժողովրդական Հանրապետություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Լեոնային Ղարաբաղի Հանրապետություն, Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորություն և այլն:

բ) Առաջին բաղադրիչը՝ մեծատառով, մյուսները փոքրատառով են սկսվում համաշխարհային կազմակերպությունների, հաստատությունների, եզակի պատմական կարևոր դեպքերի, քաղաքական, արհմիութենական և հասարակական այլևայլ կազմակերպությունների ու մարմինների անուններում, ինչպես՝ Միացյալ ազգերի կազմակերպություն, Շախմատի համաշխարհային ֆեդերացիա, Անկախ պետությունների համագործակցություն, Դեմոկրատական երիտասարդության համաշխարհային ֆեդերացիա, Չինաստանի կոմունիստական կուսակցություն, Հայրենական մեծ պատերազմ և այլն:

§ 422. Նշված կետերը, որոնցով շին սպառվում մեծատառերի ուղղագրության կանոնները, ոչ միայն նրանց գործածության բազմատեսակ դեպքերի, այլև գոյություն ունեցող ամենևին էլ ոչ կայուն իրավիճակի մասին են վկայում և ցույց տալիս, որ իրողություններ կան, որոնք տակավին տեսական հիմնավորման, կանոնարկման ու ճշգրտման կարիք են զգում<sup>57</sup>:

#### ԲԱՐԳ ԲԱՌԵՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 423. Եթե պարզ բառերի և համագրական շատ բաղադրյալ բառերի ուղղագրությունը հնչյունների ու նրանց գրության հարաբերությամբ, ապա բարդ բառերի և հատկապես վերլուծական բարդությունների ուղղագրությունը նրանց կազմությամբ է բացատրվում: Այստեղից հետևում է, որ բառերն անսխալ գրելու համար կարևոր է նաև իմանալ, թե ինչ բաղադրիչներից և ինչպես են կազմված նրանք, թե որ դեպքերում է, որ բաղադրիչները միասին և որ դեպքերում է, որ առանձին կամ գծիկով են գրվում:

§ 424. Բաղադրյալ (ածանցավոր, բարդ) բառերի գրության հիմքում ընկած է նրանց արտասանությունը: Ըստ այդմ էլ՝

1) Այն դեպքերում, երբ բաղադրյալ բառի բաղադրիչները միասնաբար են արտաբերվում, գրավոր խոսքում էլ, իբրև կանոն, միասին են

<sup>57</sup> Մեծատառերի գործածության մասին տե՛ս հատկապես Ա. Ղառիբյան, Գ. Պարիս, Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետագրության ուղեցույց, Երևան, 1957, էջ 104—125, «ՏՅԵՐԻՆԱՔԱՆԱԿԱՆ և ուղղագրական անդեկատոս», Երևան, 1978, էջ 201—206:

գրվում, օրինակ՝ առհասարակ, ընդմիշտ, մերթընդմերթ, ինքնըստինքն-  
յան, այսօր, քանակաբար, երեսուներկու, այսինքն, միևնույն, ասուլիս,  
ուղիքով, թերևս, միևնույն, բայցևայնպես, համեմայնդեպս, այսուհետև,  
զարծրեցրելով, վայրէջք, լիմաստ, հացքովս, մկնդեղ և այլն:

2) Այն դեպքերում, երբ բառաբաղադրիչները սերտ միասնությունում,  
միաձուլ չեն արտաբերվում, գրվում են առանձին՝ գծիկով կամ առանց  
գծիկի:

### § 425. Գծիկով են գրվում՝

ա) Հարադրական կրկնավոր բարդությունները, ինչպես՝ խումբ-  
խումբ, սիրուն-սիրուն, երկու-երկու, քանի-քանի, քավալ-քավալ (լի-  
նեկ), արագ-արագ, շուտ-շուտ, ախ-ախ, այլև՝ բան-ման, պղտոր-մղտոր,  
քիչ-միչ, պարագ-առագ, առո՛ք-փառո՛ք, կաս-կարմիր, լեփ-լեցուն և  
այլն:

բ) Անվանական հարադրական բարդությունները, ինչպես՝ գիշեր-  
ցերեկ, տխուր-տրտում, երկու-երեք, այս-այն, այստեղ-այնտեղ, շատ-  
քիչ, շենք-շնորհ, աղաչանք-պաղատանք, ազգային-ազատագրական, քե-  
տանական-երեսունական, անձնական-ընտանեկան, մանկավարժական-  
դաստիարակչական, տուն-քանգարան, վարպետ-դաստիարակ, հայ-վրա-  
ցական, ուս-հայերեն, կոմունալ-կենցաղային և այլն:

Գծիկով են գրվում և գոյականների թեք հոլովածներով արտահայտ-  
վող անվանական հարադրությունները, օրինակ՝ աչքով-ունեով, տնով-  
տեղով, օտին-գլխին, տնից-տեղից..., այլև՝ խելի-խելի (տալ), մեջք-  
մեջքի, կողք-կողքի, թև-թևի, գլուխ-գլխի, քիթ-քթի, ձեռք-ձեռքի և այլն:

գ) Ձուգադրական բայերը, երբ բաղադրիչները շատ սերտորեն են  
կապվում իրար հետ, ինչպես՝ անցնել-զնալ, անցած-զնացած, գրել-  
կարդալ, երգել-պարել, ծել-ծաղկել, եփել-քափել և այլն:

Այլ դեպքերում և սահմ. եղանակի բաղադրյալ ժամանակներում ընդ-  
հանրապես ձուգադրական բայերի բաղադրիչներն առանց գծիկի են գր-  
վում, օրինակ՝ վերցնել փախչել, զնալ տեսնել, անցնում է զնում, վերց-  
նում է տանում, զուգվել է զարդարվել և այլն:

դ) Հարադրությամբ կազմված որոշ հատուկ անուններ, ինչպես՝  
Պամառ-Քաթիպա, Սայաք-Նովա, Նար-Գոս, Մելիք-Փաշայան, Տեր-Գաբ-  
րիելյան, Տեր-Վազարյանց, Սալտիկով-Շչեդրին և այլն:

### § 426. Առանց գծիկի են գրվում՝

ա) Հարադրավոր և պատճառական հարադիր բայերը, ինչպես՝ աչքի  
ընկնել, դուրս գալ, գլուխ բերել, լաց լինել, կույզ գալ, բույլ տալ, միտք  
տանել, հույս տալ, երես տոնել, ցույց տալ, գործ անել, փոխա գցել...,  
բերել տալ, գրել տալ, զգալ տալ, մոռացնել տալ, հեռացնել տալ և այլն:

Մանրություն.— Կցական բարդության զերծված հարադրավոր բայերում բաղա-  
դրիչները միասին են գրվում, օրինակ՝ անց կենալ > անցկենալ, գործ անել > գործանել:

բ) Բաղճյունական բարդությունները, ինչպես՝ ախ ու վախ, բաց ու



կրակ, գունդ ու կծիկ, դաբ ու փոս, ետ ու առաջ, լաց ու կոծ, ծափ ու ծիծաղ, խաղ ու պար, խեղճ ու կրակ, կարգ ու կանոն, համ ու հոտ, մեծ ու փոքր, սար ու ձուր, տակ ու գլուխ, փչ ու միչ և այլն:

Կցական բարդության վերածված բաղճյունական բարդությունների բաղադրիչները միասին են գրվում, օրինակ՝ այբուբեն, երթևեկ, ասուլիս, տոկաուր, միևնույն, շարդարուրդ, ելումուտ, անցուղարձ և այլն:

Կան բաղճյունական բարդություններ, որոնց բաղադրիչները երկու են՝ *ձևով՝ թե՛ տարանջատ և թե՛ միասին են գրվում, օրինակ՝ աղ ու հաց// աղոտաց, աճ ու դող//անհուդող, ամիս ու կես//ամիսուկես, դես ու դեմ// գետազեն, բուխ ու մուր//բուխումուր, լուս ու մուրջ//լուսումունջ, ծուռ ու մուռ//ծուռումուռ և այլն:*

Նկատելի է, որ գնալով շատ բաղճյունական բարդություններ կցականների են վերածվում և իրրե մի ամբողջական՝ համադրական բառ գրվում<sup>28</sup>:

գ) Այլ բնույթի որոշ հարադրական բարդություններ, ինչպես՝ ճիճգ հարյուր, տասնմեկ հազար, ժամանակ առ ժամանակ, ֆայլ առ ֆայլ, աչ մեկը, ոչ մի, մի ֆանի, ամեն ոք, ամեն մեկը, մի շարք, ոչ ոք և այլն:

§ 427. Այսպիսով, փաստերը ցույց են տալիս, որ ոչ միայն բազադրյալ, այլև ընդհանրապես բոլոր բառերի գրության ձևերը միշտ կամ տնիստիր նույնը չեն մնում: Գրական լեզվի զարգացման համընթաց ներքանք նույնպես բարեփոխվում, ճշգրտվում-կատարելագործվում են և համապատասխանեցվում հիմնականում արտասանությանը: Այդպես և՛ ըզգալապես բարելավվել, կանոնարկվել է կրկնավոր ու անվանական հարադրությունների ուղղագրությունը, մի շարք բարդությունների բաղադրիչներ որոշակի հիմքով պայմանավորված միասին են գրվում, կանխվել ու համակարգվել են մի շարք անմիօրինակություններ: Եվ, այնուամենայնիվ, չի կարելի ասել, թե ժամանակակից հայոց լեզվի ուղղագրությունը կատարելապես անթերի է և առհասարակ որևէ փոփոխության կարիք չի զգում:

Ո՛չ. կան (և չեն կարող, իհարկե, չլինել) իրողությունների՝ կապված, օրինակ, բարդությունների փոփոխությունների, տեղաշարժերի, հատուկ տնունների, կրկնաբաղաձայնների, տառադարձումների և այլն հետ, որոնք կանոնարկում, ճշգրտում և միաժամանակ գիտական որոշակի հիմնավորում ու կիրառում են պահանջում:

§ 428. Բաղադրյալ բառերի ուղղագրությունը մի շարք դեպքերում էլ որոշվում է նրանց ստուգաբանական կառուցվածքով կամ ուղղակի հենց ստուգաբանությամբ, օրինակ՝ հանդիպակաց > հանգեպ (< հանգեպ) + աֆ-կաց, հեկարան < հին փ է + ա + բան, մաերէ < մանր փ է (սէ-

<sup>28</sup> Գրանց մասին տե՛ս մեր «Հայերենի հարադր բայերը» (1986) և «Հայերենի բաղճյունական բարդությունները», Երևան, 1986:

պկ»), հօգուտ < յօգուտ < ի + օգուտ; ինքնըստինքյան < ինքն + ըստ + ինք-  
յան (< ինքեան), որևէ < որ + է + է, որևիցե < որ + է + իցե (< իցէ), ոսկե-  
զօծ < ոսկի + օ + զ. օծ (օծել), դողէրոցք < դող + էրոցք < այրոցք, դարձ-  
վածք < դարձ + ված + ք (< դարձ + ուած + ք), խոչընդոտ < խոչ + ընդ + ոտ  
(< ոտն), տարեբային < տարեբ + ային, կարեվեր < կարի («աստիկ,  
խիստ») + ար + վեր (< վէր «վերք») և այլն:

## ԵՈՍԹԻ ՄԱՍԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 429. Բառերի ու բառաձևերի ուղղագրությունը մի շարք դեպքերում էլ որոշվում է նրանց պատկանած խոսքի մասերի հնչյունափոխա-  
կան, բառակազմական և քերականական իրողություններով: Ըստ այդմ  
էլ կարելի է ասել, որ ամեն խոսքի մաս ունի իր ուղղագրությունը, որի  
կանոնները շիմանալու պատճառով ևս ուղղագրական զանազան սխալ-  
ներ են կատարում շատերը:

Այսպես՝ նկատելի է, որ՝ 1) գոյականներից, օրինակ, -ն վերջնա-  
հնչյունով բազմավանկ բառերի հոգնակին հաճախ երկուսի փոխարեն  
մեկ ն-ով է գրվում, ինչպես՝ սեղան(ներ) → սեղաներ, ոտնաման — ոտնա-  
մաններ → ոտնամաներ, պետություն — պետություններ → պետություններ,  
բաղաձայն — բաղաձայններ → բաղաձայներ և այլն: Հակառակ դրան, պա-  
տահում են դեպքեր, երբ ձայնավորահանգ բազմավանկ, այլև ն-ով վեր-  
ջացող բառերի հոգնակին մեկի փոխարեն երկու ն-ով է գրվում, օրինակ՝  
տղան(ն)եր, թշնամի(ն)եր, լեզու(ն)եր, սյու(ն)եր, գույն(ն)եր, այլև՝  
այդպիսի(ն)երը, այդպիսի(ն)երից և այլն:

Գոյականակերտ -ացք ածանցը՝ -ածք, -վածք ածանցը՝ -վացք, -ուն  
ածանցը՝ -յուն է գրվում, ինչպես՝ լվացք — լվածք, ընթացք — ընթածք,  
դարձվածք — դարձվացք, հյուսվածք — հյուսվացք, թռչուն — թռչյուն և այ-  
լքն:

2) Ածականներից սխալ են գրվում մանավանդ ի-ով վերջացող բա-  
ռերից՝ -վոր, -ավետ ածանցներով կազմված բառերը, ինչպես՝ արևվոր,  
նոգեվոր, ուղեվոր, կարեվոր, այգևետ, բարևետ, գինևետ, ալևոր, հոգևոր,  
ուղևոր, կարևոր, այգեվետ, բարեվետ, գինեվետ ճիշտ ձևերի փոխարեն:

3) Թվականներից՝ ա) կրկնաբազաձայնով բառերը մեկ բաղաձայ-  
նով են գրվում, օրինակ՝ եր(ր)որդ, չոր(ր)որդ, ին(ն)սուն, ին(ն)սունիս-  
ն(ն)երորդ և կամ, ընդհակառակն, -երորդ ածանցն է կրկնակ բաղաձայ-  
նով գրվում, ինչպես՝ ֆանհիկեբերորդ, ուրբերորդ և այլն. բ) կցական  
մի շարք բարդություններում բաղադրիչներն՝ անջատ, իսկ հարադրական  
բարդություններում միասին են գրվում, օրինակ՝ տասն հինգ, ֆան եր-  
կու, երեսուն վեց, ֆառասուն ինը..., երկուամայր, հինգհազար, վեցմի-  
լիոն և այլն՝ տասնհինգ, ֆաներկու, երեսունվեց, ֆառասունինը..., եր-  
կու հարյուր, հինգ հազար, վեց միլիոն և այլն ճիշտ ձևերի փոխարեն,

գ) դասական թվականների հոտմեական թվանշաններով արտահայտվող ձևերում՝ նրանցից հետո միանգամայն անտեղի -րդ է գրվում, օր.՝ II-րդ, III-րդ, IV-րդ, X-րդ, այլև՝ I-ին:

4) Դերանուններից հաճախ ոչ ոք-ը գծիկով ոչ-ոք, ոչ մի-ն՝ ոչ-մի, ինչ-որ-ը (ինչ-որ բան) շփոթվում է ինչ որ-ի («ես այն եմ ասում, ինչ որ դու») հետ՝ առանց գծիկի՝ ինչ որ, միմյանց-ը՝ միմիանց, միմեանց, ով-ը՝ օվ, որևէ-ն՝ որևե, երբևէ-ն՝ երբևե, որևիցե-ն՝ որևիցե, ինչևիցե-ն՝ ինչևիցե, երբևիցե-ն՝ երբևիցե, ո՞րեերդ-ը ո՞ր երեդ է գրվում:

5) Բայերից էլ հաճախ սխալ են գրվում՝ ա) օժանդակ բայը՝ դրական և մանավանդ ժխտական խոնարհման ձևերով, ինչպես՝ գրում է→ գրում ե, գրում էի→գրում եի//եյի, չէի գրում→չեի գրում, չէր խոսում→ չե՞ր խոսում, չէ որ→չե որ և այլն. բ) ըղձական, պայմանական, հարկադրական եղանակների անցյալ ապառնիի ձայնակապով («ա» խոնարհման դեպքում) և առանց ձայնակապի («ե» խոնարհման դեպքում) գրվող ձևերը, ինչպես՝ գնաի, գնաիր, գնաին, գնաիք, գնաիք, գրեյի, գրեյիր, գրեյին, գրեյիք, գրեյիք, գրեյին, գրեյիք, գնայի, գնայիր, գնային, գնայիք, գնայիք, գրեի, գրեիր, գրեին, գրեիք, գրեիր, ընդունված ճիշտ ձևերի փոխարեն.

գ) «ա» խոնարհման բայերի հարակատար դերբայը, ինչպես՝ կարդացած→կարդացաց, խաղացած→խաղացաց, մոռացած→մոռացաց, այլև՝ տեսած→տեսաց, անցած→անցաց և այլն. դ) վ հիմքով կազմված կրավորական բայերը, ինչպես՝ գրավ(վ)ել, խորով(վ)ել, հոլով(վ)ել, հապավ(վ)ել, վրդով(վ)ել, նզով(վ)ել, ապահով(վ)ել, ժողով(վ)ել, անպատվ(վ)ել և այլն:

6) Մակբայներից էլ հաճախ կցական բարդությունների բաղադրիչները ոչ թե միասին, այլ առանձին են գրվում, ինչպես՝ մեկ ընդ միշտ (մեկընդմիշտ), բացե ի բաց ← բացեիբաց, վագե վագ, օրե ցօր//օրեց օր ← օրեցօր, տեղն ու տեղը ← տեղնուտեղը, ընդ միշտ ընդմիշտ, վայր ի վերո ← վայրիվերո, մինչ դեռ -- մինչդեռ, փոքր ի շատե -- փոքրիշատե և այլն: Մակբայներ կան, սակայն, որոնց բաղադրիչները արտաբերության համապատասխան երկկերպ՝ և՛ առանձին, և՛ միասին են գրվում, օրինակ՝ մերթ ընդ մերթ//մերթընդմերթ, դեմ առ դեմ//դեմառդեմ, քաջ առ քաջ//քաջառքաջ և այլն:

7) Երկրորդական խոսքի մասերը (կապ, շաղկապ, եղանակավոր բառեր, ձայնարկություն) ուղղագրական առանձնակի դժվարություններ չեն հարուցում, և միայն որոշ՝ հատկապես կցական ու հարադրական բարդություններ են, որ երբեմն կամ հաճախ սխալ են գրվում, ինչպես՝ քնդեմ ← ընդդեմ, իվեր ← ի վեր, իդեպ ← ի դեպ, թեպետ և ← թեպետև, որպիսի ← որպեսզի, մինչևիսկ ← մինչև իսկ և այլն:

§ 430. Ուղղագրական այդ և մի շարք այլ սխալներ, որ հաճախ են պատահում անգամ ուսանողների գրավոր աշխատանքներում, ցույց են տալիս, որ ուղղագրությունը, իբրև ճիշտ գրելու կանոնների ամբող-

չություն, բազմաբարդ համակարգ է ներկայացնում և ոչ միայն հնչյուն-  
ների արտասանութեան ու գրութեան հարաբերութեամբ, այլև բառակազ-  
մական ու քերականական զանազան իրողութիւններով է բնորոշվում:

Սա էլ բնականաբար ուղղագրութեան համակողմանի, լայնածավալ  
և անընդմեջ ուսուցում է պահանջում, և այդպիսի դեպքում է, որ այն  
առավել արդյունավետ է լինում և լավագոյնս է ծառայում իր նպատա-  
կին:

### ՏՈՂԱԴԱՐՁԸ ԵՎ ՆՐԱ ԿԱՆՈՆՆԵՐԸ

§ 431. Բառի մի մասը նախորդ տողից հաջորդ տողը փոխադրելու  
երևույթը կոչվում է տողադարձ: Տողադարձը արտահայտվում է հատուկ  
կետադրական նշանով՝ -, որը դրվում է տողի վերջում և կոչվում է են-  
քամնա, օրինակ՝ քա-ղաք, քաղա-քի, քաղաքա-ցի, քաղաքացիա-կան,  
քաղաքացիակա-նութիւն և այլն:

Տողադարձը, ինչպես վաղուց է նշված հայ լեզվաբանական գրակա-  
նութեան մեջ, բառերի տրոհութեան եղանակներից մեկն է, որը և բոլոր  
դեպքերում խարսխվում է նրանց վանկատման կամ հեզումի վրա: Իսկ  
սա նշանակում է, որ տողադարձը ոչ թե մեխանիկական կամ տեխնի-  
կական, այլ բառերը ինչպե՛ս արտաբերելու և ինչպե՛ս վանկատելու իրո-  
ղութեամբ պայմանավորվող այնպիսի երևույթ է, որը հնարավորութեամբ  
է ընձեռում հեշտորեն ընկալելու բառապատկերներն ամբողջութեամբ:  
Դա էլ, օրինակ, հենց այդպես են մեկնաբանել Ա. Այտընյանը, Ստ. Պա-  
լասանյանը, Մ. Արեղյանը՝ ասելով. «Տողադարձի ուղղութիւնը կկայա-  
նա բառերը վանկ առ վանկ բաժանելու վրա»<sup>59</sup>, «Տողադարձի կանոն-  
ները հիմնվում են բառերը վանկ առ վանկ բաժանելու վրա»<sup>60</sup>, «Տողա-  
դարձի համար իբրև գլխավոր հիմք (ընդգծումն իմն է— Ա. Մ.) ծառա-  
յում է բառերի կանոնավոր բաժանումը վանկերի կամ հեզումը»<sup>61</sup>,  
«... բառերի բաժանումը վանկերի՝ պատահաբար չի առաջ գալիս, այլ  
մի բնախոսական երևույթ է և հիմնված է արտաշնչութեան ընդհատումի  
և թուլացումի վրա, իսկ վերջինս էլ կախված է իրարուց տրոհվող հըն-  
չյունների տեսակից»<sup>62</sup>:

§ 432. Ցավով պետք է արձանագրել, որ հակառակ այդ ամենի,  
վերջին տարիներս, մանավանդ որոշ թերթերում («Հայաստանի Հանրա-  
պետութիւն», «Ազգ» և այլն) ահավոր արշավանք է սկսված հայ գրա-  
կան լեզվում նույն այդ հիմունքով կիրառվող տողադարձի կանոնների

<sup>59</sup> Ա. Այտընյան, Քննական քերականութիւն..., էջ 346:

<sup>60</sup> Ստ. Պալասանյան, Քերականութիւն մայրենի ելզվի, Քիֆլիս, 1884, էջ 16:

<sup>61</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի ուղղագրութիւնը, էջ 77:

<sup>62</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսութիւն, էջ 92:

դեմ<sup>63</sup>, անաստված կերպով ու անարգել ոտնահարվում են դրանք, բա-  
ռերը ենթարկեցվելով համակարգիչի՝ տողադարձվում են աղճատված ու  
կամայական ձևով, ինչպես՝ ն-կաբ, մշ-տական, սկզ-բունք, հս-տակեց-  
նելու, Ռ-ուսաստան, գուն-վել, ավ-յալներով, փաստաթղ-թում, փետր-  
վաբ և այլն («Հայաստանի Հանրապետություն», 1 փետր. 1993):

Տողադարձային նման ավերածություններով էլ բնականաբար ոչ  
միայն բառերի ընկալումն ու ընթերցումն են դժվարանում, այլև ուղղա-  
գրությունից բացի զգալապես տուժում է նաև հայոց լեզվի ուղղախո-  
սությունը:

§ 433. Նման պարագաներում, հասկանալի է, տողադարձի հարցը  
առավել մեծ շահով է կարևորվում՝ պահանջելով ապացուցել, թե այն  
կանոնները, որ կիրառվում են գրավոր խոսքում նրա կիրառության ժա-  
մանակ, իսկապես անհիմն են ու անտեղի՞, ինչպես ոմանք են պնդում,  
թե՞ մշակվել են անհրաժեշտաբար, ծառայում են որոշակի նպատակի և  
գործնական նշանակություն ունեն:

§ 434. Եթե տողադարձը կատարվում է բառերի վանկատման (հե-  
զումի) վրա և որի շնորհիվ հեշտացվում է նրանց ընկալումն ու ընթեր-  
ցումը, ապա նշանակում է՝ այն իրոք անհրաժեշտաբար ստեղծված, որո-  
շակի նպատակի ծառայող, գործնական կարևոր նշանակություն ունեցող  
կարևոր իրողություն է և, իբրև այդպիսին, իր համապատասխան տեղն ու  
կշիռն ունի հայոց լեզվի ուղղագրության համակարգում:

§ 435. Գրային արտահայտման կարևոր միջոց լինելով՝ տողադարձը  
իր կանոններով երբեք քարացած չի մնում և կիրառվում է լեզվի հնչյու-  
նական կազմում ու ուղղագրական համակարգում կատարված կամ կա-  
տարվող փոփոխություններին համապատասխան: Դրա վառ ապացույցը,  
օրինակ, այն բազմաբանակ բառերն են, որ ներկայումս տողադարձվում  
են ոչ այնպես, ինչպես տողադարձվել են անցյալում կամ ուղղագրության  
բարեփոխություններից առաջ, հմմտ. զու-արթ—զը-վարթ, ա-բին—աբ-  
յուն, մա-տեան—մատ-յան, ա-սու-ել—աս-վել, տա-րու-այ—տար-վա և  
այլն: Նման փաստերը ևս ցույց են տալիս, որ տողադարձը իսկապես  
խարսխվում է բառերի վանկատման կամ հեզումի վրա և յուրովի նաև  
լեզվի հնչյունական կազմում կատարված արտասանական փոփոխու-  
թյուններն է արտացոլում:

§ 436. Հայերենում նույն այդ հիմունքով էլ՝

1) Չեն տողադարձվում՝ ա) միավանկ բառերը, ինչպես՝ աբա, անցք,  
բաբ, գործ, գալ, դեր, երթ, խինդ, սարբ, պարտբ, օձ և այլն. բ) տա-

<sup>63</sup> Տե՛ս «Առվետական ծանկավարժ» ամսագրում (1988, № 7) տպագրված «Բացա-  
ռել տառասխալները» հոդվածը, որի հեղինակը բացեիբաց քամահրում է տողադարձի  
ձանձոները և պահանջում բառերը «տողադարձել», ինչպես որ պատահում է: Ընթեր-  
ցողը դրա քննադատությունը կարող է տեսնել նույն ամսագրի 1989 թ. 10-րդ համա-  
րում տպագրված մեր՝ «Ուղղագրությունը միայն բառերն անխալ գրելը չէ՝ հոդվածում  
(էջ 68—73):

ոային և վանկատառային հասկացումները, ինչպես՝ ԱՄՆ, ՄԱԿ, ԼՂՀ, ՉԿԿ, ԵԱՀԵ և այլն:

2) Տողադարձվում են բազմավանկ բառերը՝ հետևյալ կանոններով.

ա) Զայնավորից առաջ եղած մեկ բաղաձայնը անցնում է հաջորդ տողը, օրինակ՝ հա-սա-րա-կա-կան, սո-վո-րել, ու-րա-խա-նալ, օ-տա-րո-տի, ե-րա-խա-յա-բար, սի-րու-նա-տես, հե-ռա-խո-սա-կա-յան և այլն:

Նույն այդ կանոնով տողադարձելիս և-ը երկատվում է (ե+վ) և ե-ն նախորդ, վ-ն հաջորդ տողում է գրվում, ինչպես՝ ե-րե-վալ, բա-րե-վել, Սե-վան, տե-րե-վա-թափ, թե-թե-վա-նալ և այլն:

բ) Երկու ձայնավորների միջև եղած երկու բաղաձայններից մեկը մնում, մյուսը անցնում է հաջորդ տողը, օրինակ՝ առ-դար, բաղ-ձանք, բովան-դակ, դան-դաղ, ըն-տիւր, գան-գատ-վել, պատ-կեր, նախ-ճիր, փոք-ձել, մենաս-տան, սաս-տիկ և այլն:

գ) Երկու ձայնավորների միջև եղած երեք բաղաձայններից առաջին երկուսը մնում, վերջինն անցնում է հաջորդ տողը, օրինակ՝ անց-նել, բարձ-րանալ, գործ-նական, երկ-րորդ, թարգ-մանիչ, ընկ-նել, ձանձ-րույթ, պոռթ-կալ, պաշտ-պան, փորձ-վել, օրհ-նանք և այլն:

դ) Չորս բաղաձայնի դեպքում, որ սակավ է պատահում, նույնպես վերջինն է անցնում հաջորդ տողը, ինչպես՝ մի-ջանցք-ներ, թը-ղանցք-ներ, բը-ռունցք-ներ: Այսպիսով՝ բոլոր դեպքերում, ինչպես դժվար չէ նկատել, տողադարձը կատարվում է մի ընդհանուր կանոնով՝ սուկ մի բաղաձայն է անցնում հաջորդ տողը:

§ 437. Այդպես են տողադարձվում բաղաձայնները նաև գաղտնավանկ ը ձայնավորից հետո, որ անխտիր գրվում է նախորդ և որոշ դեպքերում նաև հաջորդ տողում, օրինակ՝ բը-ժիշկ, բը-նագդ, գը-րիչ, հը-նոց, դը-ժոխք, խը-րոխտ, կը-լուր, վը-սեմ, փը-տել. բըռ-նել, գըն-դակ, դըր-վածք, զըս-պել, ժըխ-տում, թըմ-բուկ, լըկ-տի, ծըլ-կել, կըս-կիծ, շըղ-թա, տըգ-րուկ, ցըն-ցուղ. ֆըր-ֆը-րել, ժո-ղո-վըր-դա-կան, թա-ֆըս-տոց, Մը-կըր-տիչ, փը-ոըշ-տալ, հըռ-հը-ռոց, գա-լըս-տյան, հըն-չյուն//հընչ-յուն, դը-դըրդ-յուն//դը-դըր-դյուն և այլն: Գաղտնավանկ ը-ն գրվում է նաև մեկ ու կես վանկանի և ս, դ, ն հոդով բառերի տողադարձման ժամանակ, ինչպես՝ թան-ձրք, կար-ծրք, դուս-տրք, գիր-ֆրս, ընկե-րրդ, տեղուտե-ղըն և այլն:

§ 438. Զբ-, զգ-, սկ-, սպ-, ստ-, շտ- հնչյունակապակցություններով բառերի տողադարձման ժամանակ ըստ արտաբերության ը-ն գրվում է սկզբում, ինչպես՝ ըգ-բոսանք, ըգ-գույշ, ըս-կը-սել, ըս-պա-սել, ըս-տա-նալ, ըս-պա-նու-թյուն, ըս-պե-ղա-նի, ըշ-տե-մա-րան, ըշ-աա-պել, ըս-փո-փել և այլն:

Իբրև բացառություն, բառապատկերը շալլափոխելու համար, հա-

տուկ անուններն առանց ը-ի են տողադարձվում, օրինակ՝ Ստե-փան, Ալի-տակ, Սպար-տակ:

§ 439. Ըստ բառերի վանկատման կամ հեգումի ոչ միայն բաղաձայնները, այլև ձայնավորներն են տողադարձվում: Բառում իրար կից երկու ձայնավոր լինելու դեպքում մեկը մնում է նախորդ, իսկ մյուսն անցնում է հաջորդ տողը, օրինակ՝ է-ակ, մի-այն, ծի-ա-ծան, հի-ա-նա-լի, հե-ֆի-աթ, դա-տի-ա-րակ, լի-ար-ծեֆ, լի-իմաստ, կո-ո-պե-րա-տիվ, ա-մե-նա-ու-րախ, նա-ի-րի, մե-ծա-ուծ, Գեր-մա-նի-ա, շեմ-պի-ոն, ու-ղի-ա-կան, Գաբ-րի-ել, Դա-նի-ել-յան, Բառ-նա-ուլ և այլն:

Հաջորդ տողը անցնող ձայնավորից առաջ այսպիսի դեպքերում մեծ մասամբ յ է լավում, որ, սակայն, չի գրվում (տե՛ս § 120, գ):

§ 440. Այս ընդհանուր կանոններով հանդերձ տողադարձը միշտ չէ, որ ճիշտ միատեսակ կամ միակերպ է կիրառվում: Նկատելի է, որ նը-բանցից շեղվում են՝

1) Իրենց կազմում բաղաձայնից հետո յ կիսաձայնը (ձայնորդը) ունեցող բառերը, որոնց տողադարձի ժամանակ՝ ա) կա՛մ միայն յ-ն է անցնում հաջորդ տողը, ինչպես՝ ար-յուն, ալ-յուր, մատ-յան, սեն-յակ, կո-ր-յուն, հրն-յուն, ճաթ-յուն, զոփ-յուն, անց-յալ, փե-տր-վար-յան, գո-ծուն-յա, պաշ-տոն-յա, տրվ-յալ և այլն. բ) կա՛մ յ-ից բացի նրա հետ նաև նախորդ բաղաձայնն է անցնում հաջորդ տողը, հմմտ., օրի-նակ, աղը-յուր—աղ-բյուր, եղը-յուր—եղ-ջյուր, անկ-յուն—ան-կյուն, հո-բել-յան—հո-բե-լյան, Մես-րոպ-յան—Մես-րո-պյան, արդ-յո՛ւֆ—ար-դյո՛ւֆ, ու-րա-խոթ-յուն—ու-րա-խո-թյուն, մե-ծութ-յուն—մե-ծու-թյուն, հա-մար-յա—հա-մա-րյա և այլն. գ) կա՛մ յ-ն նախորդ բաղաձայնի հետ անպայման անցնում է հաջորդ տողը, օրինակ՝ վայր-կյան, մր-ջյուն, դել-փյան, ըս-տո-րո-գյալ, մի-ջան-կյալ, բան-տար-կյալ, սը-փյուտֆ և այլն:

Մանրություն 2.— Ուրյուն ածանցով բառերը գերազանցապես -թյուն-ով են տողադարձվում:

2) Մի շարք այլ՝ բառեր, որոնք երկկերպ վանկատվելով (տե՛ս § 111)՝ երկկերպ էլ տողադարձվում են, հմմտ., օրինակ, արա-գաց-նել—ա-րա-գա-ցը-նել, ֆր-նեց-նել—ֆր-նե-ցը-նել, փախց-նել—փախ-ցը-նել, մրաց-վել—մրա-ցը-վել, օգտ-վել—օգ-տը-վել, կողմ-նա-կի—կող-մը-նա-կի, արծ-վա-յին—ար-ծը-վա-յին, կրկ-նել—կր-կը-նել և այլն:

§ 441. Հայերենում (և նաև, օրինակ, ռուսերենում) տողադարձը կատարվում է ոչ միայն բառի վանկատման, այլև նրա կազմության կամ բաղադրության համեմատ: Ի տարբերություն պարզ բառերի, որ բացառապես մի կերպ՝ ըստ վանկատման են տողադարձվում, բաղադրյալ (ածանցավոր, բարդ) բառերը կարող են տողադարձվել երկու ձևով՝ թե՛ ըստ ընդհանուր վանկատման և թե՛ ըստ կազմության, հմմտ., օրինակ, ազգօգուտ → ազ-գօ-գուտ // ազգ-օ-գուտ, գործըրկեր → գոր-ծըն-կեր //

գարծ-ըն-կեր, հաղաբանդամ → հաղ-բան-դամ // հաղբ-ան-դամ, կեն-տուրախ → կեն-տու-րախ // կենս-ու-րախ, շերմնուանդ → շեր-մն-ուանդ // շերմ-ն-ուանդ, ծովափ → ծո-վափ // ծով-ափ, ապօրինի → ա-պօ-րի-նի // ապ-օ-րի-նի, վերընթաց → վերըն-թաց // վեր-ըն-թաց, տասներեք → տաս-նե-րեք // տասն-ե-րեք, բախտորոշ → բախ-տօ-րոշ // բախտ-օ-րոշ, ինճուրույն → ինճ-նու-րույն // ին-ճըն-ու-րույն և այլն:

Նման դեպքերում, երբ գաղտնավանկով բառ-բաղադրիչն է տարվում հաշորդ տողը, բաղադրիչների միջև և շի գրվում, օրինակ՝ լուսա-նկար, ան-գրագետ, սրա-քոիչ, ֆաղափա-բնակ, հաստա-գլուխ, հետա-հնենլ, արտա-գրել, հակա-դրույուն, բացա-տրվել, հետափրիբ-հետա-փրիբ (և ոչ թե՛ հետա-փրփիբ, ինչպես սխալաբար գործածվում է այսօր), զյուղա-տնտեսական և այլն:

§ 442. Տողադարձի ներկայացված, ամենևին էլ ոչ բարդ, կանոն-ները ստեղծվել ու մշակվել են անհրաժեշտաբար՝ հայ գրական լեզվի զարգացմանը համընթաց, բանավոր խոսքը գրավոր ձիշտ ու դյուրին արտահայտելու միջոցներից մեկն են և, ինչպես արդեն ասվել է, բառերն ու բառապատկերները հեշտորեն ընկալելի ու ընթերցելի դարձնելու նը-պատակին են ժառայում: Եվ հետևաբար՝ տողադարձը արհամարհելու, նրա կանոնները խեղաթյուրելու ու աղճատելու, բառերը կամայականօ-րեն մասնատելու և պատահած տառերը տողից տող տանելու փորձերը, որ պնդաճակատորեն գործադրվում են մեր օրերում, ոչ միայն խախ-տում են ժամանակակից հայոց լեզվի ուղղագրության միասնականու-թյունը, այլև վնաս են պատճառում նրա և՛ ուղղախոսությանը, և՛ ընդ-հանուր զարգացմանն ու առաջընթացին:

**ՈՒՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**  
**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՂԱՓԱՐ**

§ 443. Ուղղախոսությունը (= օրթոսպիա < հուն. orthos «ուղիղ» + épos «խոսք») սերտորեն կապվում է հնչյունաբանության, առավելա-պես՝ ուղղագրության հետ և, իբրև գիտական անվանում, վերջինիս պե՞տ գործածվում է երկու նշանակությամբ:

Այդ անվամբ հասկացվում է՝ ա) տվյալ ժողովրդի կողմից պատ-մականորեն մշակված, ընդհանուր կիրառություն ստացած, ձիշտ խոսե-լու կանոնների ամբողջությունը, ուղղախոսական ողջ համակարգը, բ) այն գիտական ճյուղը կամ ուսմունքը, որը ուսումնասիրում, բացահայ-տում է ուղիղ խոսելու կանոնները, կանոնարկում ուղղախոսությունը, նշում նրա զարգացման միտումներն ու ուղիները:

§ 444. Ուղղախոսությունը, իբրև ուղիղ խոսելու կանոնների ամբող-



շուքյուն, ուղղախոսական համակարգ, վերաբերում է բանավոր լեզվին և, բնականաբար, նաև նրանով խոսող հանրությունը:

Այդ տեսակետից այն, անշուշտ, տարբերվում է իրեն աղերսակից ուղղագրությունից, որը վերաբերում է զուտ գրավոր խոսքին և կիրառվում է գրել-կարդալ իմացող, գրագետ մարդկանց կողմից:

Բայց սա, իհարկե, չի նշանակում, թե տվյալ լեզվով խոսող բոլոր անհատները հավասարապես տիրապետում են ուղղախոսությանը, նրա հիմունքներին, խոսում՝ են ճիշտ ու անսխալ, ընդունված ուղղախոսական կանոններով. ամենևին: Ուղղախոսությունը գրական լեզվի՝ ժողովրդի կենդանի խոսակցական լեզվի մշակված, բարձրագույն ձևի դրսևորումն ու բաղկացուցիչ մասն է և, իբրև այդպիսին, անշեղորեն է կիրառվում նրանց կողմից, ովքեր տիրապետում են նրան: Այսպիսով, անշուշտ, զգալապես նեղանում են ուղղախոսության կիրառության սահմանները, որոնք, սակայն, երբեք նույնը չեն մնում և շարունակ ընդլայնվում են գրական լեզվի համընդհանուր զարգացման համեմատ:

§ 445. Գրական լեզվի ուղղախոսական կանոնների ամբողջությունը կազմելով՝ ուղղախոսությունը բավական բարդ համակարգ է ներկայացնում և իբրև այդպիսին էլ ներառում է՝ ա) բառերի և նրանց կազմի տարբեր դիրքերում գործածվող հնչյունների գրական արտասանությունը, բ) բառերի, բառակապակցությունների՝ գրական լեզվին հատուկ շեշտադրությունը, գ) բառերի, բառաձևերի ձևաբանական կանոնների կիրառումը, դ) բառերի կապակցության, նախադասությունների կառուցման կանոնների կիրառումը, ե) բառերի տեղին ու ճիշտ, անսխալ գործածությունը: Այսպիսով՝ ուղղախոսությունը ներառում է մի շարք իրողություններ, ունի հարուստ բովանդակություն և հետևաբար՝ սխալվում են նրանք, ովքեր ուղղախոսություն ասելով՝ հնչյունների կամ մի քիչ առաջ գնալով՝ նաև բառերի ճիշտ կամ գրական արտասանություն են հասկանում:

§ 446. Ուղղախոսությունը, իբրև լեզվաբանական գիտաճյուղ, ուղղախոսական կանոնների, նորմաների գիտական ուսումնասիրությամբ է զբաղվում և գերազանցապես գործնական նպատակներ հետապնդում: Նա սահմանում է գրական լեզվի ուղղախոսական կանոնները, որոշում է արտասանական տարբերակներից ճիշտն ու ընդունելին, մերժում է սխալն ու անընդունելին, նշում ուղղախոսության բարելավման հիմնական միջոցներն ու ուղիները, ցույց տալիս նրա դերն ու նշանակությունը գրական լեզվի զարգացման, ավելի միակերպ ու ընդհանրական դարձնելու գործում:

§ 447. Իր գործնական նշանակությամբ ուղղախոսությունը, բնականաբար, մեծ դեր է կատարում մարդկանց՝ հաղորդակցվելու, իրենց մտքերը հստակորեն արտահայտելու, հեշտորեն իրար հասկանալու գործընթացում:

Ուղղախոսորեն ճիշտ արտահայտված խոսքը զգալի գրական ազդեցութիւն է թողնում լսողի կամ խոսակցի վրա, գեղագիտական հաճույք պատճառում նրան: Ուղղախոսութեամբ անգամ որոշվում է անհատ մարդու զարգացածութեան, բարեկրթութեան և մինչև իսկ քաղաքավարութեան աստիճանը: Ուստի և՛ գրական լեզվի հիմունքների տիրապետումը, նրա կանոնների անշեղ կիրառումը առավել մեծ կարևորութիւն են ստանում՝ պահանջելով յուրաքանչյուրից՝ պատասխանատվութեամբ ու հոգատարութեամբ վերաբերվել իր խոսքին և ըստ կարելիութեան խոսել մաքուր, գեղեցիկ ու օրինակելի լեզվով:

§ 448. Ուղղախոսութիւնը բանավոր լեզվի բաղկացուցիչ մաս կազմելով և անմիջապես նրան վերաբերելով՝ ոչ թե մեկընդմիշտ տրված, քարացած, այլ փոփոխվող, շարունակ զարգացող իրողութիւն է, պատմական կարգ: Իբրև այդպիսին, այն անխզելիորեն կապված է գրական լեզվի պատմական կյանքի հետ և զարգացման ճիշտ այնպիսի ընթացք է ունեցել, ինչպիսին նա է ունեցել իր կտրած-անցած ճանապարհին: Ըստ այդմ էլ առանց սխալվելու կարելի է ասել, որ գրական լեզվի պատմութիւնն է՝ ուղղախոսութեան, և, ընդհակառակը, ուղղախոսութեան պատմութիւնն է՝ գրական լեզվի պատմութիւնը: Լիովին այդ է հաստատում հենց հայ նոր գրական լեզուն՝ իր ուղղախոսութեամբ:

### ԱՐԵՎԵԼԱԶԱՅ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

§ 449. Արևելահայ գրական լեզվի ուղղախոսութիւնը, իբրև ճիշտ խոսելու կանոնների ամբողջութիւն, իբրև համակարգ, սկզբնավորվել կազմավորվել ու զարգացել է նրա սկզբնավորման, կազմավորման ու զարգացման համընթաց՝ կրելով, բնականաբար, այնպիսի փոփոխութիւններ ու տեղաշարժեր, ինչպիսիք կրել է այդ գրական լեզուն:

Իմ իսկապէ՛ս. փաստերը ցույց են տալիս, որ ինչպես արևելահայ գրական լեզուն, այնպես էլ նրա ուղղախոսութիւնը ունեցել են միատեսակ զարգացման ընթացք, միատեսակ դժվարութիւններ ու խոչընդոտներ են հաղթահարել և հիմնականում միատեսակ շարժում հղկվել ու կատարելագործվել: Ըստ այդմ էլ, կարելի է ասել, ինչ փուլերով՝ արևելահայ գրական լեզուն, նույն փուլերով նրա ուղղախոսութիւնն է անցել և ամեն անգամ իր իրավիճակով համապատասխանել դրանց:

§ 450. Արևելահայ աշխարհաբարի առաջին՝ ավելի վաղ շրջանում (17—18-րդ դդ.), երբ իր հիմքում ունենալով Արարատյան բարբառը, նոր էր սկսում կազմավորվել ու մշակվել արևելահայ գրական լեզուն, երբ այդ լեզվով հատուկենտ գրքեր էին գրվում ու հրատարակվում, նրա ուղղախոսութիւնն էլ, բնականաբար, ոչ միայն շատ ենթ ոլորտներ էր

ընդգրկում, այլև հեղհեղուկ վիճակում էր գտնվում և շափազանց հեռու էր կանոնավոր, կանոնարկված ու նորմավորված լինելուց:

§ 451. Երկրորդ շրջանում, որ սկսում է 19-րդ դարի սկզբներից և հասնում մինչև 1920 թ.՝ Մայր Հայաստանում նոր հասարակարգի ստեղծումը, արևելահայ գրական լեզուն զարգացման հսկա թափ է ստանում՝ զգալի նվաճումների հասնելով նաև ուղղախոսության բնագավառում:

Ինչպես հայտնի է, այդ նույն շրջանում մեծած գրաբարը դուրս է մղվում գործածությունից, նոր հայերենն իր դիրքերն է հաստատում դրպրոցում, գրականության մեջ, թատրոնում, մամուլում և կյանքի այլ բնագավառներում: Այդ ամենի շնորհիվ արևելահայ նոր գրական լեզվի մըշակմանն ու զարգացմանը զուգընթաց զարգանում, ավելի է կանոնավորվում, նորմավորվում ու իր սահմաններն ընդլայնում նաև նրա ուղղախոսությունը:

Գրական լեզուն իր ուղղախոսությամբ զարգանալով ու ծավալվելով՝ դառնում է բարբառների հակոտնյան և ժողովրդի հասարակական-տրնտեսական, հոգևոր-մշակութային կյանքի պահանջով սկսում է գերիշխել բարբառների վրա, որոնցով նրա մեծագույն մասն էր խոսում:

§ 452. Պատմական ճշմարտության դեմ մեղանշած շլինելու համար պետք է ասել, որ իրավիճակը մեծապես փոխվում է արևելահայ գրական լեզվի զարգացման խորհրդային շրջանում, որ սկսում է 1920 թ. և գոյատևում մինչև մեր օրերը: Անցած, անշուշտ, ոչ շատ երկար ժամանակամիջոցում՝ 70 տարիների ընթացքում, հայ ժողովրդի կյանքում կատարված իրադարձություններով պայմանավորված՝ արևելահայ գրական լեզուն որոշակի հաղթանակ է տանում բարբառների նկատմամբ և ստանում շատ լայն գործածություն. անգրագիտության դեմ մղվող պայքարը, դպրոցական (տարրական, միջնակարգ) և բուհական կրթության լայն ցանցը, գրականությունը, մամուլը, թատրոնը, ռադիոն, հնչյունային կինոն, հեռուստատեսությունը և մի շարք միջոցառումներ (ժողովներ, նիստեր, հրապարակային ելույթներ և այլն)՝ հարաճուն գործունեությամբ մեծ թափ են հաղորդում արևելահայ գրական լեզվի և նրա ուղղախոսության զարգացմանն ու կատարելագործմանը, դարձնում այն շատերի սեփականությունը:

Եվ անժխտելի է, որ մեր ժողովրդի մի զգալի մասը (հատկապես կրթված խավը) իրոք տիրապետում է ուղղախոսության հիմունքներին և կարողանում է խոսել մաքուր ու գեղեցիկ գրական լեզվով:

§ 453. Ժամանակակից հայոց լեզուն, սակայն, բոլորովին հեշտորեն չի հասել ուղղախոսության այդ աստիճանին: Խարսխվելով իր հիմքը կազմող Արարատյան բարբառի վրա, որ «եղած բարբառների մեջ ամենից մաքուր, ամենից հարազատն ու անարատն» էր «հնշման ու

ստուգաբանութեան կողմից»<sup>1</sup>, արևելահայ գրական լեզվի ուղղախոսութունը միայն նրա միջոցով չէ, որ մշակվել, ձևավորվել ու զարգացել է: Այդ գործում չափազանց մեծ դեր է խաղացել նաև «գրի լեզուն», գրաբարը, որի հնչապատկերը և բառապատկերը ընկալված են եղել բոլորի կողմից համարյա միատեսակ ու մոտավոր կերպով»<sup>2</sup>:

Եվ իսկապե՞ս. հենց սկզբից դայակ ու ուսուցիչ ծառայելով արևելահայ գրական լեզվի համար՝ գրաբարը իր հերթին ևս նպաստել է նրա ուղղախոսութեան նորմավորմանն ու զարգացմանը: Այսպիսով, Արարատյան բարբառը՝ առավելապես իր հնչյունական կազմով ու արտասանութեամբ, գրաբարը՝ առավելապես իր բառապատկերներով ու հնչապատկերներով, ձևավորել են արևելահայ գրական լեզվի ուղղախոսութունը, միասնաբար կանոնարկել ու նորմավորել այն:

Այդ են հաստատում, օրինակ, հայր և որդի Գարրիել ու Ռափայել Պատկանյանները՝ իրենց հայանած հետևյալ «հակադիր» վկայություններով: Խոսելով կազարյան ճեմարանի մասին՝ Գ. Պատկանյանը 1850 թ. «Արարատ» թերթում (№ 2) նշել է, որ այնտեղ «շուտ ժամանակի մեջ աշակերտաց զանազան զավառական պարզ հայերեն խոսակցութունիցն կազմվեցավ մի պարզ հայերեն լեզու (ընդգծումն իմն է— Ա. Մ.), որն որ այժմ հասկանալի է թե՛ օսմանցվոց, թե՛ պարսից, թե՛ Քրդստանի և թե՛ Վրաստանի հայոց և յուրյան հատկութեամբն՝ ավելի մերձավոր լինելով Երևանցվոց հայերեն պարզ լեզվին, արժանապես կասվի Արարատյան լեզու»:

Նոր պես մտահոգված լինելով մի ընդհանուր պարզ, կանոնավոր լեզու ունենալու խնդրով՝ Ռ. Պատկանյանը նախ մի կողմից այն փաստն է արձանագրում, որ դեռևս «աշխարհիկ լեզուն չունի սահմանավորյալ կանոններ, ուրեմն նրա խտրութունները հարկ է հանձնել ժամանակին, որ մեզ համար թերևս անիմանալի հնարյուր մշակելով այդ լեզուն....., նորա կանոնները ևս կբերե սահմանի մեջ կդնե»<sup>3</sup>, «... ուղղախոսութեան կանոնները ևս, որք այժմ կան ամենայն խոսակցութեանց մեջ՝ այն ժամանակ կդաշնավորին և կարեն առարկա ևս լինել ուսման»<sup>4</sup>, «կան կանոններ և կարոտում են միայն կարգավորութեան և դաշնավորութեան. եթե մեր խոսակցական լեզուն մենք չեմք ամաշել գործածել՝ շուտով կտեսնեմք, որ ուղղախոսութեան, գեղեցկախոսութեան և քաղցրախոսութեան կանոնները կհայտնվին»<sup>5</sup>, ապա մյուս կողմից՝ խոսելով նույն կա-

<sup>1</sup> Կր. Վաճեցյան, Պատմական քերականութեան արևելահայ լեզվի, Քիֆլիս, 1906, էջ 37:

<sup>2</sup> Ա. Ղաբրյան. Հայ մանկավարժական լեզվաբանութուն, Երևան, 1969, էջ 76:

<sup>3</sup> Այդ մասին տե՛ս Զր. Աճառյան, Հայոց լեզվի պատմութուն, II մաս, էջ 478:

<sup>4</sup> Ռ. Պատկանյան, Երկեր, 1955, Երևան, էջ 683:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 684:

<sup>6</sup> Նույն տեղում:

գարյան ճեմարանում հայագետ Մ. էմինի խաղացած դերի մասին՝ ուղղակի ասում է, որ մինչև նա ճեմարանի աշակերտաց հայկական բարձրագույն պատճառներով աստրախանական էր (ընդգծումն իրենն է— Ա. Մ.). մենք կարծում էինք, թե շատ սիրուն է դուրս գալիս, երբ որ միամիտ-միամիտ ասում էինք, գնացիմ, բերամ, տրվամ, կեբեցիմ, տրվեցիմ, յաղուս, քթացամ, պետք աս տրված, պետք աս բերած, դարշու, բիրդան. հուլաք, ատա և այլն, և այլն: Հենց որ Մ. էմինը առաջին անգամ ուրբ կոխեց մեր դասարան, մեր խոսակցության լեզուն օրեց օր սկսավ յաքրվելու, կանոնավորվելու, կոկվելու, շատ կամ սակավ դաշնակավորություն ստանալու. և ստացավ այն կերպարանքը, որն մենք այսօր տեսնում ենք անարդարապես արարատյան կոչված բարբառումն, որն ըստ ամենայն իրավանց և արդարության պետք էր ճեմարանական բարբառ անվանելու...»<sup>7</sup>. և կամ՝ «Մեր օրոք՝ «բլաս [класс] մտնել», «փառախոտով [пароход] ճանապարհորդել», «փոթեթեթավաթ [протектывать] անել», «չայ [чай] կամ քոֆե [кофе] խմել», «բուքիլքան ուսքուփոհվաթ [бутылка раскупоривать] անել» և այլն, և այլն, արդեն համարվում էին կոշտ խժոժաբանություն, և մենք՝ էմինի աշակերտք առաջինն էինք, որ ամաչելով (իր թե արածներս աններելի մեկ հանցանք էր) սկսանք հայ կենդանի բարբառի մեջ մուծանել դաստառն կամ դասաբան, թել, սուրն, համալսաբան, դասախոսութուն և այլն բառերն, որոնք հետո՝ մեր հետնորդների համար՝ դարձան սովորական գործածելի բառեր, և այժմ մինչև անգամ հայաբնակ քաղաքների ամենաստոր դասակարգի մեջ մուտք են գործածած»<sup>8</sup>:

§ 454. Սրանք արևելահայ գրական լեզվի անցյալ դարի 50-ական թվականների վիճակին վերաբերող այնպիսի վկայություններ են, որոնցով ոչ միայն նրա այն ժամանակվա ուղղախոսությունն է ճշտորեն ներկայացվում, ոչ միայն բարբառի (հոր կարծիքով՝ Արարատյան, որդու կարծիքով՝ Աստրախանյան) և գրաբարի դաշնությամբ նրա ստեղծումը, ձևավորումը և զարգացման ընթացքն է ուրվագծվում, այլև այն կարևոր միջոցներից կամ գործոններից մեկն է նշվում, որը ամենամեծ դերն է խաղացել հայ գրական լեզվի ուղղախոսության պատմության մեջ ընդհանրապես:

§ 455. Իսկ այդպիսի մեծ դեր ամենից առաջ խաղացել են հայ դպրոցները, որոնցից էր և Մոսկվայի լազարյան ճեմարանը, որ ստեղծվել է 1815 թ. և իր գոյության ավելի քան 100 տարվա ընթացքում պատրաստել է բազմաթիվ մշակներ, որոնք իրենց գործունեությամբ մեծապես նպաստել են արևելահայ գրական լեզվի ու նրա ուղղախոսության զարգացմանն ու կատարելագործմանը:

<sup>7</sup> Ռ. Պատկանյան, Երկեր, էջ 693:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 698:

Նմանապես ուղղախոսութեան բնագավառում շահագանց մեծ դեր է խաղացել նաև Ներսիսյան դպրոցը, որ հիմնադրվել է 1824 թ. Քրիլիսիում, և որտեղ էլ ճիշտ 100 տարվա ընթացքում ուսանել-կրթվել են զանազան տեղերից եկած բազմաքանակ անձինք, որոնք և կյանքի հորձանուտների մեջ մտնելով՝ լուսավորչական ու մանկավարժական փայլուն գործունեություն են ծավալել և, թերևս, առավել մեծ թափ հաղորդել գրական լեզվի ու նրա ուղղախոսութեան մշակմանն ու զարգացմանը:

Նույնը պետք է ասել էջմիածնի Գևորգյան ճեմարանի (հիմնադրվել է 1874 թ.) մասին, որը տվել է նույնպես բազմաքանակ գործիչներ ու ուսուցիչներ, որոնք իրենց հերթին զգալի աշխատանք են կատարել գրական լեզվի ուղղախոսութեան բարելավման գործում՝ նպաստելով հատկապես նրա ընդլայնմանն ու ամրակայմանը: Արևելահայ գրական լեզվի ուղղախոսութեան բնագավառում, անշուշտ, ավելի կամ նվազ շահով դրական դեր են կատարել նաև մյուս բոլոր՝ մեծ ու փոքր կշիռ ունեցող դպրոցները, ինչպես, ասենք Շուշիի թեմական դպրոցը (1838), Մարիամյան-Հովնանյան դպրոցը (1877, Քրիլիսի), գյուղական ծխական դպրոցները և այլն: Ուղղախոսութեան զարգացման, կանոնավորման ու նորմավորման գործում դպրոցների դերը անհամեմատ մեծացել ու առավել արդյունավետ է դարձել արևելահայ գրական լեզվի զարգացման խորհրդային շրջանում. մի շրջան, որում ոչ միայն դպրոցներն են բավականաչափ շատացել (օրինակ՝ 1919 թ. 166 դպրոցի դիմաց 1940 թ. Հայաստանում գործել է 1155 դպրոց), այլև ազգային լեզվով մի շարք բարձրագույն ուսումնական հաստատություններ, բազմատեսակ կրթական, լուսավորչական օջախներ են ստեղծվել, որոնք և նրանց հետ միասին ավելի մեծ շահով են առաջ մղել ուղղախոսութեան զարգացումը:

Ընդ որում պետք է ասել, որ դպրոցները եթե անցյալում գերազանցապես հայ գրական լեզվի ուղղախոսութեան մշակման ու կանոնարկման, ապա հետագայում՝ խորհրդային շրջանում, նաև նրա ընդհանրացման, հանուրի սեփականությունը դարձնելու գործով են զբաղվել:

§ 456. Հայ գրական լեզվի ուղղախոսութեան մշակման, կանոնարկման ու զարգացման մի այլ կարևոր գործոնն էլ եղել է և է՝ գրավոր խոսքը՝ իր բոլոր տեսակներով, որոնցից էլ առանձնանում են հատկապես մամուլը և գեղարվեստական գրականությունը:

§ 457. Ինչպես հայտնի է, 19-րդ դ. 50-ական թվականներից սկսած, արևելահայ աշխարհաբարով հրատարակվում են մի շարք թերթեր ու հանդեսներ («Արարատ», 1850—1851, Թիֆլիս, «Հյուսիսափայլ», 1858—1864, Մոսկվա, «Մեղու Հայաստանի», 1858—1866, Թիֆլիս, «Կոռնկ Հայոց աշխարհի», 1860—1863, Թիֆլիս, «Հայկական աշխարհ», 1864—1871, 1874—1879, Թիֆլիս, «Մշակ», 1872—1921, Թիֆլիս, «Արձագանք», 1882—1898, Թիֆլիս, «Նոր դար», 1883—1916, Թիֆլիս, «Հորիզոն», 1909—1918, Թիֆլիս և այլն), որոնք տարածում գտնելով գրագետ-ըն-

թերցող խավերի լայն շրջաններում՝ որոշակի բարերար ազդեցություն են ունենում ուղղախոսության վրա, նպաստում, որ շատերը գեղեցիկ ու անսխալ խոսեն գրական լեզվով:

§ 458. Գրական լեզվի ուղղախոսությունը զարգանում և իր սահմաններն ավելի է ընդլայնում գեղարվեստական գրականության շնորհիվ: Անցյալ դարի կեսերից սե՛շած, երբ աշխարհաբարը իր դիրքերն է հաստատում գրականության մեջ, երբ լույս են տեսնում հայ նոր գրական լեզվով բազմաթիվ գեղարվեստական ստեղծագործություններ, դրանք դառնում են ընթերցողների սեփականությունը, հղկում, կատարելագործում նրանց խոսքը և այդպիսով նաև նպաստում հայ գրական լեզվի ուղղախոսության ընդհանուր զարգացմանը: Եվ քանի՞-քանի սերունդներ են, որ, ասենք, Մ. Նալբանդյան, Ռ. Պատկանյան, Ղ. Աղայան, Բաֆֆի, Հովհ. Հովհաննիսյան, Մուրացյան, Շիրվանզադե, Նար-Դոս, Հովհ. Քումանյան, Վ. Տերյան, Ավ. Իսահակյան և շատ այլ գրողների կարդալով՝ կարողացել են տիրապետել հայերենի ուղղախոսության հիմունքներին և խոսել գեղեցիկ ու օրինակելի լեզվով:

§ 459. Ուղղախոսության զարգացմանն ու տարածմանն իր որոշակի նպաստն է բերել նաև նույնպես անցյալ դարի կեսերից արևելահայ աշխարհաբարով իր գործունեությունը սկսած հայ թատրոնը: Կենդանի հղկված, մշակված, հնչել խոսքը տաղանդաշատ դերասանների, ասմունքողների բերանով հասցվել է հազարավոր մարդկանց, ուղեցույց ծառայել գրական լեզվով գեղեցիկ ու անսխալ խոսելու համար:

§ 460. Բավարարվելով այսքանով, պետք է ասել, որ այդ բոլորի շնորհիվ, որոնց ավելացել են նաև ռադիոն, հեռուստատեսությունը, հընչունային կինոն և բազմաթիվ այլ միջոցառումներ, ժամանակակից հայ գրական լեզվի ուղղախոսությունը զգալի առաջընթաց է ապրել, հասել է զարգացման ավելի բարձր աստիճանի, ավելի է համակարգվել, կանոնարկվել ու նորմավորվել: Եվ միանգամայն հասկանալի պատճառներով այն թեև տակավին հեռու է լիակատար լինելուց, բայց անվիճելիորեն ունի իր որոշակի ու կայուն հիմունքներն ու կանոնները, որոնց անցնելուց առաջ հարկ ենք համարում երկու խոսք ասել արևմտահայ գրական լեզվի ուղղախոսության մասին:

§ 461. Ի տարբերություն արևելահայ գրական լեզվի ուղղախոսության, որ գնալով ավելի է կանոնավորվել ու նորմավորվել, այլ ընթացք է ունեցել արևմտահայերենի ուղղախոսությունը:

Արևմտահայ աշխարհաբարը, որ ստեղծվել է «կը» ճյուղի բարբառների և դրանց մեջ հատկապես Պոլսի բարբառի հիման վրա՝ միջինհայերենյան մի շարք իրողությունների պահպանմամբ, թեև ավելի շուտ է ընկել «տպի տակ» (Մ. Նալբանդյան), թեև նույնպես զարգացման բարդ ու ուրույն ճանապարհ է անցել, գրական մշակման ենթարկվելով՝ նշանավորվել հղկված-կոկկված խոսքի գոհարներով, բայց ցեղասպանու-

թյան, Մեծ եղեռնի պատճառով, երբ թուրքական յաթաղանին զոհ դարձան պվելի քան միլիոն ու կես հայեր, այն զրկվել է հետագա զարգացման պայմաններից ու հնարավորություններից՝ կիրառվելով իրարից տարանջատ վայրերում:

Հասկանալի է, որ նման բախտի է արժանացել նաև արևմտահայ գրական լեզվի ուղղախոսությունը, որի ամենաբնորոշ առանձնահատկությունը պայթական հնչյունների ոչ թե եռաստիճան, այլ երկաստիճան հակադրությունն է, այսինքն՝ խուլերի դիմաց՝ ձայնեղ, ձայնեղների դիմաց՝ խուլ կամ շնչեղ խուլ արտասանությունը, ինչպես պատ>բաղ, Պետրոս>Բեդրոս, կատու>գաղու, Կանաղա>Գանաղա, կով>գով, բերան>փերան, բերք>փերք, գիր>կիր, գայլ>ֆայլ, դուռ>թուռ, դուր>թուր, ձու>ցու, դաս>թաս, ջուր>չուր և այլն: Իր այս և այլ առանձնահատկություններով արևմտահայ գրական լեզուն ոչ միայն հնարավորություն չի ունեցել հետագայում բնականոն ճանապարհով զարգացնելու ու կատարելագործելու իր ուղղախոսությունը, այլև չի կարողացել պահել ու պահպանել դրա միակերպությունն ու միասնականությունը, և ամբողջ Սփյուռքում պետականության բացակայության պատճառով անհրաժեշտ պայքար չի տարվել դրա համար:

Արդյունքում՝ խիստ նեղացել է արևմտահայ գրական լեզվի բուն ուղղախոսությունը և կարծես սկսել է մարել նրա նախնական հնչյունական արտասանությունը, և, ինչպես փաստերն են ցույց տալիս, դա հատկապես նոր սերնդի լեզվում փոխարինվում է գրային արտասանությամբ:

Նշենք նաև, որ արևելահայ գրական լեզվով խոսելու դեպքում արևմրտահայերը միշտ չէ, որ կարողանում են զերծ մնալ արևմտահայերենին հատուկ արտասանությունից և հաճախ բառերն արտաբերում են նրան բնորոշ ձևով, ինչպես՝ Պետրոսը դեռ իմ գիրքը չի կարդացել— Բեդրոսը թեռ իմ քիրքը չի գարթածել, Դուր սրբեցեք ձեր բերանը— Թուք սրփեձեք ցեր փերանը և այլն:

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

§ 462. Ուղղախոսությունը, իբրև բանավոր լեզվի իրողություն, ունի բազմազան կանոններ, որոնք վերաբերում են ոչ միայն նրա արտահայտության պլանին՝ հնչյունական կազմին, այլև բառակազմությանը և քերականական կառուցվածքին: Դրանցից, սակայն, առավել կարևորը առաջինն է, որով բառերի մեջ հնչյունների ճիշտ՝ գրական արտասանությունն է որոշվում:

Այս դեպքում էլ, ինչպես հայտնի է, առանձնանում և ուղղախոսա-



կան տեսակետից շատ ավելի մեծ կարևորություն են ներկայացնում ձայնավորները, որոնք քանակով քիչ՝ ընդամենը 6-ը լինելով հանդերձ բառերում ու բառաձևերում գործածվում են շատ մեծ շափերով և հաճախականություններով գերազանցում են բաղաձայններին: Եվ, օրինակ, ինչպես «ուսերեն խոսքում ձայնավոր հնչյունները միջին հաշվով 42,35 %, իսկ բաղաձայնները 57,65 % են կազմում»<sup>9</sup>, այնպես էլ հայերենի ձայնավորները բաղաձայնների համեմատությամբ գերշխում են խոսքում՝ հաճախաբար գործածվող ձայնորդների և ձայնեղների հետ գեղեցիկ ու ներդաշնակ դարձնելով այն:

Ձայնավորները ունենալով լայն ու հաճախական գործածություններ՝ արևելահայ գրական լեզվում հատկանշվում են իրենց հատուկ գրական արտասանությամբ ու որոշակի կանոններով, որոնց իմացությունը, անշուշտ, ունի գործնական մեծ նշանակություն ճիշտ ու ուղիղ խոսելու համար:

#### ա. ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

§ 463. Հայոց լեզվի երկարատև զարգացման ընթացքում ձայնավոր հնչյունները ձեռք են բերել որոշակի հստակ գրական արտասանություն: Այսպես՝ ժամանակակից արևելահայ գրական լեզվում նրա 6 ձայնավորներից՝

ա) Ա-ն բառի բոլոր դիրքերում անշեղորեն իբրև մաքուր ա է արտասանվում, հմմտ., օրինակ, ահա, աճուճ, գազան, հասարակ, ծանոթ, տղա, շուկա, հիմա, բուլա և այլն:

Ա-ն այդպես է արտասանվում նաև ձայնավորների հետ գործածվելիս, ինչպես՝ երկուական, քառու, կառույց, էակ, քեկնածուական, հեֆիաթ, միայն և այլն (տե՛ս և հմմտ. § 381, § 393, ա):

բ) ՈՒ-ն բառի բոլոր դիրքերում ևս մաքուր ու է արտասանվում, հմմտ., օրինակ, ուրախ, ուսում, ուղեղ, զարուճ, բուրմունք, սուրալ, լեզու, մեղու, ուրու, հեռու, քուլ և այլն:

ՈՒ-ն այդպես է արտասանվում նաև ձայնավորից առաջ ու հետո, ինչպես՝ երկուական, ժողովածուում, բուրժուա, լուիգա, Սուեզ և այլն:

Առանձին դեպքերում, մանավանդ խոսակցական լեզվում, ու-ն վ-ին մոտ հնչումով կամ պարզապես վ է հնչվում, ինչպես՝ բու→բուի և բվի, բուեք և բվեք, հարսնացու→հարսնացուի և հարսնացվի և այլն:

գ) է (ե) ձայնավորը (տե՛ս նաև § § 383, 384) կայուն ձայնավոր է և բառի բոլոր դիրքերում հիմնականում նույն կերպ է հնչվում, ինչպես՝

<sup>9</sup> Р. И. Попов, Д. П. Валькова, Л. Я. Маломицкий, А. К. Федоров, Современный русский язык, М., 1978, с. 40.

Ֆակ, էլի, էլեկտրական, բերել, վրեժ, մենակ, գեղեցիկ, հանդես, արսես, մարգարես, ոսկե, որևէ և այլն:

Չայնավորի հետ գործածվելիս կամ զուգորդվելիս՝ 1) դեպքեր կան, երբ նույնպես է է արտաբերվում, ինչպես՝ ֆենած, թեական, հոգեառ և այլն, 2) դեպքեր էլ կան, երբ, հատկապես փոխառյալ բառերում, յ է արտաբերվում, օրինակ՝ ռեակցիա—ն(յ)ակցիա, ռեալ—ն(յ)ալ, ամեոքա—ամ(յ)ոքա և այլն (տե՛ս և հմժտ. § 395, 2):

դ) Ի-ն բաղաձայնից առաջ և հետո, բաղաձայնների միջև ի է արտասանվում, օրինակ՝ իմաստ, իղձ, իրական, ինչ, սիրել, կարմիր, անհարիր, գիշեր, յոյզի, բուծելի, ուղի, վայրի և այլն. իսկ ձայնավորից առաջ եթե մի շարք դեպքերում նույնպես ի, ապա շատ դեպքերում էլ, հատկապես փոխառյալ բառերում, յ է արտասանվում, հմժտ., օրինակ, լիակատար, լիիրավ, միաձայն, հիանալ, լիովին, ֆաղեհիություն և հեֆիաք = հեթ(յ)աթ, կրիա, ակադեմիա, օրիորդ, միլիոն, Ավստրիա և այլն (տե՛ս § 395, 3):

ե) Օ (ո)-ն բառի բոլոր դիրքերում օ է արտասանվում, ինչպես՝ օր, ով = օվ, օտար, օգուտ, բոլոր, կարոտ, խոսել, խողովակ, այո, երեկո, կինո, օազիս, պոեմ, այլև՝ Շշակ (վօրակ)—անորակ (անօրակ), շաբոնակ—չարօրակ, որոշ (վօրօշ)—անորոշ (անօրօշ), որդի (վօրթի)—արդիական (վօրթիական) և այլն:

զ) Ը-ն, իբրև թույլ, անշեշտակիր ձայնավոր, բառի բոլոր դիրքերում չէ, որ նույն կերպ է արտասանվում. այն համեմատաբար ուժեղ է հնչվում բառասկզբում՝ մ, ն, դ բաղաձայններից առաջ և բառավերջում, երբ իբրև որոշիչ հոդ է գործածվում, ինչպես՝ ըմբիշ, ըմբռնել, ընտիր, ընդամենը, ընձուղտ, ըղձական..., ֆաղաբը—ֆաղաֆները, սեղանը—սեղանները, ջուրը—ջրերը, այլև՝ դառը, ինը, ինքը, սառը և այլն:

Ը-ն համեմատաբար թույլ է արտասանվում բառասկզբում՝ զբ-, զգ-, սկ-, սպ-, ստ-, սփ-, շտ- հնչյունակապակցություններից առաջ և բառամիջում՝ գաղտնավանկի դեպքում, ինչպես՝ զբոսնել—(ը)զբոսնել, (ը)զգոն, (ը)ստանալ, (ը)սպասել, (ը)սփոփել, (ը)շտապել..., գնալ—գ(ը)նալ, խնձոր, բռնել, վշշոց, մտածել, այլև՝ գիրք(ը)ս, գրքեր(ը)ս, բնկեր(ը)դ, գործեր(ը)դ և այլն:

Կան բառեր, որոնք երկկերպ են արտասանվում, ինչպես՝ հաս-ցը-ճել—հասցնել, խոսեցը-նել—խոսեց-նել, ար-ծը-վա-յին—արծ-վա-յին և այլն:

Ը ձայնավորը շատ ավելի թույլ է արտաբերվում մեկուկես վանկանի բառերում, ինչպես՝ ման(ը)ր, ծան(ը)ր, կայս(ը)ր, քանձ(ը)ր, արկ(ը)դ, աստ(ը)դ և այլն (այդ բոլորի մասին տե՛ս նաև § 387—389):

բ. ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

§ 464. Չայնավորների համեմատությամբ բաղաձայնները իրենց գրական արտասանությամբ բարդ ու այլազան պատկեր են ներկայացնում և հիմնականում երկու խմբի են բաժանվում.

ա) Բաղաձայններ կան, որոնք բառի բոլոր դիրքերում միշտ կամ գրեթե միշտ միակերպ են արտասանվում և ուղղախոսական դժվարություններ չեն հարուցում:

բ) Բաղաձայններ էլ կան, որոնք միշտ չեն միատեսակ արտասանվում և, բնականաբար, ուղղախոսական դժվարություններ են հարուցում:

Արևելահայ գրական լեզվում առաջին խմբին են պատկանում մի շարք շփական և որոշ պայթական ու պայթաշփական խուլ հնչյուններ, իսկ երկրորդ խմբին՝ գերազանցապես ձայնեղ պայթականները և պայթաշփականները:

ՊԱՅԹԱԿԱՆ ԵՎ ՊԱՅԹԱՇՓԷԿԱՆ ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐԻ  
ԳՐԱԿԱՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

§ 465. Արևելահայ գրական լեզվում բաղաձայններն ընդհանուր առմամբ բնորոշվում են նրանով, որ բառասկզբում, իբրև կանոն, նույն կերպ են արտասանվում: Այդ կանոնից, բնականաբար, չեն շեղվում նաև ձայնեղ պայթական և պայթաշփական հնչյունները:

Իրանք, ինչպես հայտնի է, տարբեր դեպքերում տարբեր արտասանություններ են ունենում միայն բառամիջում և բառավերջում:

§ 466. Չայնեղ պայթականներից՝

ա) Բ-ն մի խումբ բառերում՝ փ, իսկ որոշ բառերում պ է արտասանվում:

Բ-ն փ է արտասանվում՝ 1) մի շարք բառերում՝ ր, մ ձայնորդներից հետո, ինչպես՝ ուրբաթ—ուր(փ)աթ, համբույր—համ(փ)ույր, հարբուխ—հար(փ)ուխ, հարբել—հար(փ)ել, համբերել—համ(փ)երել, երբ—եր(փ), լիրբ—լիր(փ), որբ—որ(փ), նուրբ—նուր(փ), սուրբ—սուր(փ) և այլն:

Բ-ն փ է արտասանվում նաև դրանցից կազմված բաղադրյալ բառերում, օրինակ՝ ուրբաթախոս, համբուրել, որբանալ, սրբավայր և այլն:

2) Քիչ թվով բառերում՝ ձայնավորից հետո, ինչպես՝ խաբել—խաբ(փ)ել, իբրև—ի(փ)րև, շաբաթ—շա(փ)աթ, Հակոբ, Գաբրիել, Սեոռ և այլրն:

Նկատելի է, որ Բ-ն փ է արտասանվում խոսակցական լեզվում լայնորեն գործածվող և այնտեղից գրական լեզվին անցած բառերում: Մնացած դեպքերում նման պարագաներում, ինչպես նաև ուշ շրջանի փոխառյալ բառերում Բ-ն ք է արտասանվում, օրինակ՝ արեղա, բաբախել, զամբյուղ, հոբելյան, դաբաղ, շաբաթ, չոբան, կաբել, պոբլեմ, քամբ,

կաղամբ, շամբ, բումբ, խումբ, ափումբ, ծծումբ, գուբ, ուումբ, սերբ և այլն:

բ) Բ-ն պ է արտասանվում ղ (>խ)-ին հաջորդող մի քանի ընդհանուր հայերեն արմատական բառերում և դրանցից կազմված բաղադրույթուններում, ինչպես՝ աղբ—ախ(պ), աղբյուր—ախ(պ)յուր, եղբայր—եխ(պ)այր, ողբ—ոխ(պ), օ(խ)պալ, ե(խ)պայրացու, ե(խպ)այրաճալ և այլն:

Գրական ճանապարհով գրական լեզվին անցած բառերում բ-ն բ է արտասանվում, օրինակ՝ աղբյուս («աղբակույտ, աղբ»), բողբոջ, խիղբ («սերմից նոր դուրս եկած ծիլը»), կռվբ, շեղբ:

Առանձին բառերում բ-ն երկկերպ՝ բ կամ փ է արտասանվում, ինչպես՝ ներանցք/ներ(փ)անցք, ձերբակալել/ձեր(փ)ակալել, գրաբար/գրա(փ)ար (հանձնարարելին վերջինս է):

§ 467. Գ-ն մի շարք բառերում ք է արտասանվում՝

ա) Բ ձայնորդից հետո, ինչպես՝ քարգման—քար(ք)ման, մարգարե—մար(ք)արե, պարգև—պար(ք)և, մարգարիտ—մար(ք)արիտ, կարգ—կար(ք), միրգ—միր(ք), Սարգիս—Սար(ք)իս և այլն:

Մի քանի բառերում նման դիրքում գ-ն գ է արտասանվում, ինչպես՝ արգելի, զարգանալ, արգասիք, երգիծել, գորգ, բուրգ:

Երգ բառում գ-ն՝ ք, իսկ նրանից կազմված համերգ, գիշերերգ, զուգերգ, մեներգ, բառերում գ է արտասանվում:

բ) Չայնավորից հետո, ինչպես՝ ավագ=ավագ(ք), էգ=է(ք), էգուց, բագավոր, ծեգ, ծագել, հագնել, հոգի, ձագ, կարագ, մարագ, նրագ, ուրագ, ձիգ, շոգ, մուգ, սուգ, տեգ, օգուտ, օգտակար, տեգրակին և այլն:

Ժողովրդախոսակցական լեզվի ազդեցությամբ գ-ն ք է արտասանվում նաև մի քանի բառերի սկզբում, ինչպես՝ գցել>քցել, գղալ>քղալ, գտնել>քտնել: Մնացած դեպքերում գ-ն չի փոխվում և գ է արտասանվում՝

ա) Ընդհանրապես և ձայնորդից հետո, ինչպես՝ գանգ, զանգ, ժանգ, նանանգ, հանգույց, հրանանգ, ժառանգ, փաղանգ, վտանգ, երանգ, նենգ, լինգ, հինգ, սպունգ, ռունգ, միտինգ և այլն:

բ) Չայնավորից հետո, ինչպես՝ ագան, ագռավ, հագուրդ, ագառակ, հագար, ագի, առագաստ, դեգերել, մագաղաթ, վարագույր, արագիլ, բագին, դագաղ, զարգանալ, դագանակ, գագաթ, որոգայթ, վագր, օգոստոս, անհագ, սագ, արագ, դեգ, տեգ, մոգ, յոգ, օկրուգ և այլն:

գ) Յ ձայնորդից հետո, ինչպես՝ այգի, այգաբաց, առույգ, զույգ, նծույգ, ստույգ, պատյուրգ/(պատրույթ):

Մի քանի բառերում, որոշ գործոններով պայմանավորված, գ-ն կ է արտասանվում, օրինակ՝ շաղգամ—շախկամ, շագանակ—շականակ:

§ 468. Դ-ն ք և տ է արտասանվում:

Դ-ն ք է արտասանվում՝

ա) Ր ձայնորդից հետո բազմաքանակ բառերի թե՛ միջում և թե՛ վերջում, ինչպես՝ արդար—ար(թ)ար, արդեն, արդյունք, կարդալ, որդի, երգում, վրդովվել..., բարդ—բար(թ), զարդ, բերդ, վարդ, մարդ, նյարդ, որդ, օրիորդ, բաժանորդ, հաշորդ, երբորդ, անցորդ, բուրդ, խորհուրդ, ժողովուրդ և այլն:

բ) Ձայնավորից հետո մի քանի բառերում, օրինակ՝ դադար—դա-(թ)ար, դղում—դր(թ)ում, օդ—օթ:

Նկատելի է, որ դ-ն թ է արտասանվում ընդհանուր հայերեն բառերում:

Գրական ճանապարհով սեփականված բառերում այն մեծ մասամբ դ է արտասանվում՝

ա) Ր ձայնորդից հետո, ինչպես՝ արդ, արդի, արդիական, բարդի, գեղարդ, գերդաստան, զմբեթարդ, դղիրդ, խարդախ, խարդավանք, խորդենի, հարդոս, հարդ, մակարդ, մակարդակ և այլն:

բ) Ձայնավորից հետո, ինչպես՝ բադ, զոդ, ծղբիդ, հոդ, վառոդ, մահուդ, այլև՝ թալմուդ, միլիարդ, էտյուդ և այլն:

գ) Ն ձայնորդից հետո, ինչպես՝ անդ, զունդ, զնդակ, հնագանդ, կաղանդ, խանդ, հանդ, տաղանդ, ադամանդ, սպանդ, ֆանդել, տենդ, խինդ, մկունդ, թունդ, ցնդել, ծնունդ, սնունդ, ընդ օրում, ընդ սմին և այլն:

Ընդ նախդիր-նախածանցով կազմված բառերում դ-ն սովորաբար թ է արտասանվում, օրինակ՝ ընդամենը—ըն(թ)ամենը, ընդհանուր—ըն(թ)անուր, ընդարձակ—ըն(թ)արձակ, ընդունել—ըն(թ)ունել, անընդ-հատ—անըն(թ)ատ և այլն:

Ընդհանուր օրենքին հակառակ՝ դ-ն թ է հնչվում նաև անդամ—ան(թ)ամ, կենդանի—կեն(թ)անի, խնդիր—խըն(թ)իր և դրանցից կազմված բաղադրյալ բառերում, օրինակ՝ անդամատել, հաշմանդամ, կենդանու-թյուն, խնդրանք, խնդրել և այլն: Հատուկ են բառեր էլ կան, որոնցում դ-ն երկկերպ՝ դ և թ է արտասանվում, օրինակ՝ քակարդ//թակար(թ), կախարդ // կախար(թ), երիտասարդ // երիտասար(թ), լողորդ // լողօր(թ), նավասարդ//նավասար(թ), անուրդ//անուր(թ) և այլն:

2. Գ-ն տ է արտասանվում՝

ա) Յ ձայնորդից հետո այդ—այ(տ) և դրանից կազմված բաղադրյալ բառերում, օրինակ՝ այդքան—այ(տ)քան, այդպես—այ(տ)պես, այդ-տեղ—այ(տ)տեղ:

բ) Բառերի վերջում, երբ իբրև հոդ է գործածվում, օրինակ՝ գիրքդ—գիրք(տ), բարեկամդ—բարեկամ(տ) և այլն:

Գ-ն տ է հնչվում նաև խեղդ արմատական բառում և նրանց կազմված բաղադրույթյուններում, օրինակ՝ խեղդել—խե(խ)տել, խեղդաման, խեղդուկ, խեղդաշունչ, խեղդացավ, խեղդվել:

§ 469. Պայթաշփական ձայնից հետո ձ-ն ց է արտասանվում՝

ա) Ր ձայնորդից հետո մի խումբ արմատական և նրանցից կազմը-

ված բաղադրյալ բառերում, *ինչպես՝* բարձ—բար(ց), դարձ—դար(ց), դերձակ, վարձ, լայնարձակ, աշխատավարձ, խրձակապ, որձափար, փորձանք, բարձունք և այլն:

Բ ձայնորդից հետո ձ-ն ձ է հնչվում գրական փոխառյալ բառերում, *ինչպես՝* արձագանք, արվարձան, լորձ, ձորձ, մերձ, ֆուրձ, հանդերձ, ուղերձ, հորձանք: Բայց կան նաև բառեր, որոնք երկկերպ՝ *և՛* ձ-ով, *և՛* ց-ով են արտասանվում, օրինակ՝ վրձին//վր(ց)ին, արձան//ար(ց)ան, համարձակ//համար(ց)ակ, հետադարձ//հետադար(ց):

բ) Ղ (>խ) բաղաձայնից հետո մի քանի սովորական բառերում, *ինչպես՝* դեղձ—դե(խց), դաղձ—դա(խց), դեղձան—դե(խց)ան: Զուտ գրքական բնույթի բառերում ձ-ն նույնն է մնում, *ինչպես՝* ատաղձ, բաղձանք, գուղձ, գեղձ, իղձ, հեղձ, Ֆեղձուցիչ, մաղձ, մղձավանջ, փղձկալ և այլն:

գ) Սձ (=օց) բառում և նրանից կազմված բաղադրույթուններում (տե՛ս § 411, գ): Իբրև կանոն, ձ-ն անփոփոխ է մնում և ձայնորդից հետո, *ինչպես՝* անձեկաբն, անձուկ, աղանձ, խնձոր, հնձան, նախանձ, պղինձ, սոսինձ, բրինձ, սինձ, ինձ, տանձ, կաղկանձ և այլն:

§ 470. Պայթաշփական ձայնեղներից ջ-ն էլ չ է արտասանվում՝

ա) Բ ձայնորդից հետո՝ մի քանի հանրագործածական բառերում և դրանցից կազմված բաղադրույթուններում, *ինչպես՝* արջ//ար(չ), վերջ//վեր(չ), բրջել//բր(չ)ել, բրջոց—բր(չ)ոց, մրջյուն—մր(չ)յուն, արջուկ—ար(չ)ուկ, վերջնական—վեր(չ)նական և այլն:

Մնացած դեպքերում՝ *ինչպես* զուտ գրական, *այնպես* էլ ուշ շրջանում արևելյան լեզուներից փոխառված բառերում ջ-ն ջ է արտասանվում, օրինակ՝ լուրջ, լրջմիտ, շուրջ, շրջահայաց, անուրջ, անբային, ստերջ, կամուրջ, կամբջակ. բուրջ, խարջ, խուրջին, մարջ («գրագ») և այլն:

Մի քանի բառերում ջ-ն երկկերպ է արտասանվում, օրինակ՝ ուրջ//ուր(չ), Երջանիկ//եր(չ)անիկ: Առանձին դեպքերում էլ բարբառի ազդեցությամբ ջ-ն և կամ դրան մոտ է հնչվում, օրինակ՝ բաղարջ—բաղար(ն), հաղարջ—հաղար(ն):

բ) Զայնավորից հետո՝ մի քանի հանրագործածական բառերում և նրանցից կազմված բաղադրույթուններում, *ինչպես՝* աջ—ա(չ), աջակից, աջափնյա, առաջ—առա(չ), առաջնային, առաջին, առաջնորդ, մեջ—մե(չ), միջակ, միջնորդ, առէջ, առէջք, գիջել:

Այլ դեպքերում ջ-ն ջ է արտասանվում, *ինչպես՝* մարմաջ, անշեջ, հեշեջ, շիջանուտ, էջ, ելէջ, բջիջ, բողբոջ, ֆրֆիջ, գլուջ, ֆլուջ, խոխոջ, դողդոջ, ֆաջ, հաջորդ, խոխոջյուն, այլև՝ արխաջ, թուջ և այլն:

գ) Ղ (>խ)-ից հետո մի քանի հանրագործածական բառերում, *ինչպես՝* աղջիկ—ա(խչ)իկ//ա(խն)իկ, ողջ—ո(խչ), գեղջկուհի—գե(խչ)կուհի: Այլ դեպքերում ջ-ն՝ ջ կամ տատանումներ տալով՝ նաև չ է արտաբեր-

վում, օրինակ՝ առողջ/առող(չ), ամբողջ/ամբո(խչ), եղջյուր, գղջուլ, ողջույն, ողջունել և այլն:

Մյուս ձայնեղների պես ն ձայնորդից հետո ջ-ն ևս որևէ փոփոխություն չի կրում, օրինակ՝ ականջ, լանջ, նահանջ, դողանջ, հորանջ, պահանջ, խրխինջ, նինջ, նարինջ, տվնջան, քուրինջ, երինջ, խխունջ, մբմունջ, շշունջ, փունջ, այլև՝ դինջ:

§ 471. Ի տարբերություն պայթական և պայթաշփական ձայնեղների, նրանց լծորդակից խուլերը (պ, տ, կ, ծ, ց) և շնչեղ խուլերը (փ, ք, ք, ց, չ) բառի բոլոր դիրքերում միակերպ են արտասանվում և, ինչպես ասվել է, ուղղախոսություն համար առանձնակի բարդություն չեն ներկայացնում: Բայց դա, իհարկե, չպետք է բացարձակացնել և կարծել, թե դրանք ինչ-ինչ շեղումներ կամ խոտորումներ չեն ունենում: Կենդանի խոսքը բազմահազար անհատների կողմից կիրառվող իրողություն է, խոսողության ժամանակ նույն հնչյունը հանդես է գալիս բազմատեսակ հնչակապակցություններում, ենթարկվում է զանազան փոխազդեցությունների և բոլոր դեպքերում նաև անհատականության դրոշմն է կրում. իր վրա:

Նման հանգամանքներով էլ պայմանավորված՝ առանձին բառերում, օրինակ, պ-ն՝ բ (ամպ—ամբ), տ-ն՝ ք (փտել—փթել), գ-ն կ կամ ք (երկիր—երգիր, ընկեր—ընգեր, մարդիկ—մարդիք, ընթացիկ—ընթացիք), ծ-ն՝ ց (ընծա—ընցա, գործվածք—գործվացք), ց-ն՝ չ (ճանճ—ճանջ), փ-ն՝ պ (թփուտ—թպուտ, թուփ—թուպ), ք-ն՝ ց (ընկերություն—ընկերուցյուն), ք-ն՝ կ (դիցուք—դիցուկ, խոսք—խոսկ) է արտասանվում: Սակայն դրանք, որ հաճախ հենց այդպես՝ սխալաբար գործածվում են գրավոր խոսքում, հակասում են գրական լեզվի ուղղախոսության նորմաներին և գնալով, բնականաբար, հարթվում են ու վերացվում:

## ՇՓԱԿԱՆ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### ա. Ձայնորդների արտասանությունը

#### § 472. Ձայնորդներից՝

ա) Լ-ն չի լծորդվում մի այլ հնչյունի և բառի բոլոր դիրքերում էլ է արտասանվում, օրինակ՝ լավ, լսել, լուտ, ալիք, շոպլ, բոլոր, մամուլ և այլն: Որոշ բառերում միայն փափուկ է արտասանվում, որ, սակայն, ուղղախոսական առանձին արժեք չունի:

բ) Լ'-ն և Լ'-ն լծորդակից ձայնորդներ են, որոնք, իբրև իմաստազատիչ հնչյուններ (հնչույթներ), տարբեր կերպ են արտասանվում, հմմտ., օրինակ, աբու—առու, բեր—բեռ, սեր—սեռ, լուր—լուռ, հա—մար—համար, աբատ—առատ, վարել—վառել և այլն:

Գրական լեզվում բառի բոլոր դիրքերում, ինչպես ընդունված է ա-

անի՝ Բ-ն՝ փափուկ, Բ-ն կոշտ է արտասանվում: Խոսակցական լեզվում, սակայն, երբեմն խախտվում է այդ օրենքը, և, մանավանդ բարբառների ազդեցությամբ, որոշ բառերում Բ-ն՝ Բ, Բ-ն՝ Բ է արտասանվում, օրինակ՝ արջ—առչ, արծիվ—առծիվ, արծաթ—առծաթ, կրծել—կռծել, ոսկոր—ոսկոռ, ուրց—ուոց, հոշակ—հոչակ, պառկել—պարկել, գոգոռալ—գոգոռալ և այլն (տե՛ս § 404, 4):

գ) Արտասանական տեսակետից շփման ավելի մեծ եզրեր ունեն մ և ն ռնգային ձայնորդները, որոնք հատկապես պայթական հնչյուններից առաջ շատ անգամ արտաբերվում են միմյանց փոխարեն, հմմտ., օրինակ, ամբիոն—անբիոն, ամբարիշտ—անբարիշտ, ամբոխ—անբոխ, գամփո—գանփո, սմբակ—սմբակ, ամպ—անպ, բմբունել—բմբունել, ցամբար—ցանբար, ամփոփել—անփոփել, կաղամբ—կաղանբ և անբիծ—ամբիծ, անբասիր—ամբասիր, բանբեր—բամբեր, ցամփա—ցանփա, այլև՝ Սմբատ—Սնբատ, Սամվել—Սանվել, Մանվել—Մամվել, լորամվայ—տրանվայ, սիմֆոնիա—սինֆոնիա և այլն:

Այսպիսի արտասանությունները հակասում են գրական լեզվի ուղղախոսությունը և նույնպես մերժելի են:

դ) Արտասանական տարատեսակներով առանձնանում է յ ձայնորդը (տե՛ս § 73, գ), որ, ինչպես ասվել է, մյուս ձայնորդների համեմատությամբ ավելի շատ ձայն է պարունակում և մի շարք դեպքերում հարում է ի ձայնավորին:

Տարբեր գործառույթներով պայմանավորված՝ յ ձայնորդը շատ ավելի լիահունչ է արտաբերվում՝ ա) բառասկզբում, ինչպես՝ յոթ, յուզ, յուր, յասաման, յաման, յայլա, յասավուլ, յունկեր, յոդ և այլն. բ) բառավերջում, ինչպես՝ բայ, հայ, ցայ, նայ, վայ, թեյ, գոյ, խոյ, հայ-հույ, այլև՝ տրամվայ, փայ, լակեյ, հոկեյ, կորիֆեյ, պլեբեյ և այլն:

Յ-ն հստակ է հնչվում բառասկզբում նաև է (ե) ձայնավորից առաջ՝ երկհնչյուն կազմելիս (տե՛ս § 73, գ), ինչպես՝ երեխա—յէրէխա, երկիր—յէրկիր, եղանակ—յէղանակ, եփել—յէփէլ, եթե—յէթէ և այլն:

Այդ յ-ն շի արտասանվում հին կամ նման օրինակով կազմված բաղադրյալ բառերում, ինչպես՝ ապ(է)րախտ, ան(է)զական, ան(է)րես, համ(է)րգ, ապ(է)րջանիկ և այլն:

Նոր կազմություններում բառասկզբի յ-ն, երբ հատկապես ձայնավորի է հաջորդում, արտասանվում է, օրինակ՝ ամենա(յ)երախտամոռ, ամենա(յ)երջանիկ, ամենա(յ)երկար և այլն: Բառեր էլ կան, որոնք երկկերպ՝ յ-ով և առանց յ-ի են արտաբերվում, օրինակ՝ տասն(է)երեք// տասն(յէ)երեք, քսան(է)րկու//քսան(յէ)րկու, ու(է)վէ//ու(յէ)վէ, իննս(է)ն//իննս(յէ)ն և այլն:

Յ-ն համեմատաբար թույլ և առանձին դեպքերում էլ ի ձայնավորին մոտ է արտասանվում բառամիջում՝ ձայնավորից առաջ, ինչպես՝ լյարդ, բյուրեղ, ձյուր, ձյուն, հյուր, նյութ, բյուր, գյուտ, մատյան, առ-



յան, միմյանց, առօրյա, Արամյան, այլուր, աղբյուր, եղջյուր, անկյուն, մեծություն, սովորություն, արդյոք, ընտանյոք (հանդերձ) և այլն:

Յ ձայնորդը թույլ է արտասանվում նաև ձայնակապի դեպքում, որ, ինչպես հայտնի է, ա-ից, ո-ից հետո գրվում, իսկ մյուս ձայնավորներից հետո չի գրվում (տե՛ս § 338):

Բառեր էլ կան, որոնցում յ-ն պատմական, հնչյունափոխության ենթարկվելով՝ ոչ միայն չի արտասանվում, այլև չի գրվում, ինչպես՝ ոյժ > ուժ, բոյք > բույք > բուք, շոյտ > շույտ > շուտ, անոյշ > անույշ > անուշ, այս > աս (արևմտհ.) և այլն:

Հակառակ դրան, որոշ բառերում թեև յ-ն նույնպես չի արտասանվում, բայց գրվում է, ինչպես՝ տոյժ > տույժ > տուժ, աշխոյժ > աշխույժ > աշխուժ, զգոյշ > զգույշ > զգուշ, գոյժ > գույժ > գուժ, այլև՝ բոյն (> բուն) — բույն, որպիսի գրությունը լրիվ հնացած ու մերժելի պետք է համարել (տե՛ս § 209):

### բ. Նփոփան ձայնեղների և խօսքի արտասանությունը

§ 473. Լծորդակից գ-ա, ժ-շ շփական հնչյունները բառի բուրք դիրքերում միակերպ են արտասանվում (տե՛ս § 405): Առանձին դեպքերում միայն երբեմն գ-ի փոխարեն՝ ս (ասպարեզ — ասպարես), ս-ի փոխարեն՝ զ (ավտորուս — ավտորուզ, իշխաս — իշխազ, նարգիս — նարգիզ), ժ-ի փոխարեն՝ շ (դժխեմ — զշխեմ), շ-ի փոխարեն ժ (զշխուհի — դժխուհի) է արտասանվում, որոնք սակայն առավելապես հատուկ են խոսակցական լեզվին և ոչ՝ գրական:

Բառի բուրք դիրքերում հիմնականում նույն կերպ են արտասանվում նաև լծորդակից վ-ֆ ձայնեղ և խուլ շփական հնչյունները. միայն որոշ, հատկապես փոխառյալ, բառերում վ-ն՝ ֆ, ֆ-ն՝ վ է արտասանվում, օրինակ՝ նավթ — նաֆթ, հարավ — հարաֆ, մուսավաթ — մուսաֆաթ, ասֆալտ — ասվալտ, աֆղանացի — ավղանացի, որոնք նույնպես հատուկ են խոսակցական լեզվին:

Վ-ն հստակ է արտասանվում նաև բառասկզբում՝ ո (օ) ձայնավորից առաջ, օրինակ՝ ոգֆ > վօֆի, որակ > վօրակ, ոսկի > վօսկի և այլն (տե՛ս § 215, գ):

Այդ վ-ն չի հնչվում հին կամ այդ եղանակով կազմված բաղադրյալ բառերում, ինչպես՝ անօրակ — անօրակ, բայց ոչ՝ անվօրակ, շարօրակ — շարօրակ, անօրոշ, փղօսկոյա, ձկնօս, այտօսկո, մթնօրոտ, միջնօս, խոշրնդոտ և այլն:

Բառասկզբի վ-ն արտասանվում է նոր բաղադրություններում, եթե հատկապես ձայնավորի է հաջորդում, ինչպես՝ ամենաօղորմելի (> ամենավօղորմելի), ամենաօղբալի, ամենաօրոշակի, արշաօս, բարձրաօճ, բարձրաօճ, ամենօրոտ, բայց նաև՝ անեղօրոտ (> անէղօրոտ):

§ 474. Լծորդակից դ-խ հնչյուններից խ-ն եթե բառի բուրբ դիրքերում՝ խ (օր.՝ խաղ, խոսել, կախարդ, տխուր, գլուխ, ուրախ), ապա դ-ն նույն կերպ՝ միայն բառասկզբում (ղեկ, դողանջ) և բառավերջում (անեղ, ծիծաղ), իսկ բառամիջում որոշ դեպքերում՝ նույն, մի շարք դեպքերում այլ կերպ՝ խ է արտասանվում:

Բառամիջում դ-ն նույն կերպ է արտասանվում՝ ա) ձայնավորների միջև, ինչպես՝ աղանձ, դեղին, բեղուն, ցողուն, եղինջ, սպեղանի և այլն. բ) մ, ն, յ, ր ձայնորդներից առաջ, ինչպես՝ աղմուկ, կողմ, մեղմ, գեղմ, եղնիկ, ողնաշար, ստեղն, մեղր և այլն:

Բառամիջում դ-ն խ է արտասանվում՝ ա) պ, տ, կ պարզ պայթականներից առաջ, ինչպես՝ կողպեխ (=կօխպէք), կողպել, ձուպ («ձկընկիթ»), աղտոտ, գաղտնի, կեղտ, պղտոր, բաղկանալ, բողկ, ծաղկել, նողկանք և այլն, բ) փ, թ, ք շնչեղ խուլերից առաջ, ինչպես՝ հղփանալ, գաղթ, գաղթել, թուղթ, շղթա, հաղթել, մաղթել, աղփատ, կողփ, նեղփել, մեղփ, շողփ, սանդուղփ և այլն, գ) ց, հրբեմն նակ շ, ն խուլ պայթաշփականներից առաջ, ինչպես՝ աղցան (—ախցան), փաղց, փաղցր, փաղցկեղ, գեղշ, գեղշել, խեղն, խղնուկ, խեղնանալ, դ) բ, դ, գ, ձ, ջ ձայնեղ պայթական և պայթաշփական հնչյուններից առաջ, ինչպես՝ աղբ (—ախպ), աղբյուր, եղբայր, ողբալ, խեղդել, շաղգամ, գեղծ, դաղծ, դեղծ, ողջ (—վօխշ), ամբողջ, աղջիկ, առողջ և այլն:

Ինչպես օրինակներից էլ կարելի է նկատել, վերջին դեպքում երկակի խլացում է տեղի ունենում. նախ՝ դ-ին հաջորդող ձայնեղը և ապա՝ դրա ազդեցութամբ դ-ն է խլանում: Այն բառերում, որոնցում դա տեղի չի ունենում, այն նույնն է մնում, ինչպես՝ բաղձանք, բաղձալի, մղձավանջ, աղջամուտջ, շեղջ, հեղծուցիչ և այլն:

Պետք է ասել, որ երկտեսակ արտասանությունների միջև պայթար է գնում, և զրային արտասանության ազդեցութամբ հատկապես դ-ով հնչումն է տիրապետող դառնում:

Ղ-ն չի խլանում և անփոփոխ է մնում նաև ծ-ից, ս-ից առաջ, ինչպես՝ կեղծիք, կեղծ, կեղծել, գեղծ, գեղծում, մեղսակից, մեղսագործ (վերջին երկուսը նաև խ-ով են արտասանվում):

§ 475. Հ հազագային խուլ հնչյունը լծորդակից ձայնեղ շունենալով՝ ուժեղ է արտասանվում՝ ա) բառասկզբում, օրինակ՝ հանույթ, համար, հերթ, հինգ, հղկել, հույս, բ) բառավերջում, օրինակ՝ ագահ, գահ, գրահ, գրահ, մահ, շահ, գ) բառամիջում՝ ձայնավորների միջև, օրինակ՝ անա, դահիճ, կոհանել, աշակերտունի, կահույթ, գեհեն, կոհակ և այլն:

Հ-ն չի արտասանվում կամ շատ թույլ է արտասանվում Ե ձայնորդից հետո՝ որոշ բառերի վերջում և նրանցից կազմված բաղադրություններում, ինչպես՝ աշխարհ (—աշխար), աշխարհական, աշխարհագրություն, աշխարհագոր, խոհարհ (—խոհար), խոհարհաբար, նանապարհ, նանապարհորդ, նանապարհածախս, շոհրհ, շոհրհակալ, շոհրհալի, շոհր-

հակալութուն, շնորհիվ, խորհրդակցել, խորհուրդ (<խորհ—խոհ+ուրդ), արհամարհել (—արհամարէլ), այլև՝ ընդհանուր (—ընթանուր), անընդհատ (—անընթատ), ընդհատել (—ընթատել), ընդհատակ (—ընթատակ), ընդհանրապես (—ընթանրապես)՝ նախորդ դ ձայնեղի շնչեղ խլացման կամ դրա հետ միաձուլվելու պատճառով:

Գրական փոխառյալ նման բառերում Ե ձայնորդից հետո և-ն ոչ թե լրիվ շեղոքանում, այլ թույլ է արտասանվում, օրինակ՝ Երեմ, Երեմել, Փպիրհ: Նկատելի է, որ գնալով Ե ձայնորդից հետո և-ի արտասանությունը տարածվում ու սովորական է դառնում: Հակառակ դրան, բազմավանկ բառերի վերջում ձայնավորից հետո և-ն ընդհանրապես թույլ է արտասանվում և ժողովրդախոսակցական լեզվում որոշ բառերի կազմից դուրս է ընկնում, որ ամբողջապես հակասում է հայ գրական լեզվի ուղղախոսությունը, ինչպես՝ Լախագահ՝ (<Նախ+ա+գահ)—նախագահ, հերթապահ—հերթապա, վստահ—վստա:

### ՈՒՂՂԱՅՈՍՈՒԹՅԱՆ ՇԵՂՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

§ 476. Ժամանակակից հայոց լեզվի ուղղախոսության կանոնները: անշուշտ, այդքանով չեն ավարտվում: Ուղղախոսությունը, ինչպես արդեն ասվել է, վերաբերելով բանավոր խոսքին՝ որքան դրա և առհասարակ գրական լեզվի զարգացման ու կատարելագործման համար մեծ նշանակություն ունեցող, այնքան էլ հարաշարժվող, անվերջ հեղաբեկումների, մակընթացությունների ու տեղատվությունների ենթարկվող բազմաբարդ երևույթ է: Իբրև այդպիսին, այն երբեք նույնը չի մնացել և իր զարգացման ընթացքում հաղթահարել ու շարունակում է հաղթահարել մի շարք արգելքներ ու խոչընդոտներ:

§ 477. Դրանցից մեկը և թերևս ամենացայտունը բարբառայնությունն է, որ պայմանավորվելով բազմաբանակ հայ բարբառների գոյությունը և սերելով նրանցից՝ բացասաբար է ազդում ուղղախոսության վրա:

Կարևորագույն աղբյուր ծառայելով հայ գրական լեզվի ստեղծման, մշակման, զարգացման ու հարստացման համար՝ հայ բարբառները միաժամանակ իրենց մի շարք մանավանդ ոչ հանրական իրողություններով հակազդել ու շարունակում են հակազդել նրա ուղղախոսության վրա՝ առաջ բերելով զանազան խախտումներ: Եվ թեև նրանց միջև միշտ էլ պայթար է մղվել, որը ժողովրդի հասարակական-տնտեսական, հոգևոր-մշակութային կյանքում տեղի ունեցած մեծ փոփոխությունների շնորհիվ ավարտվել է հիմնականում գրական լեզվի հաղթանակով, և ուղղախոսությունն էլ իր հսկա առաջընթացն է ունեցել, բարբառները, այնու-

ամենայնիվ, ուղղախոսական շեղումների, խախտումների, խոտորումների, անգամ սխալների աղբյուր են մնում և բազմազան բնույթի՝ հընչյունային-հնչույթաբանական, հնչյունային-վերհատույթային, բառակազմական, քերականական (ձևաբանական, շարահյուսական), ոճական, արտահայտչական և այլ իրողութուններով արտահայտվում նրա մեջ:

§ 478. Բարբառները հայ գրական լեզվի ուղղախոսութայն վրա խիստ բացասաբար են անդրադառնում՝

ա) Ամենից առաջ իրենց հատուկ շեշտադրությամբ: Մի շարք բարբառներում, ինչպես հայտնի է, շեշտը բառի ոչ թե վերջին, այլ նախավերջին կամ նախընթեր վանկի վրա է ընկնում և այդպես էլ գործածվում գրական լեզվում, օրինակ՝ ֆաղաֆա՛ցի, ֆաղա՛ֆացի, հարսա՛նիֆ, հա՛րսանիֆ, բոլոճո՛վիւն, ուրա՛խանալ, երե՛խա, մեծո՛ւրյուն, մե՛ծուրյուն, հոտա՛վետ, սի՛րուն և այլն:

բ) Հնչյունների՝ իրենց հատուկ արտասանությամբ: Բարբառի (օրինակ՝ Կարնո) ազդեցությամբ ձայնեղ պայթականները և պայթաչփականները շատ անգամ ոչ թե խուլ կամ շնչեղ խուլ, այլ նույն կերպ են արտասանվում, ինչպես՝ սուր(բ), աբ(դ)են, ան(դ)ամ, ան(զ)ամ, բար(ձ)բբ, մի(շ)ակ, վեր(շ)նական, ասենք, ուղղախոսորեն ընդունված ու ամրակայված սուրփ, աբբեն, անբամ, անբամ, բարցբ, միշակ, վերչեական հնչումների փոխարեն:

Այդպես և քիչ շեն դեպքերը, երբ բարբառի ազդեցությամբ ձայնավորները ոչ թե մաքուր ու պարզ, այլ քմայնացված, շրթայնացված, կոշտ կամ այլ կերպ են արտասանվում (օր.՝ լավ, կատու, ձու և այլն), երբ փ-ն և ֆ-ն շեն զանազանվում, և մեկի փոխարեն մյուսն է գործածվում, ինչպես՝ փակուտետ < ֆակուտետ, փիզիկա < ֆիզիկա, փիզկուտուրա < ֆիզկուտուրա, ֆեփ < ֆեֆ. փիղ > ֆիղ, դափ > դաֆ, որ հանդիպում է մինչև իսկ գրավոր խոսքում («Հարսանիքից հետո ինչ դաֆ ու զուռնա», Ս. Խանզադյան):

գ) Հնչյունների՝ իրենց հատուկ հնչյունափոխությամբ, ինչպես՝ ժրդովուրթ (< ժողովուրդ), բստեղ (< այստեղ), խինբրէլ (< խնդրել), կայնէլ (< կանգնել), էրէխա (< երեխա), էկէֆ (< եկեք), ավէլեօրթ (< ավելորդ), ծանդրթ (< ծանր) և այլն:

դ) Իրենց հատուկ քերականական ձևերով, ինչպես՝ գնում ա—գրնում է, ասում ա—ասում է, եկել ա—եկել է..., ֆեի—քնիր, վազի—վազիր, մեծացրա—մեծացրու, հանգցրա—հանգցրու, մի՛ խոսի—մի՛ խոսիր, մի՛ ֆ//մե՛ ֆ խոսի—մի՛ խոսեք, գնացիմ—գնացի, գնացիմֆ—գրնացիք, խոսեցիմ—խոսեցի, խոսեցիմֆ—խոսեցիք, իրեն հետ—իր հետ, ֆո պես—քեզ պես, գալի—գալիս, տալի—տալիս, տեսց—ասաց, կարող է գա—կարող է գալ, ուզում է սովորի—ուզում է սովորել, ասուծել—ասուծել և այլն:

§ 479. Ուղղախոսութայն շեղումների մի այլ աղբյուրն էլ գրավոր

լեզուն է: Իր գրապատկերներով ու հնչապատկերներով մեծագույն դեբ-կատարելով հայ նոր գրական լեզվի ուղղախոսությունից ձևավորման, զարգացման ու նորմավորման գործում (տե՛ս § 453)՝ գրավոր խոսքը, սակայն, միշտ չէ, որ դրականորեն է ազդում նրա վրա և կամ՝ նպաստում զարգացմանն ու կանոնավորմանը: Բարբառների պես գրավոր լեզուն ևս երկակի դեր է կատարում. այն մի կողմից եթե իր գրապատկերներով ուղեցույց է ծառայում ուղղախոսությունից համար, ապա մյուս կողմից՝ մի շարք դեպքերում բացասաբար է ազդում բառերի՝ կենդանի լեզվի բովով անցած և գրական լեզվում հանրական արժեք ստացած հնչումների վրա՝ փոխարինելով դրանք գրային արտասանությամբ, ինչպես՝ դա՛րա՛ր, հա՛րբել, ե՛րԳ, խա՛բել, օԳա՛կար, ՕԶ, մա՛րԳ, վա՛րԳ, խը՛նԳի՛ր, մե՛ջ, հա՛Գնել և այլն:

Գրավոր լեզվի ազդեցությամբ բառերի այսպիսի արտասանությունը, որ գրային արտասանություն է կոչվում և առավելապես հատուկ է ոչ հայեցի կրթություն ստացած մարդկանց, անշուշտ, իր հերթին խաթարում է գրական լեզվի ուղղախոսությունը և վնասում նրան. թեև նաև նկատելի է, որ բառեր կան, որոնք երկկերպ են արտասանվում, և բառեր կան, որոնց գրային հնչումն է հաղթել կամ հաղթում:

§ 480. Ուղղախոսությունից շեղումների ու խաթարումների մի այլ աղբյուրն էլ օտարաբան արտասանությունն է, որ կիրառվում է ոչ միայն այլ (հիմնականում՝ ռուսական) կրթություն ստացած մարդկանց, այլև նրանց խոսքում, ովքեր հետևում են բառերի օտարալեզվյան հնչումներին և, օրինակ, տրակտոր-ը՝ տրակտր, դիրեկտոր-ը՝ դիրեկտր, պրոֆեսոր-ը՝ պրոֆեսր, սեկտոր-ը՝ սեկտր, կոստյում-ը՝ կասծյում, տեխնիկա-ն՝ ծեխնիկա, օպերատոր-ը՝ օպերատր., Մոսկվա-ն՝ Մասկվա, Տոլստոյ-ը՝ Տալստոյ, Վիկտոր-ը՝ Վիկտր, Բայրոն-ը՝ Բայրրն, Քրիմթոն-ը՝ Քրիթթրն են արտասանում:

Այդպես և քիչ շեն դեպքերը, երբ հատկապես ռուսերենի ազդեցությամբ քմայնացվում, փափկացվում են նաև հայերեն բառերը, և, ասենք, արդյունք-ը՝ արցյունք («Քննության արցյունքները ամփոփվեցին ձյեկանատում»), մատյան-ը՝ մածյան («Ծս ձիրեկտրերին հանձնեցի ծեխնիկումի ավարտական մածյանը»), Պետիկ-ը՝ Պեծիկ, էգիկ-ը՝ էծիկ, դիճամո-ն՝ ձիճամո, ստաղիոն-ը՝ ստածիոն («Առավոտյան Պեծիկը հանդիպեց էծիկին ձիճամոյի ստածիոնի առաջ») է արտասանում<sup>10</sup> և այլն:

Այս բոլորին պետք է ավելացնել նաև վերջին տարիներս մեր ժողովրդի կյանքում ստեղծված խառնափնթոր շրջանում եվրոպական լեզուների, մանավանդ անգլերենի, բացասական ազդեցությունը հայերենի վրա, որը և լուրջ խնդիրներ է դնում հայագիտության առջև և պահան-

<sup>10</sup> Տե՛ս Գ. Սևոյ, Փամանակակից հայերենի համառոտ պատմություն, Երևան, 1948, էջ 197:

շում կանխելու ամեն տեսակի օտարածին ուղղախոսական խաթարումներն ու աղճատումները: Ընդ որում՝ շուր դեպքերում պետք է առաջնորդվել գրութայն ձևերի արտասանությամբ՝ պահելով նաև հայերենի շեշտադրությունը, ինչպես՝ օպերատո՛ր—օպերատորի՛—օպերատորի՛ց, օպերատորեն՛ր — օպերատորենի՛— օպերատորենի՛ց... Մոսկվա՛ — Մոսկվայի՛— Մոսկվայի՛ց— Մոսկվայո՛ւմ, Բայրո՛ն—Բայրոնի՛—Բայրոնի՛ց—Բայրոնո՛վ, տեխնիկո՛ւմ—տեխնիկումնե՛ր և այլն:

§ 481. Մրանցից բացի, կան նաև ուղղախոսական շեղումներ, խաթարումներ ու սխալներ, որոնք բխում են գրական լեզվի քերականական օրենքները չիմանալուց: Նկատելի է, որ անգամ գրագետ շատ մարդկանց ոչ միայն բանավոր, այլև գրավոր խոսքում հաճախ են խախտվում ենթակայի և ստորոգյալի (մանավանդ եթե դա կրավորական սեռի բայով է արտահայտվում) համաձայնությունը, հաճախ են սխալաբար գործածվում գոյականների հղովական, բայերի դերբայական և եղանակային մի շարք ձևերը<sup>11</sup>:

§ 482. Ժամանակակից հայոց լեզվի ուղղախոսութայն վրա, անշուշտ, բացասաբար է ազդում և սխալ բառագործածությունը: Մարդիկ կան, որոնք իրենց ոչ միայն բանավոր, այլև գրավոր խոսքում շատ բառեր գործածում են ոչ ճիշտ ու իսկական իմաստներով և, օրինակ, չեն տարբերում ցուցում-ը՝ ցուցմունք-ից, վերաբերել-ը՝ վերաբերվել-ից, տեղի տալ-ը՝ տեղիք տալ-ից, հասկացություն-ը՝ հասկացողություն-ից, անգամ՝ ամուլ («միասին լծվող լծկաններից յուրաքանչյուրը, լծակից»)-ը՝ ամուլ («չբեր») -ից, թոթովել («թոթով լեզվով խոսել»)-ը թոթվել («թափ տալ, թափահարել»)-ից և այլն:

Գրական լեզվի ուղղախոսութայնը քիչ վնաս չի բերում նաև նեղ բարբառային բառերի ու բառաձևերի, անհարկի փոխառյալ բառերի գործածությունը և այլն:

§ 483. Այս ամբողջը մի անգամ ևս և շատ պարզորոշ ցույց է տալիս, որ ուղղախոսությունը, իբրև բանավոր լեզվին վերաբերող բազմաբարդ երևույթ, ամենևին հեշտորեն չի զարգանում, կատարելագործվում ու ավելի նորմավորվում, որ կան, գոյություն ունեն մի շարք գործոններ ու հանգամանքներ, որոնք իրոք բացասաբար են ազդում նրա վրա՝ խանգարելով լայն տարածմանն ու ծավալմանը: Այդ խոչընդոտները հաղթահարելու համար պահանջվում է տքնաջան ու հետևողական աշխատանք, և այդ բնագավառում էլ, անվիճելիորեն, շատ մեծ ունեւիթներ ունեն զպրոցական ու բուհական հիմնարկները, թատրոնը, մամուլը, ռադիոն, հեռուստատեսությունը և առհասարակ բոլոր մշակութայն-լուսավորչական կենտրոնները միասին վերցրած:

<sup>11</sup> Այդ մասին տե՛ս, օրինակ, մեր՝ «Ամենօրյա սխալներ» հոդվածը («Հայաստան», 22 մարտի, 1991):

## ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅԱՆ ՈՃԵՐԸ

§ 484. Ուղղախոսություն կարևոր հարցերից մեկն էլ արտասանության ոճերի հարցն է: Բանավոր լեզվի (խոսքի) իրողություն լինելով՝ ուղղախոսությունը գործածության տարբեր ոլորտներում տարբեր դրսևերումներ է ունենում, որոնցով և արտասանության ոճերն են որոշվում:

Լեզվաբանական գիտության մեջ առաջինը այդ մասին խոսել է Ֆրանսիացի լեզվաբան Պ. Պասսին, որին ուսագետներից հետևել են Լ. Վ. Շչերբան, Ռ. Ի. Ավանեսովը և ուրիշներ: Ընդ որում եթե Լ. Վ. Շչերբան արտասանության երկու՝ լիակատար (полный) և խոսակցական (разговорный), ապա Ռ. Ի. Ավանեսովը երեք՝ բարձր (высокий), շեղոթ (нейтральный), խոսակցական (разговорный), տեսակի ոճեր է տարբերակել և բնութագրել դրանք:

Մեզանում էլ ուղղախոսության արտասանության ոճերի հարցին անդրադարձել են Ք. Ղարաբաղյանը և Վ. Առաքելյանը, որոնցից առաջինը նշում է, որ «Հայերենում կարելի է առանձնացնել երկու ոճ՝ բարձր (ընտիր) և խոսակցական»<sup>12</sup>, իսկ երկրորդը գտնում է, որ «Արտաբերական ոճերը ընդհանուր կերպով երեք տեսակի են բաժանվում՝ լիահունչ ոճ, խոսակցական ոճ և սովորական ոճ»<sup>13</sup>:

§ 485. Ընդունելով այս վերջին տարաբաժանումը՝ պետք է ասել, որ՝ ա) Լիահունչ ոճը, ինչպես անվանումն է ցույց տալիս, հանդիսավորությամբ արտահայտվող արտասանությունն է, որ կիրառվում է ազդիրոյով, հեռուստատեսությամբ տրվող հաղորդումներում, թատրոններում, դպրոցներում, բուհերում, հրապարակային ելույթներում, հավաքույթներում և այլն:

Արտասանական լիահունչ ոճի դեպքում ավելի լուրջ, գիտակցական ու պատասխանատու վերաբերմունք է պահանջվում արտասանվածքի նկատմամբ, խոսողը ջանում է իր մտքերն արտահայտել ավելի գեղեցիկ ու անսխալ, բառերն արտասանել լիահունչ և ասելիքը պարզորոշ հասցնել լսողին:

Այդպիսի ոճը, որ աչքի է ընկնում հուզարտահայտչականությամբ և կարող է կոչվել նաև բարձր ոճ, իրացվում է արտասանական գործարանների զգալի լարվածությամբ և ձայնային հստակությամբ:

բ) Խոսակցական ոճը ընդհանրապես մարդկանց՝ իրար հետ խոսելու ընթացքում արտահայտվող արտասանությունն է: Այդպիսի դեպքում խոսողը իրեն անհամեմատ ազատ է զգում, առանձնակի ուշադրություն

<sup>12</sup> Ք. Ղարաբաղյան, Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, Երևան, 1974, էջ 80:

<sup>13</sup> Վ. Ք. Զեմալյան, Է. Ք. Աղաբաբ, Վ. Գ. Առաքելյան, Վ. Ա. Շախյան, Հայոց լեզու, էջ 185:

չի դարձնում բառերի հստակ արտասանությունը, թույլ է տալիս անգամ ուղղախոսական շեղումներ ու խախտումներ, խոսում է առանց ջանք ածիգ գործադրելու, առօրեական ձևով:

գ) Սովորական ռճն էլ, ինչպես ընդունված է ասել, բռնում է հիշյալ երկու ռճերի միջին տեղը: Կապվելով թե՛ մեկի և թե՛ մյուսի հետ՝ դա էլ հիմնականում կիրառվում է ոչ հանդիսությունների ժամանակ և հատկանշվում է արտասանական գործարանների միջին լարվածությամբ, ուղղախոսական պարտադիր կանոնների պահպանմամբ:

ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ,  
ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

§ 486, Ուղղագրությունը եթե գրավոր, ապա ուղղախոսությունը բանավոր խոսքի միակերպությանն ու ճշտությանն է ծառայում և նրա պես գործնական մեծ նշանակություն ունի: Դա այդպես էլ բնութագրելով՝ հայազգի ռուսագետ լեզվաբան Ռ. Ի. Ավանեսովը միանգամայն իրավացիորեն նշել է, որ «Ուղղագրության և ուղղախոսության խնդիրներն են՝ մի կողմ թողնելով խոսքի բոլոր անհատական, ինչպես նաև տեղական խոսվածքների անանձնահատկությունները, լեզուն դարձնել հաղորդակցման առավել կատարյալ միջոց»<sup>14</sup>:

Այդպիսի՝ «մաքուր գործնական» դեր կատարելով՝ ուղղախոսությունը, ինչպես ասվել է, երբեք նույն աստիճանի վրա չի մնում և անընդհատ փոփոխվում է յուրաքանչյուր շրջանում ժողովրդի հասարակական-տնտեսական կյանքի և նրա լեզվի զարգացման հետ մեկտեղ:

Իսկ սա նշանակում է, որ ինչպես ամեն մի գրական լեզվի, այնպես էլ նրա ուղղախոսության զարգացումն ու կատարելագործումը կանգառ չգիտեն և շին կարող ավարտված համարվել:

§ 487. Եվ, անշուշտ, հենց այդպիսի բնույթ է կրում նաև ժամանակակից հայոց լեզվի ուղղախոսությունը: Հայ ժողովրդի հասարակական-տնտեսական, հոգևոր-մշակութային կյանքի զարգացմանը համընթաց հայ նոր գրական լեզուն ևս, ճիշտ է, բավականաչափ զարգացել է ու հարստացել, հիմնականում հաղթանակ է տարել բարբառների նկատմամբ, գնալով ավելի է տարածվել ու ծավալվել, հասարակության մի հսկա՝ գրագետ խավը խոսում է կանոնարկված լեզվով, բայց այն տակավին բոլորի սեփականությունը չի դարձել, ամենուր չէ, որ հաղթանակ է տարել բարբառի նկատմամբ և գերիշխում է նրա վրա:

Այսպիսով՝ ժամանակակից հայոց լեզվի ուղղախոսությունը հեռու է տակավին կատարյալ լինելուց և իրապես այնքան էլ բարվոք վիճակում չէ. բազմազան բնույթի ուղղախոսական շեղումներն ու խաթարում-

<sup>14</sup> Р. И. Аванесов, Русское литературное прозаическое, М., 1972, с. 13.



ները, հատկապես քաղաքային վայրերում տարածված հասարակաբանութունն ու ժարգոնայնութիւնը խիստ բացասաբար են ազդում ուղղախոսութեան վրա և վնասում նրա նորմավորմանն ու բարելավմանը:

§ 488. Ուղղախոսութեան արդի, ոչ այնքան բարվոք, վիճակն էլ, բնականաբար, լուրջ խնդիրներ է դնում դպրոցի, բուհերի, թատրոնի, մամուլի, գրականութեան, ռադիոյի, կինոյի, հեռուստատեսութեան և առհասարակ մշակութային, լուսավորչական բոլոր կենտրոնների առջև՝ պահանջելով առավել արդյունավետ ու հետևողական, լայն ու համակողմանի աշխատանք կատարել նրա բարելավման, կատարելագործման, ավելի միակերպ, կանոնարկված ու նորմավորված դարձնելու համար: Պետք է, սակայն, ցավով նշել ու խոստովանել, որ նախկին ԽՍՀՄ-ի փլուզումից հետո մեր հանրապետութիւնում ստեղծված քաոսային, խառնափնթոր ու ծանր իրավիճակում, երբ ուսուցումը կորցրել է իր իսկական արժեքը դպրոցներում ու բուհերում, երբ գրական ու գիտական մշակույթը չի զարգանում բնականոն ճանապարհով և պատշաճորեն չի ծառայում իր բուն նպատակին, երբ լայնորեն ծավալվում են պոռոտախոսութիւնը, զազրախոսութիւնն ու ճամարտակութիւնը, երբ շատ տեղերում գլուխ են բարձրացրել ու տիրապետող դարձել նյութական շահն ու նյութամոլութիւնը, հոգևոր շատ արժեքների հետ մեծապես տուժել ու տուժում է նաև ժամանակակից հայ գրական լեզվի ուղղախոսութիւնը՝ գրկվելով ավելի մեծ թափով զարգանալու և կատարելագործվելու հնարավորութիւններից:

Այսքանին պետք է ավելացնել և այն դառը իրողութիւնը, որ շատ հայ ընտանիքներ լքելով Մայր հայրենիքը և բարեկեցիկ կյանք փնտրելով աշխարհի տարբեր անկյուններում՝ մատնվում են մայրենի լեզվով խոսելուց զրկվելու վտանգին և, անշուշտ, իրենց հերթին վնաս պատճառում նաև նրա ուղղախոսութեան միասնականացմանն ու հետագա զարգացմանը:

§ 489. Բայց ինչ փոթորիկներ էլ անցնեն հայ ժողովրդի և հայոց լեզվի գլխով, միևնույնն է, նրանք գոյատևելու են մշտապես, հարթելու են իրենց ճանապարհին եղած խոշրնդոտներն ու արգելքները, զնալով ավելի ու ավելի են հզորանալու, միաձուլլ ու միասնական դառնալու...

Կասկած չի կարող, որ այդ ժամանակ աննախընթաց թափով է զարգանալու ու կատարելագործվելու նաև հայ գրական լեզվի ուղղախոսութիւնը՝ հաստատելով բանաստեղծի խոսքերով ասած այն ճշմարտութիւնը, թե՛

Մեր լեզուն ճկուն է ու բարբառս,  
Առնական է, կռպիտ, բայց միևնույն պահին  
Պայծառ է նա, որպէս մշտաբարբոժ փարոս,  
Վառված ճրգ աճշե՛ր դառե՛րում ճին: —

Եվ վարպետներ, խոնարհ ու հանճարիզ,  
Հղկել են այն դարեր, որպես մարմար,  
Եվ փայլել է նա մերթ, ինչպես բյուրեղ,  
Մերթ կոպտացել, ինչպես լեռնային ֆոր:

Բայց միշտ պանել է նա իր կենդանի ոգին,—  
Եվ եթե մենք այսօր կտորատում ենք այն մերթ—  
Այդ նրանից է, որ ուզում ենք մեր  
Նոր խոնքերի վրա ժանգ շոփի:— (Ե. Ջարենց)

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի ուղղագրությունը, Քիֆլիս, 1892:*
- Մ. Աբեղյան, *Աշխարհարարի քերականություն, Վաղարշապատ, 1906:*
- Մ. Աբեղյան, *Մեր ուղղագրության մասին («Արարատ», 1913, 11—12, այլև՝ Երկեր. Ը, Երևան, 1985):*
- Մ. Աբեղյան, *Ջեկուցում հայոց լեզվի ուղղագրության մասին, էջմիածին, 1921:*
- Մ. Աբեղյան, *Առաջնորդ հայոց լեզվի նոր ուղղագրության, Երևան, 1922:*
- Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:*
- Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տառաչափություն (Երկեր, Ե, Երևան, 1971):*
- Մ. Աբեղյան, *Ուղղախոսության ոեֆորմը, Երևան, 1925:*
- Ա. Ա. Աբրահամյան, *Գրաբարի ձեռնարկ, 1-րդ հրտ., Երևան, 1976:*
- Ա. Գ. Աբրահամյան, *Հայոց գիր ու գրչություն, Երևան, 1973:*
- Հր. Անառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Երևան, 1957:*
- Հր. Անառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Երևան, 1971:*
- Հր. Անառյան, *Հայոց գրերը, Երևան, 1984:*
- Հր. Անառյան, *Հայերեն արձատական բառարան, հտ. հտ. 1—4, Երևան, 1971—1980:*
- Է. Ազայան, *Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987:*
- Է. Ազայան, *Արդի հայերենի բացատրական շառարան, Երևան, 1976:*
- Գ. Այվազովսկի, *Ուղղագրութիւն լեզուի հայոց, Քեղոցսիա, 1869:*
- Ա. Այտընեան, *Քննական քերականութիւն աշխարհարար կամ արդի հայերէն լեզուի, Վիէննա, 1866:*
- Վ. Առաքելյան, *Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, Երևան, 1955:*
- Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էրոյան, *Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Երևան, 1979:*
- Ա. Արամյան, *Ժամանակակից հայերենի ձայնավորները, Երևան, 1962:*
- Գ. Անտոխեան, *Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815:*
- Ա. Իսաբատունի, *Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852:*
- Ս. Գյալբուրդալյան, *Հայերենի ուղղագրության պատմություն, Երևան, 1973:*
- Ռ. Քոխմախչյան, *Ժամանակակից հայերենի շեշտարանությունը, Երևան, 1983:*
- Չ. Լաւիտոկա, *Գրի զարգացումը, Երևան, 1955:*
- Ա. Խաչատրյան, *Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, Երևան, 1988:*
- Կոչյուն, *Վարք Մաշտոցի, Երևան, 1941:*
- Հայոց լեզվի հանգարտարան, Երևան, 1976:*

- Վ. Հացունի, *Ուղղագրութիւն եւ առաջանութիւն հայերենի, Վիեննա, 1933;*  
*Հնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում (ժողովածու), Երևան, 1978:*
- Ս. Վազարյան, *Ուղեցույց Տերմինաբանական կոմիտեի որոշումների, Երևան, 1955:*
- Ա. Ղազիկեան, *Հայ լեզուի ուղղագրական դասեր, Վենետիկ, 1923:*
- Ք. Ղառազյուլյան, *Ժամանակակից հայերենի ուղղախոսութիւնը, Երևան, 1974:*
- Ա. Ղարիբյան, *Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1974:*
- Ա. Ղարիբյան, *Հայ մանկավարժական լեզվաբանութիւն, Երևան, 1969:*
- Ա. Ղարիբյան, Կ. Պարիս, *Հայոց լեզվի քերականութիւն, ուղղագրութիւն և կետագրութիւն ուղեցույց, Երևան, 1957:*
- Գր. Ղափանցյան, *Ընդհանուր լեզվաբանութիւն, հ. 1, Երևան, 1939:*
- Ռ. Ճեպենեան, *Մտերիմ զրոյց ուղղագրութեան հարցի շուրջ, Հալեպ, 1976:*
- Ստ. Մալխասյանց, *Մի հնչյունին մի գիր, Քիֆլիս, 1910:*
- Մտ. Մալխասյանց, *Հայերեն բացատրական բառարան, հհ. 1—4, Երևան, 1944—1945:*
- Ալ. Մարգարյան, *Հայերենի նոր ուղղագրութիւնը և նրա մերժման անհիմն փորձերը (ՊՐԸ, 1991, № 1):*
- Վ. Մարգարեան, *Անգիտաց պիտանի..., Կ. Պոլիս, 1924:*
- Գ. Մենէվիշեան, *Հայերէն լեզուի ուղղագրութեան խնդիրը, Վիեննա, 1910:*
- Ս. Պալասանեան, *Քերականութիւն մայրենի լեզուի, 2-րդ տպ., Քիֆլիս, 1884:*
- Հ. Պետրոսյան, *Հայերենագիտական բառարան, Երևան, 1987:*
- Գ. Զանուկյան, *Ժամանակակից հայերենի տեսութիւն հիմունքները, Երևան, 1974:*
- Գ. Զանուկյան, Է. Աղայան, Վ. Ասաֆեյան, Վ. Փոսյան, *Հայոց լեզու, Երևան, 1980:*
- Ն. Ռոստիսեան, *Ուղղախոսութիւն արդի հայ լեզուի, Կ. Պոլիս, 1853:*
- Կ. Սեակ, *Ժամանակակից հայոց լեզվի համառոտ պատմութիւն, Երևան, 1948:*
- Գ. Սեակ, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955:*
- Գր. Վանցյան, *Պատմական քերականութիւն արևելահայ լեզուի, Քիֆլիս, 1906:*
- Տեղեկագիր Հ. Ս. և Հ. գիտութիւն և արվեստի ինստիտուտի ուղղագրութիւն և տառերի ձևի բարեփոխութիւն հանձնաժողովի, Երևան, 1927:
- Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Երևան, 1978:*
- Ղ. Փարպեցի, *Հայոց պատմութիւն, Երևան, 1983:*
- Խ. Քարաշեան, *Խորհրդային Հայաստանի նոր ուղղագրութիւնը, Պէրոպ, 1926:*
- Р. И. Аванесов. Русское литературное произношение. М., 1972.
- А. А. Аклинина, С. А. Барановская. Русская фонетика. М., 1990.
- Л. Бульмфинд. Язык. М., 1968.
- Л. Л. Буланин. Фонетика современного русского языка. М., 1970.
- А. Н. Гвоздев. Современный русский литературный язык. I, М., 1967.
- Л. Р. Зиндер. Общая фонетика. М., 1979.
- В. Ф. Иванова. Современная русская орфография. М., 1991.
- А. И. Кайдалова, И. К. Калинина. Современная русская орфография. М., 1973.
- В. И. Кодухов. Введение в языковедение. М., 1979.
- С. М. Кузьмина. Теория русской орфографии. М., 1981.

- И. Ш. Матусевич.** Современный русский язык. Фонетика. М., 1976.
- Орфография и русский язык. М., 1966.
- Р. Н. Попов, Д. П. Валькова и др.** Современный русский язык. М., 1978.
- А. А. Реформатский.** Введение в языковедение. М., 1967.
- Современный русский литературный язык, под редакцией Н. М. Шанского.  
М., 1988.
- Н. С. Трубецкой.** Основы фонологии. М., 1960.
- H. Jensen,** Sign, Symbol and Script. Translated from the German. G. P. Putnam, Sons, New York, 1969.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ԵՐԿՈՒ ԽՈՍՔ</b>	<b>3</b>
<b>ՀնԶՅՈՒՆԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>5</b>
Հնչունաբանության ուսումնասիրության առարկան, նպատակը և խնդիրները	5
Հնչունների ձայնաբանական ուսումնասիրությունը	7
Հնչունների բնախոսական ուսումնասիրությունը	9
Հնչունների լեզվաբանական-գործառնությունից ուսումնասիրությունը	13
Արտասանվածքի վերլուծություն	19
Հայերենի հնչունական համակարգը	21
Հայերենի հնչունների դասակարգումը	21
Ձայնավորներ. նրանց բնութագիրը	26
ա. Օտնալեզվային ձայնավորները և նրանց արտասանական բնութագիրը	27
բ. Միջնալեզվային է ձայնավորը և նրա արտասանական բնութագիրը	29
գ. Առաջնալեզվային ձայնավորները և նրանց արտասանական բնութագիրը	29
Ձայնավորների համադրական տախտակը	30
Բազաձայններ. երեսնց բնութագիրը	33
ա. Պայթական բազաձայններ. նրանց բնութագիրը	33
բ. Շփական հնչուններ. նրանց բնութագիրը	35
գ. Պայթաշփական հնչուններ. նրանց բնութագիրը	40
Բազաձայնների համադրական տախտակը	42
Հնչունների գործածությունը խոսքում	45
Վանկ և վանկատում	48
Միավանկ բառերի վանկային կառուցվածքը	51
Բազմավանկ բառերի վանկային կառուցվածքը	54
ա. Բազմավանկ բառերի սկզբնավանկային կառուցվածքը	54
բ. Բազմավանկ բառերի վերջնավանկային կառուցվածքը	59
գ. Բազմավանկ բառերի միջնավանկային կառուցվածքը	62
Երկբարբառներ և երկհնչյուններ	68
Շեշտ	73
Հնչերանգ	80
<b>ՀնԶՅՈՒՆԱՓՈՆՈՒԹՅՈՒՆ</b>	
Ընդհանուր բնութագիր	82
Հնչունափոխությունն տեսակները	86
1 Շեշտափոխական հնչունափոխությունը	87
Պայնավորների հնչունափոխությունը	90
է (ե) ձայնավորի հնչունափոխությունը	90
Ի ձայնավորի հնչունափոխությունը	93
Ու ձայնավորի հնչունափոխությունը	101
Ը ձայնավորի հնչունափոխությունը	108
Ա ձայնավորի հնչունափոխությունը	109
Երկհնչյունների հնչունափոխությունը	109

<b>2. Պատմական հնչյունափոխություն</b>	<b>113</b>
ա. Ձայնավորների պատմական հնչյունափոխությունը	114
բ. Ծրկբարբառների և եռաբարբառների պատմական հնչյունափոխությունը	115
գ. Բաղաձայնների պատմական հնչյունափոխությունը Ձայնդարձ և անական	118
<b>3. Փոխազդեցական հնչյունափոխություն</b>	<b>121</b>
ա. Անկում	122
բ. Հավելում	125
գ. Դրափոխություն	126
դ. Առնմանում	127
ե. Տարնմանում	129
զ. Ամփոփում	130
է. Համարանություն	132
ը. Փոխազդեցական այլ հնչյունափոխություններ Հնչյունափոխության լեզվական և բառակազմական արժեքը ԳՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	135
Լեզնանուր գաղափար	137
Գրաբանության ուսումնասիրության առարկան, նպատակը և խնդիրները	138
Հայկական գիրը	139
Մեսրոպ Մաշտոցը և հայոց գրերի գյուտը	144
Հայոց այբուբենը	147
Հայոց (մեսրոպյան) գրի տեսակները և նրանց զարգացումը	149
Հայերենի կնառությունը նշանները	152
Տառերի (գրայթևների) և հնչյունների փոխհարաբերությունը Տառադարձություն	153
ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ	157
Ընդհանուր գաղափար	156
Ուղղագրության ուսումնասիրության առարկան, նպատակը և խնդիրները	159
Ուղղագրության հիմնական սկզբունքները	160
Հայոց լեզվի ուղղագրության պատմական զարգացումը	162
Նոր հայերենի ուղղագրության բնութագիրը	164
Մտնույն Արեղյանը և հայերենի ուղղագրությունը	171
Հայերենի ուղղագրության բարեփոխությունները (ռեֆորմները)	175
Ժամանակակից հայոց լեզվի ուղղագրության կանոնները	189
ա. Ձայնավորների ուղղագրությունը	189
է-ի և ե-ի ուղղագրությունը	190
օ-ի և օ-ի ուղղագրությունը	190
ը-ի ուղղագրությունը	191
բ. Երկհնչյունների ուղղագրությունը	192
գ. Երկնայնավորների ուղղագրությունը	193
յ ձայնակապի ուղղագրությունը	198
և-ի ուղղագրությունը	199
դ. Բաղաձայնների ուղղագրությունը	200
1. Նիական բաղաձայնների ուղղագրությունը	200
ա. Ձայնորոշների ուղղագրությունը	200
բ. Ձայնեղների և խուլների ուղղագրությունը	203
2. Պայթակալ բաղաձայնների ուղղագրությունը	204
3. Պայթալիական բաղաձայնների ուղղագրությունը	205
Կերտակ բաղաձայնների ուղղագրությունը	206

Մեծատառերի ուղղագրությունը	208
Բարդ բառերի ուղղագրությունը	211
Խոսքի մասերի ուղղագրությունը	214
Տողադարձը և նրա կանոնները	216
ՈՒՂԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ	
Ընդհանուր գաղափար	220
Արևելանայ գրական լեզվի ուղղախոսությունը և նրա զարգացումը	222
Ժամանակակից հայոց լեզվի ուղղախոսության կանոնները	228
ա. Ձայնավորների գրական արտասանությունը	229
բ. Բաղաձայնների գրական արտասանությունը	231
Պայթական և պայթաշփական բաղաձայնների գրական արտասանությունը	231
Շփական բաղաձայնների գրական արտասանությունը	235
ա. Ձայնորդների արտասանությունը	235
բ. Շփական ձայնեղների և խուլների արտասանությունը	237
Ուղղախոսության շեղումները և դրանց ազդեցությունները	239
Արտասանության ձևերը	243
Ուղղախոսության նշանակությունը, արդի վիճակը և զարգացման հեռանկարները	244
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	247



**ՄԱՐԿԱՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԻՐ ՄԻՄՈՆԻ**

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ**

**ՀԵՉՑՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Հրատարակւոյրան է ներկայացրել  
համալսարանի հայոց լեզվի ամբիանը:**

**СОВРЕМЕННЫЙ АРМЯНСКИЙ ЯЗЫК**

**МАРКАРЯН АЛЕКСАНДР СИМОНОВИЧ**

**ФОНЕТИКА**

**Учебно-вспомогательное пособие для студентов филологических  
факультетов**

**Издательство Ереванского университета  
ЕРЕВАН—1987**

Հրատ. խմբագիր՝ Հ. Կ. Սարգսյան  
Տեխն. խմբագիր՝ Հ. Ա. Հովսեփյան  
Սրբագրիչ՝ Ս. Վ. Կազարյան

Հանձնված է շարվածքի 05. 11. 1996 թ.: Ստորագրված է տպագրության 09. 01. 1997 թ.:  
Չափսը 60×90<sup>1</sup>/<sub>16</sub>: Քուղթ տպագր. № 2: Տառատեսակը սովորական: Տպագրության  
եղանակը բարձր: Հրատարակչական 14,8 մամուլ: Տպագրական 15,5 մամուլ: Տպաքա-  
նակ 1000: Պատվեր 134: Գինը պայմանագրային:

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Ա. Մանուկյան փ. թիվ 1:

---

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Արսվյան փ. թիվ № 52: